

Վ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Պ. Ս. ԲՈՇՆԱՂՅԱՆ, Գ. Ե. ԴԱՎԹՅԱՆ

ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ՌՈՒՍ—ՀԱՅԵՐԵՆ  
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1995

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԲԱՆԻՍՏԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
երկր.-հանք. գիտ. դոկտոր՝ **Հ. Հ. Սարգսյան**

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝  
երկր.-հանք. գիտ. դոկտոր՝ **Ա. Թ. Վեհունին,**  
երկր.-հանք. գիտ. թեկնածուներ՝ **Հ. Ը. Ոսկերչյանը,**  
**Ռ. Բ. Յարոյանը և Հ. Ռ. Մկրտչյանը**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԲԱՆԻՍՏԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

---

В. А. АВЕТИСЯН, П. С. БОШНАГЯН,  
Д. Е. ДАВТЯН

РУССКО-АРМЯНСКИЙ ТОЛКОВЫЙ  
СЛОВАРЬ ПО  
ГИДРОГЕОЛОГИИ И  
ИНЖЕНЕРНОЙ ГЕОЛОГИИ

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ВРЕВАН, 1995

Վ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Պ. Ս. ԲՈՇՆԱԴՅԱՆ,  
Դ. Ե. ԴԱՎԹՅԱՆ

ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԵՎ ԻՆՃԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ  
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

**Ավետիսյան Վ. Ա. և ուրիշ.**

Ա 791 Ջրաերկրաբանական և ինժեներատեխնիկական ուսուցանողական բացատրական բառարան. Ավետիսյան Վ. Ա., Բոշ-նաղյան Պ. Ս., Դավթյան Դ. Ե./Պատ. խմբ.՝ Հ. Հ. Սարգսյան.— Եր.: ՀՀ ԳԱԱ հրատ., 1995. — 351 էջ, 14 նկ.:

Բառարանն ընդգրկում է ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական, ինչպես նաև հարակից գիտությունների շուրջ 2100 տերմիններ ու հասկացություններ: Ռուսական տերմինաբանությանը հավասարանշանակ հայկական տերմինները ուղեկցվում են հիմնական հասկացությունների բացատրությամբ և որոշ տեղեկատու տվյալներով:

Բառարանը նախատեսվում է ջրաերկրաբանների, ինժեներ երկրաբանների, լեռնային-երկրաբանական և ջրամելիորատիվ ուսումնական հաստատությունների ուսանողների և մասնագետների լայն շրջանների համար:

Ա  $\frac{4602000000}{703(02)-95}$  55—90

ԳՄԳ 81.2 ուս.+81.2 հայ-4

ISBN 5—8080—0165—x

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1995

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՏ

Հայաստանի բուհերում կարգացվող դասախոսություններում, ինչպես նաև վերջին տասնամյակներում հայերեն հրատարակված մենագրություններում, դասագրքերում ու հոդվածներում նկատվում են ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական տերմինների ոչ միասնական, սխալ կամ կամայական գործածման դեպքեր: Հաճախ անհարկի օգտագործվում են օտար տերմիններ, երբ կան դրանց հայերեն համարժեքները: Դրա հետ մեկտեղ, երբեմն հրաժարվում են նաև միջազգային դարձած անտիկ (հունարեն, լատիներեն) կամ եվրոպական լեզուներով (գրունտ, կարստ, արտեզյան ջրեր են), ինչպես նաև ռուսերեն կամ նախկին ԽՍՀՄ ազգերի լեզուներով (բարխան, թակիր և այլն) տերմիններից՝ փոխարենը օգտագործելով անհաջող հայացված տերմիններ:

Դիցուք, «գրունտ» տերմինը հայերեն հրատարակված տարբեր գրքերում թարգմանվել է մի դեպքում՝ բնահող (6,10), մեկ այլ դեպքում՝ գետնահող (2,9): Երկու դեպքում էլ սխալեցվում է տերմինի իմաստը, քանի որ «գրունտը» բնավ միայն հող չի, այլ կարող է լինել նաև ապտածային սարսք, ապա նաև կարող է բնական շիինել (կան նաև արհեստական գրունտներ), ինչպես նաև՝ հողային շիինել (խորը լեռնային փորվածքների, մետրոլի անցման ժամանակ ստսվել հաճախ հանդիպում ենք կարծր ապարների):

Այնուհետև, «գրունտ» տերմինից ամանցվող տերմինների («գրունտագիտություն», «գրունտային ջրեր» և այլն) թարգմանությունը միանգամայն անհեթեթ է դառնում:

Հարկ է նշել, որ ռուսական մասնագիտական գրականությունում վերջին տրիներին անհաջող փորձեր արվեցին վերանայել որոշ տերմիններ և դրանց նոր անվանարկումներ տալ (16, 17, 45, 64), սակայն, բարեբախտաբար, որոշ հեղինակավոր մասնագետների կոչով (27, 61) նման փորձերը դադարեցվեցին, իսկ վերափոխումները հիմնականում հանգեցին ջրաերկրաբանական որոշ տերմինների հստակ սահմանմանը:

Բացի ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական տերմիններից, բառարանում ընդգրկվել են նաև ստսվել գործածական մի շարք տերմիններ երկրաբանությունից, լեռնային գործից, երկրաձևաբանությունից, ջրաբանությունից և այլն: Բառարանը պարունակում է շուրջ 2100 բառային միավորի բացատրություն, ընդ որում, ավելի քան 250 տերմինի տրվել է հայերեն նոր անվանում:

Բառարանի կազմման համար հիմք են ծառայել ռուսերեն երկրաբանական բառարանի երկհատորյակը (19) և ջրաերկրաբանության ու ինժեներաերկրաբանության բառարանը (34): Լայնորեն օգտագործվել են ականավոր ջրաերկրաբանների ու ինժեներ-երկրաբանների հիմնարար աշխատությունները և նորագույն մասնագիտական գրականությունը: Տերմինների բացատրության մանրամասնությունը որոշվել է ելնելով նրանց կարևորությունից: Երբեմն տերմինի բացատրությունը բերվում է ըստ այն հեղինակի, որը առաջինն է օգտագործել տվյալ տերմինը:

Բառարանում ռուսերեն տերմինները դասավորված են այբբենական կարգով:

Եթե տերմինը կազմող բառերը գրվում են առանձին, ապա նրանց հաջորդականությունը ընդունվում է գերազանցապես ուղղակի կարգով, որը և առավել գործածական է: (ПОДЗЕМНЫЕ ВОДЫ, ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЕМКА), սակայն օգտագործված է նաև շրջուն ձևը (АНОМАЛИЯ ГИДРОХИМИЧЕСКАЯ, ОПОЛЗЕНЬ ДЕЛЯПСИВНЫХ): Բացի այդ, առավել կարևոր տերմինները (ВОДА, ОПОЛЗЕНЬ և այլն) բերվում են թե՛ ուղղակի, թե՛ շրջուն տեսքով, որոնք շարադրվում են կամ եզակի, կամ հոգնակի թվով:

Ռուսերեն տերմինի մեկից այլեի և միևնույն իմաստն արտահայտող հաջող ու գործածական հայերեն թարգմանությունները բերված են փակագծերի մեջ և ունեն մեկ բացատրություն, իսկ տարբեր իմաստ ունեցող թարգմանությունները՝ արարական թվանշաններով և յուրաքանչյուրին տրված է իր բացատրությունը: Ընդ որում, փակագծերում կամ արարական թվանշանի տակ բերվում են համարժեք հոմանիշները, իսկ երկրորդական հոմանիշները նշվում են բացատրության վերջում:

Միևնույն իմաստն արտահայտող երկու տարբեր տերմինների համար գործածված է «ևնույն է» փոխադարձ նշումը, ընդ որում, տրված է առավել գործածական տերմինի բացատրությունը: Որոշ տերմինների բացատրության մեջ «տե՛ս» հղումով նշված են այլ տերմիններ, որոնց իմացությունը կարող է օգնել առաջինների իմաստը լրիվ ըմբռնելուն:

Բառարանում յուրաքանչյուր տերմինի բացատրության մեջ գլխաբառը լրիվ կրկնելու փոխարեն նշված է գլխաբառի (գլխաբառերի) սկզբնատառը (սկզբնատառերը): Բառարանում ընդունված են նաև հետևյալ համատոտագրությունները.

աղ.	— աղյուսակ	մեխ.	— մեխանիկական
աշխգր.	— աշխարհագրական	մթն.	— մթնոլորտ
գ.	— գետ	մլ.	— միլիլիտր
գծմ.	— գծամետր	մլն.	— միլիոն
գր.	— գրամ	մլրդ.	— միլիարդ
երկրք.	— երկրաբանական	մոլ.	— մոլեկուլ
թ., թթ.	— թիվ, թվեր	շին.	— շինարարական
կալ.	— կալորիա	պատմ.	— պատմական
կգ.	— կիլոգրամ	ստ.	— ստորերկրյա
կենսբ.	— կենսաբանական	վ.	— վայրկյան
լ.	— լիտր	տեխն.	— տեխնիկական
լշ.	— լեռնաշղթա	տեկտ.	— տեկտոնական
նա	— նեկտար	տնտ.	— տնտեսական
նազ.	— նազար	քիմ.	— քիմիական
նամ.	— համարժեք	ևն	— և այլն
հնքք.	— հանքաբանական	օր.	— օրինակ
հնքվ.	— հանքավայր	օրգ.	— օրգանական
մ.	— մետր	ֆիզ.	— ֆիզիկական
մաթ.	— մաթեմատիկական	ֆիզմեխ.	— ֆիզիկամեխանիկական
մգ.	— միլիգրամ	ֆիզքիմ.	— ֆիզիկաքիմիական

Ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական տերմինների սույն բացատրական բառարանը կազմվում է առաջին անգամ, ուստի, բնականաբար, թերություններ կլինեն: Հեղինակները երախտապարտ կլինեն ընթերցողի՝ առաջարկների և դիտողությունների համար:

**АБИССИНСКИЙ (ЗАБИВНОЙ, НОРТОНОВСКИЙ) КОЛОДЕЦ** — ՀԱՐԵՍՍՎԱՆ (ՆԵՐՍԵՎՄԱՆ, ՆՈՐՏՈՆՅԱՆ) ԶՐՀՈՐ, ոչ մեծ խորության ջրհոր, որի կառուցումն իրականացվում է սուր ծայրապահանկով խողովակը հարվածի կամ ճնշման գործադրմամբ փոխարկարների մեջ խրելով (ներսեղմելով): Հ. Զ-ի խողովակի պատերին նախապես որոշակի չափերի ու խտությամբ անցքեր են արվում, որոնց շերտերով այն կատարում է քամիչի դեր:

**АБЛЯЦИЯ** — ԱԲԼՅԱՑԻԱ, սառցակուտակի զանգվածի (կամ ջրային պաշարների) նվազում, որը կատարվում է սառցի ու ձյան հալման, գոլորշացման և մեխ. քայքայման (այդ թվում այբերգների բեկորատման) հետևանքով: Տարբերում են Ա-ի հետևյալ տեսակները. ենթասառցակուտակային, ներսառցակուտակային, մակերևութային և մեխանիկական: Որպես Ա-ի չափ երբեմն ընդունվում է որոշակի ժամանակահատվածում հալող ու գոլորշացող սառցաշերտի մեծությունը:

**АБРАЗИЯ** — ԱՓԱՔԵՐՈՒՄ (ԾՈՎԱՓԻ ՈՂՈՂԱՀԱՐՈՒՄ, ԱԲՐԱԶԻԱ), ծովափերի, բնական ու արհեստական լճափերի ողողահարում, որը կատարվում է ալեբախման հետևանքով: Ալեբախումը հանգեցնում է ափը կազմող ապարների քայքայմանը, փոխար-բեկորային նյութի ստացացմանը, որը ալիքով տեղափոխվում է դեպի ծովի խորքը և հանդարտ պայմաններում նստեցվում: Ողողահարման արագությունը կամ ինտենսիվությունը կախված է ալիքի հարվածային ուժից և ափի երկրք. կառուցվածքից, իսկ խորությունը պայմանավորված է ալիքի հզորությամբ: Օվկիանոսի և բաց ծովերի ափագոտիներում կարևոր երկրք. գործոններ են դիտվում մակընթացության-տեղատվության գործընթացները, ինչպես նաև ծովային երկրաշարժերը (ցունամիները), որոնց քայքայիչ գործունեությունը կարող է հասնել ահեղի չափերի: Ներկայումս Ա. գործընթացների ուսումնասիրության մեծ կարևորություն է տրվում հատկապես արհեստական ջրակուտակների ստեղծման տեսանկյունից. նոր ջրամբար նախագծելիս ըստ ամենայնի ուսումնասիրվում են ափագծի ձևավորման պայմանները, կանխորոշվում են ողողահարման ընթացքն ու նրա հետևանքները:

**АБСОЛЮТНАЯ ВЛАГОЕМКОСТЬ** — ԲԱՑԱՐՁԱԿ ԽՈՆԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Влагодємкость абсолютная:

**АБСОЛЮТНАЯ ВЛАЖНОСТЬ ГОРНОЙ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, բնական տեղադրման պայմաններում ապարի նմուշի մեջ եղած խոնավության կշռի հարաբերությունը  $+105-107^{\circ}$  Ց պայմաններում չորացրած նույն նմուշի կշռին:

**АБСОЛЮТНАЯ (ФИЗИЧЕСКАЯ) ПРОНИЦАЕМОСТЬ** — **ԲԱՑԱՐՁԱԿ** (Ֆիզիկական) ԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ապարների թափանցելիությունը համասեռ չեզոք հեղուկի կամ գազի նկատմամբ: Բոլոր ապարները ճնշման սակայության պայմաններում հեղուկների և գազերի նկատմամբ որոշակի թափանցելիություն են դրսևորում: Նման պայմաններում չափված թափանցելիությունը կոչվում է բացարձակ (ֆիզ.) և էապես տարբերվում է արդյունավետ (օգտակար) թափանցելիությունից, որը բնութագրում է ապարի՝ բնական պայմաններում իր միջով գազեր կամ հեղուկներ բաց թողնելու հատկությունը: Ապարների Բ. թ. որոշելիս պետք է օգտագործել միայն չեզոք գազեր և հեղուկներ (ազոտ, գտված նավթ նև):

**АБСОРБЦИЯ** — **ՎԱՆՈՒՄ** (ԱԲՍՈՐԲՅՈՒ), տե՛ս Сорбция:

**АВАНДЕЛЬТА** — **ԱՎԱՆԴԵԼՏԱ**, գետի դելտայի ընդջրյա մաս:

**АГРЕГАТЫ ПОЧВЕННЫЕ** — **ՀՈՂԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ**, մինչ 10—12 մ տրամագծով հողակուշտեր, որոնք առաջանում են հողի մասնիկների կողմից կլանված կալցիումով հարուստ հումուսային նյութի շաղախումից: Հ. ա. ունեն ստանձականություն, ջրում չեն քայքայվում, հողը դարձնում են բարեբեր, քանի որ կոշտավոր ձևառուցվածքը միանգամայն նպաստավոր է բույսերի աճի և զարգացման համար:

**АГРЕССИВНАЯ УГЛЕКИСЛОТА** — **ԱԳՐԵՍԻՎ ԱՇԽԱԹԹՈՒ**, տե՛ս Углекислота агрессивная:

**АГРЕССИВНОЕ ДЕЙСТВИЕ ВОДЫ НА БЕТОН** — **ԶՐԻ ԱԳՐԵՍԻՎ ԱԶՐԵՑՈՒԹՅՈՒՆ ԲԵՏՈՆԻ ՎՐԱ**, ջրի բիմ. ներգործության հետևանքով բետոնը քայքայելու ունակություն, որը պայմանավորված է ջրի բարձր թթվայնությամբ ( $pH < 7$ ), զանազան աղերի ու գազերի պարունակությամբ: Զրի ագրեսիվ ազդեցությունը դրսևորվում է բետոնի բաղադրամասերի (մասնավորապես կրի) լուծում-հեռացումով և բետոնի ճեղքածակոտիների մեջ նոր նյութերի (գիպս, կալցիումի ալյումոսուլֆատ կամ Դեվալի աղ) առաջացումով, որն ուղեկցվում է ծավալի աճով: Բետոնի նկատմամբ ջրին ագրեսիվ հատկություն տվող գազերի, աղերի և թթուների թույլատրելի պարունակությունը սահմանված է պետական ստանդարտներով (ГОСТ 4796—49, Н 114—54): Տարբերում են ջրի ագրեսիվության հետևյալ տեսակները. ածխաթթվային, տարրալուծման, ընդհանուր թթվային, սուլֆատային և մագնեզիումային:

**АДСОРБЦИОННАЯ ВОДА В МИНЕРАЛАХ** — **ՎԱՆՄԱՆ** (ԱԳՍՈՐԲՄԱՆ) ԶՈՒՐԸ ՄԻՆԵՐԱԿՆԵՐՈՒՄ, միներալներում պարունակվող այն ջուրը, որի մոլեկուլները կապված են բյուրեղային մասնիկների մակերևույթի հետ: Սովորաբար կլանիչ լավ հատկանիշներով օժտված գրունտների մասնիկների շուրջ կլանման ջուրը ստեղծում է հիդրատային թաղանթ:

**АДСОРБЦИЯ** — **ՎԱՆՈՒՄ** (ԱԳՍՈՐԲՅՈՒ), տե՛ս Сорбция:

**АЗОНАЛЬНЫЕ ВОДЫ** — ԱՋՈՆԱՅԱԿԱՆ (ՈՁ ԶՈՆԱՅԱԿԱՆ, ԶՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՆԹԱՐԿՎՈՂ) ԶՐԵՐ, ստ. ջրեր, որոնք չեն ենթարկվում ո՛չ հորիզոնական (կլիմայական), ո՛չ ուղղաձիգ (ջրադինամիկական) զոնայականության: Օր., գետաբերուկային և սառցադաշտային նստվածքների, կարստային, ճեղքային, ճահճային գրունտային ջրերը տարածված են տարբեր կլիմայական գոտիներում, սակայն ունեն միևնույն տեղադրման պայմաններն ու հատկանիշները:

**АЗОТНЫЕ ВОДЫ** — ԱՋՈՏԱՅԻՆ ԶՐԵՐ, բնական ջրեր, որոնք պարունակում են զգալի չափով լուծված ազոտ գազ և սովորաբար նրան ուղեկցող ազնիվ գազեր՝ ֆելիում, նեոն, արգոն, կրիպտոն, քսենոն ևն:

**АКВАТОРИЯ** — ԶՐԱՏԱՐԱԾՔ (ԱԿՎԱՏՈՐԻԱ), ջրային մակերևույթ, որը կարող է լինել բնական կամ արհեստական: Օր., ափամերձ Զ., ջրամբարի Զ. ևն:

**АКРАТОПЕГИ** — ԱԿՐԱՏՈՊԵԳԵՐ, թույլ հանքայնացված սառը ջրերի աղբյուրներ, որոնք դասվում են հանքային աղբյուրների խմբին:

**АКРОТЕРМЫ (АКРАТОТЕРМЫ)** — ԱԿՐՈԹԵՐՄԵՐ (ԱԿՐԱՏՈԹԵՐՄԵՐ), թույլ հանքայնացված (մինչև 1 գր/լ չոր մնացորդով) գոլ և տաք ջրերի աղբյուրներ: Այդ ջրերն ունեն բուժիչ հատկություններ, օգտագործվում են հանքաջրաբուժության և ջեռուցման նպատակով:

**АКТИВНАЯ ЗОНА ОСНОВАНИЯ** — ՀԻՄՆԱՏԱԿԻ ԱԿՏԻՎ ԶՈՆԱ, ապարաշերտի (շերտախմբի) մաս, որի սահմաններում ինժեներական կառույցի առաջացրած լրացուցիչ ծանրաբեռնումը հանգեցնում է ապարի ձևափոխությունների: Հաճախ որպես *h. w. q*-ի ստորին սահման պայմանականորեն ընդունվում է այն խորությունը, որի սահմաններում կառույցի առաջացրած լրացուցիչ նորմալ լարումները գերազանցում են բնական երկրաստատիկ լարումների 20 %-ը:

**АКТИВНАЯ (ИНТЕНСИВНАЯ) МЕРЗЛОТА** — ԱԿՏԻՎ (ԻՆՏԵՆՍԻՎ) ՍՍՈՑՈՒՅԹ, կալուն սառցույթ, որը ստեղծվել է ժամանակակից կլիմայական պայմանների շնորհիվ և սեզոնային ու տարեկան էսկան փոփոխությունների չի ենթարկվում:

**АКТИВНАЯ ПОРИСТОСТЬ** — ԱԿՏԻՎ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, ապարների այն բոլոր հատորդակցվող ճեղքերն ու ծակոտիները, որոնց միջով ստ. ջուրը կարող է ազատ տեղաշարժվել, չկրկնվով ծակոտիների պատերի ձգողականության և շփման նկատելի աղեցություն: Հոմանիշ՝ դինամիկ ծակոտկենություն, արդյունավետ ծակոտկենություն:

**АКТИВНОЕ ДАВЛЕНИЕ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ԱԿՏԻՎ ԾՆԾՈՒՄ, ապարի ճնշումը չտեղախախտված հենապատի, ամրակապի, հիմքի և այլ կառույցների վրա:

**АКТИВНОСТЬ ГИДРОДИНАМИЧЕСКАЯ** — ԶՐԱԳԻՆԱՄԻԿ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, նստվածքառաջացման ավազանում ջրի շարժունակության բնութագիր, որն արտացոլում է նստվածքների կուտակման ժամանակ ջրի շարժման տարբեր տեսակ-

ների (ալիքային, հոսքային) գումարային ինտենսիվությունը: Ջ. ա. տարբեր է հատակամերձ մասում, մերձափնյա հատվածում ևն:

**АКТИВНОСТЬ ДИФФУЗИОННО-АДСОРБЦИОННАЯ** — ԴԻՖԻՈՒԶԻՈՆ-ԱԴ-ՍՈՐԲՑԻՈՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, որոշ խմբի ապարների սեփական բևեռացման էլեկտրական դաշտեր ստեղծելու հատկություն, որը պայմանավորված է սո. ջրերի մեջ լուծված աղերի դիֆուզիայով և ապարի մասնիկների կողմից նրանց իոնների ադսորբցիայով (կլանումով): Ադսորբցիան տեղի է ունենում, երբ տարբեր են հորիզոնների ջրերի կամ վերջինների և հորատման կավային լուծույթի խտությունն ու քիմ. բաղադրությունը: Դ. — ա. ա. կախված է ապարների քիմ. և միներալային բաղադրությունից, ջրերի քիմ. բաղադրությունից, աղիության աստիճանից ևն:

**АКТИВНОСТЬ ИОНА** — ԻՈՆԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Теория активности:

**АКТИВНОСТЬ (ИНТЕНСИВНОСТЬ) КАРСТА** — ԿԱՐՍՏԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ (ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ), կարստառաջացման գործընթացի հարաբերական արագություն. այն մեծ է հեշտ լուծվող աղածին ապարներում (կերակրի աղ, սիլվին) և անհամեմատ փոքր դժվար լուծվող կրաքարային և գիպսատար ապարներում: Ըստ Գ. Վ. Ռոդիոնովի (1958), կարստառաջացման գործընթացի ակտիվությունը (A) բնութագրվում է կարստային դատարկությունների ծավալի (V) և կարստավորվող ապարների ընդհանուր ծավալի (V) հարաբերությամբ որոշակի ժամանակահատվածի (հազարամյակի) համար և արտահայտվում է %-ներով՝  $A = \frac{V}{V} \cdot 100\%$ :

**АКТИВНОСТЬ ОПОЛЗНЕВОГО ПРОЦЕССА** — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, սողանքային գործընթացի զարգացման արագությունը ժամանակի ընթացքում և սողանքային մարմնի ձևափոխությունների ռեժիմը: Ակտիվ (շարժվող) սողանքի ակնհայտ ցուցանիշներից են. շարժման թարմ հետքերը, եզրամասերում կտրուկ աստիճանների ու բաց (հորանշող) ճեղքերի առկայությունը, սողանքային մարմնի խորդուրդոյ ռելիեֆը, բուսական ճածկի խզվածությունը, ծառերի թեքվածությունն ու շրջվածությունը (հարբած անտառ), սո. ջրերի երեվակումները, ինչպես նաև սողանքային տեղամասում կառուցված շինությունների ձևախախտումներն ու փլուզումները: Ըստ Ս. Գ. ա., Վ. Ծարպին ու Է. Էկկելն առաջարկում են սողանքների հետևյալ դասակարգումը (տե՛ս աղ. 1).


Աղյուսակ 1

Ծարժման գնահատականը	Ծարժման արագությունը
Բացառիկ արագ	> 3 մ/վ
Ծատ արագ	3 մ/վ—0,3 մ/րոպե
Արագ	0,3 մ/րոպե—1,5 մ/օր
Չափավոր	1,5 մ/օր—1,5 մ/ամիս
Դանդաղ	1,5 մ/ամիս—1,5 մ/տարի
Ծատ դանդաղ	1,5 մ/տարի—0,06 մ/տարի
Բացառիկ դանդաղ	< 0,06 մ/տարի

**АКТИВНОСТЬ УДЕЛЬНАЯ** — ՏԵՍԱԿԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, տարրի կամ լուծույթի մեջ ռադիոակտիվ իզոտոպի ատոմների պարունակությունը բնութագրող մեծություն, որն արտահայտվում է նյութի միավոր կշռին (գր, մոլ.) կամ լուծույթի միավոր ծավալին (լ, մլ.) բաժին ընկնող ռադիոակտիվության միավորների թվով (կյուրի):

**АКТИВНОСТЬ ФИЛЬТРАЦИОННАЯ** — ԾԾԱՆՅՄԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, ապարի սեփական բևեռացման էլեկտրական դաշտ ստեղծելու ունակություն, որը պայմանավորված է ապարի ծակոտիների միջով ֆեղուկի ծծանցման պոտենցիալների տարբերությամբ: Վերջինի մեծությունը կախված է ապարի ծակոտկենությունից, ծակոտիների չափից, ձևից, դասավորությունից, ծծանցման գործակցից, ֆեղուկի մածուցիկությունից ևն:

**АМФОТЕРНОСТЬ** — ԱՄՖՈՏԵՐՈՒԹՅՈՒՆ, որոշ քիմ. միացությունների ինչպես թթվային, այնպես էլ հիմնային հատկություններ դրսևորելու ունակություն: Օր., ալյումինի հիդրօքսիդը կարող է ռեակցիայի մեջ մտնել ինչպես թթուների, այնպես էլ հիմքերի հետ, առաջացնելով՝



Ամֆոտեր միացության բնորոշ օր. է հանդիսանում նաև ջուրը, որը դիսոցվում է  $\text{H}^+$  և  $\text{OH}^-$  իոնների:

**АНАЛИЗ ГАЗОВОГО СОСТАВА ВОДЫ** — ՋՐԻ ԳԱԶԱՅԻՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ջրում լուծված գազերի որոշում: Նրանց քանակն արտահայտվում է գազերի զուամարային ծավալի %-ներով կամ մգ/լ-երով (տե՛ս **АНАЛИЗ ПРИРОДНОЙ ВОДЫ**):

**АНАЛИЗ ГИДРОХИМИЧЕСКИЙ** — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ, բնական ջրերի քիմ. բաղադրության, ֆիզ. և այլ հատկությունների (рН, ЕН) որոշում: Ջ. տ. ճշտությունը, մանրամասնությունն ու լիարժեքությունը կախված է հետազոտության նպատակից:

**АНАЛИЗ ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ** — ՀԱՏԻՎԱԶԱՓԱԿԱՆ ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ, փուլեր բեկորային ապարների բաղադրիչ մասնիկների չափերի և քանակական հարաբերակցության որոշում: Գոյություն ունեն Հ. տ. տարբեր մեթոդներ. մաղային (տարբեր չափի անցքեր ունեցող մաղերով անցկացնելու միջոցով), պոտորման (ջրային միջավայրում ապարը պոտորելու միջոցով), խտաչափական (տե՛ս **Ареометрический метод**) ևն: Հումանիշ՝ հատիկաչափական անալիզ:

**АНАЛИЗ ПРИРОДНОЙ ВОДЫ** — ԲՆԱԿԱՆ ՋՐԻ ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ, նույնն է, ինչ բնական ջրի քիմ. տարրալուծություն (տե՛ս **ХИМИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОДЫ**):

**АНАЛОГИЯ ЭЛЕКТРОГИДРОДИНАМИЧЕСКАЯ** — ԷԼԵԿՏՐԱԶՐԱԳԻՆԱՄԻՎԱԿԱՆ ՆՄԱՆԱԿՈՒՄ, տե՛ս **ЭЛЕКТРОГИДРОДИНАМИЧЕСКАЯ АНАЛОГИЯ (ЭГДА)**:

**АНАЭРОБНЫЙ ПРОЦЕСС** — ԱՆԱԷՐՈՅ (ՕՐԻԱԶՈՒՐԻԿ, ԱՆՕՐԻ) ԳՈՐԾԸՆԹԱՑ, օրգ. և կենսածին նյութերի քայքայման գործընթաց, որը տեղի է ունենում ազատ թթվածնի բացակայության (օդազուրկ) միջավայրում:

**АНГЛИЙСКИЙ ГРАДУС ЖЕСТКОСТИ ВОДЫ** — ԶՐԻ ԿՈՇՏՈՒԹՅԱՆ ԱՆԳ-ԻՒԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, տե՛ս ЖЕСТКОСТЬ ВОДЫ:

**АНИЗОТРОПНАЯ ПОРОДА** — ԱՆԻՍՏՐՈՍՏՆԱԿ (ԱՆԻՉՈՏՐՈՊ) ԱՊԱՐ, ապար, որի ջրաթափանցելիությունը, սեղմման դիմադրությունը, սաֆքի դիմադրությունը, օպտիկական և այլ հատկությունները տարբեր ուղղություններով տարբեր են: Ապարի անհամատեսակությունը պայմանավորված է նրա կառուցվածքային առանձնահատկություններով: Ա. ա-ի օր. կարող են ծառայել ծալավեճային կավերն ու լյուտերը: Առաջինների մոտ հորիզոնական ուղղությամբ ջրաթափանցելիությունը մեծ է, սաֆքի դիմադրությունը՝ փոքր, իսկ ուղղաձիգ ուղղությամբ՝ հակառակը, լյուտերի մոտ ջրաթափանցելիությունը էապես մեծ է ուղղաձիգ ուղղությամբ ևն: Զրաերկրաբանության մեջ անհամատեսակ է համարվում այնպիսի ապարը, որի ծծանցման գործակիցը փոփոխվում է՝ կախված ծծանցման ուղղությունից:

**АНИОНЫ** — ԱՆԻՈՆՆԵՐ, բացասական լիցքավորում ունեցող իոններ (տե՛ս ИОНЫ):

**АНОМАЛИЯ БАКТЕРИАЛЬНАЯ** — ՄԱՆՐԷԱՅԻՆ ԽՈՏՈՐՈՒՄ (ԱՆՈՄԱԼԻԱ), ստ. ջրերում համընդհանուր իրադրության համեմատությամբ որոշակի մանրէների խտտորիչ բարձր պարունակություն: Որոշ Մ. խ-ներ օգտագործվում են որպես օգտակար հանածոների հերքվ-եր որոնելու ցուցանիշներ:

**АНОМАЛИЯ ВОДЫ** — ԶՐԻ ԽՈՏՈՐՈՒՄ, ֆիզ. մի շարք հատկություններով ջրի տարբերվելը այլ միներալներից ու բնական միացություններից: Զրի կարևոր խտտորիչ հատկություններից են. 1) առավելագույն խտությունը  $+4^{\circ}$  Ց դեպքում, 2) սառչելիս (սառցի վերածվելիս) ծավալի բնդարձակումը (նվազման փոխարեն), 3) ճնշման տակ սառցի հալման ջերմաստիճանի նվազումը (բարձրացման փոխարեն), 4) նվազագույն ջերմատարողությունը  $+27^{\circ}$  Ց դեպքում, 5) հագեցած ջրագոյորշիների ջերմատարողության նվազումը և դրա պատճառով մատախողի առաջացումը, 6) էլեկտրական և ջերմային ճառագայթման մարզում խտտորիչ դիսպերսիան: Բացի թվարկած Ջ. խ-ներից անսովոր մեծ է նաև ջրի ջերմատարողությունը, հալման ու գոլորշացման ջերմությունը, երկէլեկտրիկ հաստատունը ևն: Որոշ Ջ. խ-ներ ջրի հանքայնացման մեծացմանը զուգընթաց նվազում են, իսկ լուծույթի լրիվ հագեցման դեպքում՝ վերանում:

**АНОМАЛИЯ ГИДРОДИНАМИЧЕСКАЯ** — ԶՐԱԴԻՆԱՄԻԿ ԽՈՏՈՐՈՒՄ, ստ. ջրերի տարածման տեղամաս, որտեղ ջրաերկր. պարամետրերը (շարժման արագություն, շերտային ճնշում ևն) էապես տարբերվում են (խտտորիչ ևն) տվյալ ջրատար համալիրի կամ հորիզոնի այլ տեղամասերի համար օրինաչափ համարվող պարամետրերից:

**АНОМАЛИЯ ГИДРОТЕРМАЛЬНАЯ** — ԶՐԱԶԵՐՄԱՅԻՆ (ԶՐԱԹԵՐՄԻԿ) ԽՈՏՈՐՈՒՄ, ստ. ջրերի տարածման տեղամաս, որտեղ նրանց ջերմաստիճանը էապես շեղվում է տվյալ ջրատար համալիրին կամ հորիզոնին բնորոշ ջերմաստիճանից:

**АНОМАЛИЯ ГИДРОХИМИЧЕСКАЯ** — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԽՈՏՈՐՈՒՄ, ստ. ջրերի տարածման տեղամաս, որտեղ նրանց քիմ. բաղադրությունը որևէ ցուցանիշով (ընդհանուր հանքայնացում, առանձին բաղադրիչների պարունակություն ևն) տարբերվում է տվյալ ջրատար համալիրի կամ հորիզոնի ստ. ջրերին բնորոշ նույնատիպ հատկանիշներից:

**ԱՐԵՕՄԵՏՐ** — ԽՏԱՉԱՓ, հեղուկի խտությունը չափելու սարք: Իրենից ներկայացնում է խողովակաձև ապակյա լողակ, որի ստորին ուղուցիկ մասում հարմարեցված է ծանրոց և ջերմաչափ, իսկ վերին մասում արված է հեղուկի խտությունը ցույց տվող սանդղակ՝ սենյակային ջերմաստիճանի ( $20^\circ$ ) և  $4^\circ$  Ց համար: Եթե հետազոտվող հեղուկի (սուսպենզիայի) ջերմաստիճանը բարձր է կամ ցածր  $20^\circ$ -ից, ապա Խ-ի ցուցման մեջ մտցվում է ջերմաստիճանային ուղղում, որի համար մշակված է համապատասխան աղյուսակ: Որքան փոքր է հեղուկի խտությունը, այնքան Խ. ավելի շատ է ընկղմվում նրա մեջ: Խ-երը լայնորեն կիրառվում են փոխար մանրահատիկ ապարների հատիկաչափական բաղադրությունն ուսումնասիրելիս (տե՛ս Արեոմетрический метод):

**ԱՐԵՕՄԵՏՐԻԿԵՍԿԻԻ ՄԵՏՈԴ** — ԽՏԱՉԱՓԱԿԱՆ ՄԵԹՈԳԻ, փոխար մանրահատիկ ապարների հատիկաչափական տարրալուծության մեթոդ՝ խտաչափի միջոցով: Հիմնված է գրունտի սուսպենզիայի (մեխ. խտանորդ պարունակող հեղուկի) խտության որոշման վրա, որը փոփոխվում է խոշորահատիկ մասնիկների անջատմանը զուգընթաց: Խ. մ-ով որոշվում է գրունտում  $0,25$  մմ-ից փոքր տրամաչափի մասնիկների պարունակությունը: Ինժեներական երկրաբանության նպատակների համար գրունտների հատիկաչափական բաղադրությունն ուսումնասիրելիս Խ. մ. համարվում է հիմնական մեթոդ:

**ԱՐԻԴՆԱԿ (ԶԱՏՄՍԼԻՎԱԿ) ՕԲԼԱՍՏԻ** — ՉՈՐԱՅԻՆ (ԱՐԻԳ.) ՄԱՐԶ, չոր (արիդ), խիստ ցամաքային կլիմա ունեցող մարզ, որտեղ գոյորշացումը գերազանցում է մթնոլորտային տեղումներին, գետային հոսքը կրում է ժամանակավոր բնույթ, բացառությամբ այն գետերի, որոնք իրենց սնումն ստանում են հարևան բարձր լեռնային խոնավ մարզերից (օր., Նեղոս գետը): 2. մ-երը տարածված են մերձարևադարձային գոտիներում, երբեմն նաև բարձրադիր լեռներով շրջապատված հարթավայրերում, տափաստաններում ու անապատներում: 2. մ-երում գերիշխում են ֆիզ. հողմամարման գործընթացները (քամու և ժամանակավոր գետային հոսքի գործունեությունը):


**ԱՐՏԱՆ (ԱՐՍԱՆ, ԱՐԱՍԱՆ)** — ԱՐԱՍՆ (ԱՐԾԱՆ, ԱՐԱՍԱՆ), անխաթթվաչին սառը և ազոտային զով ջրերի աղբյուրների անվանում Սիբիրում, Միջին Ասիայում, Մոնղոլիայում:

**ԱՐՏԵՅԻԱՆՍԿԱԿԱ (ՊԵՅՅՕՄԵՏՐԻԿԵՍԿԱԿԱ) ՍՈՒՐՖԱՆՍԿԱԿԱ** — ԱՐՏԵՉՉԱՆ (ՇՆՇՈՒՄՆԱՅԻՆ) ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, երևակայական մակերևույթ, մինչև որը բարձրանում է կամ կարող է բարձրանալ ջուրը հորատանցքերով և այլ լեռնային փորվածքներով: Ա. մ. բարտեզի վրա արտահայտվում է պիեզոիզոգծերի՝ միևնույն ճնշումն ունեցող կետերը միացնող գծերի միջոցով: Եթե Ա. մ. ավելի բարձր է, քան

տեղանքի ռելիեֆը, ճնշումը կոչվում է դրական, իսկ հակառակ պարագայում՝ բացասական:

### АРТЕЗИАНСКИЕ ВОДЫ — ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐԵՐ, տե՛ս ВОДА АРТЕЗИАНСКАЯ:

АРТЕЗИАНСКИЙ БАССЕЙН ПОДЗЕМНЫХ ВОД — ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՐՏԵԶՅԱՆ ԱՎԱԶԱՆ, ճնշումնային ջրատար շերտերի համակարգ, որը կապված է լինում գերազանցապես սինկլիզմների և սինկլինալին ճկվածքների հետ: Մասնավոր դեպքում արտեզյան ալվազանը կարող է ներկայացված լինել միայն մեկ ջրատար շերտով (ճկ. 1): Յուրաքանչյուր արտեզյան ալվազանի սահմաններում ստանձնացվում են սնման (a), ճնշման (b) և բեռնաթափման (c) մարզեր:





Նկ. 1. Արտեզյան ալվազանի սխեմա:

1—ջրատար ալվազանների շերտ, 2—ջրամերձ կալվային ապարներ, 3—ստ. ջրերի մակարդակ, A—արտեզյան ջրերի տարածման գոտի, a—սնման մարզ, b—ճնշման մարզ, c—բեռնաթափման մարզ, B—գրունտային ջրերի տարածման գոտի, H<sub>1</sub>—դրական ճնշման մակարդակ, H<sub>2</sub>—բացասական ճնշման մակարդակ, NN'—ճնշման (պիեզոմետրիկ) մակարդակ, m—ջրատար շերտի հաստություն:

АРТЕЗИАНСКИЙ ВОДОНОСНЫЙ ГОРИЗОНТ — ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐԱՏԱՐ ՀՈՐԻԶՈՆ, ջրատար ապարի շերտ, որը վերևից ու ներքևից սահմանափակված է ջրաթափանց (ջրամերձ) ապարներով և պարունակում է ճնշումնային ստ. ջրեր:

АРТЕЗИАНСКИЙ КОЛОДЕЦ — ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐՀՈՐ, ուղղանկյուն կամ գլանաձև կտրվածքով ուղղաձիգ փորվածք, որը հասել է ոչ մեծ խորության (մինչև 20—30 մ) արտեզյան ջրի հորիզոն:

АРТЕЗИАНСКИЙ СКЛОН — ԱՐՏԵԶՅԱՆ ԼԱՆՁ, ճնշումնային ստ. ջրերի յուրատեսակ անհամաչափ ալվազան, որը կապված է լեռնածալքավոր մարզերի, երկրամասերի միաթեք (մոնոկլինալ) տեղադրված կամ անկման ուղղությամբ սեպանձև վերջացող ջրապարունակ շերտային կառուցվածքների հետ (ճկ. 2): Նման իրադրության պայմաններում սնման մարզում ստեղծվում է ճնշում, որի մակարդակը որոշվում է ջրապարունակ շերտի և նրան ծածկող ջրամերձ ապարների կոնտակտի ելքի (մակերևույթի վրա մերկացման) բացարձակ բարձրությամբ: Մերկացող կոն-



Նկ. 2. Արտեզյան լանջի սխեմա:

1—ջրատար ավազներ, 2—ջրամերձ կավեր, 3—բյուրեղային հիմքի ջրամերձ ապարներ, 4—անշումնագուրկ ջրերի մակարդակ, 5—սիեզումնետրիկ մակարդակ, 6—վերընթաց աղբյուր, 7—մթնոլորտային տեղումների Աերծծման տեղամասեր, 8—ստ. ջրերի շարժման ուղղություն:

տակտում, որը հանդիսանում է սնման և կուտակման մարզերի միակցման գոտի, սովորաբար տեղի ունի ստ. ջրերի բեռնաթափում՝ վերընթաց և վարընթաց աղբյուրների ձևով, ըստ որում, բեռնաթափվում են նաև հորիզոնի ստորին մասերից դուրս սեղմվող անշումնային ջրերը:

АТМОСФЕРА РУДНИЧНАЯ — ՀԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ ՄԹՆՈՒՈՐՏ, գազերի և գոլորշիների խառնուրդ հանքարանի ստ. փորվածքներում: Լեռնանցողական, մասնավորապես պայթեցման աշխատանքների հետևանքով ստ. փորվածքներ մուտք գործող կամ օդափոխման նպատակով ներմղվող օդի որակը խիստ փոխվում է. թթվածնի քանակը նվազում է, ածխաթթվիներ՝ ավելանում, ի հաշտ են գալիս տարբեր թունավոր ու պայթուցիկ գազեր (մեթան), թունավոր գոլորշիներ, փոփոխվում են ջերմաստիճանը, խոնավությունը և ճնշումը: Հանքարանային ջրաերկրք. ծառայության (տե՛ս ГИДРОГЕОЛОГИЯ РУДНИЧНАЯ) խնդիրների մեջ մտնում է ստ. փորվածքներում մթնոլորտից խտացման ճանապարհով ստաչացող ջրի քանակի և ապարների ու փորվածքների ամրակապի վրա նրա ազդեցության որոշումը:

АТМОСФЕРНЫЕ ОСАДКИ — ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ, ցող, անձրև, ձյուն, եղյամ, կարկուտ և այլ տեղումներ, որոնք թափվում են մթնոլորտից (տրոպոսֆերայից) ցամաքի կամ ծովի վրա: Մ. տ. չափվում են տարվա ընթացքում տեղումներից գոյացող հեղուկի պան բարձրությամբ՝ մմ-երով:

**АЭРАЦИЯ ВОДЫ** — ՋՐԻ ՕՐԱՀԱԳԵՑՈՒՄ (ԱԷՐԱՑԻԱ), օդի (թթվածնի) ներգործությամբ խմելու և հոսքային ջրերը որոշ կախված նյութերից, լուծված և օրգ. միացություններից մաքրելու մեթոդ: Ջ. օ. հաշտողությամբ կիրառվում է ջրերը երկաթի միացություններից մաքրելու համար:

**АЭРАЦИЯ ПОТОКА** — ՀՈՍԳԻ (ՋՐՀՈՍԳԻ) ՕՐԱՀԱԳԵՑՈՒՄ, հոսող ջրի օդով հագեցում, որը տեղի է ունենում ջրհոսքի մեծ արագությունների, մասնավորապես մրրկային (տուրբուլենտ) շարժման ժամանակ:

**АЭРОБЫ** — ՕՐԱԿՅԱՑ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ (ԱԷՐՈԲՆԵՐ), օրգանիզմներ, որոնց կենսագոյության համար անհրաժեշտ է ազատ թթվածին: Օ. օ-ին են պատկանում օրգանիզմների ճնշող մեծամասնությունը:

**АЭРОГИДРОГЕОЛОГИЧЕСКОЕ ДЕШИФРИРОВАНИЕ** — ՕՐԱԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԾԱՆՈՒՄ, օդալուսանկարների վերծանում, մեկնաբանում՝ առ. ջրերի տարածման շրջանի ուսումնասիրման կամ ճշտման նպատակով: Լիարժեք վերծանման համար հաշվի են առնում տեղանքի երկրբ. կառուցվածքի, երկրաձևաբանական պայմանների առանձնահատկությունները, բուսականության, հողային ծածկի բնույթն ու գունավորումը ևն:

**АЭРОЗОЛЫ** — ԱԷՐՈԶՈԼԵՐ (ՕՐԱՓՈԹԻՆԵՐ) դիսպերս (ծայր աստիճան ցրված) համակարգեր, որոնք կազմված են գազային միջավայրում (սովորաբար օդում) կախված կարծր կամ հեղուկ նյութի մանր մասնիկներից: Եթե դիսպերս մասնիկները ներկայացված են հեղուկի մանրագույն կաթիլներով, ապա Ա. կոչվում են մատախող, իսկ կարծր դիսպերս նյութի դեպքում՝ ծուխ: Փոշին վերագրվում է կոպիտ դիսպերս Ա-ի շարքին, որոնց մասնիկների չափերը տատանվում են մի քանի մմ-ից (ծյան փաթիլներ, անձրևի կաթիլներ) մինչև  $10^{-3}$  մմ:

**АЭРОМЕТРИЧЕСКАЯ СТУПЕНЬ** — ՕՐԱԶԱՓԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, բարձրության միջակայք (մ-երով), որի դեպքում օդի ջերմաստիճանը նվազում է  $1^\circ$  Ց: Օ. ա. փոխվում է բարձրությանը զուգընթաց. մթնոլորտի ստորին շերտերում (մինչև 2 կմ) այն հավասար է շուրջ 200 մ, իսկ նրանից վերև Օ. ա. նվազում է:

**АЭРОФИТЫ** — ՕՐԱԲՈՒՅՈՒՐ (ԱԷՐՈՖԻՏԵՐ), բույսեր, որոնք իրենց անհրաժեշտ բոլոր սննդանյութերը ստանում են մթնոլորտից: Օ. բնակվում են ծառերի նյութերի, ժայռերի ու քարաբեկորների վրա, ապայն սնվում են ինքնուրույն, նրանց արմատները ծառայում են զուտ կառչելու համար: Նախկին ԽՍՀՄ-ում, ինչպես նաև չափավոր կլիմայով այլ երկրներում, Օ. ներկայացված են ոչ ծաղկավոր բուսատեսակներով (մամուռ, քարաքոս ևն):

— Б —

**БАЗИС КАРСТА** — ԿԱՐՍՏԻ ՀԻՄՔ (ԲԱԶԻՍ), կարստի զարգացման ստորին ասիման, որը հիմնականում համընկնում է տվյալ շրջանի ողողամաշման (էրոզիայի) հիմքի (տեղական գետային ցանցի) հետ և պայմանավորված է առ. ջրերի ակտիվ շրջանառության խորությամբ: Եթե տվյալ շրջանի ջրաերկրբ. կարվածքում

ատկա են կարստային ճնշումնային ջրեր, սպա Կ. Ռ. ողողամաշման հիմքի նկատմամբ շատ ավելի ցածր է:

**БАЗИС ОПОЛЗНЯ** — ՍՈՂԱՆՔԻ ՀԻՄՔ (ԲԱԶԻՍ), սողանքի սահքի հարթության ստորին սահման, որը հիմնականում համընկնում է լանջի (արհեստական թեքության) հիմքի հետ և պայմանավորված է սողանքային գործընթացին դիմադրող գործոնների ազդեցությամբ:

**БАКТЕРИОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОДЫ** — ԶՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ջրում եղած մանրէների պարունակության, նրանց տեսակի և գաղութների թվի որոշում: Խմելու ջրի մաքրության գնահատման համար որոշվում է աղիքային ձողիկների (ցուպիկների) քանակը ջրի որոշակի ծավալի մեջ (կոլի-տիտր): Տարբերում են հետևյալ որակի ջրեր. ստողջ (1 աղիքային բացիլ 100 մլ ջրում), բավականաչափ ստողջ (1 աղիքային բացիլ 10 մլ ջրում), կասկածելի (1 աղիքային բացիլ 1 մլ ջրում), անստողջ-կեղտոտված (1 աղիքային բացիլ 0,1 մլ ջրում) և միանգամայն անստողջ (1 աղիքային բացիլ 0,01 մլ ջրում): Զ. մ. տ-ները կատարվում են ստողջապահական ծառայության հատուկ լաբորատորիաներում:

**БАЛАНС ВОДНЫЙ** — ԶՐԱՅԻՆ ՀԱԾՎԵԿԾԻՌ, որոշակի շրջանի (ավազանի) սահմաններում ջրի մուտքի և ծախսի բաղադրիչների քանակական հարաբերակցությունը որոշակի ժամանակամիջոցում (սովորաբար 1 տարում): Զ. հ-ի մուտքի բաղադրիչներն են. մթնոլորտային տեղումները, ջրային գոլորշիների խտացումը, մակերևութային և ստ. ջրերի մուտքը դեպի տվյալ ավազան (ներհոսքը): Զ. հ-ի ծախսի բաղադրիչներն են. գոմարային գոլորշիացումը (ցամաքից, ջրակուտակներից և բուսականությունից), մակերևութային և ստ. ջրերի արտահոսքը: Բազմամյա ժամանակամիջոցի համար Զ. հ. հավասար է զերոյի:

**БАЛАНС ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՀԱԾՎԵԿԾԻՌ, որոշակի տարածքի (ջրաերկր. շրջանի, հերվ-ի) ստ. ջրերի սնման և ծախսի բաղադրիչների քանակական հարաբերակցությունը որոշակի ժամանակահատվածում: Ս. ջ. հ-ի մուտքի բաղադրիչներն են. մթնոլորտային տեղումները, ջրային գոլորշիների խտացումը, մակերևութային ջրհոսքերից ու ավազաններից ջրի կլանումը և ստ. ջրերի ներհոսքը այլ ավազաններից: Ս. ջ. հ-ի ծախսի բաղադրիչներն են. ստ. ջրերի արտահոսքը և գոմարային գոլորշիացումը (հողից, բուսականությունից): Ս. ջ. հ-ի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պարզել ստ. ջրերի քանակը, սնման և ռեժիմի օրինաչափությունները՝ կապված խոնավության շրջապատույթի հետ:

**БАЛАНСОВЫЙ МЕТОД** — ՀԱԾՎԵԿԾՈՒՅԻՆ ՄԵԹՈՒՐ, որևէ սահմանափակ տարածքում (ավազանում) որոշակի ժամանակամիջոցի համար ջրի մուտքի և ելքի բաղադրիչների, ջերմության ևնի քանակական համադրման մեթոդ:

**БАЛАНСОВОЕ УРАВНЕНИЕ** — ՀԱԾՎԵԿԾՈՒՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, ջրային հաշվեկշռի մուտքի և ելքի բաղադրիչների միջև գոյություն ունեցող կապի հավասարում: Ստանձին ավազանի համար  $A$  մուտքը կազմված է ավազանում թափվող

մթնոլորտային տեղումներից (X), ջրային գոլորշիների խտացումից (K) և դեպի տվյալ ավազան կատարվող ստ. հոսքից (P): Այսպիսով մուտքը՝  $A = X + K + P$ : Ելքի մասը՝ B, բաղկացած է մակերևութային հոսքից (V), գոլորշիացումից (Z) և ավազանից կատարվող ստ. արտահոսքից (F), կամ՝  $B = V + Z + F$ : Չորային տարիներին մակերևութային և ստ. խոնավության ընդհանուր ծավալը պակաս է, քան խոնավ տարիներին, այդ պատճառով՝  $A < B$ , իսկ խոնավ տարիներին, հակառակը՝  $A > B$ : Այսպիսով, տարեկան ջրային շ. հ. փակ ավազանի համար կունենա հետևյալ տեսքը.  $X + K + P = V + Z + F \pm \Delta W$ , որտեղ  $+\Delta W$ -ն խոնավության կուտակումն է, իսկ  $-\Delta W$ -ն՝ պակասը (նվազումը):

**БАЛАНСОВЫЙ УЧАСТОК (ПЛОЩАДКА) — ՀԱՇՎԵԿԵՌԱՅԻՆ ՏԵՂԱՍՍԱՍ (ՀՐԱՊԱՐԱԿ),** ջրհավաք ավազանի տարածքի փոքր ու բնորոշ տեղամաս (հրապարակ), որը ջրային հաշվեկշռի բաղադրիչների անմիջական որոշումների համար կանավորված է օդերևութաբանական, ջրաչափական և ջրաերկրք. սարքավորումներով: Քանի որ ժամանակի ընթացքում հողային շերտի խոնավությունն ու գրունտային ջրերի քանակությունը փոփոխական են, ապա դրանց որոշման նպատակով շ. տ-երը կանավորվում են հատուկ խոնավաչափերով և դիտողական հորատանցքերով: Շ. տ-երի չափերը լինում են մի քանի հա-ից մի քանի հարյուր հա, իսկ հրապարակներ՝ հա-ի տասներդասական մասեր:

**БАЛЛАСТНОЕ КОРЫТО — ԲԱՍՍՍՏՆՅՈՒՆ (ՎԵՐՆԱՍԻՑԳԻ) ՏԱՇՏԱԿ,** երկաթուղային պատտառի տակ գնացքների թափահարումից ստացացած տաշտակաձև իջվածք: Բ. տ. աճում է դեպի ներքև և, իր մեջ կուտակելով մթնոլորտային տեղումները, սովորաբար հանգեցնում է երկաթուղային պատտառի ձևախախտումների: Հոմանիշ՝ հողային տաշտակ:

**БАРОМЕТРИЧЕСКИЙ ГРАДИЕНТ (ГРАДИЕНТ ДАВЛЕНИЯ) — ԾՆՇՈՒՄ-ՎԱՋԱՓԱԿԱՆ ԳՐԱԴԻԵՆՏ (ԾՆՇՄԱՆ ԳՐԱԴԻԵՆՏ),** մթնոլորտի ճնշման փոփոխում՝ միավոր տարածության վրա, որպիսին ընդունվում է 111,1 կմ, այսինքն միջօրեականի  $1^\circ$  երկարությունը:

**БАРОМЕТРИЧЕСКАЯ ФОРМУЛА — ԾՆՇՈՒՄ-ՆԱՋԱՓԱԿԱՆ (ԲԱՐՈՄԵՏՐԻԿ) ԲԱՆԱԶԵՎ,** արտահայտում է բարձրությունից կախված մթնոլորտային ճնշման փոփոխության օրենքը: Ծ. բ-ի օգնությամբ տարբեր բարձրությունների վրա գտնվող երկու կետերում եղած ճնշումների տարբերությամբ կարելի է հաշվել այդ կետերի բարձրությունների տարբերությունը, այսինքն կարելի է կատարել ճնշումնաչափական հարթաչափություն. համաձայն Ծ. բ-ի՝  $h - h_0 = 184001g \frac{P_0}{P} + (at)$ , որտեղ՝  $h - h_0$  — բարձրությունների տարբերությունն է, մ,  $P_1 P_0$  — ճնշումներն են՝ այդ կետերում, սնդ. սյունմմ, մթն.,  $t$  — օդի շերտի միջին ջերմաստիճանն է,  $^\circ$  Ց,  $a$  — գործակից, որը հավասար է  $\frac{1}{273}$  — :

**БАРАЖ — ԲԱՐԱՇ,** ստ. պատվար կամ ագուցապատ, որը կառուցվում է ստ. ջրամբար ստեղծելու կամ ջրհավաք կառույցի մեջ կողմնակի (աղտոտված) ջրերի մուտքը արգելափակելու նպատակով:

**БАРЬЕРНЫЕ (ПЛОТИННЫЕ, ПОДПОРНЫЕ) ИСТОЧНИКИ — ԴԻՄԱ-  
ՐԱՅԻՆ (ՊԱՏՎԱՐԱՅԻՆ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնք դուրս են գալիս  
երկրի մակերևույթ ստ. ջրհոսքը բնական արգելքներով դիմնարվելու հետևանքով:  
Բնական արգելքներ կարող են հանդիսանալ տեկտ. խզվածքները (բուն խզվածքը  
լցնող կավերը կամ ջրամերձ ապարներով ներկայացված մյուս թևը), մագմածին  
ապարների էլքերը, ապարների ջրաթափանցելիության կտրուկ նվազումը ևն:**

**БАССЕЙН — ԱՎԱԶԱՆ, 1.** Երկրամաթանությունում՝ ցամաքի տեղամաս, որն ունի դեպի կենտրոն ուղղված լանջերի և հոսքի համակարգ: Տարբերում են Ա-ի հետևյալ տեսակները. ա) ջրհավաք կամ գետային ջրբաժիններով սահմանափակված ցամաքի տեղամաս, որի տարածքում թափվող մթնոլորտային տեղումները և բևեռաթափվող ստ. ջրերը սնում են որևէ գլխավոր գետի համակարգ, բ) փակ կամ հոսքազուրկ-ներքամաքային մեկուսացած հոսքի մարզ, որը գետային ցանցով կապված չի օվկիանոսի հետ, գ) բնական (ծովային, լճային) կամ արհեստական ջրավազան, դ) ֆրոնային-կիսաջրջանաձև լայնացում (ամֆիթատրոնի տեսքով)՝ տրոգի մասում, որը լցված է ֆրոնով և հանդիսանում է հովտային սառցադաշտի սնման մարզ, ե) տրոգային-տրոգի հատակի խորացած մաս, որը սահմանափակված է ռիզելներով, զ) սառցադաշտային համակարգի վերջնամասային կամ լեզվակային: 2. Զրաբանությունում՝ ցամաքի մակերևույթի մաս, որի սահմաններում գոյացող հոսքը սնում է որևէ գետային համակարգ, լին կամ ծով: Յուրաքանչյուր Ա. ընդգրկում է մակերևութային և ստ. ջրհավաք Ա-ներ, որոնց սահմանները հաճախ լրիվ չեն համընկնում: Յ. Երկրաբանությունում՝ խոշոր սիսկլինային կառուցվածք, որի սահմաններում ապարները պարունակում են այս կամ այն օգտակար հանածոն: Օր., Դոնեցյան ածխային Ա., Արարատյան արտեզյան Ա. ևն:

**БАССЕЙН АРТЕЗИАНСКИХ ВОД — ԱՐՏԵԶՅԱՆ ԶՐԵՐԻ ԱՎԱԶԱՆ (ԱՐ-ՏԵԶՅԱՆ ԶՐԱՎԱԶԱՆ), տե՛ս Արтезианский бассейн подземных вод:**

**БАССЕЙН ВОДОСБОРНЫЙ — ԶՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆ, երկրի մակերևույթի մաս, որի սահմաններում գոյացող ջրհոսքը սնում է որոշակի գետ, գետային համակարգ կամ ջրավազան (լին, ծով):** Յուրաքանչյուր գետ ունի մակերևութային և առ. Ջ. ա-ներ, որոնց սահմանները մեծամասամբ լրիվ չեն համընկնում: Հոմանիշ՝ ջրհավաք մակերես, ջրաբանական ավազան:

**БАССЕЙН ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ — ԶՐԱԵՐԿՐԱՅԱՆԱԿԱՆ ԱՎԱԶԱՆ, պլատֆորմների և ծալքավոր մարզերի խոշոր երկրբ. կառուցվածքներ (սինեկլիզներ, իջվածքներ, եզրային ճկվածքներ, միջլեռնային զոգավորություններ ևն), որոնք հիմնականում կազմված են նստվածքային ապարներից և պարունակում են գերազանցապես նեոքալեոտային ստ. ջրեր: Ջ. ա-ներն ունեն սնման, հոսքի կուտակման (ճնշման) և բևեռաթափման մարզեր: Հոմանիշ՝ արտեզյան ավազան:**

**БАССЕЙН ГИДРОЛОГИЧЕСКИЙ — ԶՐԱՅԱՆԱԿԱՆ ԱՎԱԶԱՆ, տե՛ս Водосборный бассейн:**

**БАССЕЙН ГРУНТОВЫХ ВОД — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԱՎԱԶԱՆ, տե՛ս Грунтовый бассейн:**

БАССЕЙН ПОДЗЕМНЫХ ВОД — ԱՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՎԱԶԱՆ, տե՛ս  
Бассейн гидрогеологический:

БАССЕЙН РЕЧНОЙ — ԳԵՏԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ, տե՛ս Бассейн гидрологический:

БЕЗНАПОРНЫЕ ПОДЗЕМНЫЕ ВОДЫ — ԱՆՃՆՇՈՒՄ (ԱԶԱՏ) ԱՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ, տե՛ս Вода безнапорная (свободная):

БЕЗУСЛОВНЫЕ ЛОЖБИНЫ СТОКА (ДЕЛЛИ) — ՀՈՒՆԻՑ ԶՈՒՐԿ ԶՈՐԱԿՆԵՐ (ԳԵԼԼԵՐ), մշտական հոսք և հուն չունեցող հարթահատակ երկայնաձիգ, երբեմն նաև ճյուղավորված ձորակներ, որոնք տարածված են բարձրադիր փոքրաթեք լանջերի սահմաններում: Ուելինգի ցածրադիր մասերում նրանք միանալով ստաչացնում են ավելի մեծ ձորակ՝ ցայտուն արտահայտված հունով: Հ. գ. գ-ի երկարությունը չի գերազանցում 1000 մ, ստաչանում են անձրևի և հալոցքաշերտի հարթ (լանջային) հոսքի շնորհիվ:

БЕРЕГОВОЙ ВАЛ — ՄԵՐՋԱՓՆՅԱ ՀՈՂԱԹՈՒՄԲ, գետաբերուկներից ստաչացած հողաթուփ, որը ձգվում է գետահունին զուգահեռ և կատարում է բնական պատնեշի դեր: Մ. հ-ի կայունացման գործում կարևոր դեր է կատարում բուսականությունը, քրը, մի տեսակ, խարսխում ու պաշտպանում է հողաթուփը ողողատարումից:

БЕРМА — ՍԱՆԴՂԱՎԱՆԳ (ԲԵՐՄԱ), հորիզոնական նեղ ու ձգված հարթակ, որը կառուցվում է բաց հանքարանների, պատվարների, երկաթուղային պատուտների թերությունների վրա և նախատեսված է լեռնահանքային, շին. ու սպասարկման աշխատանքների անվտանգության ապահովման, տրանսպորտի շարժման և այլ նպատակների համար:

БЕССТОЧНЫЙ БАССЕЙН — ՀՈՍՔԱԶՈՒՐԿ ԱՎԱԶԱՆ, գետի կամ լճի ավազան, որի գլխավոր ջրային զարկերակի հոսքը մինչև ծով չի հասնում, իր նապարհին չոր կլիմայական պայմաններում ծախսվում է գոլորշիացման և ներծծման վրա: Օր., Միջին Ասիայի Զարաֆշան, Մուրղաբ և Թեջեն գետերը:

БИОГЕОХИМИЯ — ԿԵՆՍԱԵՐԿՐԱՔԻՄԻԱ, երկրաքիմիայի բաժիններից մեկը, որն ուսումնասիրում է օրգանիզմների դերը քիմ. տարրերի տեղափոխման, բաշխման, ցրման և կենսոլորտի, օրգանիզմների ու կենդանի նյութի մեջ կուտակման երկրաքիմ. գործընթացներում: Կենդանական և բուսական օրգանիզմներն ամբողջությամբ, կամ «կենդանի նյութը», ինչպես նշել է Վ. Ի. Վերնադսկին, կազմում են երկրագնդի կենսոլորտը և շուրջ 2 մլրդ տարուց ի վեր հանդիսանում են արեգակնային ռադիացիան պտեհնցիլ էներգիայի, ապա նաև երկրաքիմ. գործընթացների կինետիկ էներգիայի վերածող կարևորագույն մեխանիզմ:

БИОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОДЫ — ՋՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, բնական ջրի մեջ եղած բուսական և կենդանական միկրոօրգանիզմ-

ների պարունակության որոշում: Հոմանիշ՝ ջրի մանրէաբանական տարրալուծություն (տե՛ս Бактериологический анализ воды):

**БИОГЕНОЦЕНОЗ** — ԿԵՆՍԱԵՐԿՐԱՅԵՆՈՋ, երկրի մակերևույթի որոշակի տեղամաս՝ իրեն բնորոշ երկրր. կառուցվածքի, հողային ու ջրային ռեժիմի, միկրոկլիմայի, բուսական ու կենդանական աշխարհի փոխադարձ պայմանավորված համակարգով: Այդ համակարգի բոլոր տարրերը գտնվում են յուրահատուկ փոխազդեցության մեջ ինչպես միմյանց, այնպես էլ շրջապատող միջավայրի մնացած երևույթների հետ:

**БИОЛОГИЧЕСКАЯ ОЧИСТКА ВОДЫ** — ԶՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԶՐՈՒՄ, ջրի վնասագործման եղանակ, որը հիմնված է միկրոօրգանիզմների կենսագործունեության ազդեցությամբ ջրում եղած օրգ. նյութերի քայքայման և օքսիդացման վրա: Զ. կ. մ. նպատակով կառուցվում են մաքրման ջրավազաններ, ծծանցման դաշտեր, կենս. քամիչներ ևն:

**БИОСФЕРА** — ԿԵՆՍՈՒՈՐՏ, կենդանի օրգանիզմներով բնակեցված ոլորտ, որն ընդգրկում է երկրագնդի մակերևույթը, նրան հարող մթնոլորտի ստորին 15—20 կմ-անոց շերտը (տրոպոսֆերան), ողջ ջրային պատշաճը և երկրակեղևի վերին 3—4 կմ-անոց շերտը, այսինքն երկրագնդի այն պատշանները որտեղ հնարավոր է օրգանիզմների կենսագործունեությունը: Կ-ի կենդանի նյութի զանգվածը հաշվվում է մոտավորապես  $n. 10^{14}$ — $2.10^{16}$  տն:

**БИТУМИЗАЦИЯ (БИТУМИНИЗАЦИЯ)** — ԲԻՏՈՒՄԱՑՈՒՄ, ճեղքավորված, զանգվածային կամ փուխ բեկորային ապարների մեխ. հատկությունների և ջրանթափանցելիության արհեստական բարելավման եղանակ: Բ. իրականացվում է տաք, մածուցիկ դարձած բիտումը ներմղելով ապարների մեջ, որը սառչելով, ամրանում-շտկակալում է բեկորային մասնիկները և լցնում րաց ճեղքերը՝ նվազեցնելով նրանց ջրաթափանցությունը:

**БИТУМИНОЗНЫЕ ПОРОДЫ** — ԲԻՏՈՒՄԱՍԱՐ ԱՊԱՐՆԵՐ, բիտումներ պարունակող նստվածքային ապարներ, որոնք մոգ գույներ են ձեռք բերում և բնորոշ հոտ են արձակում: Տարբերում են Բ. ա-ի երկու տեսակ. 1) բիտումով համաչափորեն հագեցված ապարներ՝ բիտումատար կավեր, սվազաքարեր, 2) բիտումով միայն ճեղքերն ու ծակոտիները լցված ապարներ՝ բիտումատար կրաքարեր ու դոլոմիտներ:

**БЛАГОРОДНЫЕ (ИНЕРТНЫЕ, РЕДКИЕ) ГАЗЫ** — ԱՋՆԻՎ (ՉԵՁՈՔ, ՀԱՋՎԱԳՅՈՒՏ) ԳԱՋԵՐ, Գ. Ի. Մենդելևի պարբերական համակարգի 8-րդ խմբի տարրեր-հելիում, նեոն, արգոն, կրիպտոն, քսենոն և ռադոն (ռադիոմի զազակերպ էմանացիա): Բնութագրվում են քիմ. այլ տարրերի հետ ռեակցիայի մեջ մտնելու անընդունակությամբ: Սակայն, ինչպես ցույց է տվել քիմիկոս Բ. Ա. Նիկիտինը, Ա. գ-ի մոլեկուլները կարող են կազմել որոշակի, թեկուզև շատ անկայուն միացություններ՝ ջրի, տոլուոլի, ֆենոլի և այլ մոլեկուլների հետ:

**БЛЮДЦА (ЗАПАДИНЫ)** — ԱՓՍԵԱՋԵՎ ՓՈՍՈՐԱԿՆԵՐ, փոքր կլորավուն

ձագարանն իջվածքներ, որոնք լայնորեն տարածված են նախկին ԽՍՀՄ-ի անտառային, տափաստանային և կիսաանապատային գոտիներում: Ա. փ. առաջանում են տարբեր բնական գործընթացների (կարստ, ջերմակարստ, մտում, սուֆոզիա ևն) շնորհիվ:

БОКОВОЕ ДАВЛЕНИЕ — ԿՈՂԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ, գրունտի վրա ուղղաձիգ ճնշում (ծանրաբեռնվածություն) գործադրելիս դեպի կողերը գործող ճնշում, որը ձգտում է գրունտի մասնիկները տեղաշարժել դեպի կողերը: Նման տեղաշարժի բացակայության դեպքում Կ. ճ. ( $P_4$ ) ուղղակի կապի մեջ է ուղղաձիգ ճնշումից ( $P_{\text{ու.}}$ )՝  $P_4 = EP_{\text{ու.}}$ , որտեղ՝ E-ը կողային ճնշման գործակիցն է (տե՛ս Կոեֆֆիցիենտ бокового давления):

БОКОВЫЕ (ОКОЛОСОЛЕВЫЕ) ВОДЫ — ԿՈՂԱՅԻՆ ՄԵՐՉԱՂԱՅԻՆ ՋՐԵՐ, աղաբեր հաստվածքի կողային մասերի ստ. ջրեր, որոնք տեղադրված են աղի հաստվածքը եզրափակող ապարների մեջ: Աղաբեր հաստվածքի շահագործման ժամանակ այդ ջրերը կարող են ներխուժել լեռնային փորվածքներ և մեծ վնասներ պատճառել:

БОКОВОЕ ТРЕНИЕ — ԿՈՂԱՅԻՆ ԾՓՈՒՄ, գրունտի մեջ խորասուզվող կոշտ մարմնի (ցից, զոնդ, գնդիկ ևն) մակերևույթի վրա գրունտի մասնիկների կողմից գործադրվող շփման ուժեր:

БОЛОТНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ — ԾԱՀԾԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, բույսերի համակցություն, որը բնորոշ է ճահիճների և գերխոնավ հողերին, ընդ որում բույսերի արմատներն ու ստորին մասը գտնվում են ջրի մեջ: Ցուրտ և չափավոր կլիմայական գոտիներում ճ. բ. ներկայացված է խոտաբույսերով, ցամրահասակ թփուտներով ու ծառատեսակներով, իսկ տաք և մերձարևադարձային գոտիներում այն ավելի փարթամ է, աճում են նաև խոշոր ծառատեսակներ: Ընդունված գիտական տեսության համաձայն, բրածո աձխի մեծ մասն առաջացել է երկրբ. նախորդ ժամանակաշրջանների ճ. բ. հաշվին:

БОЛОТНЫЕ ВОДЫ — ԾԱՀԾԱՅԻՆ ՋՐԵՐ, ջրեր, որոնք կապված են ճահիճային հատվածքների հետ: Ծ. ջ-ին բնորոշ է օրգ. նյութերի և երկաթի բարձր պարունակությունը: Բուսական մնացորդների ոչ լրիվ քայքայման հետևանքով Ծ. ջ. ունենում են թթու (հազվադեպ չեզոք) ռեակցիա և ազդելով են բետոնի նկատմամբ:

БОЛОТНЫЙ ГАЗ — ԾԱՀԾԱՅԻՆ ԳԱԶ, գազերի խառնուրդ, որն առաջանում է ճահիճում, օդից զուրկ պայմաններում բուսական մնացորդների քայքայման հետևանքով: Ծ. գ. այրվող է, բանի որ հիմնականում բաղկացած է մեթանից (20—95%), պարունակում է նաև ածխաթթու, ազոտ և այլ գազեր:

БОЛОТО — ԾԱՀԻՃ, գերխոնավ կամ ջրի համատարած շերտով ծածկված (տալվա զգալի ժամանակահատվածում) տեղամաս, որտեղ աճում է լուրատեսակ ճահիճային բուսականություն և տեղի են ունենում տորֆառաջացման գործընթացներ: Ծ-ները տարածված են բոլոր կլիմայական գոտիներում, նրանց առաջացումը պայ-

մանավորված է ֆիզիկաաշխարհը. (առատ տեղումներ, աննշան գոլորշիացում, հոսքի դժվարություն, զոգավոր ռելիեֆ), ջրաերկրք. (ստ. ջրերի բեռնաթափում) և այլ գործոններով: Ըստ տեղադիրքի և սնման պայմանների, տարբերում են բարձրադիր, ցածրադիր, անցումային, ջրբաժանային, կախված, գրունտային սնման և այլ Ծ-ներ: Առանձնացվում են նաև իսկական կամ բուն Ծ-ներ, որոնց բնորոշ է տորֆի զգալի կուտակումը (շերտի հզորությունը գերազանցում է 30—40 սմ-ից), ճահճակալված հողեր, որտեղ տորֆագոյացումը նոր է սկսվում և բույսերի մեծ մասի արմատները հասնում են մայր հողագրունտներին:

БОМЕ ГРАДУСЫ — ԲՈՄԵՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ, տե՛ս Градусы (шкала) Боме:

БОРОНОСНЫЕ ВОДЫ — ԲՈՐԱՅԻՆ (ԲՈՐԱԿԻՐ) ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնց մեջ բարձր է բորի պարունակությունը: Այդ ջրերը արդյունաբերական նշանակություն են ձեռք բերում, եթե բորի պարունակությունը գերազանցում է 162 մգ/լ-ից ( $1,62 \cdot 10^{-2}$  %-ից):

БРЕКЧИЙ ОПОЛЗНЕВЫЕ — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՓՇՐԱԲԵԿՈՐՆԵՐ, գերազանցապես ստորջրյա պաշմաններում տեղի ունեցող սողանքների կոտրատման հետևանքով առաջացած բեկորներ, որոնք աչքի են ընկնում բեկորների համաչափությամբ և պլաստիկ սահքի հետքերով (խազերի, ակոսիկների առկայությամբ):

БРИЗАНТНОЕ ДЕЙСТВИЕ ГАЗОВ — ԳԱԶԵՐԻ ԲՐԻԶԱՆՏԱՅԻՆ (ՓՇՐՈՂ) ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ, հորատանցքեր կամ շարքեր հորատելիս շերտային զագերի պայթման քայքայիչ գործունեություն, որի հետևանքով սպարները փշրվում են, իսկ երբեմն ձևախախտվում են նաև հորատանցքի ամրակապման խողովակները:

БУГРИ ПУЧЕНИЯ (ВСПУЧИВАНИЯ) — ՈՒՌՉՄԱՆ ԹՄԲԵՐ, ոչ մեծ չափերի միամյա թմբեր (ջրալակոլիտներ), որոնք առաջանում են գերխոնավ փոխք բեկորային սպարների ստեղծումից: Ու. թ-ի բարձրությունը սովորաբար հասնում է 1,5—2,0 մ-ի, նրանց մակերևույթը պատվում է ճտազալթաձև ճաքերով:

БУЗУН — ԲՈՒԶՈՒՆ, կերակրի աղի նորագոյացում աղաչրային ծանձաղ լճերում. հաճախ աղի հետ միասին նստում է նաև տիղմը:

БУЛАК — ԲՈՒՎԱՂ, աղբյուրի թուրքերեն անվանում:

БУЛГУННЯХИ — ԲՈՒԳՈՒՆՅԱԽՆԵՐ, բազմամյա սառցույթի շրջաններում տարածված խոշոր ջրալակոլիտների ու սառցաբլուրների լակուտական անվանում: Բ. առաջանում են տորֆակալած փակ լճային ու ճահճային զոգավորությունների ստաչելու ժամանակ: Զրահագեցած տորֆի ու հողագրունտների ստեղծումը ուղեկցվում է ծավալի ընդարձակումով, որի հետևանքով մակերևույթն ուռչում է: Տորֆային (հողագրունտային) շերտի տակ առաջացող դատարկությունները լցվում են ջրով, որը ստաչելով, առաջացնում է ջրալակոլիտ: Մակերևույթում բ. դրսևորում են մինչև 40—70 մ բարձրության և 200 մ տրամագծով թմբերի ու բլուրների ձևով: Բ.

նման են Ալյասկայում տարածված ջրավերլուծարարի բլորներին, որոնք ստացել են «Պինգո» տեղական անվանումը:

БУНЫ МОРСКИЕ — ԾՈՎԱՅԻՆ ԱԼԵԶԵՐՁԵՐ, ափապաշտպան կառույցներ, որոնք տեղակայվում են ծովափերում ափքների հարվածային ուժը թուլացնելու և լողափերի երկարությամբ ավազագլաբարային նստվածքների տեղաշարժը կանխելու համար: Ծ. ա. իրենցից ներկայացնում են ափին ուղղահայաց կամ որոշ անկյան տակ (կախված ափքների իշխող ուղղությունից) կառուցված բետոնե կամ քարալիցքով (ազույցացցավոր արկղերում) պատնեշներ, որոնք ունենում են մինչև 50—60 մ երկարություն և 4—5 մ բարձրություն, ընդ որում պատնեշը ծովի մակարդակից 0,5—1,0 մ-ով բարձր է լինում: Ծ. ա. հաջողությամբ կիրառվում են լողափերը պաշտպանելու և ընդլայնելու համար:

БУРЕНИЕ ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЕ (НА ВОДУ) — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐԱՏՈՒՄ, հորատում, որը կատարվում է ստ. ջրեր հայտնաբերելու, հետազոտելու, շահագործելու և այլ նպատակներով: Այդ հորատմանը որոշակի պահանջներ են ներկայացվում, որի պատճառով հորատանցման եղանակները, հորատանցքի կառուցվածքը, նրանում տարվող դիտումների մեթոդիկան որոշակիորեն տարբեր են: Ըստ նպատակակոչվածության ջրաերկր. հորատանցքերը ստորաբաժանվում են 7 տիպի (տե՛ս աղ. 2):

5

Աղյուսակ 2

Տիպի համարը	Հորատանցքի տիպը	Ուսումնասիրությունների և աշխատանքների տեսակները
1	Որոնողական-քարտեզագրական	Որոնողական-հանույթային աշխատանքներ, փոքրամասշտաբ քարտեզագրում
2	Հետախուզական	Ստ. ջրերի նախնական հետազոտում
3	Հետախուզական-շահագործողական	Ստ. ջրերի մանրամասն ու շահագործողական հետախուզում
4	Ծահագործողական	Զբաղմատակարարում
5	Զրիչեցման (ցամաքորդային)	Ստ. ջրերի մակարդակի իջեցում շինարարության, հնքվ-երի շահագործման, գյուղատնտ. աշխատանքների համար
6	Դիտողական	Ստ. ջրերի հետախուզում, բազմամյա ռեժիմային դիտումներ
7	Ներմղումնային	Արդյունաբերական ջրհոսքերի ներմղում

Զբաղմատակարարող հորատումը իրականացվում է հետևյալ եղանակներով. 1) պտտողական (ռոտորային), 2) հարվածանոպանային և, 3) կոմբինացված: Հորատման եղանակի ընտրությունը կատարվում է էլեկտրով ուսումնասիր-

վող շրջանի երկր-ջրաերկր. պայմաններից, տեղամասի հետախուզվածության աստիճանից, ջրաերկր. ուսումնասիրությունների և աշխատանքների տեսակներից: Նշված եղանակներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Օր., առավել շատ կիրառվող պտտողական եղանակն ունի մեծ արտադրողականություն, սակայն հորատման կավային լուծույթը հաճախ փակում է փոքր ջրատար հորիզոնները, նվազեցնում է հորատանցքի ջրատվությունը, որի պատճառով պարբերաբար հորատանցք է ներմղվում օդ կամ ջուր, կիրառվում է հորատման լուծույթի հակառակ շրջանառություն ևն:

Ջրաերկր. հորատանցքներում տարբեր ջրատար հորիզոնները միմյանցից մեկուսացվում են ցեմենտացումով, իսկ բուն հորիզոնների հատվածում տեղադրվում են տարբեր կառուցվածքի քամիչներ (տե՛ս Филътры скважин):

**БУРКУТ — ԲՈՒՐԿՈՒՏ**, ածխաթթվային հանքային աղբյուրների անվանում Կարպատներում:

**БУРОВАЯ СКВАЖИНА — ՀՈՐԱՏԱՆՑՔ**, հորատման հաստոցի կամ սարքի օգնությամբ անցած գլանաձև փորվածք, որը կարող է լինել ուղղաձիգ կամ տարբեր թերության, իսկ ստ. լեռնային փորվածքներում՝ մաս դեպի վերև ուղղված: Հ-ի սկիզբը մակերևույթի վրա կոչվում է քերան, հատակը՝ հորատախորշ, իսկ կողային մակերևույթը՝ պատեր: Ըստ իրենց նշանակության և նպատակի Հ-երը լինում են քարտեզագրական, հեռանկետային, կառուցվածքային, որոնողական, հետախուզական, փորձային, շահագործողական, դիտողական, լեռնատեխ. (լեռնանցողական, օդափոխության, չորացման-ցամաքորդային, պայթեցման ևն):

**БУРОВОЙ КОЛОДЕЦ — ՀՈՐԱՏԱՆՑՔԱՅԻՆ ՋՐՀՈՐ**, նույնն է, ինչ որ հորատանցքը, սակայն հորատված ավելի մեծ տրամագծով՝ ստ. ջրերի շահագործման նպատակով:

**БЪЕФ — ՋՐԱՄԱՍ (ԲՅԵՖ)**, ջրատեխ. կառուցի (պատվար, ջրարգելակ) դիմարի հետևանքով նրա հարևանությամբ ստեղծված ջրային տարածք: Պատվարից վերև ջրային տարածքը կոչվում է վերին Ջ., իսկ պատվարից ներքև՝ ստորին Ջ.:

**БЮБЕТ — ԸՄՊԱՍՐԱՀ (ԲՅՈՒՎԵՏ)**, հանքային աղբյուրների ելքի մոտ կառուցված և նարտարապետորեն նկատված շինություն, որը նախատեսված է բուժիչ ջրերի հասարակական օգտագործման համար: Նախկին ԽՍՀՄ-ի բոլոր խոշոր ստողաբաններում (Շենևոսկի, Կիպուլոդսկ, Ցիպլոտոբո, Բորժոմի, Արզնի ևն) կառուցված են գեղեցիկ ու հարմարավետ Ը-ներ:

— В —

**ВАДИ (араб.) — ՎԱԴԻ (ԱՐԱԲԵՐԵՆ)**, գաղիթափ լանջերով ու կրկեսանվերջավորությամբ հովիտ՝ Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի և այլ կիսանապատային գոտիներում: Վ. հանդիսանում է ժամանակավոր հոսքերի (հաճախ հեղեղների) ողողամաշման գործունեության արդյունք: Վ-ի հատակը հարթեցված է կամ ծածկված կոլյուվիալ ծագման փոխարեկորային նյութով, գաղիթափ լան-

շերը աչքի են ընկնում հողմահարման ձևերով: Վ-ին բնորոշ է հին գետային դա-  
րավանդների և արտահայտված խորացող հունի բացակայությունը:

ВАДОЗНЫЕ ВОДЫ — ՎԱՂՈՋ ՋՐԵՐ, տե՛ս Вода водозная:

ВАКУУМ-ФИЛЬТРЫ — ՆՍՐԱՑՈՒՑԻՑԻՉ-ՔՍՄԻՉՆԵՐ, խրոպի բամփշներ, որոնք  
միացած են ներծծող կոտակիչին և աշխատում են նոսրացման սկզբունքով Ն. ք.  
օգտագործվում են թույլ ջրատվություն ունեցող ապարների (մասնավորապես հոսա-  
գրունտների) չորացման դեպքում:

ВАЛ ВЫПИРАНИЯ — ԱՐՏԱՍԵՂՄԱՆ ԹՈՒՄԲ, սողանքի ստորին մասում  
ալիքաձև թումբ, որն առաջանում է սողանքային մարմնի արտատեղման հետևանք-  
քով և ձգված է սողանքի շարժմանը ուղղահայաց ուղղությամբ:

ВАЛ СОЛИФЛЮКЦИОННЫЙ — ՍՈԼԻՖԼՅՈՒԿՑԻՈՆ ԹՈՒՄԲ, փոքրաթեք  
լանջերի ստորտների ալիքաձև թումբ, որն առաջանում է սոլիֆլյուկցիայի (հալ-  
չող ապարների մակահոսման) հետևանքով և կազմված է փոխք ապարներից ու  
բուսածածկից: Ս. թ-երը հատակագծում աղեղնաձև են և ունենում են տասնյակ ու  
հարյուրավոր մ երկարություն, մինչև 10 մ լայնություն և 1—2 մ բարձրություն:  
Բազմամյա սառցույթի գոտում լայնորեն տարածված Ս. թ-երը սովորաբար առաջա-  
նում են սոլիֆլյուկցիոն դարավանդների զուգորդությամբ:

БАТТЫ — ՎՍՏԵՐ, Հյուսիսային և հայթիկ ծովերի ափերի սաղրջրային  
տարածքներ, որոնք տեղատվության ժամանակ գրեթե ամբողջապես ջրագրկվում  
են: Վ. ժամանակի ընթացքում ցամաքի վերածվելու հակում ունեն. մակընթացու-  
թյան բերվածքները պահվում են բուսականության կողմից և կոտակվելով, անհ-  
նոտներ են առաջացնում: Վ-ի առանձին տեղամասեր մարդչ հողապատեղեղներով  
մեկուսացնում է ծովից, ջրագրկում և վերածում բարեբեր հողատարածքների:

ВЕРТИКАЛЬНАЯ ЗОНАЛЬНОСТЬ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ  
ՋՐԵՐԻ ՌՎՂԱՋԻԳ ՋՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, երկրակեղևի ուղղաձիգ կտրված-  
քում վերևից ներքև ստ. ջրերի տարածման օրինաչափություն, որի հիմքում  
դրվում են տարբեր պայմաններ և դրսևորում են տարբեր մոտեցումներ:

1. Ըստ ստ. ջրերի տեղադրման պայմանների ու քիմիզմի (տե՛ս էջ 27-ի աղ-  
յուսակը):

2. Ըստ ստ. ջրերի տեղադրման և դինամիկայի. Ա. Օդահագեցման զոնա, որի  
մեջ առանձնացվում են. ա) հողաբուսական, բ) արմատների, գ) անցողիկ (մի-  
ջանկյալ) գոտու և, դ) մազանոթային բարձրացման ջրեր:

Բ. Հագեցման զոնա, որի կտրվածքում առանձնացվում են հետևյալ ենթազո-  
նաները.

ա) ակտիվ ջրափոխանակման, բ) թույլ կամ դանդաղ ջրափոխանակման և,  
գ) չափազանց դանդաղ ջրափոխանակման կամ ջրափոխանակման բացակայության:

Գ. Կապակցված ջրերով պլատտիկ ապարների զոնա:

ВЕРХНИЕ КОНТУРНЫЕ ВОДЫ — ՎԵՐԻՆ ԵԶՐԱԳՇԱՅԻՆ ՋՐԵՐ, նախա-  
յին ջրաներկարանությունում շերտային ջրեր, որոնք զբաղեցնում են նախազազա-  
տար շերտերի վերնամասերը և սովորաբար սնվում են մակերևութային ջրերով:

ВЕРХОВОДКА — ՎԵՐՆԱԶՈՒՐ, օդահագեցման զոնայի փուխը ապարների (հողագրունտների) միջավայրում հանդիպող կավալիմ սպանյակների կամ սեպանև վերջացող ջրամեծ շերտերի վրա կուտակվող և ժամանակավոր բնույթ կրող ջրեր:

Ըստ տեղադրման պայմանների				Ըստ ջրերի բիմ. բա- ղադրության և հանքա- յան
Դ-ի Ան- դրմանի	Ըստ Մեկնելի	Ըստ Ստիպ- րենայի	Ըստ Իգնատովիչի	
—	1. Օդահագեցման զոնա ա) հողաբուսական բ) անցողիկ գոտի գ) մագաղաթային բարձրացման գոտի	1. Ներ- ծնման զոնա 2. Մագ- անոթա- լիմ բարձ- րացման զոնա	Ա. Հիպերգենեզի զոնա 1. Ակտիվ ջրափոխանակ- ման զոնա	Թույլ հանքայնացման ջրակարրուտուային
1. Ակ- տիվ զոնա	2. Հագեցման զոնա	3. Հա- գեցման զոնա	2. Դանքաղ ջրափոխա- նակման զոնա	Բարձր հանքայնացման սուլֆատային
2. Պաս- սիվ զոնա	—	—	Բ. Կատագենեզի զոնա	—
3. Չեզոք զոնա	—	—	Կանգուն (անջարժ) ջրա- լիմ ուժիմի զոնա	Քլորիդային աղաջրեր
—	—	—	—	—
—	Պլաստիկության զոնա	—	—	—

Չորային եղանակներին հողագրուններից կատարվող գոլորշիացման պատճառով վ-եր կարող են սպառվել, իսկ առատ սնման ժամանակ՝ ջրամերժ հիմքի եզրամասային հատվածներով ներծծվել մինչև գրունտային ջրերի հորիզոնը: Ընդհանրապես վ-երի խմբին են վերագրվում գրունտային ջրերի մակարդակից բարձր հողագրունների մեջ տեղադրված ջրերը:

ВЕСОВАЯ ПОРИСТОСТЬ (ПОЛНАЯ ВЛАЖНОСТЬ) ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՎԵՌԱՅԻՆ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ (ԼՐԻՎ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ), գրունտի ծակոտիների ծավալին հավասարագոր ջրի կշռի հարաբերությունը գրունտի կմադքի կշռին:

ВЕЧНАЯ МЕРЗЛОТА — ԲԱԶՄԱՄՅԱ (ԴԱՐԱՎՈՐ) ՍԱՌՑՈՒՑԹ, երևույթ, որը բնութագրվում է քարապատյանի վերին զոնան կազմող ապարների աստած վիճակով: Բ. ս. ընդգրկում է այն մարզերը, որտեղ տարածված ապարների ջերմաստիճանը տեսական ժամանակամիջոցի ընթացքում (դարեր, հազարամյակներ) բացասական է, հետևապես նրանց մեջ եղած ջուրը գտնվում է կարծր վիճակում: Բ. ս-ով համակված է նախկին ԽՍՀՄ տարածքի շուրջ 50%, իսկ երկրագնդի ցամաքի՝ 23—25%: Բ. ս-ի զոնայի հզորությունը առանձին տեղերում հասնում է 500—800 մ և ավելի: Այդ զոնայում մինչև 20—30 մ խորության վրա գրանցված նվազագույն ջերմաստիճանը հասնում է—6 —7° Ց (Վերխոյանսկ): Բ. ս-ի առաջացումը բացատրվում է ժամանակակից ցուրտ կլիմայով և անցյալ երկրք. էպոխայի սառցապատումներով: Որոշ գիտնականներ Բ. ս. համարում են այդ էպոխայի ժառանգություն, որի մասին վկայում են խորը հատվածքներում հայտնաբերված մոմոնտների և ռեգեյցուրների մարմինները, ինչպես նաև Բ. ս-ի նահանջը դեպի հյուսիս (Մեզեն քաղաքի շրջակայքում՝ մոտ 40 կմ):

ВЕЩЕСТВА КРАСЯЩИЕ — ՆԵՐՎԱՆՑՈՒԹԵՐ, ջուրը գունավորող օրգ. ներկանյութեր, որոնք ջրաերկրաբանությունում օգտագործվում են որպես ցուցիչներ (ինդիկատորներ)՝ ստ. ջրհոսքերի արագությունը և ջրատար հորիզոնների հիդրավիկ կապը որոշելու համար: Հիմնային և չեզոք ջրերի համար օգտագործվում են ֆլյուորեսցին, էոզին, էրիտրոզին, ֆլյուորանտրոն, կարմիր կոնգո, իսկ թթու ջրերի համար՝ մեթիլենային կապույտ, անիլինային երկնագույն, կարմիր պոնսոն ևն:

ВЕЩЕСТВО ОРГАНИЧЕСКОЕ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՈՐԵՐՎՐՅԱ ԶՐԵՐԻ ՕՐԳԱՆԱՎԱՆ ՆՑՈՒԹ, տարբեր օրգ. միացություններ (նարպարթոններ, նավթենային թթուներ, ֆենոլներ, շաքարի ամինաթթուներ, ածխաջրատներ ևն), որոնք լուծված իոնների, մոլեկուլների և կոլոիդ ձևով հանդիպում են ստ. ջրերում: Ա. ջ. օ. ն-ի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի նավթատառչսման և գազակուտակման գործընթացների իմացության և այդ հանածոների հնքվ-երի որոնման տեսակետից:

ВЗАИМОДЕЙСТВИЕ (ИНТЕРФЕРЕНЦИЯ) СКВАЖИН, КОЛОДЦЕВ — ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ, ԶՐՀՈՐԵՐԻ ՓՈՒՍԱԶՂԵՑՈՒԹՅՈՒՆ (ԻՆՏԵՐՖԵՐԵՆՑ), որևէ հորատանցքից (ջրհորից) ջրի արտամղման ազդեցությունը մյուս հորատանցքերի (ջրհորերի) վրա, որն արտահայտվում է հորատանցքերից միաժամանակյա ար-

տամդման հետևանքով ստեղծվող իշույթային ձագարների փոխազդեցությամբ (դիտվում է ինտերֆերենցի երևույթ): Դրա հետևանքով նույն ծախսով արտամդման դեպքում հորատանցքերում դիտվում է ջրի մակարդակի ավելի մեծ իջեցում, հետևապես նաև՝ հորատանցքերի արտադրողականության նվազում:

**ВЗВЕСЬ (СУСПЕНЗИЯ)** — ԿԱՍՈՒՅԹ (ՍՈՒՍԳԵՆԶԻԱ, ԿԱՍՈՒՅԹԱՀԵՂՈՒԿ), հեղուկ, որի մեջ կարծր նյութի մանր (փոշային և կավային) մասնիկները գտնվում են կախված վիճակում և չափազանց դանդաղ են նստեցման ենթարկվում: Վերջին հատկանիշի վրա է հիմնված գրունտների հատիկաչափական կազմի լաբորատոր ասումնասիրությունների պղտորման մեթոդը:

**ВЗВЕШЕННЫЕ ВЕЩЕСТВА** — ԿԱՍՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ, ջրում կախված միներալային և օրգ. մասնիկներ, որոնք չափերով գերազանցում են կոլոիդ մասնիկների: Մակերևութային հուսի միջոցով տարեկան անուելի քանակությամբ Կ. ն. են տարվում դեպի ծովեր, ընդ որում Կ. ն-ի քանակը տասնապատիկ անգամ գերազանցում է գետի հատակով գորվելով տարվող նյութերի քանակը: Ստ. ջրերում Կ. ն. ապարների միջով ծծանցվելիս, սովորաբար ենթարկվում են նստեցման (քամվում-գտվում են):

**ВЫБРОУПЛОТНЕНИЕ** — ԹՐԹՈՒԱՆՏԱՅՈՒՄ (ՃՆՅՈՒՄԱՆՏԱՅՈՒՄ), տարբեր թրթռիչների միջոցով փոխար ու սորում գրունտների խտացում, որը կատարվում է նրանց կողողնակությունը բարելավելու նպատակով:

**ВИЗУАЛЬНЫЙ АНАЛИЗ ГРАНУЛОМЕТРИЧЕСКОГО СОСТАВА ГРУНТОВ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՀԱՏԻԿԱԶԱՓԱԿԱՆ (ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ) ԿԱԶՄԻ ԱԶՔԱԶԱՓԱԿԱՆ (ՎԻԶՈՒԱԼ) ՏԱՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, գրունտների մեխ. տարրալուծության պարզագույն եղանակ, երբ ապարների նմուշները համեմատվում են ճշգրիտ հատիկաչափական տարրալուծության ենթարկված նմուշների հետ: Աչքաչափական տարրալուծությունը կատարվում է դաշտում ապարների հատիկաչափական քաղաքության նախնական գնահատման համար:

**ВИЗУАЛЬНЫЕ НАБЛЮДЕНИЯ** — ԱԶՔԱԶԱՓԱԿԱՆ (ՎԻԶՈՒԱԼ) ԴԻՏՈՒՄՆԵՐ, անմիջապես աչքով (անզեն կամ օպտիկական սարքով) բնական գործընթացների, երևույթների և երկր. գոյացումների դիտումներ:

**ВИРТУАЛЬНОЕ ПРИВЕДЕНИЕ** — ՀՆԱՐԱՎՈՐ ԲԵՐՎԱԾՔ (ՄՈՏԱՎՈՐԱՅՈՒՄ), ջրատրորաբանությունում՝ անհամասեռ շերտերի հաշվարկի և, երբ շերտը մոտավորացվում է համասեռի՝ նրա հզորության իրական արժեքը հնարավոր բերված (վերածված) արժեքով փոխարինելու շնորհիվ: Դիցուք, եթե շերտը բաղկացած է 2 անհավասար հաստության ( $n_1, n_2$ ) և տարբեր ծծանցման գործակիցներով ( $K_1, K_2$ ) ենթաշերտերից, ապա այն կարելի է վերածել (բերել)  $K$  ծծանցման գործակցով համասեռ շերտի՝ հնարավոր բերված հաստության միջոցով, որը որոշվում է հետևյալ քանաձևով.

$$h_{\text{ն.ար.}} = h_1 + \frac{k_2}{k_1} h_2 :$$

**ВИСЯЧИЕ БОЛОТА** — ԿԱԽՎԱԾ ՃԱՀԻՃՆԵՐ, գետահովիտների սակավաթեք լանջերին տարածված ճահիճներ, որոնք առաջանում են ջրատար ապարների երկրի մակերևույթ դուրս գալու (մերկացման) տեղերում և ծառայում են որպես ջրակրկրք. որոնողական ցուցանիշ:

**ВИСЯЧИЕ ВОДЫ** — ԿԱԽՎԱԾ ՋՐԵՐ, օդահագեցման զոնայում գտնվող ներծծման ջրեր, որոնք անբավարար սնման պատճառով չեն միախառնվում մագանոթային կամ գրունտային ջրերին և գտնվում են կախված վիճակում: Հաճախ նրանք այդպես էլ չեն հասցնում շարժվել ներքև, այլ գոյորշիանում կամ ծախվում են բույսերի արմատների կողմից:

**ВИСКОЗИМЕТР** — ՄԵՇՈՒՑԻԿԱԶԱՓ, կախությունների (սուսպենզիաների) և կալվային շաղախների մածուցիկությունը չափող սարք:

**ВИХРЕВОЕ ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ** — ՀԵՂՈՒԿԻ ՄՐՐԿԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄ, տե՛ս Турбулентное течение:

**ВКУС ВОДЫ** — ՋՐԻ ՀԱՄ, ջրի ֆիզ. հատկություն, որը պայմանավորված է նրա մեջ լուծված աղերի, օրգ. միացությունների և զազերի պարունակությամբ: Ջ. հ. որոշվում է մինչև  $+20-30^\circ$  տաքացրած ջուրը օրգանոլեպտիկ եղանակով (զգալարանների միջոցով) փորձարկելով: Կախված փորձարկողի հմտությունից և նրա այս կամ այն ջրին ընտելացած լինելուց, հաճախ Ջ. հ-ի որոշումը կրում է սուբյեկտիվ բնույթ: Կան նաև հառուկ աղյուսակներ, որոնցում բերվում են ջրին համ տվող լուծված աղերի տեսակներն ու քանակը: Ընդունված են ջրի համի բնութագրման պետական ստանդարտի (ГОСТ 3351—74) հինգ բալանոց համակարգ. շատ թույլ, թույլ, նշմարելի, ակնհայտ և շատ ուժեղ:

**ВЛАГА (ВОДА) КАПИЛЛЯРНАЯ** — ՄԱԶԱՆՈՔԱՅԻՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ (ՋՈՒՐ), տե՛ս Капиллярные воды:

**ВЛАГА (ВОДА) ПОДВЕШЕННАЯ** — ԿԱԽՎԱԾ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ (ՋՈՒՐ), տե՛ս Вода (влага) подвешенная:

**ВЛАГА (ВОДА) ПОЧВЕННАЯ** — ՀՈՂԱՅԻՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ (ՋՈՒՐ), տե՛ս Вода (влага) почвенная:

**ВЛАГОЕМКОСТЬ** — ԽՈՆԱՎՈՒՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ապարի (նյութի) խոնավություն (ջուր) կլանելու և այն իր մեջ պահելու ունակություն: Խ. արտահայտվում է կշռային կամ ծավալային միավորներով: Տարբերում են խոնավատարության հետևյալ տեսակները. 1) խոնավածուծային (հիգրոսկոպիկ), 2) ստավելագույն մուկուլային, 3) մագանոթային և, 4) լրիվ (բացարձակ): Ըստ Խ. ապարները բաժանվում են. 1) խոնավատար-կավեր, սորֆե և, 2) թույլ խոնավատար-մանրահատիկ և կոպտահատիկ ավազներ, մերգելներ, կավիճ և, 3) ոչ խոնավատար-զաքար, կոպիճ, խոշորահատիկ ավազ, հոժ հրային և փոխակերպված ապարներ:

**ВЛАГОЕМКОСТЬ АБСОЛЮТНАЯ** — ԲԱՑԱՐԶԱԿ ԽՈՆԱՎՈՒՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ջրի (խոնավության) ստավելագույն քանակ, որը պահվում է ապարի կողմից՝ նրա

լրիվ հագեցման ժամանակ: Բ. խ. հավասար է ապարի կշռային ծակոտկենությանը, իսկ կավերի մոտ, որոնց ծավալը խոնավանալիս մեծանում է, Բ. խ. գերազանցում է կշռային ծակոտկենությանը: Հոմանիշ՝ լրիվ խոնավատարություն:

**ВЛАГОЕМКОСТЬ ВЕСОВАЯ** — ԿՇՈՒՑԻՆ ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ապարի՝ կողմից պահվող ջրի (խոնավության) կշռի հարաբերությունը բացարձակ չոր ապարի՝ կշռին (%-ներով):

**ВЛАГОЕМКОСТЬ ГИГРОСКОПИЧЕСКАЯ** — ԽՈՆԱՎԱՍՏՈՒԹՅԱՅԻՆ (ՀԻԳՐՈՍԿՈՊԻԿ) ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ, խոնավության առավելագույն քանակություն, որը կարող է կլանել ապարը ջրային գոլորշիներով հագեցած օդից: Խ. խ. հաստատուն է շրտաբանչյուր ապարի համար:

**ВЛАГОЕМКОСТЬ КАПИЛЛЯРНАЯ** — ՄԱՋԱՆՈԹՅԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ապարի մազանոթներում պարունակվող ջրի ողջ քանակություն:

**ВЛАГОЕМКОСТЬ МАКСИМАЛЬНАЯ МОЛЕКУЛЯРНАЯ** — ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄՈՒԵԿՈՒՅԱՐ ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ֆիզիկապես կապված ջրի առավելագույն քանակ, որը պահվում է ապարի մասնիկների մոլեկուլային ձգողական ուժերի շնորհիվ: Ամենամեծ Ա. մ. խ. օժտված են տորֆը, կավերը, ավազակավերը: Հոմանիշ՝ թաղանթային խոնավատարություն:

**ВЛАГОЕМКОСТЬ ОБЪЕМНАЯ (W)** — ԾԱՎԱԼԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ (W), ապարի մեջ եղած ջրի ծավալի (V<sub>ջ.</sub>) և չոր ապարի ծավալի (V<sub>ա.</sub>) հարաբերությունը՝ արտահայտված %-ներով. 
$$W = \frac{V_{ջ.}}{V_{ա.}} \%:$$

**ВЛАГОЕМКОСТЬ ПЛЕНОЧНАЯ** — ԹԱՂԱՆԹՅԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ, խոնավության (ջրի) այն քանակը, որը թաղանթի ձևով պահվում է ապարի մասնիկների վրա մակերևութային ձգողական ուժերի շնորհիվ: Հոմանիշ՝ առավելագույն մոլեկուլային խոնավատարություն:

**ВЛАГОЕМКОСТЬ ПОЛНАЯ** — ԼՐԻՎ ԽՈՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ, տե՛ս **Влагодьемкость абсолютная**:

**ВЛАГОМЕР** — ԽՈՆԱՎԱՍՏԱՓ, ապարների կամ այլ նյութերի խոնավությունը արագորեն չափող սարք: Խ-երի մեծ մասը հիմնված է նյութերի էլեկտրական դիմադրության կամ երկէլեկտրական թափանցելիության չափման վրա. այդ հատկություններն օրինաչափորեն փոփոխվում են կախված խոնավության փոփոխությունից:

**ВЛАГОМЕРЫ ПОЧВЕННЫЕ** — ՀՈՂԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍՏԱՓԵՐ, սարքեր, որոնք հնարավորություն են տալիս անողղակի ցուցանիշների (էլեկտրական, ջերմային, ուղիորակիչության ևն) չափման հիման վրա որշել հողի խոնավությունը:

**ВЛАГООБОРОТ** — ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, տե՛ս **Круговорот воды (влагодоборот) в природе**:

**ВЛАЖНОСТЬ ВОЗДУХА** — Օդի խոնավութՅոնն, ջրային գոլորշիների պարունակությունը օդում: Տարբերում են բացարձակ խոնավություն (անդիկի պլան մե-երով կամ գրամներով՝ 1 մ<sup>3</sup> օդում), տեսակարար խոնավություն (գրամներով՝ 1 կգ օդում) և հարաբերական խոնավություն (%-ներով՝ տվյալ ջերմաստիճանում գտնվող օդի հագեցման համար անհրաժեշտ խոնավատարության նկատմամբ) — տե՛ս Относительная влажность воздуха:

**ВЛАЖНОСТЬ ПОРОДЫ (ГРУНТА)** — ԱՊԱՐԻ (ԳՐՈՒՆՏԻ) խոնավութՅոնն, տվյալ պահին ապարի մեջ եղած ջրի (խոնավության) բանալը, որը բացարձակ չոր ապարի կշռի համեմատությամբ արտահայտվում է %-ներով կամ միավորի մասերով (կշռային խոնավություն —  $W_4$ ): Հաճախ Ա. խ. արտահայտում են նաև ծավալային միավորներով՝ ջրի և ապարի ծավալների հարաբերությամբ (ծավալային խոնավություն —  $W_v$ ), որը ցույց է տալիս ապարի ջրհագեցածության աստիճանը: Բնական մոշուում որոշված խոնավությունը կոչվում է բնական խոնավություն: Տարբերում են. ա) բացարձակ խոնավություն—խոնավ ապարի և 105—110° Ց չորացրած մույն ապարի կշիռների հարաբերությունը, բ) հարաբերական խոնավություն — ջրի ծավալի և ապարի ծակոտիների ծավալի հարաբերությունը, գ) լրիվ խոնավություն — ապարի ծակոտիներին հավասարագոր ջրի կշռի և ապարի կարծր մասնիկների (կմախքի) կշռի հարաբերությունը, դ) բերված խոնավություն — ջրի ծավալի և ապարի կմախքի ծավալի հարաբերությունը: Ա. խ. պայմանավորված է ապարի տեղադրման պայմաններով, նրա ֆիզ. հատկություններով, տվյալ շրջանի ջրային ու ջերմային առանձնահատկություններով ևն:

**ВНУТРЕННИЕ (ИНТЕРИАЛЬНЫЕ, СВЯЗАННЫЕ) ВОДЫ** — ՆԵՐՔԻՆ (ՆԵՐՎԱՌՈՒՑՎԱԾՔԱՏԻՆ, ԿԱՊԱԿՑՎԱԾ) ՋՐԵՐ, ջրեր՝ ապարների պլաստիկության զոնայում, որտեղ ճեղքերը, ծակոտիները բացակայում են և ջրերը հանդես են գալիս քիմիապես կապված վիճակում (կառուցվածքային, բյուրեղային, ցեոլիտային — տե՛ս Химическая связанная вода):

**ВНУТРЕННИЕ СВЯЗИ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՊԵՐ, տարբեր ծագման ու բնույթի հարակցական կապեր, որոնք գործում են ապարի տարբեր մասնիկների ու տարրերի միջև:

**ВНУТРИСОЛЕВЫЕ ВОДЫ** — ՆԵՐՍՊԱՅԻՆ ՋՐԵՐ, ըստ Ա. Ի. Ջենկիտովսկու և Ն. Ի. Տոլստիխինի (1948), աղատար հաստվածքներում ստ. ջրերի առանձին կոտակումներ (օջախներ), որոնք հաճախ ներկայացված են սկզբնային աղաջրերով և հազվագյուտ դեպքերում կապ են ունենում աղաքեր հաստվածքին հարակից վերադային, կողային և ենթասաղային ջրերի հորիզոնների հետ: Հումանիշ՝ միջադային ջրեր:

**ВОДА** — ՋՈՒՐ, ջրածնի (H) և թթվածնի (O) քիմ. միացություն ( $H_2O$ ), որի մոլեկուլի զանգվածի (18,016) 11,19% կազմում է H-ը, իսկ 88,81%-ը՝ O-ը: Հեղուկ վիճակում Ջ. անհամ է, անհոտ ու անգույն (հաստ շերտի դեպքում այն երկնագույն է): Ջ-ին բացառիկ դեր է հատկացվում երկրագնդի զարգացման պատմության, կյանքի ծագման, ֆիզքիմ. միջավայրի և մոլորակի եղանակի ու կլիմայի ձևավորման գործում: Առանց ջրի բուսական ու կենդանական օրգանիզմների գոյությունը անհնար է, մարդու կենսագոյության բոլոր ասպարեզներում այն պար-

տաղիբ բաղադրատարր է: Ջ. բնության մեջ ամենատարածված նյութն է և, թերևս, եզակին՝ օժտված բազմաթիվ զարմանահրաշ խտորիչ հատկանիշներով: Ջ. բնական միացություններից միակն է, որ բնության մեջ միաժամանակ հանդիպում է 3 ագրեգատային վիճակներով (հեղուկ, կարծր, գոյորշի): Ի տարբերություն պարբերական համակարգի այլ տարրերի ջրածնային միացությունների, Ջ. ունի հալման (սստեցման) և եռման արտակարգ բարձր ջերմաստիճաններ ( $0^{\circ}$  և  $+100^{\circ}$  Ց), նա միակ միացությունն է, որ առավելագույն խտության ( $1,0000$  գր/սմ<sup>3</sup>), է հասնում  $+3,98^{\circ}$  Ց, իսկ դրանից բարձր ու ցածր ջերմաստիճաններում այն փոքրանում է (դիցուք,  $+20^{\circ}$  Ց՝  $0,99823$ ,  $0^{\circ}$  Ց՝  $0,99987$ ), ըստ որում սառցի վերածվելիս ջրի ծավալը արտասովոր մեծանում է (շուրջ  $10\%$ , խտությունը դառնում է  $0,9168$ ): Ջ. ունի համակողմանի լուծուճակություն, բացառիկ բարձր երկէլեկտրիկ թափանցելիություն ( $0^{\circ}$  Ց՝  $74,6$   $20^{\circ}$  Ց՝  $81,0$ ), մածուցիկության անսովոր կախում անջուրմից ու ջերմաստիճանից (դրանց բարձրացումը հանգեցնում է մածուցիկության նվազմանը), հալման և գոյորշիացման բարձր թաքելված ջերմություն (համապատասխանաբար  $80$  և  $539$  կալ/գր), բարձր մակերևութային ձողակակություն ( $0^{\circ}$  Ց՝  $76,4$ ,  $80^{\circ}$  Ց՝  $62,6$  դին/սմ) և այլ արտասովոր հատկանիշներ: Ջ-ի խտորիչ հատկանիշները պայմանավորված են նրա մոլեկուլի ներքին կառուցվածքի առանձնահատկություններով՝ բարձր բևեռակակությամբ և մոլեկուլների միջև լրացուցիչ ջրածնային կապերի առկայությամբ: Ժամանակակից պատկերացումների համաձայն, Ջ-ի մոլեկուլի կառուցվածքը նման է քստանցիտի (տետրաէդրի), որի 2 անկյուններում տեղադրված են դրական լիցքավորված ջրածնի իոնները, իսկ հակադիր անկյուններում՝ բացասական լիցքավորված էլեկտրոնները: Էլեկտրոտատիկ ուժի ծանրության կենտրոնների նման առանձնացված դասավորությունը, հավանաբար, պայմանավորում է Ջ-ի մոլեկուլի բարձր բևեռակակությունը, որի շնորհիվ Ջ-ի մոլեկուլները միանալով առաջացնում են ագրեգատներ: Վերջինների մեջ մոլեկուլների քանակը (2-ից 6) կախված է Ջ-ի ֆիզ. վիճակից (հեղուկ, կարծր, գոյորշի): Ջ-ի մոլեկուլներն ունեն նաև լրացուցիչ ջրածնային կապեր ստեղծելու արտասովոր հատկություն. ջրածնի ատոմը էլեկտրոնային թաղանթի բացակայության և չափազանց փոքր իոնային շտապիլի շնորհիվ օժտված է էլեկտրոտատիկ ձգողական մեծ ուժով, որի պատճառով ջրածնի իոնը, ստանց կապը խզելու տվյալ մոլեկուլի թթվածնից, լրացուցիչ կապ է հաստատում Ջ-ի այլ մոլեկուլի թթվածնի հետ: Այդ պատճառով կարող են ստեղծվել նաև «կրկնակի ջրածնային կապեր»: Բնության մեջ, բացի Ջ-ի սովորական մոլեկուլներից, հանդիպում են նաև H-ի և O-ի տարրեր իզոտոպներից բաղկացած մոլեկուլներ՝  $19$ -ից  $24$  մոլեկուլային կշռով: Ուսումնասիրված են H-ի 3 իզոտոպներ՝ H<sup>1</sup> (պրոտոնիում), H<sup>2</sup> (դեյտերիում, D) և H<sup>3</sup> (տրիտիում, T): Վերջին երկուսը H<sup>1</sup>-ի համեմատությանը համապատասխանաբար 2 և 3 անգամ ծանր են: Հայտնի են նաև թթվածնի 6 իզոտոպներ՝ O<sup>14</sup>, O<sup>15</sup>, O<sup>16</sup>, O<sup>17</sup>, O<sup>18</sup> և O<sup>19</sup>, որոնք H-ի վերոհիշյալ իզոտոպների հետ կարող են առաջացնել 42 տեսակի Ջ-ի մոլեկուլներ: Դրանցից միայն 9 մոլեկուլներ կազմված են կայուն իզոտոպներից, իսկ մնացած մոլեկուլները կարճակյաց են: Ջրածնի H<sup>1</sup> և D իզոտոպների հարաբերակցությունը կազմում է  $6800:1$ , իսկ տրիտիումը (T) հանդիպում է չափազանց աննշան քանակությամբ: Թթվածնի ստավել կայուն իզոտոպների հարաբերակցությունը հետևյալն է՝ O<sup>16</sup>:O<sup>18</sup>:O<sup>17</sup> =  $2760:5,5:1$ : Բնության մեջ հանդիպող H<sub>2</sub>O (H<sup>1</sup>H<sup>2</sup>O<sup>16</sup>, 19 մոլեկուլային կշռով) և D<sub>2</sub>O (H<sup>2</sup>H<sup>2</sup>O<sup>16</sup>, 20 մոլեկուլային կշռով) տարբերակները հանդիսանում են ծանր Ջ-եր:

Ջ-ի կրիտիկական կարևոր հաստատումներն են. ջերմաստիճանը՝  $+374,15^{\circ}$  Ց,

Հնչումը՝ 218,5 մթն., խտությունը՝ 0,325 կգ/լ, հարման թաքնված ջերմությունը 0° 8' 79,7 կալ/գր, գոլորշիացման թաքնված ջերմությունը 100° 8' 539 կալ/գր, ջերմահաղորդականությունը 0° 8' 0,00143, 100° 8' 0,00154 կալ/սմ. վրկ. սա- տիման, մածուցիկությունը 0° 8' 1,792, 20° 8' 1,005, 50° 8' 0,5404, 104° 8' 0,284 սանտիպուագ: Ջ-ի բեկման ցուցիչը 20° 8 կազմում է 1,333, իսկ ձայնի տարածման արագությունը 25° 8' 1,496 մ/վրկ:

ВОДА АДСОРБЦИОННАЯ — ԿԼԱՆՎԱԾ (ԱՐՍՈՐԲՑԻՈՆ) ՋՈՒՐ, ապարի մասնիկների վրա չափազանց բարակ թաղանթի ձևով ջուր, որը ջրային գոլորշի- ների կլանման ճամապարհով առաջանում է օդից կամ խոնավ միջավայրից: Կ. ջ. բնորոշ է գերազանցապես կավային ու ավազակավային ապարներին և նրանց մաս- նիկների կողմից պահվում է մոլեկուլային ու էլեկտրոստատիկ ուժերով:

ВОДА АЗОНАЛЬНАЯ — ԱՋՈՆԱՅԱԿԱՆ ՋՈՒՐ, տե՛ս Азональные воды:

ВОДА АЛЛЮВИАЛЬНАЯ — ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՑԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՋՈՒՐ, ժա- մանակակից կամ թաղված գետահովիտների գետաբերուկային (ալյուվիալ) նստվածք- ների հետ կապված ջուր: Ժամանակակից Գ. ջ. սովորաբար փոխադարձ սերտ կապի մեջ է գետային հոսքի հետ և, կախված վերջինի ռեժիմից (մակարդակի տա- տանումներից), սնվում կամ ցամաքորդի է ենթարկվում:

ВОДА АРТЕЗИАНСКАЯ — ԱՐՏԵԶՅԱՆ ՋՈՒՐ, համեմատաբար խոր և խոշոր երկրք. կառուցվածքում վերևից ու ներքևից ջրամերժ ապարաշերտերով սահմանա- զատված, ճեղքավոր, ծակոտիկեց կամ կարստավորված ապարների շերտի մեջ տե- ղադրված ստ. ջուր, որն ունի ճնշում և հորատման դեպքում նրա մակարդակը կանգնում է ջրատար շերտի առաստաղից բարձր կամ շատրվանում է: Ա. ջ. առավել բնորոշ է գոգամայրերին (տե՛ս Артезианский бассейн), սակայն հանդի- պում է նաև այլ տիպի կառուցվածքներում՝ միաթեք, սեպանև վերջացող (տե՛ս Артезианский склон), խզումնային ևն:

Ա. ջ. իր անվանումն ստացել է Ֆրանսիայի Արտուա նահանգից (հին անունը՝ Արտեզիա), որտեղ 1126 թ. Եվրոպայում առաջին անգամ փորված հորատանցքը տվել է շատրվանող ջուր:

ВОДА БЕЗНАПОРНАЯ (СВОБОДНАЯ) — ԱՆԾՆԾՈՒԾ (ԾՆԾՈՒՄԱԶՈՒԹՅ, ԱԶԱՏ) ՋՈՒՐ, ապարների ճեղքերի, ծակոտիկների և այլ դատարկությունների մեջ տեղադրված ջուր, որի մակերևույթը «ազատ» է, վերևից չի հպվում ջրամերժ ապարաշերտի, այդ պատճառով ջրի մակերևույթի վրա եղած ճնշումը հավասար է մթնոլորտային ճնշմանը: Ա. ջ-երի տիպին են պատկանում սովորական և միջշեր- տային գրունտային ջրերը:

ВОДА БОКОВАЯ — ԿՈՂԱՑԻՆ ՋՈՒՐ, ըստ Ա. Ի. Ջենս-Լիտովսկու և Ն. Ն. Տոլստիխինի (1948), ստ. ջուր, որը տեղադրված է աղային հաստվածքի կողային մասերում և սովորաբար ունի բարձր հանքավազում: Ստ. փորվածքների ջրակա- ման տեսակետից Կ. ջ. մեծ վտանգ է ներկայացնում այն դեպքում, երբ նա ուղղա- կի կապի մեջ է վերադային քաղցրահամ ջրերի հետ: Հոմանիշ՝ մերձաղային ջուր:

ВОДА БОРИСТАЯ — ԲՈՐԱՅԻՆ ՋՈՒՐ, բնական ջուր, որի 1 լ-ում պարունակվում է ալկալի քան 10 մգ բոր (В): Բորի այդպիսի քանակը ջրին տալիս է բուժիչ հատկություն: Հոմանիշ՝ բորաթթվային ջուր:

ВОДА БОРНАЯ — ԲՈՐԱՋՈՒՐ, բնական ջուր, որի 1 լ-ում բորի (В) պարունակությունը գերազանցում է 300—500 մգ-ից և կարող է հանդիսանալ արդյունաբերության հումք В-ի կորզման համար:

ВОДА БОРНО-КИСЛАЯ — ԲՈՐԱԹՎԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Вода борная:

ВОДА БРОМИСТАЯ — ԲՐՈՄԱՅԻՆ ՋՈՒՐ, բնական ջուր, որի 1 լ-ում պարունակվում է ալկալի քան 25 մգ բրոմ (Br) և պիտանի է բուժման նպատակների համար:

ВОДА БРОМНАЯ — ԲՐՈՄԱՋՈՒՐ, բնական ջուր, որի 1 լ-ում բրոմի (Br) պարունակությունը գերազանցում է 250 մգ-ից և կարող է հանդիսանալ արդյունաբերական հումք Br-ի կորզման համար:

ВОДА В МИНЕРАЛАХ — ՋՈՒՐԸ ՄԻՆԵՐԱԿՆԵՐԻ ՄԵՋ, տե՛ս Химически связанная вода:

ВОДА ВАДОЗНАЯ — ՎԱԴՈՋԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ է. Զյուսի (1902), ստ. ջուր, որը ձևավորվում և տեղադրվում է երկրակեղևում՝ առանց մագմածին (յուվենիլ) ջրերի մասնակցության: Ա. Մ. Ժիրմունսկին և Ա. Ա. Կոզիրևը (1928) Վ. ջ-ի տակ հասկանում էին ստ. ջրերը, որոնք ունեն մթնոլորտային ծագում, ապարների մեջ թափանցում են երկրի մակերևույթից և ակտիվորեն մասնակցում են ընդհանուր ջրաշրջանառությանը: Այդ առումով Վ. ջ. հանդիսանում է «ներծծման ջուր» տերմինի հոմանիշը: Հնացած տերմին:

ВОДА ВИСЯЧАЯ — ԿԱԽՎԱԾ ՋՈՒՐ, օդահագեցված զոնայի ջուր, որը տեղադրված է հողաբուսական շերտում և ներքևից ջրամերժ ապարներով չի սահմանափակված: Սովորաբար Կ. ջ. առաջանում է ի հաշիվ ներծծման ջրերի և առատ սնման դեպքում (մթնոլորտային տեղումներ, ոռոգում) հասնում է գրունտային ջրերի հորիզոնին, աակայն չորային եղանակներին Կ. ջ. կարող է իսպառ գոլորշիանալ և ծախավել բուսականության միջոցով:

ВОДА ВНУТРИСОЛЕВАЯ (МЕЖСОЛЕВАЯ) — ՆԵՐԱՂԱՅԻՆ (ՄԻՋԱՂԱՅԻՆ) ՋՈՒՐ, տե՛ս Внутрисолевые воды:

ВОДА ВОЗВРАТНАЯ — ՀԵՏԱՂԱՐՋ ՋՈՒՐ, ոռոգվող տարածքներից հավաքվող հոսքային ջուր, որը գոյանում է. 1) հավելյալ ոռոգվող տեղամասերի (բրնձի և այլ դաշտեր) և ոռոգիչ ցանցի հոսքային ջրերից, 2) ջրանցքների, ոռոգման դաշտերի ծծանցման և ցամաքորոգային ջրերից: Հ. ջ-ին պետք է վերագրել նաև մակերևույթային և ստ. ջրերի այն մասը, որը ժողովուրդային մեջ օգտագործվելուց հետո (կոմունալ-կենցաղային, արդյունաբերական ջրամատակարարում, ոռոգում ևն),

մասամբ ներծծվելով, վերստին սնում է ստ. ջրերը: Հ. ջ-ի մեծ քանակը ջրի ոչ ռացյոնակ օգտագործման ցուցանիշ է: Հ. ջ-ի քաղաքար որակի դեպքում այն կարելի է կրկին օգտագործել, իսկ աղտոտվածության դեպքում՝ միայն համապատասխան մաքրումից հետո:

ВОДА ВОСХОДЯЩАЯ — վերընթաց ՋՈՒՐ, ստ. ջուր, որին հատուկ է շարժման վերընթաց բնույթը: Վերջինը բնորոշ է ննջումնային ջրին, որի հետևանքով Վ. ջ. հասկացողությունն օգտագործվում է որպես «Ճնջումնային ջուր» տերմինի հոմանիշ (տե՛ս Вода напорная):

ВОДА ВУЛКАНИЧЕСКАЯ — ՀՐԱԲՆԱՅԻՆ ՋՈՒՐ, հրաբխային լավաների ստեղծման ժամանակ անջատվող, ինչպես նաև հրաբուխների արտալիժած գոլորշիներից առաջացող ջուր: Քիչ գործածական տերմին:

ВОДА ГЕТЕРОТЕРМАЛЬНАЯ — ՀԵՏԵՐՈՋԵՐՄԱՅԻՆ (ՀԵՏԵՐՈՅԵՐՄԱԼ) ՋՈՒՐ, ստ. ջուր, որի ջերմաստիճանը ժամանակի ընթացքում փոփոխվում է անկայուն ռեժիմով:

ВОДА ГИГРОСКОПИЧЕСКАЯ — ԽՈՆՍԱՎԱՇՈՒԾ (ՀԵԳՐՈՍԿՈՊԻԿ) ՋՈՒՐ, ջուր, որը չոր հողագրունները կլանում են խոնավ օդից: Խ. ջ-ի քանակը կախված է օդի հարաբերական խոնավությունից, հողագրունների հատիկաչափական կազմից և որոշվում է նմուշի չորացման միջոցով (105—110° Ց պայմաններում): Խ. ջ. ամուր պահվում է ապարի կողմից մոլեկուլային ձգողական ուժերով (ըստ Վան-Դեր-Վալսի, ջուրը 10000 մթն.), նրա քանակը միշտ հավասարակշռվում է օդի ջրային գոլորշիների առաձգականությանը: Ի տարբերություն սովորական ջրի, Խ. ջ. լուծելու և ծանրության ուժի շնորհիվ շարժվելու ունակություն չունի, նրա տեսակարար կշիռը մեծ է 1-ից (մոտ 1,5), իսկ ստեղծման ջերմաստիճանը ցածր է—78° Ց: Միներալների մեջ Խ. ջ-ի մոլեկուլները կապված են բյուրեղային մասնիկների մակերևույթի հետ: Ապարներում (միներալներում) Խ. ջ-ի առաջացումն ուղեկցվում է ջերմության անջատումով, որը կոչվում է թրջման ջերմություն, իսկ անջատումը՝ ջերմության կլանումով: Հոմանիշ՝ ամուր կապված ջուր:

ВОДА ГИДРОКАРБОНАТНАЯ — ԶՐԱԿԱՐԲՈՆԱՅԻՆ ՋՈՒՐ, բնական ջուր, որի քիմ. կազմում գլխավոր անիոններից գերիշխում է ջրակարբոնատ իոնը ( $\text{HCO}_3^-$ ):

ВОДА ГИДРОКАРБОНАТНО-НАТРИЕВОГО ТИПА — ԶՐԱԿԱՐԲՈՆԱՅԻՆԱՏՐԻՈՒՄԱՅԻՆ ՏԻՊԻ ՋՈՒՐ, բնական ջուր, որի քիմ. կազմում անիոններից գերիշխում է ջրակարբոնատ իոնը ( $\text{HCO}_3^-$ ), իսկ կատիոններից՝ նատրիում իոնը ( $\text{Na}^+$ ): Բարձր հանքալցացման Ջ.-ն. տ. ջ-երը բնորոշ են նալթազազաբեր մարզերի խորը հորիզոններին, որտեղ տիրապետում են վերականգնման պայմանները: Հաճախ այս տիպի ջրերը սուլֆատ իոն( $\text{SO}_4^{2-}$ ) չեն պարունակում:

ВОДА ГОМОТЕРМАЛЬНАЯ — ՀՈՄՈՅԵՐՄԱԼ (ՄՍՐՈՅԵՐՄԱՅԻՆ) ՋՈՒՐ, բնական ջուր, որի ջերմաստիճանը հավասար է մարդու մարմնի ջերմաստիճանին (37—42° Ց): Բուժման նպատակներով օգտագործելիս Հ. ջ. լրացուցիչ տաքացման կարիք չունի: Հոմանիշ՝ տաք ջուր:

ВОДА ГОРЯЧАЯ — ՏԱՔ ՋՈՒՐ, տե՛ս Вода гомотермальная:

ВОДА ГРАВИТАЦИОННАЯ ПОДЗЕМНАЯ — ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՈՒՐ, ապարներում գտնվող ազատ ջուր, որը չի կրում մագնոսթային, մոլեկուլային ու մակերևութային ձգողական ուժերի ազդեցությունը և տեղաշարժվում է ծանրության ուժի կամ ջրադինամիկ ճնշման շնորհիվ: Հոմանիշ՝ ևեղուկ-կաթիլային ջուր:

ВОДА ГРУНТОВАЯ — ԳՐՈՒՆՏԱՑԻՆ ՋՈՒՐ, երկրի մակերևույթից հաշված ստաջին ջրամերժ շերտի վրա տեղադրված, համեմատաբար լայնատարած մշտական ջրատար հորիզոնի ջուր, որն ունի ազատ մակերևույթ: Գ. ջ-երը հիմնականում տեղադրված են երիտասարդ փոխը-բեկորային ապարների կամ արմատական ապարների հողմահարման կեղևի մեջ: Սովորաբար Գ. ջ-երի սնման և տարածման մակերեսները (մարզերը) համընկնում են: Առանձին դեպքերում Գ. ջ-երի հորիզոնը վերևից ծածկված է լիճում ջրամերժ ապարաշերտով (տե՛ս Вода межпластовая), սակայն նրա մակերևույթը չի հարվում նրան: Գ. ջ. որպես ֆիզիկա-աշխարհ. գործոնների արգասիք, կրում է նրանց լայնական և ուղղաձիգ զոնայական փոփոխությունների ազդեցությունը (տե՛ս Вода зональная): Սակայն Գ. ջ-երի որոշ տեսակներ նշված զոնայական օրինաչափությանը չեն ենթարկվում (տե՛ս Азональные воды): Վաղուց ի վեր, հասկապես չորային երկրներում Գ. ջ. ջրհորերով, ապա նաև հորատանցքերով լայնորեն օգտագործվել է մարդու կարիքների համար:

ВОДА ДИФУЗИОННЫХ ОБОЛОЧЕК — ԳԻՖՈՒԶՍԻՆ ՊՍՏՅԱՆՆԵՐԻ ՋՈՒՐ, տե՛ս Вода осмотическая:

ВОДА ДРЕНАЖНАЯ — ՑԱՄԱՔՈՒՐԳԱՑԻՆ (ԳՐԵՆԱԺԱՑԻՆ) ՋՈՒՐ, մակերևութային կամ ստ. ջուր, որը հավաքվում և հեռացվում է ցամաքուրդային (դրենաժային) կառույցներով: Վերջինները լիճում են մակերևութային և ստորգետնյա:

ВОДА ЖЕЛЕЗИСТАЯ — ԵՐԿԱԹԱՑԻՆ ՋՈՒՐ, հանքային բուժիչ ջուր, որի մեջ երկաթի (Fe) պարունակությունը գերազանցում է 20 մգ/լ-ից: Ըստ Fe-ի պարունակության բուժիչ ջրերը ստորաբաժանվում են. 1) թույլ երկաթային՝ 20—40 մգ/լ, 2) երկաթային՝ 20—100 մգ/լ և, 3) ուժեղ երկաթային՝ >100 մգ/լ:

ВОДА ЖИЛЬНАЯ — ԵՐԱԿԱՑԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը կապված է տեկտոնախախտումների կամ նրանց ուղեկցող բաց ճեղքերի հետ: Ե. ջ. նույն տեղամասի տարբեր հատվածներում ունենում է տարբեր ճնշման մակարդակ: Ըստ Ի. Կ. Ջալցևի (1961), Ե. ջ. մտնում է ճեղքաերակային ջրերի տիպի մեջ:

ВОДА ЗАПЕРТАЯ — ՓԱԿՎԱԾ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը ջրամերժ շերտերով հուսալիորեն մեկուսացված է այլ ջրատար հորիզոններից և երկրի մակերևույթից: Փ. ջ-երի խմբին են դասվում թաղված և մնացորդային ջրերը, որոնք հիմնականում կապված են նախաքեր ու աղատար կտրվածքների հետ և սովորաբար ունենում են բարձր հանքացանցում (մինչև 300—600 գր/լ): Աղատար հատվածքների հետ կապված Փ. ջ. աչքի է ընկնում նաև բրոմի և բորի բարձր պարունակությամբ:

ВОДА ЗОНАЛЬНАЯ — ՋՈՆԱՅԱԿԱՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որի տեղադրման պայմանները, սնումը, ջերմաստիճանը, որակը և ռեժիմը օրինաչափ փոփոխվում են հորիզոնական և ուղղաձիգ ուղղությամբ՝ կապված կլիմայի, բուսականության, հողային ծածկի, ապարների հողմահարման բնույթի, ջրափոխանակության և այլ գործոնների զոնայական փոփոխականության հետ:

ВОДА ЗОНЫ ВЫЩЕЛАЧИВАНИЯ — ՏԱՐՐԱՆՈՒԾՄԱՆ ՋՈՆԱՅԻ ՋՈՒՐ, ստ. ջուր, որի հանքայնացումը և քիմ. բաղադրությունը ձևավորվել են ապարների տարբարյունման և տարալվացման գործընթացների շնորհիվ: Տ. գ. ջ-երին բնորոշ են թույլ հանքայնացումը և ջրակարբոնատ-սիլիկահողային, ջրակարբոնատ-կալցիումային բաղադրությունը:

ВОДА ИЛОВАЯ (ИНТЕРСТИЦИАЛЬНАЯ) — ՏՂՄԱՋՈՒՐ (ԻՆՏԵՐՍԻՍԻՑԻԱԿԱՆ ՋՈՒՐ), ջրավազանների հատակի տղմային նստվածքների ծակոտիներում պարփակված ջուր, որը կազմում է տղմային դիսպերս համակարգի հեղուկ բաղադրիչը: Այն հանդիսանում է նստվածքալուտակման ավազանի հատակամերձ ջուր, որը նստվածքների հետ միասին տևական մնում է թաղված վիճակում: Դիագենեզի (նստվածքային ապարի ստաջացման) ընթացքում Տ-ի մեջ լուծված նյութերը նստվածքների կարծր ֆազի հետ փոխազդեցության, դիֆուզման և այլ գործընթացների հետևանքով փոփոխվում են: Հոմանիշ՝ նստվածքների ծակոտինային ջուր:

ВОДА ИНТРАЗОНАЛЬНАЯ — ՆԵՐՋՈՆԱՅԱԿԱՆ ՋՈՒՐ, ստանձնահատուկ պայմաններում հանդիպող ոչ խոր տեղադրման ստ. ջուր (օր., վերնաջուր), որի տարածումը զոնայական գործոններից կախված չի. կարող է հանդիպել ցանկացած զոնայի ներսում: Քիչ գործածական տերմին:

ВОДА ИНФИЛЬТРАЦИОННАЯ — ՆԵՐԾԾՄԱՆ ՋՈՒՐ, տե՛ս Инфильтрационные воды:

ВОДА ИНФЛЮАЦИОННАЯ — ՆԵՐՂՈՄՄԱՆ ՋՈՒՐ, տե՛ս Инфлюационные воды:

ВОДА ИСКОПАЕМАЯ — ԲՐԱԾՈՒ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը ապարի մեջ պահպանվել է նախորդ երկր. դարաշրջաններից և քարադոյացման գործընթացում կրել է քիմ. բաղադրության էական փոփոխություններ: Տարբերում են նստվածքաուջացման և թաղված Բ. ջ.: Հոմանիշ՝ թաղված ջուր (տե՛ս Вода погребенная):

ВОДА ИОДИСТАЯ — ՅՈՂԱՅԻՆ ՋՈՒՐ, բնական ջուր, որի 1 լ-ում յոդի (J) պարունակությունը գերազանցում է 5 մգ-ից և պիտանի է բուժման նպատակների համար:

ВОДА ИОДНАЯ — ՅՈՂԱՋՈՒՐ, բնական ջուր, որի 1 լ-ում յոդի (J) պարունակությունը գերազանցում է 18 մգ-ից և կարող է հանդիսանալ արդյունաբերական հումք J-ի կորզման համար:

ВОДА КАПЕЛЬНО-ЖИДКАЯ — ՀԵՂՈՒԿԱԿԱԹԻՎԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Вода гравитационная подземная:

ВОДА (ВЛАГА) КАПИЛЛЯРНАЯ — ՄԱԶԱՆՈՐԹԱՅԻՆ ԶՈՒՐ (ԽՈՆՍԱՎՈՒ-  
ԹՅՈՒՆ), տե՛ս Капиллярные воды:

ВОДА КАРСТОВАЯ — ԿԱՐՍՍԱՅԻՆ ԶՈՒՐ, տե՛ս Карстовые воды:

ВОДА КАРСТОВО-ПЛАСТОВАЯ — ԿԱՐՍՍԱԾԵՐՏԱՅԻՆ ԶՈՒՐ, ստ. ջուր,  
որը գտնվում է շերտային տեղադրում ունեցող աղային, դոլոմիտային, կրաքարային  
և այլ կարստավորված ապարների դատարկությունների մեջ:

ВОДА КОНДЕНСАЦИОННАЯ — ԽՏԱՑՄԱՆ ԶՈՒՐ, ստ. ջուր, որն առաջա-  
նում է ապարների ճեղքերի, ծակոտիների, այլ դատարկությունների մեջ՝ մթնոլոր-  
տային խոնավության (ջրային գոլորշիների) ներթափանցման և խտացման ճանա-  
պարհով (տե՛ս Теория формирования подземных вод конденсационная):

ВОДА КРИСТАЛЛИЗАЦИОННАЯ — ՀՅՈՒՐԵՂԱՅԻՆ ԶՈՒՐ, միներալների  
հետ քիմիապես կապակցված ջրի տեսակ (տե՛ս Химически связанная вода):

ВОДА ЛОКАЛЬНАЯ (МЕСТНОГО РАСПРОСТРАНЕНИЯ) — ԼՈԿԱԼ (ՏԵ-  
ՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ) ԶՈՒՐ, ստ. ջուր, որը կապված է սահմանափակ տարածում  
ունեցող ջրատար ապարների հետ: Օր., սառցաբերուկային ավազակավերի մեջ  
հանդիպող ավազային ոսպնյակների ջուր: Ավելորդ տերմին:

ВОДА МАССИВО-ТРЕЩИННАЯ — ԶԱՆԳՎԱԾՄԱԾԵՂՔԱՅԻՆ ԶՈՒՐ, ըստ  
Ի. Կ. Զայցևի (1961), ստ. ջուր, որը տեղադրված է զանգվածային բյուրեղային  
(փոխակերպային, ներծայթալային) ապարների ռեզիոնալ տարածման ճեղքերի մեջ:

ВОДА МЕЖМЕРЗЛОТНАЯ — ՄԻՋՍԱՌՅՈՒԹԱՅԻՆ ԶՈՒՐ, ըստ Ն. Ի. Տոլս-  
տիխինի (1941), ստ. ջուր, որը տեղադրված է բազմամյա սառած ապարների զանգ-  
վածների մեջ՝ առանձին գրպանների, ոսպնյակների և հորիզոնների ձևով:

ВОДА МЕЖМОРЕННАЯ — ՄԻՋՍԱՌՅԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՄԻՋՄՈՐԵՆԱՅԻՆ)  
ԶՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է սառցաբերուկային (մորենային) նստվածքնե-  
րի միջև գտնվող ծակոտիկեն ապարներում:

ВОДА МЕЖПЛАСТОВАЯ — ՄԻՋԾԵՐՏԱՅԻՆ ԶՈՒՐ, ստ. ջուր, որը տեղա-  
դրված է վերևից ու ներքևից ջրամերժ շերտերով պարփակված ջրատար ապար-  
ների (շերտի) մեջ: Մ. ջ. սովորաբար ճնշումնային է, ասկայն եթե ջրատար շերտը  
ջրով լրիվ չի լցված, ապա ունենում է ազատ մակերևույթ: Ի տարբերություն գրուն-  
տային ջրերի, Մ. ջ. վերևից ծածկված է ջրամերժ շերտով և մթնոլորտի հետ ան-  
միջական կապ չունի: Մ. ջ-երի սնման ու տարածման մարզերը չեն համընկնում,  
նրանց բնորոշ է ավելի կայուն ռեժիմը:

ВОДА МЕЖСОЛЕВАЯ — ՄԻՋԱՂԱՅԻՆ ԶՈՒՐ, տե՛ս Внутрисолевые воды:

ВОДА МЕТЕОРНАЯ — ԱՍՈՒՊԱՅԻՆ ԶՈՒՐ, «Մթնոլորտային տեղումներ»  
տերմինի հումանիշ (տե՛ս Осадки атмосферные):

ВОДА МОЛЕКУЛЯРНАЯ — ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Молекулярная вода:

ВОДА МОРСКАЯ — ԾՈՒՎԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Морская вода:

ВОДА МЫШЬЯКОВАЯ И МЫШЬЯКОВИСТАЯ — ՄԿՆԳԵՂԱՋՈՒՐ ԵՎ ՄԿՆԳԵՂԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ա. Մ. Օվչինիկովի (1963), բնական ջուր, որի 1 լ-ում  $H_3AsO_4$  մկնդեղային միացության պարունակությունը գերազանցում է 1 մգ-ից (մկնդեղային ջուր) և 1,2 մգ-ից (մկնդեղաջուր): Ըստ Վ. Վ. Իվանովի և Գ. Ա. Ներսևի (1964), բուժիչ ջրերում մկնդեղի (As) նվազագույն պարունակությունը պետք է լինի 0,7 մգ/լ: Ըստ As-ի պարունակության տարբերում են. 1) թույլ մկնդեղաջուր՝ 0,7—5,0 մգ/լ, 2) ուժեղ մկնդեղաջուր՝ 5—10 մգ/լ, 3) շատ ուժեղ մկնդեղաջուր՝  $>10$  մգ/լ: Մկնդեղային բուժիչ ջրերն օգտագործվում են խմելու համար, իսկ մկնդեղային ջրերը՝ միայն լուսանկարների համար:

ВОДА НАДМЕРЗЛОТНАЯ — ՎԵՐԱՍԱՌՑՈՒԹԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Надмерзлотные воды:

ВОДА НАДСОЛЕВАЯ — ՎԵՐԱՎԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Надсолевые воды.

ВОДА НАПОРНАЯ (ВОСХОДЯЩАЯ) — ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ (ՎԵՐԸՆԹԱՅ) ՋՈՒՐ, ջրամերձ շերտով սահմանափակված ծակտակեղև և ճեղքավոր ապարների մեջ տեղադրված ջուր, որը ջրաստատիկ ճնշում է գործադրում ծածկի ապարների վրա (նկ. 1): Հորատելիս Ճ. ջ. բարձրանում է մինչև սնման ու բեռնաթափման մարզերի ջրի մակարդակները միացնող հարթությունը (ճնշման մակարդակը): Եթե ռելիեֆը ցածր է այս հարթությունից՝ ջուրը շատրվանում է: Հոսանիշ՝ արտեզյան ջուր:

ВОДА НЕЗАМЕРЗАЮЩАЯ — ՉՍԱՌՉՈՂ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը մանրահատիկ ապարներում բացասական ջերմաստիճանի պայմաններում մնում է հեղուկ վիճակում: Այդպիսին են օդահագեցման զոնայի խոնավածուծ (հիգրոսկոպիկ), թաղանթային և մասամբ մազանոթային ջրերը: Բազմամյա սառցույթի զոնայում բացասական ջերմաստիճանի պայմաններում (մինչև  $-7^{\circ}$ — $-20^{\circ}$ ) չեն սառչում նաև աղաջրերը:

ВОДА НЕФТЯНАЯ — ՆԱՎԹԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Нефтяные воды:

ВОДА ОКОЛОСОЛЕВАЯ — ՄԵՐՉԱՂԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Вода боковая:

ВОДА ОПАЛЕСЦИРУЮЩАЯ — ԹԳԱԱՆԵՐԱՆԳ ՋՈՒՐ, ջուր, որը պարունակում է ծայր աստիճանի ցրված վիճակում գտնվող նյութերի խառնուրդ և լուսավորելիս ձեռք է բերում օպալի (սաղափի) երանգ:

ВОДА ОСВОБОЖДЕННАЯ — ԱՋՍՏՎԱԾ ՋՈՒՐ, տե՛ս Освобожденные воды:

ВОДА ОСМОТИЧЕСКАЯ — ՕՍՄՈՏԻԿ ՋՈՒՐ, ջուր, որը ֆիզիկապես կապված է միներալների և չչաղկապված ապարի մասնիկների մակերևույթի հետ: Օ. ջ. ստորաբաժանվում է թույլ կապված (օսմոտիկորեն ներծծված) և ամուր կապված

տարատեսակների: Ամուր կապված Օ. ջ-ի առաջացումն ուղեկցվում է ջերմության անջատումով, որը կոչվում է թրջման ջերմություն: Հոմանիշ՝ ֆիզիկապես կապված ջուր, դիֆուզային թաղանթների ջուր:

ВОДА ОТЖАТАЯ — ՔԱՍՎԱԾ ՋՈՒՐ, ջուր, որն ստացվում է մեծ ճնշման մամլիչով ապարը սեղմելիս: Այդ եղանակով խորքային նստվածքային ապարներից բանվում է ծակոտիճային ջուր, որի ուսումնասիրությունը պատկերացում է տալիս հին ավազանների ջրի բիմ. բաղադրության մասին: Հոմանիշ՝ ծակոտիճային լուծույթ:

ВОДА ПАЛЮСТРАЛЬНАЯ (БОЛОТНАЯ) — ՊԱՆՅՈՒՍՏՐԱԼ (ԾԱՀՃԱՅԻՆ) ՋՈՒՐ, տե՛ս Палюстральные воды:

ВОДА ПЕРЕГРЕТАЯ — ԳԵՐՏԱՔ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը  $+100^{\circ}$  Ց բարձր ջերմաստիճանում գտնվում է հեղուկ-կաթիլային վիճակում:

ВОДА ПЕРЕОХЛАЖДЕННАЯ — ԳԵՐՍԱՌԸ ՋՈՒՐ, բացառիկ սառը ստ. ջուր, որը  $0^{\circ}$ -ից ցածր ջերմաստիճանում գտնվում է հեղուկ վիճակում: Տարածված է բազմամյա սառցույթի շրջաններում:

ВОДА ПИРОГЕНЕТИЧЕСКАЯ — ՀՐԱԾԻՆ ՋՈՒՐ, ջուր, որն առաջանում է պինդ (կարծր) արվող համածոների չոր թորման ժամանակ օրգ. նյութի տարրալուծման հաշվին:

ВОДА ПЛАВАЮЩАЯ — ԼՈՂԱՑՈՂ ՋՈՒՐ, ըստ Ա. Ի. Ջենս-Լիտովսկու և Ն. Ի. Տոլստիխինի (1948), քաղցրահամ ստ. ջուր, որը ոսպնյակի ձևով տեղադրված է ծովափնյա թմբերի և ցամաքալեզվակների ավազոտներում՝ ծովային աղի ջրի վրա: Լ. ջ. սնվում է մթնոլորտային տեղումների և մակերևութային հոսքի ջրերից:

ВОДА ПЛАСТОВАЯ — ԾԵՐՏԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Пластовые (межпластовые) воды:

ВОДА ПЛАСТОВО-ТРЕЩИННАЯ — ԾԵՐՏԱԾԵՂՔԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ի. Կ. Ջայնի (1948), ստ. ջուր, որը տեղադրված է ծալքավորված փոխակերպային, նստվածքային և հրաբխածին-նստվածքային ապարների ռեգիոնալ տարածման ճեղքերում:

ВОДА ПЛЕНОЧНАЯ — ԹԱՂԱՆԹԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Пленочная (рыхлосвязанная) вода:

ВОДА ПОГЛАЩЕННАЯ — ԿՆՆՎԱԾ ՋՈՒՐ, տե՛ս Вода адсорбционная:

ВОДА ПОГРЕБЕННАЯ — ԹԱՂՎԱԾ ՋՈՒՐ, տե՛ս Погребенные воды:

ВОДА (ВЛАГА) ПОДВЕШЕННАЯ — ԿՍԽՎԱԾ ՋՈՒՐ (ԽՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ), ջուր, որը գտնվում է ապարների մագալան անցքերում ու ճեղքերում, պահվում է մագանթային ձողական ուժերով և կապ չունի գրունտային ջրերի հորիզոնի հետ:

4. ջ. սովորաբար տարածված է օդահագեցման զոնայի ամենավերին մասում՝ հողաբուսական շերտում:

ВОДА ПОДЗЕМНАЯ — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՈՒՐ, ջուր, որը գտնվում է երկրավերելը կազմող ապարների մեջ հեղուկ, գոլորշի, կարծր վիճակում: Ա. ջ-ին է վերագրվում նաև քիմիապես կապված ջուրը:

ВОДА ПОДМЕРЗЛОТНАЯ — ԵՆԹԱՍԱՌՅՈՒԹԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ն. Ի. Տոլստիխինի (1941), բազմամյա սառած ապարների զանգվածից ներքև տեղադրված քաղցրահամ, հանքային, աղահամ կամ աղի ջուր, որի ջերմաստիճանը տատանվում է  $-3 \div -20^\circ \text{C}$  և ավելի սահմաններում: Տարբերում են գետաբերուկային, հեղեղաբերուկային և ստվածքների, արմատական ապարների շերտային, շերտամեղքային, ճեղքակարստային և այլ տիպի Ե. ջ-եր: Երկրի մակերևույթի հետ Ե. ջ-ի ջրափոխանակությունը (սնում, բեռնաթափում) կատարվում է միջանցիկ հալույթների միջոցով: Բազմամյա սառույթի շրջաններում Ե. ջ. լայնորեն օգտագործվում է ջրամատակարարման, բուժման և օգտակար տարրերի ու միացությունների (մասնավորապես կերակրի աղի) ստացման համար:

ВОДА ПОДМОРЕННАЯ — ԵՆԹԱՍԱՌՅԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԵՆԹԱՔԱՐԱԿԱՐԿԱՌԱՅԻՆ, ԵՆԹԱՄՈՐԵՆԱՅԻՆ) ՋՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է սառցաբերուկային և ստվածքների տակի ջրաթափանց ապարների մեջ: Ե. ջ. բնորոշ է նախկին ԽՍՀՄ Եվրոպական մասի սառցադաշտային և ստվածքների տարածման շրջաններին:

ВОДА ПОДОШВЕННАЯ — ՀՍԱԿԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է նավթաբեր շերտում, անմիջապես նավթի տակ: Հ. ջ. լայնորեն տարածված է նավթաբեր կառուցվածքների փոքրաթեք հաստ կուտակիչ շերտերում, որոնց մեջ նավթը գբաղեցնում է միայն շերտի վերին մասը:

ВОДА ПОДПОЧВЕННАЯ — ԵՆԹԱՀՈՂԱՅԻՆ ՋՈՒՐ, կապված թաղանթային ջուր (խոնավություն), որը տեղադրված է ենթահողային չոր հորիզոնի ապարներում (ըստ Ա. Կ. Վիտցկու, 1962, իլյուվիալ կամ «մեռած» հորիզոնում):

ВОДА ПОДРУСЛОВАЯ — ԵՆԹԱՀՈՒՆԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է գետի հունը կազմող գետաբերուկային և ստվածքների կամ երբեմն արմատական ապարների մեջ: Ե. ջ. ստաջացնում է ենթահունային ստ. հոսք, որը սովորաբար փոխադարձաբար կապված է գետի հետ:

ВОДА ПОДСОЛЕВАЯ — ԵՆԹԱԱՂԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ա. Ի. Ջենս-Լիտովսկու և Ն. Ի. Տոլստիխինի (1948), ստ. ջուր, որը տեղադրված է աղատար հաստվածքի տակ գտնվող ապարներում: Ծագումով Ե. ջ. հանդիսանում է աղատաջացման ավազանի աղաջուր, որը թաղված է հետագա և ստվածքների տակ և ունի ճնշումային բնույթ: Ե. ջ-ի հանքայնացումը հասնում է մինչև 270—350 գր/լ, քիմ. բաղադրությունը հիմնականում բլոր-կալցիումային-նատրիումային է: Որոշակի երկրք. պայմաններում Ե. ջ. կարող է առաջանալ վերադային, կողային կամ այլ ջրերի հաշվին: Առանձին դեպքերում, մասնավորապես աղային տեկտոնիկայի դրսևորման ժամա-

նակ, Ե. ջ. կարող է ներդրվել աղային հաստվածքի մեջ կամ տեկտ. նեղքերով բարձրանալ երկրի մակերևույթ:

ВОДА ПОКРОВО-ТРЕЩИННАЯ — ԾԱԿՈՏԻՆԱՃԵՂՔԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ի. Կ. Զայցևի (1961), ստ. ջուր, որը տեղադրված է արտավիժած հրային ապարների (անդեզիտաբազալտներ, տրապներ) ծածկոցների լայնատարած նեղքերի մեջ:

ВОДА ПОРОВАЯ — ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է տարբեր ծագման ապարների ծակոտիների մեջ: Ծ. ջ. գերազանցապես տարածված է փոխար բեկորային չշաղկապված նստվածքային ապարներում (կոպիճ, գլաբար, ալվակներ, կավավազ, կավեր են), ինչպես նաև հրաբխային խարամներում:

ВОДА ПОРОВО-ПЛАСТОВАЯ — ԾԱԿՈՏԻՆԱՃԵՐՏԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ի. Կ. Զայցևի (1961), ստ. ջուր, որը գտնվում է շերտային տեղադրում ունեցող ապարների ծակոտիների մեջ:

ВОДА ПОРОВО-ТРЕЩИННО-ПЛАСТОВАЯ — ԾԱԿՈՏԻՆԱՃԵՐՏԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Ի. Կ. Զայցևի (1961), ստ. ջուր, որը գտնվում է շերտային տեղորում ունեցող ապարների ծակոտիների և նեղքերի մեջ:

ВОДА (ВЛАГА) ПОЧВЕННАЯ — ՀՈՂԱՅԻՆ ՋՈՒՐ (ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ), ստ. ջուր, որը գտնվում է հողային շերտում (օդահագեցման զոնայում) և պահվում է մոլեկուլային ձգողական ուժերի շնորհիվ: Սովորաբար Հ. ջ. զբաղեցնում է ծակոտիների ծավալի մի մասը, իսկ մյուս մասը լցված է օդով և ջրային գոլորշիներով:

ВОДА ПРЕСНАЯ — ՔԱՂՑՐԱՆՍԻ ՋՈՒՐ, բնական ջուր, որի հանքայնացումը չի գերազանցում 1 գր/լ (տե՛ս Классификация подземных вод): Ըստ քիմ. բաղադրության Ք. ջ. գերազանցապես ջրակարրոնատային է:

ВОДА ПРИДОННАЯ — ՀԱՏԱԿԱՄԵՐՁ ՋՈՒՐ, օվկիանոսների, ծովերի և այլ ջրավազանների ստորին շերտի ջուր, որն անմիջապես հպվում է հատակին: Հ. ջ. անմիջական ֆիզքիմ. և ջրաիոնամիկ փոխազդեցության մեջ է հատակային նրստվածքների հետ:

ВОДА ПРОМЕЖУТОЧНАЯ — ՄԻՋԱՆԿՅԱԿ ՋՈՒՐ, տե՛ս Нефтяные воды (воды нефтяных месторождений):

ВОДА ПРОМЫШЛЕННАЯ — ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՋՈՒՐ, տե՛ս Промышленные (промысловые) подземные воды:

ВОДА ПРОМЫШЛЕННАЯ И МИНЕРАЛЬНАЯ — ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. հանքային ջուր, որը նրան բուժիչ հատկություն ավող նյութերի հետ միասին, լուծված վիճակում պարունակում է արժեքավոր տարրերի արդյունաբերական կուտակումներ:

ВОДА ПРОЧНОСВЯЗАННАЯ — ԱՄՈՒՐ ԿԱՂՎԱԾ ՋՈՒՐ, տե՛ս Вода гигроскопическая:

ВОДА РЕЛИКТОВАЯ — ՄՆԱՅՈՒԿԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որն առաջացել է ջրատար նստվածքային ապարների հետ միաժամանակ և, ըստ էության, հանդիսանում է նստվածքառաջացման ավազանից մնացած ջուր: Մ. ջ-ի քիմ. բաղադրությունը երկր. ժամանակների ընթացքում ենթարկվում է փոփոխության, որը կապված է ջրատար ապարների կազմավորման հետագա փուլերի (դիագենեզ, կատագենեզ) և վերականգնման պայմաններում ընթացող երկրաքիմ. բարդ գործընթացների հետ:

ВОДА РУДНАЯ — ՀԱՆՔԱՋՈՒՐ, ըստ Ա. Ի. Բրոդսկու (1963), ստ. ջուր, որը տեղադրված է անմիջապես հանքային մարմնի ճեղքերի և ծակոտիների մեջ: Հ. հառակից ստ. ջրերից տարբերվում է քիմ. բաղադրությամբ, հանքայնացման տարրի բարձր պարունակությամբ, թթվայնությամբ ևն: Հնացած տերմին:

ВОДА РУДНИЧНАЯ — ՀԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. (երբեմն նաև մակերևութային) ջուր, որը մուտք է գործում լեռնային փորվածքները և դժվարացնում հնքվ-ի շահագործման պայմանները: Սուլֆիդային հանքայնացման և ածխի հնքվերում Հ. ջ. սովորաբար ուժեղ թթվային է ( $pH < 3$ ), պարունակում է մեծ քանակով սուլֆատ-իոն (այդ թվում նաև ազատ ծծմբական թթու), երկաթ (մի քանի տասնյակ գր/լ), ալյումինիում և այլ մետաղներ ու միացություններ: Այդպիսի Հ. ջ. բուռն կերպով քայքայում է հանքարանային մետաղյա և բետոնե սարքավորումներն ու կառույցները: Հոմանիշ՝ հանքահորային ջուր:

ВОДА РЫХЛОСВЯЗАННАЯ — ԹՈՒՅԼ ԿԱՊՎԱԾ ՋՈՒՐ, հասկացությունն օգտագործվում է որպես թաղանթային ջրի հոմանիշ (տե՛ս Вода пленочная):

ВОДА СВОБОДНАЯ — ԱՋԱՏ ՋՈՒՐ, ստ. ջուր, որի մակերևութի վրա եղած ճնշումը հավասար է մթնոլորտային ճնշմանը: Ա. ջ-ի խմբին են դասվում վերնաջուրը, գրունտային ջուրը, միջշերտային ոչ ճնշումնային ջուրը ևն: Հոմանիշ՝ ոչ ճնշումնային ջուր:

ВОДА СВЯЗАННАЯ — ԿԱՊՎԱԾ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը ֆիզ. կամ քիմ. կապի մեջ է ապարների կարծր նյութի (մասնիկների) հետ և այդ պատճառով, ի հակադրություն ազատ ջրի, յուրովի անշարժ է: Տարբերում են Կ. ջ-ի երկու խումբ. 1) ապարի կարծր նյութի ճեղքի և, 2) ապարի ճեղքերի, ծակոտիների կամ կարծր նյութի մակերևութի (մոլեկուլային ձգողական ուժերով պահվող): Առաջին խմբի մեջ մտնում են կառուցվածքային, բյուրեղային և ցեղիտային ջրերը, իսկ երկրորդի մեջ՝ խոնավածուծ (ամուր կապված) և թաղանթային (թույլ կապված) ջրերը:

ВОДА СЕДИМЕНТАЦИОННАЯ — ՆՍՎԱԾՔԱԿՈՒՏԱԿՄԱՆ (ՍԵԳՆԻՄԵՆՏԱՅԻՈՒՆ) ՋՈՒՐ, հին ջրավազանների նստվածքների ստ. ջուր, որը նստվածքների հետ միասին երկար ժամանակ մնացել է թաղված վիճակում և աստիճանաբար փոփոխվել է դիագենեզի ու կատագենեզի փուլերում: Ն. ջ. լինում է կամ նստվածքային ապարների հետ միաժամանակ առաջացած (սինգենետիկ, մնացուկային ջուր), կամ նստվածքների խտացման գործընթացում արտազատված և այլ հասակի ապարների մեջ տեղադրված (էպիգենետիկ, տեղափոխված ջուր):

ВОДА СЕРОВОДОРОДНАЯ — ԾԾՄԲԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Силь-  
фидные (сероводородные) воды:

ВОДА СИНГЕНЕТИЧЕСКАЯ — ՀԱՄԱԾԻՆ (ՄԻՆԳԵՆԵՏԻԿ) ՋՈՒՐ, տե՛ս  
Сингенетические воды:

ВОДА СИНТЕТИЧЕСКАЯ — ՄԻՆԹԵԶՎԱԾ (ՄԻՆԹԵՏԻԿ) ՋՈՒՐ, տե՛ս  
Синтетические воды:

ВОДА СО СВОБОДНОЙ ПОВЕРХНОСТЬЮ — ԱԶԱՏ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՈՎ  
(ՀԱՅԵԼՈՎ) ՋՈՒՐ, ստ. ջուր, որի մակերևույթի վրա ճնշումը հավասար է մթնո-  
լորտային ճնշմանը, աչիսնքն այդ մակերևույթը (կամ հագելին) ազատ է:

ВОДА СОЛЕНАЯ — ԱՂԻ ՋՈՒՐ, բնական ջուր, որի հանքայնացումը տատան-  
վում է 1—35 գր/լ սահմաններում: Տարբերում են. ա) թույլ աղի՝ 1—3 գր/լ,  
բ) միջին աղիության՝ 3—10 գր/լ, գ) ուժեղ աղի՝ 10—35 գր/լ ջրեր: Ըստ Վ. Ի. Վեր-  
նադսկու (1931), աղի ջրերին են դասվում 10—50 գր/լ հանքայնացման ջրերը (տե՛ս  
Классификация подземных вод):

ВОДА СОЛОНОВАТАЯ — ԱՂԱՀԱՄ ՋՈՒՐ, ըստ Վ. Ի. Վերնադսկու (1931),  
բնական ջուր, որի հանքայնացումը տատանվում է 1—10 գր/լ սահմաններում: Այդ  
հանքայնացման ջրերը Ի. Կ. Զալցեր (1961) համարում է թույլ աղի (1—3 գր/լ)  
և միջին աղիության (3—10 գր/լ) (տե՛ս Классификация подземных вод):

ВОДА СУБАРТЕЗИАНСКАЯ — ՄԵՐԶԱՐՏԵԶՅԱՆ ՋՈՒՐ, տե՛ս  
Субартезианские воды:

ВОДА СУЛЬФАТНАЯ — ՍՈՒԼՖԱՏԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Сульфатные воды:

ВОДА ТАЛАССОГЕННАЯ — ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ (ԾՈՎԱՅԻՆ) ՋՈՒՐ, նրստ-  
վածքային ապարների ծակոտիներում ներփակված օվկիանոսային (ծովային)  
ջուր, որն ապարների մեջ կուտակվել է նստվածքակուտակման գործընթացում:

ВОДА ТЕПЛАЯ — ԳՈԼ ՋՈՒՐ, ստ. ջուր, որի ջերմաստիճանը տատանվում է  
20—37° Ց սահմաններում (տե՛ս Классификация подземных вод):

ВОДА ТЕПЛОЭНЕРГЕТИЧЕСКАЯ — ԶԵՐՄԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՋՈՒՐ, ստ. տաք,  
գերտաք ջուր, որն օգտագործվում է էլեկտրաէներգիայի ստացման, ջեռուցման և այլ  
նպատակներով: Զ. ջ. լայն մասշտաբներով օգտագործվում է Իսլանդիայում, Իտա-  
լիայում, Նոր Զելանդիայում, ԱՄՆ-ում և այլուր: Նախկին ԽՍՀՄ տարածքում Զ. ջ.  
օգտագործվում է Կանչատկայում, Դադստանում, Վրաստանում և այլուր:

ВОДА ТЕРМАЛЬНАЯ — ԶԵՐՄ (ԹԵՐՄԱԼ) ՋՈՒՐ, ստ. ջրաուար հորիզոնի  
կամ աղբյուրի ջուր, որն ունի բարձր ջերմաստիճան: Տարբերում են. 1) հարաբե-  
րական ջերմեր (թերմեր), որոնց ջերմաստիճանը բարձր է տվյալ շրջանի օդի տարե-  
կան միջին ջերմաստիճանից, 2) բացարձակ ջերմեր, որոնց ջերմաստիճանը բարձր  
է երկրագնդի օդի տարեկան միջին առավելագույն (36—37°) ջերմաստիճանից:  
Զ. ջ. ջերմությունն ստանում են երկրակեղևի խորը հորիզոններից, որտեղ նրանք

տեղադրված են: Ժամանակակից հրաբխային շրջաններում, որտեղ համեմատաբար ոչ մեծ խորություններում ապարները դեռևս ստան չեն, հաճախ ստ. ջրերը գտնվում են գերտաքացած վիճակում և դարս են գալիս երկրի մակերևույթ՝ գերտաք ջրային գոլորշու կամ եռացող աղբյուրների (հեղեղների) ձևով: Այս ջրերը սովորաբար ունեն ցածր հանքայնացում, բարձր հիմնանյութային (ավկալանյութային), նրանց կատիոնային բաղադրության մեջ գերիշխում է Na իոնը: Գազային բաղադրությանը գերազանցապես ազոտային են նաև ածխաթթվային, մեթանային և ծծումբ-ածխաթթվային ջրերը: Տարբերում են ազոտային ջրերի 3 տիպեր. 1) գրահիտային զանգվածների ճեղքերի հետ կապված չտիպազանց թույլ հանքայնացված (հաճախ  $< 0,3$  գ/լ), սիլիկահողային՝ ռադոնի և որոշ միկրոտարրերի համեմատաբար բարձր պարունակությամբ, 2) տոֆածին հաստվածքների, թերթաքարերի, ավազաքարերի ազոտային ջերմեր՝ ծծմբաջրածնի առկայությամբ (որը  $pH = 8-9$  դեպքում լինում է կապված վիճակում). ալյսիսի ջրերը կոչվում են ջրատուֆիդային, 3) կարբոնատային հաստվածքների ազոտային ջերմեր, որոնք բնութագրվում են բարձր հանքայնացումով:

ВОДА ТЕХНИЧЕСКАЯ — ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՋՈՒՐ, տե՛ս Технические воды:

ВОДА ТОРФЯНАЯ — ՏՈՐՖԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Торфяные воды:

ВОДА ТРЕЩИННАЯ — ԾԵՂՔԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Трещинные воды:

ВОДА ТРЕЩИННО-ЖИЛЬНАЯ — ԾԵՂՔԱՅԻՆՈՎԱԿԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է ուժեղ տեղախախտված ու ալյսիոխախտված մագմածին, փոխակերպային և նստվածքային ապարների ճեղքերում: Առանձնացվում են Ծ. ջ-երի երկու տիպ. ա) կապված խոշոր տեկտ. խախտումների և նրանց ուղեկցող ճեղքերի համակարգի հետ, բ) կապված հողմահարման զոնայի ճեղքավորումների հետ:

ВОДА ТРЕЩИННО-КАРСТОВАЯ — ԾԵՂՔԱԿԱՐՍՏԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Трещиннокарстовые воды:

ВОДА ТРЕЩИННО-ПЛАСТОВАЯ — ԾԵՂՔԱԾԵՐՏԱՅԻՆ ՋՈՒՐ, ստ. ջուր, որը տեղադրված է շերտավոր, թույլ տեղախախտված ապարների ճեղքերում:

ВОДА ТУНДРОВАЯ — ՏՈՒՆԴՐԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Тундровые воды:

ВОДА ТЯЖЕЛАЯ — ԾԱՆՐ ՋՈՒՐ, տե՛ս Тяжелая вода:

ВОДА ФИЗИЧЕСКИ СВЯЗАННАЯ — ՖԻԶԻԿԱԳԵՍ ՎՍԴՎԱԾ ՋՈՒՐ, տե՛ս Вода осмотическая:

ВОДА ФИЛЬТРАЦИОННАЯ — ԾԾԱՆՑՄԱՆ ՋՈՒՐ, տե՛ս Фильтрационные воды:

ВОДА ФРЕАТИЧЕСКАЯ — ՖՐԵԱՏԻԿ ՋՈՒՐ, տե՛ս Фреатические воды:

ВОДА ХЛОРИДНАЯ — ՔԼՈՐԻԴԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Хлоридные воды:

ВОДА ХЛОР-КАЛЬЦИЕВОГО ТИПА — ՀԼՈՐ-ԿԱԼՑԻՈՒՄԱՅԻՆ ՏԻՊԻ ՋՈՒՐ, բնական ջուր, որի բիմ. կազմում գերիշխում են քլոր և կալցիում իոնները: Ըստ Վ. Ա. Սուլիմի, Ք.-կ. տ. ջ. բնութագրվում է ծագումնաբանական հետևյալ գործակցով՝  $\frac{rCl-rNa}{rMg} > 1$ : Այս տիպի ջրերը բնորոշ են խոր նվաճքային կառուցվածքներին և նավթագազաբեր կտրվածքներին:

ВОДА ХЛОР-МАГНИЕВОГО ТИПА — ՀԼՈՐ-ՄԱԳՆԵՒՈՒՄԱՅԻՆ ՏԻՊԻ ՋՈՒՐ, բնական ջուր, որի բիմ. կազմում գերիշխում են քլոր և մագնիում իոնները: Ըստ Վ. Ա. Սուլիմի, ք.-մ. տ. ջ. բնութագրվում է ծագումնաբանական հետևյալ հարաբերակցությամբ՝  $\frac{rCl-rNa}{rMg} < 1$  և բնորոշ է խորքային նստվածքային ապարներին:

ВОДА ХОЛОДНАЯ — ՍԱՌԸ ՋՈՒՐ, ըստ Օ. Ա. Ալլոյիմի (1953), ստ. ջուր, որի ջերմաստիճանը տատանվում է 4—20° Ց սահմաններում (տե՛ս Классификация подземных вод):

ВОДА ШАХТНАЯ — ՀԱՆՔԱՀՈՐԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Вода рудничная:

ВОДНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ — ՋՐԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրում ապրող բուսատեսակներ, որոնց մի մասը լողում է ջրի վրա, իսկ մյուսը՝ լրիվ ընկղմված է ջրի մեջ: Ջ. Բ. կազմի մեջ մտնում են տարբեր ջրիմուռներ, որոշ ձարխտանմաններ (պտերակերպեր) ծածկաներմավորներ: Տարբերում են ծովային և քաղցրահամ Ջ. ք.: Առաջինները ներկայացված են մանրադիտակային, դիատոմային, ջրիմուռներով, իսկ ափամերձ գոտում՝ դարչնագույն, կարմիր ու կանաչ ջրիմուռներով: Քաղցրահամ ջրային բուսականությունից տիրապետում են կանաչ ու դիատոմային ջրիմուռները, իսկ ծանձաղ ջրավազաններում կամ խոր ջրավազանների ափամերձ մասերում մեծ տարածում ունեն պտերագգիները, մամուսկերպ ծաղկաբույսերը:

ВОДНО-БАЛАНСОВЫЕ СТОКОВЫЕ ПЛОЩАДКИ — ՋՐԱՀԱՇՎԵԿՈՒՄՅԻՆ ՀՈՍՔԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ, լանջերի վրա հողաթմբերով, կավային կամ բետոնյա միջնորմերով առանձնացված ոչ մեծ չափերի (10×20, 20×40, 20×60 մ) հարթակներ՝ կահավորված ջրահավաք ու ջրաչափ սարքերով, որոնց օգնությամբ փորձային դիտումներ են տարվում մակերևութային ու ստ. հոսքերի, ինչպես նաև ջրային հաշվեկշռի այլ բաղադրատարրերի վրա: Վերջիններից են. մթնոլորտային տեղումները, օդահագեցման զոնայում խոնավության պաշարը և գրունտային ջրերի պաշարները: Լանջերի հարթակները կոչվում են հոսքային, քանի որ նման փորք տեղամասում լրիվ ջրային հաշվեկշիռը կազմել հնարավոր չի:

ВОДНО-БАКТЕРИАЛЬНАЯ СЪЕМКА — ՋՐԱՄԱՆՐԷՄՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, մանրէային հանույթի մեթոդներից մեկը: Այն սովորական հողագրունտային մանրէային հանույթից տարբերվում է նրանով, որ ուսումնասիրվում են միայն գրունտային և արտեզյան ջրերի մեջ տարածված մանրէները:

ВОДНО-ГАЗОВАЯ СЪЕМКА — ՋՐԱԳԱԶՄՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, երկրաբիմ. հանույթի մեթոդներից մեկը, որի ժամանակ ուսումնասիրվում են ստ. ջրերի գազային բաղադրիչները:

**ВОДНО-ГАЗОВЫЙ КОНТАКТ** — ՋՐԱԳԱԶԱՅԻՆ ԿՈՆՏԱԿՏ, նավթագազա-  
րեր հնքվ-երում գազի ու ջրի բաժանման մակերևույթ: Ջ. կ-ում ջուրը գտնվում է  
հնչման տակ: Հոմանիշ՝ գազաջրային կոնտակտ:

**ВОДНОЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО** — ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, նախ-  
կին ԽՍՀՄ-ում և բազմաթիվ պետություններում ընդունված պետական վավերագրեր,  
որոնք, ելնելով ջրային ռեսուրսների համաժողովրդական սեփականության սկզբուն-  
քից, սահմանում են նրանց ուսցիոնալ օգտագործման և պահպանության պայման-  
ներն ու պահանջները: Ջ. օ. նպատակն է ջրային ռեսուրսների պահամպրված իրաց-  
ման կենսագործմանը:

**ВОДНОЕ ХОЗЯЙСТВО** — ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ժողովրդական տըն-  
տեսության տարրեր բնագավառներում (կոմունալ ու արդյունաբերական ջրամա-  
տակարարում, հողերի ոռոգում ու չորացում, էներգետիկա, ջրային տրանսպորտ,  
ձկնարդյունաբերություն ևն) մակերևույթային ու ստ. ջրերի օգտագործման միջոցա-  
ռումների համակցություն:

**ВОДНЫЕ МИГРАНТЫ** — ՋՐԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐ (ՋՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԱ-  
ՓՈՒՆՎՈՂ ՏԱՐՐԵՐ), քիմ. տարրեր, որոնք պարզ և համակարգ իոնների կամ մո-  
լեկուլների ձևով տեղափոխվում են առավելապես մակերևույթային, հողային և  
գրունտային ջրերի միջոցով: Ջ. մ-ին են պատկանում շատ տարրեր, մասնավորա-  
պես նատրիումը, մագնիումը, ալյումինը, սիլիցիումը, ֆոսֆորը, ծծումբը, բլրը,  
կալիումը, երկաթը, կոբալտը, հիկելը, վանադիումը, ատրոնցիումը, ցինկը, կապարը,  
պղինձը ևն:

**ВОДНЫЕ (ГИДРОХИМИЧЕСКИЕ) ОРЕОЛЫ РАССЕЙНИЯ** — ՋՐԱՅԻՆ  
(ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ) ՑՐՄԱՆ ՊՍԱԿՆԵՐ, տե՛ս Ореолы рассеяния гидрохимические  
(водные):

**ВОДНЫЕ РЕСУРСЫ** — ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, մակերևույթային ու ստ.  
ջրերի այն քանակը, որը կարող է օգտագործվել ժողովրդական տնտեսությունում  
տարրեր նպատակների համար:

**ВОДНЫЕ СВОЙСТВА ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ՋՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐ, ջրի նկատմամբ ապարների դրսևորված հատկություններ: Ա. ջ. հ-ի  
թվին են պատկանում. խոնավատարությունը, ջրաթափանցելիությունը, մազակամու-  
թյունը, կակղելիությունը, լուծելիությունը ևն:

**ВОДНЫЙ БАЛАНС** — ՋՐԱՅԻՆ ՀԱԾՎԵԿԾԻՒ, տե՛ս Баланс водный:

**ВОДНЫЙ КАДАСТР** — ՋՐԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ, ջրային օբյեկտների (գետեր,  
լճեր, ճահիճներ, ծովեր, սառցադաշտեր և ստ. ջրեր) վերաբերյալ տեղեկություն-  
ների ամփոփագիր: Այն կազմվում է ջրային ռեսուրսների գնահատման և նրանց  
օգտագործման պահամպրման ու նախագծման նպատակով:

**ВОДНЫЙ ОРЕОЛ РАССЕЙНИЯ РУДНЫХ МЕСТОРОЖДЕНИЙ** — ՄԵՏԱ-  
ՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՑՐՄԱՆ ՋՐԱՅԻՆ ՊՍԱԿՆԵՐ, խտորիչ քիմ. բաղա-  
դրության մակերևույթային ու ստ. ջրերի ցրման պատկեր, որոնք առաջանում են

հանքամարմինների և նրանց ուղեկցող սկզբնական երկրաքիմ. ցրման պատկերի ներգործության շնորհիվ: Մ. ճ. ց. չ. պ. հանդիսանում են թաքնված հանքամարմինների որոնման կարևոր ցուցանիշներ:

**ВОДНЫЙ РЕЖИМ** — ՋՐԱՅԻՆ ՌԵԺԻՄ, մակերևութային ու ստ. ջրերի գույնի, համի, հոտի, թափանցիկության, շերմաստիճանի, ռադիոակտիվության, հանքանյութերի, բիմ. բաղադրության, ծախսի, մակարդակի և այլ հատկանիշների օրինաչափ փոփոխություններ:

**ВОДОЗАБОРЫ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՆԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՋՐՀԱՆՆԵՐ (ՋՐՀԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ), ինժեներական կառույցներ, որոնց միջոցով ստ. ջրերը բռնվում, հավաքվում և մղվում են ջրամատակարարման, ոռոգման, հիդրոէներգետիկ և այլ համակարգեր: Ա. չ. չ. կազմված են լինում միայնակ ու խմբային հորատանցքերից, ջրհորերից, քարիզներից, ստ. ջրհավաք գետնուղիներից և այլ բարդ կառույցներից կամ նրանց համակցությունից:

**ВОДОМЕР** — ՋՐԱՉԱՓ, սարք, որով որոշվում է հալոսնի կտրվածքով (խողովակ, ջրանցք ևն) որոշակի ժամանակահատվածում անցնող ջրի քանակը: Ջրաչափական այն սարքերը, որոնք անմիջապես ցույց են տալիս միավոր ժամանակամիջոցում անցնող ջրի ծախսը (քանակը), կոչվում են ծախսաչափեր:

**ВОДОМЕРНЫЙ ПОСТ** — ՋՐԱՉԱՓԱԿԱՆ ԿԵՏ, կահավորված դիտակետ, որտեղ կատարվում են ջրհոսքերի կամ ջրավազանների մակարդակի, ծախսի և այլ չափումներ:

**ВОДОНАПОРНАЯ СИСТЕМА** — ՋՐԱԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ստ. ջրերի ավազան, որն ընդգրկում է նրա ժամանակակից սնման, ճնշման, հոսքի և բեռնաթափման մարզերը:

**ВОДОНАПОРНЫЙ РЕЖИМ** — ՋՐԱԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ ՌԵԺԻՄ, նավթազազա-ջրապարունակ շերտի ջրի ճնշումնային ռեժիմ՝ նավթի ու գազի շահագործման ժամանակ, կամ ջրապարունակ շերտի (հորիզոնի) ջրի ճնշումնային ռեժիմ՝ ստ. ջրի շահագործման ժամանակ: Տարբերում են Ջ. ռ.՝ կայունացած և ոչ կայունացած շարժման դեպքում:

**ВОДОНАСЫЩЕНИЕ** — ՋՐԱՀԱԳԵՑՈՒՄ, ապարի նմուշի ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների հագեցումը 150 մթն. ճնշման տակ ներմղվող ջրով: Քանակապես Ջ. արտահայտվում է կլանված ջրի և չոր ապարի կշռի հարաբերությամբ: Ջ. միշտ մեծ է ջրակլանումից, որը տեղի է ունենում սովորական ճնշման և շերմաստիճանի պայմաններում:

**ВОДОНЕПРОНИЦАЕМОСТЬ (ВОДОУПОРНОСТЬ)** — ՋՐԱՆԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ (ԱՆՋՐԱԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՋՐԱՄԵՐԺՈՒԹՅՈՒՆ), բնական ճնշման պայմաններում ապարի միջով ազատ ջուր չանցկացնելու կամ խիստ անճշան քանակով անցկացնելու հատկություն: Գործնականորեն ջրանթափանցելի են կավերը, հոծ (ճեղքերից, ծակոտներից զուրկ) հրային, նստվածքային և փոխակերպային ապարները, կավային և բյուրեղային թերթաքարերը ևն:

**ВОДОНЕФТЯНОЙ КОНТАКТ** — ՋՐԱՆԱԿԹԱՅԻՆ ԿՈՆՏԱԿՏ, նախատար շերտում նալվեմ ու ջուրը բաժանող մակերևույթ: Ծառ նախատար շերտերում Ջ. Կ. կարող է հորիզոնական չլինել, որը պայմանավորված է շերտերի անհասանառությամբ և ջրանճշումնային համակարգի ձևավորման ու սնման ստանձնահատկություններով: Նախատար շերտերի շահագործման ընթացքում տեղի է ունենում Ջ. Կ-ի տեղաշարժ, որը որոշվում է դիտարկումների հիման վրա կազմվող քարտեզների միջոցով: Հոսանիշ՝ նախաջրային կոնտակտ:

**ВОДОНОСНАЯ СВИТА** — ՋՐԱՍԱՐ ԾԵՐՏԱՆՈՒԽԵՔ, տարբեր ֆազիալ-քարաբանական բաղադրության միանման կամ ութմիկ հերթափոխվող ջրատար ապարներ, որոնք առաջացել են որոշակի ֆիզիկաաշխարհ. պայմաններում: Ջ. շ. համապատասխանում է համընդհանուր տեկտ. (քարձրացում, իջեցում) և նստվածքագոյացման (ցամաքային, մակընթացության, տեղատվության) ցիկլերի ստանձին փուլերին, որոնց հետ կապված են եղել ջրաերկր. ցիկլերի (ցամաքային, ծովային) ստանձին փուլեր:

**ВОДОНОСНАЯ СЕРИЯ** — ՋՐԱՍԱՐ ՍԵՐԻԱ, ֆազիալ-քարաբանական տեսակետից բարդ նստվածքային, փոխակերպային և հրաբխածին հզոր հաստվածքներ, որոնք հատակագծում և կտրվածքում տեղադրված են որոշակի (նստվածքակուտակման, խոշոր ցիկլին համապատասխան) օրինաչափությամբ և բնութագրվում են ջրատար ու ջրամերժ շերտայինների հերթափոխությամբ: Ջ. ս-ները միմյանցից ստանձնանում են շերտագրական ընդմիջումով, անկյունային աններդաշնակությամբ, հաճախ հրաբխային երևակումներով, ինչպես նաև ջրատարությամբ աչքի ընկնող հողմահարման զոնաներով:

**ВОДОНОСНЫЙ ГОРИЗОНТ** — ՋՐԱՍԱՐ ՀՈՐԻԶՈՆ, ջրաերկր. ալվազանի սահմաններում սնան ֆազիալ-քարաբանական բաղադրություն և ջրաերկր. հատկանիշներ ունեցող գրավիտացիոն ջրով հագեցած ապարների շերտեր, որոնք ծագումնաբանորեն համապատասխանում են նստվածքակուտակման կամ հրաբխակուտակության որոշակի էտապում առաջացած և ընդարձակ տարածում ունեցող ֆազիալ-քարաբանական տիպերին: Տարբեր Ջ. հ-ներ միմյանցից զանազանվում են ջրատար ապարների բաղադրությամբ և ջրաերկր. ստանձնահատկություններով:

**ВОДОНОСНЫЙ ГОРИЗОНТ ОГРАНИЧЕННО НАПОРНЫЙ (СУБНАПОРНЫЙ)** — ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ (ՄԵՐՉԵՆԾՈՒՄՆԱՅԻՆ) ՋՐԱՍԱՐ ՀՈՐԻԶՈՆ, ըստ Վ. Մ. Ծեստակովի, ջրատար հորիզոն, որի ճնշումնային ռեժիմը կապված է գրունտային ջրերի մակարդակի սեզոնային տատանումների հետ. մակարդակի քարձրացման ժամանակ հորիզոնում առաջանում է սահմանափակ (տեղական) ճնշում:

**ВОДОНОСНЫЙ КОМПЛЕКС** — ՋՐԱՍԱՐ ՀԱՍԱԽԻՐ, միևնույն կամ տարբեր հասակի, համեմատաբար կայուն հաստության լայնատարած ապարների հաստվածք, որը ջրահագեցած է և վերևից ու ներքևից սահմանափակված ջրամերժ ապարներով: Ջ. հ. ընդգրկում է մի քանի (երբեմն տասնչակ) ջրատար հորիզոններ, որոնց ստանձնացումը դժվար է կտրվածքի բարդ տեկտ. կառուցվածքի, ապարների հաճախակի փոփոխության կամ թույլ ուսումնասիրվածության պատճառով: Ջ. հ. բնորոշվում է իրեն յուրահատուկ ջրաերկր. ստանձնահատկություն-

ներով և շերտագրական իմաստով համապատասխանում է հարկերին, բաժիններին, սերիաներին և համակարգերի մասերին:

**ВОДОНОСНЫЙ ПЛАСТ** — ՋՐԱՏԱՐ ԾԵՐՏ, քարաբանական և ջրաերկրք. հատկանիշներով համասեռ գրավիտացիոն (ազատ) ջրով հագեցած ապարի շերտ: Այն կարող է ունենալ ճնշումնային և ոչ ճնշումնային բնույթ:

**ВОДООБЕСПЕЧЕННОСТЬ** — ՋՐԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, որն է նեգիոնի կամ ջրջանի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների ջրի փաստացի պահանջարկի բավարարվածության աստիճան:

**ВОДООБИЛЬНОСТЬ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ՋՐԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ, ջրի քանակ, որը միավոր ժամանակահատվածում շահագործողական հորատանցքերի միջոցով ստացվում է ջրատար ապարից (շերտից, հորիզոնից, համալիրից ևն): Ըստ ջրառատության ապարները ստորաբաժանվում են. ուժեղ ջրատար (հորատանցքերի հնարավոր շահագործողական ծավալը  $> 10$  լ/վրկ), ջրատար ( $1-10$  լ/վրկ), թույլ ջրատար ( $0,1-1,0$  լ/վրկ), շատ թույլ ջրատար ( $0,01-0,1$  լ/վրկ) և ջրազուրկ: Վերջինների մեջ առանձնացվում են՝ ջրամերժ (ջրանթափանց) և քարթափանց, սակայն ցամաքորդի ենթարկված ապարներ:

**ВОДООБМЕН ВЕСЬМА ЗАТРУДНЕННЫЙ** — ՉԱՓԱԶԱՆՑ ԴԺՎԱՐ ՋՐԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ջրափոխանակության այնպիսի պայմաններ, որոնց դեպքում ջրատար հորիզոնի (համալիրի ևն) ստ. ջրերը անմիջական կապ չունեն երկրի մակերևույթի հետ: Այդպիսին են խոշոր արտեզյան ավազանների խոր մասերը, որոնց հետ կապված են հիմնականում նստվածքակուտակման և թաղված ջրերը:

**ВОДООБМЕН ЗАТРУДНЕННЫЙ** — ԴԺՎԱՐ ՋՐԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ջրափոխանակության այնպիսի պայմաններ, երբ ջրատար հորիզոնի (համալիրի ևն) ստ. ջրերը երկրի մակերևույթի հետ կապ ունեն միայն սահմանափակ տարածքներում: Օր., արտեզյան ավազանի ջրատար հորիզոն (համալիր), որն առանձին տեղամասերում մերկացած է կամ ծածկված երիտասարդ ջրաթափանց ապարներով:

**ВОДООБМЕН СВОБОДНЫЙ** — ԱԶԱՏ ՋՐԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ջրափոխանակության այնպիսի պայմաններ, որոնց դեպքում ջրատար հորիզոնի (համալիրի ևն) ստ. ջրերը համատարած կամ մեծ տեղամասերում անմիջական ազատ կապ ունեն երկրի մակերևույթի հետ: Ա. ջ. հիմնականում բնորոշ է գրունտային ջրերին:

**ВОДООТДАЧА** — ՋՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՋՐԱՆՋԱՏՈՒՄ), ջրահագեցած ապարների գրավիտացիոն ջուր տալու ունակություն, որն արտահայտվում է ապարից ազատ անջատվող ջրի ծավալի և ապարի ծավալի %-ային հարաբերությամբ (ջրատրվության գործակից), կամ ապարի  $1$  մ<sup>3</sup> ծավալից անջատվող ջրի քանակով (տեսակարար ջրատվություն):

**ВОДООТДАЧА УДЕЛЬНАЯ** — ՏԵՍԱԿԱՐԱՐ ՋՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ջրահագեցած ապարի  $1$  մ<sup>3</sup> ծավալից ազատ անջատվող ջրի քանակ:

**ВОДОПОГЛОЩЕНИЕ** — ՋՐԱՎԱՆՈՒՄ, ապարի ջուր կլանելու ունակու-

թյուն, երբ ապարը ջրի մեջ է ընկղմվում սովորական պայմաններում (1 մթն. ճնշման և  $+20^{\circ}$  Ց ջերմության դեպքում): Ջ. արտահայտվում է միավորի մասերով կամ բացարձակ չոր ապարի կշռի նկատմամբ կանված ջրի %-ային հարաբերությանը:

ВОДОПОНИЖЕНИЕ — ՋՐԱԻՋԵՑՈՒՄ, ստ. ջրերի ազատ կամ ճնշումնային մակերևույթի իջեցում, որն իրականացվում է արտանդման, ցամաքորդի և այլ միջոցներով:

ВОДОПРОНИЦАЕМОСТЬ — ՋՐԱԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ապարի իր միջով ջուր անցկացնելու ունակություն, որը պայմանավորված է ապարում ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների առկայությամբ, նրանց ձևերով ու չափերով, հաղորդակցվածության աստիճանով են: Ջ. արտահայտվում է ծծանցման գործակցով (տե՛ս Коэффицент фильтрации): Ըստ Ջ. աստիճանի առանձնացվում են ջրաթափանց, կիսաջրաթափանց և ոչ ջրաթափանց (կամ ջրամերժ) ապարներ:

ВОДОПУНКТ — ՋՐԱԿԵՏ, ստ. ջրերի բնական ելք կամ արհեստական երեվակում (աղբյուր, հորատանցք, ջրհոր ևն):

ВОДОРАЗДЕЛ — ՋՐԲԱԺԱՆ, հարևան ջրհավաք ավազանները բաժանող գիծ, որն անցնում է տեղանքի ամենաբարձր նիշերով: Լեռնային երկրներում Ջ. սովորաբար ցայտուն արտահայտվում է ռելիեֆում՝ լանջերի հատման կորագծերի տեսքով, իսկ հարթավայրերում կամ լայն գետահովիտներում այն թույլ է արտահայտված և երբեմն դժվար է նշմարվում: Հաճախ Ջ-ի որոշումը չափազանց դժվար է կարստային շրջաններում՝ ռելիեֆի կարստային ձևերի առատության պատճառով: Տարբերում են՝ գլխավոր Ջ., որն անցնում է հակադիր լանջերի հատման գծով, և կողային Ջ., որը բաժանում է միևնույն լանջով հոսող վտակների ջրհավաք ավազանները: Բացի մակերևութային Ջ-ից առանձնացվում է նաև ստ. ջրերի Ջ. (տե՛ս Водораздел подземных вод): Տեկտ. շարժումների և հետընթաց ողողամաշման (երոզիայի) շնորհիվ Ջ. տեղափոխվում է:

ВОДОРАЗДЕЛ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅՍՍ, ՋՐԵՐԻ ԶՐԲԱԺԱՆ, հարևան ստ. ջրհավաք ավազանները բաժանող գիծ, որը միացնում է ստ. ջրերի առավելագույն նիշերը՝ միմյանց հակադիր 2 ջրհորերի միջև: Հաճախ Ս. ջ. ջ. կարող է չհամընկնել մակերևութային ջրբաժանի հետ:

ВОДОРАЗДЕЛЬНОЕ ПРОСТРАНСТВО — ՋՐԲԱԺԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, 1, Հարթավայրերում Ջ. տ. են վերագրվում միջգետային հարթ տարածությունները, որոնք ակնհայտ հոսք չունեն դեպի որևէ գետային համակարգ, կամ հոսքը իրացվում է գետերի վերին հոռանքի անջան խորության ձորակներով (որոնք տեղանքի ընդհանուր հարթավայրային բնույթը չեն խախտում): 2, Լեռնային մարզերում Ջ. տ. է վերագրվում լեռնաշղթաների գագաթնային մասի նեղ գոտին, որն անմիջապես հարում է ջրբաժանին:

ВОДОРАСТВОРИМЫЕ СОЕДИНЕНИЯ (МИНЕРАЛЫ) — ՋՐՈՒՄ ԼՈՒԾՎՈՂ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՄԻՆԵՐԱԼՆԵՐ), բնական միացություններ (միներալներ), որոնց քիմ. բաղադրատարրերը լուծվում են ջրի մեջ: Այդ միացություններին են

պատկանում առաջին հերթին քլորիդները ( $\text{NaCl}$ ,  $\text{KCl}$ ), ապա սուլֆատները ( $\text{CaSO}_4$ ,  $\text{MgSO}_4$ ), ինչպես նաև կարբոնատները ( $\text{CaCO}_3$ ), որոնք անցումային տեղ են զբաղեցնում լուծելի և դժվար լուծելի միացությունների միջև:

**ВОДОСБОРНАЯ ВОРОНКА** — ՋՐՀԱՎԱՔ ՁԱԳԱՐ, ձագարան կամ կոնանկ իջվածք՝ ժամանակավոր ջրհոսք ունեցող ձորակի վերնամասում: Իջվածքի (ձագարի) լանջերը ակոպված են վերևում ճյուղավոր, ներքևում միացող ողողամաշման ակոսներով, որոնք հոսանքով ներքև միախառնվում են:

**ВОДОСБОРНАЯ ГАЛЕРЕЯ** — ՋՐՀԱՎԱՔ ԳԵՏՆՈՒՎԻ (ՍՐԱՀ), հորիզոնական լեռնային փորվածք, որը տրվում է ստ. ջրերի հոսքը բարենպաստ տեղում բռնելու և ինքնահոսով երկրի մակերևույթ դուրս բերելու նպատակով: Հավաքվող ջրի քանակն ավելացնելու նպատակով երբեմն Ջ. գ. ջրատար հորիզոնի սահմաններում հոսանքին լայնակի ողողությամբ ճյուղավորում են: Ջ. գ. տարբերակներից է քյարիզը (տե՛ս Кяриз):

**ВОДОСБОРНАЯ ПЛОЩАДЬ** — ՋՐՀԱՎԱՔ ՏԱՐԱԾՔ, 1. Տարածք, որի մակերևութային ջրերը հոսում են դեպի գետեր կամ ջրավազաններ: 2. Տարածք, որի ստ. ջրերը հոսում են դեպի հորատանցքեր, ջրհորեր կամ այլ փորվածքներ, որոնցից կատարվում է ջրի արտամղում: Այդ տարածքի մեծությունը որոշվում է ջրի արտամղման ազդեցության շառավղի միջոցով (տե՛ս Радиус влияния скважины, водозабора):

**ВОДОСБОРНЫЕ СООРУЖЕНИЯ** — ՋՐՀԱՎԱՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ինժեներական կառույցներ, որոնց միջոցով վերցվում են մակերևութային և ստ. ջրերի հոսքերը: Ջ. կ-ի տեսակն ու բնույթը (ջրամբարներ, լճակներ, փոքր ջրավազաններ, լեռնային առուներ, դիմհար թմբեր, հորատանցքեր, ցամաքորդներ ևն) կախված են պահանջվող ջրի քանակից, նրա օգտագործման նպատակից, հոսքի ռեժիմից, տեղանքի ռելիեֆային, ջրատեղիք. և այլ առանձնահատկություններից: Տարբերում են վերերկրյա (մակերևութային) և ստ. Ջ. կ.: Վերջինները ներկայացված են առանձին հորերով ու հորատանցքերով կամ նրանց խմբերով, քյարիզներով, գետնուղիներով, կլանիչ հորերով, ցամաքորդներով ևն:

**ВОДОСБОРНЫЙ БАССЕЙН** — ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆ, տարածք, որի մակերևութային ջրերը հոսում են դեպի տվյալ գետը, լիճը կամ ծովը:

**ВОДОСЛИВ** — ՋՐԹԱՓ, ջրաչափական սարք, որի միջոցով ջրհոսքը արգելակվում և բաց է թողնվում կանոնավոր երկրաչափական կտրվածքով, ապա չափելով այդ կտրվածքով անցնող ջրի սյան բարձրությունը, որոշվում է ջրհոսքի մեծությունը: Ջրաչափական աշխատանքների ժամանակ կիրառվում են մետաղյա բարակ պատերով ջրթափեր, որոնք ըստ կտրվածքի ձևի լինում են ուղղանկյուն, եռանկյուն, սեղանանման, պարաբոլանման ևն: Ջրատեղիք. հանույթային աշխատանքների ժամանակ օգտագործվում են շարժական թերև Ջ-եր:

**ВОДОСТОЙКОСТЬ** — ՋՐԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ապարի մեխ. հատկություններ, որոնք կախված չեն նրա խոնավության աստիճանից:

**ВОДОТОК** — ՋՐՀՈՍՔ, ջրային զանգվածի շարժումը թերթիջան ուղղությամբ (գետ, գետակ): Ջ. կարող է լինել կալուն կամ մշտական (գործում է կլոր տարին)

և ժամանակավոր կամ պարբերաբար գործող (չորացող, սառչող): Հիմնական գետը, որն իր մեջ է ընդունում տվյալ ջրհավաք ավազանի վտակների համակարգը, հաճախ կոչվում է գլխավոր Ջ.:

ВОДОУПОРНАЯ КРОВЛЯ — ՋՐԱՄԵՐԺ (ԱՆՋՐԱՆՑԻԿ) ԱՌԱՍԱՏՎ, ջրամերժ (անջրանցիկ) ապարների շերտ կամ հոժ գանգված, որը ծածկում է ներքևի ջրատար ապարների շերտը:

ВОДОУПОРНОЕ ЛОЖЕ (ОСНОВАНИЕ) — ՋՐԱՄԵՐԺ (ԱՆՋՐԱՆՑԻԿ) ՀԱՍՏՎ (ՀԻՄՔ), ջրամերժ ապարների շերտ կամ հոժ գանգված, որը տեղադրված է ջրատար ապարների շերտի տակ:

ВОДОУПОРНЫЙ ПЛАСТ — ՋՐԱՄԵՐԺ (ԱՆՋՐԱՆՑԻԿ) ՇԵՐՏ, ապարների շերտ, որն իր միջով գործնականում ջուր բաց չի թողնում կամ բաց է թողնում այնպիսի չնչին քանակությամբ, որ գործնականում կարելի է անտեսել:

ВОДОХОЗЯЙСТВЕННЫЙ КАДАСТР СССР — ՍՄՀՄ ՋՐԱՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ, նախկին ԽՍՀՄ ջրային ռեսուրսների որակական ու քանակական բնութագրերի և ժողովնետության մեջ նրանց օգտագործման վերաբերյալ տվյալների ամփոփագիր:

ВОДОХОЗЯЙСТВЕННЫЕ РАСЧЕТЫ — ՋՐԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԾՎԱՐԿՆԵՐ, հաշվարկներ, որոնք կատարվում են ջրատնտ. միջոցառումների և օբյեկտների (ջրամատակարարում, ոռոգման ու չորացման համակարգեր, հիդրոէլեկտրակայաններ, հիդրոտեխ. կառույցներ ևն) ընտրության, տեխնիկատնտ. ցուցանիշները հիմնավորելու և նրանց աշխատանքի ռեժիմը որոշելու համար:

ВОДОХРАНИЛИЩЕ — ՋՐԱՄԲԱՐ, արհեստական ջրավազան, որն ստեղծվում է գետահունը կամ հովիտը պատվարով արգելափակելու միջոցով: Ջ. կառուցվում է մակերևութային հոսքը կարգավորելու և այն ուսցիռնալ օգտագործելու նպատակով:

ВОДЫ ВЫЩЕЛАЧИВАНИЯ — ՏԱՐՐԱՎՈՒԾՄԱՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնց քիմ. բաղադրությունը ձևավորվում է մթնոլորտային տեղումների ներծծման, ապարների հողմահարման և տարրալուծման գործընթացների համատեղ ներգործության շնորհիվ: Տ. ջ. բնորոշվում են ջրակարբոնատ-սիլիկատոլային, ջրակարբոնատ-կալցիումային, երբեմն սուլֆատային, ավելի հազվադեպ քլորիդային բաղադրությամբ:

ВОДЫ ГРЯЗЕВЫХ СОПОК — ՑԵՆԱՑԻՆ ԲՈՒՐՆԵՐԻ ԺՐԵՐ, ցեխային բլուրների փողից (երախից) դուրս եկող նավթային տիպի հանքային ջրեր, որոնք պարունակում են յոդի, բրոմի, բորի և այլ տարրերի միացություններ, ինչպես նաև մեթան գազ: Հաճախ Ց. բ. ջ-ի նես դուրս է գալիս չնչին քանակությամբ նավթ:

ВОДЫ ЗОНЫ КАПИЛЛЯРНОГО ПОДНЯТИЯ — ՄԱԶԱՆՈՓԱՑԻՆ ԲԱՐՋՐԱՑՄԱՆ ՋՐԱՑԻ ԺՐԵՐ, տե՛ս Капиллярно-подвешенная вода:

ВОДЫ НЕФТЯНЫЕ — ՆԱՎԹԱՑԻՆ ԺՐԵՐ, տե՛ս Нефтяные воды (воды нефтяных месторождений):

**ВОДЫ ПЛАСТОВЫЕ** — ՇԵՐՏԱՅԻՆ ՋՐԵՐ, նավթային ջրակերպաբանությունում՝ նավթաբեր շերտում տեղադրված ջրեր, ի հակադրություն այն ջրերի, որոնք ներփակված են կտրվածքի այլ հորիզոններում:

**ВОДЫ ПЕРЕХОДНОГО (ПРОМЕЖУТОЧНОГО) ПОЯСА** — ԱՆՑՈՒՄԱՅԻՆ (ՄԻՋԱՆԿՅԱԼ) ԳՈՏՈՒ ՋՐԵՐ, օդահագեցման զոնայի միջանկյալ գոտու ջրեր: Հոմանիշ՝ կախված ջրեր:

**ВОДЫ РАЗЛИЧНЫЕ ПО ТЕМПЕРАТУРЕ** — ՏԱՐԲԵՐ ՋԵՐՄԱՍԻՇՄԱՆԻ ՋՐԵՐ, ըստ ջերմաստիճանի ջրերը ստորաբաժանվում են. 1) գերսառը՝  $< 0^{\circ}\text{C}$ , 2) շատ սառը՝  $0-4^{\circ}$ , 3) սառը՝  $4-20^{\circ}$ , 4) գոլ՝  $20-37^{\circ}$ , 5) տաք՝  $37-42^{\circ}$ , 6) շատ տաք՝  $42-100^{\circ}$  և, 7) գերտաք կամ եռացող՝  $\geq 100^{\circ}\text{C}$ :

**ВОДЫ СЕДИМЕНТАЦИИ** — ՆՍՏՎԱՆԻՔԱԿՈՒՍԱԿՄԱՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода седиментационная:

**ВОДЫ УГЛОВ ПОР** — ԾԱԿՈՏԻՆԵՐԻ ԱՆԿՑՈՒՆԵՐԻ ՋՐԵՐ, ապարի մասնիկների շիման կետերի շուրջ (մազական ծակոտիկների անկյուններում) գոյացող օղակաձև մազական-կցվածքային ջուր: Ծ. ա. ջ. ամուր պահվում են մազանոթային ուժերով, ջրաստատիկ ճնշում չեն հաղորդում, չեն տեղաշարժվում, լուծելու ունակություն չունեն: Հոմանիշ՝ պեդոլլար ջուր (հնացած տերմին):

**ВОДЯНАЯ ПОДУШКА** — ՋՐԱՅԻՆ ԲԱՐՁԻԿ, որոշակի խորության վրա մեծ ճնշման տակ գտնվող մեկուսացած ջրակուտակ (ջրատատ ոսպնյակ), որն ունի մալրական (սելիմենտացիոն) ծագում: Հորատանցքով Ջ. բ-ից ջուր արտամղելիս նրա վերևում, երկրի մակերևույթին կարող է ձագարաձև իջվածք ստաչանալ:

**ВОДЯНЫЕ ЖИЛЫ** — ՋՐԱՅԻՆ ԵՐԱԿՆԵՐ, ստ. ջրեր, որոնք կապված են մեկուսացած խոշոր բաց ճեղքերի կամ ուժեղ ճեղքավորված զոնաների հետ: Երբեմն Ջ. ե-ին են դասում բազմամյա սառցույթի զոնաների ջրատար հալույթները և ջրասառցադաշտային նստվածքներում պարփակված ուժեղ ջրատար ապարների խողովակաձև ենթաշերտերը:

**ВОДЯНЫЕ РАСТЕНИЯ** — ՋՐԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ, տե՛ս Водная растительность:

**ВОЗГОНЫ ВУЛКАНИЧЕСКИЕ (ФУМАРОЛЬНЫЕ)** — ՀՐԱԲՈՒՍԱՅԻՆ (ՖՈՒՄԱՐՈՒՍԱՅԻՆ) ՑՆԴԱՆՑՈՒԹՅՆ, հրաբխային ցեղանկյութից (գազերից գոլորշիներից) հանքային նստվածքների առաջացում (սուրբխում)՝ խառնարաններում, հրաբուխների լանջերին, լավային հոսքերում, ֆունարոլներում և այլուր: Առաջանում են գազերից, ինչպես նաև գազերի ու լավայի ռեակցիայից: Հ. ց-ից հալոտի են սվելի բան 100 միներալներ-ծծումբ, բորաթթու, մետաղների հալոիդային միացություններ, երկաթի ու սիլիցիումի օքսիդներ ևն:

**ВОЗДУХ ЗАЩЕМЛЕННЫЙ** — ԾՋՄՎԱՆ ԹԳ, ապարի ծակոտիկներում ջրով պարփակված և սեղմված օդ՝ մեկուսացած բշտիկների ձևով:

**ВОЗДУШНОСУХОЙ ГРУНТ** — ԹԳԱՉՈՐԱՑԱՆ ԳՐՈՒՆՏ, սովորական պայմաններում օդով չորացված գրունտ, որը գուրկ է գրավիտացիոն (ազատ) ջրից,

անկայն պարունակում է ֆիզիկապես կապված (խոնավածուծ և թաղանթային) ջուր:

ВОЗОБНОВЛЕННЫЕ ВОДЫ — վերսկսված (վերստեղծված) ՋՐԵՐ, ըստ Ռ. Ա. Դելիի, կրկնակի մազմածին ջրեր, այսինքն ջրեր, որոնք ինչ-որ ժամանակ, որպես առաջնածին (կուտական) ջրեր դուրս են եկել երկրի մակերևույթ, մասնակցել ջրի ընդհանուր շրջանառությանը, ներծծվել երկրակեղևի խորը հորիզոնները, ապա մազմատիկ գործընթացների (ինտրոպիաների ներդրում, ժայթքում են) շնորհիվ նորից դուրս են եկել մակերևույթ: Օ. Ե. Մելնգերը Վ. ջ-ի առաջնածին ջրերը համարում է ինտերիալ (խորքային, ներքին): Անորոշ, հնացած տերմին:

ВОЗОБНОВЛЯЕМЫЕ ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՈՌԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՎԵՐՍԿՎԱՆԳՆՎՈՂ ՊԱՇՏՈՐՆԵՐ, տե՛ս Запасы подземных вод динамические:

ВОЗРАСТ ПОДЗЕМНЫХ ВОД И ГАЗОВ — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԵՎ ԳԱՋԵՐԻ ՀԱՍՍԿ, ստ. ջրերի և նրանց մեջ լուծված գազերի հասակը խիստ պայմանական և հարաբերական հասկացողություն է, քանի որ չափազանց բարդ են ստ. ջրերի առաջացման (ծագման), ձևավորման, շարժման, միախառնման (վերափոխման) և տեղադրման պայմանները. այս ստույգ ջրի և նրա գազային բաղադրիչի հասակը կարող է համապատասխանել ջրատար ապարի հասակին, լինել ավելի մեծ կամ չիոր: Միայն տևական երկրք. ժամանակահատվածի ընթացքում կարող է կալունանալ ջուր-լուծված գազ-ապար համակարգը. այս իմաստով թերևս շատ ավելի դժվար է նշած համակարգում ջրի և գազի հասակի որոշումը, որովհետև նրանք շարժուն են, փոփոխվող, նորոգվող:

Գոյություն ունեն ջրի և գազի հասակի որոշման մի շարք ռադիոլոգիական մեթոդներ, որոնք գտնվում են մշակման ստադիայում և կատարյալ չեն: Դրանցից ռադիոածխածնային, տրիտիումային, բերիլիումային և ռադիում-ռադոնային մեթոդները կիրառելի են միայն երիտասարդ ջրերի (գրունտային, որոշ դեպքերում նաև արտեզյան) հասակի որոշման համար: Առաջին երկու մեթոդները հիմնված են ջրի մեջ  $C^{14}$  իզոտոպի և տրիտիումի, իսկ բերիլիումայինը՝  $B^{10}$  իզոտոպի որոշման վրա: Ռադիում-ռադոնային մեթոդը (Չերդինգ, 1956) հիմնված է ջրում նրանց քանակական հարաբերակցության որոշման վրա, բայց ռադիոտարրերի կորուստի և ապարներից անջատման պայմանների բազմազանության պատճառով մեթոդը համարվում է մոտավոր: Այժմ լայն կիրառում ունեն ջրում լուծված հելիումի և արգոնի ռադիոածին իզոտոպների որոշման մեթոդները: Հելիում-արգոնային մեթոդը հիմնված է ուրանի և թորիումի ռադիոակտիվ իզոտոպների տրոհման հետևանքով ապարներից անջատվող հելիումի՝ ստ. ջրերի մեջ կուտակման երևույթի վրա: Ընդունում են, որ ջրում եղած հելիումի քանակը (կոնցենտրացիան) ողիղ համեմատական է ջրի՝ ապարի մեջ գտնվելու ժամանակամիջոցին, իսկ նրա մեջ եղած արգոնն ունի մթնոլորտային ծագում: Հաշվելով տարվա ընթացքում ապարից ջրի մեջ անցնող հելիումի քանակը, Վ. Գ. Սավչենկոն (1935) արտածել է ջրի և գազի հարաբերական հասակի որոշման հետևյալ քանաձևը՝

—  $\frac{He}{Ar} = 7,71 \cdot 10^5$  տարի, որը

հետագայում ճշտվել է Ա. Լ. Կոզլովի կողմից (1950)՝  $\frac{He}{Ar} = 115 \cdot 10^6$  և վերափոխված

է ազատ չոր գազի հասակի որոշման համար՝  $\frac{He}{Ar} = 25 \cdot 10^6$ : Բանաձևներից

հետևում է, որի ջրի հասակը չի կարող մեծ լինել ջրատար ապարների բացարձակ 56

հասակից, բայց շատ հետազոտողներ այս բանաձևերն օգտագործելիս ստացել են հակառակ արդյունքներ: Մեթոդի ոչ բավարար հուսալիությունը պայմանավորված է. 1) հաշվարկային բանաձևերի հիմքում դրվող ելակետային տվյալների միջինացվածությանը և մասամբ ենթադրական լինելով, 2) ստ. ջրում լուծված արգոնի մի մասի ռադիոգեն ծագման անտեսումով: Ն. Ի. Տոլստիխինի (1966) կողմից առաջարկված ջրի հասակի որոշման արգոնային մեթոդը հիմնված է ռադիոծին և օդային արգոնի բանակալական հարաբերակցության որոշման վրա: Նրա կողմից ստացված տվյալներից երևում է, որ ջրի հաշվարկած տարիքը շուրջ 10 անգամ գերազանցում է ջրատար ապարների տարիքին: Որքանով է այս երևույթը պայմանավորված բյուրեղային հիմքի ապարներից գազի տեղափոխմամբ՝ հայտնի չի: Հասակի որոշման հեղիում-արգոն-քսենոնային մեթոդը (Միտին, 1956) բավարար չափով փորձարկված չի և պահանջում է ջրի ու ապարների մեջ այլ հազվագյուտ տարրերի որոշում: Մշակվում և փորձարկվում են դեյտերիումի՝ որպես ջրի հասակի որոշման ցուցանիշի, օգտագործման մեթոդները: Զրի հասակի (ապարի մեջ գտնվելու ժամանակամիջոցի) մասին անուղղակի դատողություններ կարելի է անել ջրատարների մեթոդներով՝ սնման մարզից մինչև բեռնաթափման մարզը ջրի շարժման արագությամբ:

**ВОКЛЮЗЫ** — ՎՈՎԼՅՈՒՋՆԵՐ, կարստային ջրերից սնվող աղբյուրներ, որոնք ունեն մեծ ծախս և խիստ փոփոխական ռեժիմ: Անվանումն ստացել են Հարավային Ֆրանսիայի Վոկլյուզ նահանգից, որտեղ կարստային ջրերն ունեն մեծ տարածում: Հոմանիշ՝ կարստային աղբյուրներ:

**ВОЛНОЛОМ** — ԱԼԵՀԱՏ (ԱԼԵՆԵՐՁ), ափսպաշտպան կառույց, որն իրենից ներկայացնում է ափից որոշակի հեռավորության վրա ջրում քարային լիցքով կամ զանգվածային բետոնով կառուցված պատնեշ և նպատակ է հետապնդում մարելու ալիքի հարվածային էներգիան, ինչպես նաև ափամերձ հատվածում կուտակելու ծովային բերվածքները: Առաջին խնդրի լուծման համար կառուցվող Ա-ները ծովի մակարդակից 0,5—1,0 մ բարձր են կառուցվում, իսկ եթե կառույցի հիմնական նպատակը բերվածքների կուտակումն է, ապա այն ընկղմվում է ջրի տակ: Հատակագծում Ա-ները տեղադրվում են պաշտպանվող ափին զուգահեռ՝ 2—4 մ ջրային խորություններում: Երբեմն Ա. ափի հետ միացվում է լայնակի պատնեշներով (տրավերսներով), որոնք Ա-ի հետևում վերացնում են երկայնակի հոսանքները: Ժողովուրդն սե՛ս կարևորություն ունեցող ծովափերում հաճախ կառուցվում են Ա-ների 2—3 զուգահեռ շարքեր:

**ВОЛНОТБОЙНЫЕ СТЕНКИ** — ԱԼԵԱԽՍՍԱՆ ՊԱՏԵՐ, ափսպաշտպան կառույցներ, որոնք իրենցից ներկայացնում են ափագծի երկարությամբ կամ նրանից մի փոքր հեռու ցամաքում քարային լիցքով, քարե շարվածքով կամ զանգվածային բետոնով կառուցված պատնեշներ և կոշված են իրենց վրա կրելու ալիքի հարվածային ուժը: Ա. պ-ի արտաքին կողը կարող է լինել ուղղահայաց, թեք (ալիքի նկատմամբ բոթո անկյան տակ), աստիճանավոր կամ աղեղնաձև (ներճկված): Ա. պ. կառուցվում են բնական հիմքերի կամ ցեղերի վրա, երկու դեպքում էլ լրացուցիչ ագույցներով ամրակապվելով: Հաճախ Ա. պ. միաժամանակ հանդիսանում են հեճապատեր՝ ափի կողմից կրելով ապարների ճնշումը: Սովորաբար Ա. պ. կառուցվում են ափսպաշտպան այլ կառույցների (ալեհատների, ալեհերձների ևն) զուգորդմամբ, ինչպես նաև հարմարեցվում են ալիքի հարվածային ուժը մարող զա-

քիմիկների, ոչածերի, բետոնն սալերի ու տետրապոդների («քառոտանի հրեշներ») հետ:

**ВОЛОСНОСТЬ** — ՄՍԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄՍԶԱԿԱՆ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ), ապարներում մանր մազական ծակոտիներ ու ճեղքեր, որոնցով հեղուկները (ջուրը, մալթը) տեղաշարժվում են մազական ուծերի շնորհիվ: Մազական ծակոտիների չափերը պայմանականորեն ընդունվում է 0,0002—1,0 մմ, իսկ ճեղքերինը՝ 0,0001—0,25 մմ:

**ВОЛОСНЫЕ ВОДЫ** — ՄՍԶԱԿԱՆ ՋՐԵՐ, տե՛ս Капиллярные воды:

**ВОРОНКА ВОДОСБОРНАЯ** — ՋՐՀԱՎԱՔ ՋԱԳԱՐ, լեռնային գետակի վերին հոսանքում տարածված կրկեսամասն ջրհավաք փոսորակ, որի լանջերը կտրտված են հատակից մոտազայթածն տարածվող ակունքերով: Վերջիններով, բացի անձրևաջրերից, երբեմն հոսում են նաև ցամաքուրդի ենթարկվող գրունտային ջրերը:

**ВОРОНКА ДЕПРЕССИИ** — ԻՉՈՒՅԹԻ (ՂԵՊՐԵՍԻԱՅԻ) ՋԱԳԱՐ, առ. ջրերի ճնշումնային կամ ազատ մակերևույթի ձագարածն իջվածք, որը պայմանավորված է հորատանցքերի, ջրհորերի, ցամաքուրդային կառույցների միջոցով կատարվող ջրի արտանդումներով կամ բնական վերընթաց էլքերով: Ի. ձ-ի սահմաններում ջրի մակարդակի ամենամեծ իջեցումը ստեղծվում է ջրհան փորվածքի մոտ. նրանից հեռանալիս մակարդակը աստիճանաբար բարձրանում և ի վերջո հավասարվում է բնականին:

**ВОРОНКА КАРСТОВАЯ** — ԿԱՐՍՏԱՅԻՆ ՋԱԳԱՐ, տարբեր ձևի ու չափերի դեպի ներքև փոքրացող (ձագարածն) իջվածք, որը բնորոշ է կարստային լանդշաֆտին: Կ. ձ. առաջանում է աղերի, գիպսի, դոլոմիտի ու կրաքարերի լուծման և տարրալուծման հետևանքով: Տարբերում են. մակերևութային տարրալուծման, խորքային կարստային դատարկությունների փլուզման և ներծծման (կարստատեֆոզիոն) ձագարներ:

**ВОРОНКА ОСУШЕНИЯ** — ՉՈՐԱՑՄԱՆ ՋԱԳԱՐ, ջրատար ապարների (հորիզոնի) ջրազրկված մաս, որն ունի ձագարի ձև: Չ. ձ. առաջանում է հորատանցքերի, ջրհորերի և այլ ջրհան ու ցամաքուրդային կառույցների շուրջ, որոնցից կատարվում է ջրի արտանդում կամ ներհոսք դեպի ստորադաս ջրատար ապարները:

**ВОРОНКА ПОГЛОЩЕНИЯ** — ԿՎԱՆՄԱՆ ՋԱԳԱՐ, գրունտային կամ ճնշումնային ջրերի մակերևույթի բարձրացում՝ շրջված ձագարի ձևով (իջույթի ձագարի հակապատկերը), որն առաջանում է հորատանցքերի, ջրհորերի և այլ փորվածքների շուրջ, երբ նրանց միջոցով տեղի է ունենում զգալի քանակի ջրի կլանում:

**ВОРОНКА СУФФОЗИОННАЯ** — ՍՈՒՖՈԶԻՈՆ ՋԱԳԱՐ, երկրի մակերևույթի

վրա ձագարածն իջվածք, որն ընդերքում կատարվող սուֆոզիոն գործընթացների արդյունք է:

**ВОСХОДЯЩИЕ ВОДЫ** — ՎԵՐԸՆԹԱՑ ԶՐԵՐ, ըստ Օ. Կ. Լանգեի, ճնշումնալին կամ արտեզյան ջրեր: Ըստ Ա. Վ. Սկուպինի, մագնոթային բարձրացման ջրեր: Ըստ Վ. Ի. Վերնադսկու. 1) քաղցրահամ տաք աղբյուրներ, 2) հրաբխային գեյզերների ջրեր, 3) ցեխային բլուրների ջրեր: Տեքսիներ առավել գործածական է ճնշումնային ջրերի համար, որոնք բնութագրվում են վերընթաց շարժումով:

**ВОСХОДЯЩИЙ ИСТОЧНИК** — ՎԵՐԸՆԹԱՑ ԱՂԲՅՈՒՐ, աղբյուր, որի ջրերն ունեն վերընթաց շարժում. ապարների ճեղքածակոտիներից և այլ դատարկություններից նրանք բխում են ջրաստատիկ ճնշման շնորհիվ:

**ВПАДИНА БЕССТОЧНАЯ (ЗАМКНУТАЯ)** — ՀՈՒՔԱԶՈՒՐԿ (ՊԱՐՓԱԿ) ԳՈՒԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ռելիեֆի պարփակ իջվածք (գոգավորություն), որը համաշխարհային օվկիանոսի հետ հուքային կապ չունի: Սովորաբար Հ. գ-ում մակերևվոթային ջրերի մշտական կամ ժամանակավոր ներհոսք կատարվում է, իսկ արտահոսք՝ ոչ, որի հետևանքով նրա ցածրադիր մասերում գոյանում են մշտական կամ ժամանակավոր ջրակուտակներ (լճեր, թակիրներ, աղուտներ): Հ. գ-ները հիմնականում հանդիսանում են տեկտ. գործընթացների արդյունք և բնորոշ են արդդ կլիմայական գոտիներին:

**ВПАДИНА КАРСТОВАЯ** — ԿԱՐՍՏԱՅԻՆ ԳՈՒԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, կրաքարային մարզերում տարածված ռելիեֆի բացասական (գոգավոր) ձև, որն առաջանում է կարստային գործընթացների հետևանքով:

**ВПАДИНА ТЕРМОКАРСТОВАЯ** — ԶԵՐՄԱԿԱՐՍՏԱՅԻՆ ԻԶՎԱԾՔ, փակ գոգավորություն, որն առաջանում է սառցադաշտային նստվածքների (սառցաբերուկների) մեջ թաղված սառցաուսպնյակների, ինչպես նաև սառած գրունտի հալման և նստեցման հետևանքով: Յակուտիայում Զ. ի-ներից նմվանում են ալսաներ, որոնք պլանում ունենում են մինչև մի քանի կմ<sup>2</sup> մակերես:

**ВПИТЫВАНИЕ ВОДЫ** — ԶՐԻ ՆԵՐԾՕՈՒՄ, հողի մեջ ջրի ներծծման սկզբնական փուլ, երբ հողը դեռևս ջրով հագեցած չի:

**ВРЕМЕННАЯ (УСТРАНИМАЯ) ЖЕСТКОСТЬ** — ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ (ՎԵՐԱՑՎՈՂ) ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Жесткость воды:

**ВРЕМЕННОЕ СОПРОТИВЛЕНИЕ ГОРНОЙ ПОРОДЫ НА СЖАТИЕ** — ԱՊԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՂՄՍԱՆԸ, սահմանային բեռնըվածք (արտահայտված կգ/սմ<sup>2</sup>-ով), որի տակ ապարի նմուշը քայքայվում է: Ա. ժ. դ. ս. կախված է ապարի միներալային կազմից, կառուցվածքից ու ծակոտկենությունից, ցեմենտի բնույթից և հողմահարման աստիճանից: Սեղմանը ցուցաբերվող ժամանակավոր դիմադրության մեծության որոշման համար ապարից պատրաստվում է կանոնավոր գլան կամ խորանարդ, որը սեղմվում է ճնշումաչափով կահավորված հատուկ մամլիչների օգնությամբ: Որոշ ապարների սեղմմանը ցուցաբերվող ժամանակավոր դիմադրության ցուցանիշները բերված են աղյուսակում:

Ապարի անվանումը	Սեղմման ժամանակավոր դիմադրություն կգ/սմ <sup>2</sup>		
	նվազագույն	ստավելագույն	միջին
Գրանիտներ	2401	1232	1581
Գնեյսներ	2760	480	1200
Բազալտներ և դիաբազեր	4570	920	2600
Տրախիտներ	2600	560	1700
Բյուրեղային կրաքար	1161	793	949
Կրաքար (մյաշկովյան)	250	200	234
Խեցիավոր կրաքար (խեցաքար)	20	4	—

Ա. ժ. դ. ս. ըստ էության բնութագրում է ապարի ամրությունը սեղմմանը: Հոմանիշ՝ ապարի սեղմման ամրության սահման:

**ВРЕМЕННО-ИЗБИТОЧНО-УВЛАЖНЕННЫЕ ЗЕМЛИ** — ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԳԵՐԽՈՒՆԱՎ ՀՈՂԵՐ, գյուղատնտ. հողատարածքներ, որոնք տեղումներով ստատ տարիներին կամ եղանակներին (գարուն, աշուն, անձրևաչատ ամառ) ժամանակավորապես գերխոնավանում են, որի պատճառով տեղի է ունենում բերքի լրիվ կամ մասնակի կորուստ:

**ВРЕМЕННЫЕ (СЕЗОННЫЕ) ИСТОЧНИКИ** — ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ (ՍԵՁՈՒՆԱՅԻՆ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնք գործում են տարվա որոշ եղանակներին, ձնհալքից, երկարատև ու հորդատատ անձրևներից հետո:

**ВСАСЫВАНИЕ** — ՆԵՐԾՄՈՒՄ (ՆԵՐՔԱԾՈՒՄ), ապարի ճեղքածակոտիների կողմից ջրի կլանում (սպունգի նման ներծծում):

**ВСПУЧИВАНИЕ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ՈՒՌՉՈՒՄ, տե՛ս Набухание:

**ВТОРИЧНЫЕ МИНЕРАЛЫ** — ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ (ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, միներալային նորագոյացումներ, որոնք առաջանում են ապարներում առաջնային միներալների տեղակալման հետևանքով կամ ապարների ճեղքերում ու ծակոտիներում նստում են անմիջապես լուծույթներից: Ամենաչափ տարածված Ե. մ-ից են մոնոմորֆիլոնիտը, կաոլինիտը, կալցիտը, ցելոլիտը ևն:

**ВТОРИЧНЫЕ ПУСТОТЫ** — ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ապարներում ծակոտիներ, ճեղքեր ու դատարկություններ, որոնք տարբեր պատճառներով առաջանում են ապարների կազմավորումից (ձևավորումից) հետո: Ե. դ-ին են պատկանում. 1) տարավիացման, տարրալուծման և մեխ. տեղատարման դատարկությունները, որոնք առաջացել են ստ. ջրերի քայքայիչ գործունեության հետևանքով, 2) կծկման ճեղքերը՝ ապարի ջրազրկման հետևանքով, 3) ճեղքածակոտիները՝ ապար կազմող միներալների վերաբյուրեղացման հետևանքով, 4) տեկտ. ճեղքերը, 5) հողմահարման ճեղքերը ևն:

**ВТОРИЧНЫЕ ФУМАРОЛЫ** — ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՖՈՒՄԱՐՈՒՆԵՐ, տե՛ս Фумаролы:

ВУЛКАНИЧЕСКИЕ ВОДЫ — ՀՐԱԲԽԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода вулкани-  
ческая:

ВУЛКАНИЧЕСКИЕ ГАЗЫ — ՀՐԱԲԽԱՅԻՆ ԳԱԶԵՐ, հրաբուխներից դուրս  
ելող (արտանետվող) գազեր: Տարբերում են ժայթքման (էրուպտիվ) գազեր, որոնք  
մեծ քանակությամբ և մեծ ճնշման տակ հրաբխի խառնարանից արտանետվում են  
ժայթքման ժամանակ, և ֆումարոլային գազեր, որոնք շիթերի ու քուլաների ձևով  
արտածվում են խառնարանի տարբեր տեղամասերից կամ լավային հոսքերի մա-  
կերևույթից՝ հրաբխի հանգիստ գործունեության ընթացքում:

ВУЛКАНИЧЕСКИЕ ПАРЫ — ՀՐԱԲԽԱՅԻՆ ԳՈՂՈՐԾԻՆԵՐ, հրաբուխների  
հետ տարածվող ջրային գոլորշիներ, որոնց ջերմությունը հասնում է 600—700° Ց:  
Որոշ հրաբուխների գոլորշիներ սառչելիս առաջացնում են թթու լուծույթներ, որոնք  
անմիջապես վերածվում են աղերի: Երբեմն Հ. գ-ին են դասում նաև հեյզերների  
ջրային գոլորշիները, սակայն դրանք սովորաբար հրաբխի հետ անմիջական կապ  
չունեն:

ВЫВАЛЫ — ԹԱՓՎԱԾՔՆԵՐ, հատուկենտ քարաքելոքների թափվածքներ,  
որոնք գրավիտացիոն ուժերի շնորհիվ սովվել-ընկել են զառիթափ և ուղղաբերձ  
բնական լանջերի, արհեստական թեքությունների, ստ. փորվածքների պատերի  
ապատառային ու կիսաապատառային զանգվածներից:

ВЫВЕТРИВАНИЕ — ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, միներալների և ապարների քայքայ-  
ման ու քեկորատման գործընթաց, որը տեղի է ունենում ֆիզ., քիմ. և օրգ. գործոն-  
ների համակցությամբ: Առավել կարևոր գործոններից են. ջերմային տատանումները,  
ապարների ճեղքերում ու ծակոտիներում պարունակվող ջրի ստեղծումն ու հալչու-  
մը, ջրի, թթվածնի ու ածխաթթվի ներգործությունը, աղերի գոլորշիացումն ու նստե-  
ցումը, բուսական ու կենդանական օրգանիզմների գործունեությունը (գետնուղի-  
ների փորումը, արմատների խորացումը, միկրոօրգանիզմների քայքայումը) ևն:

ВЫПАРИВАНИЕ — ԾՈԳԵԱՂԱՆՋԱՏՈՒՄ (ԳՈՂՈՐԾԻԱՑՄԱՄԲ ԱՂԱՆՍՏԵ-  
ՑՈՒՄ), բնական կամ արհեստական լուծույթների գոլորշիացման գործընթաց, որի  
արդյունքում ստացվում են տարբեր աղեր (անհիդրիդ, միրաբիլիտ, կերակրի աղ,  
սիլվիհիտ ևն): Բնական գոլորշիացման հետևանքով առաջացած ապարները կոչվում  
են էվապորիտներ (ֆրանս.՝ évaporer — գոլորշիանալ):

ВЫПАХИВАНИЕ ЛЕДНИКОВОЕ (ЭКЗАРАЦИЯ) — ՍԱՌՑԱՂԱՇՏԱՅԻՆ  
ՀԵՐՎՈՒՄ (ԼԵՐՎԱՑՈՒՄ, ԷԿՋԱՐԱՑԻԱ), սառցադաշտերի հատակը կազմող ապար-  
ների քայքայում, որը կատարվում է հալոցքային ջրերի հոսքի և սառցածածկի  
աահքի հետևանքով: Այդ գործընթացները հանգեցնում են ապարների հերկմանն ու  
լերկացմանը և քեկորատված ապարների տեղափոխմանը դեպի սառցադաշտի  
ստորին եզրամասերը: Լեռնային մարզերում այդ գործընթացների հետևանքով սառ-  
ջանում են տրոգներ (տաշտակաձև հովիտներ), իսկ հարթավայրերում՝ գառան ճա-  
կատներ, գանգրաքեր (ակոսավոր) ժայռեր, կնճիռներ ու խազվածքներ: Հաճախ  
ապարների հերկմանը զուգընթաց տեղի է ունենում նաև նրանց հարթեցում (հըղ-  
կում ու կոկում):

ВЫПИРАНИЕ — ԱՐՏԱՍԵՆՂՄՈՒՄ, ապարների սեղմված զանգվածի տեղա-

կան ճկուննային ընդարձակում, որը հանգեցնում է ալիքաձև թմբերի, գմբեթների և այլ ձևախախտումների առաջացմանը:

**ВЫПОТЫ** — ՔՐՏՆՈՒՅԹՆԵՐ, երկրի մակերևույթին կամ ստ. փորվածքների ստատերին խտացման ճանապարհով առաջացած ջրային կաթիլներ:

**ВЫПУЧИВАНИЕ** — ՈՒՌՉՈՒՄ, ապարների մակերևույթի տեղական բարձրացում, որը տեղի է ունենում ջերմային ու խոնավացման ընդարձակման կամ լեռնային ճնշման ազդեցությամբ:

**ВЫСОТА ДАВЛЕНИЯ** — ԾՆՇՄԱՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, ջրի սյան բարձրությունը հորատանցքում, ջրհորում կամ այլ փորվածքում՝ հաշված նրանց հատակից (խորշից): Ջրի սյան բարձրությունը համեմատության պայմանական հարթության նկատմամբ (սովորաբար ընդունվում է ծովի մակարդակը) բնութագրում է ստ. ջրի ընդհանուր ճնշման մակարդակը: Հոմանիշ՝ պիեզոմետրիկ բարձրություն:

**ВЫСОТА КАПИЛЛЯРНОГО ПОДНЯТИЯ** — ՄԱԶԱՆՈՒԹԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ, այն մակարդակը, մինչ որը ջուրը բարձրանում է ապարի մազական անցքերով: Մ. ք. մ. հաշվվում է ջրատար հորիզոնի մակերևույթից: Այն հակադարձ համեմատական է մազական անցքերի տրամաչափին, կախված է նաև ջրի ջերմաստիճանից, լուծված աղերի քանակից և տեսակից:

**ВЫСОТА НАПОРНАЯ** — ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, ջրի սյան բարձրությունը հորատանցքում, ջրհորում կամ այլ փորվածքում՝ հաշված ջրատար շերտի և ջրամերձ ծածկի կոնտակտից: Հոմանիշ՝ վերատաստողային ճնշում:

**ВЫСОТА ПЬЕЗОМЕТРИЧЕСКАЯ** — ՊԻԵՉՈՄԵՏՐԻԿ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, տե՛ս *Высота давления*:

**ВЫХОД ГАЗА** — ԳԱԶԻ ԵԼՔ, բնական գազի անջատում՝ անմիջապես գետնից (գազի չոր ելք) կամ ջրից (պղպջակների ձևով): Ցեխային հրաբուխներում գազն անջատվում է բլրային ցեխի (բրեկչիայի) կամ ջրի հետ միասին:

**ВЫЦВЕТЫ СОЛЕЙ** — ԱՂԱՅԻՆ ՓԱՌ, ալիտակալուն աղային փառ, որով ծածկվում են չորացող աղային լճերի հատակն ու ափերը, ինչպես նաև չորային կլիմայական պայմաններում գտնվող այնպիսի տեղամասեր, որտեղ ոչ խոր տեղադրման գրունտային ջրերից մազանոթային բարձրացման և ինտենսիվ գոլորշիացման հետևանքով մակերևույթի վրա առաջանում է Ա. փ., աղուտներ ևն (տե՛ս *Солончак, солонцы*):

**ВЫЩЕЛАЧИВАЕМОСТЬ** — ՏԱՐՐԱՆՈՒԾՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ապարների և միներալների տարբեր տարրերի ջրային լուծույթ անցնելու ունակություն, որը միներալների մոտ ընթանում է առանց նրանց բյուրեղային ցանցի ամբողջականության խախտման: Այս կամ այն տարրի տարրալուծման աստիճանը կախված է նրա ֆիզքիմ. հատկություններից, բյուրեղային ցանցում գրաված դիրքից, ներգործող լուծույթի ջերմաստիճանից, ճնշումից և ներգործման տևողությունից: Միներալներից տարրալուծվում են հիմնականում այն տարրերը, որոնք գտնվում են ոչ թե բյուրեղային ցանցի հանգույցներում, այլ նրանց միջակայքում՝ մանրանեղբերում և մազանցքերում: Տ. ու. հանդիսանում է միներալների ամբողջականության պահպան-

վածության ցուցանիշներից մեկը, քանի որ նրա բարձր %-ը ցույց է տալիս նմուշի վատ պահպանվածությունը:

**ВЫЩЕЛАЧИВАНИЕ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ**, ստ. ջրերի միջոցով ապարների առանձին բաղադրատարրերի ընտրական լուծման և հեռացման գործընթաց, որը տարածված է հատկապես ակտիվ ջրափոխանակման զոնայում: Ջրի ընտրական լուծման հատկությունը բարձրանում է, երբ նրա մեջ ավելանում են անիոնները և թթվածինը: Ա. տ. ժամանակ առաջին ներթին հեռանում են Na-ի, K-ի և Mg-ի բրոնիդները, այնուհետև Ca-ի սուլֆատային և ապա Ca-ի կարբոնատային միացությունները: Ա. տ. բնորոշ օրինակ է կարսոը, որը շարժվող ջրի ներգործության շնորհիվ առաջանում է աղերում, գիպսերում, դոլոմիտներում, կրաքարերում և այլ հեշտ լուծվող ապարներում: Ա. տ. գործընթացը պայմանավորում է ստ. ջրերի հանքայնացման աստիճանը:

**ВЯЗКОСТЬ (ВНУТРЕННЕЕ ТРЕНИЕ) — ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ** (ՆԵՐՔԻՆ ԾՓՈՒՄ), շարժման ձևափոխություններից հեղուկ կամ գազային վիճակում գտնվող նյութերի (ապարների) կողմից ցույց տրվող դիմադրության հատկություն: Մ. բնութագրվում է մածուցիկության գործակցով (տե՛ս Կոэфֆիциент вязкости) և չափվում է պուազներով: Որոշ նյութերի Մ. մոտավորապես կազմում է լավայի (հրահեղուկ զանգվածի) համար՝  $\leq 10^5$  պուազ, սառույցի համար՝  $10^{13}$  պուազ, քարաղի համար՝  $10^{17-19}$  պուազ, երկրի վերին թիկնոցի համար՝  $10^{22}$  պուազ:

**ВЯЗКОСТЬ ВОДЫ (ЖИДКОСТИ) — ՋՐԻ (ՀԵՂՈՒԿԻ) ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ**, հատկություն, որը բնութագրում է ջրի (հեղուկի) մասնիկների ներքին շփման դիմադրությունը նրա շարժմանը: Ջ. մ. գործոն է, որը պայմանավորում է շարժման փոխանցումը ջրի զանգվածի բարձր արագությամբ շարժվող շերտերից ցածր արագությամբ շարժվող շերտերին: Տարբերում են ջրի (հեղուկի) դինամիկ և կինետիկ մածուցիկություն: Ջ. մ. կախված է նրա ջերմաստիճանից (բարձրանալիս մածուցիկությունը նվազում է) և լուծված աղերի քանակից (ավելանալիս մածուցիկությունը բարձրանում է): Ջ. մ. բնութագրվում է մածուցիկության գործակցով, որն օգտագործվում է ջրի շարժման մի շարք հաշվարկային քանանների մեջ (տե՛ս Կոэфֆիциент вязкости):

**ВЯЗКОСТЬ ЖИДКОСТИ ДИНАМИЧЕСКАЯ — ՀԵՂՈՒԿԻ ԳԻՆԱՄԻԿ ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ**, հեղուկի մի մասը մյուսի նկատմամբ տեղաշարժվելիս ցուցաբերվող դիմադրության քանակական բնութագիր: Այն արտահայտվում է դիմադրության ուժով, որը ցուցաբերվում է հեղուկի շերտի միավոր մակերեսին (սմ<sup>2</sup>), միավոր տարածության վրա (սմ), միավոր արագությամբ (սմ/վրկ) տեղաշարժվելիս: Հ. դ. մ. չափվում է պուազներով կամ սանտիպուազներով:

## — Г —

**ГАБИОН — ԳԱԲԻՈՆ (ՑԱՆՑԱԶԱՄԲՅՈՒՂ)**, ափապաշտպան կառույցի մաս, որն իրենից ներկայացնում է մետաղա ցանցապատ ուղղանկյունաձև արկղ՝ ազույցներով ու ցցերով ամրացված ափին և լցված քարաքեկորներով: Ափի թեքությունները Գ-ներով համառոտաբաժ պատելիս, այն հուսալիորեն կարելի է պաշտպանել պերախությունից: Գ-ները հաշտողությամբ օգտագործվում են նաև գետահունքը կարգավորելիս:

ГАБИТУС — ՀԱՔԻՏՈՒՍ, որևէ օրգանիզմի, միներալի, ապարի կամ այլ նյութի ընդհանուր արտաքին տեսք:

ГАЖА (ЗЕМЛИСТЫЙ ГИПС) — ԳԱԶ, փուխը, սորուն ապար՝ կազմված գիպսից և կավային մասնիկներից: Գ. հեշտությամբ լուծվում է ջրում, իսկ ջրազրկվելիս վերածվում է ամուր զանգվածի: Օգտագործվում է ծեփագործության և հարդարման աշխատանքներում որպես շինանյութ:

ГАЗЛИФТ — ԳԱԶԱՄԲԱՐՁ (ԳԱԶԼԻՖՏ), օդամբարձի (էլիֆտի) տարատեսակ (տե՛ս Երլիֆտ):

ГАЗОВАЯ ДИНАМИКА — ԳԱԶԱԳԻՆԱՄԻՎԱ, ուսմունք գազերի և գազախառն հեղուկների շարժման մասին:

ГАЗОВАЯ СЪЕМКА — ԳԱԶԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, գազանալթաքեր հնքվ-երի որոնման երկրաքիմ. մեթոդ, որը հիմնված է գազանալթաքեր շրջաններում ենթահողային շերտերում ածխաջրածնային գազերի բարձր պարունակության որոշման վրա: Այդ մեթոդով որոշակի ցանցով տեղադրված հորատանցքերից նմուշներ են վերցվում և ենթարկվում մանրատարրալուծության, որի շնորհիվ որոշվում է ծանր ածխաջրածնային գազերի նույնիսկ աննշան պարունակությունը (մինչև 0,001 %):

ГАЗОВАЯ ШАПКА — ԳԱԶԱՅԻՆ ԳԼԽԱՐԿ, գազային կուտակումներ՝ նավթատար շերտի առավել բարձրադիր մասերում:

ГАЗОВОЕ ДАВЛЕНИЕ — ԳԱԶԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ, գազատար շերտում պարփակված գազերի ճնշում (մթն.-երով): Զրաերկրաբանությունում՝ ջրային մակերեկության վրա գազերի ճնշում (մթն.-երով): Գ. ճ. կարող է պայմանավորել գազաճնշումնային ջրերի առաջացումը և ուժեղացնել ստ. ջրերի ճնշումնային շարժումը:

ГАЗОВОДЯНОЙ КОНТАКТ — ԳԱԶԱԶՐԱՅԻՆ ԿՈՆՏԱԿՏ, մակերևույթ, որն անջատում է գազակուտակը նույն շերտի (հորիզոնի) մեջ գտնվող ստ. ճնշումնային ջրերից: Այդ մակերևույթը սովորաբար բարդ է և, կախված գազակուտակի ջրադիսանիկ պայմաններից, կարող է լինել հորիզոնական կամ թեք: Հումանիշ՝ ջրա-գազային կոնտակտ:

ГАЗОВЫЙ ИСТОЧНИК — ԳԱԶԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ (ԵԼՔ), ապարների ճեղքերից, ծակոտիներից գազի շիթերի բնական ելք՝ երկրի մակերևույթին, կամ պղղալըջակների ձևով գազանջատում՝ ջրի, նավթի կամ ցելիի մակերևույթից:

ГАЗОВЫЙ РЕЖИМ — ԳԱԶԱՅԻՆ ՌԵՇԻՄ, նավթային ջրաերկրաբանությունում՝ նավթային հանքակուտակի շահագործման ռեժիմ, որի դեպքում նավթը տարվում է դեպի հորատանցք առավել շարժուն ընդարձակվող գազով: Ծերտում ճնշման նվազման պատճառով գազը լուծված վիճակից անցնում է ազատ վիճակի և կատարում գազամբարձի (գազլիֆտի) դեր: Նավթատար շերտայինքի շահագործման սկզբնական ժամանակաշրջանի համար բնորոշ է գազային գործոնի կրտուկ աճը, որը կարող է հասնել 1000 մ<sup>3</sup>/տն և ավելի:

ГАЗОВЫЙ ФАКТОР — ԳԱԶԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ, բնական գազի բանակ (մ<sup>3</sup>), որը բաժին է ընկնում 1 տն (կամ 1 մ<sup>3</sup>) նավթին: Եթե Գ. գ. կազմում է

1000—2000 մ<sup>3</sup>/տն (1000—2000 մ<sup>3</sup> գազ՝ 1 տն նավթի մեջ), ապա այն համարվում է բարձր: Ավելի հաճախ Գ. գ. կազմում է 100—200 մ<sup>3</sup>/տն, իսկ երբեմն՝ 5—20 մ<sup>3</sup>/տն: Ատ. ջրերի համար Գ. գ. չափվում է գազի և ջրի քանակների հարաբերությամբ, որը հանքային ջրերի համար հասնում է գազի մեծությունների (մինչև 40—50 մ<sup>3</sup>/տն):

ГАЗОВЫЙ ФОНТАН — ԳԱԶԱՅԻՆ ՇԱՏՐՎԱՆ, շիթերի ձևով ինտենսիվ գազանջատում հորատանցքերից կամ ապարների ճեղքերից (ստ. փորվածքներով հատելիս), ուր գազերը գտնվում են մեծ ճնշման տակ: Գազը շատրվանելիս տեղի է ունենում նաև ջրի, ցեխի և մանր բեկորների արտանետում:

ГАЗОНАПОРНАЯ ВОДА — ԳԱԶԱԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ ԶՐԵՐ, ստ. ջրեր, որոնք վեր են բարձրանում ապարների ճեղքերով կամ հորատանցքերով ու այլ փորվածքներով՝ գազի ճնշման շնորհիվ կամ ջրում լուծված գազերի անջատման հետևանքով:

ГАЗОНАПОРНЫЙ РЕЖИМ — ԳԱԶԱԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ ՌԵՇԻՄ, նավթային ջրաներկաբանությունում՝ նավթային կուտակի շահագործման այնպիսի ռեժիմ, երբ նավթը մղվում է դեպի հորատանցք՝ գազային գլխարկի գազի ճնշման շնորհիվ: Գազային գլխարկի ծավալի մեծացմանը (հետևաբար, ճնշման անկմանը) զուգընթաց հորատանցքի ծախսը նվազում է: Գազային գլխարկի ստորին սահմանը հորատանցքի հատակին մոտենալիս գազային գործոնի դերը մեծանում է և, ի վերջո, հորատանցքից միայն գազ է արտանետվում:

ГАЗОНАСЫЩЕННОСТЬ ВОДЫ — ԶՐԻ ԳԱԶԱՀԱԳԵՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գազի ծավալ, որը 0° Ց ջերմության և 760 մմ ճնշման պայմաններում լուծվում է ջրի 1 սմ<sup>3</sup> ծավալում: Հումանիշ՝ գազի լուծելիության գործակից (տե՛ս Коэффициент растворимости газов в воде):

ГАЗОПРОНИЦАЕМОСТЬ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԳԱԶԱԹՎՓԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ճեղքավոր և ծակոտկեն ապարների գազ բաց թողնելու հատկություն, որը կախված է դատարկությունների չափերից, նրանց հաղորդակցվածության ու ջրահագեցածության աստիճանից: Զրազուրկ ծակոտիներում գազի տարածումը կատարվում է ճնշման տարբերության շնորհիվ (էֆուզիա), իսկ ջրահագեցած ծակոտիներում՝ ջրում գազի տարրալուծման և միներալային մասնիկների կողմից կլանման շնորհիվ (դիֆուզիա):

ГАЗЫ ПРИРОДНЫЕ (ЕСТЕСТВЕННЫЕ) — ԲՆԱԿԱՆ ԳԱԶԵՐ, երկրի ընդերքում և մակերևույթի վրա ընթացող բնական գործընթացների հետևանքով առաջացող գազեր: Առավել տարածված են ազոտը, ածխաթթու գազը, ածխաջրածինը ևն, որոնք սովորաբար հանդիպում են թթվածնի, ծծմբաջրածնի և հազվագյուտ գազերի հետ համակցված (բնական գազախառնուրդ):

Ըստ բաղադրության, ծագման ու տեղադրման պայմանների Վ. Ի. Վերնադսկին Բ. գ. ստորաբաժանում է հետևյալ կերպ. 1) ազատ (մթնոլորտային) գազեր, 2) ապարների ծակոտիներում պարփակված գազեր, 3) գազային շիթեր (հոսքեր), 4) գազային ամպեր (գոլորշիներ), 5) բնական ջրերում տարրալուծված գազեր, 6) պինդ գազալուծույթներ (կլանված գազեր): Բացի դրանից, նա առանձնացնում է. 1) երկրի մակերևույթի գազեր, 2) բարձր ջերմության հետ կապված գազեր, 3) երկրակեղև թափանցող գազեր:

Ըստ ծագման Վ. Վ. հեղուտովը առանձնացնում է հետևյալ Բ. գ. 1) կենսաքիմ., 2) օդային (մթնոլորտային), 3) քիմ., 4) ռադիոակտիվության: Ա. Լ. Կոզլովը դրանց ավելացնում է ռադիոքիմ. և միջուկային տրոհման ծագման գազերը:

Ըստ քիմ. բաղադրության և տեղադրման պայմանների Վ. Ա. Սոկոլովը տվել է Բ. գ-ի հետևյալ ստորաբաժանումը. 1) մթնոլորտային գազեր, 2) երկրի մակերև-  
վույթի գազեր. ա) հողաբուսական և, բ) ճահճային (տորֆային), 3) նստվածքա-  
յին գազեր. ա) նավթային հնքվ-երի, բ) բուն գազային հնքվ-երի, գ) ածխային  
հնքվ-երի և, դ) ցրված, 4) փոխակերպային ապարների գազեր, 5) հրաբխածին  
ապարների գազեր. ա) հրաբխային և, բ) բյուրեղացած ապարներում պարփակված:

ГАЗЫ, РАСТВОРЕННЫЕ (СОДЕРЖАЩИЕСЯ) В ВОДЕ — ՋՐՈՒՄ ԼՈՒՄ-  
ՎԱԾ (ՊԱՐՈՒՆԱՎԱՎԱԾ) ԳԱԶԵՐ, որոնք տվյալ ջերմատիճանային և ճնշման  
պայմաններում, ի հակադրություն ինքնաբերական (սպոնտան) գազերի (տե՛ս  
Свонтаннные газы), լուծված են ջրում: Մակերևութային Ջ. Լ. գ-ի քանակն ու բա-  
ղադրությունը կարգավորվում են մթնոլորտում եղած գազերով, նրանց լուծելիու-  
թյամբ, ինչպես նաև ջրի ջերմատիճանով, հանքայնացումով ևն: Ստ. ջրերում տա-  
րածված են թթվածին, ազոտ, մեթան, ծանր ածխաջրածիններ, ածխաթթու, ծծմբա-  
ջրածին, չեզոք գազեր ևն, որոնց քանակական պարունակությունը արտացոլում է  
տվյալ շրջանի երկրք. կտրվածքի ջրաերկրաքիմ. իրադրությունը: Բնական ջրե-  
րում գազերի կշռային քանակը տատանվում է  $10^{-4}$ — $10^{-2}$  %, առավելագույնը  
հասնում է 0,1 % և բնորոշ է վերընթաց հանքային աղբյուրներին: Ծնշման իջեցման և  
ջերմության բարձրացման դեպքում Ջ. Լ. գ-ի մի մասն անցնում է ազատ վիճակի:

ГАЛОГЕНЕЗ — ԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ (ԱՂԱՌԱՋԱՑՈՒՄ), լուծույթներից աղերի  
առաջացման (նստեցման) գործընթաց, որը խստորեն ենթարկվում է լուծույթի ֆիզքիմ.  
հավասարակշռության օրենքներին:

ГАЛОГЕННЫЕ ПОРОДЫ (ГАЛОИДЫ, ГАЛОЛИТЫ) — ԱՂԱԾԻՆ ԱՂԱՌ-  
ՆԵՐ (ՀԱԼՈՒԳԵՆԵՐ, ՔՍՐԱՂԵՐ), նստվածքային ապարներ, որոնք քիմ. ճանապար-  
հով տարբեր աղերի նստվածքների ձևով առաջանում են լճերի և լազունային սվազան-  
ների գերհագեցած աղաջրերից: Ա. ա-ին են պատկանում հալիտը (կերակրի աղը),  
կալիումական ու մագնիումական աղերը (սիլվին, կարնալիտ, կահնիտ ևն), նատ-  
րիումի սուլֆատային աղերը (միրաբիլիտ, տե՛նարդիտ), կալցիումի սուլֆատները  
(գիպս, անհիդրիդ) ևն:

ГАЛОФИТЫ — ԱՂԱՍԵՐ ԲՈՒՅՍԵՐ, աղուտներում աճող բույսեր: Ա. բ. պատ-  
կանում են տարբեր ընտանիքների, սակայն բոլորին բնորոշ է մարմնեղ ցողունը և  
տերևների առկայությունը (օր., Օշանը, կարմրաճը ևն):

ГАЛОФРЕАТОФИТЫ — ԱՂԱՍՈՆԱՎԱՍԵՐ ԲՈՒՅՍԵՐ, խոնավատեր բույսեր,  
որոնք միաժամանակ ընդունակ են դիմաճաղու հիմնային իոնների աղերի վնասու-  
կար ազդեցությանը:

ГАФФЫ — ՀԱՖԵՐ, կիսաբաղադրանքային կամ գրեթե քաղցրահամ ջրերով գե-  
տաբերանային ծովախորշեր: Հ. բաց ծովից մասամբ կամ համարյա լրիվ առանձ-  
նացվում են ափի երկարությամբ ձգվող ցամաքալեզվակներով: Հ. և ցամաքալեզվակ-

ները բնորոշ են տեկտոնապես խորասուզվող ափերին և լայն տարածում ունեն հատկապես Բալթիական ու Հյուսիսային ծովերի ափագոտիներում:

**ГЕЙЗЕР — ԳԵՅՋԵՐ (ՏՍՅՏԱԶԵՐՄՈՒԿ),** ժամանակակից հրաբխային գործունեության շրջաններում տաք աղբյուր, որից ժամանակ առ ժամանակ ժայթքում է ջուր և գալորշի: Գ-ի ջրի ջերմաստիճանը տատանվում է սովորաբար 80—100° Ց, նրա մեջ լուծված են բլորիդներ, երկկարբոնատներ, սիլիկաճուր, երբեմն բորաթթու են: Աղբյուրի ջրից հաճախ գոյանում է սիլիկաճուրային ևստվածք (գեյզերից՝ սպիտակավուն օպալ), որը ելքի շուրջ առաջացնում է սպիկներ և այլ հոսքաձևեր: Գ-ի ջրի հանքալուծումը տատանվում է 1—3 գ/լ-ից մինչև 9—10 գ/լ, այն վճիտ է, ունի հիմնային ռեակցիա ( $pH > 7$ ): Գ. հիմնականում տեղադրված է ցամաքաբլուրային փոսորակի հատակային մասում և կապված է թթու ապարների՝ լիպարիտների, դացիտների հետ: Գ-ի ժայթքման ժամանակ շատրվանի բարձրությունը սովորաբար հասնում է 30—60 մ, գործում է 1 րոպեից մինչև մի քանի ամիս ընդմիջումներով: Նոր Զելանդիայի խոշորագույն Գ. Վայմանգուն, որը գործել է 1899—1905 թթ., յուրաքանչյուր ժայթքման ժամանակ արտանետել է շուրջ 800 տոննա ջուր՝ մինչև 460 մ բարձրությամբ: Գ-ի գործունեությունը բացատրվում է հետևյալ կերպ. 100—150 մ խորություններում կան հաղորդակցվող դատարկություններ, որոնց մեջ կուտակվում են գրունտային ջրերը, նախորդ ժայթքման ջրերի մի մասը, խորքից բարձրացող տաք գազերն ու գերտաքացած գոլորշիները: Այնուհետև դատարկությունների խորը մասերում այս գազաջրային խտնորոշ տաքանում է մինչև 125—130° Ց, սկսվում է գոլորշիների ու գազերի անջատումը պղպշակների ձևով և վերին մասում ջուրն սկսում է եռալ ու մասամբ ժայթքել: Այս գործընթացի հետևանքով միջավայրում ճնշումը թուլանում է և որոշակի ակնթաքություն ջուրը վեր է ածվում գոլորշու ու սկսում ուժեղ ժայթքել: Գ-ները մեծ տարածում ունեն Կամչատկայում (Գեյզերների հովիտ), ԱՄՆ-ում (Հելդուստոնյան աչքի), Իվանդիայում, Նոր Զելանդիայում, ավելի քիչ՝ Մապոնիայում, Չիլիում, Գվատեմալայում, Կոստա-Ռիկայում, Ագոռյան կղզիներում և այլուր:

**ГЕЙЗЕРНЫЕ ПАРЫ — ԳԵՅՋԵՐԱՅՆԻՆ ԳՈՒՈՐԾԻՆԵՐ,** գեյզերներից արտանետվող գոլորշիներ, որոնց խտացումից գոյացող ջրերը կարող են լինել քաղցրահամ, աղահամ, աղի և բնութագրում են գեյզերի գործունեության տեղամասի երկր., երկրաքիմ., երկրաչեմիային և ջրաերկրբ. առանձնահատկությունները:

**ГЕЛЬ — ԺԵԼ (ԴՈՆԴՈՂԱՆՄԱՆ ՆՅՈՒԹ),** հեղուկ միջավայրում հալվաարաչափ բաշխված մանր մասնիկների մակարդումից առաջացած դոնորդանման գաճգված: Ժ. ունի առանձնակալություն, որոշ ճկունություն և ձևը պահպանելու հատկություն:

**ГЕНЕЗИС ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՈՌԵՐԿՐԹՅԱ ԶՐԵՐԻ ԾԱԳՈՒՄ,** երկրակեղևում ստ. ջրերի առաջացման և ձևավորման գործընթաց, որը պայմանավորված է բնապատմական գործոններով և մարդու ինժեներական-տնտ. գործունեությամբ: Ստ. ջրերը, որպես բնության արգասիք, առաջացել են մակերևութային ջրերի ներծծման, օդի գոլորշիների խտացման, ևստվածքակուտակման, հրաբխակալության, խորքային փոխակերպման և այլ գործընթացների հետևանքով գոյացող ջրերի հաշվին (տես՝ Теория формирования подземных вод): Ստ. ջրերի քիմ. բաղադրության ձևավորումը ճազումնարանական առումով կապված է ջուր-ապար փոխազդեցության բարդ

գործընթացների, ինչպես նաև մակերևութային ջրերի հետ ստ. հորիզոններ մուտք գործող տարբեր լուծելի նյութերի, դրանց գրավիտացիոն դիֆերենցման գործընթացների հետ:

ГЕНЕРАЦИЯ ТРЕЩИН — ՃԵՂՔԵՐԻ ՀԱՍԱԿԱԿԱՐԳ (ԳԵՆԵՐԱՑԻԱ), ճեղքերի խմբավորում հասակային հաջորդականության կարգով: Ծ. հ. կատարվում է ելնելով ճեղքերի փոխադարձ հատումների և ճեղքերի լցանյութի քանակի ու բաղադրության բնույթից: Ըստ լցվածության աստիճանի տարբերում են՝ լրիվ լցված, կիսալցված և դատարկ (բաց) ճեղքեր, իսկ ըստ լցանյութի բաղադրության՝ միևերակային, բիտումային և խտր: Փոխհատման հաջորդականության տեսակետից հաճախ վաղ հասակի են համարվում միներալային լցանյութով «տպաքիցված» ճեղքերը, իսկ երիտասարդ՝ նորագոյացումներով լցված և բաց ճեղքերը:

ГЕНЕТИЧЕСКАЯ КЛАССИФИКАЦИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՍՈՐԵՐԿՐԸՐՅԱ ՋՐԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄ, ստ. ջրերի դասակարգում, որը հիմնված է նրանց ծագումնային առանձնահատկությունների վրա: Օր., ըստ ձևավորման պայմանների առանձնացվում են տարրալուծման, նստվածքակուտակման, վերածնված և այլ ստ. ջրեր, ըստ քիմ. բաղադրության գերիշխող անիոնների՝ ջրակարրոնատային, սուլֆատային, բորիդային և այլ ստ. ջրեր:

ГЕНЕТИЧЕСКОЕ ГРУНТОВЕДЕНИЕ — ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ (ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ) ԳՐՈՒՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գրունտագիտության բաժին, որն զբաղվում է ապարների ծագումնային կամ ֆացիալ համակարգերի և ֆորմացիաների ինժեներաերկրք. հատկանիշների ուսումնասիրությամբ:

ГЕНЕТИЧЕСКИЕ ЦИКЛЫ ФОРМИРОВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ՑԻԿԼԵՐ, ստ. ջրերի ծագումն ու ձևավորումը պայմանավորող գործընթացներ, որոնք կապված են որոշակի հաջորդականությամբ: Գ. Ն. Կամենսկին (1947) առանձնացնում է հետևյալ ծագումնային ցիկլերը. 1) ներծծման կամ ցամաքային, 2) նստվածքային կամ ծովային և, 3) փոխակերպային կամ մագմատիկ:

ГЕНЕТИЧЕСКИЙ ТИП ВОДЫ — ՋՐԻ ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ՑԻՊ, բնական ջրերի խումբ, որն առանձնացվում է ջրերի ձևավորման միջավայրի առանձնահատկությունն արտահայտող մի շարք բաղադրատարրերի առկայությամբ: Ջ. ծ. տ. որոշվում է նրա բաղադրատարրերի հարաբերակցության ծագումնային գործակիցներով: Ըստ այդ գործակիցների Վ. Ա. Սուլինը առանձնացնում է ջրերի 4 տիպեր. սուլֆատ-նատրիումային ( $\frac{r Na}{r Cl} > 1, \frac{r Na - r Cl}{r SO_4} < 1, \frac{r Cl - r Na}{r Mg} < 0$ ), ջրակարրոնատ-նատրիումային (համապատասխանաբար՝  $> 1, > 1$  և  $> 0$ ), բոր-մագմիումային ( $< 1, < 0, < 1$ ), բոր-կալցիումային ( $< 1, < 0, > 1$ ): Յուրաքանչյուր տիպ իր հերթին բաժանվում է խմբերի և ենթախմբերի:

ГЕОБОТАНИКА ИНДИКАЦИОННАЯ — ԻՆԳԻԿԱՑԻՈՆ ԵՐԿՐԱՌՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, երկրաբուսաբանության բաժին, որն ուսումնասիրում է բուսականությունը՝ որպես շրջապատող միջավայրի պայմանների ցուցանիշ օգտագործելու տև-

ասկան ու գործնական խնդիրները: Ի. Ե. լայնորեն օգտագործվում է երկրաքիմ., քարաբանական, հողագիտական, ջրաերկր. և այլ ուսումնասիրությունների ծամանակ: Որոշ բուսատեսակներ հաջողությամբ օգտագործվում են ջրաերկրաբանությունում որպես ստ. ջրերի որոնման, տեղադրման խորության, քիմ. բաղադրության և ռեժիմի կարևոր ցուցանիշներ:

**ГЕОДИНАМИЧЕСКАЯ ЗОНА** — ԵՐԿՐԱԳԻՆԱՄԻԿ ԶՈՆԱ, երկրակեղևի զոնա կամ գոտի, որը բնութագրվում է երկրբ. գործընթացների յուրահատուկ ընթացքով: Տարբերում են զոնայության մի քանի տիպեր.

1. Համամոլորակային զոնայություն. արտահայտվում է երկրագնդի զոնայական կառուցվածքով՝ համակենտրոն երկրապատյանների տեսքով:

2. Երկրատեկտ. զոնայություն. արտահայտվում է Երկրի հիմնական կառուցվածքային գծերի (գետսինկլինալ զոնաների) հետ որոշակի երկրբ. գործընթացների ու երևույթների կապվածությամբ: Գետսինկլինալ զոնաների ներսում նույնպես առանձնացվում են տեկտ. կամ կառուցվածքային զոնաներ:

3. Կլիմայական զոնայություն. արտահայտվում է մթնոլորտային տեղումների ու նրանց փոփոխության, հողմահարման ու հողառաջացման գործընթացների զոնայական տարածմամբ և բուսականության, խոնավության հաշվեկշիռի ու նրանց հետ կապված երևույթների տեղաբաշխմամբ:

4. Երկրաձևաբանական զոնայություն. դրսևորում է երկրբ. նստվածքների տեղադրման, ռելիեֆի ձևերի տարածման և այլ առանձնահատկություններով:

**ГЕОИЗОБАТА** — ԵՐԿՐԱՀԱՄԱԽՈՐԱԳԻԾ (ԵՐԿՐԱԻԶՈԲԱՏ), գծեր, որոնք ցույց են տալիս երկրի մակերևույթից ջրատար հորիզոնի տեղադրման հավասար խորությունները:

**ГЕОИЗОТЕРМА** — ԵՐԿՐԱՀԱՄԱԶԵՐՄԱԳԻԾ (ԵՐԿՐԱԻԶՈԹԵՐՄ), քարտեզի կամ կտրվածքի վրա արտահայտված գիծ, որը միացնում է երկրակեղևի միևնույն ջերմաստիճանն ունեցող կետերը:

**ГЕОИЗОТЕРМИЧЕСКАЯ (ИЗОГЕОТЕРМИЧЕСКАЯ, ГЕОТЕРМИЧЕСКАЯ) КАРТА** — ԵՐԿՐԱԻԶՈԹԵՐՄԻԿ (ԻԶՈԵՐԿՐԱԹԵՐՄԻԿ, ԵՐԿՐԱԹԵՐՄԻԿ) ՔԱՐՏԵԶ, տեղանքի քարտեզ, որի վրա անց են կացված հավասար ջերմությունների, աստիճանափոփոխման, երկրաջերմային աստիճանի կամ ջերմային հոսքերի համագծերը (իզոգծերը):

**ГЕОИЗОТЕРМИЧЕСКАЯ ПОВЕРХНОСТЬ** — ԵՐԿՐԱՀԱՄԱԶԵՐՄ (ԵՐԿՐԱԻԶՈԹԵՐՄԻԿ) ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, երկրակեղևի հատվածքներում երևակայական մակերևույթ, որը բոլոր կետերում ունի միևնույն ջերմությունը: Քարտեզի վրա Ե. մ. արտահայտվում է համաջերմագծերի միջոցով:

**ГЕОЗОНА** — ԵՐԿՐԱԶՈՆԱ, «երկրապատյան» տերմինի ոչ ընդունելի հոմանիշ:

**ГЕОКРИОЛОГИЧЕСКАЯ ФОРМАЦИЯ** — ԵՐԿՐԱՄԱՌՅԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱ, ըստ Պ. Ֆ. Շվեցովի, երկրակեղևի սառած հատվածք, որը ապարների կազմի ու կառուցվածքի տեսակետից համասեռ է, իսկ սառածության ջերմաստի-

ճանը, խորությունն ու հզորությունը զգալի տարածությունների վրա կայուն են: Առ-վորաբար Ե. ֆ. տեղադրվում է երկրք. կառուցվածքի և ջրաերկրք. հատկանիշ-ների տեսակետից նույնպես համասեռ շերտախմբերի վրա:

**ГЕОКРИОЛОГИЯ (МЕРЗЛОТОВЕДЕНИЕ)** — ԵՐԿՐԱՍԱՌՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ուսմունք՝ երկրակեղևի հողերի, գրունտների ու ապարների ստեղծման և հավան օրինաչափությունների, ստաճ ապարների կազմի, կառուցվածքի և ստեղծման հետևանքով ֆիզմեխ. հատկանիշների փոփոխության մասին: Ե. կոչված է բազմամյա սառցույթի պայմաններում նպաստելու մարդու ինժեներատնտ. գործունեության ծա-վալմանը:

**ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ И ГЕОЛОГИЧЕСКАЯ ДОКУМЕНТАЦИЯ** — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ, երկրք.-ջրաերկրք. հանույթային, որոնողական և հետախուզական աշխատանքների ժամանակ երկրք. ու ջրաերկրք. տարրերի մանրամասն, համակողմանի նկարագրություն և գծապատ-կերային արտահայտում: Փաստագրումն ուղեկցվում է ապարների, օգտակար հա-նածոների, ստ. ու մակերևութային ջրերի նմուշարկմամբ:

**ГЕОЛОГО-ГЕНЕТИЧЕСКИЙ КОМПЛЕКС ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ-ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, 1. Երկրաբանությունում՝ ապարների համակարգ, որոնք նույնահասակ են և առաջացել են ձևավորման նույ-նանման միջավայրում (օր., էֆուզիվ համակարգ, ինտրուզիվ համակարգ ևն):

2. Ինժեներական երկրաբանությունում՝ ըստ Ի. Վ. Պոպովի, ստորաբաժանում, որը միավորում է որևէ ֆորմացիայի սահմանափակ տեղամասերում միևնույն ֆացիալ պայմաններում (ֆիզկաաշխար. իրադրությունում) առաջացած ապարները (օր., գետաբերուկ (ալյուվի), դելյուվի, սառցաբերուկ (մորեն) ևն):

**ГЕОЛОГИЧЕСКИЕ ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐԻՑԱ ԶՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, ստ. գրավիտացիոն ջրերի ծավալը, որը պարու-նակվում է ապարների նեղերում, ծակոտիներում և կարստային դատարկություննե-րում: Ս. ջ. ե. պ. հաճախ անվանվում են նաև դարավոր կամ ստատիկ պաշարներ և որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$Q = FM_{\mu}, \text{ որտեղ } F \text{ — ջրատար հորիզոնի տարածման մակերեսն է, } m^2, \\ M \text{ — ջրատար հորիզոնի հզորությունն է, } m, \\ \mu \text{ — ջրատար ապարների ջրատվության գործակիցն է:}$$

**ГЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ** — ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ, երկրակեղևում կատարվող գործընթացներ, որոնք հանգեցնում են ապարների կազմի և կառուցվածքի փոփոխությունների:

Ե. գ. լինում են ներծին (էնդոգեն) և տարածին (էքզոգեն) ծագման: Ներծին գործընթացները, որոնք կատարվում են երկրակեղևի ներքին էներգիայով, կազմավոր-ում են երկրակեղևի կառուցվածքը և ռելիեֆի հիմնական ձևերը: Արտածին գործ-ընթացները, որոնց շարժիչ ուժ է հանդիսանում արտաքին էներգիան, գործում են հա-կատակ ուղղությամբ՝ ձևավոխում են ռելիեֆն ու նպաստում են երկրակեղևի հար-թեցմանը: Ե. պ. կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

## ՆԵՐՄԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- I. Էպելրոգենեզ (երկրակեղևի դանդաղ տատանումներ)
- II. Առնակազմություն (օռոգենեզ)
- III. Փոխակերպում (մետամորֆիզմ)
- IV. Հրաբխայնություն (վոլկանիզմ)
- V. Երկրաշարժեր

## ԱՐՏԱՄԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- |                                 |  |
|---------------------------------|--|
| I. Հողմահարում                  | <ul style="list-style-type: none"> <li>1. Ֆիզ.</li> <li>2. Քիմ.</li> <li>3. Օրգ.</li> </ul>  |
| II. Արկացում (դեմոդացիա)        | <ul style="list-style-type: none"> <li>1. Քանոահարում (դեֆլացիա)</li> <li>2. Կոռոզիա</li> <li>3. Ողողամաշում (էրոզիա)</li> <li>4. Ափաքերում (աքրազիա)</li> <li>5. Սառցահերկում (էկզարացիա)</li> </ul>  |
| III. Տեղափոխում                 | <ul style="list-style-type: none"> <li>1. Հողմային (էոլյան)</li> <li>2. Գետային</li> <li>3. Ծովային</li> <li>4. Սառցադաշտային</li> </ul>   |
| IV. Նստեցում և նստվածքազոյացում | <ul style="list-style-type: none"> <li>1. Ցամաքային                             <ul style="list-style-type: none"> <li>Ա. Մեխ.</li> <li>Բ. Քիմ.</li> <li>Գ. Օրգ.</li> </ul> </li> <li>2. Ծովային                             <ul style="list-style-type: none"> <li>Ա. Մեխ.</li> <li>Բ. Քիմ.</li> <li>Գ. Օրգ.</li> </ul> </li> </ul> |
| V. Դիագենեզ                     | <ul style="list-style-type: none"> <li>2. Ծովային                             <ul style="list-style-type: none"> <li>Ա. Մեխ.</li> <li>Բ. Քիմ.</li> <li>Գ. Օրգ.</li> </ul> </li> </ul>  |

ГЕОЛОГО-ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЕМКА — ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ-ՋՐԱ-ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, գիտաարտադրական բնույթի համակցված դաշտային հետազոտություններ, որոնք կատարվում են տեղանքի երկրբ. կառուցվածքի և ջրաերկրբ. պայմանների ուսումնասիրության, քարտեզահանման և տարբեր մասնատման (մասշտաբի) երկրբ. ու ջրաերկրբ. քարտեզներ կազմելու նպատակով: Ե. ջ. հ-ի հիմնական բովանդակությունը հանգում է ապարների բնական ու արհեստական մերկացումների համակողմանի ուսումնասիրությանը, նրանց հասակի, հատկանիշների ու ջրաերևակումների նկարագրությանը, ապարների և ստ. ջրերի տեղադրման պայմանների ու ձևերի պարզաբանմանը, նրանց տեղադիրքն ու տարածման սահմանները տեղագրական քարտեզների վրա անցկացմանը: Ե. -ջ. հ. ուղեկցվում է ապարների, միներալների, ջրաէլեքտրի նստվածքների, ինչպես նաև ստ. ու մակերևութային ջրերի նմուշարկումով՝ հետագա լաբորատոր հետազոտությունների համար: Մանրամասն հանույթների ժամանակ, հատկապես փակ (թույլ մերկացված) շրջաններում, շերտերի հաջորդակաևությունն ու նրանց ջրատարությունը որոշելու նպատակով փորվում են շորֆեր ու հորատանցքեր, տեղադրվում են ջրաչափ սարքեր և կատարվում են փորձային-հետազոտական աշխատանքներ:

Ե. -ջ. հ-ի դեպքում ապարները նկարագրվում և նմուշարկվում են վերևից ներքև հաջորդականությամբ, միաժամանակ նմուշարկելով բրածո մնացորդներն ու ստ. ջրերը: Բոլոր դիտումները մանրամասնորեն գրառվում են դաշտային գրքույկում, կատարվում են բնորոշ ու հետաքրքրական տարրերի գծապատկերում և լուսանկարում: Ե. -ջ. հ-ի գործընթացում ստացված տվյալների հիման վրա կազմվում են ուսումնասիրվող տեղամասի երկրք. ու ջրակրքք. քարտեզներ: Տեղանքի երկրք. կառուցվածքի ու ջրակրքք. պայմանների ուսումնասիրման մանրակրկիտությունը կախված է հանույթի մասշտաբից, իսկ դիտակետերի քանակը, մասշտաբից բացի, կախված է նաև տեղանքի մերկացվածության աստիճանից, երկրք. կառուցվածքի բարդությունից, նպատակային առաջադրանքից և այլ գործոններից: Գոյություն ունեն Ե. -ջ. հ-ի մի շարք մեթոդներ, որոնք կիրառվում են տարբեր մասշտաբի ու նշանակման քարտեզներ կառուցելու համար: Տարբերում են երթուղային ու տարածքային, ակնարկային, միջին մասշտաբի, մանրամասն և հատուկ Ե. -ջ. հ-ներ, իսկ ըստ մասշտաբի դրանք ստորաբաժանվում են. փոքր մասշտաբի՝ 1:1.000.000 — 1:500.000, միջին մասշտաբի՝ 1:200.000 — 1:100.000, մեծ մասշտաբի՝ 1:50.000 — 1:25.000 և ավելի խոշոր մասշտաբի:

ГЕОСТАТИЧЕСКОЕ ДАВЛЕНИЕ — ԵՐԿՐԱՍՏԱՏԻԿ ԾՆՇՈՒՄ, տվյալ ապարի վրա վերադիր (ծածկող) ապարների կողմից հաղորդվող ճնշում: Հումանիշ՝ լեռնային (ընդերքային) ճնշում:

ГЕОСФЕРЫ — ԵՐԿՐԱՈՒՈՐՏՆԵՐ (ԵՐԿՐԱՊԱՏՅԱՆՆԵՐ), երկիր-մոլորակի կառուցվածքի խոշոր համակենտրոն ոլորտներ (պատյաններ), որոնք բնորոշվում են տարբեր ֆիզ., քիմ. և կենսաբ. առանձնահատկություններով: Առանձնացվում են արտաքին և ներքին Ե.: Արտաքինի մեջ մտնում են մթնոլորտը, ջրոլորտը և կենսոլորտը, իսկ ներքինի մեջ՝ երկրակեղևն ու Երկրի մանթիան: Վերջինները շրջափակվում են Երկրի միջուկը, որն իր հերթին բաժանվում է արտաքին, անցումային և ներքին գոնաների:

ГЕОТЕРМИЧЕСКАЯ СТУПЕНЬ — ԵՐԿՐԱԶԵՐԱՍՏԻՆ ԱՍՏԻՃԱՆ, բնութագրում է երկրակեղևի ուղղաձիգ կտրվածքում ջերմության աճի ինտենսիվությունը և արտահայտում է խորացման չափը (մ-երով), որի դեպքում ջերմությունը բարձրանում է 1° Ց-ով՝ հաշված հաստատուն ջերմաստիճանի զոնայից: Ե. ա-ի միջին մեծությունը ընդունվում է 33 մ/օ, բայց այն փոփոխվում է 1—200 մ/օ սահմաններում՝ կախված ապարների բնույթից, ֆիզ. վիճակից, ջերմահաղորդականությունից, ջերմային հոսքի խորությունից, ներծայթուկ (ինտրուզիվ) մարմինների մոտիկությունից, հրաբխային գործընթացների առկայությունից և այլ գործոններից: Երկրաջերմային պայմանները բնութագրվում են նաև «Երկրաջերմային գրադիենտ» հասկացությամբ (տե՛ս Геотермический градиент):

ГЕОТЕРМИЧЕСКИЙ ГРАДИЕНТ — ԵՐԿՐԱԶԵՐԱՍՏԻՆ ԳՐԱԳԻԵՆՏ, երկրակեղևի հաստատուն ջերմաստիճանի զոնայից ներքև յուրաքանչյուր 100 մ խորանալիս ջերմության բարձրացման մեծություն (°-ներով): Տարբեր տեղամասերում և խորություններում Ե. գ-ի մեծությունը տարբեր է և կարող է տատանվել 0,5-ից 20—30°-ի սահմաններում: Միջին նշանակությունը ընդունվում է 3°, որը համապատասխանում է երկրաջերմային աստիճանի միջին մեծությանը (33 մ/օ):


**ГЕОТЕРМИЧЕСКИЙ УРОВЕНЬ ТЕПЛООБМЕНА** — ՋԵՐՄԱՓՈՒՆԱՆԱԿՈՒ-  
ԹՅԱՆ ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ՄԱԿԱՐԳԱԿ, երկրակեղևի և մթնոլորտի ջերմադինա-  
միկ փոխազդեցության շարժուն հավասարակշռության ցուցանիշ, որն արտահայտվում  
է ջերմային սեգունային փոփոխությունների ենթարկվող շերտի հաստակի սպարների  
կայուն ջերմությամբ, պահիքն հաստատուն ջերմաստիճանային գոտու ջերմաստի-  
ճանով: Դիցուք, որևէ շրջանում մակերևույթից 20 մ խորության վրա դիտվում է  
16,5° Ց կայուն ջերմություն: Տվյալ շրջանի համար երկրաջերմային աստիճանի կամ  
գրադիենտի հաշվարկը պետք է կատարել ելնելով բերված ցուցանիշից:

**ГЕОТЕРМИЯ (ГЕОТЕРМИКА)** — ԵՐԿՐԱԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ (ԵՐԿՐԱԶԵՐՄԱԳԻ-  
ՏՈՒԹՅՈՒՆ), երկրաֆիզ. գիտության բաժին, որն ուսումնասիրում է երկրի ջեր-  
մային դաշտը: Երկրի մակերևույթի վրա և երկրակեղևի ամենավերին մասում (մինչև  
հաստատուն ջերմաստիճանների գոտին) ջերմության բաշխումը պայմանավորված  
է արտաքին գործոններով, որոնց մեջ գլխավոր դերը պատկանում է արեգակնային  
էներգիային: Նշված գոտուց խորը ջերմությունը կախված է ներքին պայմաններից,  
միայն առանձին տեղերում, մինչև 150—200 մ խորությունները զգացվում է գրուն-  
տային ջրերի, ռելիեֆի և հնից ժառանգած ջերմային իներցիայի ազդեցությունը:  
Երկրակեղևի խորը հորիզոնների ջերմության վերաբերյալ տվյալներ ստացվում են  
հորատանցքերում և հանքահորերում կատարվող անմիջական չափումներով, ար-  
տալիժովող լավաների ջերմաստիճանի ուսումնասիրությամբ, խոր գոհանների նյութի  
ջերմահաղորդականության գնահատումներով, ինչպես նաև ջերմության աղբյուրների  
բաշխման մոտավոր հաշվարկումների հիման վրա: Երկրակեղևում ջերմության  
բարձրացումը ըստ խորության հաստատված է ամենուրեք, ըստ որում բարձ-  
րացումը տարբեր է այլ տեղամասերում և խորություններում՝ կախված ապարի  
ջերմահաղորդականության գործակցից, ջերմային հոսքի խտությունից ևն: Ջերմա-  
յին հոսքի միջին խտությունը երկրի համար կազմում է 1,2—1,5, օվկիանոսային  
խորը ճկվածքներում՝ 0,2—0,6, բյուրեղային վահանների սահմաններում՝ 0,7—1,1,  
խոշոր սիևկլինալային մարգերում՝ 2,5—8,10<sup>-6</sup> կալ/սմ<sup>2</sup>/վրկ.: Ջերմային հոսքի  
խտությունը ըստ բարձր է հրաբխային շրջանների առանձին տեղամասերում, բնա-  
կան գոլորշու աղբյուրների մոտ: Երկրի ջերմության մեծ մասն անջատվում է  
ապարների ջերմահաղորդականության շերտից, իսկ ջերմերի և հրաբխականության  
դերը համեմատաբար նվազ է: Երկրակեղևի խոր հորիզոնների ջերմության վերա-  
բերյալ եղած տեղեկությունները ճշգրիտ չեն: Տարբեր մեթոդներով որոշված է, որ  
100 կմ խորության վրա ջերմաստիճանը հասնում է 1000—1400° Ց: Ավելի մեծ խ-  
որությունների մասին անուղղակի մոտավոր տվյալներ են ստացվում երկրաքիմ.,  
նադիոգիտության, երկրաշարժագիտության և ատոլագիտության մեթոդներով:

Ժամանակակից Ե. կարևորագույն խնդիրը ընդերքի ջերմության հսկայական  
պաշարների օգտագործումն է ժողովրդական տնտեսության մեջ:

**ГЕОТЕХНИКА** — ԵՐԿՐԱՏԵԽՆԻԿԱ (ԳԵՈՏԵԽՆԻԿԱ), ինժեներական երկրա-  
բանության ուղղություն, որը գրունտների հատկություններն ուսումնասիրում է  
մեխանիկամաթ. մեթոդներով: Հաճախ Ե-ի նշանակությունը զերագնահատվում է,  
գրունտների հատկությունների ուսումնասիրման երկրբ. մեթոդները անտեսվում են,  
որը ճիշտ չի:

**ГЕОТЕХНОЛОГИЯ** — ԵՐԿՐԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ, լեռնային գործում՝ նոր ստա-  
ջավոր եղանակ, որը հնարավորություն է տալիս ընդերքը շահագործել հատուկ կա-



Նկ. 3. Երկրատեխնոլոգիական եղանակով աղատար հաստվածքի շահագործման սխեմա:

ույցվածքի հորատանցքերի միջոցով: Ի տարբերություն հանքահորերի ու բաց հանքերի մշակման ավանդական եղանակների, Ե-ով ընդերքի շահագործումը մարդու կողմից կատարվում է երկրի մակերևույթից (Նկ. 3): Այս եղանակով շահագործման են ենթակա, առաջին հերթին նախը, գազը և արդյունաբերական ջրերը (Ռեդուկ հանքանյութերը), ապա կարծր օգտակար հանածոները, եթե հաջողվում է դրանք բերել շարժուն վիճակի (գազիֆիկացված քարածուխ ու այրվող թերթաքարեր, տարրալուծվող աղեր, բոքսիտներ, երկաթ, պղինձ, ուրան ևն): Կարծր օգտակար հանածոների տարրալուծումն արագացնելու նպատակով հաճախ ընդերքում պայթեցումներ են կատարվում, հանքաբեր շերտի վրա ազդում են էլեկտրամագնիսական դաշտով, գերմալնով ու ցնցումներով, գործադրվում են միկրոկենսաբ. միջոցներ (մանրէներով մշակում), հորատանցք ներմուկող հեղուկը կանխապես տաքացվում ու հարստացվում է տարբեր ռեագենտներով և երբեմն ներմղվում է մեծ ճնշման տակ (մոնիտորներով տրվող ջրաշիթերով): Երկրաչեղմային խտորիչ տեղամասերում Ե. հաջողությամբ օգտագործվում է ջերմ (թերմալ) ջրեր արդյունահանելու համար, իսկ եթե տաք միջավայրում ջուր չկա, ապա հնարավոր է ընդերք ներմղել մակերևութային ջրերը և կորզել խորքային ջերմությունը, այսինքն տվյալ դեպքում ընդերքը կծառայի որպես բնական կաթսայատուն: Աճրճոհատ կատարելագործվող Ե. շահագործման ավանդական եղանակների նկատմամբ ունի մի շարք առավելություններ. էժան է, հնարավոր է դարձնում շահագործել աղքատ ու խորը տեղադրման հանքաշերտերը, շրջապատող միջավայրի աղտոտման տեսակետից «մաքուր» է ևն: Ե-ի հետ մեծ հույսեր են կապվում հատկապես էներգետիկ ճգնա-



կայուն արագությամբ ընթացող և արտաքին պայմանների ազդեցությունը չկրող ռադիոակտիվ տրոհման գործընթացը: Բ. և. XX դարի սկզբին առաջարկվել է Պ. Կյուրիի և Է. Ռեզերֆորդի կողմից: Կախված տրոհման վերջնական արգասիքներից (պրոդուկտներից), առանձնացվում են Բ. և. կապարային, հելիումային, արգոնային, կալցիումային, ստրոնցիումային և այլ մետոդներ: Հելիում-արգոնային մետոդներն օգտագործվում են նաև ստ. ջրերի հստակի որոշման համար:

**ГИГРОСКОПИЧНОСТЬ**—**ԽՈՆՆԱՎԱՍԾՆՈՒԹՅՈՒՆ** (ՀԻԳՐՈՍԿՈՊԻԿՈՒԹՅՈՒՆ), ապարների՝ օդից ջրային գոլորշիներ կլանելու (ադսորբելու) ունակություն: Խ. կախված է ապարների հատիկաչափական և միներալային կազմից, օդի խոնավությունից, ջերմաստիճանից և բնորոշում է տվյալ պայմաններում ապարի հետ ամուր կապված ջրի քանակը: Տարբերում են ոչ լրիվ և առավելագույն Խ. (տե՛ս *Максимальная гигроскопичность*):

**ГИГРОФИЛЫ** — **ԽՈՆՆԱՎԱՍԵՐ** ԿԵՆՊԱՆԻՆԵՐ, կենդանի օրգանիզմներ, որոնք հարմարված են շատ խոնավ կլիմայական պայմանների (ճահիճներ, հեղեղահուններ, գերխոնավ հողեր ևն):

**ГИГРОФИТЫ** — **ԽՈՆՆԱՎԱՍԵՐ** ԲՈՒՅՍԵՐ (ՀԻԳՐՈՖԻՏԵՐ), բույսերի խումբ, որը հարմարված է հավելյալ խոնավ պայմանների և բնութագրվում է առանձնահատուկ հատկանիշներով (լայն տերևներով, երկար ցողունով, արմատների թույլ համակարգով): Խ. բ-ի մեջ հատուկ առանձնանում են ջրային բույսերը՝ ջրասերները: Խ. բ. ծառայում են գրունտային ջրերի տեղադրման բարձր մակարդակի, ճահճացման կամ երկրորդական աղուտացման ցուցանիշներ (ինդիկատորներ):

**ГИДРАТОМОРФИЗМ**—**ՋՐԱՓՈՆԱԿԵՐՊՈՒՄ** (ՀԻԳՐՈՍՏՈՐՖԻԶՄ), ապարների ու միներալների փոխակերպման գործընթաց, որն ընթանում է ջրի մասնակցությամբ:

**ГИДРАВЛИКА** (ГИДРОМЕХАНИКА) — ՀԻԳՐՈՎԼԻԿԱ (ՀԻԳՐՈՄԵԽԱՆԻԿԱ), գիտություն հեղուկների հավասարակշռության պայմանների, շարժման օրենքների և գործնական խնդիրներում դրանց կիրառության մասին: Օգտագործվում է ջրամատակարարման, կոյուղու, հողերի ոռոգման ու չորացման, հիդրոէներգետիկայի, հիդրոմեխանիկաջիայի, ջրային ուղիների շինարարության և այլ հարցեր լուծելիս:

**ГИДРАВЛИЧЕСКИЙ ГРАДИЕНТ** — ՀԻԳՐՈՎԼԻԿ ԳՐԱԳԻԵՆՏ, տե՛ս *Напорный градиент*:

**ГИДРАВЛИЧЕСКИЙ ИНТЕГРАТОР** — ՀԻԳՐՈՎԼԻԿ ԻՆՏԵԳՐԱՏՈՐ, հաշվիչ մեքենա, որը հնարավորություն է տալիս լուծելու ստ. ջրերի ոչ կայունացած շարժման դիֆերենցիալ հավասարումներ: Լուծումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ բնական պայմաններում ջրի ծծանցման և հիդրավիլի դիմադրություններով իրար միացած անոթների համակարգով ջրի անցման միջև գոյություն ունի հիդրավիլի մասնություն: Հ. ի. առաջարկվել և պատրաստվել է Վ. Ս. Լուկյանովի կողմից:

**ГИДРАВЛИЧЕСКИЙ НАПОР** — ՀԻԳՐՈՎԼԻԿ ԾՆԾՈՒՄ, «ճնշում» տերմինի հոմանիշը:

ГИДРАВЛИЧЕСКИЙ РАДУС — ՀԻՐՐԱՎԻԿ ԾՈՌԱՎԻՐ, ջրնոսքի կենդանի կորվածքի մակերեսի (W) հարաբերությունը թրջված պարագծին ( $\lambda$ ): Նշանակվում է R տառով.  $R = \frac{W}{\lambda}$ :

Հ. շ. գծային մեծություն է, որը ցույց է տալիս թրջված պարագծի միավոր երկարությանը բաժին ընկնող կենդանի կորվածքի մակերեսի մասը:

ГИДРАВЛИЧЕСКИЙ РАЗРЫВ ПЛАСТА — ԾԵՐՏԻ ՀԻՐՐԱՎԻԿ ԽՉՈՒՄ, նավթային ջրաերկրաբանությունում՝ նավթահորերի կամ ներմղման հորատանցքերի արտադրողականությունը մեծացնելու մեթոդ, որը հիմնված է արդյունավետ շերտի ապարների հիդրավիկ եղանակով տարանջատման (շերտազատման) վրա: Ե. Բ. Խ. Խրագործվում է մեծ ճնշման տակ հորատանցքի մեջ ներմղելով հատուկ կազմի մածուցիկ լուծույթ (սուլֆիտ-սպիրտային տակուցք, խտացված աղաթթու, միներալային յուղեր, մածուցիկ նավթահումք և այլ նավթամթերքներ), որի հետևանքով արդյունավետ շերտում առաջանում է խզում (շերտազատում), ընդ որում, դրանից առաջացած ճեղքերը կարող են շերտում տարածվել մի քանի տասնյակ մ: Սովորաբար ներմղվող հեղուկը հագեցվում է խոշորահատիկ ավազով, որը ճնշումը դադարեցնելուց հետո հակազդում է արհեստական ճեղքերի մարմանը: Հորատանցքի ամրակապման խողովակաշարի խզումը բացատելու համար կիրառվում են արտասխողովակային տարածության մեկուսացման հատուկ միջոցներ:

ГИДРАВЛИЧЕСКИЙ РЕЖИМ НЕФТЯНОГО ПЛАСТА — ՆԱՎԹԱԲԵՐ ԾԵՐՏԻ ՀԻՐՐԱՎԻԿ ՌԵՇԻՄ, ուժիմ, որի դեպքում նավթը հորատանցք մոտը հիմնական ուժը հանդիսանում է կողային ջրերի ճնշումը: Այս դեպքում նավթահորերը աչքի են ընկնում ճնշման ու ծախսի զգալի կայունությամբ:

ГИДРАВЛИЧЕСКИЙ УДАР — ՀԻՐՐԱՎԻԿ ՀԱՐՎԱԾ, փականը արագ փակելու հետևանքով ճնշումնային խողովակաշարում կամ արտեզյան հորատանցքում ճնշման կտրուկ մեծացում: Խողովակաշարում կամ արտեզյան հորատանցքում, հատկապես խողովակների միացման տեղերում Հ. Բ. կարող է խզում առաջացնել:

ГИДРАТАЦИЯ — ՋՐԱԿՑՈՒՄ (ՀԻՐՐԱՍՏԱՑՈՒՄ), ջրում լուծվող նյութի մասնիկների՝ ջրի մոլեկուլների հետ կապակցվելու գործընթաց: Ջ. հանդիսանում է սովակատացիայի (որևէ լուծիչի՝ նյութերի հետ միանալու գործընթացի) մասնակի դեպք: Լուծույթներում էլեկտրոլիտների Ջ. հանդիսանում է նրանց դիսոցման գլխավոր պատճառ, պայմանավորում է լուծույթների մեջ իոնների կայունությունը և արգելակում է մոլեկուլների առաջացումը: Ջ. ռեակցիաները մեծամասամբ հետադարձ են, հետադարձ ռեակցիան կոչվում է ջրագրկում, որի դեպքում առաջացող միացությունները կոչվում են ջրատներ (հիդրատներ), իսկ նրանց բաղադրության մեջ մտնող ջուրը՝ ջրատային (հիդրատային): Ջրատային ջուրը երբեմն այնքան ամուր է կապված լուծված նյութի մասնիկների հետ, որ լուծույթից անջատման դեպքում նա անմիջապես մտնում է առաջացող բյուրեղների բաղադրության մեջ, որոնք կոչվում են բյուրեղաջրատներ, իսկ ինքը ջուրը՝ բյուրեղային: Հատկապես հեշտությամբ են առաջանում գիպար՝  $CaSO_4 \cdot 2H_2O$ , միրաբիլիտը՝  $Na_2SO_4 \cdot 10H_2O$ , օպալը՝  $SiO_2 \cdot nH_2O$  ևն: Օքսիդների Ջ. ուղեկցվում է նրանց քայքայումով և նոր միացությունների ջրօքսիդների (հիդրօքսիդների) առաջացումով: Ջրի կազմի մեջ մտնող

II և O նոր առաջացող նյութի կառուցվածքում գրավում են տարբեր դիրք, օր., բրուսիտ՝  $Mg(OH)_2$ , հիդրաբզիլիտ՝  $Al(OH)_3$  ևն: Այդպիսի ջուրը կոչվում է կառուցվածքային (կոնստիտուցիոն): Ջ. կոչվում է նաև կոլոիդների կոլոմիջ ջրի կլանմանը, մասնիկների մակերևույթի ադսորբցիան, ցեոլիտային ջրի կլանումը (տե՛ս Вода в минералах):

**ГИДРОБАРХАНЫ** — ՋՐԱԲԱՐԽԱՆՆԵՐ (ՀԻԳՐՈԲԱՐԽԱՆՆԵՐ), ստ. կուտակումային ռեզիեֆի ձևեր, որոնք նման են ցամաքային հողմային գոյացումներին: Ջ. առաջանում են ալիքների գործունեության շնորհիվ, սակայն ի տարբերություն ստ. ալեբախման ավազաթմբիկների (ալեծալքերի), Ջ. ունենում են մի քանի մ. հարաբերական բարձրություն:

**ГИДРОГЕЛЬ** — ՋՐԱԺԵԼ (ՋՐԱԳՈՆԴՈՂԱՆՅՈՒԹ), ջրային ֆազ պարունակող ժել, դոնդողանյութ (տե՛ս Гель): Ջ. առաջացնում են, օր., ժելատինը, ազարազարը ևն:

**ГИДРОГЕНЕЗ** - ՋՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ (ՀԻԳՐՈԳԵՆԵՅ), ըստ Ա. Ե. Ֆերմանի, երկրաբիւմ. և միներալային վերափոխումների ամբողջություն, որի արդյունքում երկրակեղև ներթափանցող ջրերը տարրալուծում են որևէ երկրաքիմ. միջավայրի հեշտ լուծվող աղերը, լուծույթի ձևով տեղափոխում մեկ սյլ միջավայր և առաջացնում են նոր միներալներ:

**ГИДРОГЕОДИНАМИКА** — ՋՐԱԵՐԿՐԱԳՐԱՄԻԿԱ, ջրաերկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է ստ. ջրերի ձևավորման ջրադինամիկ ռեժիմի ու հաշվեկշիռի քանակական օրինաչափությունները: Ջ. նոր տերմին է և օգտագործվում է հայրենական գրականությունում տարածված «Ստ. ջրերի դինամիկա» տերմինի փոխարեն:

**ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ КАРТА** — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, ջրաերկրբ. հանույթի արդյունքների գծապատկերման հիմնական ձև, որի վրա արտացոլվում է շերտագրության ընդունած համակարգով առանձնացված ջրատար հորիզոնների, համալիրների, ջրամերձ հատվածքների տարածումը, հաջորդականությունը, տեղադրման պայմաններն ու խորությունը, ինչպես նաև ստ. ջրերի որակական և քանակական բնութագրումները:

Ջ. ք-ի բովանդակությունը կախված է նպատակադրումից, մասշտաբից, երկրբ.-ջրաերկրբ. պայմանների բարդությունից ևն: Ջ. ք-ի կազմման միասնական և համընդհանուր ճանաչում գտած մեթոդներ չկան: Գործող մեթոդական ցուցումների համաձայն, ներկայումս կազմվում են ընդհանուր սկևարկային (1 : 500000—1 : 1500000), միջին մասշտաբի (1 : 100000—1 : 200000), մանրստիսան (1 : 25000—1 : 50000) և հատուկ (մասնագիտացված) քարտեզներ (1 : 10000) և ավելի խոշոր): Այնպիսիք և միջին մասշտաբի քարտեզների վրա արտացոլվում են ջրատար հորիզոնները (համալիրները), գլխավոր ջրակետերը, ստ. ջրերի որոշ որակական և քանակական ցուցանիշներ: Այս քարտեզները կազմվում են տեսական ընդհանրացումների, ջրաերկրբ. հետազոտությունների հետանկարային պլանավորման, գլխավոր սխեմաների կազմման և առանձին ռեգիոնների իրացման տեխնիկատնտ. հիմնավորման

նարտակով: Մանրամասն Ջ. ք-ի վրա արտացոլում են վերին հիմնական և նրանից ներքև տեղադրված ջրատար հորիզոնները (համալիրները), բոլոր ջրաերևակումները, գրունտային և ճնշումնային ջրերի մակարդակի իզոգծերը, շարժման ուղղությունները, ստ. ջրերի որակը և քանակը բնութագրող տվյալները: Այս տիպի քարտեզներն օգտագործվում են որպես հուսալի հիմք՝ ընթացիկ և հետանկարային պլանավորման, ջրատնտ. միջոցառումների մշակման, իմնեներական կառույցների նախագծման, ստ. ջրերի շահագործողական պաշարների գնահատման, ջրաերկրք. շրջանացման և այլ նպատակներով: Հատուկ մասնագիտացված Ջ. ք-ներ կազմվում են համեմատաբար փոքր տարածությունների համար և ունենում են նպատակամղված բովանդակություն: Այսպիսի քարտեզները կոչված են հիմք ծառայելու կոնկրետ նեղ խնդիրների՝ քանվորական նախագծումների համար: Ջ. ք-ները, որպես կանոն, ուղեկցվում են բնորոշ ուղղություններով տարվող կտրվածքներով, որոնք արտահայտում են տեղանքի խորքային ջրաերկրք. իրարությունը և հարստացում են քարտեզի բովանդակությունը:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ ОБЛАСТЬ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՐԶ, ընդարձակ տարածք, որը բնութագրվում է ֆիզիկաաշխարհ., երկրք., քարաբանական, կառուցվածքային և ջրաերկրք. առանձնահատկությունների մանրությամբ: Ջ. մ-երը խոշոր ռեգիոնների շրջանացման ժամանակ առանձնացվում են որպես առաջին կարգի միավոր: Հաճախ օգտագործվում է որպես «Ջրաերկրք. ռեգիոն», «Ջրաերկրք. նահանգ» տերմինների հոմանիշ:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ ПРОВИНЦИЯ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՆԱՀԱՆԳ (ԳՐՈՎԻՆՑԻԱ), 1. Ըստ Մ. Մ. Վասիլևսկու, երկրք. կառուցվածք, որն իրենից ներկայացնում է իջվածք, գոգավորություն, ճկվածք կամ գրաբեև: 2. Ըստ Կ. Ի. Մակովի, արտեզյան ավազան: 3. Ըստ Օ. Կ. Լանգելի, գրունտային ջրերի մակրոզոնա (քազմամյա սառցույթի, հավելյալ ու փոփոխական խոնավացման են):

ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЕМКА — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, դաշտային գիտարտարական բնույթի հետազոտությունների համալիր, որը կատարվում է քարտեզահանվող տարածքի ջրաերկրք. կտրվածքի (բնական կուտակիչների ու ավազանների), ջրատար հաստվածքների, տարբեր տիպի ստ. ջրերի տարածման ու տեղաբաշխման օրինաչափությունների, նրանց որակի ու քանակի, ինչպես նաև օդահագեցման զոնայի ապրանքների ուսումնասիրման և քարտեզահանման նպատակով: Ջրաերկրք. հետազոտությունները հիմնվում են քարտեզահանվող տարածքի երկրք. կառուցվածքի, տեկտոնիկայի, հնետաշխարհագրության, երկրաձևաբանության, ջրաերկրաբանության և այլ բնական ու արհեստական գործոնների ուսումնասիրության վրա, որոնք կանխորոշում են ստ. ջրերի սնման, տեղադրման, տարածման, շարժման ու բեռնաթափման պայմանները: Ջ. հ-ի կարևոր խնդիրներն են. 1) ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների ջրամատակարարման վիճակի քարտեզվման և հետանկարային ապահովման նպատակով ստ. ջրային ռեսուրսների ուսումնասիրություն և պաշարների գնահատում, 2) ֆիզիկաերկրք. գործընթացների, ռեյիեֆի ձևերի և հանքակուտակների վրա ստ. ջրերի ազդեցության ուսումնասիրություն, 3) ստ. ջրերի վրա արհեստական գործոնների (լեռնային փորվածքների, խոշոր ջրհանների, ջրամբարների, ոռոգման ցանցի, ար-

դյունաբերության պինդ և հեղուկ թափոնների) ազդեցության լուսաբանում, 4) ստ. ջրերի պահպանության և պաշարների արհեստական լրացման հնարավորության պարզաբանում: Ըստ մանրամասնության տարբերում են Ջ. հ-ի հետևյալ տեսակները. փոքրամասշտաբ (1:1.000.000—1:500.000), միջին մասշտաբի (1:200.000—1:100000), խոշոր մասշտաբի (1:50000—1:25000) և հատուկ կամ մասնագիտացված (1:10000 և ավելի խոշոր):

ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ ФОРМАЦИЯ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՆՑԻԱ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ), քարաբանական (լիթոլոգիական) և ծագումնաբանական տեսակետից համասեռ, նույն կամ տարբեր հասակի ապարների համակարգ, որը բնութագրվում է ստ. ջրերի կուտակման, շարժման ու տեղաբաշխման, ինչպես նաև նրանց քիմ. բաղադրության ձևավորման որոշակի պայմաններով:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ИЗЫСКАНИЯ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ջրաերկր. տվյալների ստացման նպատակով տարվող դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունների ամբողջություն, որի հիման վրա նախագծվում են ստ. ջրերի օգտագործման կամ նրանց դեմ պայքարի միջոցառումներ:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գիտամեթոդական և արտադրական բնույթի ուսումնասիրություններ, որոնք կատարվում են ստ. ջրերի ձևավորման, տարածման, շարժման ու բեռնաթափման պայմանների, քիմ. բաղադրության, ռեժիմի և պաշարների պարզաբանման ու գնահատման նպատակով: Ջ. ու-ի տվյալները հիմք են ծառայում ստ. ջրերի օգտագործման կամ նրանց դեմ պայքարի միջոցառումներ նախագծելու համար:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ПОИСКИ И РАЗВЕДКА — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, ջրաերկրաբանության կիրառական բնագավառ, որն զբաղվում է ստ. ջրերի հայտնաբերման, քանակական ու որակական գնահատման, ինչպես նաև ինժեներական կառուցումների, լեռնային գործի, ջրատնտ. բազմազան միջոցառումների համար անհրաժեշտ ջրաերկր. հարցերի ուսումնասիրությամբ: Ջ. ո. և հ. իրագործվում են ջրաերկր. հանույթի միջոցով, որը հանդիսանում է ստ. ջրերի որոնման և հետախուզության սկզբնական էտապ: Հանույթի արդյունքում կազմված քարտեզի վրա արտահայտվում են ընդհանուր ջրաերկր. պայմանները և առանձնացվում են տարբեր տեսակի ստ. ջրերի կուտակումների հետանկարային տեղամասերը (ավազաններ, հորիզոններ), որոնց սահմաններում հետագայում կենտրոնացվում են հետախուզական և փորձային աշխատանքները: Ջ. ո. և հ. հիմնական խնդիրը հանդիսանում է նախագծման համար անհրաժեշտ հաշվարկային տվյալների ստացումը: Ըստ մանրամասնության աստիճանի առանձնացվում են հետախուզման 3 փուլեր՝ նախնական, մանրամասն և շահագործողական: Մանրամասն հետախուզման փուլում կատարվող աշխատանքների ծավալը կախված է տեղանքի ջրաերկր. պայմաններից, ստ. ջրերի ուսումնասիրվածության աստիճանից և հետախուզման նպատակից (ջրամատակարարում, ջրի մակարդակի իջեցում, հանքարանների չորացում, ջրամբարների կառուցում ևն):

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, որևէ շրջանի ֆիզիկաաշխարհ., երկրաձևաբանական և երկր. գործոնների հա-

մակցություն, որը պայմանավորում է ապարների ջրատարությունը, ստ. ջրերի տեղադրման, շարժման ու բեռնաթափման օրինաչափությունները, քանակն ու որակը, ինչպես նաև նրանց ռեժիմը՝ բնական իրավիճակում և արհեստական գործոնների ազդեցության դեպքում:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ КОМПЛЕКС — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱ-  
ԼԻՐ, 1. Ըստ Ն. Ի. Տոլստիխինի, ջրատար հորիզոնների կամ զոնաների համակցություն, որոնք կապված են ջրաերկրք. պայմանների ընդհանրությամբ: 2. Ըստ Ի. Կ. Ջայցևի, երկրք. կտրվածքի մաս, որը համապատասխանում է շերտագրական որևէ ստորաբաժանմանը (հարկ, բաժին, համակարգ են) և բնութագրվում է ջրաերկրք. ստանձնահատկությունների ընդհանրությամբ:

Ջ. հ. կարող է ներկայացված լինել մի քանի մասնատիպ ջրատար հորիզոններով, որոնք երբեմն օժտված են լինում տարբեր ճնշումներով: Ջ. հ-ի հաստությունը կարող է հասնել մի քանի տասնյակ կամ հարյուր մ-ի:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ МАССИВ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՋԱՆԳՎԱՆ, ըստ Ն. Ի. Տոլստիխինի, ջրաերկրք. «միահարկ» կառուցվածք, որը ներկայացված է բյուրեղային հիմքի ուժեղ փոխակերպված և ծալքավորված հոծ ապարներով: Ջ. գ-երը հաճախ մերկացած են կամ ծածկված փոքր հզորության չորրորդական հասակի նորագոյացումներով և պարունակում են ճեղքաերակային ջրեր:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ ПРОФИЛЬ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՂԱՊԱՏ-  
ԿԵՐ (ՏՐԱՄԱՏ, ՊՐՈՖԻԼ), կողապատկեր, որի վրա արտացոլվում են տեղանքի երկրք. կտրվածքի վերին մասի շերտադրությունը, ջրատար հորիզոնները, ջրամերժ շերտերը, գրունտային և ճնշումնային ջրերի մակարդակները, լեռնային փորվածքները (հորատանցքեր, ջրհորեր), նրանցից արտամղվող ջրերի ծախսն ու հանքայնացումը և այլ երկրք. ու ջրաերկրք. տվյալներ:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ РАЗРЕЗ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱՆՔ, երկրք. կտրվածք, որի վրա ցույց են տրվում ջրատար հորիզոնները, ճնշումնային և ոչ ճնշումնային ջրերի մակերևույթները, հորատանցքերում և այլ փորվածքներում ջրի մակարդակը և այլ ջրաերկրք. ցուցանիշներ: Ջ. կ. ջրաերկրք. կողապատկերից տարբերվում է երկրք. կտրվածքի ստալել մեծ խորությունների ընդգրկումով:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ РАЙОН — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾՐՋԱՆ, երկրք. կառուցվածքի մաս, որը բնութագրվում է որոշակի տիպի ստ. ջրերի (գրունտային, արտեզյան, ճեղքային են) ձևավորման միատեսակ պայմաններով (սնման, կուտակման, բեռնաթափման), ունի ինքնուրույն ջրային հաշվեկշիռ և այդ հատկանիշներով տարբերվում է հարակից տեղամասերից:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ ЦИКЛ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՑԻԿԼ, ծովի ստաջընթացի (տրանսգրեսիա) և հետընթացի (ռեգրեսիա) միջև ընկած երկրք. ժամանակահատված, որի ընթացքում տեղի է ունենում ստ. ջրերի ծագումնային տիպի փոփոխություն՝ նստվածքակուտակման ծագման ստ. ջրերի փոխարինումը (տեղա-կալումը) մթնոլորտային ծագման ներծծման (ինֆիլտրացիոն) ջրերով:

Ջ. ց-ի ընթացքում խոշոր արտեզյան ավազաններում տեղի են ունենում ապար-  
շուր փոխներգործության, ջրերի բիւմ. բաղադրության փոխակերպման, տարրերի  
տեղաշարժման, կենսաքիմ. և ջրաքիմ. բարդ գործընթացներ:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ ЭТАЖ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ, ջրատար  
համալիրների համակցություն, որը ներքևից կամ ներքևից ու վերևից միաժամանակ  
սահմանափակվում է համընդհանուր տարածման ջրամերձ հզոր շերտերով: Ջ.  
հ-երը միմյանցից տարբերվում են ջրափոխանակման աստիճանով, ստ. ջրերի ձև-  
վորման գործընթացի առանձնահատկություններով, ինչպես նաև շրջանի (ռեգիոնի)  
հնէաջրաերկրք. զարգացման հիմնական գծերով: Ջ. հ. մեծամասամբ համապատաս-  
խանում է կառուցվածքային հարկին կամ ջրատար սերիային:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЕ МОДЕЛИРОВАНИЕ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ՄՈՂԵԼԱՑՈՒՄ, ուսումնասիրվող ջրաերկրք. գործընթացների ու երևույթների վերար-  
տադրությունը մոդելի վրա: Օր., կալուսացած ծծանցման ուսումնասիրությունը էլեկ-  
տրաջրադինամիկական մոմանակի մեթոդով (տե՛ս Электродинамическая  
аналогия) կամ չկալուսացած ծծանցման ուսումնասիրությունը ջրաինտեգրատորի  
կամ թափանցիկ վաքի (նավթանի) օգնությամբ:

ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԾՐՋԱՆԱՑՈՒՄ, ջրաերկրք. գլխավոր պայմաններով և ստ. ջրերի հիմնական հատ-  
կանիչներով տարբերվող տեղամասերի (շրջանների) առանձնացում: Այն կատար-  
վում է ստ. ջրերի սնման, ձևավորման, տարածման և բեռնաթափման պայմանների  
ուսումնասիրման հիման վրա: Ջ. 2. ժամանակ առաջին հերթին հաշվի են առնվում  
շրջանի երկրք. կառուցվածքը, ապարների քարաբանական կազմը, ջրատար ու ջրա-  
մերձ շերտերի հերթափոխությունը, նրանց հաստությունն ու մերկացվածության  
աստիճանը: Մեծ նշանակություն ունեն նաև երկրաձևաբանական պայմանները (որո-  
շում են ողողամաշման ցանցի խորությունը և գրունտային ջրհոսքի ուղղությունը),  
կլիմայական ու ջրաբանական գործոնները (կանխորոշում են ստ. ջրերի ռեժիմի  
հիմնական առանձնահատկությունները): Ջ. 2. հարցում առաջնորդվում են ժողովրդ-  
դատետ. կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ և ուսումնասիրման ու  
յուրացման ստ. ջրերի տիպով: Այսպես, գրունտային ջրերի Ջ. 2. համար մեծ նշա-  
նակություն ունեն աշխար. զոնայականությունը և չորրորդական նստվածքների տա-  
րածումը, որոնց հետ կապված են գրունտային ջրերի խոշոր ավազաններն ու հոս-  
քերը: Անհրաժեշտ է առանձնացնել նաև համատարած ու կղզյակավոր սառցույթի,  
հավելյալ ու անկայուն խոնավության, չորային և այլ շրջանները: Արտեզյան ջրերի  
շրջանացման ժամանակ գլխավոր տարր է հանդիսանում երկրք. կառուցվածքը, մաս-  
նավորապես ճկվածքային զոգավորությունները, որոնք իրենցից ներկայացնում են  
արտեզյան ավազաններ: Հանքային ջրերի շրջանացման ժամանակ մեծ նշանակու-  
թյուն է տրվում նրանցում լուծված գազերի բաղադրությանը, ըստ որի առանձնաց-  
վում են ածխաթթվային, ազոտային, ծծմբաջրածնային, մեթանային և այլ տիպի  
ջրերի տարածման մարզեր (նահանգներ): Մարզերի ներսում, ըստ հանքային ջրերի  
ֆիզքիմ. և ջրադինամիկ առանձնահատկությունների, առանձնացվում են շրջաններ,  
ենթաշրջաններ, հնքվ-եր և շահագործողական տեղամասեր:

**ГИДРОГЕОЛОГИЯ** — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտություն ստ. ջրերի ծագման, տեղադրման պայմանների, տարածման և շարժման օրինաչափությունների, ֆիզ. հատկությունների, քիմ., մանրէական և գազային կազմի, ռեժիմի, ինչպես նաև մթնոլորտի, մակերևութային ջրերի, երկրակեղևի ապարների ու թիկնոցապատյանի նյութի հետ ստ. ջրերի փոխազդեցության գործընթացների մասին: Զ. ուսումնասիրում է ստ. ջրերի հնքվ-երի առաջացման պայմանները, նրանց դերը երկրք. գործընթացներում և օգտակար հանածոների հնքվ-երի (մետաղային, նավթի, գազի, աղերի ևն) ձևավորման գործում, մշակում է տարբեր տիպի ստ. ջրերի հնքվ-երի որոնման, հետախուզման, ռեսուրսների գնահատման, պաշարների լրացման, ռեժիմի կարգավորման և այլ հարցեր: Բացի այդ, Զ. լուծում է քաղաքացիական, արդյունաբերական, ջրատեխ. ու մետրոլի կառուցումների, մելիորացիայի, օգտակար հանածոների հնքվ-երի շահագործման և այլ տեխնածին աշխատանքների ինժեներական ապահովման գործնական հարցեր: Զ. ընդգրկում է հետևյալ բաժինները. 1) ընդհանուր Զ., 2) ստ. ջրերի դինամիկա (ջրաերկրադինամիկա), 3) ջրաերկրաքիմիա (ստ. ջրերի երկրաքիմիա), 4) ջրաերկրք. հետազոտությունների մեթոդներ (ստ. ջրերի որոնում և հետախուզում, 5) օգտակար հանածոների հնքվ-երի, Զ. (հանքարանային Զ.), 6) ուսմունք հանքային ջրերի մասին, 7) ուղիոջրաերկրաբանություն, 8) ռեգիոնալ Զ., 9) մելիորատիվ Զ.: Վերջին տարիներին առանձնացվում են նաև նոր ուղղություններ. ա) ուսմունք ստ. ջրերի հնքվ-երի մասին, բ) ուսմունք ստ. ջրերի ռեժիմի և հաշվեկշռի մասին, գ) ջրաերկրք. մոդելացում, դ) կրիոջրաերկրաբանություն (բազմամյա սառցույթի զոնայի Զ.): Թվարկած նոր ուղղությունները ներկայումս աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն բաժինների իրավունք:

**ГИДРОГЕОХИМИЯ** — ԶՐԱԵՐԿՐԱՔԻՄԻԱ, գիտություն ստ. ջրերում քիմ. տարրերի և նրանց միացությունների տեղազաղթի մասին՝ կապված ջրերի ձևավորման ու տեղադրման երկրք. իրադրության հետ: Ըստ Օ. Ա. Ալյոկինի, գիտություն, որն ուսումնասիրում է բոլոր բնական ջրերի քիմ. բաղադրությունը և նրա փոփոխությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ՝ ֆիզ., քիմ. և կենսբ. գործընթացների փոխադարձ պատճառական կապի շնորհիվ: Հոմանիշ՝ ստ. ջրերի երկրաքիմիա:

**ГИДРОГРАФ РЕКИ** — ԳԵՏԻ ԶՐԱԳԻՐ (ՀԻԴՐՈԳՐԱՖ), գետի ջրի ծախսի փոփոխության գրաֆիկ՝ որոշակի ժամանակահատվածի համար (տարեկան, սեզոնային, վարարման ևն): Գ. շ. կազմվում է գետի հոսքի բաղադրիչների առանձնացման համար:

**ГИДРОГРАФИЧЕСКАЯ СЕТЬ** — ԶՐԱԳՐԱԿԱՆ ՑԱՆՑ, որևէ տարածքում գետերի (ջրանցքների) ու այլ ժամանակավոր մակերևութային հոսքերի, լճերի և ճահիճների համակցություն:

**ГИДРОДИНАМИКА** — ԶՐԱԳԻՆՍՄԻԿԱ, ջրամեխանիկայի բաժին, գիտություն՝ արտաքին ուժերի ազդեցության շնորհիվ հեղուկի շարժման և հեղուկի ու նրա հետ շփվող մարմինների հարաբերական շարժման ժամանակ մեխ. փոխազդեցության մասին:

**ГИДРОДИНАМИКА ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐԱՅԱ ԶՐԱԳԻՆՍՄԻԿԱ, ջրադինամիկայի նյութային ուղղություն, որն ուսումնասիրում է ծակոտկեն ու ճեղ-

քավոր ապարներում ջրի և այլ հեղուկների շարժման օրինաչափությունները: Ս. ջ. կիրառություն ունի ստ. ջրերի քանակական հաշվարկներում և նավթային ջրակերպաբանությունում:

ГИДРОДИНАМИЧЕСКИЙ МЕТОД — ՋՐԱԴԻՆԱՄԻԿ (ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿ) ՄԵԹՈԴ, ստ. ջրերի ծախսի, մակարդակի իջեցման և ծծանցման հոսքի բնութագրումների որոշման հաշվարկային մեթոդ, որը հիմնված է ստ. ջրադինամիկայի քանաձևերի վրա:

ГИДРОДИНАМИЧЕСКИЙ НАПОР — ՋՐԱԴԻՆԱՄԻԿ (ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿ) ԾՆԾՈՒՄ, ճնշում, որը ջրաշիթերը գործադրում են ապարի մասնիկների վրա: Թվապես Ջ. ճ. հավասար է ճնշման գրադիենտին: Եթե Ջ. ճ. գերազանցում է ճնշման գրադիենտի կրիտիկական մեծությունը, ապա տեղի է ունենում ապարի մանր մասնիկների մեխ. տարրալուծում (սուֆոզիա): Նման գործընթացներ ու երևույթներ հաճախ են դիտվում ջրանցքների պաստառի թեքությունների վրա կամ պատվարների ստորին ջրամասում (բլեֆում):

ГИДРОЗОЛИ — ՋՐԱԶՈՒԵՐ, քիմ. համակարգեր, որտեղ կոլոիդ մասնիկներից շրջապատող հեղուկ (դիսպերս միջավայր) է հանդիսանում ջուրը:

ГИДРОИЗОБАТЫ — ՋՐԱԻԶՈԲԱԹԵՐ, գծեր (քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են գրունտային ջրերի հայելու՝ երկրի մակերևույթից միևնույն խորության վրա գտնվող կետերը:

ГИДРОИЗОГИПСЫ — ՋՐԱԻԶՈԳԾԵՐ (ՋՐԱԻԶՈՀԻՊՍԵՐ), գծեր (քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են գրունտային ջրերի հայելու միևնույն բարձրության կետերը: Ջ. արտահայտվում են բացարձակ կամ հարաբերական նիշերով՝ կախված համեմատության հարթության ընտրությունից (ծովի մակերևույթ կամ որևէ պայմանական հարթություն):

ГИДРОИЗОПЬЕТЫ — ՋՐԱԻԶՈՊԻԵՏՆԵՐ, գծեր (ուղղաձիգ կտրվածքում), որոնք միացնում են ջրի մակարդակի միևնույն բարձրության կետերը հորատանցքերում և այլ փորվածքներում կամ հողի միատեսակ խոնավության կետերը՝ տարբեր խորությունների վրա: Ջ. կազմվում են տարբեր ժամանակահատվածների համար (տասնօրյա, ամսական, սեզոնային) և հնարավորություն են տալիս պարզելու գետնաջրերի մակարդակի ու հողի խոնավության դինամիկան:

ГИДРОИЗОПЬЕЗЫ — ՋՐԱԻԶՈՊԻԵԶՆԵՐ (ՊԻԵԶՈՒԶՈԳԾԵՐ), գծեր (քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են ճնշումնային ջրատար հորիզոնի հավասար ճնշման կետերը: Ջ. արտահայտվում են բացարձակ կամ հարաբերական նիշերով՝ կախված համեմատության հարթության ընտրությունից (ծովի մակերևույթ կամ որևէ պայմանական հարթություն):

ГИДРОИЗОТЕРМЫ — ՋՐԱԻԶՈԶԵՐՄԵՐ (ՋՐԱԻԶՈԹԵՐՄԵՐ), գծեր (ուղղաձիգ կտրվածքում, քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են դիտարկվող հորիզոնի ջրի միևնույն ջերմաստիճան ունեցող կետերը:

**ГИДРОИНДИКАТОРЫ** — ՋՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ (ՋՐԱԽՆԴԻԿԱՏՈՐՆԵՐ), լանդշաֆտի բաղադրատարրեր հանդիսացող ռելիեֆի ու բուսականության օրինաչափ համակցություն, որոշակի բուսական համալքներ, նույնիսկ առանձին բուսատեսակներ, որոնք օգտագործվում են որպես առ. ջրերի առկայության, նրանց տեղադրման խորության, հանքայնացման աստիճանի (աղիության) և քիմ. բաղադրության ցուցանիշներ: Տարբերում են ուղղակի և անուղղակի Ջ.: Ուղղակի Ջ. են խոնավատեր (տե՛ս *Фреатофиты*) և աղատեր (տե՛ս *Галофиты*) բուսատեսակները, որոնք բնորոշվում են գրունտային ջրերի հետ անմիջական կապով: Նրանց միջոցով հնարավոր է դատել գրունտային ջրերի տեղադրման խորության, հանքայնացման աստիճանի և առանձին դեպքերում նաև ջրի մեջ որոշակի տարրերի բարձր պարունակության մասին: Անուղղակի Ջ-ի միջոցով կարելի է մոտավոր պատկերացում կազմել ջրաերկրք. պայմանների, տեղական սահմանափակ տարածման առ. ջրերի ձևավորման և ռեժիմի մասին (մասնավորապես, անապատների ավազաթմբերում քաղցրահամ ջրերի ոսպնյակների, ենթաթակիրային, ենթալիմնալային ոսպնյակների ձևավորման մասին), անուղղակի ձևով կարելի է կանխորոշել գրունտային ջրերի տեղադրման խորությունը և հանքայնացման աստիճանը:

**ГИДРОИНДИКАЦИЯ** — ՋՐԱԽՆԴԻԿԱՑԻԱ, լանդշաֆտի բաղադրատարրերի (ռելիեֆի ու բուսականության) օգտագործումը ջրաերկրք. պայմանների որոշման գործում: Ջ. հնարավորություն է տալիս դատել առ. ջրերի առկայության, նրանց տեղադրման խորության, հանքայնացման աստիճանի և քիմ. բաղադրության մասին:

**ГИДРОКАРБОНАТНЫЕ ВОДЫ** — ՋՐԱԿԱՐԲՈՆԱՏԱՑԻՆ ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնց քիմ. բաղադրության մեջ գերիշխող անիոն է հանդիսանում ջրակարբոնատ իոնը:

**ГИДРОЛАККОЛИТЫ** — ՋՐԱԼԱԿՈԼԻՏՆԵՐ (ՀԻԴՐՈԼԱԿՈԼԻՏՆԵՐ), բազմամյա սառցույթի գոտում տարածված ուռչման բլուրներ, որոնք առաջանում են գրունտային ջրերի առչումից և ունենում են մինչև 40—50 մ բարձրություն: Ջ-ի միջուկը կազմված է համատարած սառույցի ոսպնյակից կամ սառցով շերտավորվող սառած հողագրունտներից: Տարբերում են. 1) անդրբայկալյան տիպի Ջ., որոնք առաջանում են աղբյուրների ելքի տեղում և կոչվում են բլիթներ, 2) լակոտական տիպի Ջ., որոնք առաջանում են ճահճային, կամ ծանծաղ լճային գոգավորություններում և կոչվում են բուլգունյակներ (տե՛ս *Булгуняхи*):

**ГИДРОЛИЗ** — ՋՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՄ (ՀԻԴՐՈԼԻԶ), փոխանակման տարրալուծման ռեակցիա՝ ջրի և տարրեր քիմ. միացությունների միջև, որոնք ջրի ներգործությամբ տարրալուծվում և միանում են նրա իոնների հետ: Օր.,  $AlCl_3 + 3H_2O \rightarrow Al(OH)_3 + 3HCl$ : Ջ. ենթակա միացություններից են սիլիկատները, ալյումաալիկատները, որոշ աղեր, բարդ էթերալուղեր ևն: Ջ. հանդիսանում է բազմաթիվ բնական և տեխնոլոգիական գործընթացների հիմք: Բնական Ջ. արդյունք են օխրսն, գորշ երկաթաքարերը, ալյումինիումի ջրօքսիդները ևն:

**ГИДРОЛОГИЧЕСКИЙ ГОД** — ՋՐԱԲԱՆԱԿԱՆ (ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ) ՏԱՐԻ, ջրաբանությունում (հաճախ նաև ջրաերկրաբանությունում) ընդունված տարվա ժամանակամիջոց, որը հաշվվում է ոչ թե օրացուցային տարվա սկզբից, այլ հոկտեմ-

քեր (կամ նույնքեր) ամսի սկզբից մինչև հաջորդ տարվա սեպտեմբեր (կամ հոկտեմբեր) ամսի վերջը: Ջ. տ. ավելի լիարժեք ջրաօդերևութաբանական նյութ է տալիս գետային հոսքի ուսումնասիրության և ջրահաշվեկշռային հաշվարկումների համար:

**ГИДРОЛОГИЯ** — ՋՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀԻԴՐՈԼՈԳԻԱ), գիտություն, որը զբաղվում է երկրի մակերևույթի վրա տարածված ջրերի և նրանց մեջ տեղի ունեցող գործընթացների ու երևույթների օրինաչափությունների ուսումնասիրությամբ: Կախված ջրային օբյեկտների առանձնահատկություններից և նրանց ուսումնասիրության մեթոդներից, Ջ. ստորաբաժանվում է 2 խոշոր բաժինների. 1) օվկիանոսագիտություն (ծովի Ջ.), 2) ցամաքի Ջ. կամ բուն Ջ.: Վերջինը զբաղվում է ցամաքի մակերևույթային ջրերի ուսումնասիրությամբ և իր հերթին բաժանվում է. ա) գետերի Ջ. (կամ պոտամոլոգիա), բ) լճերի Ջ. (կամ լիմնոլոգիա) և, գ) ճահիճների Ջ. (կամ ճահճագիտություն): Որոշ մասնագետներ բոլորովին անհիմն Ջ. բաժին են համարում նաև ջրաերկրաբանությունը, որն ըստ էության երկրբ. ցիկլի գիտություն է:

**ГИДРОМЕТРИЯ** — ՋՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, ջրաբանության (հիդրոլոգիայի) բաժին, որը քննարկում է մակերևույթային ջրերի (գետերի, լճերի, ծովերի) ռեժիմի ուսումնասիրման նպատակով տարվող բոլոր տեսակի չափումների ու դիտումների ձևերը և մեթոդները:

**ГИДРОМЕХАНИКА** — ՋՐԱՄԵԽԱՆԻԿԱ, մեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է հեղուկների շարժման ու հավասարակշռության օրենքները և նրանց փոխազդեցությունը ողողվող կարծր նյութերի հետ: Ջ. ստորաբաժանվում է ջրադինամիկայի (ուսումնասիրում է հեղուկների շարժումը) և ջրաստատիկայի (ուսումնասիրում է հեղուկների հավասարակշռության պայմանները):

**ГИДРОМОДУЛЬ** — ՋՐԱՄՈԴՈՒԼ (ՀԻԴՐՈՄՈԴՈՒԼ), ջրի քանակ, որը պետք է տալ ոռոգվող յուրաքանչյուր հեկտար հողատարածությանը ոռոգման ժամանակամիջոցի տարբեր պահերին:

**ГИДРОСАЛЬЗЫ** — ՋՐԱՍԱԼՋԵՐ (ՀԻԴՐՈՍԱԼՋԵՐ), ջրացեխային բլրակներ, որոնք առաջանում են բազմամյա սառցույթի գոտիներում հանքային լճերի ափամերձ ջրալակոլիտներից: Ջ. լայնորեն տարածված են Անդրբայկալում:

**ГИДРОСОЛЬФАТАРЫ** — ՋՐԱՍՈԼՖԱՍԱՐՆԵՐ (ՀԻԴՐՈՍՈԼՖԱՍԱՐՆԵՐ), ջրային գոլորշիներով հարուստ ծծմբային ֆումարոլներ (տե՛ս Գумаролы):

**ГИДРОСТАТИКА** — ՋՐԱՍՍՏՏԻԿԱ, ջրամեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է հեղուկների հավասարակշռության պայմանները:

**ГИДРОСТАТИЧЕСКИЙ (ПЬЕЗОМЕТРИЧЕСКИЙ) УРОВЕНЬ** — ՋՐԱՍՍՏՏԻԿ (ՀԻԴՐՈՍՍՏՏԻԿ, ՊԻԵԶՄԵՏՐԻԿ) ՄԱԿԱՐԳԱԿ, մակարդակ, մինչև որը ստ. ջուրը բարձրանում է հորատանցքում կամ ջրհորում: Ջ. մ. հաշվում են բացարձակ (ծովի մակերևույթից) կամ հարաբերական միջերով (ընդունած պայմանական հարթությունից): Հումանիշ՝ ջրաստատիկ ճնշում:

ГИДРОСТАТИЧЕСКОЕ ДАВЛЕНИЕ — ՋՐԱՍՍՍՏԻԿ (ՀԻԴՐՈՍՍՏԻԿ) ԾՐՆ-  
ԾՈՒՄ, ջրի (եղուկի) պան ճնշումը՝ հաշված պայմանական մակարդակից: Այն չափ-  
վում է ջրի պան բարձրությամբ (մ) կամ մթնոլորտային ճնշմամբ (մթն.): Ջրաերկ-  
րաբանությունում «Ջ. ճ.» տերմինը հաճախ օգտագործվում է անշարժ ստ. ջրերի  
ճնշումն արտահայտելու համար (ի հակադրություն շարժվող ջրերի ջրադինամիկ  
ճնշման): Հումանիշ՝ ջրատաստիկ մակարդակ:

ГИДРОСФЕРА — ՋՐՈՒՈՐՏ (ՋՐԱՊՍՅՅԱՆ), ոչ համատարած երկրորդրտ  
(երկրապատյան), որը տեղադրված է մթնոլորտի ու քարոլորտի (քարապատյանի)  
միջև և զբաղեցնում է երկրի մակերևույթի շուրջ 71 %: Ջ. ներկայացված է օվկիա-  
նոսներով ու ծովերով, սառցածածկով և ցամաքի մակերևույթային ջրերով (լճերով  
ու գետերով): Համաձայն նորագույն տվյալների, Ջ-ի ծավալը կազմում է  
1394,6 մլն. կմ<sup>3</sup> (երկրի ծավալի մոտ 1/800 մասը), որի 98,26 % գտնվում է օվկիա-  
նոսներում, 1,72 %՝ ցամաքային սառույցներում և ընդամենը 0,02 %՝ լճերում ու  
գետերում: Ջ. մթնոլորտի և քարոլորտի հետ գտնվում է բարդ փոխազդեցության  
մեջ, ընդ որում, Ջ. -քարոլորտ սահմանում տեղի են ունենում նստվածքատառչազ-  
ման հիմնական գործընթացները: Ջ. հանդիսանում է կենսոլորտի մի մասը. այն ամ-  
բողջապես բնակեցված է կենդանական ու բուսական օրգանիզմներով, որոնք ներ-  
գործում են ջրի բաղադրության վրա: Ջ-ի առաջացումը կապված է «Երկիր» մո-  
լորակի տևական զարգացման և նրա սկզբնական տարբերակման հետ:

ГИДРОСФЕРА ПОДЗЕМНАЯ — ՍՏՈՐԵՆԿԻՅԱ ՋՐՈՒՈՐՏ, ըստ Ֆ. Պ. Սա-  
վարենսկու. երկրակեղևի մաս, որի ջերմանճնշմանային պայմանները թույլ են տալիս  
բնական ջրերի գոյությունը: Ֆ. Ա. Մակարենկոյի հաշվարկների համաձայն, գրա-  
վիտացիոն ջրով ներկայացված Ս. ջ., որը երկրակեղևի մինչև 5 կմ խորությունը  
գրեթե համատարած բնույթ ունի, պարունակում է շուրջ 60 մլն. կմ<sup>3</sup> ջուր: Ս. ջ.  
զարգանում է երկրակեղևի հետ միասին և տարբեր աստիճանի ինտենսիվության  
կապ ունի մակերևույթային ջրոլորտի հետ:

ГИДРОТЕРМАЛЬНЫЕ РАСТВОРЫ — ՋՐԱԶԵՐՍՍՅԻՆ (ՀԻԴՐՈԹԵՐՍՍԱԼ)  
ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ, գազերով, մետաղական իոններով և այլ քիմ. տարրերով հարուստ  
տաք ջրային լուծույթներ, որոնք շրջանառում են երկրակեղևում և մասնակցում  
հանքային նյութերի տեղափոխման ու նստեցման գործընթացներին: Ջ. 1-ի հետ է  
կապված ջրաջերմածին մետաղական հնքվ-երի առաջացումը: Ջ. 1. մեծ տարածում  
ունեն ժամանակակից հրաբխականության շրջաններում, որտեղ նրանց գործունեու-  
թյան հետ են կապված վերափոխման ու հանքակուտակման գործընթացները, հանքա-  
յին աղբյուրների էլքերը: Հումանիշ՝ ջրաջերմեր կամ հիդրոթերմեր (տե՛ս Դիդրո-  
տերմ):

ГИДРОТЕРМАЛЬНЫЙ ПРОЦЕСС — ՋՐԱԶԵՐՍՍՅԻՆ (ՀԻԴՐՈԹԵՐՍՍԱԼ)  
ԳՈՐԾԸՆԹԱՑ, երկրաքիմ. գործընթաց, որը պայմանավորված է վերընթաց տաք  
ջրային լուծույթների գործունեությամբ: Այդ լուծույթներն առաջանում են խորքում՝  
երկրակեղևի մեջ ներդրված մագմայի ստեցման գործընթացում: Ջ. գ-ի օր. կարող են  
ծառայել ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երը, որոնք առաջացել են մագմատիկ  
օջախների տաք ջրային լուծույթներից անջատված միներալների նստեցման կամ  
տեղակալման ճանապարհով:

ГИДРОТЕРМЫ — ՋՐԱՋԵՐՄԵՐ (ՀԻԴՐՈԹԵՐՄԵՐ), տե՛ս Гидротермальные растворы:

ГИДРОХИМИЧЕСКАЯ КАРТА — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, ջրաերկրք. քարտեզի տեսակ, որի վրա արտացոլվում են ստ. ջրերի հանքայնացումը, քիմ. բաղադրությունը, ինչպես նաև որոշ բաղադրատարրերի տարածման օրինաչափությունները: Ջ. ք. կազմվում է մեծամասշտաբ (1 : 50000 և մեծ) ջրաերկրք. կամ հատուկ ջրաքիմ. հանույթի դեպքում:

ГИДРОХИМИЧЕСКИЕ ПОИСКОВЫЕ КРИТЕРИИ — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՉԱՓԱՆԻԹՆԵՐ, բնական (գլխավորապես ստ.) ջրերի մեջ որոշ բաղադրիչների (լուծված իոնների, գազերի, կենսածին և այլ միացությունների) խտտորիչ բարձր պարունակություն և խտտորիչ pH, որոնք ցույց են տալիս տվյալ շրջանում որոշակի օգտակար հանածոների առկայությունը: Հոմանիշ՝ ջրաքիմ որոնողական ցուցանիշներ:

ГИДРОХИМИЧЕСКИЕ ФАЦИИ — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՖԱՑԻԱՆԵՐ, վերերկրյա և ստ. ջրոլորտների տեղամասեր, որոնք բնութագրվում են ջրաքիմ. միատեսակ պայմաններով՝ քիմ. բաղադրությամբ, pH-ով, Eh-ով և այլ ցուցանիշներով:

ГИДРОХИМИЧЕСКИЙ МЕТОД ПОИСКОВ РУДНЫХ МЕСТОРОЖДЕНИЙ — ՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈՂ, մետաղային օգտակար հանածոների հնքվ-երի որոնման նպատակով բնական (գլխավորապես ստ.) ջրերի քիմ. բաղադրության առանձնահատկությունների ուսումնասիրություն: Բնական պայմաններում հանքային մարմինների քայքայումը (օքսիդացում, տարրալուծում ևն) պայմանավորում է նրանց հետ առնչվող ստ. ու մակերևութային ջրերի քիմ. բաղադրության հարստացումը՝ ընդհուպ մինչև տվյալ հանքայնացման տարրերի խտտորիչ բարձր պարունակությունը: Մ. հ. ո. ջ. մ. սովորաբար զուգորդվում է որոնողական այլ մեթոդների հետ և դառնում է ավելի արդյունավետ:

ГИДРОХИМИЧЕСКИЙ ПРОФИЛЬ — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԿՈՂԱՊՍԿԵՐ (ՊՐՈՖԻԼ), կողպատկեր, որի վրա արտացոլվում է տարածության մեջ ստ. ջրերի հանքայնացման, քիմ. կազմի, նրա որոշ բաղադրատարրերի, pH-ի, Eh-ի և այլ ցուցանիշների փոփոխությունները:

ГИДРОХИМИЯ — ՋՐԱՔԻՄԻԱ (ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱ, ՀԻԴՐՈՔԻՄԻԱ), գիտության բաժին, որն ուսումնասիրում է մթնոլորտային տեղումների, մակերևութային և ստ. ջրերի հանքայնացումն ու քիմ. բաղադրությունը, դիտարկում է քիմ. բաղադրության փոփոխությունները՝ շրջապատող միջավայրի ֆիզ., քիմ. և կենսագործընթացների փոխադարձ պատճառական կապի մեջ: Ջրի (մասնավորապես ստ. ջրի) ծագման և ձևավորման հարցերի պարզաբանման տեսակետից Ջ-ի և ջրաերկրաքիմիայի խնդիրները գրեթե համընկնում են (տե՛ս Гидрогеохимия):

ГИПЕРТЕРМАЛЬНЫЕ ВОДЫ — ԾԱՏ ՏԱՔ (ՀԻՊԵՐԹԵՐՄԱԼ) ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնց ջերմաստիճանը տատանվում է 42—100° Ց սահմաններում:

ГЛАВНЫЙ (ОСНОВНОЙ) ВОДОНОСНЫЙ ГОРИЗОНТ — ԳԼԽԱՎՈՐ (ՀԽՄՆԱՎԱՆ) ԶՐԱՏԱՐ ՀՈՐԻԶՈՆ, տվյալ ջրակրքը կտրվածքում առավել ջրառատ հորիզոն (շերտ, ապար), որի միջոցով կարելի է լուծել ջրամատակարարման խընդիրները: Ինժեներական երկրաբանությունում երբեմն Գ. ջ. հ. են անվանում այն հորիզոնը, որը երկրք գործընթացների (սողանքներ, սուֆոզիա) զարգացման գործում կատարում է հիմնական դեր:

ГЛЕТЧЕР — ԳԼԵՏՉԵՐ, հովտային սառցադաշտ:

ГЛИНИСТАЯ СУСПЕНЗИЯ — ԿԱՎԱՅԻՆ ԿԱՆՈՒՅԹ (ՍՈՒՍՊԵՆԶԻԱ), դիսպերս համակարգ, որում որպես միջավայր ծառայում է ջուրը, իսկ դիսպերս (ցրված) փուլը (բաղադրիչը) ներկայացված է կավային մասնիկներով:

ГЛИНИСТАЯ ФРАКЦИЯ — ԿԱՎԱՅԻՆ ՀԱՏԻԿԱՆՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ), փոխարրուսների կազմի մեջ մտնող մասնիկների խումբ, որոնք չափերը չեն գերազանցում 0,001 մմ-ից (ինժեներական երկրաբանությունում) կամ 0,005 մմ-ից (ջրաերկրաբանությունում): Կ. հ. հիմնականում կազմված է կավային միներալներից (տե՛ս Глинистые минералы) և որոշվում է գրունտի մյուս հատիկախմբերի կշռնկատմամբ %-ներով:

ГЛИНИСТЫЕ МИНЕРАЛЫ — ԿԱՎԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, երկրորդային ծագման ջրային սիլիկատներ, ալյումապիլիկատներ և երկաթապիլիկատներ, ինչպես նաև կալցիքարի, երկաթի ու ալյումինի պարզ և հիդրատային օքսիդներ, որոնք կազմում են կավերի, արգիլիթների և նուրբ հատիկախմբով (<0,005 մմ) նստվածքային այլ ապարների հիմնական զանգվածը: Առավել տարածված Կ. մ-ից են կաոլինիտը, մոնտորիլոնիտը, բեյդելիտը, հալուազիտը, իլիտը ևն:

ГЛИНИСТЫЙ (ПУСТЫННО-ГЛИНИСТЫЙ) КАРСТ — ԿԱՎԱՅԻՆ (ԱՆԱՊԱՏԱԿԱՎԱՅԻՆ) ԿԱՐՍՏ, կարրոնատային ու գիպսատար կավերի, ավազակավերի և մերգելների հետ կապված սուֆուզիոն և կարստային երևույթների (տե՛ս Суффозия, Карст) համակարգ: Կ. կ. առավել բնորոշ է Միջին Ասիայի նախալեռնային շրջաններին:

ГЛИНИЗАЦИЯ СКВАЖИН — ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ԿԱՎԱՊԱՏՈՒՄ, հորատման գործընթացում հորատանցքի պատերի ամրացում կավապատման միջոցով: Այն իրականացվում է պտտական հորատման ժամանակ հորատանցքի մեջ կավային թանձր լուծույթ ներմղելով, որը մասամբ ներթափանցում է կողային ապարների մեջ և սվաղում պատերը: Երբեմն Հ. կ. կատարվում է զուտ ստ. ջրերի ներհոսքը դեպի հորատանցք արգելակելու նպատակով:

ГЛУБИНА ПРОМЕРЗАНИЯ — ՍԱՌԵՑՄԱՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ, խորություն, մինչև որը տվյալ վայրում գրունտները սառչում են:

ГЛУБИННАЯ ЭРОЗИЯ — ԽՈՐԲԱՅԻՆ ՈՂՈՂԱՄԱՇՈՒՄ, ուղղաձիգ ողողամաշում, որի հետևանքով տեղի է ունենում ձորակների ու գետահունների հատակի

խորացում և գետերը մխրճվում են հովտի մեջ: Առավել ինտենսիվ **Խ. ո.** դիտվում է լեռնային գետերի մոտ: Հոմանիշ՝ գծային ողողամաշում:

**ГЛУБИННЫЕ ВОДЫ** — ԽՈՐՔԱՅԻՆ ՋՐԵՐ, երկրակեղևի խորքային մասերում տեղադրված ստ. ջրեր, որոնք կարող են ունենալ ինչպես հրաբխային, այնպես էլ ներծծման և նստվածքակուտակման (սելիմենտացիոն) ծագում:

**ГЛУБИННЫЕ ПАРЫ ВОДЫ** — ԽՈՐՔԱՅԻՆ ՋՐԱԳՈՒՈՐԾԻՆԵՐ, երկրակեղևի խորքային մասերից բարձրացող ջրագոյորշիներ, որոնք կարող են ունենալ տարբեր ծագում:

**ГЛУБИННЫЙ ДЕБИТОМЕР (РАСХОДОМЕР)** — ԽՈՐՔԱՅԻՆ ԾԱԽԱԱԶԱՓ, սարք, որի օգնությամբ հորատանցքում տարբեր խորությունների վրա չափվում է հեղուկի (ջրի, նավթի) ծախսը: **Խ. ծ-**երը կոչված են տարբեր ջրատար հորիզոնների կամ նավթաբեր շերտերի ծախսը որոշելու համար: Ներկայումս օգտագործվում են տարբեր տեսակի ու չափերի նոր **Խ. ծ-**եր, որոնք ունեն ավտոմատ հաշվիչներ:

**ГЛУБИННЫЙ МАНОМЕР** — ԽՈՐՔԱՅԻՆ ԾՆԾՈՒՄՆԱԶԱՓ (ՄԱՆՈՄԵՐ), սարք, որի օգնությամբ հորատանցքում տարբեր խորությունների վրա չափվում է ջրատյար հորիզոնների ու նավթագազաբեր շերտերի ճնշման մեծությունը: Ներկայումս ստեղծվել են **Խ. ճ-**ի կատարելագործված տեսակներ, որոնք թույլ են տալիս անընդհատ կամ պարբերաբար չափել փոփոխական ճնշումները և արդյունքները հաղորդել երկրի մակերևույթ:

**ГЛЯЦИОЛОГИЯ** — ՍԱՌՑԱԴԱՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ուսմունք սառցադաշտերի մասին: Այն ուսումնասիրում է սառցադաշտերի առաջացման, տարածման, գոյության և շարժման պայմանները, սառցի կազմը, կառուցվածքն ու ֆիզ. հատկանիշները, ինչպես նաև սառցադաշտերի երկրբ. և երկրաձևաբանական գործունեությունը:

**ГОДОВОЙ КОЭФФИЦИЕНТ ВОДОБИЛЬНОСТИ ИСТОЧНИКА** — ԱՂԲՅՈՒՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՋՐԱՌՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, գործակից (**C**), որն արտահայտում է որևէ տարում աղբյուրի տարեկան ծախսի հարաբերությունը նրա բազմամյա տարեկան միջին ծախսին (նորմին).  $C = \frac{N_{1,2,\dots,n}}{N_p}$ , որտեղ՝  $N_{1,2,\dots,n}$ -ը աղբյուրի չափված տարեկան ծախսերն են,  $N_p$ -ն աղբյուրի ծախսի նորմն է: Ա. տ. ջ. գ. մոտավոր ցուցանիշ է, քանի որ աղբյուրի ծախսը բազմամյա կտրվածքում փոփոխական մեծություն է:

**ГОЛОВКА (ГРИФОН) ИСТОЧНИКА** — ԱՂԲՅՈՒՐԻ ԳՂԽԻԿ (ԳՐԻՖՈՆ), երկրի մակերևույթի վրա ստ. ջրերի առանձին կենտրոնացված ելք, որը վերընթաց շարժման հետևանքով ունենում է սնվածև, ցայտաղբյուրային գլխիկի (գրիֆոնի) տեսք:

**ГОЛЬЦОВАЯ ЗОНА** — ԲՈՒՍԱԶՈՒՐԿ (ԼԵՐԿ) ՋՈՆՍ, լերկ զոնա, որը տեղադրված է անտառային բուսականության սահմանագծից վերև: Բ. գ. բնութագրվում է ֆիզ. հողմահարման ինտենսիվությամբ, որի հետևանքով մերկասարերի լանջերը

պատվում են քարաբեկորներով, ցրոններով ու մանրախճով, որոնց միջից տեղ-տեղ վեր են խոյանում հողմահարմանը դիմակայուն ժայռեր՝ պատերի, պլուների և զբմ-քեթքների ձևով:

ГОРИЗОНТ ИЗОТЕРМИЧЕСКОГО ТЕПЛООБМЕНА (НУЛЕВАЯ, ФАЗОВАЯ ЗАВЕСА) — ԻՋՈԹԵՐՄԻԿ ԶԵՐՄԱՓՈՒՍԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՐԻԶՈՆ (ԶԵՐՈՅԱՎԱՆ ՎԱՐԱԳՈՒՅՐ, ՔՈՂ), օդահագեցման զոնայի սպարների հորիզոն, որը տարվա որոշակի ժամանակահատվածում ունի կայուն զերոյական կամ բացասական ջերմաստիճան: Այդ հորիզոնի առաջացումը պայմանավորված է ջերմաստիճանի սեզոնային փոփոխությունների ժամանակ սպարների ջրի բյուրեղացման կամ սառցի հալման տևական գործընթացներով, որի հետևանքով ուղղաձիգ կտրվածքում հորիզոնը վարագուրում կամ քողավորում է ջերմափոխանակությունը:

ГОРНАЯ ВЫРАБОТКА — ԼԵՌՆԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔ, որոնողական-հետախուզական կամ շահագործողական նպատակների համար երկրակեղևում փորված կամ հորատված դատարկություն: Լ. փ. կարող է լինել մաս զուտ ջրաերկրք. կամ ինժեներաերկրք. նպատակների համար:

ГОРНОЕ ДАВЛЕНИЕ (ДАВЛЕНИЕ ГОРНЫХ ПОРОД) — ԼԵՌՆԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ (ԱՊԱՐՆԵՐԻ ԸՆԴԵՐՔԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ), լեռնային փորվածքները շրջապատող սպարների զանգվածում առաջացող ուժեր, որոնք ճնշում են գործադրում փորվածքների պատերի և ամրակապի վրա:

ГОРНО-САНИТАРНАЯ ОХРАНА ЛЕЧЕБНЫХ МЕСТНОСТЕЙ — ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԻ ԼԵՌՆԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, բուժիչ հանքաղբյուրների, լիմանների, լճերի, ծովի ափամերձ գոտիների, կլիմայական կայանների և առողջապահական նշանակություն ունեցող այլ շրջանների պահպանության միջոցառումներ՝ ուղղված այն ամենի դեմ, ինչ կարող է վնասակար ազդեցություն ունենալ առողջարանի հանգստի գոտու բուժիչ միջոցների ֆիզ. հատկությունների կամ քիմ. բաղադրության վրա: Հատկապես ուժեղացված հսկողություն է իրականացվում հանքային բուժիչ ջրերի աղբյուրների շրջանում: Ա. լ. ս. պ. սահմանվում է համապատասխան օրենսդրությամբ:

ГОРНЫЙ НАДЗОР — ԼԵՌՆԱՅԻՆ ՀՍՎՈՂՈՒԹՅՈՒՆ, երկրաբանահետախուզական արշավախմբերում և լեռնահանքային ձեռնարկություններում իրականացվող պետական հսկողության համակարգ, որն ապահովում է աշխատանքների կատարման անվտանգությունը, հնքվ-երի ճիշտ ու ուսցիոնալ շահագործումը, երկրաբանահետախուզական և մարկշեյդերական աշխատանքների հստակ կատարումը:

ГОРНЫЙ ОБВАЛ — ԼԵՌՆԱՅԻՆ ՓԼՎԱԾՔ, գրավիտացիոն գործընթաց, որն արտահայտվում է լեռնալանջերից ժայռաբեկորների պոկման և փլուզման ձևով: Լ. փ. փլվածքների (տե՛ս Օбвалы) ստավել տարածված տարատեսակն է լեռնային կտրված ռելիեֆով տեղանքում:

ГОРНЫЙ ОКРУГ ОХРАНЫ — ԼԵՌՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ, տարածք, որի սահմաններում օրենսդրությամբ, առանց ընդերքասանիտարական պահպանության հատուկ թույլտվության, արգելվում է հետախուզական, շահագործողական, շին. և

այլ աշխատանքներ կատարելը: Նման արգելափակումները նպատակ են հետապնդում անխաթար պահել լեռնահանքային օբյեկտների և առողջարանների լեռնասանիտարական բնական իրավիճակը:

ГОРНЫЙ УДАР — ԸՆԴԵՐՔԱՅԻՆ (ԼԵՌՆԱՅԻՆ) ՀԱՐՎԱՄ, ստ. փորվածքների պաշտպանական բնահենակներում (բնամասերում) գերլարվածության հետևվանքով քարաբեկորների ուժգին պոկվել-շարտվելու գործընթաց, որն ուղեկցվում է ցնցումով և օդալիքի հարվածով: Ը. հ. առաջանում է մեծ խորություններում՝ լեռնային ճնշման մեծացմանը զուգընթաց:

ГОРЧИНА (СОЛЯНАЯ ЗАСУХА) — ԱՂԱՓԱՌ (ԱՂԱՅԻՆ ՉՈՐՈՒՅԹ), աղի բարակ փառ (աղաչորույթ), որով հողագրունտների մակերևույթը պատվում է չոր կլիմայական պայմաններում: Տերմինը լայնորեն տարածված է Արևմտյան Սիբիրում:

ГОРЬКИЕ ИСТОЧНИКИ — ԳԱՌՆԱՀԱՄ ԱՂՋՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնց ջրերի մեջ համեմատաբար բարձր է սուլֆատների, մագնիումի աղերի պարունակությունը և ջրի չորամնացուկը գերազանցում է 1 գր/լ-ից:

ГОСУДАРСТВЕННАЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ КАРТА — ՊԵՏԱԿԱՆ ԶՐԱԵՐՎԱՐԱՅԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, նախկին ԽՍՀՄ տարածքի որոշակի մասշտաբի ջրաերկր. քարտեզ, որը կազմված է միջազգային ստորաբաժանման թերթերի (պլանշետների) վրա՝ միասնական սկզբունքներով և մեթոդիկաչափով: Պ. ջ. ք. ծառայում է ժողովնտեսության տարբեր բնագավառների պահանջները բավարարելու և գիտական նպատակների համար:

ГРАВИТАЦИОННОЕ УПЛОТНЕНИЕ ГОРНЫХ ПОРОД — ԱՂԱՐՆԵՐԻ ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ԽՏԱՑՈՒՄ (ԱՄՐԱՑՈՒՄ), նստվածքային ապարների քարացման (լիթիֆիկացիայի) գործընթացի հետևանքով կատարվող խտացում, որն ուղեկցվում է ապարների ծակոտկենության նվազմամբ և նրանց ծավալային կշռի մեծացմամբ:

ГРАВИТАЦИОННЫЕ ДВИЖЕНИЯ (ПЕРЕМЕЩЕНИЯ) — ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐ (ՏԵՂԱՇԱՐԺԵՐ), թեքությունների վրա մակերևույթային փոխարեկորային նորագոյացումների, նստվածքային հզոր շերտերի և ցցուն ժայռաբեկորների տարբեր արագությամբ կատարվող տեղաշարժեր, որոնք կատարվում են գրավիտացիոն ուժերի շնորհիվ: Գ. ջ. տեղի են ունենում երկրազնդի բոլոր լայնություններում և ցամաքած պայմաններում (ցամաքում, ջրի տակ), որի շնորհիվ նրանք արտածին գործընթացների շարքում համարվում են լերկացման (դեմոտացիայի) կարեւորագույն աղակ: Խոնավ ապարներում Գ. ջ. կարող են սկիզբ առնել ամենաառանձնաթեքություններում, իսկ չոր ապարներում (փոխարեկորային ծածկոցներում) դրանք սկսվում են 3—5°-ից բարձր թեքությունների դեպքում: Տարբերում են Գ. ջ-ի հետևյալ տիպերը. 1) չոր ապարների տեղաշարժեր՝ փլվածքներ, թափվածքներ, քարային կամ ձնե հոսքեր (տե՛ս Обвалы, Осыпи, Лавина), 2) խոնավ ապարների տեղաշարժեր՝ սողանքներ (տե՛ս Оползни), 3) գերխոնավ կամ ջրով գերհագեցած ապարների տեղաշարժեր (տե՛ս Оплывная, Плывун) և, 4) ապարներով հագեցած (մինչև 75 %) ջրային հոսքեր (տե՛ս Сель):

**ГРАВИТАЦИОННЫЕ ЯВЛЕНИЯ** — ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, գրավիտացիոն շարժումների (տե՛ս Գրավитационные движения) դրսևորման ձևեր: Օր., սողանքային գործընթացների արդյունքում դիտվում են սողանքային ճեղքավորման, աստիճանավորման, դարավանդների, կրկեսների ու լեզվակների առաջացման և այլ երևույթներ:

**ГРАВИТАЦИОННЫЙ РЕЖИМ** — ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ՌԵԺԻՄ, նավթային ջրաերկրաբանությունում՝ նավթակուտակի սշխատանքի ուժիմ, որի դեպքում նավթի շարժման էներգիայի աղբյուր է ծառայում հենց նավթի ծանրության ուժը: Սովորաբար ծանրության ուժը նշանակալից դեր է խաղում նավթակուտակի շահագործման փերջին ստադիայում:

**ГРАДИЕНТ ГИДРАВЛИЧЕСКИЙ** — ՀԻԳՐԱՎԼԻԿ ԳՐԱԴԻԵՆՏ, տե՛ս Напорный градиент:

**ГРАДИЕНТ МИНЕРАЛИЗАЦИИ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐՎՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ԳՐԱԴԻԵՆՏ, ստ. ջրհոսքի երկու կետերում (հորատանցք, ջրհոր) ջրի հանքայնացման արժեքների (գ/լ-երով) տարբերության հարաբերությունը այդ կետերի միջև եղած հեռավորության (կմ-երով): Այլ խոսքով, Ս. ջ. հ. գ. բնութագրում է ծծանցման ճանապարհին ջրերի հանքայնացման կրած փոփոխությունը, որը սովորաբար ունի ավելացման հակում:

**ГРАДИЕНТ ПОТОКА** — ՀՈՍՔԻ ԳՐԱԴԻԵՆՏ, տե՛ս Напорный (гидравлический) градиент:

**ГРАДУС ЖЕСТКОСТИ ВОДЫ** — ՋՐԻ ԿՈՇՏՈՒԹՅԱՆ ԱՍԽԻՄԱՆ, ջրի կոշտության արտահայտման հնացած ձև: Ջրի կոշտության գերմանական աստիճանին համապատասխանում էր 10 մգ/լ CaO, ֆրանսիական աստիճանին՝ 10 մգ/լ CaCO<sub>3</sub>, անգլիական աստիճանին՝ 14 մգ/գալոն CaCO<sub>3</sub> պարունակությունը են: Ներկայումս ջրի կոշտությունը գրեթե բոլոր երկրներում չափվում է մգ. համարժեքներով (տե՛ս Жесткость воды):

**ГРАДУСЫ (ШКАЛА) БОМЕ** — ԲՈՄԵԻ ԱՍԽԻՄԱՆՆԵՐ (ՍԱՆԴՂԱԿ), հեղուկի տեսակարար կշռի (խտության) պայմանական չափ, որը որոշվում է Բոմեի անունը կրող արեոմետրի սանդղակով: Սանդղակի 0 աստիճանին համապատասխանում է մաքուր ջրի խտությունը  $+15^{\circ}$  Ց, իսկ Բոմեի  $15^{\circ}$ -ին՝ կերակրի աղի 15%-անոց լուծույթի խտությունը: Բ. ա. հնարավորություն են տալիս արագ որոշելու լուծույթում աղերի պարունակությունը, ընդ որում, բավական մեծ ճշտությամբ՝ եթե լուծույթում NaCl-ը գերիշխում է մյուս աղերի նկատմամբ: Ըստ Բոմեի սանդղակի ցուցմունքի, փորձարկվող հեղուկի խտությունը (D) որոշելու համար օգտվում են հետևյալ քանաձևից.  $D = \frac{N}{N+p}$ , որտեղ՝ N-ը արեոմետրի հաստատուն գործակիցն է, որը  $+15^{\circ}$  Ց հավասար է 144,3, p-ը աստիճանների քանակն է, մինչ որը արեոմետրը խորասուզվում է փորձարկվող հեղուկում:

**ГРАММ-МОЛЕКУЛА (ГРАММ-МОЛЬ, МОЛЬ)** — ԳՐԱՄ-ՄՈՒԵԿՈՒԼ (ԳՐԱՄ-ՄՈՒ, ՄՈՒ), տվյալ նյութի այն քանակը, որի կշիռը գրամներով արտահայտելիս

թվապես հավասար է այդ նյութի մոլեկուլային կշռին: Օր., աղաթթվի (HCl) մոլեկուլային կշիռը հավասար է 36,5, 1 գր-մոլ HCl-ի կշիռը կլինի 36,5 գր:

ГРАММ-ЭКВИВАЛЕНТ (Г-ЭКВ) — ԳՐԱՄ-ՀԱՄԱՐԺԵՔ (ԳՐ.-ՀԱՄ.), նյութի գրամների քանակ, որը հավասար է նրա համարժեքին: Քիմ. տարրի գր-համ. հավասար է նրա գր.-ատոմի (գր.-մոլ.-ի) և արժեքականության քանորդին: Օր., 96 գր.-ատոմով երկարժեք սուլֆատ-իոնի ( $SO_4^{2-}$ ) գր.-համ. հավասար է  $96 : 2 = 48$ , կամ 40,08 գր.-ատոմով երկարժեք կալցիում-իոնի ( $Ca^{2+}$ ) գր.-համ. կլինի՝  $40,08 : 2 = 20,04$  նգ:

ГРАНИЦЫ ПОДЗЕМНОГО ВОДОСБОРА — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐՀԱՎԱԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐ, սահմանագծեր, որոնք եզրափակում են ստ. ջրհավաք ավազանի մակերեսը (տե՛ս Водосборный бассейн):

ГРАНИЧНЫЕ УСЛОВИЯ — ՍԱՀՄԱՆԱՅԻՆ (ԵԶՐԱՅԻՆ) ՊԱՅՄԱՆՆԵՐ, ջրաերկրաբանությունում՝ ջրատար հորիզոնների սնման կամ բեռնաթափման սահմանային (եզրային) մասերի պայմաններ: Շերտի սահմաններ ասելով, հասկացվում են ինչպես բնական (ջրատար հորիզոնի հետ հիդրավիկորեն կապված գետեր, սեպանև փակվող շերտի եզրագծեր ևն), այնպես էլ արհեստական (ջրհան կառույցներ) սահմանները: Ջրաերկրբ. մոդելացման ժամանակ շերտի եզրամասերում հաճախ տրվում են հետևյալ պայմանները. 1) ստաչին կարգի  $U$ . պ.- ծծանցման մարզի եզրամասերում՝ ճնշման արժեքը տրվում է՝  $H = \text{const}$  կամ  $H = f(t)$ , 2) երկրորդ կարգի  $U$ . պ.- սահմանում տրվում է ջրի ծախսը՝  $Q = \text{const}$  կամ  $Q = f(t)$ :


ГРАНУЛА — ԳՐԱՆՈՒԼԱ, բարդ կառուցվածքի կոլոիդային մասնիկի (միցելայի — տե՛ս Мицелла) մաս, որը բաղկացած է միջուկից և անմիջապես նրան պարփակող հակառակ լիցքավորման իոնների կալում թաղանթից:

ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ (МЕХАНИЧЕСКИЙ) АНАЛИЗ — ՀԱՏԻԿԱԶԱՓՈՒԿԱՆ (ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ) ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, փուխր ապարներ կազմող հատիկների չափերի և նրանց քանակական հարաբերակցության որոշում: Հ. ա. պարզագույն եղանակ է հանդիսանում մաղային մեթոդը, որի դեպքում 0,25 մմ-ից խոշոր մասնիկները տարբեր մաղերի միջոցով հեշտությամբ տարաբաժանվում են հատիկաչափական խմբերի, իսկ 0,25 մմ-ից փոքր մասնիկները ուսումնասիրվում են պղտորման մեթոդով (կախույթի ուսումնասիրման միջոցով — տե՛ս Взвесь): Կալային գրունտների Հ. ա. համար առավել կիրառական է խտաչափական մեթոդը (տե՛ս Ареометрический метод):

ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ (МЕХАНИЧЕСКИЙ, ЗЕРНОВОЙ) СОСТАВ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ՀԱՏԻԿԱԶԱՓՈՒԿԱՆ (ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ, ՀԱՏԻԿԱՅԻՆ) ԿԱԶՄ, ապարներում տարբեր չափերի հատիկախմբերի (ֆրակցիաների) կշռային պարունակությունը՝ արտահայտված %-ներով: Նստվածքային Ա. Բ. կ. որոշելու համար հիմք է ընդունվում Վ. Գ. Լոմտաձեի կողմից առաջարկված հատիկախմբերի դասակարգումը (տե՛ս աղ. 4):

Հատիկախմբի անվանումը		Ենթախմբի անվանումը	Մասնիկների չափսերը, մմ
հղկված մասնիկներ	չհղկված մասնիկներ		
Գետաքարային	Քարաբեկորային	խոշոր	> 800
		միջին	800—400
		մանր	400—200
Գլաքարային	Խճային	շատ խոշոր	200—100
		խոշոր	100—60
		միջին	60—40
		մանր	40—20
Կոպճային	Մանրախճային	խոշոր	20—10
		միջին	10—4
		մանր	4—2
Ավազային		կոպիտ	2—1
		խոշոր	1—0,5
		միջին	0,5—0,25
		մանր	0,25—0,1
		նուրբ	0,1—0,05
Փոշային մասնիկներ		խոշոր	0,05—0,01
		մանր	0,01—0,005
Կաժային մասնիկներ		կոպիտ նուրբ	0,005—0,001 < 0,001

ГРАФИК ГЕНЕТИЧЕСКОГО ТИПА ПОДЗЕМНЫХ ВОД — УСНОБԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԾՆԳՈՒՄՆԱՅԻՆ ՏԻՊԻ ԳՐԱՖԻԿ, ըստ Վ. Ա. Սուլինի, ստ. ջրերի քիմ. բաղադրության համակարգման գրաֆիկ եղանակ, որի համաձայն ստ. ջրերի ծագման և նրանց քիմ. բաղադրության միջև գոյություն ունի որոշակի օրինաչափ կապ: Ա. ջ. գ. տ. գ-ի կենտրոնը հանդիսանում է Օ կետը (նկ. 4), որտեղ  $rNa/rCl=1$ : Եթե ջրում  $rNa/rCl > 1$ , ապա այն ընկնում է ներքին քառակուսին, իսկ եթե  $rNa/rCl < 1$ ՝ վերին քառակուսին: Ջրերի ծագումը որոշելու համար օգտագործում են նաև իոնների հարաբերությունը (% համարժեքներով): Ներքին քառակուսու I և II եռանկյունների մեջ ընկնող սուլֆատ-նատրիումային ու ջրակարբոնատ-նատրիումային տիպի



Նկ. 4. Բնական ջրերի քիմ. բաղադրության գրաֆիկ (ըստ Վ. Ա. Սուլիցի)։

ջրերը ծագումնալին տեսակետից համապատասխանում են ցամաքային իրադրությանը, վերին քառակուսու IV եռանկյան մեջ ընկնող բլոր-մագնիումային տիպը՝ ծովային, իսկ III եռանկյան բլոր-կալցիումային տիպը՝ խորքային իրադրությանը։ Յուրաքանչյուր տիպի ջրերը ըստ գերիշխող աղիների ստորաբաժանվում են խմբերի (ջրակարբոնատային, սուլֆատային, բորիդային), ըստ որոշակի իոնների հարաբերության՝ դասերի, և ըստ գերիշխող կատիոնների՝ ենթախմբերի (կալցիումային, մագնիումային, առտրիումային)։

Ա. ջ. ծ. տ. գ-ի գլխավոր թերությունը ջրերի տեղաբաշխման ձևական հատկանիշն է։ Այսպես օր.,  $rNa/rCl$  կամ  $(rCl-rNa)/rMg$  ցուցանիշների նույնիսկ աննշան փոփոխության դեպքում ջուրը կարող է սխալմամբ վերագրվել այլ ծագումնալին տիպի։

ГРАФИК-КВАДРАТ — ԳՐԱՖԻԿ-ՔՍՈՒԿՈՒՍԻ, ստ. ջրերի քիմ. տարրալուծության արդյունքների համակարգման դիագրամային եղանակ, որը հնարավորություն է տալիս համեմատել ջրերի աղիոնային ու կատիոնային բաղադրությունը և հանքայնացման մեծությունը, ինչպես նաև որոշել ջրերի քիմ. բաղադրության կախվածությունը նրանց ծագումնալին պատկանելությունից ևն։ Գոյություն ունեն Գ. ք-ների մի քանի տարատեսակներ, որոնք ստավել հաճախ օգտագործվում են ստ. ջրերի քիմ. տարրալուծության արդյունքների նախնական համակարգման համար։ Ավելի գործածական են Ն. Ի. Տոլստիխինի Գ.-ք. (նկ. 5) և Ա. Ա. Բորոսկու Գ.-ք. (նկ. 6)։

ГРАФИК ТРЕУГОЛЬНИК — ԳՐԱՖԻԿ-ԵՌՈՒՆԿՅՈՒՆԻ, ստ. ջրերի քիմ. բաղադրության համակարգման դիագրամային եղանակ (նկ. 7), որի միջոցով արտահայտվում են ջրերի աղիոնային և կատիոնային բաղադրամասերը առանձին


$\leftarrow Na^+K^+ \rightarrow$

	100% համ	9	8	7	6	5	4	3	2	1		
$\uparrow$ $Ca^{2+}, Mg^{2+}$ $\downarrow$	20	19	18	17	16	15	14	13	12	11	$\downarrow$ $Cl^-, SO_4^{2-}$	
	30	29	28	27	26	25	24	23	22	21		
	40	39	38	37	36	35	34	33	32	31		
	50	49	48	47	46	45	44	43	42	41		
	60	59	58	57	56	55	54	53	52	51		
	70	69	68	67	66	65	64	63	62	61		
	80	79	78	77	76	75	74	73	72	71		
	90	89	88	87	86	85	84	83	82	81		
	100	99	98	97	96	95	94	93	92	91		
		0% համ										

Նկ. 5. Ն. Ի. Տոյստիխինի գրաֆիկ-քառակուսի:

Անիոն կա- ներ տիոններ	I ըստ գե- րիշխման	HCO <sub>3</sub> <sup>-</sup>	SO <sub>4</sub> <sup>2-</sup>	Cl <sup>-</sup>	
I ըստ գե- րիշխման	II ըստ գե- րիշխման գերիշխ.	Cl <sup>-</sup>	SO <sub>4</sub> <sup>2-</sup>	HCO <sub>3</sub> <sup>-</sup>	Cl <sup>-</sup>
	Mg <sup>2+</sup>				
	Na <sup>+</sup>				
	Ca <sup>2+</sup>				
	Mg <sup>2+</sup>				
	Ca <sup>2+</sup>				
	Na <sup>+</sup>				

Նկ. 6. Ա. Ա. Բրոդսկու գրաֆիկ-քառակուսի:



Նկ. 7. Գրաֆիկ-եռանկյունի՝ անիոնների և կատիոնների համար:

եռանկյունների վրա: Ինչպես Գրաֆիկ-քառակուսին (տե՛ս Գրաֆիկ-квадрат), Գ. և շատ գործածական է ջրաերկրք. որոնողական-հետախուզական աշխատանքների ժամանակ, երբ նախնական համակարգման են ենթարկվում ջրերի բազմաբանակ տարրալուծությունների տվյալները:

ГРИФОН — ՅԱՅՏԱՂԲՅՈՒՐ (ՅԱՅՏԱԾԻԹ, ԳՐԻՖՈՆ), ջրատար ապարների ճեղքերից ստ. ջրերի կենտրոնացված բնական էլք՝ որոշակիորեն արտահանված վերընթաց շնորժումով (շիբերով):

ГРОТ — ՔԱՐԱՅՐ, լայն էլրով և կամարածն առատադով ոչ խորը քարանձավ: Հաճախ Ք. են անվանում քարանձավի լայնացված էլքերը կամ ճեղ գետնողիներից հաջորդող ընդարձակ սրահները: Ք-երը կարստային գործընթացների արդյունք են և հաճախ նրանցում դիտվում են ստ. ջրերի խոշոր էլքեր (վոկլյուզներ): Ք-եր են անվանվում նաև սառցադաշտերի ստորին եզրամասերի որոնված շերտերում, որոնցում նույնպես դիտվում են հալոցքային սառցաջրերի խոշոր էլքեր:

ГРУНТ — ԳՐՈՒՆՏ, ցանկացած ապարի պայմանական կիրառական անվանում, երբ այն ընդգրկվում է ինժեներաշին. որրտի մեջ և կառույցների համար ծառայում է որպես հիմնատակ, միջնավայր և շինանյութ: Ինժեներական երկրաբանությունում առանձնացվում են Գ-ների հետևյալ խմբերը. 1) ապտածային-ունեն բարձր մեխ. ամրություն և հանդիսանում են առաձգական պինդ մարմիններ (գրանիտ, գնեյս, բազալտ, մարմար, ալպաբար ևն), 2) կիսաապտածային-առաջին խմբի Գ-ների համեմատությամբ ունեն ավելի ցածր մեխ. ամրություն և նվազ առաձգական են (տուֆեր, տուֆիտներ, կրաքարեր, գիպս, քարաղ ևն), 3) փափուկ կամ պլաստիկ հատկանիշներով կապակցված ապարներ (կավեր, ալպազկավեր, կավալակներ ևն), 4) փոխար կամ սորուն, պլաստիկ հատկանիշներից զուրկ չկապակցված ապարներ (ալպակներ, խին, գլաքար, գետաքար ևն), 5) թույլ, հեշտ ձևափոխվող կամ անկայուն առաձգական կամ պլաստիկ հատկություններից զուրկ, ինչպես նաև հատուկ պայմաններում (օր., տաքանալ-սառչելիս) էտպես փոխվող ապարներ (տորֆ, տիղմ, սառույց ևն): Հոմանիշ՝ գետին, գետնահող, բնահող:

ГРУНТОВАЯ МАССА — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ, գրունտագիտությունում՝ համակարգ, որը կազմված է միներալային կմախքից (մասնիկներից) և ծակտի-

ները 19նոդ ջրից (երկֆազ համակարգ), կամ միներալային կմախքից, ջրից և օդից (տոաֆազ համակարգ), ըստ որում ենթադրվում է, որ Գ. զ. համաստե է:

ГРУНТОВЕДЕНИЕ — ԳՐՈՒՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ինժեներական երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է ապարների կազմը, կառուցվածքը, կազմվածքը (տեքստուրան) և ֆիզմեխ. հատկությունները, ինչպես նաև կառույցի հետ փոխազդելիս այդ հատկությունների հնարավոր փոփոխությունները և շին. նպատակներով դրանց բարելավման հնարավորությունները: Հումանիշ՝ ինժեներական պետրոլոգիա:

ГРУНТОВЕДЕНИЕ ГЕНЕТИЧЕСКОЕ — ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՈՒՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գրունտագիտության բաժին, որն ուսումնասիրում է ապարների ծագումնային կամ ֆացիալ համակարգերի և ձևերի ինժեներաերկր. հատկանիշները:

ГРУНТОВЕДЕНИЕ РЕГИОНАЛЬНОЕ — ՌԵԳԻՈՆԱԿԱՆ ԳՐՈՒՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գրունտագիտության բաժին, որն ուսումնասիրում է առանձին ռեգիոնների ապարների ծագումնային կամ ֆացիալ համակարգերի ինժեներաերկր. հատկանիշները:

ГРУНТОВЫЕ ВОДЫ — ԳՐՈՒՆՏԱՑԻՆ ԶՐԵՐ, տե՛ս Вода грунтовая:

ГРУНТОВЫЕ РАССОЛЫ — ԳՐՈՒՆՏԱՑԻՆ ԱՂԱԶՐԵՐ, աղաջրեր, որոնք տեղադրված են աղի լճերի հատակային մասի արմատական ապարների կամ նորագոյացումների ճեղքերում և ծակոտիներում: Երբեմն Գ. ա. մակերևութային աղաջրերից մեկուսացված են լինում տիղմի շերտով, որի հետևանքով նրանց միջև անմիջական կապը բացակայում է: Գ. ա-ին են դասվում նաև աղազմբեթների շրջաններում տարածված վերադային ջրերը (տե՛ս Надсолевые воды), եթե նրանք վերևից ջրամերձ ապարներով պարփակված չեն: Որոշ դեպքերում Գ. ա. ունեն գործնական նշանակություն:

ГРУНТОВЫЙ БАССЕЙН — ԳՐՈՒՆՏԱՑԻՆ ԱՎԱԶԱՆ, գրունտային ջրերի հոսքի ալվազան՝ սահմանազատված ստ. ջրբաժաններով: Երբեմն օգտագործվում է «Գրունտային ջրերի ալվազան» տերմինը:

ГРУНТОВЫЙ КОЛОДЕЦ — ԳՐՈՒՆՏԱՑԻՆ ԶՐՀՈՐ, երկրի մակերևութի վրա անմիջականորեն էլք ունեցող մեծ խորության ուղղաձիգ կամ փոքրաթեք փորվածք, որի միջոցով շահագործվում են ոչ խորը տեղադրման ստ. ջրերը: Գ. ջ-երը ունենում են ոչ մեծ մակերեսով (1—3 մ<sup>2</sup>) ուղղանկյունաձև (քառակուսի) կամ կորակված լայնական հատույթ: Փուլար-բեկորային կամ սրբուն գրունտներ հատելիս նրանք անպայմանորեն ամրակապվում են: Երբեմն Գ. ջ. են անվանվում նաև մեծ տրամագծի հորատանցքերը, որոնք տրվել են գրունտային ջուր ստանալու նպատակով:

ГРУНТОВЫЙ ПОТОК — ԳՐՈՒՆՏԱՑԻՆ ԶՐՀՈՍՔ, գրունտային ջրի գանգված, որը շարժվում է ծանրության ուժի (հիդրավլիկ թեքության) շնորհիվ՝ սնման մարզից դեպի բեռնաթափման մարզը:

ГРУНТОНОС — ԳՐՈՒՆՍԱՀԱՆ, հարմարանք (գործիք), որի միջոցով հո-  
րատանցքերից, լեռնային փորվածքներից կամ ջրավազանների հատակից փուխը  
(սորուն) և պլաստիկ գրունտների նմուշներ են վերցվում պահպանելով նրանց բնա-  
կան կառուցվածքն ու խոնավությունը: Գ-ները լայնորեն կիրառվում են ինժեներա-  
երկրք. ուսումնասիրությունների ժամանակ: Նրանց միջոցով վերցվող նմուշները  
օգտագործվում են գրունտների բնական խոնավության, ծակոտկենության, սեղմե-  
լիության և տեղաշարժի դիմադրության որոշման համար: Հոմանիշ՝ գետնահան,  
գրունտակիր:

ГРУШОВОЙ ИСТОЧНИК — ԽՄԲԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ (ԱՂԲՅՈՒՐԱՆՈՒՄԲ),  
բնական աղբյուր, որը բաղկացած է ստ. ջրերի մի քանի մոտ տեղադրված էլքերից:

ГРЯЗЕВОЕ МИНЕРАЛЬНОЕ ОЗЕРО — ՑԵՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԼԻՃ, լիճ, որի  
հատակին կուտակված որոշակի բաղադրատարրերով հարուստ տիղմը օգտագործ-  
վում է որպես բուժիչ միջոց:

ГРЯЗЕВОЙ ВУЛКАН (САЛЬЗА) — ՑԵՆԱՅԻՆ ՀՐԱԲՈՒԽ (ՍԱԼԶ), կոնաձև  
բլուր՝ գագաթին ձագարածև խտնարանով, որից պարբերաբար կամ անընդհատ  
արտալիժում է գազերով հարուստ կալսցիխ (ցեխաջուր՝ երբեմն նավթի փառով): Ց.  
հ-ի արտալիժած նյութը հոսելով կոնի լանջերով, մեծացնում է նրա չափերը:  
Խտնարանների շատության դեպքում տեղանքում ստացանում են յուրատեսակ  
բլրաշարեր, որոնց չափերն ու ձևերը պայմանավորված են ցեխի մածուցիկության  
սաստիճանով: Պարբերաբար գործող Ց. հ-ները սովորաբար մեծ քանակությամբ  
գազեր են անջատում, որը ուղեկցվում է պայթյունով և քարաբեկորների արտա-  
նետմամբ: Ծագումնաբանորեն տարբերում են 2 տիպի Ց. հ-ներ. 1) կապված նավ-  
թային հնքվ-երի հետ և, 2) կապված իսկական հրաբուխների հետ: Առաջինները  
լայն տարածում ունեն Հյուսիսային Կովկասում, Ադրբեջանում և Անդրկասպիում,  
ձգվում են տեկտ. խզումների երկայնությամբ և բնորոշում են գերազանցապես ած-  
խաջրածնային գազերի (հիմնականում մեթանի) անջատմամբ: Որոշ Ց. հ-ներ աչքի  
են ընկնում ազոտի զգալի պարունակությամբ, որին ուղեկցում են հելիումը և այլ  
ազնիվ գազեր: Ցեղաջրերը հարուստ են յոդով, բրոմով և բորով:

Իսկական հրաբուխների հետ կապված Ց. հ-ները գերազանցապես անջատում  
են ածխաթթու գազ, ինչպես նաև ծծմբաջրածին ու ջրային գոլորշիներ: Ի տարբե-  
րություն նավթային հնքվ-երի Ց. հ-ների, վերջիններում ածխաջրածնային գազերը  
բացակայում են:

ГРЯЗИ ПРИРОДНЫЕ (МИНЕРАЛЬНЫЕ) — ԲՆԱԿԱՆ (ՀԱՆՔԱՅԻՆ, ՄԻ-  
ՆԵՐԱԿԱՅԻՆ) ՑԵՆԵՐ, ծովային, լճային, լիմանային, գետային, աղբյուրային և  
այլ տիղմեր, որոնք պարունակում են յուրահատուկ բիւ. և օրգ. միացություններ և  
օգտագործվում են բուժման նպատակներով:

ГРЯЗЕВЫЙ ПОТОК — ՑԵՆԱՅԻՆ ՀՈՒՔ (ՍԵԼԱՎ) տե՛ս Сель:

ГУДЖИР — ՀՈՒՋԻՐ, հանքային լճերի սառած մակերևույթին գոյացող սոդա-  
յի, միրաբիլիտի և այլ աղերի բարակ թաղանթ կամ փառ: Նրևույթի թուրքական  
անվանարկում:

**ГУМИНОВЫЕ ВЕЩЕСТВА** — ՀՈՒՄԻՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, փոփոխական թթուների աղեր, որոնք պարունակվում են տորֆերում, փումուսում և հանածո ածուխներում: Հ. Գ. ունեն շատ բարդ քիմ. բաղադրություն:

**ГУМИДНЫЙ КЛИМАТ** — ԽՈՆԱՎ (ՀՈՒՄԻԴ) ԿԼԻՄԱ, խոնավ կլիմա, որի պայմաններում մթնոլորտային տեղումները զգալիորեն գերազանցում են ընդհանուր գոլորշիացմանն ու ներծծմանը և տեղանքում գոյանում է մշտական մակերևութային հոսք:

**ГУМИДНАЯ ОБЛАСТЬ** — ԽՈՆԱՎ (ՀՈՒՄԻԴ) ՄԱՐԶ, խոնավ կլիմայով մարզ:

**ГУМУС В ПРИРОДНЫХ ВОДАХ** — ՀՈՒՄՈՒՍ ԲՆԱԿԱՆ ԶԵՐՐՈՒՄ, միացություն, որն ստացվում է բուսական հյուսվածքների մնացորդների ոչ լրիվ քայքայման և հողի հանքային բաղադրիչների հետ փոխադարձ քիմ. ներգործության շնորհիվ: Հումուսի մեջ տիրապետում են զանազան մոլեկուլային օրգ. (փոփոխական) թթուներ: Հումուսային նյութերի համար բնորոշ է բարձր աստիճանի ցրվածությունը (դիսպերսությունը), նրանք տիպիկ կոլոիդներ են՝ օժտված գունավորելու և կլանելու բարձր ունակությամբ: Հումուսի պարունակությունը գետային ջրերում (չոր մնացորդում) կազմում է 10—200, լճերում՝ 1—150, գրունտային ջրերում՝ մինչև 10—15 մգ/լ, իսկ հավելյալ խոնավացված զոնայում (անհնաջրերում) հասնում է 400—500 մգ/լ:

**ГУСТОТА РЕЧНОЙ СЕТИ** — ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, որևէ ավազանի (կամ տարածքի) բոլոր գետերի երկարության (կմ-երով) գումարի հարաբերությունը տվյալ ավազանի (կամ տարածքի) մակերեսին (կմ<sup>2</sup>-ներով): Գ. ց. յ. հանդիսանում է մակերևութային հոսքի բնութագրման կարևոր ցուցանիշ և հիմնականում կախված է ավազանի կլիմայական պայմաններից, ռելիեֆից և ապարների ջրաթափանցելիությունից:

**ГУСТОТА ТРЕЩИН** — ԾԵՂՔԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, մեծություն, որը բնութագրում է ապարներում որոշակի համակարգերով տարածված ճեղքերի ինտենսիվությունը: Ծ. յ. չափվում է որոշակի հարթության նկատմամբ տարված ուղղահայացի միավոր երկարության վրա հատվող ճեղքերի քանակով:

## — Д —

**ДАВЛЕНИЕ АТМОСФЕРНОЕ** — ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ, մթնոլորտային օդի ճնշում, որը հավասար է չափվող բարձրության վրա օդի 1 սմ<sup>2</sup> հիմքով սյան կշռին: Ծովի մակարդակի վրա Մ. Գ. միջին հաշվով հավասար է սնդիկի 760 մմ-անոց սյան ճնշմանը: Ըստ բարձրության Մ. Գ. աստիճանաբար նվազում է:

**ДАВЛЕНИЕ БОКОВОЕ** — ԿՈՂԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ, ապարների կողաշարժի ժամանակ առաջացող ճնշում, որը գործադրվում է ուղղահայաց կամ թեք հենապատերի, ստ. փորվածքների ամրակապի և այլ արգելքների վրա:

ДАВЛЕНИЕ БУФЕРНОЕ — ԹԱՓԱՐԳԵԼԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, դինամիկ ճնշում, որը հորատանցքի բերանի մոտ առաջանում է ջրի (նավթի, գազի) շարտվանելու ժամանակ:

ДАВЛЕНИЕ ГАЗА — ԳԱԶԻ ԾՆՇՈՒՄ, ուժ, որով ճնշում է գազը՝ ձգտելով մոլեկուլների շերտային շարժման շնորհիվ ընդարձակվել: Գ. ճ. արտահայտվում է կգ. ու/սմ<sup>2</sup> կամ մթն.-երով (1 մթն. համապատասխանում է 1,03 կգ. ու/սմ<sup>2</sup>):

ДАВЛЕНИЕ ГИДРОДИНАМИЧЕСКОЕ — ԶՐԱԴԻՆԱՄԻԿ (ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿ) ԾՆՇՈՒՄ, տե՛ս Гидродинамический напор:

ДАВЛЕНИЕ ГИДРОСТАТИЧЕСКОЕ — ԶՐԱՍՏԱՏԻԿ (ՀԻԴՐՈՍՏԱՏԻԿ) ԾՆՇՈՒՄ, տե՛ս Гидростатический напор:

ДАВЛЕНИЕ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԾՆՇՈՒՄ, սահմանափակող կառույցների կամ շրջապատող միջավայրի վրա գրունտի (շինարարության ոլորտ ներգրավված ապարի) գործադրած ճնշում: Հոմանիշ՝ լեռնային ճնշում, ապարի ճնշում:

ДАВЛЕНИЕ ЗАБОЙНОЕ — ՀՈՐԱՏԱՆՈՐՇԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, հորատախորշի վրա առաջացող ճնշում, որը դիտվում է գործող (շահագործվող) հորատանցքում: Հ. ճ. անմիջապես չափվում է գործող հորատանցքում խորքային ճնշումաչափի (մանոմետրի) օգնությամբ:

ДАВЛЕНИЕ ЗАТРУБНОЕ — ԱՐՏԱՆՈՂՈՎԱԿԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, հորատանցքից հեղուկ հանածոն (ջուր, նավթ) բարձրացնող խողովակաշարի և ամրակապման խողովակաշարի արանքում առաջացող ճնշում, որը չափվում է հորատանցքի բերանին տեղադրված հատուկ ճնշումաչափի օգնությամբ:

ДАВЛЕНИЕ НАБУХАНИЯ — ՈՒՌՉՄԱՆ ԾՆՇՈՒՄ, կավային ապարների խտնավազման ժամանակ ծավալի աճի մեծացման հետևանքով նրանցում զարգացող ճնշում (տե՛ս Набухание):

ДАВЛЕНИЕ НА УСТЬЕ — ԾՆՇՈՒՄԸ ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԲԵՐԱՆԻ ՄՈՏ (ԲԵՐԱՆԻՆ), հորատանցքով ճնշումնային շերտեր հատելիս նրա բերանի մոտ (բերանին) առաջացող ճնշում, որը գերազանցում է հորատման հեղուկի սյան ճնշումը: Այն որոշվում է հորատանցքի բերանին տեղադրվող ճնշումաչափով և թվապես հավասար է շերտային ճնշման ու հորատանցքի բերանից մինչ ճնշումնային շերտ հեղուկի սյան ճնշման տարբերությանը:

ДАВЛЕНИЕ ПОЛЗУЧЕСТИ — ՍՈՂՔԻ ԾՆՇՈՒՄ, թեք լանջերի վրա ապարների լարումների հետևանքով առաջացող ճնշում, որը գործադրվում է սողքը արգելակող կառույցների վրա:

ДАВЛЕНИЕ ПОРОВОЙ ВОДЫ — ԾԱԿՈՏԻՆՆԱՅԻՆ ԶՐԻ ԾՆՇՈՒՄ, փուխր ապարների ծակոտիները լցնող ջրի շրատաստիկ ճնշում:

ДАМБА — ՀՈՂԱՊԱՏՆԵԾ (ԱՐԳԵԼԱՊԱՏ, ԱՄԲԱՐՏԱԿ), կալվածքային ապարներից (երբեմն նաև քարից կամ բետոնից) կառուցված պատնեշ (արգելապատ), որի միջոցով ստեղծվում են ոչ մեծ ջրավազաններ կամ որևէ ունի ափապաշտպան նշանակություն (ջրամբարների, գետերի համար): Հ-ներ առաջանում են նաև բնական պայմաններում, երբ գետային բերվածքները հարթավայրերում կոտակվում են գետաբերանների երկարությամբ:

ДАРСИ — ԴԱՐՍԻ, ապարների ջրաթափանցելիության չափման միավոր, որն արտահայտում է նրանց ծծանցման ունակությունը՝ 1 սմ<sup>2</sup> ընդլայնակի հատույթի մակերեսով 1 սանտիպուսով (0,01 պուսով) դիմամիկ մածուցիկության հեղուկի 1 սմ ճանապարհի հաղթահարումը 1 վրկ-ում, 1 մթն. ճնշման դեպքում:

ДВИЖЕНИЕ ЛЕДНИКА — ՍԱՌՑԱԴԱՇՏԻ ԾԱՐԺՈՒՄ, գրավիտացիոն ուժերի ազդեցության տակ տեղի ունեցող սառցաշերտի տեղաշարժ (շարժում), որը կատարվում է դեպի սառցադաշտի ստորին եզրամասերը: Այդ շարժման արագությունը պայմանավորված է սառցադաշտի հիմքի (հատակի) թեքությամբ, սառցաշերտի հաստությամբ, սառցի ջերմությամբ, նրանում ջրի առկայությամբ և կարող է տատանվել միավորի մասերից մինչև 40 մ/օր սահմաններում:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ КАПИЛЛЯРНОЕ — ՀԵՂՈՒԿԻ ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում ապարի մազական անցքերով ու ճեղքերով: Տարբերում են. ա) մազանոթային բարձրացում—հեղուկի վերընթաց շարժում և, բ) մազանոթային տեղագաղթ (միգրացիա) — հեղուկի տեղաշարժ դեպի ներքև և կողային տարածություն:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ ЛАМИНАРНОЕ — ՀԵՂՈՒԿԻ ԼԱՄԻՆԱՐ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում բարակ շերտերի կամ միմյանց զուգահեռ շիթերի տեսքով, որոնք չեն գալարվում և միախառնվում: Հ. 1. 2. տեղի է ունենում մինչև որոշակի արագություն, որը կոչվում է կրիտիկական: Եթե շարժման արագությունը գերազանցում է կրիտիկականը, ապա շարժումը դառնում է մրրկային (տուրբուլենտ): Հ. 1. 2. ենթարկվում է Դարսիի օրենքին (տե՛ս Закон Дарси): Հոմանիշ՝ հեղուկի շիթային շարժում:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ НАПОРНОЕ — ՀԵՂՈՒԿԻ ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում, որի դեպքում ծծանցվող հոսքը ունի ճնշման մակերևույթ և որոշակի ուժ է գործադրում հորիզոնը սահմանափակող ջրամբոժ շերտերի վրա:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ НЕРАВНОМЕРНОЕ — ՀԵՂՈՒԿԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶՍԺ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում, որի դեպքում տարբեր կենդանի կտրվածքներում հոսքի արագությունը փոփոխվում է:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ НЕУСТАНОВИВШЕЕСЯ — ՀԵՂՈՒԿԻ ՈՉ ԿԱ-

ՅՈՒՆԱՑԱԾ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում, որի դեպքում ժամանակի ընթացքում փոփոխվում են հոսքի ծախսը, արագությունը, ուղղությունը և այլ պարամետրեր:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ ПОЛУНАПОРНОЕ — ՀԵՂՈՒԿԻ ԿԻՍԱՃՆՇՈՒՄ-ՆԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում, որի դեպքում ծծանցվող հոսքը անապարհի առանձին հատվածներում ունի ազատ մակերևույթ, իսկ այլ հատվածներում անջում է ձեռք բերում:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ РАВНОМЕРНОЕ — ՀԵՂՈՒԿԻ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԾԱՐԺՈՒՄ, հեղուկի շարժում, որի դեպքում արագության մեծությունը հոսքի ցանկացած կենդանի կտրվածքում միատեսակ է:

ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ СТРУЙЧАТОЕ — ՀԵՂՈՒԿԻ ԾԻԹԱՅԻՆ ԾԱՐԺՈՒՄ, տե՛ս Движение жидкости ламинарное:

ДВИЖЕНИЯ ОПЛЫВНЫЕ — ՍՈՐԱՀՈՍՄԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐ, գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ խոնավ կավային ապարների ճկումնային շարժումներ, որոնց արդյունքում տեղանքը թույլ ափքավորվում է՝ առանց հողաբուսական ծածկի քայքայման:

ДВИЖЕНИЯ ПЛЫВУННЫЕ — ՀՈՍԱԳՐՈՒՆՏԻ (ՊԼԻՎՈՒՆԱՅԻՆ) ԾԱՐԺՈՒՄՆԵՐ, գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ գերխոնավ փուխր կամ սորուն գրունտների (ավազ, կավավազ) մածուցիկ շարժումներ, որոնք լանջի չնչին թեքության դեպքում անգամ հանգեցնում են նրա կտրուկ ձևափոխությունների (ուժեղ ափքավորման, փտորակների առաջացման ևն): Նշված գրունտները լեռնային փորվածքներով հատելիս, ցեխաջրի դանդաղ հոսք հիշեցնող շարժումները հնարավոր է կասեցնել միայն հոսադրունտների ստեցման անապարհով (տե՛ս Плывуи):

ДВУХЖИДКОСТНЫЙ ПОТОК — ԵՐԿՀԵՂՈՒԿԱՅԻՆ ՀՈՍՔ, տարբեր մածուցիկության երկու հեղուկների ինքնուրույն շարժումը միացյալ հոսքում (օր., ջրով նավթի արտամղումը):

ДВУХМЕРНОЕ ДВИЖЕНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԵՐԿՀՁՓ ԾԱՐԺՈՒՄ, տ. ջրերի շարժում, որի դեպքում արագության վեկտորը տարաբաժանվում է երկու բաղադրիչների: Ս. ջ. ե. շ. կարող է դիտվել հասակագծում, երբ արագության վեկտորը բաշխվում է երկու հորիզոնական բաղադրիչների, ինչպես նաև ուղղաձիգ կտրվածքում, երբ արագության վեկտորը բաժանվում է հորիզոնական և ուղղաձիգ բաղադրիչների:

ДВУХМЕРНЫЙ ПОТОК — ԵՐԿՀՁՓ ՀՈՍՔ, ջրաերկրաբանությունում՝ նույնն է, ինչ Двухмерное движение подземных вод:

ДВУХСЛОЙНЫЙ ПЛАСТ — ԵՐԿՏԱԿ (ԵՐԿԱՆԴԱՍ) ԾԵՐՏ, նույնատիպ ապարների կրկնաշերտ, որը ուղղաձիգ կտրվածքում տարանջատվում է ծծանցման տարբեր հատկանիշներով երկու շերտերի: Բնության մեջ սովորաբար վերին ենթաշերտը դրսևորում է ծծանցման ավելի բարձր հատկանիշներ:

ДЕБИТ КОЛОДЦА (СКВАЖИНЫ) — ՋՐՀՈՐԻ (ՀՈՐԱՏԱՆՑՔԻ) ԾԱԽՍ, միավոր ժամանակում հորից (հորատանցքից կամ այլ փորվածքից) ստացվող ջրի (նավթի, գազի) ծավալը, որն արտահայտվում է լ/վրկ, մ<sup>3</sup>/ժամ կամ մ<sup>3</sup>/օր:

ДЕБИТ СКВАЖИНЫ (КОЛОДЦА) УДЕЛЬНЫЙ — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ (ՋՐՀՈՐԻ) ՏԵՍԱԿԱՐԱՐ ԾԱԽՍ, տե՛ս Удельный дебит скважины:

ДЕБИТОМЕР (ДЕБИТОМЕТР) — ԾԱԽՍԱԶԱՓ, սարք, որը կորի տեսքով գրանցում է հորատանցքից (ջրհորից կամ այլ փորվածքից) ստացվող ջրի (նավթի, գազի) ծախսի փոփոխությունը ժամանակի ընթացքում:

ДЕГАЗАЦИЯ — ԳԱԶԱԶՐԿՈՒՄ (ԳԱԶԱՆՋԱՏՈՒՄ, ԱՊԱԳԱԶԱՑՈՒՄ), գազերի բնական կամ արհեստական անջատումը հեղուկից (օր., հանքային ջրից, հորատման կավաչին լուծույթից): Նավթաբեր շերտի կամ հնքվ-ի Գ. նշանակում է շերտում գտնվող ազատ գազերի կամ նավթում տարալուծված գազերի արտանետում (ցնդում) դեպի մթնոլորտ:

ДЕГИДРАТАЦИЯ (ОБЕЗВОЖИВАНИЕ) — ՋՐԱԶՐԿՈՒՄ (ՋՐԱՆՋԱՏՈՒՄ, ԳԵՀԻԴՐԱՏԱՑՈՒՄ), ապարներից և միներալներից ջրի անջատման գործընթաց, որը տեղի է ունենում հիդրօբսիլ խմբի բյուրեղային ու ցելլիտային ջուր պարունակող միացություններից ջրի մոլեկուլի անջատման ճանապարհով:

ДЕГРАДАЦИЯ МЕРЗЛОТЫ — ՍԱՌՑՈՒՑԹԻ ՆԱՀԱՆՋ (ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ, ԳԵԳՐԱԳԱՑԻԱ), բազմամյա սառած ապարների անցում հալված վիճակի, որը տեղի է ունենում տարեկան միջին ջերմաստիճանի բարձրացման հետևանքով: Ս. Ա-ի գործընթացն ուղեկցվում է գետնի նստեցման, ջերմակարստերի առաջացման և այլ երևույթներով: Դիտումները ցույց են տալիս, որ նախկին ԽՍՀՄ որոշ շրջաններում (օր., Մեզեն քաղաքի մոտ) վերջին 150 տարում սառցույթը նահանջել է շուրջ 40 կմ:

ДЕЙСТВУЮЩЕЕ ГИДРОСТАТИЧЕСКОЕ ДАВЛЕНИЕ — ԳՈՐԾՈՂ ԶՐԱՍՏԱՏԻԿ (ՀԻԴՐՈՍՏԱՏԻԿ) ԾՆԾՈՒՄ, ստ. ջրի ստի ռոլորությամբ 2 կետերում եղած ճնշումների տարբերությունը՝ հաշված պայմանականորեն ընդունած հորիզոնական հարթությունից:


ДЕЙСТВУЮЩИЙ (ЭФФЕКТИВНЫЙ) ДИАМЕТР ЧАСТИЦ — ՄԱՍՆԻԿԵՐԻ ԳՈՐԾՈՂ (ԱՐԳՑՈՒՆԱՎԵՏ) ՏՐԱՄԱԳԻԾ, ապարը կազմող մասնիկների տրամագծի այնպիսի չափ, որից փոքր տրամագիծ ունեցող մարմինները կազմում են ողջ մասնիկների 10 %: Այդ տրամագծի չափը, որը նշանակվում է  $d_{10}$  կամ  $d$  արդ., որոշվում է ապարի հատիկաչափական (մեխ.) կորը կազմելու միջոցով (տե՛ս Кривая гранулометрического состава):

ДЕКАРБОНИЗАЦИЯ ВОД — ՋՐԵՐԻ ԱՊԱԿԱՐՔՈՆԱՏԱՑՈՒՄ (ՎԱՐՔՈՆԱՏԱԶՐԿՈՒՄ), ջրային լուծույթին կիր ավելացնելու միջոցով կազմիումի և մագնիումի ջրակարբոնատների անջատման գործընթաց, որն ընթանում է հետևյալ սխեմայով:  $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{Ca}(\text{OH})_2 \longrightarrow 2\text{CaCO}_3 + 2\text{H}_2\text{O}$ :

ДЕЛЛИ — ԴԵԼԻՆԵՐ, հունից գուրի կամ նոր աղմմնալորվող հունով հոսքի գոգահովիտ, որտեղ թափվող մթնոլորտային տեղումները հեռանում են առավելապես համատարած լանջային հոսքի ձևով՝ հանգեցնելով տեղանքի լերկացմանը:

ДЕЛЬТА — ԴԵԼՏԱ, գետաբերանի ծովափնյա հատվածում գետի բերվածքներից առաջացած հովհարանն կամ կոնաձև կուտակումներ, որոնց չափերն ու ձևերը կախված են գետի կոշտ հոսքի չափերից ու ռեժիմից, ափամերձ գոտու ռելիեֆի բնույթից, նորագույն ու ժամանակակից շարժումների ինտենսիվությունից, մակընթացության-տեղատվության չափերից, պլեթալությունից ևն:

ДЕНИТРИФИКАЦИЯ ВОД — ՋՐԵՐԻ ԿԻՏՐՈՒՄԱԶՐԿՈՒՄ (ԱՊԱՆԻՏՐՈՒՄ-ՑՈՒՄ), ջրերում միտրատների ( $\text{NO}_3^-$ ) և նիտրիտների ( $\text{NO}_2^-$ ) քայքայման միկրոկենսաբ. գործընթաց, որն ընթանում է հետևյալ պետանյով.



ДЕПРЕССИОННАЯ ВОРОНКА — ԻՋՈՒՅԹԱՅԻՆ (ԴԵՊՐԵՍԻՍԻՈՆ) ՋԱԳԱՐ, տե՛ս Депрессия подземных вод:

ДЕПРЕССИОННАЯ КРИВАЯ — ԻՋՈՒՅԹԱՅԻՆ (ԴԵՊՐԵՍԻՍԻՈՆ) ԿՈՐ, ուղղաձիգ հարթության շխա կորագիծ, որն առաջացնում է ջրհոսքի իշույթը (դեպրեսիան)՝ նրա շարժման ուղղությամբ:

ДЕПРЕССИЯ — ԻՋՈՒՅԹ (ԴԵՊՐԵՍԻՍԻԱ), տե՛ս Депрессия подземных вод:

ДЕПРЕССИЯ ДАВЛЕНИЯ — ԾՆԾՄԱՆ ԻՋՈՒՅԹ (ԴԵՊՐԵՍԻՍԻԱ), ջրատար նավթագազատար հորիզոնների շահագործման հետևանքով շերտային դինամիկ ճնշման անկում սկզբնական (մինչ շահագործումը) ճնշման նկատմամբ:

ДЕПРЕССИЯ (ДЕПРЕССИОННАЯ ПОВЕРХНОСТЬ) ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԻՋՈՒՅԹ (ԴԵՊՐԵՍԻՍԻՈՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ), առ. ջրերի ազատ կամ ճնշումնային մակերևույթի իջեցում դեպի այն տեղը (ձորակ, հովիտ), որտեղ կատարվում է բնական կամ արհեստական (ջրհոր, հորատանցք, այլ լեռնային փորվածքներ) ցամաքեցում (բեռնաթափում): Հումանիշ՝ իշույթային ձագար:


ДЕРИВАТНЫЙ ИСТОЧНИК — ԱԾԱՆՑՅԱԼ (ԴԵՐԻՎԱՏԱՅԻՆ) ԱՂԲՅՈՒՐ, գլխավոր աղբյուրից առանձնացված (ածանցված, ճյուղավորված) էլք, որի ջրի ֆիզքիմ. հատկանիշները որոշ փոփոխություններ են կրում՝ այլ ուղի անցնելու և կողմնակի ջրերի հետ խառնվելու հետևանքով: Տերմինը ավելի հաճախ կիրառվում է հանքային ջրերի համար:

ДЕРИВАЦИОННЫЙ КАНАЛ — ԴԵՐԻՎԱՅԻՈՆ ՋՐԱՆՑՔ, գետի բնական թեքությունից զգալիորեն փոքրաթեք ջրանցք, որի նպատակն է գետի ջուրը գետահովտի լանջով հասցնել ներքևում կառուցված հիդրոէլեկտրակայանի էներգետիկ ագրեգատների՝ որոշակի կենտրոնացված ճնշման տակ: Դ. ջ-ի երկարությունը կախված է պահանջվող ճնշման մեծությունից և գետի ու ջրանցքի թեքությունների տար-

բերությունից: Բարդ ուղիեֆային պայմաններում Գ. ջ. կարող է անցնել թունելներով, ակվեդուկներով, դյուկերներով ևն:

ДЕСОРБЦИЯ — ԱՊԱՎԱՆՈՒՄ, կլանման (ադսորբցիայի) հակառակ գործընթաց, երբ կլանիչի (ադսորբենտի) մակերևույթից կլանված նյութը հեռանում է:

ДЕСУЛЬФАТАЦИЯ (ДЕСУЛЬФАТИЗАЦИЯ) ВОД — ՋՐԵՐԻ ՍՈՒԿՍԱՍԱ-ՋՐԿՈՒՄ (ԱՊԱՍՈՒՎՖԱՍՏՑՈՒՄ), ջրերից սուլֆատների հեռացման կենսաքիմ. գործընթաց, որն ընթանում է հետևյալ սխեմայով.



Ջ. ս. տեղի է ունենում դժվար ջրափոխանակման զոնայում (օդազուրկ միջավայրում, հատկապես նավթագազաբեր կտրվածքներում), որտեղ գործընթացն ընթանում է սուլֆատվերականգնող մանրէների մասնակցությամբ: Ջ. ս. հանդիսանում է բնության մեջ ծծմբի շրջանառության կարևոր օղակ:

ДЕТАЛЬНАЯ РАЗВЕДКА ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵԿՐՅԱ, ՋՐԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ, նախնական հետախուզության փուլում ընտրած բարենպաստ տեղամասերի մանրամասն հետախուզություն, որի նպատակն է՝ արդյունաբերական կատեգորիաներով հաշվարկել ստ. ջրերի շահագործողական պաշարները և անհրաժեշտ տվյալներ ստանալ նոր ջրհան կառույցների նախագծման կամ գոյություն ունեցողների ընդլայնման համար:

ДЕФИЦИТ ВЛАЖНОСТИ — ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ, օդը լրիվ հագեցնելու համար անհրաժեշտ ջրային գոլորշիների (E) և տվյալ պահին օդում եղած գոլորշիների (e) առաձգականության տարբերություն՝  $D = E - e$ : Հոմանիշ՝ հագեցման (առաձգականության) պակաս:

ДЕФИЦИТ НАСЫЩЕНИЯ (УПРУГОСТИ) — ՀԱԳԵՑՄԱՆ (ԱՌԱՋԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՊԱԿԱՍ, տե՛ս Дефицит влажности:

ДЕФОРМАЦИЯ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԶԵՎԱԽԱՍՏՈՒՄ, ապարների ձևի ու ծավալի փոփոխություն, որը կատարվում է բնական և արհեստական ուժերի ազդեցությամբ: Ա. ձ. հանգում է միայն ծավալի փոփոխության, եթե նրանց վրա ազդում է ջրատատիկ ճնշում, և ծավալի ու ձևի, կամ միայն ձևի փոփոխության, եթե նրանց վրա գործում է ուղղված ճնշում: Վերջինի ազդեցությամբ առաջանում են Ա. ձ-ների 3 տեսակ՝ առաձգական, պլաստիկ և խզումնային: Առաձգական ձևախախտման դեպքում փոխվում է ապարի ձևը, սակայն ճնշման դադարեցմանը զուգընթաց, այն վերականգնվում է: Պլաստիկ ձևախախտման դեպքում ապարի ձևը փոխվում է առանց նրա խզման, սակայն, ի տարբերություն առաձգականի, պլաստիկ ձևախախտումները անդարձելի են: Նրանք կատարվում են դիֆերենցված շարժումների միջոցով և տարբեր ուղղություններով: Խզումնային ձևախախտումն ուղեկցվում է ապարի ամբողջականության խախտմամբ, ճեղքերի ու ճաքերի առաջացմամբ: Երկրակեղևի կառուցվածքում դիտվում են միայն պլաստիկ (ծալքավոր) և խզումնային ձևախախտումներ:

**ДЕФОРМАЦИЯ ПОРОДЫ ПРИ РАЗРУШЕНИИ** — ԱՊԱՐԻ ԶԵՎԱՆՍԱՆՏՈՒՄ ԲԱՅՔԱՅՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ձևափոխում, որն առաջանում է ապարի ամբողջականության անդարձելի խախտմամբ:

**ДЕФОРМАЦИЯ СДВИГА** — ՏԵՂԱՇԱՐԹԻ ԶԵՎԱՆՍԱՆՏՈՒՄ, ձևախախտում, որն առաջանում է ապարում գործող ուժերի շնորհիվ և դիտվում է ապարի մասնիկների միմյանց նկատմամբ տեղաշարժերով:

**ДЕФОРМАЦИЯ ТЕКУЧЕСТИ** — ՀՈՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՆՍԱՆՏՈՒՄ, «սլաքաժելի ձևախախտում» տերմինի (տե՛ս Деформация горных пород) ավելորդ հոմանիշ:

**ДЕФОРМИРУЕМОСТЬ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԶԵՎԱՆՍԱՆՏՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, արտաքին ուժերի ազդեցության (քեռնվածության) տակ ապարների ձևափոխման ենթարկվելու ունակություն: Ավելորդ տերմին:

**ДЕХЛОРИРОВАНИЕ ВОДЫ** — ԶՐԻ ՔԼՈՐԱԶՐԿՈՒՄ (ԱՊԱՔԼՈՐԱՑՈՒՄ), ջրում հիվանդություն հարուցող միկրոօրգանիզմների առկայության դեպքում այն վնասազերծում են բլորացումով, իսկ մնացորդային բլորի առաջացրած տհաճ համն ու հոտը վերացնելու համար ջուրը բլորազրկում են ակտիվացած ածխի, ամիակի և քիմ. այլ միացությունների միջոցով:

**ДЕШИФРОВАНИЕ АЭРОФОТОСНИМКОВ** — ՕԴԱԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, օդալուսանկարների դիտարկում, ընթերցում և մեկնաբանում: Վերջին տասնամյակներին Օ. վ. գործնական լայն կիրառություն է գտել նաև ջրատերկր. և ինժեներատերկր. որոնողական-հետախուզական աշխատանքների բնագավառում:

**ДЕШИФРИРОВАНИЕ КОСМИЧЕСКИХ СНИМКОВ** — ՏԻՆԶԵՐԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, տիեզերական նկարների դիտարկում, ընթերցում և մեկնաբանում: Տ. ն. վ. բովանդակությունը հիմնականում նույնն է, ինչ օդալուսանկարների վերծանման ժամանակ, սակայն ընդգրկման մասշտաբները ավելի մեծ են, ինչը հնարավորություն է տալիս բնական գործընթացներն ու երևույթները դիտարկել իրենց ամբողջության մեջ:

**ДЕЯТЕЛЬНЫЙ СЛОЙ** — ԳՈՐԾՈՒՆՅԱ ԾԵՐՏ, երկրակեղևի վերին շերտ, որը ենթարկվում է սեզոնային սառեցման և հալման՝ կտրուկ կերպով փոխելով այն կազմող ապարների ֆիզմեխ. հատկությունները: Գ. շ-ի հաստությունը սովորաբար կազմում է մ-ի մասերից մինչև 2—3 մ, հազվադեպ՝ մինչև 4—5 մ (Արևելյան Միբիր):

**ДИАГРАММА ГРАНУЛОМЕТРИЧЕСКОГО СОСТАВА** — ՀԱՏԻԿԱԶԱՓԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԴԻԱԳՐԱՄ, գրունտի հատիկաչափական տարրալուծության արդյունքների գրաֆիկ արտահայտություն: Դիագրամի վրա կարելի է արտահայտել ինչպես ստանձի, այնպես էլ բազմաթիվ ապարների տարրալուծությունների արդյունքները: Հ. կ. դ-ները սովորաբար արտահայտվում են կորերի տեսքով (տե՛ս Кривая гра-

нулометрического состава), որոնց միջոցով կարելի է որոշել մասնիկների միջին չափը, արդյունավետ տրամագիծը ( $d_{10}$ ), անհամաստեղության գործակիցը ևն: Եթե ապարը հիմնականում կազմված է 3 հատիկախմբերից (ֆրակցիաներից), ապա նրա կազմը ցույց է տրվում հավասարակող եռանկյան տեսքով դիագրամի վրա (տե՛ս Դиаграмма Фере):

**ДИАГРАММА ФЕРЕ** — Ֆերեի դիագրամ, որի վրա արտահայտվում է 3 հատիկախմբերից (ֆրակցիաներից) բաղկացած ապարի կազմը: Ֆ. դ. ունի հավասարակող եռանկյան տեսք, որի յուրաքանչյուր գագաթը համապատասխանում է 3 հատիկախմբերից մեկի 100 %-անոց պարունակությանը (գրաֆիկ-եռանկյան ակզրուներով — տե՛ս График треугольник):

**ДИНАМИКА ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ, ջրաերկրաբանության բաժին՝ ուսմունք երկրակեղևի ապարներում ստ. ջրերի շարժման մասին, որը կատարվում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական գործոնների ազդեցության տակ: Ս. ջ. դ. ուսումնասիրում է նրանց շարժման օրինաչափությունները, մշակում է շարժման քանակական գնահատման և նպատակային էառավարման մեթոդներ: Հումանիշ՝ ջրաերկրադինամիկա:

**ДИНАМИКА СЕЛЕВЫХ ПРОЦЕССОВ** — ՍԵԼԱՎԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ, սելավային գործընթացների սկիզբն ու վերջը, տևողությունը, ինտենսիվությունը, պատճառած ավերածությունները ևն, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով (տե՛ս Сель): Սովորաբար սելավներն սկսվում են հանկարծակի, գլխավորապես ամռանը (հուլիս-օգոստոս ամիսներին), հազվադեպ՝ գարնանը, առավել հազվադեպ՝ աշմանը: Որպես կանոն, սելավները կարճատև են (3—5 ժամ, հազվադեպ՝ 8—10 ժամ) և հանկարծակի էլ վերջանում են: Սելավների ինտենսիվությունն ու պատճառած վնասները կախված են սելավը ծնող պատճառներից (հորդառատ անձրևներ, ինտենսիվ ձնհալք, ամբարտակների ճեղքում ևն), որոնք պայմանավորում են սելավային հոսքի ծախսը (առանձին գետերում այն կարող է կազմել 500—2000 մ<sup>3</sup>/վ և ավելի), նրա կազմը (կարծր նյութի պարունակությունը կարող է հասնել մինչև 75 %), արագությունը (3—8, հազվադեպ 10—12 մ/վ) ևն:

**ДИНАМИЧЕСКАЯ ВЯЗКОСТЬ ЖИДКОСТИ** — ՀԵՂՈՒԿԻ ԴԻՆԱՄԻԿ ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ներքին դիմադրության ուժ, որը ցուցաբերվում է հեղուկի միավոր մակերեսին (1 սմ<sup>2</sup>), երբ հավասարաչափ շիթային (լամինար) շարժման դեպքում միավոր արագությանը (1 սմ/վրկ) անցնում է միավոր ճանապարհ (1 սմ). արտահայտվում է պասկալ վրկ. միավորով (Па-сек.):

**ДИНАМИЧЕСКИЕ ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՆԱՄԻԿ ՊԱԾԱՐՆԵՐ, տե՛ս Запасы подземных вод динамические (возобновляемые):

**ДИНАМИЧЕСКИЙ УРОВЕНЬ** — ԾԱՐԺՈՒՆ (ԴԻՆԱՄԻԿ) ՄԱԿԱՐԴԱԿ, ստ. ջրերի շարժուն (փոփոխական) մակարդակ, որն ստեղծվում է ջրատար հորիզոնից արտանդում կատարելիս կամ նրա մեջ ջուրը ներմղելիս՝ փորձային ծծանցման աշ-

խտանքների ժամանակ: Այդ աշխատանքների դադարեցումից հետո ստ. ջրերի Շ. մ. աստիճանաբար անցնում է բնական, կայուն (ստատիկ) մակարդակի:

**ДИНАМИЧЕСКОЕ СОПРОТИВЛЕНИЕ** — ԴԻՆԱՄԻԿ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գրունտի ընդունակություն՝ դիմադրություն ցույց տալու ինչպես ակնթափայլին, այնպես էլ պարբերաբար կարճատև գործող բեռնվածությանը:

**ДИСПЕРСНАЯ СРЕДА** — ԴԻՍԳԵՐՍ ՄԻՋԱՎԱՅԻՐ, գերազանցապես կոդիդային լուծույթում պարունակվող փուլ կամ լուծիչ, որում ցրված (կամ լուծված) վիճակում տարածված են մյուս (դիսպերս) փուլի մասնիկները (տե՛ս Դисперсная фаза коллоида):

**ДИСПЕРСНАЯ ФАЗА КОЛЛОИДА** — ԿՈՂՈՒԳ ԴԻՍԳԵՐՍ ՓՈՒԼ, որևէ զանգվածում (դիսպերս միջավայրում) կոդիդ-լուծված վիճակում գտնվող մանրագույն մասնիկների (միցելաների) համակցություն:

**ДИССОЛЮЦИОННЫЕ (КАРСТОВЫЕ) ПУСТОТЫ** — ԿԻՍՈՒՅՈՒՑԻՑԻՈՆ (ԿԱՐԸՍՍԱՅԻՆ) ԴԱՍՏՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ապարներում ստաջացած դատարկություններ, որոնք ստ. ջրերի քայքայիչ գործունեության (լուծման, տարալվացման) հետևանք են: Ավելորդ տերմին:

**ДИСТИЛЛЯЦИЯ (ДЕСТИЛЛЯЦИЯ)** — ԹՈՐՈՒՄ (ՋՏՈՒՄ, ԱՂԱԶԵՐԾՈՒՄ), տաքացման միջոցով հեղուկի (նավթի, ջրի) վերածումը գոլորշու, ապա սստեցման միջոցով՝ վերստին հեղուկի, որը հանգեցնում է նրանում լուծված պինդ նյութերի նստեցմանը, ցնդող բաղադրատարրերի հեռացմանը կամ նվազ ցնդող հեղուկների գտմանը: Օր., թորման միջոցով բնական ջրերը գտվում են աղերից (սղազերծվում են), որի արդյունքում ստացվում է միանգամայն մաքուր (ստերիլ) ջուր: Վերջինս օգտագործվում է բժշկությունում, լաբորատոր և այլ հետազոտություններում:

**ДИФФЕРЕНЦИАЛЬНОЕ ДАВЛЕНИЕ** — ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԾՆՇՈՒՄ, նավթային ջրաներկարանությունում՝ դինամիկ և շերտային ճնշումների տարբերությանը հավասար ճնշում, որի ազդեցությամբ նավթն ու գազը շերտից շարժվում են դեպի հորատանցք: Այն հավասար է հորատանցքի շահագործման ժամանակ նրա հատակի վրա գործադրվող ճնշմանը:

**ДИФФЕРЕНЦИАЦИЯ ОСАДОЧНАЯ** — ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԴԻՖԵՐԵՆՑԻՈՒՄ, ըստ Լ. Վ. Պուստովալովի (1940), նստվածքազոյացման գործընթացում ապարների քայքայման արգասիքների առանձնացում (դիֆերենցում): Ն. դ. հանգեցնում է մայրական ապարներից քիմ., հանքային և հատիկաչափական կազմով էապես տարբերվող նստվածքների կուտակմանը: Տարբերում են մեխ. և քիմ. դիֆերենցումներ, որոնք սովորաբար կատարվում են միաժամանակ:

**ДИФУЗИОННОЕ ПЕРЕМЕЩЕНИЕ СОЛЕЙ В ГОРНЫХ ПОРОДАХ** — ԱՂԵՐԻ ԴԻՖՈՒԶԻՈՆ ՏԵՂԱԾԱՐԹ ԱՊԱՐՆԵՐՈՒՄ, ծակոտիկային լուծույթում իոնների շարժում, որը կատարվում է ապարի տարբեր մասերում աղերի տարբեր խտության հետևանքով: Վ. Ա. Պրիկլունսկին (1960) փորձնական եղանակով ապա-

ցուցել է, որ կավերում աղերի դիֆուզիան ենթարկվում է Ֆիկի օրենքին (իդեալական լուծույթներում արտաքին ազդեցության բացակայությանը կատարվող աղերի դիֆուզիային), ընդ որում դիֆուզիայի գործընթացը կավերում կախված է ոչ թե նրանց միներալային կազմից, այլ՝ գլխավորապես նրանց ֆիզ. վիճակից (խոնավությունից, ծակոտեղանությունից և սեղմելիության ցուցանիշից):

ДИФФУЗИЯ — ԴԻՖՈՒԶԻԱ, նյութի մանրագույն մասնիկների (ատոմ, մոլեկուլ, իոն) տեղաշարժ, որը ջերմային շարժման ազդեցությանը կատարվում է նրանց խտության նվազման ուղղությամբ, ի վերջո, համագեցնելով միջավայրում մասնիկների հավասարաչափ բաշխմանը: Գազերում Դ. կատարվում է արագ, հեղուկներում՝ դանդաղ, պինդ մարմիններում՝ չափազանց դանդաղ: Դ-ի շնորհիվ գազերը թափանցում են հեղուկների և կոշտ մարմինների միջով: Դ-ի արագությունը որոշվում է Դ-ի գործակցի մեծությամբ, որն աճում է ջերմաստիճանի բարձրացմանը (ջերմային շարժման արագացմանը) զուգընթաց:

ДИФФУЗНО-ПЛЕНОЧНАЯ МИГРАЦИЯ — ԴԻՖՈՒԶՍԹԱՂԱՆԹԱՅԻՆ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ), հեղուկ և գազակերպ նյութերի, մասնավորապես ածխաջրածնային միացությունների մոլեկուլային և թաղանթային տեղազաղթը բյուրեղների կամ ապարի միներալային մասնիկների մակերևույթով: Նման տեղազաղթը կատարվում է կանաման (սորբցիայի) և դիֆուզիայի երևույթների շնորհիվ:

ДЛИТЕЛЬНАЯ ОТКАЧА — ՏԵՎԱԿԱՆ ԱՐՏԱՄՂՈՒՄ, հորատանցքից, ջրհորից կամ այլ փորվածքից կատարվող ջրի արտամղումներ՝ երկարատև ժամանակամիջոցում ջրաքանակի կամ ջրի մակարդակի փոփոխությունները որոշելու համար: Տ. ա. հանդիսանում է ստ. ջրերի շահագործողական պաշարների որոշման հոսալի մեթոդ, հատկապես այն դեպքում, երբ ստ. ջրերի սնումը կրում է սեզոնային բնույթ կամ սկսում է սպառվել նաև ջրերի ստատիկ պաշարները: Մեկ կամ մի քանի աստիճանի իջեցումով անընդհատ կատարվող այս արտամղումները տևում են մի քանի տասնօրյակից մինչև մի քանի ամիս:

ДЛИТЕЛЬНАЯ ПРОЧНОСТЬ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՏԵՎԱԿԱՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆ, երկարատև սողի ենթարկված գրունտի ամրության այնպիսի վիճակ, երբ հանկարծակի (պայմանական-ակնթարթային) բեռնվածությունից շատ ավելի փոքր բարձր գործադրելիս գրունտը ենթարկվում է քայքայման: Գ. տ. ա. բնորոշ է կալիային և կիսապարածային ապարներին, որոնց մոտ ամրությունը կարող է նվազել պայմանական-ակնթարթային բեռնվածությանը ցուցաբերվող ամրության 70 %-ի չափով:

ДОБАВКИ ГИДРАВЛИЧЕСКИЕ — ՀԻԴՐԱՎԻԿ ՀԱՎԵՆՈՒՄՆԵՐ (ԽՍՈՒՆՈՒՐԳՆԵՐ), միներալային փոշեման ակտիվ նյութեր, որոնք օգտագործվում են որպես կապակցող նյութերի խառնուրդ և ուժեղացնում են նրանց ջրի մեջ ամրանալու հատկությունը: Ցարքեր տեսակի ցեմենտների ու կրի համար որպես բնական Հ. ճ. են հանդիսանում դիատոմիտը, տրեպելը, օպոկները, հրաբխային փոշին, տուֆը, պեմզան ևն: Հ. ճ. կապակցում են ցեմենտների ամրացման ժամանակ անջատվող կիրը, դրանով իսկ բարձրացնում շաղախի ջրադիմացկունությունը:

ДОЛОМИТИЗАЦИЯ — ԳՈՂՈՄԻՏԱՑՈՒՄ, ապարների երկրորդային դոլոմիտով հարստացման գործընթաց, որը կատարվում է ինչպես սկզբնային բաղադրատարրերի տեղակալման, այնպես էլ ծակոտիների, ճեղքերի և այլ դատարկությունների լցման (ապաքինման) ճանապարհով: Գ. բնորոշ է կարբոնատային ապարներին (ստավելապես կրաքարերին), որոնց բաղադրատարրերից կալցիումը ինտենսիվորեն տեղակալվում է դոլոմիտով: Կարբոնատային ապարների Գ. տեղի է ունենում ինչպես նստվածքագոյացման գործընթացում, այնպես էլ նրանց միջով վարընթաց կամ ջերմաջրային վերընթաց լուծույթների ծծանցման դեպքում:

ДОННЫЕ РАССОЛЫ (РАПА) — ՀԱՏԱԿԱՅԻՆ ԱՂԱԶՐԵՐ, հանքային լճերի հատիկային տիղմերի կամ աղային նորագոյացումների միջբյուրեղային ծակոտիներում պարունակվող աղաջրեր: Հոմանիշ՝ տիղմային կամ միջբյուրեղային աղաջրեր:

ДОПУСКАЕМАЯ НАГРУЗКА — ԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ ԲԵՌՆՎԱԾՔ, բեռնվածություն, որը կարելի է գործադրել ապարի, կառուցվածքի կամ նրա մասերի վրա՝ առանց նրանց ձևախախտումներ պատճառելու:

ДОПУСКАЕМОЕ НАПРЯЖЕНИЕ — ԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ ԼԱՐՈՒՄ, փորձի արդյունքների հիման վրա սահմանվող նորմատիվային մեծություն, որը հավասար է տվյալ գրունտի (նյութի) սահմանային (քայքայող) լարման և ընդունված ամրության արժևարի հարաբերությանը: Վերջինը որոշվում է հաշվի առնելով կառույցների ծառայության առանձնահատկությունները (նրանց երկարակեցությունն ու պատասխանատվությունը), սահմանային լարման որոշման հավաստիությունը, հաշվարկային մեթոդի ճշտությունը ևն: Տարբերում են ձգման, սեղմման, տեղաշարժի, ճնշման և այլ թ. լ-ներ:

ДОПУСТИМАЯ ГЛУБИНА ДО ГРУНТОВЫХ ВОД — ԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ ԽՈՐՈԹՅՈՒՆ ՄԻՆՉԵՎ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԸ, գրունտային ջրերի հայելու նվազագույն խորություն, որի դեպքում հողերի ճահճացում կամ աղոտացում տեղի չի ունենում: Այդ խորությունը կախված է օդահագեցման գոնայի ապարների մագաճային հատկություններից, գրունտային ջրերի հանքալուծման մեծությունից, ոռոգման չափերից և ագրոտելս. մի շարք միջոցառումներից:

ДРЕВНИЕ ОПОЛЗНИ — ՀԻՆ ՍՈՂԱՆՔՆԵՐ, երկր. անցյալում տեղի ունեցած սողանքներ, որոնք կատարվել են այլ ֆիզիկաաշխար. և երկր. իրադրությունում:

ДРЕНАЖ — ՑԱՄԱՔԵՑՈՒՄ (ՑԱՄԱՔՈՒՐԳ, ԳՐԵՆԱԺ), ջրատար ապարների, գերխոնավ հողերի ու ճահճուտների ցամաքեցում, որն իրականացվում է ինչպես բնական (ձորակներ, հովիտներ ևն), այնպես էլ արհեստական (հորատանցքեր, ջրհորեր, առուներ և այլ փորվածքներ) ճանապարհով: Տարբերում են արհեստական ճանապարհով 8. 3 եղանակներ. 1) հորիզոնական (առուներ, գետնուղիներ ևն), 2) ուղղաձիգ (հորատանցքեր, ջրհորեր, հանքափողեր ևն) և, 3) կոմբինացված (համակցված): «Ց.» տերմինը օգտագործվում է 2 իմաստով. 1) որպես ապարների ջրազրկման, չորացման գործընթաց՝ բուն ցամաքեցում, 2) որպես գործընթացի իրականացման միջոց՝ փորվածքներ, կառույցներ ևն:

**ДРЕНАЖНЫЕ ВОДЫ** — ՑԱՄԱՔՈՒՐՊԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՋՐԵՐ, ցամաքորդային (դրենաժային) կառույցներով հավաքվող ջրեր: Ելնելով Ց. ջ-ի որակական հատկանիշներից, դրանք կարելի է օգտագործել ոռոգման, տեխ. ջրամատակարարման և այլ նպատակներով:

**ДРЕНАЖНЫЕ СИСТЕМЫ** — ՑԱՄԱՔՈՒՐՊԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, տեղանքը ցամաքեցնելու կամ գրունտային ջրերի մակարդակը իջեցնելու նպատակով մակերևութային ու ստ. ջրերը հավաքելու և հեռացնելու համար նախատեսված կառույցների համակարգ: Ց. հ. լինում են ուղղաձիգ, հորիզոնական, կոնքինացված, իսկ ըստ տեղադրման՝ բաց կամ փակ (ընդերկրյա):

**ДРЕНАЖНЫЙ КОЛОДЕЦ** — ՑԱՄԱՔՈՒՐՊԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՋՐՀՈՐ, գրունտային ջրերի մակարդակի իջեցման համար կառուցված ջրհոր: Հոմանիշ՝ ցամաքորդ:

**ДРЕНИРОВАННАЯ ПЛОЩАДЬ** — ՑԱՄԱՔԵՑՎԱԾ ՏԱՐԱԾՔ, տարածք, որի սահմաններում մակերևութային ու գրունտային ջրերի հավաքումը և հեռացումը ապահովվում է կա՛մ բնական ողողամաշման (էրոզիոն) ցանցով, կա՛մ արհեստական ցամաքորդային կառուցվածքներով:

**ДРЕНЫ** — ՑԱՄԱՔՈՒՐՊԱՅԵՐ (ՈՒՐԴԵՐ, ԴՐԵՆԱՆԵՐ), ուղղաձիգ կամ հորիզոնական կառուցվածքներ, որոնց միջոցով տեղանքի մակերևութային և գրունտային ջրերը հավաքվում ու հեռացվում են՝ տեղանքը ցամաքեցնելու կամ գրունտային ջրերի մակարդակը իջեցնելու նպատակով:

## — E —

**ЕДИНИЧНЫЙ (УДЕЛЬНЫЙ) РАСХОД ПОТОКА** — ՀՈՍՔԻ ՄԻԱՎՈՐ (ՏԵՍԱԿԱՐԱՐ) ԾԱԽՍ, հոսքի լայնքի միավորին բաժին ընկնող ջրի քանակ (ծախս):

**ЕРСЕН (НЕНЕЦК.)** — ԵՐՍԵՅՆԵՐ (ՆԵՆԵՑՆԵՐՆ), սունդրայի ճահճոտներում տորֆաթմբերի միջև ոլորապտույտ բնական ջրանցքներ:

**ЕСТЕСТВЕННАЯ ВЛАЖНОСТЬ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ԲՆԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, ջրի պարունակությունը բնական տեղադրման ապարում: Քանակապես այն որոշվում է. 1) կշռային խոնավությամբ՝ ջրի կշռի և ապարի կմախքի կշռի հարաբերությամբ, 2) ծավալային խոնավությամբ՝ ջրի ծավալի և ապարի ծավալի հարաբերությամբ, 3) բերված խոնավությամբ՝ ջրի ծավալի և ապարի կմախքի ծավալի հարաբերությամբ, 4) հարաբերական խոնավությամբ՝ ջրի ծավալի և ապարի ծակոտիների ծավալի հարաբերությամբ: Օդահագեցման զոնայում Ա. ք. խ. ժամանակի ընթացքում ենթարկվում է մեծ փոփոխությունների, իսկ հագեցման զոնայում այն հասնում է իր առավելագույն չափին, այսինքն ապարի հարաբերական խոնավությունը մոտ կամ հավասար է 1-ի:

**ЕСТЕСТВЕННАЯ ФИЛЬТРАЦИЯ** — ԲՆԱԿԱՆ ԾԾԱՆՑՈՒՄ, ստ. ջրերում կախված մասնիկների ու խառնուրդների մաքրումը (տղմազատումը) ապարների

մանք ներքերով ու ծակոտիներով ծծանցվելիս: Տերմինն օգտագործվում է ստ. ջրերի բնական տղմագատման իմաստով:

ЕСТЕСТВЕННОЕ ГИДРОХИМИЧЕСКОЕ ПОЛЕ — ԲՆԱԿԱՆ ՋՐԱՔԻՄԻԱ-ԿԱՆ ԴԱՅՑ, ստ. ջրերում բիմ. միացությունների ու մեխ. խառնուրդների փաստացի դիտվող տեղաբաշխում:

ЕСТЕСТВЕННЫЕ ГАЗЫ — ԲՆԱԿԱՆ ԳԱԶԵՐ, տե՛ս Газы природные (естественные):

ЕСТЕСТВЕННЫЕ (СТАТИЧЕСКИЕ, ВЕКОВЫЕ) ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԲՆԱԿԱՆ (ՍՍՏԻԿ, ԳԱՐԱՎՈՐ) ԳԱԾԱՐՆԵՐ, տե՛ս Запасы подземных вод статические:

ЕСТЕСТВЕННЫЕ (ДИНАМИЧЕСКИЕ) РЕСУРСЫ ВОДОНОСНОГО ПЛАСТА — ՋՐԱՏԱՐ ՇԵՐՏԻ ԲՆԱԿԱՆ (ԸՍՏՈՒՆ, ԳԻՆԱՄԻԿ) ՌԵՍՈՐՍՆԵՐ, բնական պայմաններում ջրատար շերտի սնումն ապահովող ջրաքանակ, որն ստեղծվում է ի հաշիվ մթնոլորտային տեղումների ներծծման, մակերևութային ջրհոսքերի ծծանցման և հարակից ջրատար շերտերից կատարվող ներհոսքի: Ջ. Չ. Բ. Ո. քանակապես որոշվում են շերտի լայնական կտրվածքով անցնող ջրի ծախսով:

ЕСТЕСТВЕННЫЕ ШАХТЫ — ԲՆԱԿԱՆ ՀՈՐԱՆՆԵՐ (ՀԱՆՔԱՓՈՂԵՐ), ուղղաձիգ կամ մեծաթեք պատերով կարատային ուղիներ, որոնք երբեմն ունենում են մինչև 30—40 մ<sup>2</sup> լայնական կտրվածք և 200—300 մ խորություն:

ЕСТЕСТВЕННЫЙ КОЛОДЕЦ — ԲՆԱԿԱՆ ՀՈՐ, ուղղաձիգ կամ մեծաթեք պատերով կարատային ուղի, որն ունենում է մինչև մի քանի մ<sup>2</sup> լայնական կտրվածք և մինչև 10—20 մ խորություն:

## — Ж —

ЖЕЛЕЗИСТЫЕ ВОДЫ — ԵՐԿԱԹԱՅԻՆ ՋՐԵՐ, ջրեր, որոնց մեջ բարձր է ազատ երկաթի կամ նրա միացությունների պարունակությունը: Տերմինն օգտագործվում է հիմնականում հանքային բուժիչ ջրերի բնութագրման համար, որոնց մեջ երկաթի պարունակությունը բարձր է 20 մգ/լ: Տարբերում են թույլ, ուժեղ և շատ ուժեղ երկաթային ջրեր, որոնց մեջ երկաթի պարունակությունը համապատասխանաբար կազմում է 20—40, 40—100 և > 100 մգ/լ: Որոշ ստ. ջրերում երկաթը հանդես է գալիս ջրակարբոնատային միացությունների ձևով: Մետաղային հնքվ-երի թթու ջրերում երկաթը գտնվում է ծծմբաթթվային միացությունների ձևով և նրա պարունակությունը առանձին դեպքերում կարող է հասնել մի քանի տասնյակ գր/լ-ի:

ЖЕЛЕЗОБАКТЕРИИ — ԵՐԿԱԹԱՅԻՆ ՍԱՆՐԷՆԵՐ, մանրէներ, որոնք օքսիդացման ճանապարհով երկաթի թերօքսիդի աղերը վերածում են օքսիդային՝ առաջացնելով երկաթի օքսիդի չլուծվող հիդրատներ: Ե. մ-ի բուռն գործունեությունը հաճախ հանգեցնում է ճահիճներում երկաթի հանքաքարի առաջացմանը: Նրանց

կենսագործունեությունը ունենում է նաև քաղցածր և հեղուկ միջավայրում, խցանվում և շար-  
քից դուրս են գալիս ջրատար խողովակները, հորատանցքերի քամիչները ևն:

ЖЕСТКОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, ջրի հատկություն, որը դրսևոր-  
վում է ստանների, շոգեկաթսանների, ջեռուցման խողովակաշարերի մեջ կոշտ  
նստվածքների գոյացումով, օճառի վատ լուծվելով (փրփուր չի առաջանում կամ  
վատ է փրփուր) ևն: Ջ. կ. պայմանավորված է Ca-ի և Mg-ի միացությունների  
(կարբոնատային, երկկարբոնատային, սուլֆատային, քլորիդային) առկայությամբ:  
Տարբերում են Ջ. կ. հետևյալ տեսակները. 1) ընդհանուր — Ca-ի և Mg-ի բոլոր  
միացությունների հանրագումարը, 2) կարբոնատային — Ca-ի և Mg-ի կարբոնա-  
տային ու երկկարբոնատային միացությունների գումարը, 3) ոչ կարբոնատային —  
Ca-ի և Mg-ի սուլֆատային ու քլորիդային միացությունների գումարը, 4) վերաց-  
վող կամ ժամանակավոր-կարբոնատային կոշտության այն մասը, որ ջուրը եռաց-  
նելիս անջատվում է նստվածքի ձևով (Ca-ի և Mg-ի երկկարբոնատային միացու-  
թյուններ), 5) չվերացող կամ մշտական-կարբոնատային կոշտության մի մասի  
(ստանց երկկարբոնատային միացությունների) և ոչ կարբոնատային կոշտության  
գումարը, որը ջուրը եռացնելիս չի վերանում: Ջ. կ. արտահայտվում է 1 լ ջրում  
պարունակվող Ca-ի և Mg-ի մգ համարժեքների գումարով (1 մգ հառ. համապա-  
տասխանում է 20,04 մգ/լ  $Ca^{2+}$ -ի կամ 12,16 մգ/լ  $Mg^{2+}$ -ի), կամ հազվադեպ՝ գեր-  
մասնական ատոմաններով (տե՛ս Градусы жесткости): Կախված ընդհանուր կոշ-  
տության մեծությունից, Օ. Ա. Ալյուկինը առանձնացնում է հետևյալ բնական ջրերը.  
շատ փափուկ ( $< 1,5$  մգ համ./լ), փափուկ (1,5—3,0 մգ համ./լ), թույլ կոշտ  
(3—6 մգ համ./լ), կոշտ (6—9 մգ համ./լ) և շատ կոշտ ( $> 9$  մգ համ./լ):

ЖЕСТКИЕ СВЯЗИ В ПОРОДАХ — ԿՈՇՏ ԿՍՊԵՐ ԱՊՍՐՆԵՐՈՒՄ, ապար-  
ների ներքին կապեր, որոնք նրանց ամրություն են հաղորդում: Կ. կ. ա. խախտվե-  
լիս հանգեցնում են ձևափոխումների և մեխ. քայքայման դեպքում այլևս չեն վերա-  
կանգնվում:

ЖИВАЯ СИЛА ПОТОКА — ՀՈՍԳԻ ԿԵՆՂԱՆԻ ՈՒԹ, գետի կենդանի P  
ուժ, որը դրսևորում է նրա հունի և ափերի ապարների քայքայման ու տեղատար-  
ման աշխատանքի ձևով: Այն հավասար է ջրի m զանգվածի և հոսքի v արագու-  
թյան քառակուսու արտադրյալի կեսին՝  $P = \frac{mv^2}{2}$ :

ЖИВОЕ ВЕЩЕСТВО — ԿԵՆՂԱՆԻ ՆՅՈՒԹ, կենդանի օրգանիզմների ամ-  
բողջությունը, նրանց ողջ զանգվածն ու կենսագործունեությունը, որը, ըստ Վ. Ի.  
Վերնադսկու, սնորակի վրա ամենահզոր երկրաքիմ. ուժն է: Կ. գ-ի դերը մեծ է  
երկրակեղևի և ջրային ոլորտի ձևավորման գործում: Նստվածքային ապարները կամ  
անմիջականորեն առաջացել են կենդանի օրգանիզմների մնացորդներից («կենսա-  
ծին ապարներ» — կրաքար, ամուր, դիստոմիտ, նավթ ևն), կամ էլ ձևավորվել են  
Կ. գ-ով տեղեծված ֆիզքիմ. միջավայրում ( $HCO_3$ -ը,  $CO_2$ -ը,  $O_2$ -ը, pH-ը, Eh-ը ևն  
պայմանավորված են ֆաունա-ֆլորայի նյութափոխանակությամբ):

Կ. գ-երը, գլխավորապես միկրոօրգանիզմների նյութափոխանակության միջոցով  
էապես պայմանավորում են ստ. ջրերի ֆիզքիմ. պայմանները (հատկապես հիմ-  
նային-թթվային և օքսիդացման-վերականգնման պայմանները): Միկրոօրգանիզմների

կենսագործունեության հետ են կապված ստ. ջրերում ծծմբաջրածնի կուտակումները, մետաղների սուլֆիդների նստեցումը, պղնձի, ուրանի, սելենի և այլ տարրերի հանքակուտակների առաջացումը: Միկրոորգանիզմները ոչնչացնում են նավթագազատար հնքվ-երը, վերափոխում են նրանց հետ կապված ստ. ջրերի քիմ. բաղադրությունը: Կ. Գ. մեծ դեր է կատարում տիղմերի դիագենեզի գործընթացներում և տիղմային ջրերի քիմ. բաղադրության ձևավորման գործում: Միկրոորգանիզմների կենսագործունեությամբ է պայմանավորված ստ. ջրերում թթվածնի վերացումը, ինչպես նաև ուղղաձիգ ջրաքիմ. զոնայականությունը:

**ЖИВОЕ СЕЧЕНИЕ ПОДЗЕМНОГО ПОТОКА** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍԻԻ ԿԵՆ-ԳԱՆԻ ԿՏՐՎԱԾՔ, ստ. հոսքի (ջրհոսքի) ուղղությանը ուղղահայաց լայնական կտրվածք:

**ЖИЛЬНЫЕ ВОДЫ** — ԵՐԱԿԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода жильная:

**ЖИЛЬНЫЕ ИСТОЧНИКИ** — ԵՐԱԿԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ապարների առանձին բաց ճեղքերից անընդմեջ շիթով բխող աղբյուրներ:

### — 3 —

**ЗАБИВНОЙ ПЬЕЗОМЕТР** — ԽՐՈՎԻ ԾՆԾԱԶԱՓԻՉ, ոչ մեծ տրամագծի սրված կոնաձև ծայրամատվ տրացված (ծակծկված) խողովակ, որը հարվածի ուժով խրվում է ջրատար շերտի մեջ և հնարավոր է դարձնում դիտել ստ. ջրերի ճնշումնային մակարդակի տատանումները:

**ЗАБОИ** — ԽՈՐԾ (ՀՈՐԱՍԱԽՈՐԾ, ԽՈՐԾԱՄԱԿԱՏ), հորատանցքը կամ ստ. փորվածքը ապարների զանգվածից սահմանափակող և անցման աշխատանքներով նախատեսված ուղղությամբ առաջ տեղափոխվող մակերևույթ:

**ЗАБОЛАЧИВАНИЕ** — ԾԱՀԾԱՑՈՒՄ, երկրի մակերևույթի գերխոնավացած տեղամասերում ճահճատաքացման գործընթաց, որը պայմանավորված է հոսքի դժվարությամբ, ջրամերձ շերտի երկրի մակերևույթին մոտ տեղադրմամբ կամ գոլորշիացման նվազման պատճառով (օր., անտառների հրդեհումից հետո): Ծ. տեղի է ունենում նաև համեմատաբար ծանծաղ ջրավազաններում խոնավատեր (ճահճային) բույսերի փարթան աճի և բուսակալման ճանապարհով, ըստ որում բուսական մնացորդները աստիճանաբար վեր են ածվում տորֆի և ծածկում ջրավազանի ողջ մակերևույթը:

**ЗАБОЛОЧЕННЫЕ ЗЕМЛИ** — ԾԱՀԾԱՑԱԾ ՀՈՂԵՐ, մշտական կամ տևական (դարավոր) գերխոնավացած հողատարածքներ, որոնք կարող են ծածկված լինել մինչև 30 սմ տորֆաշերտով:

**ЗАБАЛ** — ՓԼՈՒԶՈՒՄ, լեռնային փորվածքներում ապարի զանգվածների ինքնաքերաքար փլում, որը երբեմն մեծ վնասներ է պատճառում և խանգարում է փորվածքների նորմալ շահագործմանը:

**ЗАВОДНЕНИЕ ВНУТРИКОНТУРНОЕ** — ՆԵՐԵԶՐԱԳԾԱՅԻՆ ԶՐԱԿԱԼՈՒՄ, նալթաքեր հորիզոնի մեջ ջուր մղելու միջոցով շերտային ճնշումն ապահովելու մեթոդ: Հորատանցքերի համապատասխան դասավորումով կարելի է ջրի ներմղման միջոցով մեծ տարածման նալթաշերտը բաժանել մեկուսացած տեղամասերի՝ նրանց զատ-զատ շահագործման նպատակով:

**ЗАВОДНЕНИЕ НЕФТЯНОГО ПЛАСТА** — ՆԱԿԹԱՅԻՆ ԾԵՐՏԻ ԶՐԱԿԱԼՈՒՄ, նալթատար (նալթագազատար) շերտի մեջ խոտով հորատանցքերի միջոցով ջրի ներմղում, որը կատարվում է շերտի նալթատվությունը բարձրացնելու համար:

**ЗАЖИВЛЕНИЕ (ЗАЛЕЧИВАНИЕ) ТРЕЩИН** — ԾԵՂՔԵՐԻ ԼՑՈՒՄ (ՍՊԻԱՑՈՒՄ, ԱՊԱՔԻՆՈՒՄ), ապարների բաց ճեղքերի բնական կամ արհեստական լցումն ու ամրացումը երկրորդական ծագման միներալներով: Երբեմն ճեղքերը լցնող նորագոյացումները ավելի ամուր են (օր., սիլիկահողերը), քան ինքը ապարի նյութը: Ը. լ. հանգեցնում է ապարների ճեղքավորվածության նվազմանը կամ խպառ վերացմանը, որը ջրաերկրք. ու ինժեներաերկրք. մեծ նշանակություն ունի: նվազում է ապարների ջրաթափանցելիությունը, մեծանում է նրանց ամրությունն ու կրողունակությունը: Խիստ ճեղքավոր ապարներում շինարարություն իրականացնելիս դիմում են ճեղքերի արհեստական լցման՝ նրանց մեջ ներարկելով կավալի նյութույթ, ցեմենտի շաղպա կամ բիտումներ (տե՛ս Закрепление грунтов):

**ЗАИЛЕНИЕ ПЛАСТА** — ԾԵՐՏԻ ՏՂՄԱԿԱԼՈՒՄ, 1. Ծերտի ծակոտիների լցումը (խցանումը) ջրում չտարրալուծվող մասնիկներով (նուրբ կավերով, երկաթա-նյութի քուլաներով են), որը հանգեցնում է ապարի ծակոտկենության ու ջրաթափանցելիության նվազեցմանը: 2. Ջրի ու կավավազի խտնորոյի (1 բաժին ջրին՝ 1,1—1,5 կավավազ) ներմղումը ստ. հողէնով բռնկված ստ. լեռնային փորվածքների մեջ: Զրացելիք տղմակալում է ապարների դատարկությունները և բացառում այրման գործընթացի համար անհրաժեշտ թթվածնի ներթափանցումը:

**ЗАЙМИЩЕ** — ՈՂՈՂԱՓՈՍՈՐԱԿ, ողողահունի (վարարահունի) փոտրակներ, որոնց մեջ գետի վարարումից հետո ջուր է մնում և այնուհետև սնում գետը:

**ЗАКАРСТОВАННЫЕ ПОРОДЫ** — ԿԱՐՍՏԱՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐ, ապարներ, որոնցում ընթացած կարստային գործընթացները հանգեցրել են դատարկությունների առաջացմանը:

**ЗАКОЛ** — ԽՈՐ ԾԵՂՔ (ԾՂՎԱԾՔ), ապարների տեղաշարժի հետևանքով նրանցում առաջացած խոր (բաց) ճեղքեր: Լեռնային գործում պայթեցման, տրանսպորտի աշխատանքի և այլ ցնցումների հետևանքով փորվածքներում Խ. ճ-երի առաջացումը սովորական երևույթ է: Փորվածքներում Խ. ճ-երով փլուզումները բացառելու նպատակով խախտո բարաբեկորները պարբերաբար արհեստականորեն փլում-թափում են:

**ЗАКОН БЭРА-БАБИНЕ** — ԲԵՐ-ԲԱԲԻՆԵԻ ՈՐԵՆՔ, օրենք, որի համաձայն Հյուսիսային կիսագնդում հարթավայրային գետերը ողողում են աջ ափը, իսկ Հա-

րավային կիսագնդում՝ ձախ ափը, պայմանավորելով գետառովյունների ափամտրիկությունը:  $A-B$ ,  $o$ -ի հիմքում դրված է Կորիոլիսի օրենքը, որի համաձայն, Երկրագնդի արևմտքից-արևելք պտտման պատճառով Երկրի մակերևույթին զուգահեռ շարժվող ցանկացած մարմին, անկախ շարժման ուղղությունից Հյուսիսային կիսագնդում թեքվում է աջ, իսկ Հարավայինում՝ ձախ:

**ЗАКОН ГЕНРИ** — ՀԵՆՐԻԻ ՕՐԵՆՔ, Ու. Հենրիի կողմից հայտնաբերված օրենք, որի համաձայն հեղուկի միավոր ծավալում գազի ծավալը ուղիղ համեմատական է ճնշմանը, եթե ջերմաստիճանը մնում է հաստատուն և հեղուկն ու գազը միմյանց վրա քիմիապես չեն ազդում: Հ.  $o$ -ի հավասարման համաձայնության գործակիցը այլ կերպ կոչվում է գազերի լուծելիության գործակից: Նախային գազերի ոչ միատեսակ (ընտրովի) լուծելիության շնորհիվ նախորդ մրանք խառորեն չեն հետևում Հ.  $o$ -ին:

**ЗАКОН ДАРСИ** — ԴԱՐՍԻԻ ՕՐԵՆՔ, ֆրանսիացի գիտնական Ա. Դարսիի կողմից 1856 թ. փորձերով հիմնավորված օրենք՝ ձևկուտկեն միջավայրում հեղուկի (ջրի) ծծանցման վերաբերյալ: Այն արտահայտում է ծծանցման արագության և ճնշման գրադիենտի գծային կախումը՝  $V=kJ$ , որտեղ՝  $V$ -ն ծծանցման արագությունն է (սմ/վրկ, մ/օր),  $k$ -ն ծծանցման գործակիցն է (սմ/վրկ, մ/օր),  $J$ -ն ճնշման գրադիենտն է կամ հիդրավիկ թեքությունը: Հոսանիշ՝ ծծանցման գծային օրենք:

**ЗАКОН ПРИРОДНОЙ ЗОНАЛЬНОСТИ** — ԲՆԱԿԱՆ ԶՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, Վ. Վ. Դոկուչևսի կողմից հայտնաբերված օրենք, որը կայանում է հետևյալում. Երկրագնդի ցամաքը ստորաբաժանվում է լայնակի գոտիների կամ լանդշաֆտային զոնաների, որոնք միմյանցից տարբերվում են կլիմայով, հողերով, կենդանական ու բուսական աշխարհով: Ըստ Ա. Ե. Ֆերսմանի, լանդշաֆտային զոնաները երկրաքիմ. զոնաներ են, քանի որ բնական զոնայականությունը պայմանավորում է մակերևույթային երկրաքիմ. գործընթացների զարգացման հիմնական օրինաչափությունները: Որոշակի կապ է դիտվում նաև բնական զոնայականության և գրունտային ջրերի զոնայականության միջև (տե՛ս Зональность грунтовых вод):

Հայտնի է, որ բնական զոնայականության երևույթը առավել հստակորեն դիտվում է նախկին ԽՍՀՄ Եվրոպական մասի տարածքում: Այստեղ հյուսիս-արևմտքից հարավ-արևելք պարզորոշ հերթափոխվում են հետևյալ զոնաները. 1) սառցային, 2) բևեռային անապատների, 3) տուրքայի և անտառատուղրայի, 4) անտառային, 5) անտառատափաստանային, 6) տափաստանային և, 7) անապատային:

**ЗАКОН ПАУЛЯ** — ՌԱՌԼԻԻ ՕՐԵՆՔ, Ֆ. Ռաուլի կողմից հայտնաբերված օրենք, ըստ որի որևէ գազի լուծումը հեղուկում կշարունակվի մինչև ազատ գազի և հեղուկում գտնվող գազի մասնակային (պարցիալ) ճնշումների հավասարվելը.  $P_i = p_x$ , որտեղ՝  $P_i$ -ն տվյալ գազի գոլորշիների առաձգականությունն է որոշակի ջերմաստիճանում,  $p$ -ն՝ գազի մասնակային ճնշումը,  $x$ -ը գազի մոլային խտությունն է հեղուկում:

**ЗАКОН СТОКСА** — ՍՏՈՔՍԻ ՕՐԵՆՔ, անգլիացի գիտնական Ջ. Ստոքսի կողմից հայտնագործված օրենք (1851 թ.), որն արտահայտում է անսահման մա-

ծուցիկ հեղուկի միջով շարժվող գնրաձև մարմնին ցուցաբերվող դիմադրության  $F$  ուժը  $F=6\pi\eta rV$ , որտեղ՝  $r$ -ը գնդի շառավիղն է (սմ),  $\eta$  -ն հեղուկի ներքին շփման (մածուցիկության) գործակիցն է,  $V$ -ն գնդի շարժման արագությունն է (սմ/վրկ): Ա. օ-ից արտածվում է հեղուկի մեջ մասեր մասնիկների անկման արագության որոշման բանաձևը (տե՛ս Формула Стокса):

**ЗАКОН ФИЛЬТРАЦИИ ЛИНЕЙНЫЙ** — ԾԾԱՆՑՄԱՆ ԳՆԱՅԻՆ ՕՐԵՆՔ, տե՛ս Закон Дарси:

**ЗАКОН ШЕЗИ** — ԾԵԶԻԻ ՕՐԵՆՔ, Ծեզիի կողմից հայտնաբերված օրենք, որի համաձայն ջրի մրրկային (տուրբուլենտ) շարժման դեպքում  $V$  արագության և ճնշման  $J$  գրադիենտի կախումը բառակուսային է՝  $V = k\sqrt{J}$ , որտեղ  $k$ -ն ծծանցման գործակիցն է (սմ/վրկ, մ/օր): Հոմանիշ՝ ծծանցման ոչ զժային օրենք:

**ЗАКРЕПЛЕНИЕ ГОРНЫХ ПОРОД (ГРУНТОВ)** — ԱՊԱՐՆԵՐԻ (ԳՐՈՒՆՏ-ՆԵՐԻ) ԱՄՐԱՑՈՒՄ, ապարների (գրունտների) ֆիզմեխ. հատկությունների արհեստական բարելավում, որը կատարվում է նրանց առաձգականության ու կայունության բարձրացման և ձևախախտումների ու ջրաթափանցելիության նվազեցման համար: Այդ նպատակներով կիրառվում են զանազան մեթոդներ. գրունտների սառեցում, ցեմենտացում, կավացում, սիլիկատացում, տաք ու սառը բիտումացում ևն, որոնց ընտրությունը կախված է հիմնականում տեղանքի երկրբ. կառուցվածքից, ջրաերկրբ. պայմաններից, ապարների կազմից, հատկություններից և դրանց բարելավման նպատակներից: Օր., կավային փոխր գրունտների ամրացման համար հաջողությամբ կիրառվում է սիլիկատացումը, ապառաժային ջրատար գրունտների համար՝ ցեմենտացումը, կավացումն ու բիտումացումը, ջրով գերհագեցած ստրոմ գրունտների համար՝ սառեցումը ևն: Հոմանիշ՝ գրունտների ինժեներական մեխո-բացիա:

**ЗАКРЫТАЯ ПОРИСТОСТЬ (ТРЕЩИНОВАТОСТЬ)** — ՓԱԿ (ՄԵԿՈՒՍԱՑԱԾ) ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ (ԾԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ), ապառաժային կամ կիսաապառաժային ապարներում մեկուսացված (չհաղորդակցվող) ծակոտիների ու ճեղքերի սակայություն:

**ЗАЛЕЧИВАНИЕ ТРЕЩИН** — ՇԵՂՔԵՐԻ ԼՑՈՒՄ (ՓԱԿՈՒՄ, ԱՊԱՔԻՆՈՒՄ), տե՛ս Заживление (залечивание) трещин:

**ЗАМОРАЖИВАНИЕ ГОРНЫХ ПОРОД (ГРУНТОВ)** — ԱՊԱՐՆԵՐԻ (ԳՐՈՒՆՏՆԵՐԻ) ԱՍՈՒՑՈՒՄ, խոնավ կավային ապարների կամ ջրատար տարակազմ ապարների (օր., հուսագրունտների) ամրացում՝ նրանց սառեցման միջոցով: Ա. ս. իրագործվում է հորատանցքերի խիտ ցանցի միջոցով, որոնցում շրջանառության մեջ են դրվում գերսառը ( $-20$ — $-30^\circ$  Ց) աղաչրերը: Ա. ս., որը դժվարության ու թանկության պատճառով կարճատև միջոցառում է, մեծ արդյունավետությամբ կիրառվում է դժվարանց տեղամասերում լեռնային և շին. աշխատանքները հեշտացնելու համար:

**ЗАПАСЫ ВОДЫ (ВЛАГИ) В ПОЧВЕ** — ՋՐԻ (ԽՈՆՆԱՎՈՒԹՅԱՆ) ՊԱՇԱՐ  
ՀՈՂՈՒՄ, հողի դիտարկվող շերտում եղած ջրի (խոնավության) քանակը՝ արտա-  
հայտված մմ-երով: Այն հաշվարկվում է հողի խոնավության, ծավալային կշռի և  
շերտի հաստության տվյալների հիման վրա:

**ЗАПАСЫ ГРУНТОВЫХ ВОД АКТИВНЫЕ** — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱԿՏԻՎ  
ՊԱՇԱՐՆԵՐ, ըստ Ս. Կ. Բուտովի (1933), գրունտային ջրերի ամեն տարի վերա-  
կանգնվող պաշար կամ գրունտային ջրերի հորիզոնի ամենամյա սնման չափ: Հնա-  
ցած տերմին: Հոմանիշ՝ գրունտային ջրերի շարժուն (դինամիկ) պաշարներ կամ վե-  
րականգնվող պաշարներ:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՈՌԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐ, ջրատար  
ապարների ծակոտիների, ճեղքերի և այլ դատարկությունների մեջ եղած գրավի-  
տացիոն ջրի քանակ: Տարբերում են Ս. Զ. պ-ի հետևյալ տեսակները. երկրք., դա-  
րավոր, ընդհանուր, ստատիկ (չվերականգնվող), դինամիկ (վերականգնվող), շա-  
հագործողական, առաձգական, կարգավորիչ, ակտիվ, հաշվեկշռային, արտահաշ-  
վեկշռային են: Ս. Զ. պ-ի տեսակների հարցում մասնագետների մոտ միասնական  
կարծիք չկա: Օր., Ն. Մ. Ֆրոլովը և Լ. Ս. Յազվինը (1984) ստաջարկում են Ս. Զ.  
պ-ի տակ ընդունել ուսումնասիրվող համակարգում գտնվող ստ. ջրերի ընդհանուր  
տարեկան միջին քանակը:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД БАЛАНСОВЫЕ** — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՇ-  
ՎԵԿՇՈՒՑԻՆ (ԲԱԼԱՆՍԱՅԻՆ) ՊԱՇԱՐՆԵՐ, ստ. ջրերի պաշարների այն մասը,  
որի շահագործումը ներկա ժամանակներում տնտեսապես շահավետ է և տեխնիկա-  
պես հնարավոր:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ВЕКОВЫЕ** — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԱՐԱ-  
ՎՈՐ ՊԱՇԱՐՆԵՐ, ազատ մակերևույթ ունեցող ջրատար հորիզոնի ջրի մակար-  
դակի տատանման զոնայից ներքև եղած և ճնշումնային ջրատար հորիզոնում  
պարփակված ջրերի պաշարներ, որոնց քանակը հավասար է ապարների ճեղքերում,  
ծակոտիներում և կարստային դատարկություններում եղած գրավիտացիոն ջրի ծա-  
վային: Բնական պայմաններում Ս. Զ. դ. պ-ի մեծությունը փոխվում է միայն երկր-  
ծամանակահատվածում: Գործածությունից դուրս եկած տերմին:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ВОЗОБНОВЛЯЕМЫЕ** — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵ-  
ՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ՊԱՇԱՐՆԵՐ, ըստ Ն. Մ. Ֆրոլովի և Լ. Ս. Յազվինի  
(1984), ստ. ջրերի պաշարների այն մասը, որ հավասար է ուսումնասիրվող ջրա-  
տար համակարգի գումարային սնման միջին տարեկան մեծությանը: Հոմանիշ՝ ստ.  
ջրերի սնում, ստ. ջրերի շարժուն (դինամիկ) պաշարներ, ստ. ջրերի բնական ռե-  
սուրսներ, ստ. ջրերի հոսքի ծախս:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ГЕОЛОГИЧЕСКИЕ** — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ  
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, ըստ Ն. Մ. Ֆրոլովի և Լ. Ս. Յազվինի (1984),  
ստ. ջրերի պաշարների այն մասը, որը բնական (չխախտված) պայմաններում  
գտնվում է ուսումնասիրվող ջրատար համակարգում մեկ տարուց ավելի: Հոմանիշ՝

ստ. ջրերի չվերականգնվող պաշարներ, ստ. ջրերի բնական պաշարներ, ստ. ջրերի ստատիկ (կայուն) պաշարներ:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ДИНАМИЧЕСКИЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԾԱՌԺՈՒՆ (ԴԻՆԱՄԻԿ) ՊԱԾԱՐՆԵՐ, տե՛ս Запасы подземных вод возобновляемые:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ЕСТЕСТВЕННЫЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱԾԱՐՆԵՐ, ստ. ջրերի պաշարներ, որոնք ձևավորվում են մարդու ինժեներատնտ. գործունեությամբ չխախտված բնական պայմաններում:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ЗАБАЛАНСОВЫЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՐՏԱՀԱԾՎԵԾՈՒՅԻՆ (ԱՐՏԱԲԱԼԱՆՍԱՅԻՆ) ՊԱԾԱՐՆԵՐ, ստ. ջրերի պաշարների այն մասը, որի օգտագործումը տնտեսապես շահավետ կլինի սպագայում՝ շահագործման տեխնիկայի կատարելագործման, օգտակար բաղադրատարրերի ստացման նոր տեխնոլոգիայի մշակման և այլ հանգամանքների շնորհիվ:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ИСКУССТВЕННЫЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՐՀԵՍՍԱԿԱՆ ՊԱԾԱՐՆԵՐ, ստ. ջրերի պաշարներ, որոնք ստեղծվում են մարդու ինժեներատնտ. գործունեության հետևանքով: Այդ գործունեությունը կարող է լինել այլ նպատակներ հետապնդող և նպատակամղված: Լեռնահանքային, շին. ու գյուղատնտ. ամենաբազմապիսի աշխատանքները, հաճախ մարդու կամքից անկախ, կարող են հանգեցնել ստ. ջրերի արհեստական պաշարների ստեղծման: Բացի այդ, վերջին տասնամյակներին, ստ. ջրերի ինտենսիվ շահագործմանը զուգընթաց, մարդը դիմում է դրանց պաշարների արհեստական վերականգնման նպատակամղված գործունեության՝ մակերևութային հոսքը արհեստական ճանապարհով (լեռնային փորվածքների միջոցով) երկրի ընդերք ուղղելով:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ОБЩИЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱԾԱՐՆԵՐ, ստ. ջրերի կայուն (ստատիկ) և շարժուն (դինամիկ) պաշարների գումարային քանակը: Հոմանիշ՝ ստ. ջրերի պաշարներ:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ПРИВЛЕКАЕМЫЕ (ПРИВЛЕЧЕННЫЕ) — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ (ՆԵՐԳՐԱՎՎԱԾ) ՊԱԾԱՐՆԵՐ, ջրատար հորիզոնի շահագործման ժամանակ ստացվող լրացուցիչ պաշարներ, որոնք հորիզոնի մակարդակի իջեցման կամ ճնշման նվազման հետևանքով ներգրավվում են հարակից այլ ջրատար հորիզոններից:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД РЕГУЛИРОВОЧНЫЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԿԱՆՈՆՍԱՎՈՐՎՈՂ ՊԱԾԱՐՆԵՐ, գրունտային ջրերի մակերևույթի (ազատ հալելու) սեզոնային տատանումների զոնայում գտնվող ջրի ծավալը: Հոմանիշ՝ գրունտային ջրերի վերականգնվող պաշարներ:

ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД СТАТИЧЕСКИЕ — ՍՏՈՐԵՎՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԿԱՑՈՒՆ (ՍՍՏԻԿ) ՊԱԾԱՐՆԵՐ, տե՛ս Запасы подземных вод геологические:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД УПРУГИЕ** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ, ՋՐԵՐԻ ԱՌԱՋ-  
ԳԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, ճնշումնային ջրերի պաշարների այն մասը, որն ստեղծվում  
է ջրի ծավալի ընդարձակման և ծակոտային տարածության փոքրացման հաշվին,  
երբ արտառվման հետևանքով շերտում ջրատարիկ ճնշումը նվազում է:

**ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ЭКСПЛУАТАЦИОННЫЕ** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ,  
ՋՐԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾՈՂԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, ստ. ջրերի պաշարների այն մասը, որը  
կարող է ստացվել տեխնիկատնտ. տեսակետից շահավետ ջրհան կառույցներով՝  
շահագործման սահմանված ռեժիմի և ջրի որակի պահպանմամբ՝ ջրամատակարար-  
ման հաշվարկային ողջ ժամանակամիջոցում (շուրջ 25—30 տարի):

**ЗАПЕРТЫЕ (ЗАПЕЧАТАННЫЕ) ВОДЫ** — ՊԱՐՓԱԿՎԱԾ ՋՐԵՐ, ստ. ջրերի  
ուսպնակաձև ջրատար հորիզոններ, որոնք բոլոր կողմերից պարփակված են ջրան-  
թափանց ապարներով և գործնականում չեն հաղորդակցվում այլ ջրատար հորի-  
զոնների հետ: Պ. ջ. գերազանցապես լինում են նստվածքալուտակման (սեդիմեն-  
տացիոն) ծագման, հիմնականում կապված են լինում նավթային հնքվ-երի, ինչպես  
նաև աղատար հաստվածքների հետ և սովորաբար աչքի են ընկնում բարձր հան-  
քայնացմամբ: Աղատար հաստվածքների Պ. ջ-ում հաճախ բարձր է բրոմի, մագնիու-  
մային աղերի, երբեմն նաև բորի պարունակությունը: Ավելորդ տեղումին:

**ЗАРЕГУЛИРОВАННЫЙ СТОК ВОДЫ** — ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՋՐՀՈՍՔ, մա-  
կերևության ջրհոսք, որի ռեժիմը ջրամբարներով և այլ ջրատեխ. կառույցներով  
կարգավորված ու արհեստականորեն վերաբաշխված է կամ պայմանավորված է  
լճերի, գետափունների և գետաբերուկային ջրատար նստվածքների կուտակիչ ազդե-  
ցությամբ:

**ЗАСОЛЕНИЕ ПОЧВ** — ՀՈՂԵՐԻ ԱՂՈՒՏԱՑՈՒՄ, հողերում աղերի կուտակում,  
որը վնասակար ազդեցություն է ունենում գյուղատնտ. կուլտուրաների աճի ու  
բերքատվության վրա: Հ. ա. տեղի է ունենում ստ. ջրերի բարձր տեղադրման ժա-  
մանակ, որի դեպքում նրանք հասցնում են օդահագեցման զոնայի ապարների մագա-  
նթներով բարձրանալ երկրի մակերևույթ, գոլորշիանալ և իրենց մեջ լուծված  
աղերը թողնել հողի մակերևույթին: Հողը համարվում է աղակալված, եթե նրա մեջ  
ջրում լուծվող աղերի պարունակությունը հասնում է 0,25 %-ի: Հ. ա-ի դեմ պայ-  
քարի հիմնական միջոցներից են. գրունտային ջրերի մակարդակի իջեցումը, ցա-  
մաբուրդը, հողերի լվացումը, մելիորանտներով հագեցումը ևն:

**ЗАСУХА СОЛЯНАЯ** — ԱՂԱՑԻՆ ԶՈՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ, տափաստանային գո-  
տիներում չորացած լճեր, որոնց հատակն ու ափերը պատվում են աղափառով (տե՛ս  
Гуджир): Հոմանիշ՝ հուշիր:

**ЗАТОПЛЕНИЕ** — ՋՐԱԿԱՌՈՒՄ, մակերևույթային հոսքի վարարումների ու  
նեղեղումների, ինչպես նաև արհեստական ջրամբարների կառուցման հետևանքով  
տեղանքի ջրակալում: Այն կարող է լինել նաև գրունտային ջրերի մակարդակի  
բարձրացման և ճնշումնային ջրերի բեռնաթափման հետևանքով (պայմանավորված  
մարդու տեխնածին գործունեությամբ):

**ЗАТРУБНАЯ ЦИРКУЛЯЦИЯ ВОД** — ՋՐԵՐԻ ԱՐՏԱՆՈՂՈՎԱԿԱՅԻՆ ԾՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ջրերի շարժում մեկ հորիզոնից մյուսը կամ դեպի հորատանցքի քամիչը՝ արտախողովակային տարածության միջոցով: Ջ. ա. շ. առաջանում է այն դեպքում, երբ վնասված է անրակապման խողովակաշարի կամ ցեմենտյա օղակի ամբողջականությունը: Երբեմն հարկ է լինում Ջ. ա. շ. ստեղծել արհեստական ճանապարհով՝ ջրակերպ: որոշակի նպատակների համար:

**ЗАХВАТНАЯ ЗОНА КОЛОДЦА** — ՋՐՀՈՐԻ ԶԱՎԹՄԱՆ ԶՈՆԱ, ստ. ջրհոսքի այն մասը, որը ներգրավում է ջրհորը՝ նրանից կատարվող արտամղումների ծամանակ: Զախվման զոնային հարող ջրհոսքը, թեպետ մասամբ կրում է ջրհորի ազդեցությունը, այսինքն գտնվում է իշույթային (դիսպրեսիոն) ձագարի ազդեցության ոլորտում, սակայն նրա կողմից չի ներգրավվում:

**ЗАХОРОНЕНИЕ ПРОМЫШЛЕННЫХ СТОКОВ** — ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀՈՍՔԱԶՐԵՐԻ ԹԱՂՈՒՄ, արդյունաբերական թունավոր (ստավելապես ռադիոակտիվ) հոսքաջրերի ներմղումը խորը տեղադրված համապարփակ ջրափափանց ապարաշերտերի մեջ: Սովորաբար նման միջավայր հանդիպում է ջրափոխանակման բացակայության զոնայում, որտեղ հոսքաջրերի փախուստը (կորուստը) գործնականում բացառվում է: Որոշ դեպքերում Ա. հ. թ. կատարվում է շահագործված նավթատար շերտավանդների մեջ:

**ЗАЩЕМЛЕННАЯ ВОДА** — ԾՋՄՎԱԾ (ԿԾԿՎԱԾ) ԶՈՒՐ, նույնն է, ինչ Անկլունային ջուրը (տե՛ս Угловые воды) կամ Պենդուլյար ջուրը (տե՛ս Пендулярная вода):

**ЗАЩЕМЛЕННЫЙ ВОЗДУХ** — ԾՋՄՎԱԾ ՕԴ, օդի պղպշակ՝ ապարի ծակոտիներում պարունակված ջրի մեջ: Այդ պղպշակը հարևան պղպշակների կամ մթնոլորտային օդի հետ չի հաղորդակցվում:

**ЗЕМЛЕТРЯСЕНИЕ ТЕХНОГЕННОЕ** — ՏԵԽՆԱԾԻՆ ԵՐԿՐԱԾԱՐԺ, երկրաշարժ, որն առաջանում է մարդու ինժեներատնտ. գործունեության հետևանքով: Մարդու հարածուն տնտ. գործունեությունը, հատկապես լեռնահանքային արդյունաբերությունն ու ջրաշինարարությունը հանգեցնում են ռեյիեֆի ու ընդերքի հսկայական ձևափոխությունների, որոնց հետևանքով երկրակեղևում տեղի են ունենում ցնցումներով ուղեկցվող լարումների վերաբաշխում: Վերջին տասնամյակներին կառուցված խոշոր (միլիարդավոր մ<sup>3</sup> ծավալի) ջրամբարների շրջակայքում կամ լեռնահանքային կենտրոններում գրանցվել են տարբեր ուժգնության երկրաշարժեր, որոնց արհեստական ծագումը կասկած չի հարուցում:

**ЗЕМЛЯНОЕ КОРЫТО** — ՀՈՂԱՅԻՆ ՏԱՇՏԱԿ, տե՛ս Балластное корыто:

**ЗЕРКАЛО ВОДНОЕ** — ԶՐԱՅԻՆ ՀԱՅԵԼԻ, մակերևութային և գրունտային ջրերի ազատ մակերևույթ:

**ЗЕРКАЛО ГРУНТОВЫХ ВОД** — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՀԱՅԵԼԻ, գրուն-

տալին ջրերի ազատ մակերևույթ, որը ջրաերկրք- բարտեզների վրա արտացոլվում է ջրաիզոգծերի (հիդրոիզոհիպսերի) միջոցով:

**ЗЕРКАЛО СКОЛЬЖЕНИЯ** — ՍԱՀՔԻ ՀԱՅՅԼԻ, ապարներում հարթ (հայելալային) մակերևույթներ, որոնք առաջանում են որոշակի հարթություններով ապարների տեղաշարժման ժամանակ: Ս. հ-ներ հիմնականում դիտվում են տեկտ. տեղաշարժերի, ինչպես նաև սողանքների դեպքում: Կախված ապարների միներալային և մեխ. կազմից, Ս. հ-ների վրա սովորաբար առաջանում են ակունք ու խազեր, որոնք ցույց են տալիս ապարների տեղաշարժի ուղղությունը:

**ЗЕРНОВОЙ СОСТАВ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ՀԱՏԻԿԱՅԻՆ ԿԱԶՄ, տե՛ս Գранулометрический состав горных пород:

**ЗОЛИ** — ԶՈՒԵՐ (ԿՈՒՈՒԿ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ), տարակազմ ծայրահեղ ցրվածության (դիսպերս) լուծույթների համակարգեր կամ կոլոիդ լուծույթներ: Ի տարբերություն մեղի (տե՛ս Դель), Զ-ի մոտ դիսպերս փուլի մասնիկները (միգելաները) տարածական կառուցվածքով կապված չեն: Զ. զանազանում են ըստ դիսպերս միջավայրի բնույթի, ինչպես օր., հիդրոգոլեր, աերոգոլեր, օրգանագոլեր ևն, որոնցում դիսպերս միջավայր են ծառայում համապատասխանաբար ջուրը, օդը և օրգ. հեղուկները:

**ЗОЛИ** — ԶՈՒԼԵՐ (ՍԱՌՑԱՓՈՍՈՐԱԿՆԵՐ), հին չորրորդական սառցապատման մարզերում տարածված ոչ մեծ կլորավուն փտորակներ, որոնք թաղված սառցային ոսպնյակների հալչման հետևանքով (չերմակարստ) առաջանում են զանդրային հարթավայրերում (հատակային սառցաբեկորներում, լյտակերպ ավազակավերի ծածկոցներում): Հաճախ Զ. լցված են լինում ջրով, տորժով կամ լճային տիդմով: Նախկին ԽՍՀՄ Եվրոպական մասի միջին գոտում և Արևմտյան Սիբիրում Զ-ին անվանում են նաև ափսեանն փտորակներ (տե՛ս Բлюда):

**ЗОНА** — ԶՈՆԱ (ԵՐԿՐԱԾԵՐՑ, ԽԱՎ, ԳՈՏԻ), ըստ Օ. Կ. Լանգեի, որևէ բնական օբյեկտի (օր., գրունտային ջրերի) տեղադիրքը ուղղաձիգ կտրվածքում: Զրաերկրաբանությունում այս տերմինը երբեմն օգտագործվում է որպես մարզի, տարածքի կամ շրջանի հոմանիշ, որը ճիշտ չէ: Պլանում բնական օբյեկտի տեղադիրքը հարմար է բնութագրել գոտի տերմինով: Օր., Водоохранная зона — Զրապաշտպանական գոտի, Черноземная зона — Սևահողային գոտի ևն:

**ЗОНА АКТИВНОГО ВОДООБМЕНА** — ԱԿՏԻՎ ԶՐԱՓՈՒՍԱՆԱԿՄԱՆ ԶՈՆԱ, ըստ Ն. Կ. Իզմատովիչի (1944), ջրաերկրք. կտրվածքի վերին մաս, որը գտնվում է տեղական ողողատարման հիմքից բարձր: Ա. ջ. գ. ընդգրկում է գրունտային և արտեզյան ջրերի վերին հորիզոնները, որոնք սերտ կապի մեջ են մթնոլորտային և մակերևութային ջրերի հետ: Հոմանիշ՝ ազատ ջրափոխանակման զոնա:

**ЗОНА АЭРАЦИИ** — ՕՐԱՀԱԳԵՑՄԱՆ ԶՈՆԱ, երկրակեղևի ամենավերին զոնա՝ երկրի մակերևույթի և գրունտային ջրերի հայելու (հազեցման զոնայի) միջև: Օ. գ-ի ապարների դատարկությունների մեծ մասը զբաղված է օդով և ջրային գոլորշիներով: Այստեղ տարածված են խոնավածուծ, թաղանթային և մազանոթային ջրերը,

միայն ժամանակավորապես երևան են գալիս նաև գրավիտացիոն ջրերը (վերնաջրերը):  
0. գ-ի ջրային ռեժիմը էապես կախված է տեղանքի կլիմայական պայմաններից:

**ЗОНА ВЕСЬМА ЗАТРУДНЕННОГО ВОДООБМЕНА** — ՉԱՓԱԶԱՆՑ ԳԸԺ-  
ՎԱՐ ԶՐԱՓՈՒՅԱՆԱԿՄԱՆ ԶՈՆԱ, ըստ Ն. Կ. Իգնատովիչի (1944), ջրատրկրբ.  
կտրվածքի ստորին մաս, որը տեղադրված է ողողատարման ռեգիոնալ հիմքից  
(համաշխարհային օվկիանոսից) ներքև: 2. դ. 2. գ-ի ստ. ջրերը մակերևութային  
ջրերի հետ անմիջական կապ չունեն:

**ЗОНА ВЛИЯНИЯ СКВАЖИНЫ (КОЛОДЦА)** — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ (ԶՐՀՈՐԻ)  
ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԶՈՆԱ, հորատանցքին (ջրհորին) հարող ջրատար հորիզոնի  
այն մասը, որը արտամղումների ժամանակ ենթարկվում է ջրազրկման: Հ. ա. գ.  
արտամղման գործընթացում իրենից ներկայացնում է ջրի մակերևույթի ձագարածն  
իջույթ, որի կենտրոնում գտնվում է գործող հրատանցքը: Այդ ձագարածն իջույթի  
ձևերն ու չափերը պայմանավորված են հորիզոնի ջրատրկրբ. պարամետրերով  
(ծծանցման գործակից, տեսակարար ծախս, ազդեցության շառավիղ ևն): Արտա-  
մղման սկզբում է. ա. գ. արագորեն է ձևավորվում, իսկ այնուհետև դանդաղորեն  
տարածվում է ընդհուպ մինչև ջրատար շերտի սահմանները: Եթե ջրատար շերտը  
շահագործվում է մի քանի հորատանցքերով, ապա նրանց ազդեցության զոնաները  
եզրամասերում վերադրվում են և պայմանավորում հորատանցքերի փոխազդեցու-  
թյունը (ինտերֆերենցը), որը հանգեցնում է ջրատար շերտի ինտենսիվ չորացմանը:

**ЗОНА ВОДООХРАННАЯ** — ԶՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻ (ԶՈՆԱ), տեղա-  
մաս, որն առանձնացվում է մակերևութային և ստ. ջրերը աղտոտումից պահպա-  
նելու համար: Զ. գ. չափերը որոշվում են էլևելով մեխ., քիմ. և մանրէաբանական  
աղտոտման ու համաճարակային հիվանդությունների տարածման հնարավորություն-  
ներից (տե՛ս Зона охранная санитарная водозаборов):

**ЗОНА ВЫВЕТРИВАНИЯ** — ՀՈՂՄԱՀԱՐՄԱՆ ԶՈՆԱ, երկրակեղևի վերին  
զոնա, որի սահմաններում տեղի են ունենում ֆիզ. և քիմ. հողմահարման գործընթաց-  
ներ: Հ. գ-ի հզորությունը կտրտված ռելիեֆի պայմաններում կարող է հասնել 500 մ-ի,  
իսկ հարթ տեղանքում այն չի գերազանցում մի քանի տասնյակ մ-ից, ընդ որում  
հողմահարման ակտիվ գործընթացներ դիտվում են ընդամենը մի քանի մ-ի սահ-  
մաններում:

**ЗОНА ВЫЩЕЛАЧИВАНИЯ** — ՏԱՐՐԱՆՈՒԾՄԱՆ ԶՈՆԱ, մետաղային հնքվ-  
երի մակերևութային մաս, որը ստ. ջրերի կողմից տարրալուծման հետևանքով գրեթե  
գուրկ է հանքային միներալներից: Տ. գ. ստավել բնորոշ է ներփակումային (պոր-  
ֆիրային) տիպի պղինձ-կոլչեդանային հնքվ-երին:

**ЗОНА ГИДРОДИНАМИЧЕСКАЯ** — ԶՐԱԳԻՆԱՄԻԿ (ՀԻԳՐՈԳԻՆԱՄԻԿ) ԶՈ-  
ՆԱ, ջրատրկրբ. կտրվածքի մաս, որտեղ տարածված ստ. ջրերն ունեն սնման,  
շարժման և բեռնաթափման միանման պայմաններ: Ն. Կ. Իգնատովիչը (1944)  
առանձնացնում է 3 Ձ. գ-ներ՝ ակտիվ (ազատ) ջրափոխանակման, դժվար ջրափո-  
խանակման և խիստ դժվար ջրափոխանակման:

**ЗОНА ГИДРОХИМИЧЕСКАЯ** — ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԶՈՆԱ, ջրաերկր. կտրվածքի մաս, որի սահմաններում ստ. ջրերի քիմ. կազմի ցուցանիշները (կամ մի մասը) նման են կամ կրում են աննշան փոփոխություններ: Զ. գ-ների առկայությունը հիմնականում կախված է ստ. ջրերի շարժման պայմաններից և, որպես կանոն, Զ. գ-ները համընկնում են ջրադինամիկ զոնաների հետ (տե՛ս Зона гидродинамическая):

**ЗОНА ГИПЕРГЕНЕЗА** — ՎԵՐՆԱԾՆՈՒԹՅԱՆ (ՀԻՊԵՐԳԵՆԵԶԻ) ԶՈՆԱ, ըստ Ն. Կ. Իգնատովիչի, ստ. ջրերի տեղաշարժի զոնա: Վ. գ. իր ներթիճ ստորաբաժանվում է ակտիվ և դանդաղ ջրափոխանակման զոնաների: Ակտիվ ջրափոխանակման զոնան գտնվում է տեղական ողողատարման հիմքից (խոշոր գետաճյուղներից) վերև, որտեղ ստ. հոսքը սերտ կապի մեջ է մակերևութային ջրերի հետ, իսկ ստ. ջրերի շարժումն (դինամիկ) պաշարները գերազանցում են կալուն պաշարներին: Այդ զոնայի հաստությունը պլատֆորմային գոտիներում հասնում է 200—300 մ-ի, իսկ լեռնային մարզերում՝ 0,5—1,0 կմ-ի: Վ. գ-ի ապարները հիմնականում տարրալուծված են, ջրերն ունեն փոքր հանքայնացում և ջրակարրոնատային բաղադրություն: Դանդաղ ջրափոխանակման զոնան սուբորարք գտնվում է ողողատարման տեղական հիմքից ներքև, իսկ ստորին սահմանը պայմանականորեն ընդունվում է ծովային իջվածքը: Զոնայի հաստությունը պլատֆորմային գոտիներում հասնում է 500—600 մ-ի, իսկ ծալքավոր մարզերում՝ 1,0—2,0 կմ-ի, հիմնականում ընդգրկելով խորը տեղադրման արտեզյան ավազանները, որոնց կալուն պաշարները գերազանցում են շարժուն պաշարներին: Դանդաղ ջրափոխանակման զոնայում ներկայումս էլ ընթացում են ապարների տարրալուծման գործընթացներ, որոնց հետևանքով ջրերն ունեն բարձր հանքայնացում (մինչև 5—10 գր/լ) և առավելապես սուլֆատ-բորիդային կազմի են: Հ. գ-ից ներքև գտնվում է կատազենեզի զոնան:

**ЗОНА ГОДОВЫХ (СЕЗОННЫХ) КОЛЕБАНИЙ ТЕМПЕРАТУРЫ** — ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ (ՍԵԶՈՆԱՅԻՆ) ՏՍՏԱՆՈՒՄՆԵՐԻ ԶՈՆԱ, երկրակեղևի վերին, մակերևութին մոտ մասը, որտեղ ապարների ջերմային տատանումները կախված են մթնոլորտային օդի ջերմային տատանումներից: Զ. տ. տ. գ-ի հաստությունը հասնում է 25—30 մ-ի, ըստ որում, խորությանը զուգընթաց ջերմային տատանումները խիստ նվազում են: Զոնայի ստորին սահմանում (չեզոք շերտում) ջերմաստիճանը կալուն է և հավասար տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանին: Ավելի ներքև ջերմությունն սկսում է աճել համաձայն երկրաջերմային գրադիենտի (տե՛ս Геотермический градиент):

**ЗОНА ИЗБЫТОЧНОГО УВЛАЖНЕНИЯ** — ՀԱՎԵԼՅԱԿ ԽՈՆԱՎԱՑՄԱՆ ԶՈՆԱ, երկրագնդի զոնա, որտեղ տարեկան մթնոլորտային տեղումների քանակը բազմապես կորվածքում գերազանցում է գոլորշիացման մեծությանը:

**ЗОНА ИНФИЛЬТРАЦИИ** — ՆԵՐԾԾՄԱՆ ԶՈՆԱ, երկրակեղևի վերին մաս, որի միջով ներծծվում են մակերևութային ջրերն ու մթնոլորտային տեղումները: Ըստ էության, Ն. գ. համընկնում է օդահագեցման զոնայի հետ:

**ЗОНА ЗАСТОЙНЫХ ВОД** — ԱՆՇԱՐԺ (ՎԱՆԳՈՒՆ) ԶՐԵՐԻ ԶՈՆԱ, ըստ Ն. Կ. Իգնատովիչի (1944), ջրաերկր. կտրվածքի մաս, որտեղ ստ. հոսքը դրսևո-

րում է միայն երկրը, ժամանակամիջոցի ընթացքում: Ա. ջ. գ-ում տարածված են նստվածքակուտակման և թաղված ջրերը, որոնք ջրադինամիկ տեսակետից գերազանցապես գտնվում են դժվար և խիստ դժվար ջրափոխանակման պայմաններում (տե՛ս Гидродинамическая зона):

**ЗОНА ЗАТРУДНЕННОГО ВОДООБМЕНА** — ԴժՎԱՐ ՋՐԱՓՈԽԱՆԱԿՄԱՆ, ՋՈՆԱ, ըստ Ն. Կ. Իգնատովիչի (1944), ջրաերկրը կտրվածքի մաս, որի սահմաններում տարածված ստ. ջրերը կանգուն վիճակում են և երկրի մակերևույթի հետ հաղորդակցվում են միայն ջրապարունակ ապարների սահմանափակ մերկացման, հնտվածներում: Դ. ջ. գ. գտնվում է ակտիվ (ազատ) ջրափոխանակման և խիստ դժվար ջրափոխանակման զոնաների միջև, այսինքն պայմանականորեն սահմանափակվում է տեղատարման տեղական հիմքի (գետային ցանցի) և ռեզիոնալ հիմքի (համաշխարհային օվկիանոսի) նիշերով:

**ЗОНА ЗАТРУДНЕННОЙ ЦИРКУЛЯЦИИ И ЗАМЕДЛЕННОГО ВОДО-ОБМЕНА** — ԴժՎԱՐ ԾՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆԳԱՂ ՋՐԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՋՈՆԱ, ըստ Ն. Կ. Իգնատովիչի (1944), ջրաերկրը կտրվածքի մաս, որն ընդգրկում է արտեզյան ավազանների խորը, թույլ հոսք ունեցող զոնան: Դ. ջ. և դ. ջ. գ-ում ստ. ջրերի կայուն պաշարները գերազանցում են շարժուն պաշարներին: Այստեղ թույլ հոսքի առկայության պատճառով, որն ստեղծվում է ներծծվող ջրերի ջրատատիկ ճնշման շնորհիվ, նստվածքակուտակման ջրերը դանդաղորեն դուրս են նրվում:

**ЗОНА КАПИЛЛЯРНОГО ПОДНЯТИЯ** — ՄԱՋԱՆՈՒԹԱՅԻՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ, ՋՈՆԱ, օդահագեցման զոնայի ստորին մաս, որտեղ մազանոթային ծակոտիներն ու ճեղքերը լցված են ջրով: Վերջինը պահվում է մազանոթային ձողակաև ուժերի շնորհիվ և գրունտային ջրերի մակերևույթի վրա առաջացնում է մազանոթային ջրերի զոնա (երիզ):

**ЗОНА КАТАГЕНЕЗА** — ԿԱՏԱԳԵՆԵԶԻ ՋՈՆԱ, ըստ Ն. Կ. Իգնատովիչի, խորը տեղադրման հարաբերականորեն անշարժ ջրերի զոնա, որտեղ ստ. հոսքը դիտվում է երկրը. ժամանակահատվածում:

**ЗОНА МНОГОЛЕТНЕМЕРЗЛЫХ ПОРОД** — ԲԱՋՄԱՄՅԱ ՍԱՌԱԾ ԱՊԱՐՆԵԲԻ ՋՈՆԱ, երկրակեղևի ցուրտ գոտիներում գտնվող մարզ կամ զոնա, որտեղ գետնահողերն ու ապարները զգալի խորությունների վրա բազմաթիվ տարիների ընթացքում գտնվում են սառած վիճակում: Հումանիշ՝ կրիոլիթոզոնա կամ բազմամյա (դարավոր) սառցույթի զոնա (մարզ):

**ЗОНА НАСЫЩЕНИЯ** — ՀԱԳԵՑՄԱՆ ՋՈՆԱ, երկրակեղևի ողղամիզ կտրըվածքում զոնա, որտեղ ապարները հագեցած են գրավիտացիոն ջրով:

**ЗОНА НЕДОСТАТОЧНОГО УВЛАЖНЕНИЯ** — ԱՆԲԱՎԱՐԱՐ ԽՈՆԱՎԱՑՄԱՆ ՋՈՆԱ, երկրագնդի մարզ (գոտի, երկրամաս), որտեղ գոլորշիացման ունա-

կրթյան տարեկան միջին մեծությունը գերազանցում է մթնոլորտային տեղումների քանակին:

**ЗОНА НЕУСТОЙЧИВОГО УВЛАЖНЕНИЯ** — ԱՆԿԱՅՈՒՆ ԽՈՆԱՎԱՑՄԱՆ ՋՈՆԱ, անցումային մարզ՝ հավելյալ և անբավարար խոնավացման մարզերի միջև: Ա. խ. մ-ի սահմաններում մթնոլորտային տեղումների և գոլորշիացման տարեկան միջին քանակները քազմապա ժամանակաշրջանի համար մոտավորապես հավասար են:

**ЗОНА ОБРУШЕНИЯ** — ՓԼՈՒՋՄԱՆ ՋՈՆԱ, բնական թեքություններում և լեռնային փորվածքներում ապարների տեղաշարժի տեղամաս, որտեղ նրանք ենթարկվում են փլուզման:

**ЗОНА ОКИСЛЕНИЯ** — ՌՐՍԻԿԱՑՄԱՆ ՋՈՆԱ, երկրի մակերևույթին մոտ, օդահագեցման զոնայում տեղադրված սուլֆիդային հնքվ-ի մաս, որտեղ օքսիդացման գործընթացների համար պայմանները նպաստավոր են: Օ. զ-ում առաջնային սուլֆիդային միներալները մասամբ կամ ամբողջապես վերածվել են օքսիդային միացությունների:

**ЗОНА ОСЛАБЛЕНИЯ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԹՈՒՎԱՑՄԱՆ ՋՈՆԱ, բնական թեքություններում և լեռնային փորվածքներում զոնա, որի սահմաններում ապարների ամրությունը բնական կամ արհեստական գործոնների ազդեցությամբ նվազել է:

**ЗОНА ОХРАННАЯ САНИТАРНАЯ ВОДОЗАБОРОВ** — ՋՐՀԱՎԱԲՆԵՐԻ (ՋՐՀԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ) ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՆԱ, տարածք, որի սահմաններում ջրամատակարարման աղբյուրները աղտոտվելուց պահպանելու նպատակով կիրառվում են սանիտարական միջոցառումներ: Ջ. ս. պ. գ. բաղկացած է 3 ենթազոններից. I — ջրհավաք (ջրհան) կառույցների տեղամաս, որտեղ սահմանվում է սանիտարական խիստ ռեժիմ (փշալարով կամ պարսպապատով հուսալի առանձնացվում է), II — ենթազոնա, որտեղ մակերևութային և ստ. ջրերը կարող են ազդել ջրհավաքների ջրի որակի վրա: Այստեղ հաստատվում է սահմանափակման ռեժիմ (կարգավորվում են բնակչության խտությունը, հոսքային ջրերի հարցը, սանիտարական-համաճարակաբանական դիտումները ևն), III — մոտակա բնակավայրերի ենթազոնա, որը արտադրական և կենցաղային կապ ունի ջրհավաքին հարակից բնակավայրերի հետ: Այստեղ ձեռնարկվում են ջրի միջոցով տարածվող համաճարակային հիվանդությունների հարուցիչների դեմ պայքարի միջոցառումներ: Ջ. ս. պ. գ-ի նախագծերը կազմվում են հատուկ հետազոտությունների հիման վրա և համաձայնեցվում են սանիտարական պահպանության ծառայության հետ:

**ЗОНА ПЛАСТИЧНОСТИ** — ՊԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ՋՈՆԱ, երկրակեղևի խորը զոնա, որտեղ լեռնային ճնշման ազդեցության տակ ապարներում եղած բոլոր դատարկությունները փակվում են: Պ. գ-ի խորությունը առաջին հերթին պայմանավորված է ապարների ֆիզմեխ. հատկություններով: Օր., քարաղի մոտ պլաստիկություն սկսվում է դիտվել 1200—1500 մ-ից, որտեղ լեռնային ճնշումը գերազանցում է 150 կգ/սմ<sup>2</sup>-ուց:

**ЗОНА ПОДПОРА ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՄՂԱՐԻ ՋՈՆԱ, զոնա, որտեղ բնական կամ արհեստական դիմարի պատճառով տեղի է ունենում ստ. ջրերի մակարդակի բարձրացում (օր., ջրամբարներին կամ ջրանցքներին հարող տարածքներում):

**ЗОНА ПОДТОПЛЕНИЯ** = ՋՐԱՈՂՈՂՄԱՆ ՋՈՆԱ, տարածք, որի ուղղաձիգ կտրվածքում դիտվում է գրունտային ջրերի մակարդակի բարձրացում՝ ընդհուպ մինչև երկրի մակերևույթի մասնակի ջրաողողում: Սովորաբար Ջ. գ-ների առաջատունը պայմանավորվում է ջրամբարներից, ոռոգման համակարգերից և այլ ջրատարներից տեղի ունեցող մեծ կորուստներով: Գրունտային ջրերի մակարդակի բարձրացում կարող է դիտվել նաև արտեզյան ալիազաններում, երբ նրանք սնվում են ճնշումնային ջրերով:

**ЗОНА ПОСТОЯННОЙ ГОДОВОЙ ТЕМПЕРАТУРЫ ЗЕМНОЙ КОРЫ** — ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԿԱՅՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՋՈՆԱ, երկրակեղևի ոչ մեծ խորության զոնա, որտեղ ապարներն ունեն կայուն, տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանին հավասար ջերմություն: Ե. կ. տ. ջ. գ. գտնվում է ջերմության տարեկան տատանումների զոնայից ներքև և, կախված շրջանի կլիմայական, երկր., ջրաերկր. և այլ պայմաններից, ունենում է տեղադրման 20—30 մ խորություն և 10—20 մ հաստություն: Այդ զոնայից ներքև ջերմությունն սկսում է աճել համաձայն երկրաջերմային գրադիենտի: Երբեմն որպես հոմանիշ օգտագործվում է «Ջերմության չեզոք զոնա (շերտ)» տերմինը:

**ЗОНА ПРОМЕРЗАНИЯ** — ՍԱՌԵՑՄԱՆ ՋՈՆԱ, երկրակեղևի վերին զոնա, որի սահմաններում ստ. ջրերը ձմռանը վերածվում են սառցի: Հոմանիշ՝ ապարների սեզոնային սառեցման զոնա:

**ЗОНА РАЗУПЛОТНЕНИЯ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԱՊԱՆՏԱՑՄԱՆ ՋՈՆԱ, երկրակեղևի վերին զոնա, որի սահմաններում ընթացող կարստային գործընթացների հետևանքով ապարների ամրությունը նվազում է: Հոմանիշ՝ կարստավորման զոնա:

**ЗОНА САНИТАРНОЙ ОХРАНЫ ВОДОИСТОЧНИКОВ** — ՋՐԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՆԱ, տե՛ս Зона охранный санитарная водозаборов:

**ЗОНА СВОБОДНОГО ВОДООБМЕНА** — ԱՋԱՏ ՋՐԱՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՋՈՆԱ, տե՛ս Зона активного водообмена:

**ЗОНА СЕЗОННОМЕРЗЛЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ՍԵՋՈՆԱՅԻՆ ՍԱՌԵՑՄԱՆ ՋՈՆԱ, տե՛ս Зона промерзания:

**ЗОНА ЦЕМЕНТАЦИИ** — ՑԵՄԵՆՏԱՑՄԱՆ ՋՈՆԱ, զոնա, որի սահմաններում ապարների դատարկություններում կուտակվում են շաղախանյութեր: Դա կարող է կատարվել. 1) բնական ճանապարհով, երբ հողմահարման նյութերում, կամ սուլֆիդային հնքվ-երի վերին մասերում ընթացող օքսիդացման գործընթացների հետևանք-

քով առաջացող երկրորդական սուլֆիդները (գլխավորապես պղնձի սուլֆիդներ՝ խալկոզին, կովելին, բորնիտ) լցնում, շաղխակալում են ապարների դատարկությունները, 2) արհեստական ճանապարհով, երբ ապարների մեջ հորատանցքերի միջոցով ցանենտ է ներարկվում:

**ЗОНАЛЬНОСТЬ ГИДРОГЕОДИНАМИЧЕСКАЯ** — ՋՐԱԵՐԿՐԱԳԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՋՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, երկրակեղևի ուղղաձիգ կտրվածքում ըստ ջրափոխանակության ակտիվության ստ. ջրերի զոնաների առանձնացում: Ն. Կ. Իգնատովիչը առանձնացնում է ջրադինամիկական 3 պայմանական զոնաներ. 1) ինտենսիվ (ազատ, ակտիվ) ջրափոխանակման, 2) դանդաղ (դժվարացված) ջրափոխանակման և, 3) խիստ դանդաղ (խիստ դժվարացված) ջրափոխանակման, կամ ջրափոխանակման բացակայության: Տե՛ս Зона активного водообмена, Зона затрудненного водообмена. Зона весьма затрудненного водообмена:

**ЗОНАЛЬНОСТЬ ГРУНТОВЫХ ВОД** — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՋՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, երկրակեղևում գրունտային ջրերի տեղաբաշխման որոշակի օրինաչափություն, որը պայմանավորված է տեղանքի (լանդշաֆտի, շրջանի, ռեգիոնի, գոտու) բնակլիմայական առանձնահատկություններով: Հանրահայտ է, որ բնետային գոտիներից դեպի մերձարևադարձային գոտի երկրագնդի վրա կլիման, հողերը և բուսականությունը կրում են օրինաչափ փոփոխություններ: Նմանօրինակ փոփոխություններ դիտվում են նաև գրունտային ջրերի մոտ, ընդ որում այդ գործում հիմնական գործոններ են հանդիսանում կլիմայական պայմանները (գլխավորապես մթնոլորտային տեղումներն ու ջերմությունը): Դեռևս 1914 թ. Պ. Վ. Օտոցկին նկատել է, որ հյուսիսից հարավ շարժվելիս գրունտային ջրերի տեղադրման խորությունը մեծանում է և, դրան զուգընթաց, բարձրանում է նաև նրանց հանքաչանցումը: Հետագայում սովետական մի շարք ջրատերրաբանների (Վ. Ս. Իլլին, Գ. Ն. Կամենսկի, Օ. Կ. Լանգե, Ի. Վ. Գարմոնով, Ա. Ն. Սեմիխատով, Վ. Ի. Գովաանիցա և ուրիշներ) հետազոտություններով հաստատվել են գրունտային ջրերի տեղաբաշխման որոշակի օրինաչափություններ, որոնք նախկին ԽՍՀՄ-ի տարածքի ափական մասում ունեն հյուսիսից հարավ, իսկ եվրոպական մասում՝ հյուսիսարևելքից հարավ-արևմուտք ընդհանուր ուղղվածություն, սակայն տեղանքի մի շարք առանձնահատուկ գործոններ հանգեցնում են յուրատիպ շեղումների: Ներկայումս նախկին ԽՍՀՄ տարածքի, Եվրոպայի և այլ աշխարհամասերի համար կազմված են Գ. ջ. գ. սխեմատիկ քարտեզներ, որոնք զգալի նշտությամբ վերարտադրում են նրանց տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները:

**ЗОНАЛЬНОСТЬ (ЗОНА) ОРЕОЛЬНЫХ ВОД** — ՊՍԱԿԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՋՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՋՈՆԱ), հանքամարմնին հարող խտորիչ բաղադրության ջրերի (պակալային ջրերի) զոնայից հետևանքով գուգընթաց ստ. ջրերի հանքայնացման օրինաչափ փոփոխություն, որն արտահայտվում է բնորոշ բաղադրատարրերի քանակի նվազմամբ (աղբառացմամբ):

**ЗОНАЛЬНОСТЬ ХИМИЧЕСКОГО СОСТАВА АРТЕЗИАНСКИХ ВОД** — ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՋՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, արտեզյան ջրերի քիմ. բաղադրության օրինաչափ փոփոխություններ ինչպես հո-

րիզոնական ուղղությամբ (սնման մարզից դեպի բեռնաբախման մարզ), սկսվաւ էլ արտեզյան ավազանի ուղղաձիգ կտրվածքով: Զրաքիմ. զոնաներն ստանձնացվում են ըստ հանքալուծման, իոնատաղային և գազային բաղադրության: Ստանձնացվում են հետևյալ ջրաքիմ. զոնաները. 1) ջրակարբոնատ-կալցիումային կազմի քաղցրահամ (մինչև 1 գր/լ) ջրերի (A), 2) գերազանցապես սուլֆատային և քլորիդային կազմի աղի (1—35 գր/լ) ջրերի (B), 3) քլոր-նատրիումային, կալցիում-նատրիումային, կալցիում-մագնիումային կազմի աղաջրերի ( $>50$  գր/լ) (C), 4) խաչտաքէտ քիմ. կազմի և հանքալուծման ջրերի (D): A, B, C, D զոնաներն իրենց հերթին բաժանվում են ենթազոնաների: Հիշյալ զոնաների հաջորդականությունը կտրվածքում ոչ ամենուրեք է նույնանման. ավելի հաճախ ըստ խորության ստ. ջրերի հանքալուծման աճում է, ջրակարբոնատային կազմն անցնում է սուլֆատային, ապա քլորիդայինի (նորմալ ջրաքիմ. զոնայականություն): Միջլեռնային և նախալեռնային արտեզյան ավազանների կտրվածքում հանդիպում են ջրաքիմ. զոնայականության հետևյալ զուգորդումները. ա) հանքալուծման փոքրացում ըստ խորության, բ) հանքալուծման փոքրացում մինչև կտրվածքի միջին մասերը, ապա մեծացում ըստ խորության, գ) հանքալուծման մեծացում ըստ խորության, ապա փոքրացում՝ դեպի խորքը, դ) ավելի բարդ ու բազմատեսակ զուգորդումներ: Արտեզյան ջրերի գազային բաղադրության փոփոխությունները նույնպես բազմատեսակ են. օր., թթվածին-ազոտային գազերն ըստ խորության փոխարինվում են ածխաթթու-ազոտայինի, ապա ազոտայինի: Մեկ այլ դեպքում խորքում երևան են գալիս մեթան-ազոտային, ազոտ-մեթանային և վերջապես մեթանային գազեր:

**ЗОНАЛЬНОСТЬ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ГРУНТОВЫХ ВОД — ԳՐՈՒՆ-ՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԳԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԶՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**, գրունտային ջրերի քիմ. բաղադրության օրինաչափ փոփոխություններ, որոնք կապված են ֆիզիկաաշխարհ. պայմանների փոփոխության հետ: Գ. ջ. ք. ք. գ. ստաջին անգամ դիտվել է Վ. Վ. Դոկուչևսկի (1899), ապա Գ. Վ. Օտոցկու (1914) և Վ. Ս. Իլյինի (1923) կողմից: Վերջինս նախկին ԽՍՀՄ տարածքի եվրոպական մասում ստանձնացրել է զոնայական և ոչ զոնայական գրունտային ջրեր: Ի. Վ. Գարսնովը (1948) ըստ քիմ. կազմի ստանձնացնում է. 1) ջրակարբոնատ-սիլիկատոդային, 2) ջրակարբոնատ-կալցիումային, 3) սուլֆատ-քլորիդային, 4) ցամաքային աղուտացման և, 5) լեռնային շրջանների ջրակարբոնատ-կալցիումային գրունտային ջրերի զոնաներ: Գ. Ն. Մամենսկին (1948) նախկին ԽՍՀՄ տարածքում ստանձնացնում է գրունտային ջրերի 2 զոնա՝ տարբարումնան և ցամաքային աղուտացման: Տարբարումնան զոնան ընդգրկում է խոնավ կլիմա և ազատ հոսքի պայմաններ ունեցող շրջանները, որտեղ հիմնականում տարածված են ջրակարբոնատ-կալցիումային քաղցրահամ ջրերը: Ծամաքային աղուտացման զոնայում բարձր գոլորշիացման հետևանքով ջրերը սկզբում դառնում են սուլֆատային, ապա սուլֆատ-քլորիդային և վերջապես քլորիդային՝ ուղեկցվելով հանքալուծման մեծացմամբ՝ ընդհուպ մինչև աղաջրերի վերածվելը ( $>50$  գր/լ): Լեռնային շրջաններում դրսևորվում է ուղղաձիգ զոնայականություն (վերնից-ներքև)՝ սնման մարզից դեպի բեռնաբախման մարզ:

**ЗОНДИРОВАНИЕ** — ԶՈՆԳՆԱՎՈՐՈՒՄ, փոխար ասպարների ստանձակահան հատկությունների ուսումնասիրությունը ասպարի մեջ ներդրվող զոնոի օգնությամբ: Վերջինի ներդրումը իրականացվում է սեղմելու (ծանրաքեղանման) կամ հարվածելու միջոցով:

**ЗОНЫ ГЕОГРАФИЧЕСКИЕ (ЛАНДШАФТНЫЕ, ПРИРОДНЫЕ)** — ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ (ԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ, ԲՆԱԿԱՆ) ԶՈՆԱՆԵՐ, երկրի մակերևույթի լանդշաֆտաաշխարհը. ստորաբաժանումներ, որոնք բնութագրվում են միատեսակ բնական պայմաններով և հաջորդաբար հերթափոխվում են՝ կախված լայնական և բարձրության տեղադիրքից: Ա. գ., որպես կանոն, կտրուկ արտահայտված սահմաններ չունեն, անցումը սահուն է: Տարբերում են Ա. գ-ի 2 տիպեր. լայնական (նորիզոնական) և ուղղաձիգ (ըստ բարձրության):

**ЗУМПФ (ПОДСТВОЛОК)** — ԶՈՒՄՓՖ (ՀՈՐԱՆԱՏԱԿԻ ԶՐԱՓՈՍ), հանքափողի հատակի փուս, որն ապահովում է փորվածքների ներխուժած ստ. ջրերի կուտակումը՝ հետագա արտանդման համար:

**ЗЫБУН (ТРЯСИНА)** — ԾԱՀԾՈՒՑ (ԾԱԽՆՈՒՑ, ՑՆՑՈՒԿ), ջրակուտակների տեղամասեր, որոնք պատվում են բուսականության և օրգ. մնացորդների (տորֆի) մինչև 1—2 մ հաստության ծածկով: Փոքր բեռնվածություն գործադրելիս անգամ 6-ները ենթարկվում են ձևափոխումների, իսկ մարդու քայլի տակ զգալիորեն ցնցվում են:

## — II —

**ИГЛОФИЛЬТР** — ԱՍԵՂՆԱՔԱՄԻՉ, փոքր տրամաչափի խողովակ (խողովակաշար), որի ստորին ծայրին միացված են ասեղնաքամիչը և սուր ծայրասանակը: Վերջինը հնարավորություն է տալիս հիդրավիլի եղանակով (ջրի ճնշման տակ) կամ հարվածի միջոցով Ա. խրել (ներսղել) փոխար ջրատար ապարների մեջ: Ա. տեղադրվում է ինչպես երկրի մակերևույթից (գրունտային ջրերի մակարդակի իջեցման համար), այնպես էլ լեռնային ստ. փորվածքներից (ապարների չորացման համար): Մանրահատիկ ավազաշերտի մեջ հիդրավիլի եղանակով Ա. խրելու համար պահանջվում է 4 մթն. ճնշում և 6—8 ւ/վրկ. ջրի ծախս:

**ИЗБИРАТЕЛЬНАЯ ДЕНУДАЦИЯ** — ԸՆՏՐՈՎԻ ԼԵՐԿԱՑՈՒՄ, լերկացում, որի ինտենսիվությունը էապես փոխվում է՝ կախված տեղանքում տարածված ապարների ամրության ու առաձգականության տարբերությունից:

**ИЗОБАРЫ** — ԻԶՈԲԱՐԵՐ, հեղուկի կամ գազի հավասար ճնշման գծեր:

**ИЗОБАТЫ** — ԻԶՈԲԱԹԵՐ, մակերևութային ջրային ավազանների հավասար խորությունների գծեր:

**ИЗОГИПСЫ** — ԻԶՈՀԻՊՍԵՐ (ԻԶՈԳՄԵՐ), ծովի մակերևույթի կամ այլ պայմանական գերտական հարթության նկատմամբ երկրի մակերևույթի հավասար բարձրությունների գծեր:

**ИЗОКЛИПЫ** — ԻԶՈԿԼԻՊՆԵՐ, գծեր, որոնց երկարությամբ արագության վեկտորն ունի միևնույն ուղղությունը:

**ИЗОМЕТЫ** — ԻԶՈՄԵՏԵՐ, քարտեզի կամ հատակագծի վրա մթնոլորտային տեղումների հավասար քանակի կետերը միացնող գծեր:

**ИЗОТАХИ** — ԻԶՈՏԱԽԵՐ, հեղուկների շարժման հավասար արագության կետերը միացնող գծեր: Հոմանիշ՝ իզոպելեր:

**ИЗОТЕРМЫ** — ԻԶՈԹԵՐՄԵՐ, 1. ֆիզ. աշխարհագրությունում՝ գծեր, որոնք միացնում են երկրի մակերևույթի վրա օդի միևնույն միջին ջերմություն (տարեկան, ամսական) ունեցող կետերը: 2. Երկրաբանությունում և ջրաերկրաբանությունում՝ քարտեզի կամ կտրվածքի վրա գծեր, որոնք միացնում են ապարների կամ ստ. ջրերի հավասար ջերմության կետերը:

**ИЗОТРОПНЫЕ ПОРОДЫ** — ՀԱՄԱՏԵՍԱԿ (ԻԶՈՏՐՈՊ) ԱՊԱՐՆԵՐ, համասեռ ապարներ, որոնց ֆիզմեխ. հատկանիշները ցանկացած ուղղությամբ միատեսակ են: Լաբորատոր ուսումնասիրություններ կատարելիս Հ. ա-ի նմուշները կողմնորոշելու կարիք չունեն: Որոշ Հ. ա. (նոնաքարեր, հրաբխային ապակի են) որոշակի գործոնների (ճնշման, ջերմաստիճանի) ներգործությամբ դառնում են օպտիկապես անհամասեռակ (անիզոտրոպ):

**ИЛОВАЯ РАПА** — ՏՂՄԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ, լազունային կամ հանքային լճերի հատակային տիղմում պարփակված աղաջրեր:

**ИЛОВАЯ (ДОННАЯ) СОЛЬ** — ՏՂՄԱՅԻՆ (ՀԱՍԱԿԱՅԻՆ) ԱՂ, հանքային լճերի հատակային տիղմում աղաջրերից բյուրեղացած աղ: Հանախ Տ. ա-երը ներկայացված են լինում հեշտ լուծելի մագնիումային աղերով (Էպսոմիտ, աստրախացիտ են):

**ИЛОВЫЕ ВОДЫ** — ՏՂՄԱՅԻՆ ԶՐԵՐ, տիղմերի ծակոտիներում պարփակված ջրեր:

**ИЛОВЫЕ РАСТВОРЫ** — ՏՂՄԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ, տիղմերի ծակոտիներում պարփակված մալրական լուծույթներ:

**ИМБИБИЦИОННЫЕ ВОДЫ** — ԻՄԲԻԲԻՑԻՈՆ ԶՐԵՐ, գրունտի միջկամ շրջապատող դիֆուզիոն թաղանթի ջրեր: Ըստ Ա. Ֆ. Լեբելի, Բ. ջ. համապատասխանում են թաղանթային ջրին: Ավելորդ տերմին:

**ИММЕРСИОННЫЕ ИССЛЕДОВАНИЯ** — ԻՄԵՐՍԻՈՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, փոխք ապարների միներալային կազմի ուսումնասիրություններ, որոնք կատարվում են միներալային մասնիկների օպտիկական հատկությունները համեմատելով այն հեղուկների օպտիկական հատկությունների հետ, որոնց մեջ ընկղմվում են փորձարկվող մասնիկները:

**ИНДИКАТОР** — ՑՈՒՑԻԶ (ԻՆԳԻԿԱՏՈՐ), ջրաերկրաբանությունում՝ նյութեր, որոնք օգտագործվում են ստ. ջրհոսքերի ուղղությունն ու արագությունը որոշելու համար: Այդ նյութերը փոխում են ջրի գույնը, քիմ. բաղադրությունը կամ էլեկտրա-

հաղորդականությունը, սակայն ջրում լուծված աղերի և մետաղների քանակի մեջ չեն մտնում և հեշտությամբ հայտնաբերվում են: Նման պայմանների բավարարում են ջրում հեշտ լուծվող օրգ. ներկանյութերը, նատրիումի ու լիթիումի քլորիդային աղերը, նաշատիրը, նադիոակտիվ նյութերը ևն: Առավել գործածական են գունաչափական ցուցիչ-ներկանյութերը՝ ֆլուորեսցենները, էօզինը, էրիտրոզինը, կարմիր կոնգոն, ֆլուորանտրոնը ևն: Օր., ֆլուորեսցենները, որը ջրին տալիս է կանաչ գունավորում, անգնն աչքով հայտնաբերվում է անգամ  $4 \cdot 10^{-7}$  գ/սմ<sup>3</sup> պարունակության դեպքում:

Գոյություն ունեն նաև հատուկ լուծույթներով ներծծված թղթե ցուցիչներ, որոնց օգնությամբ դաշտային պայմաններում հեշտությամբ կարելի է որոշել (մոտավոր ճշտությամբ) ջրում ջրածնային իոնների կուտակումը:

ИНДИКАЦИОННАЯ РОЛЬ РАСТЕНИЙ — ԲՈՒՅՑՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ ԴԵՐ, բույսերի ընդունակությունը արտացոլելու հողերի ու ապարների քարաբանական կազմը, տեղանքի երկրաբան. ստանձնահատկությունները, ինչպես նաև ջրակերկր. պայմանները: Ջրակերկր. որոնողական աշխատանքներում որոշ բուսատեսակներ հաշտությամբ օգտագործվում են ոչ միայն իբրև ստ. ջրերի առկայության ցուցանիշ, այլ նաև թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել ջրերի տեղադրման խտրության, նրանց հանքայնացման և առանձին բն. տարրերի խտտորիչ բարձր պարունակության մասին:

ИНЖЕНЕРНАЯ ГЕОДИНАМИКА — ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԳԻՆԱՄԻԿԱ, ինժեներական երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է երկր. գործընթացներն ու երևույթները ինչպես բնական պայմաններում, այնպես էլ կապված կառույցների շինարարության ու տարածքների իրացման հետ: Ի. ե-ի բարդ խնդիրների մեջ են մտնում նաև երկր. գործընթացների ու երևույթների դեմ պայքարի միջոցառումների մշակումը, նրանց ընթացքի և հետևանքների կանխագուշակումը:

ИНЖЕНЕРНАЯ ГЕОЛОГИЯ — ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, երկր. գիտություն, որն ուսումնասիրում է երկրակեղևի վերին հորիզոնների դինամիկան՝ կապված մարդու անընդհատ բարդացող ինժեներական գործունեության հետ: Ի. ե. հետազոտում է ինժեներական կառույցների շինարարության ու շահագործման երկր. պայմանները և մշակում է ինժեներական կառույցների ու երկր. միջավայրի փոխազդեցության կանխատեսումները: Թեև մարդը վաղուց է վեր առիպված է եղել ուսումնասիրել երկր. գործընթացներն ու երևույթները, լուծել միջավայրի շին. ու տնտ. բազմապիսի խնդիրներ, այնուամենայնիվ, Ի. ե. որպես ինքնուրույն գիտություն ձևավորվել է XX դարի 20—30-ական թվականներին: Ներկայումս Ի. ե. ունի հետևյալ հիմնական բաժինները. գրունտագիտություն (ինժեներական պետրոլոգիա), ինժեներական երկրադինամիկա, ռեգիոնալ ինժեներական երկրաբանություն և հատուկ ինժեներական երկրաբանություն:

ИНЖЕНЕРНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ЧЕЛОВЕКА — ՄԱՐԴՈՒԻ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, կառույցների նախագծման, շինարարության և շահագործման աշխատանքներ: Մ. ի. գ. տարեցտարի ավելի է բարդանում՝ կապված այնպիսի կառույցների հետ, ինչպիսիք են. երկնաքերներն ու հսկա գործարանները,

մայրողիներն ու կամորջները, պատվարներն ու ջրանցքները, մետրոներն ու թու-  
նակները, խորը հանքափողերն ու հանքարանները, օդանավակայաններն ու ստո-  
մակայանները, ռազմական օբյեկտներն ու նավահանգիստները ևն:

ИНЖЕНЕРНАЯ МЕЛИОРАЦИЯ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱ-  
ԿԱՆ ՄԵԼԻՈՐԱՑԻԱ, տե՛ս Закрепление горных пород (грунтов):

ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ ГРУППА ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԻՆԺԵ-  
ՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ, ըստ Ի. Վ. Պոպովի (1951), ապարների ստո-  
րաբաժանում, որը ինժեներատերկրք. քարտեզների վրա առանձին պոնակի ձևով  
առանձնացվում է այն դեպքում, երբ ապարների տեղադրման բնույթը թույլ չի  
տալիս տվյալ մասշտաբի քարտեզի վրա և հաշվարկային սխեմաներում արտահայ-  
տել համատեղ տեղադրված ապարների ողջ քազմազանությունը: Առավել հաճախ  
Ա. Ի. խ. առանձնացվում է հորիզոնական (կամ նրան մոտ) տեղադրման և փոքր  
հզորության շերտիկների դեպքում, որոնք կազմող ապարները իրենց հատկություն-  
ներով կտրուկ տարբերվում են միմյանցից:

ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ КАРТА — ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ՔԱՐՏԵԶ, որոշակի մասշտաբի տեղագրական քարտեզի վրա տեղանքի ինժեներա-  
տերկրք. պայմանների արտահայտում, որոնք ցույց են տալիս տեղանքում այս կամ  
այն տիպի շինարարության ծավալման կամ նրա տևո. իրացման հնարավորություն-  
ները: Տարբերում են Ի. ք-ների հետևյալ տիպերը. 1) անալիտիկ, որոնց վրա ար-  
տահայտվում են ապարների որևէ հատկության ցուցանիշները (օր., ծծանցման գոր-  
ծակիցը, պլաստիկության ցուցանիշը, սեղմելիության գործակիցը, սեղմման մո-  
դուլը ևն), 2) ինժեներատերկրք. պայմանների, որոնք կազմվում են առանց շինա-  
րարության տեսակը ցույց տալու և առանց քարտեզագրվող տարածքի առանձին  
մասերի հանրագումարային գնահատականի, 3) սինթետիկ (ինժեներատերկրք. շըր-  
ջանացման քարտեզներ), որոնց վրա արտահայտվում են տարբեր տեսակի շինարա-  
րության ինժեներատերկրք. պայմանները՝ որոշող գործոնների գումարային արժեքների  
գնահատականը: Ի. ք-ները լինում են. ակնարկային (1:1.500.000 և ավելի փոքր),  
փոքրամասշտաբ (1:500.000—1:1.000.000), միջին մասշտաբի (1:100.000—  
—1:200.000), խոշորամասշտաբ 1:25.000—1:50.000 և մանրամասն (1:10.000 և  
ավելի մեծ): Նախագծային փուլում Ի. ք-ները սովորաբար կազմվում են  
1:25.000—1:1.000 մասշտաբների:

ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ КЛАССИФИКАЦИЯ ПОРОД — ԱՊԱՐ-  
ՆԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, ապարների (գրունտների)  
խմբավորում, որը կատարվում է հետևյալ նպատակներով. 1) ինժեներատերկրք.  
քարտեզների ու կտրվածքների վրա միատեսակ ֆիզքիմ. հատկություններով օժտված  
գրունտների տիպիկ տարատեսակների առանձնացում, 2) գրունտների հետազոտ-  
ման դաշտային ու լաբորատոր ուսումնասիրությունների մեթոդիկայի ճիշտ ընտրու-  
թյուն, 3) նախագծվող կառույցների հետ ապարների փոխգործունեության վարքագծի  
ինժեներատերկրք. ճիշտ գնահատում: Ա. Ի. դ. մի կողմից պետք է հաշվի առնի լու-  
րաբանչյուր առանձնացված խմբի առաջացման պայմանների առանձնահատկու-  
թյունները. մյուս կողմից՝ այդ խմբերը պետք է բնութագրվեն ըստ ապարների  
ֆիզքեմ. հատկանիշների: Ներկայումս Ա. Ի. դ. համակողմանի ձև դեռևս չի մշակ-

ված: Գոյություն ունեցող դասակարգումները կարելի է բաժանել 2 խմբի՝ ընդհանուր և հատուկ (բնագավառային): Ընդհանուր դասակարգման հիմքում դրվում են ծագումնային կամ ֆիզմեխ. հատկությունների մեկ կամ մի քանի ցուցանիշներ, որոնց հիման վրա առանձնացվում են ապարների առավել տարածված տիպեր՝ բերելով նրանց ընդհանուր ինժեներաշին. բնութագիրը: Հատուկ (բնագավառային) դասակարգումը կատարվում է ելնելով կոնկրետ տեխ. խնդիրների պահանջներից (օր., ապարները որպես հիմնատակ, թեքությունների կայունության կամ ապարների շահագործման պայմանների գնահատման դեպքերում): Գոյություն ունեցող դասակարգումներից կարելի է նշել Մ. Մ. Գրոտոդչակոնովի, Ն. Ն. Մապուլի, Ֆ. Պ. Սավարենակու, Վ. Ա. Պրիկունակու, Ի. Վ. Պուպովի, Ե. Մ. Սերգենի և ուրիշների կողմից առաջարկված դասակարգումները:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ ОБЛАСТЬ** — Ինժեներաբարձրագույնագույն ՄԱՐԶ, տարածքի խոշոր միավոր, որն առանձնացվում է երկրաձևաբանական պայմանների (հիմնականում ուլիեֆի ձևերի) ընդհանրության հիման վրա:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ РЕКОГНОСЦИРОВКА** — Ինժեներաբարձրագույնագույն ՏԵՂԱԶՆՆՈՒՄ (ՏԵՂԱԴԻՏՈՒՄ), ինժեներաերկր. ուսումնասիրությունների նախնական փուլ, որի ժամանակ տարածքն ուսումնասիրվում է վերերկրյա գլխավոր (հանգուցային) մարշրուտների և օդաչափափական դիտումների միջոցով:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЕМКА** — Ինժեներաբարձրագույնագույն ՀԱՆՈՒՅԹ, զանազան կառույցների նախագծման և շինարարության համար տեղանքի երկր. կառուցվածքի, երկրաձևաբանական պայմանների, երկր. գործընթացների ու երևույթների, ինչպես նաև ապարների ֆիզմեխ. հատկությունների համալիր ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա կազմվում են ինժեներաերկր. բարտեզներ (տե՛ս Инженерно-геологическая карта):

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ Ինժեներաբարձրագույնագույն ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կառույցների նախագծման ու շինարարության համար ապարների ֆիզմեխ. հատկությունների ուսումնասիրություն և շինարարության հետևանքով այդ հատկությունների հնարավոր փոփոխությունների կանխատեսում:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ СВОЙСТВА ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ Ինժեներաբարձրագույնագույն ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ապարների հատկություններ, որոնք մարդու ինժեներական գործունեության ժամանակ բնութագրում են նրանց վարքը (ամրություն, կայունություն, ձևախախտում, պլաստիկություն, ջրաթափանցելիություն ևն):

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ТЕРРИТОРИИ** — ՏԱՐԱԾՔԻ Ինժեներաբարձրագույնագույն ՊԱՅՄԱՆՆԵՐ, տարածքի առանձնահատկություններ, որոնք բնորոշում են մարդու ինժեներական գործունեության համար նրա նպաստավորության չափը (ուլիեֆ, երկր. կառուցվածք, ջրաերկր. պայմաններ, երկր. գործընթացների առկայություն, ապարների ֆիզմեխ. հատկություններ ևն):

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ УЧАСТКИ** — ԻՆՇԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ, իմօճենքեր կրք. ենթաշրջանների մասեր, որոնք հանդիսանում են իմօճենքեր կրք. շրջանացման ամենափոքր ստորաբաժանումները: Իմօճենքեր կրք. մանրամասն քարտեզների վրա Ի. տ. առանձնացվում են ըստ որևէ կարևոր հատկանիշի (օր., ըստ կալուսության, երկր. գործընթացների զարգացման բնույթի, ապարների ջրաթափանցելիության ևն):

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ ЯВЛЕНИЯ** — ԻՆՇԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, մարդու իմօճենքական գործունեության հետևանքով երկր. միջավայրի կրած փոփոխություններ կամ իմօճենքեր կրք. գործընթացների դրսևորման նշանք: Ի. ե-ից առավել տարածված են փլվածքները, թափվածքները, սողանքները, նստեցումները, գերնստեցումները, սուֆոզիան, ուշումը, սառչումը, հալչումը, գրունտային ջրերի ռեժիմի փոփոխությունները ևն: Կախված շինարարության ծավալման խորությունից, Ի. ե-ի բնույթը էապես փոխվում է: Օր., մակերևութային շինարարությանը (նստապարհներ, օդանավակայաններ) բնորոշ են նստեցումները, ուշումը, սառչումը, հալչումը ևն, իսկ խորքային շինարարությանը (խորը հիմքեր, մետրո, հանքափող) բնորոշ են լեռնային ճնշումը, փլուզումները, ստ. ջրերի ռեժիմի խախտումները ևն:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ ВИД ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԻՆՇԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՄԱԿ, ըստ Ի. Վ. Պոպովի (1951), ապարների իմօճենքեր կրք. դասակարգումը ճշգրտող ստորաբաժանում՝ ըստ նրանց պետրոգրաֆիական տիպի: Որևէ տեսակի մեջ մտնող ապարները բնութագրվում են այնքան մոտ տեխ. հատկություններով, որ նրանց հաշվարկները կատարվում են միևնույն պարամետրերով ու բանաձևերով, իսկ նրանց տեխ. հատկությունները ուսումնասիրելիս կիրառվում են սկզբունքայնորեն նույն լաբորատոր տեխնիկան ու հնարքները: Ա. ի. տ-ները սովորաբար առանձնացվում են մանրամասն իմօճենքեր կրք. քարտեզներ ու կտրվածքներ կազմելիս:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ КОМПЛЕКС** — ԻՆՇԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ (ԿՈՄՊԼԵՔՍ), շերտագրական հաջորակականությամբ տեղադրված ապարների հատվածք, որը բնութագրվում է ապարների իմօճենքեր կրք. հատկությունների և օրինաչափ փոփոխությունների ընդհանրությամբ:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ ПОДРАЙОН** — ԻՆՇԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՆԹԱՃՐՁԱՆ, իմօճենքեր կրք. շրջանի մաս, որը առանձնացվում է տեղանքի երկր. կտրվածքի (մակերևութային մոտ տեղադրված շերտի կամ հորիզոնի) նմանությամբ, ինչպես նաև ժամանակակից ֆիզիկաերկր. գործընթացների մասշտաբների ու նշանի ընդհանրությամբ:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ РАЙОН** — ԻՆՇԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՐՁԱՆ, իմօճենքեր կրք. մարզի մաս, որն առանձնացվում է բնորոշ իմօճենքեր կրք. հատկագրով և ժամանակակից ֆիզիկաերկր. գործընթացների ու երևույթների ընդհանրությամբ:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ РЕГИОН** — ԻՆՃԵՆԵՐԱԵՐԱԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՌԵԳԻՈՆ, տարածքի ինժեներակերպը. շրջանացման ամենախոշոր միավոր, որն առանձնացվում է երկրը. կառուցվածքի, երկրաձևաբանական ու ջրատերկրը. պայմանների, ժամանակակից մտովածքների բնույթի և ֆիզիկակերպը. գործընթացների ընդհանրությամբ: Ի. ո. սովորաբար առանձնացվում է ակնարկային և փոքրամասշտաբ ինժեներակերպը. քարտեզների վրա:

**ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ** — ԻՆՃԵՆԵՐԱԵՐԱԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾՐՋԱՆԱՑՈՒՄ, ուսումնասիրվող տարածքի բաժանումը ենթադաս միավորների (ռեգիոն, մարզ, շրջան, ենթաշրջան, տեղամաս) ըստ ինժեներակերպը. պայմանների:

**ИНТЕГРАЛЬНЫЙ ГРАФИК** — ԻՆՏԵԳՐԱԼ ԳՐԱՖԻԿ, որևէ գործընթացի ընթացքի գրաֆիկ արտահայտում, որը կատարվում է գրաֆիկի կազմման սկզբից առանձին ցուցանիշների գումարային արժեքների հաջորդական փոփոխությունների ճշագծման միջոցով:

**ИНТЕНСИВНОСТЬ ВОДООБМЕНА** — ԶՐԱԾՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ, ըստ Գ. Ն. Կամենսկու, մեծություն, որը բնութագրվում է ջրաշրջանառության գործակցով: Վերջինն իրենից ներկայացնում է ստ. ալպազանի ջրերի տարեկան ծախսի և նրանց ընդհանուր բնական պաշարների հարաբերությունը:

**ИНТЕНСИВНОСТЬ ОСАДКОВ** — ՏԵՂՈՒՄՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ, տեղումների շերտ, որը գոյանում է 1 րոպեում: Տ. ի. կարևոր դեր ունի ստ. ջրերի սնման գործում:

**ИНТЕНСИВНОСТЬ ПРОСАЧИВАНИЯ** — ՆԵՐԹՎՓԱՆՑՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ, ջրաքանակ, որը միավոր ժամանակահատվածում ներթափանցվում է ապարի տարածքի միավոր մակերեսով:

**ИНТЕРМИТТЕНЦИЯ** — ԲԱԲԱՅՅՈՒՆ (ԻՆՏԵՐՄԻՏԵՆՑԻԱ), աղբյուրի ծախսի ռիթմիկ տատանում (բարակյուն), որը սովորաբար հատուկ է տաք, երբեմն նաև սառը, սակայն զազերով հագեցած հանքային ջրերին: Առավել արտահայտիչ Բ. դիտվում է գելզերների մոտ, որոնք պարբերաբար արտավիժում են տաք ջրաշիթեր:

**ИНТЕРСТИЦИАЛЬНЫЙ ЛЕД** — ԻՆՏԵՐՍՏԻՑԻԱԼ ՍԱՌՈՒՅՑ, տե՛ս Лед подземный:

**ИНТЕРСТИЦИАЛЬНЫЕ ВОДЫ** — ԻՆՏԵՐՍՏԻՑԻԱԼ ԶՐԵՐ, ապարների ճեղքերում, ծակոտիներում և այլ դատարկություններում տեղադրված ազատ (գրավիտացիոն) ստ. ջրեր: Ավելորդ տերմին:

**ИНТЕРФЕРЕНЦИЯ СКВАЖИН (КОЛОДЦЕВ)** — ՀՈՐԱՍԱՆՑՔԵՐԻ (ԶԸՐ-ՀՈՐԵՐԻ) ՓՈՒՍԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ԻՆՏԵՐՖԵՐԵՆՑ), տե՛ս Взаимодействие скважин, колодцев:

**ИНТРАЗОНАЛЬНЫЕ ВОДЫ** — ՆԵՐՋՈՆԱՅԱԿԱՆ ՋՐԵՐ, ըստ Ֆ. Պ. Սա-վարենսկու, տեղադրման հատուկ պայմաններով ոչ խորը գրունտային ջրեր (օր., վերնաջրեր), որոնք, ի տարբերություն զոնայական և ոչ զոնայական ջրերի, կա-րող են հանդիպել ցանկացած զոնայի ներսում: Ավելորդ տերմին:

**ИНТРУЗИЯ МОРСКИХ ВОД** — ԾՈՎԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՆԵՐԴՐՈՒԽ (ԻՆՏՐՈՒ-ՋԻԱ), ափամերձ գոտու ջրատար ապարների մեջ ծովային ջրերի ներդրում (ին-տրուզիա), որը կատարվում է ծովային և ստ. ջրերի դիմամիկ հավասարակշռության խախտման հետևանքով: Վերջինը հիմնականում պայմանավորված է քաղցրահամ ստ. ջրերի պաշարների անհաշվենկատ շահագործմամբ, երբ բացի ստ. ջրերի դի-մամիկ պաշարներից օգտագործվում են նաև ստատիկ պաշարները, որը հանգեց-նում է ջրատար հորիզոնների մակարդակի իջեցմանն ու ննջման նվազմանը: Ծ. ջ. ն. հետևանքով սովորաբար քաղցրահամ ստ. ջրերը տեղակալվում են աղի ջրերով:

**ИНФИЛЬТРАЦИОННАЯ ТЕОРИЯ** — ՆԵՐԾԾՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տե՛ս  
Теория происхождения подземных вод:

**ИНФИЛЬТРАЦИОННЫЕ ВОДЫ** — ՆԵՐԾԾՄԱՆ (ԻՆՖԻԼՏՐԱՅԻՆ) ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք առաջացել են ապարների դատարկությունների միջով մթնոլոր-տային տեղումների ու մակերևութային ջրերի ներծծման շնորհիվ:

**ИНФИЛЬТРАЦИЯ** — ՆԵՐԾԾՈՒԽ (ԻՆՖԻԼՏՐԱՅԻԱ), մթնոլորտային ու մակերևութային ջրերի թափանցելը երկրակեղևը կազմող գետնախողերի և ապար-ների մեջ՝ ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների միջոցով: Մթնոլորտային տեղումների քանակի և ներծծվող ջրի քանակի հարաբերությունը (%-ներով) կոչվում է ներծծման գործակից:

**ИНФЛЮАЦИОННЫЕ ВОДЫ** — ՆԵՐՀՈՍՄԱՆ (ԻՆՖԼՅՈՒՅՈՒՆ) ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք առաջացել են ապարների խոշոր ճեղքերի ու կարստային դա-տարկությունների միջով մթնոլորտային տեղումների ու մակերևութային ջրերի գրեթե անարգել ներհոսման ճանապարհով:

**ИНФЛЮАЦИЯ** -- ՆԵՐՀՈՔ (ԻՆՖԼՅՈՒՅԻԱ), մթնոլորտային և մակերևու-թային ջրերի թափանցելը երկրակեղևը կազմող գետնախողերի և ապարների մեջ՝ խոշոր ճեղքերի, ծակոտիների և կարստային դատարկությունների միջով:

**ИНЪЕКЦИЯ ЦЕМЕНТАЦИОННОГО РАСТВОРА** — ՑԵՄԵՆՏԱՅՄԱՆ ԼՈՒԻ-ԾՈՒՅԹԻ ՆԵՐԱՐԿՈՒԽ, ցեմենտից պատրաստված լուծույթի ներարկում ապարների մեջ, որն իրագործվում է փոքր տրամագծով հորատանցքերի միջոցով (ննջման գործադրմամբ) և նպատակ է հետապնդում բարձրացնել ապարների ամրությունն ու նվազեցնել նրանց ջրաթափանցելիությունը:

**ИОННАЯ СИЛА РАСТВОРА** — ԼՈՒԾՈՒՅԹԻ ԻՈՆԱՅԻՆ ՈՒՇ, տե՛ս  
Теория активности:

ИОНИТЫ — ԻՈՆԻՏՆԵՐ, կոշտ միներալային և օրգ. նյութեր, որոնք ընդունակ են իոնային փոխանակության: Ի. ստորաբաժանվում են կատիոնիտների և անիոնիտների: Կատիոնիտները օժտված են իրենց իոնածին խմբերի կատիոնները տարրալուծված աղերի կատիոնների կամ ջրածնային իոնների հետ փոխանակելու ունակությամբ: Անիոնիտները փոխանակում են իրենց իոնածին խմբերի անիոնները լուծույթում գտնվող աղերի կամ թթուների անիոնների հետ: Ի. կարող են լինել բնական ծագման (ցեոլիտներ, գլաուկոնիտներ ևն), կամ արհեստական ծագման (իոնափոխանակման խեմեր ևն):

ИОННО-СОЛЕВОЙ КОМПЛЕКС ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԻՈՆԱ-ԱՂԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, ըստ Ա. Ն. Բունևի, ապարներում ջրային լուծույթների կամ կարծր մասնիկների ձևով պարփակված լուծելի աղերի և կանգնած իոնների համադրամար:

ИОНЫ — ԻՈՆՆԵՐ, լիցքավորված մասնիկներ, որոնք իրենցից ներկայացնում են էլեկտրոնների ավելցուկով կամ պակասորդով ատոմներ կամ քիմիապես կապակցված ատոմների խմբեր: Կախված էլեկտրոնների ավելցուկի կամ պակասորդի քանակից, նրանք կարող են լինել միալիցք, երկլիցք, եռալիցք ևն: Իոնները բաժանվում են 2 տիպի՝ կատիոններ և անիոններ: Կատիոնները դրական լիցքավորման իոններն են, ունեն էլեկտրոնների պակասորդ և էլեկտրոլիզի ժամանակ ձգտում են դեպի անոդ: Բացասական լիցքավորման իոնները կոչվում են անիոններ, ունեն էլեկտրոնների ավելցուկ և էլեկտրոլիզի ժամանակ ուղղվում են դեպի կատոդ: Իոնները կարող են ձևավորվել ու գոյատևել ցանկացած ագրեգատային վիճակում (կարծր, հեղուկ, գազ) գտնվող նյութերում: Ջրային լուծույթում նրանք ստաջանում են նյութեր (զանազան աղեր, հիմքեր, թթուներ), որոնք կրում են էլեկտրոլիտ անվանումը, իսկ իոնացման հիպոթեզը ստացել է էլեկտրոլիտիկ դիսոցման տեսություն անվանումը: Բնական ջրերում առավել տարածված են միալիցք և երկլիցք իոնները. կատիոններից՝  $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$ , անիոններից՝  $\text{Cl}^-$ ,  $\text{SO}_4^{2-}$ ,  $\text{HCO}_3^-$ ,  $\text{CO}_3^{2-}$ : Հանքային թթու ջրերում զգալի քանակությամբ պարունակվում են նաև եռալիցք կատիոններ ( $\text{Fe}^{3+}$ ,  $\text{Al}^{3+}$ ): Բնական ջրերում առավել բարձր լիցքավորման Ի. հազվադեպ են պատահում:

ИРРИГАЦИЯ — ՈՌՌԳՈՒՄ (ԻՌԻԳԱՑԻԱ), 1. Ջրաշինարարության (հիդրոտեխնիկայի) բնագավառ, որն զբաղվում է հողերի արհեստական ոռոգման հարցերով: 2. Արհեստական ոռոգման գործընթաց:

ИРРИГАЦИОННЫЕ ВОДЫ — ՈՌՌԳՄԱՆ (ԻՌԻԳԱՑԻՈՆ) ՋՐԵՐ, ջրանցքներով ու այլ կառույցներով տեղափոխվող և գյուղատնտ. հողերին տրվող ջրեր:

ИСКОПАЕМЫЙ (КАМЕННЫЙ) ЛЕД — ԲՐԱՇՈՒ (ՔՍՐԱՑԱՄ) ՍԱՌՈՒՅՑ, շերտաձև կամ ուպլյակաձև սառցե մարմին, որը հավերժական սառցույթի մարզերում տեղադրված է չորրորդական նստվածքների մեջ և ունի մինչև մի քանի տասնյակ մ հաստություն: Ենթադրվում է, որ Բ. ս-ները չորրորդական ժամանակաշրջանի սառցապատումների արդյունք են, սակայն նման ստույցներ կարող են առաջանալ նաև ներկա ժամանակներում, երբ սառցով լցված փոսորակները կամ սառցադաշտի մնացորդները ծածկվում են ժամանակակից քերվածքներով:

**ИСПАРЕНИЕ** — ԳՈՒՈՐԾԻԱՅՈՒՄ, հեղուկ կամ կարծր նյութի գոլորշու (գազի) վերածվելու գործընթաց, որը տեղի է ունենում ցանկացած շերտաստիճանում: Ի հսկայություն գոլորշիացման, կոնկրետ հեղուկը տվյալ ճնշման պայմաններում ետում է միայն որոշակի շերտաստիճանում: Օր., ջուրը գոլորշիանում է ցանկացած շերտաստիճանում, մինչդեռ այն ետում է միայն  $+100^{\circ}$  Ց: Գ. բնության մեջ ջրի շրջանառության կարևոր օղակ է. նրա միջոցով կարգավորվում է մթնոլորտի խոնավության հաշվեկշիռը: Գ. մեծությամբ կախված է գոլորշիացվող մակերևույթի շերտաստիճանից, քամու արագությունից, օդի խոնավությունից են: Տարբերում են. փաստացի Գ.՝ ցամաքի մակերևույթից կատարվող Գ., և գոլորշիացման ունակություն՝ ազատ ջրային մակերևույթից կատարվող Գ.: Բույսերի միջոցով կատարվող Գ. կոչվում է տրանսպիրացիա:

**ИСПАРЯЕМОСТЬ**—ԳՈՒՈՐԾԻԱՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ԳՈՒՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ), հնարավոր առավելագույն գոլորշիացում, որը տվյալ շերտաստիճանում կարող է տեղի ունենալ ազատ ջրային մակերևույթից:

**ИСПЫТАНИЕ ГРУНТОВ НА НЕСУЩУЮ СПОСОБНОСТЬ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԿՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, դաշտային պայմաններում փորձնական բեռնվածքով գրունտների սեղմման դիմադրության (կրողունակության) որոշում: Գ. կ. փ. կատարվում է դրոշմոցի վրա բեռնվածքի աստիճանական ավելացմամբ, ընդ որում դրոշմոցի նստեցումը չափվում է մինչև նրա լրիվ մարումը: Չափումների արդյունքները արտահայտելով գրաֆիկ եղանակով, ստանում են բեռնվածքից կախված գրունտի նստեցման կորը, որն էլ բնութագրում է գրունտի կրողունակությունը:

**ИСПЫТАНИЕ ГРУНТОВ НА РАЗМОКАНИЕ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԿԱԿՂՄԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, գրունտների ջրակայունության փորձարկում, որը կատարվում է գլխավորապես լաբորատոր պայմաններում: Գրունտի որոշակի չափերով խորանարդան նմուշը ցանցի վրա ընկղմվում է ջրի մեջ, կակղելով քայքայված-անցնում է ցանցի անցքերով: Գրունտի կակղումը բնութագրելու համար որոշվում են. 1) կակղման ժամանակը, 2) նմուշի քայքայման բնույթը, 3) թրջված նմուշի խոնավությունը:

**ИСПЫТАНИЕ ГРУНТА НА МОДЕЛИ** — ԳՐՈՒՆՏԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ ՄՈՒԿԵԼԻ ՎՐԱ, գրունտի (համարժեք արհեստական նյութի) փորձարկում հատուկ սարքի (հարմարանքի) օգնությամբ, որի միջոցով գրունտի նմուշի վրա գործադրվում են այնպիսի ուժեր, ինչպիսիք դիտվում են բնական պայմաններում կամ նախագծվող կառույցների լրացուցիչ ներգործության դեպքում:

**ИСПЫТАНИЕ ГРУНТА НА НАБУХАНИЕ** — ԳՐՈՒՆՏԻ ՈՒՌՉՄԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, կապակցված գրունտի խոնավության բարձրացման հետևանքով նրա ծավալի մեծացման փորձարկում: Գրունտի ծավալի մեծացումը ուղեկցվում է ներքին ճնշման զարգացմամբ, որը կոչվում է ուռչման ճնշում: Գրունտի ուռչումը ճիշտ կլինի որոշել, երբ նրա վրա արտաքին ճնշում (բեռնվածք) չի գործադրվում, կամ ուռչման ճնշումը գերազանցում է բեռնվածքի գործադրած ճնշմանը: Գրունտի ուռ-

շունը բնութագրելու համար որոշվում են. 1) ուռած մնուշի խոնավությունը, 2) գրունտի ծավալի աճը (ուռչումը), 3) ուռչման ճնշումը, 4) ուռչման տևողությունը:

ИСПЫТАНИЕ ГРУНТА НА РАСТЯЖЕНИЕ — ԳՐՈՒՆՏԻ ԶԳՄԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, կոշտ կապերով գրունտի մնուշի ձևափոխման լաբորատոր որոշումը ձգող լարումների ներգործությամբ:

ИСПЫТАНИЕ ГРУНТА НА СДВИГ — ԳՐՈՒՆՏԻ ՏԵՂԱԾԱՐԺԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, դաշտային կամ լաբորատոր պայմաններում գրունտի տեղաշարժի (գրունտի մի մասի շարժումը մյուսի նկատմամբ) փորձարկում, որը կատարվում է բնական տեղադրման ապարի (հորատանցքում) կամ նրա չխախտված մնուշի մեջ խրված հատուկ սարքը (թևախոր գործիքը) շրջելու միջոցով: Լաբորատոր պայմաններում Գ. տ. փ. հաճախ կատարվում է տեղաշարժող փորձասարքի միջոցով, որի դեպքում գրունտի մնուշը ֆիքսված հարթությամբ տարբեր նորմալ լարումների տակ տեղաշարժելիս՝ որոշվում է տեղաշարժին նրա ցույց տված դիմադրությունը:

ИСПЫТАНИЕ ГРУНТА НА ТРЕХОСНОЕ СЖАТИЕ — ԳՐՈՒՆՏԻ ԵՌԱՌԱՆՑՔ ՍԵՂՄՄԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, գրունտի քայքայման դիմադրության լաբորատոր փորձարկում, որն իրականացվում է առանցքային ու կողային ճնշումների համամասնության փոփոխման և ծակոտիմային ջրերի տարբեր չափի ու ձևի ցանաքուրդի պայմաններում:

ИСПЫТАНИЕ ГРУНТА НА УПЛОТНЕНИЕ — ԳՐՈՒՆՏԻ ԽՏԱՑՄԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, փուխը ապարի խտացման ստտիմանի որոշում, որը գրունտի տարբեր խոնավության պայմաններում կատարվում է մեխ. խտացման ստանդարտ եղանակով:

ИСПЫТАНИЕ СВАИ НАГРУЗКОЙ — ՑՑԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ ԲԵՌՆՎԱԾՔՈՎ, փորձնական բեռնվածքով ցցի կրողունակության, ինչպես նաև բեռնվածության և ցցի մատեցման (ներմղման) կախման որոշում:

ИСТИННАЯ (ДЕЙСТВИТЕЛЬНАЯ) СКОРОСТЬ ФИЛЬТРАЦИИ — ԾԾԱՆՑՄԱՆ ԻՐԱՎԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, ջրի ծախսի և հոսքի ընդլայնական կտրվածքի ճեղքերի ու ծակոտիների գումարային մակերեսի հարաբերությունը: Ծ. ի. ա. (ՎԻ) կապված է ծծանցման արագության ( $V_3$ ) հետ հետևյալ հարաբերությամբ՝

$$V^{\circ} = \frac{V_3}{n}$$
 կամ  $V^{\circ} = n \cdot V^{\circ}$ , որտեղ  $n$ -ը ջրատար ապարի դինամիկ ծակոտկենությունն է (տե՛ս Пористость динамическая):

ИСТОЧНИК (РОДНИК, КЛЮЧ, КРЫНИЦА, БУЛАК) — ԱՂՔՅՈՒՐ (ԱՎՈՒՆՔ), ստ. ջրի կենտրոնացած բնական ելք՝ երկրի մակերևույթին կամ ջրավազանում (ստորջրյա աղբյուր): Գոյություն ունեն Ա-ների բազմատեսակ դասակարգումներ (տե՛ս Классификация источников): Ա. որպես ստ. ջրի մերկացում և տեղեկատվության օբյեկտ, ջրաերկր. աշխատանքների բոլոր էտապներում ենթարկվում է ամենամանրամասն ուսումնասիրություններին:

**ИСТОЧНИК ГИПЕРТЕРМИЧЕСКИЙ** — СУ.Ք (ՀԻՊԵՐԹԵՐՄԻԿ) ԱՂԲՅՈՒՐ, աղբյուր, որի ջրի ջերմությունը բարձր է տվյալ տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանից:

**ИСТОЧНИК ГИПОТЕРМИЧЕСКИЙ** — ՍԱՌԸ (ՀԻՊՈԹԵՐՄԻԿ) ԱՂԲՅՈՒՐ, աղբյուր, որի ջրի ջերմությունը ցածր է տվյալ տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանից:

**ИСТОЧНИК ИЗОТЕРМИЧЕСКИЙ** — ԻԶՈԹԵՐՄԻԿ ԱՂԲՅՈՒՐ, աղբյուր, որի ջրի ջերմությունը հավասար է տվյալ տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանին:

## — К —

**КАВЕРНОЗНОСТЬ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊՐՆԵՐԻ ԽՈՌՈՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ապարներում փոքր (0,1 մմ-ից մինչև մի քանի սմ և ավելի տրամագծով) կոորպուն կամ անկանոն ձևի դատարկությունների (խոռոչների) առկայություն: Ըստ ծագման Ա. խ. լինում է առաջնային և երկրորդային: Առաջնային Ա. խ. բնորոշ է որոշ հրաբխածին ապարներին (պալմանավորված և գազերով հարուստ լավայի ստեցման առանձնահատկություններով), ինչպես նաև օրգանածին կրաքարերին: Երկրորդային Ա. խ. ջրի քայքայիչ գործունեության արդյունք է և դիտվում է հեշտ կարտավորվող ապարներում (կրաքարեր, դոլոմիտ, գիպս ևն): Ջրաերկրաբանությունում և ինժեներաերկրաբանությունում Ա. խ. ուսումնասիրությունն ունի մեծ կարևորություն, քանի որ խոռոչավորությունը մեծապես պայմանավորում է ապարների կայունությունն ու ջրաթափանցելիությունը:

**КАДАСТР ПОДЗЕМНЫХ ВОД** — ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ, ստ. ջրերի վերաբերյալ բոլոր տեղեկությունների համակարգված և մշտապես լրացվող ամփոփագիր, որը կազմվում է գրանց հաշվատման և ժողմոտնության մեջ ուսցիտնալ օգտագործման նպատակով: Ատ. ջրերի տարբեր տիպերին (գրունտային, արտեզյան, հանքային ևն) ու նրանց երևակման տեսակներին (աղբյուր, ջրհոր, նորատանցք ևն) վերաբերող տեղեկությունները անց են կացվում հաշվատման քարտերի, հատուկ քարտեզների վրա և ենթարկվում են վիճակագրական վերլուծության: Նսվյվին ԽՍՀՄ-ում Ա. ջ. ա-եր կազմվում էին միութենական ու հանրապետական երկրք. հիմնապաշարների (ֆոնդերի), ջրաերկրաբանության ինստիտուտի, մի շարք նախարարությունների և կազմակերպությունների կողմից:

**КАЙМА КАПИЛЛЯРНАЯ** — ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ԵՐԻՉ, մազանոթային ջրերի բարձրացման սահմանագիծ, որի դիրքը ուղղաձիգ կտրվածքում ենթարկվում է տատանումների՝ կախված գրունտային ջրերի մակարդակի տատանումներից, օդահագեցման զոնայի ջերմադինամիկ և այլ պայմաններից: Մ. է. նման է ծուպավոր ծալավեների, քանի որ հարևան մազակամ անցքերում մակերևութային լարվածության և մոլեկուլային ձողակյան ուժերի շնորհիվ պահվող ջրերը կարող են գտնվել փոքր-ինչ տարբեր մակարդակների (բարձրությունների) վրա:

**КАЛЬЦИЕВЫЕ ВОДЫ** — ԿԱԼՑԻՈՒՄԱՅԻՆ ԶՐԵՐ, բնական ջրեր, որոնց քիմ. բաղադրության մեջ կառիոններից գերիշխում է կալցիումի իոնը ( $Ca^{2+}$ ):

КАНАЛЫ КАПИЛЛЯРНЫЕ — ՄԱԶԱՆՈՒԹՆԵՐ (ՄԱԶԱԿԱՆ ԱՆՑՔԵՐ), տե՛ս  
Капиллярные поры:

КАНАЛЫ ПОДЗЕМНЫЕ КАРСТОВЫЕ — ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ԿԱՐՍՍԱՅԻՆ ԱՆՑ-  
ՔԵՐ (ՈՒՂԻՆԵՐ), կարստավորված զանգվածներում տարածված ստ. անցքերի  
բարդ համակարգ: Ըստ Ս. Կ. ա-ի տարածական դիրքի տարբերում են. 1) ուղղա-  
ձիգ, 2) հորիզոնական և, 3) խորքային սիֆոնային (ոլորապտույտ) անցքեր: Ուղ-  
ղաձիգ անցքերի առաջացումը սովորաբար պայմանավորված է մակերևութային  
ջրերի ներհոսքով (ինֆյուացիայով): Որանք սկսվում են լայն խողով (պոնորով)  
և նման են ալիքավոր ողորկ պատերով ուղղաձիգ հորի, որի խորությունը կախված  
է գրունտային ջրերի մակարդակից: Հորիզոնական Ս. Կ. ա. առաջանում են տ-  
վորաբար գրունտային ջրերի մակարդակի սահմաններում և նման են տարբեր  
չափերի սրահներով հերթափոխվող գետնուղիների: Ջրի հոսքը, որը խոշոր սրահ-  
ներում լնակներ է առաջացնում, ուղղված է դեպի ողողամաշման տեղական հիմքը  
(գետնափոխոը), որտեղ ելքի տեղում ավարտվում է խոշոր բարայրով: Ողողամաշման  
հիմքի իջեցմանը զուգընթաց սկսվում է հորիզոնական Ս. Կ. ա-ի առաջացման հոր  
փուլ, իսկ հին գետնուղիներն ու սրահները պատվում են սկուլպտուր ձևերով,  
ստալակտիտ-ստալագմիտներով և մակահոսման այլ ձևերով: Խորքային սիֆոնային  
անցքերը, որոնք առաջանում են հազեցման զոնայում, ունենում են ավելի բարդ  
(ոլորապտույտ) ձևեր, սակայն, քանի որ անցքերում ջուրը շարժվում է որոշակի  
ճնշման տակ, ապա նրանց պատերը ողողամաշված-հարթեցված են:

КАПЕЖ — ԿԱԹԻՎՔ (ԿԱԹՈՑ), ստ. լեռնային փորվածքների կամ քարանձավ-  
ների մեջ (ստաստոլից, թեր պատերից) ստ. ջրերի ներթափանցում՝ կաթիլի ձևով:

КАПЕЛЬНО-ЖИДКАЯ СВОБОДНАЯ ВОДА—ԿԱԹԻՎԱՀԵՂՈՒԿԱՅԻՆ ԱԶՍՏ  
ՋՈՒՐ, տե՛ս Вода гравитационная подземная:

КАПИЛЛЯРИМЕТР — ՄԱԶԱՆՈՒԹԱԶՍՓԻՉ (ԿԱՊԻՎՅԱՐԻՄԵՏՐ), չափիչ  
աարք, որի օգնությամբ որոշվում են ապարներում ջրի մագանության բարձրաց-  
ման և բացասական մագանության ճնշման մեծությունները:

КАПИЛЛЯРНАЯ ВЛАГОЕМКОСТЬ — ՄԱԶԱՆՈՒԹԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍԱՐՈՒ-  
ԹՅՈՒՆ, մագանության բարձրացման զոնայի սահմաններում ապարի մագանոթեն-  
րում պարունակված ջրաբանակ: Մ. խ. որոշվում է մագանոթների ջրի և չոր ապարի  
կշիռների հարաբերությամբ (%-ներով):

КАПИЛЛЯРНАЯ КОНДЕНСАЦИЯ — ՄԱԶԱՆՈՒԹԱՅԻՆ ԽՏՏՅՈՒՄ, մագա-  
նոթներում գոլորշու խոսացում (փոխարկում հեղուկի): Մ. խ. տեղի է ունենում այն  
դեպքում, երբ մագանոթում գոլորշու առաձգականությունը փոքր է հազեցած գո-  
լորշու առաձգականությունից:

КАПИЛЛЯРНОЕ ДАВЛЕНИЕ — ՄԱԶԱՆՈՒԹԱՅԻՆ ԴՆՅՈՒՄ, մագանոթում  
ջրի բարձրացմանը համապատասխանող ճնշում:

**КАПИЛЛЯРНОЕ ПОДНЯТИЕ** — ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, մազանոթներում ջրի բարձրացումը գրունտային ջրերի մակարդակի նկատմամբ: Մ. բ. տեղի է ունենում մազանոթում ջուր-օդ սահմանի մակերևութային լարվածության շնորհիվ:

**КАПИЛЛЯРНО-ПОДВЕШЕННАЯ ВЛАГА** — ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ԿԱԽՎԱԾ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, համատարած խոնավություն հողաշերտի մանր ծակոտկեն ապարներում, որոնց տակ տեղադրված ապարների ավելի խոշոր ծակոտիները մազանոթային ջուր չեն պարունակում: Այս պարագայում մազանոթային ջուրը գտնվում է կախված վիճակում և պահվում է մազանոթային ուժերով: Մ. կ. խ. իր տարածման զոնայում ջրատատիկ ճնշում հաղորդում է:

**КАПИЛЛЯРНО-ПОДВЕШЕННАЯ ВОДА** — ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ԿԱԽՎԱԾ ՋՈՒՐ, ապարների նորր մազանոթներում պարունակվող ջրեր, որոնք գրունտային ջրերի մակարդակի իջեցման պատճառով նրանց հետ կապը կտրել են, սակայն մազանոթային ուժերով պահվում են կախված վիճակում:

**КАПИЛЛЯРНЫЕ ВОДЫ** — ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ՋՐԵՐ, օդահագեցման զոնայի ապարների մանր ծակոտիներում և ճեղքերում պարփակված ջրեր, որոնք մազանոթային ձողական ուժերի շնորհիվ բարձրանում են ապարների մազանոթներով և գրունտային ջրերի հորիզոնից վերև առաջացնում են մազանոթային ջրերի զոնա: Մ. ջ-ի բարձրացման մակարդակը կախված է մազանոթների չափերից, ապարների մեխ. կազմից, մասնիկների ձևից, դասավորությունից, ինչպես նաև ջրերի ջերմաստիճանից ու հանքայնացումից: Մ. ջ. մեծ դեր են կատարում բազմատեսակ բնական գործընթացներում. հասնելով բույսերի արմատներին, սնում են նրանց, սակայն եթե մազական անցքով բարձրացող ջուրը հարուստ է աղերով, ապա նրա գոլորշիացումից հետո մնացող աղերը դառնում են հողերի աղուտացման պատճառ: Հոմանիշ՝ մազանոթային խոնավություն:

**КАПИЛЛЯРНЫЕ ПОРЫ** — ՄԱԶԱՆՈԹՆԵՐ (ՄԱԶԱԿԱՆ ԾԱԿՈՏԻՆԵՐ), մանր ճեղքեր և ծակոտիներ, որոնցով ջուրը (կամ մալթը) մազանոթային ուժերի շնորհիվ կարող է տեղաշարժվել: Ապարների կլորավուն ծակոտիների չափերը պայմանականորեն ընդունվում են 0,0002—1,0 մմ, իսկ ճեղքերինը՝ 0,0001—0,25 մմ: Մ-ի չափերն ու ձևերը պայմանավորում են մազանոթային բարձրացման չափը, ըստ որում, ինչքան անցքերը փոքր են, այնքան բարձրացումը մեծ է: Օր., առավելագույն մազանոթային բարձրացում դիտվում է կլորավուն փոքր մազանոթներով կավերի մոտ (6—8 մ, բացառիկ դեպքերում մինչև՝ 12—14 մ): Հոմանիշ՝ մազական անցքեր:

**КАПТАЖ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՋՐՀԱՎԱԳՈՒՄ, ստ. ջրերի բռնելը, հավաքելը և կենտրոնացնելը՝ տարբեր տեսակի կառույցների միջոցով (տե՛ս Каптажные сооружения):

**КАПТАЖНЫЕ СООРУЖЕНИЯ** — ՋՐՀԱՎԱԳ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ստ. ջրերը որոշ խորություններում կամ ուղղակի երկրի մակերևութի վրա բռնելու, հավաքելու ու կենտրոնացնելու համար նախատեսված կառույցներ: Ջ. կ-ի պարզագույն տեսակ-

ներքի են ջրհորերն ու տարբեր թեքության հորատանցքերը (ուղղահայաց, թեք, անգամ վերընթաց): Ստ. ջրերի արհեստական կամ բնական էլքերը (աղբյուրները) հավաքելու համար պատրաստվում են ավելի բարդ կառույցներ՝ բետոնապատ առուներ, գետնուղիներ, սրահներ, փոստրակներ, քարիզներ ևն:

**КАРБОНИЗАЦИЯ** — ԱՇՈՒՑՑՈՒՄ (ԿԱՐԲՈՆԱՑՈՒՄ), օրգ. նյութերի (սառվելապեւ ցելյուլոզայի ու լիզինի) ամփոջապեւ ածխածին անցման արագընթաց գործընթաց: Բնական պայմաններում Ա. պատճառ կարող են հանդիսանալ ջրազրկումը, ինքնայրումը ևն:

**КАРБОНАТНАЯ ЖЕСТКОСТЬ ВОДЫ** — ՋՐԻ ԿԱՐԲՈՆԱՍԱՍՅՈՒՆ ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Жесткость воды:

**КАРБОНАТНОСТЬ ОКРУЖАЮЩЕЙ ОБСТАНОВКИ** — ԶՐՁԱՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՐԲՈՆԱՍԱՍՅՈՒԹՅՈՒՆ, բնական միջավայր, որը որոշում է ջրերում pH-ի մեծությունը և  $\text{HCO}_3$ ,  $\text{CO}_3^{2-}$  իոնների և  $\text{CO}_2$ -ի պարունակությունը: Շ. մ. կ. մեծ դեր է խաղում ստ. ջրերում միկրոբաղադրիչների պարունակության ու տեղագաղթի գործում:

**КАРОТАЖ** — ԿԱՐՈՏԱԺ, հորատանցքի երկրք. կտրվածքի ուսումնասիրման երկրաֆիզ. մեթոդներ, որոնք իրագործվում են ապարների ֆիզ. հատկությունների, ինչպես նաև բնական կամ արհեստական ստեղծված դաշտերի չափման միջոցով: Չափվող հատկություններին կամ դաշտերին համապատասխան գոյություն ունեն Կ-ի տարբեր տեսակներ՝ էլեկտրական, մագնիսական, ռադիոակտիվ, ձայնային ևն: Կ-ի օգնությամբ լուծվում է երկրք. կտրվածքի քարաբանական տարանջատման խնդիրը, որոշվում է առանձին շերտերի կամ հանքատար ու ջրատար զոնաների տեղադիրքը (խորությունն ու հաստությունը), որոնց շնորհիվ շատ դեպքերում Կ. հաջողությամբ փոխարինում է հանուկի ստացման բարդ աշխատանքներին: Կ-ին են վերագրվում նաև մի շարք գործողություններ, որոնք հնարավորություն են տալիս լուծել հատուկ խնդիրներ. հորատանցքում ջրի ներհոսքի տեղերի որոշումը, շերտերի անկման և հորատանցքի շեղման չափումը, ցեմենտի բարձրացման հսկողությունը (տամպոնավորման դեպքում), ջերմային պայմանների որոշումը ևն:

**КАРРЫ (ШРАТТЫ)** — ԿԱՌԵՐ (ՇՐԱՏՆԵՐ), կարտավորվող ապարների մակերևույթին բնորոշ ռելիեֆային ձևեր, որոնք իրենցից ներկայացնում են անկյանոն խորը (մինչև 1—2 մ) ակունկերով հատված խորորտորոշությունների համակցություն: Կ. առաջանում են մակերևութային ջրերի ու մթնոլորտային տեղումների քայքայիչ գործունեության հետևանքով և, ըստ Ի. Կ. Ջայնի (1940), հանդիսանում են կարստի զարգացման սկզբնային փուլը:

**КАРСТ** — ԿԱՐՍՏ, մակերևութային և ստ. ջրերի ներգործությամբ լուծվող ապարներում տեղի ունեցող լվացման, տարրալուծման ու քայքայման գործընթացների համակցություն, որի հետևանքով երկրակեղևում առաջանում են ամենատարբեր չափի ու ձևի դատարկություններ (խոռոչներ, գետնուղիներ, քարանձավներ), իսկ

տեղանքի մակերևույթին՝ ռելիեֆի բացասական ձևեր (կտեր, ձագարներ, կարստային դաշտեր ևն): Հեշտ լուծվող (կարստավորվող) ապարներին են դասվում կենսկրի ու կալիումական աղերը, գիպսը, դոլոմիտները, կրաքարերը ևն, որոնց տարրալուծման ինտենսիվությունը պայմանավորված է քաղցրահամ (ազրեալի) ստ. ջրերի ակտիվ շրջանառությամբ (տե՛ս Активность карста): Կախված ստ. ջրերի թափանցման խորությունից և տեղանքի տեկտ. ակտիվությունից (տե՛ս Базис карста), կարստային դատարկությունները կարող են տարածվել մինչև 100 մ և ավելի խորությունները: Կ. լայնորեն տարածված է աշխարհի շատ երկրներում՝ Հարավլավիայում (անվանումը ստացել է Տրիեստի մոտ գտնվող կրաքարային սարահարթի անունով), Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Չեխոսլովակիայում, Ավստրիայում, ԽՍՀՄ-ում և այլուր: Կ-ի ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի ինչպես ջրատերաբանությունում, այնպես էլ ինժեներական երկրաբանությունում, քանի որ այն էսպես փոխում է ապարների կայունության և ջրատարության հատկանիշները:

**КАРСТОВАЯ ДЕНУДАЦИЯ** — ԿԱՐՍՍԱՅԻՆ ԼԵՐԿԱՑՈՒՄ (ՏԵՂԱՍԱՐՈՒՄ), ըստ Գ. Ա. Մաքսիմովիչի (1963), կարստային զանգվածի մակերևութից տարեկան միջին հաշվով տեղատարվող շերտիկի հզորությունը՝ արտահայտված միկրոններով: Կ. լ. կարստի ակտիվության առավել հեշտ որոշվող ցուցանիշ է, սակայն նրա որոշման ճշտությունը ապահովվում է միայն բազմամյա միջինացված չափումներով:

**КАРСТОВЫЕ ВОДЫ** — ԿԱՐՍՍԱՅԻՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք տեղադրված են իրենց իսկ գործունեության շնորհիվ լուծելի ապարներում առաջացած կարստային ուղիների ու դատարկությունների մեջ: Վերջինները հատուկ են հեշտ լուծելի ապարներին (քլորիդներ, սուլֆատներ, կրաքարեր ևն), որոնք ենթարկվում են շարժվող ստ. ջրերի ֆիզքիմ. ներգործությանը: Եթե ստ. ջրերը շարժման մեջ են մտնում արհեստականորեն (լեռնային փորվածքներով), ապա կարստավորման նոր փուլ է սկսվում: Օր., աղային հնքվ-երի շահագործման ժամանակ ստ. փորվածքներում դիտվող անճշան ջրատերակումները կարճ ժամանակամիջոցում ընդունակ են վերածվելու Կ. ջ-ի ներխուժման և հնքվ-ի ջրակալման անկասելի ուժերի: Կ. ջ-ին բնորոշ են ռեժիմային կտրուկ տատանումները:

**КАРСТОВЫЕ ВОРОНКИ** — ԿԱՐՍՍԱՅԻՆ ՋԱԳԱՐՆԵՐ, կարստավորված տեղանքի ռելիեֆի բացասական ձևեր, որոնք կարստային դատարկությունների փլուզման արդյունք են և մակերևույթին արտահայտվում են ամենատարբեր չափի ձագարների (կոների) ձևով: Կ. ձ. հանդիսանում են մակերևույթային ջրերի և մթնոլորտային տեղումների կլանիչներ, որի հետևանքով նրանք նպաստում են կարստի ակտիվացմանը: Կ. ձ-ի խումբը տեղանքում առաջացնում է կարստային գոգավորություններ և դաշտեր:

**КАРСТОВЫЕ ИСТОЧНИКИ** — ԿԱՐՍՍԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, երկրի մակերևույթի վրա կարստային ջրերի բնական էլքեր, որոնք հաճախ բնութագրվում են մեծ ու փոփոխական ծախսով և ջրերի բարձր հանքայնացմամբ:

**КАРСТОВЫЕ КОТЛОВИНЫ** — ԿԱՐՍՍԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կարստային ռելիեֆի բացասական ձևեր, որոնք առաջանում են կարստային ձագարների միացումից: Հատակագծում Կ. գ. ունենում են բարդ եզրագծեր, լայնությունն

ու երկարությունը գերազանցում են 100—200 մ-ից, իսկ իջվածքի խորությունը՝ 5—10 մ-ից: Կ. գ-ի միացումից ստաջանում են կարստային դաշտեր:

**КАРСТОВЫЕ ПУСТОТЫ** — ԿԱՐՍՏԱՅԻՆ ԴԱՏԱՐՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կարրստավորվող ապարներում ստաջացած դատարկություններ, որոնք ունենում են ամենատարբեր չափեր ու ձևեր (խոռոչներ, մղանցքեր, գետնուղիներ, քարանձավներ ևն):

**КАРСТОВЫЕ ФОРМЫ** — ԿԱՐՍՏԱՅԻՆ ՁԵՎԵՐ, կարստային երևույթների դրսևորման ձևեր, որոնք ձևաբանական հատկանիշներով բաժանվում են մակերևութային և ստ. տեսակների: Մակերևութային տեսակին են պատկանում կարրստային կտները (շրատները), հորերը, ձագարները, գոգավորությունները, դաշտերը ևն, իսկ ստ. տեսակին՝ կարստային դատարկությունները (տե՛ս Карстовые пустоты):

**КАРСТОВЫЙ КОЛОДЕЦ** — ԿԱՐՍՏԱՅԻՆ ՀՈՐ, կարստային ուղղաձիգ լայն անցք (հոր), որի խորությունը տասնապատիկ գերազանցում է նրա լայնությանը: Երբեմն Կ. հ-երը իսկական հանքափողեր են հիշեցնում. կատարյալ ուղղահայաց պատերով այդ անցքերն ունենում են մինչև 5—10 մ<sup>2</sup> կտրվածք և մի քանի հարյուր մ խորություն:

**КАРТА ВОДОПРОВОДИМОСТИ ВОД** — ՋՐԱՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ, ջրաերկր. հատուկ քարտեզ, որն արտահայտում է ջրատար շերտի (հորիզոնի, շերտախմբի) ջրահաղորդականության քանակական ցուցանիշները: Շերտի ջրահաղորդականությունը ( $T$ ) իրենից ներկայացնում է ապարների ծծանցման գործակցի ( $k$ ) և ջրատար շերտի հաստության ( $m$ ) արտադրյալը ( $T=km$ ) և չափվում է մ<sup>2</sup>/օր-երով: Ջ. ք-ներ կազմվում են ջրաերկր. մանրակրկիտ հետախուզական աշխատանքների ժամանակ:

**КАРТА ГИДРОИНДИКАЦИОННАЯ** — ՋՐԱՑՈՒՑՉԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ, գրունտային ջրերի տեղադրման խորության և նրանց հանքայնացման աստիճանի քարտեզ, որը կազմվում է ջրացուցչային մեթոդով (տե՛ս Гидроиндикация), այսինքն ուղղակի և անուղղակի ջրացուցիչների (բուսատեսակներ, ռեյիեֆ) քարտեզագրման տվյալների հիման վրա (տե՛ս Гидроиндикаторы): Ջ. ք-ի վրա գույնով խմբավորվում են ջրացուցիչների բոլոր տեսակները, որոնք ցույց են տալիս գրունտային ջրերի աղայնացման միևնույն աստիճանը, ստվերագծերով՝ գրունտային ջրերի տեղադրման միևնույն խորությունը ցույց տվող ջրացուցիչների տեսակները: Մասշտաբից դուրս նշաններով քարտեզի վրա առանձնացվում են այն տեղամասերը, որոնք պիտանի են ջրհորերի ցանցի ընդլայնման, ջրամբարների կառուցման համար, կամ ենթակա են գերխոնավացման, երկրորդական աղայնացման ևն:

**КАРТА ГРУНТОВАЯ** — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ, հատուկ ինժեներաերկրաբանական քարտեզ, որի վրա արտացոլվում են միայն գրունտների (գետնահողերի) հատիկաչափական կազմը, գույնը և ներփակումների բնույթը:

**КАРТА ИНТЕНСИВНОСТИ ТРАНСПИРАЦИИ** — ՏՐԱՆՍՊԻՐԱՑԻԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ, տրանսպիրացիայի (բույսերի կողմից կատարվող գոլորշիացման) ինտենսիվությամբ էապես տարբերվող հիմնական բուսատեսակների տեղաբաշխման քարտեզ: Զրաերկրք. մանրակրկիտ հետախուզական աշխատանքների ժամանակ կազմվող Տ. ի. ք-ները հիմք են ծառայում տրանսպիրացիայի վրա ջրի ծախսի հաշվարկների համար:

**КАРТА МИНЕРАЛЬНЫХ ВОД** — ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԱՐՏԵԶ, ջրաերկրք. քարտեզ, որի վրա առանձնացվում են տարբեր տիպի հանքային ջրերի տարածման մարզերը, շրջանները, հնքվ-երը և հիմնական երևակումները, արտացոլվում են ջրերի հանքալցացումը, քիմ. բաղադրությունը, յուրահատուկ բաղադրիչների, գազերի պարունակությունը և այլ ցուցանիշներ:

**КАРТА ПАЛЕОГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ** — ՀՆԱԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, ջրաերկրք. քարտեզ, որի վրա վերակերտվում են երկրք. անցյալ ժամանակաշրջաններում տվյալ տեղանքի (շրջանի, ռեգիոնի) ջրաերկրք. պայմանները:

**КАРТА ПРОМЫШЛЕННЫХ ВОД** — ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՔԱՐՏԵԶ, ջրաերկրք. քարտեզ, որի վրա առանձնացվում են արդյունաբերական նշանակություն ունեցող տարբեր տիպի ստ. ջրերի տարածման մարզերը, շրջանները, հնքվ-երն ու հիմնական երևակումները, արտացոլվում են ջրերի հանքալցացումը, քիմ. բաղադրությունը, արդյունաբերական նշանակություն ունեցող (կորզման ենթակա) բաղադրիչների (Br, B, J, Rn, տարբեր աղեր) ու գազերի պարունակությունը և այլ ցուցանիշներ:

**КАРТА ТЕРМАЛЬНЫХ ВОД** — ԶԵՐՄԱԶՐԵՐԻ (ԹԵՐՄԱԼ ՋՐԵՐԻ) ՔԱՐՏԵԶ, ջրաերկրք. քարտեզ, որի վրա ըստ ստ. ջրերի ջերմաստիճանի և ջրադինամիկ յուրահատկությունների առանձնացվում են ջերմաջրերի (թերմալ ջրերի) տարածման մարզերը, հնքվ-երը և հիմնական երևակումները, արտացոլվում են ջերմային էներգիայի ստացման համար պիտանի ջրերի ջերմաստիճանը, հանքալցացումը, քիմ. բաղադրությունը և այլ հատկանիշներ:

**КАРТА ФАКТИЧЕСКОГО МАТЕРИАЛА** — ՓԱՍՏԱՅԻ ՆՅՈՒԹԻ ՔԱՐՏԵԶ, երկրք. (ջրաերկրք., ինժեներաերկրք.) հանույթի մասշտաբով կազմվող քարտեզ, որի վրա անց են կացվում բոլոր երթուղիները, հետախուզական նշագծերը, լեռնային փորվածքները, ջրային օբյեկտները և կետերը, որտեղ կատարվել են դիտումներ, փորձեր, ապարների և ջրերի նմուշարկումներ: Փ. Գ. ք. կազմվում է անմիջապես դաշտային պայմաններում՝ տեղագրական (տոպոգրաֆիական) հիմքի վրա:

**КАСАТЕЛЬНОЕ НАПРЯЖЕНИЕ** — ԾՈՇԱՓՈՂ ԼԱՐՈՒՄ, լարում, որը գործում է ուսումնասիրվող հարթության ուղղությամբ:

**КАТЕГОРИИ ЗАПАСОВ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵԿՐԻՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ, ստ. ջրերի շահագործողական պաշարների դասա-

կարգման գործող հրահանգի (1983) համաձայն այս պաշարները ըստ ուսումնասիրվածության աստիճանի բաժանվում են հետախուզված A, B, C<sub>1</sub> և նախնական գնահատված C<sub>2</sub> կատեգորիաների:

A կատեգորիային են դասվում այնպիսի մանրամասնությամբ հետախուզված ու ուսումնասիրված պաշարները, որոնց համար լիովին պարզված են ջրատար հորիզոնների տեղադրման պայմանները, կառուցվածքը, ճնշման մեծությունը, ապարների ծծանցման հատկանիշները, որոշված են ջրատար հորիզոնների սնման պայմանները և պաշարների վերականգնման հնարավորությունները, հաստատված է գնահատվող պաշարների կապը մակերևութային ջրերի և հարակից ջրատար հորիզոնների հետ: Ստ. ջրերի որակը ուսումնասիրված է այնպիսի հավաստիությամբ, որն ապահովում է հաշվարկային ժամկետում նրանց նպատակային օգտագործումը: Պաշարները որոշվել են երկարատև շահագործման կամ փորձային ու փորձային-շահագործողական արտադրումների տվյալների հիման վրա:

B կատեգորիային են դասվում այնպիսի մանրամասնությամբ հետախուզված ու ուսումնասիրված պաշարները, որոնց համար պարզված են ջրատար հորիզոնների տեղադրման կառուցվածքի ու սնման պայմանների հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատվող ստ. ջրերի կապը հարակից ջրատար հորիզոնների և մակերևութային ջրերի հետ, մոտավոր քանակությամբ որոշված են բնական ջրային ռեսուրսները՝ որպես շահագործողական պաշարների լրացման աղբյուր: Վտ. ջրերի որակը ուսումնասիրված է այն չափով, որ թույլ է տալիս որոշել նրանց նպատակային օգտագործման հնարավորությունը: Ծահագործողական պաշարները որոշվել են փորձային արտադրումների տվյալների կամ հաշվարկային արտարկման (էքստրապոլյացիայի) հիման վրա:

C<sub>1</sub> կատեգորիայի պաշարները հետախուզված ու ուսումնասիրված են այնպիսի չափով, որ ընդհանուր գծերով պարզված են ջրատար հորիզոնների տեղադրման, կառուցվածքի ու սնման պայմանները: Ստ. ջրերի որակը ուսումնասիրված է այն չափով, որ հնարավոր է նախնական որոշում կայացնել դրանց օգտագործման հնարավորությունների մասին: Ծահագործողական պաշարները որոշվել են միայնակ հորատանցքերից արտադրումների ու նուշարկման տվյալներով, ինչպես նաև հարակից տեղամասերում գործող ջրհան կառույցների մասնակումով, որոնց կողմից շահագործվող հորիզոնի ստ. ջրերի պաշարները հաշվված են A և B կատեգորիաներով:

C<sub>2</sub> կատեգորիայի պաշարները որոշվում են ընդհանուր երկրբ.-ջրաերկրբ. տըվյալների հիման վրա, որոնք հաստատվել են առանձին կետերում ջրատար հորիզոնների նմուշարկումով կամ ընդունվում են հետախուզված տեղամասերի նմանակումով: Ստ. ջրերի որակը որոշված է ջրատար հորիզոնի առանձին կետերից վերցված նմուշներով կամ նույն հորիզոնի ուսումնասիրված տեղամասերի նմանակումով:

Ստ. ջրերի պաշարների A և B կատեգորիաները համարվում են արդյունաբերական, այսինքն ուսումնասիրվածության աստիճանը միանգամայն բավարար է ջրհան կառույցների նախագծման համար: C<sub>1</sub> կատեգորիայի պաշարները նախագծային աշխատանքների ժամանակ դիտվում են որպես հեռանկարային՝ ջրհան կառույցների ընդարձակման նպատակով, իսկ C<sub>2</sub> կատեգորիան կարող է հաշվի առնվել միայն լրացուցիչ ուսումնասիրություններից հետո:

**КАТИОНИРОВАНИЕ ВОДЫ** — Ջրի ԿԱՏԻՈՆԱՑՈՒՄ, ջրի կոշտության մինչ թուլաորելի սահմանը նվազեցում (մեղմացում), որը կատարվում է ջուրը՝ կատիոնի փոխանակման հատկություն ունեցող նյութի (կատիոնիտի) միջով ծծանցկացնելու, կամ ջրի մեջ այդ նյութի հատիկներ լցնելու ճանապարհով: Ջրին կոշտություն տվող և նստվածք առաջացնող  $Ca^{2+}$  և  $Mg^{2+}$  կատիոնները այս դեպքում փոխանակվում են կատիոնիտի մեջ եղած նստվածք չառաջացնող  $Na^+$  և  $H^+$  կատիոններով:

**КАТИОННЫЙ ОБМЕН** — ԿԱՏԻՈՆԱՑԻՆ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ, բնական ջրերի կատիոնների հետ գրունտներում պարունակվող կլանված կատիոնների համարժեք քանակով փոխանակման ունակություն: Ըստ Կ. Կ. Հեդրոյցի, Կ. փ. ինտենսիվությունը հիմնականում կախված է գրունտների կոլոիդ մասի (կլանիչ համալիրի) ակտիվությունից, փոխանակման կատիոնների տեսակից, կուտակումից, լուծույթի քիմ. քաղաղրությունից ևն:

**КАТИОНЫ** — ԿԱՏԻՈՆՆԵՐ, տե՛ս Ионы:

**КВАЗИСТАЦИОНАРНЫЙ РЕЖИМ** — ԿԱՐԾԵՑՅԱԿ ԿԱՅՈՒՆ (ԿՎԱԶԻՍՏԱՑԻՈՆԱՐ) ՌԵՇԻՄ, ստ. ջրերի չկայունացած շարժման տարատեսակ, որը կարճ ժամանակահատվածում (կամ տվյալ պահին) կարելի է համարել կայուն և բնութագրել կայունացված ծծանցման հավասարումով:

**КЕРН** — ՀԱՆՈՒԿ (ԿԵՈՆ), ապարների գլանաձև սյուն, որն ստացվում է սյունակային հորատման ժամանակ: Հ. հանդիսանում է երկրք. մեծ կարևորության փաստական նյութ, հատկապես այն դեպքում, երբ ուսումնասիրվող ապարները կամ հանքաշերտերը երկրի մակերևույթին չեն մերկանում: Ինժեներաերկրք. հետազոտությունների ժամանակ ապարների ֆիզմեխ. հատկությունների գնահատման նպատակով Հ-ից անմիջապես փորձանմուշներ են պատրաստվում, իսկ ջրաերկրք. հետազոտությունների ժամանակ՝ ապարների ջրատարությունը գնահատելու նպատակով մանրամասնորեն ուսումնասիրվում է Հ-ի ճեղքավորվածությունը և ծակոտկենությունը:

**КЕССОН** — ՍՈՒՋԱՐԿՂ (ՔԵՍՈՆ), քետոնից (երկաթքետոնից, մետաղից) պատրաստված արկղաձև պատնեշող կառույց, որի միջոցով ջրային միջավայրում կամ ջրհագեցած գրունտներում աշխատանքային խոց (տարածություն) է ստեղծվում: Ա-երը կիրառվում են ջրհագեցած գրունտներում խոր հիմքերի, մետաղյի փորվածքների, հանքահորերի անցման ժամանակ:

**КИНЕМАТИЧЕСКИЙ КОЭФФИЦИЕНТ ВЯЗКОСТИ** — ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅԱՆ ԿԻՆԵՄԱՏԻԿ ԳՈՐԾԱԿԻՑ, մածուցիկության դինամիկ գործակցի հարաբերությունն է նյութի խտությանը: Մ. Կ. Գ. չափվում է ստոքսերով կամ  $սմ^2/վրկ-երով$ :

**КИПУНЫ (ГРЕМЯЧИЕ КЛЮЧИ)** — ԲԼԹԲԼԹԱՅՈՂ (ԹԾԾԱՅՈՂ, ԾԱՌԱՂՈՂ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, գազերով հարուստ տաք կամ սառը աղբյուրներ, որոնք արտաքինապես եռալու տպավորություն են թողնում և գազանջատման հետևանքով թշշում են: Որոշ նմանություն ունեն գեյզերներին (տե՛ս Гейзер), սակայն ըստ բնույթի կարող են լինել և՛ վերընթաց, և՛ վարընթաց:

**КИСЛОРОДНЫЕ ВОДЫ** — ԹԹՎԱԾՆԱՅԻՆ, ՋՐԵՐ, օդափոխանակման զոնայի օքսիդացման միջավայրի ստ. ջրեր, որոնք հարուստ են ազատ թթվածնով:

**КИСЛОТНОСТЬ ВОДЫ** — ՋՐԻ ԹԹՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ջրի հատկություն, որը պայմանավորված է ջրածնային իոնի ( $H^+$ ) բարձր պարունակությամբ: Վերջինը դիտվում է այն դեպքում, երբ ջրում եղած ջրածնային միացությունները տարրաբաժանվելով (դիսոցվելով), առաջացնում են ազատ  $H^+$  իոն. օր.,  $H_2SO_4 \rightarrow 2H^+ + SO_4^{2-}$  կամ  $HCl \rightarrow H^+ + Cl^-$ : Ջ. թ. չեզոքացվում է կրի ազդեցությամբ:

**КИСЛЫЕ ВОДЫ** — ԹԹՈՒ ՋՐԵՐ, ցայտուն արտահայտված թթու ռեակցիայով բնական ջրեր, որոնց մեջ ջրածնային իոնների կուտակումը՝  $pH < 5$ : Նման բնական ջրերը սովորաբար պարունակում են մեծ քանակությամբ ազատ ածխաթթու (ածխաթթվային հանքային ջրեր), հումինային թթուներ (ճահնային ջրեր) կամ ծծմբաթթու (հանքահորերի թթու ջրեր): Երբեմն հանդիպում են նաև ազատ աղաթթու պարունակող հրաբխային ծագման ջրեր (ֆումարոլային ջրեր):

**КИСЛЫЕ ФУМАРОЛЫ** — ԹԹՈՒ ՖՈՒՄԱՐՈՒՆԵՐ, մինչև  $400-600^\circ C$  ջերմության հրաբխային զազանման արտանետվածքներ՝ ֆումարոլներ (տե՛ս *Фумаролы*), որոնք ունեն բարձր թթվայնություն ( $pH < 2-3$ ) և ներկայացված են  $HCl$ ,  $SO_2$ ,  $H_2S$  միացություններով, ջրային գոլորշիներով, երկաթի մագնեզիումի, ալյումինիումի, մանգանի, ինչպես նաև ծծումբի ու ռեալգարի բլորիդների զազախառնուրդի (սուրբիմատների) արտազատումներով:

**КЛАРК** — ՔԼԱՐԿ, տիեզերական կամ երկրաբին. որևէ համակարգում (ատոդային մթնոլորտում, երկրակեղևում, ինտրոզիվ զանգվածում, ստ. ջրերում ևն) տվյալ քիմ. տարրի միջին պարունակությունը՝ կշռային կամ ատոմական %-ներով (ատոմների ողջ գումարի կամ որպես հաստատուն ընդունած որևէ ատոմի՝ օր., կալցիումի նկատմամբ): Ի պատիվ ամերիկացի երկրաբանիկոս Ֆ. Քլարկի, Ա. Ե. Ֆերստանն առաջարկել է այս տերմինով կոչել «քիմ. տարրերի տարածում (հաճախակալություն)» կամ «միջին պարունակության տոկոս» հասկացությունները: Հասժամանակակից երկրաբին. տվյալների, քիմ. տարրերի հանդիպման հաճախակալությունը (տարածվածությունը) երկրի վրա և տիեզերքում պայմանավորված է նրանց ատոմային միջուկների կառուցվածքով ու կալունությամբ, իսկ տարրերի տեղաշարժը, կուտակումն ու տարածումը մեծապես կախված է ատոմների էլեկտրոնային պատյանների կառուցվածքից: Երբեմն «Ք.» տերմինով են կոչում նաև օգտակար հանածոների առանձին հնքվ-երում որևէ քիմ. տարրի միջին պարունակությունը, որը միշտ չէ:

**КЛАРК КОНЦЕНТРАЦИИ** — ԿՈՒՏԱԿՄԱՆ (ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ) ՔԼԱՐԿ, ըստ Վ. Ի. Վերնադսկու, այս կամ այն հնքվ-ում (հանքաքարում, ստ. ջրերում) որևէ քիմ. տարրի միջին պարունակության հարաբերությունը երկրակեղևում նրա քլարկին: Օր., մետաղային հանքաքարի մեջ  $Mn$ -ի Կ. ք. կարող է հասնել 100-ի, այն դեպքում, երբ նրա քլարկը երկրակեղևում կազմում է 0,1 %:

**КЛАССИФИКАЦИЯ ВОД ПО ХИМИЧЕСКОМУ СОСТАВУ** — ՋՐԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՏ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ, բնական ջրերի խմբավորում ըստ նրանց ընդհանուր հանքայնացման գերիշխող բաղադրիչների (կամ նրանց

խմբերի), իոնների պարունակության հարաբերակցության, յուրահատուկ գազերի ( $\text{CO}_2$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{CH}_4$ ,  $\text{Rn}$  ևն) կամ միկրոտարրերի ( $\text{Fe}$ ,  $\text{Re}$ ,  $\text{Li}$  ևն) պարունակության ևն: Ներկայումս առավել գործածական են Ս. Ա. Շչուկարյովի (1934), Ն. Ի. Տոլստիխինի և Ա. Ա. Բրոդսկու (տե՛ս График-квадрат, График треугольник), Օ. Ա. Ալլոկինի (1948), Վ. Ա. Սուլինի (տե՛ս График генетического типа подземных вод) դասակարգումները:

Ս. Ա. Շչուկարյովի դասակարգման համակարգով առանձնացվում են բնական ջրերի 49 դաս՝ 3 գլխավոր անիոնների ( $\text{Cl}^-$ ,  $\text{SO}_4^{2-}$ ,  $\text{HCO}_3^-$ ) և 3 գլխավոր կատիոնների ( $\text{Na}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$ ) պարունակության բոլոր հնարավոր զուգորդումներով: Օ. Ա. Ալլոկինը բնական ջրերը բաժանում է 3 դասերի՝ ըստ տիրապետող անիոնի (քլորիդային, սուլֆատային, ջրակարբոնատային), յուրաքանչյուր դասը ստորաբաժանվում է 3 խմբի՝ ըստ գերիշխող կատիոնի (նատրիումային, մագնեզիումային, կալցիումային): Խմբերը բաժանվում են տիպերի՝ ըստ անիոնների ու կատիոնների որոշակի հարաբերակցության՝ 1-ին տիպ.  $\text{HCO}_3^- > \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$ , 2-րդ տիպ.  $\text{HCO}_3^- < \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+} < \text{HCO}_3^- + \text{SO}_4^{2-}$ , 3-րդ տիպ.  $\text{HCO}_3^- + \text{SO}_4^{2-} < \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$ , 4-րդ տիպ.  $\text{HCO}_3^- = 0$ :

Նավթային ջրերի համար օգտագործվում է Վ. Ա. Սուլինի դասակարգումը և ծագումնաբանական գրաֆիկը: Նա առանձնացնում է ջրերի 4 ծագումնային տիպեր. ջրակարբոնատ-նատրիումային, սուլֆատ-նատրիումային, քլոր-կալցիումային և քլոր-մագնեզիումային: Նավթային ջրաերկրաբանության մեջ կիրառվում է նաև Չ. Պավենրի դասակարգումը, որը հիմնված է գլխավոր իոնների մգ. համ. պարունակությունների հարաբերակցության վրա: Նա կատիոնները բաժանում է 3 խմբի՝ ուժեղ հիմքեր ( $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ ), թույլ հիմքեր ( $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$ ) և չափազանց թույլ հիմքեր ( $\text{Fe}^{2+}$ ,  $\text{Cu}^{2+}$ ,  $\text{Al}^{3+}$ ), իսկ անիոնները՝ 2 խմբի՝ ուժեղ թթուներ ( $\text{Cl}^-$ ,  $\text{SO}_4^{2-}$ ) և թույլ թթուներ ( $\text{HCO}_3^-$  և այլք): Յուրաքանչյուր խումբը պայմանավորում է ջրի այս կամ այն հատկությունը. ուժեղ թթուները ջրին տալիս են 3 «սխիություն» ( $\text{S}_1$ ,  $\text{S}_2$ ,  $\text{S}_3$ ), իսկ թույլ թթուները՝ 3 «ակալալություն» ( $\text{A}_1$ ,  $\text{A}_2$ ,  $\text{A}_3$ ):

Բացի թվարկածից, գոյություն ունեն ևս մոտ 3 տասնյակ այլ դասակարգման համակարգեր, սակայն համընդհանուր ճանաչում գտած Ջ. դ. ք. ք. դեռևս չկա:

КЛАССИФИКАЦИЯ ГРУНТОВ ГРАНУЛОМЕТРИЧЕСКАЯ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՀԱՏԻՎԱԶԱՓԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, գրունտների ըստ հատիկային կազմի (հատիկախմբի պարունակության) դասակարգում, որը կատարվում է հատիկային կազմի ուսումնասիրության տվյալների հիման վրա (տե՛ս Гранулометрический состав горных пород): Կախված գրունտների համար առավել գործածական է Վ. Վ. Օխտոնիի կողմից առաջարկված պարզեցված դասակարգումը (տե՛ս աղ. 5), իսկ խոշորաբեկոր և ավազային գրունտների համար՝ շին. նորմաներում և կանոններում (ԾՆ և Կ 11—15—74) ընդունված դասակարգումը (տե՛ս աղ. 6):

КЛАССИФИКАЦИЯ ИСТОЧНИКОВ — ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, աղբյուրների (ստ. ջրերի) համընդհանուր ճանաչման արժանացած դասակարգում գոյություն չունի: Ըստ նման պայմանների կամ ճնշումնային և ոչ ճնշումնային ջրերի

Գրունտի անվանումը	Կավային մասնիկների պարունակությունը (%)
Կավ ծանր	> 60
Կավ	60—30
Մվազակավ ծանր	30—20
միջին	20—15
թեթև	15—10
Կավավազ ծանր	10—6
թեթև	6—3
Ավազ	< 3

Գրունտի անվանումը	Մասնիկների պարունակությունը օդաչոր գրունտի զանգվածի նկատմամբ
-------------------	--

**Ա. Խոշորաբեկոր**

Գլաքարային (մեծաբեկորային)	200 մմ-ից խոշոր	— > 50 %
Շավաքարային (խճային)	10 մմ-ից խոշոր	— > 50 %
Կոպճային (մանրախճային)	2 մմ-ից խոշոր	— > 50 %

**Բ. Ավազային**

Ավազ կոպճային	2 մմ-ից խոշոր	— > 25 %
Ավազ խոշոր	0,5 մմ-ից խոշոր	— > 50 %
Ավազ միջին	0,25 մմ-ից խոշոր	— > 50 %
Ավազ մանր	0,1 մմ-ից խոշոր	— > 75 %
Ավազ փոշենման	0,1 մմ-ից խոշոր	— < 75 %

Ֆետ կապվածության, տարբերում են վերընթաց և վարընթաց աղբյուրներ: Ըստ սնող ստ. ջրերի տիպի աղբյուրները ստորաբաժանվում են 6 խմբի.

I. Վերնաջրերով սնվող:

II. Գրունտային ծակոտային ջրերով սնվող:

III. Գրունտային և ճնշումնային ճեղքային ջրերով սնվող:

IV. Գրունտային և ճնշումնային կարստային ջրերով սնվող:

V. Արտեզյան ջրերով սնվող:

VI. Բազմամյա սառցույթի մարզի ջրերով սնվող աղբյուրներ:

Ըստ շարժիչ ուժերի տարբերում են. ա) գրավիտացիոն կամ ազատ, բ) ճնշումնային կամ արտեզյան, գ) իջույթային կամ ողողատարման, դ) արգելափակման կամ դիմհարային աղբյուրներ:

Ըստ գոյատևության տարբերում են մշտական, սեզոնային և պարբերաբար գործող աղբյուրներ:

Ըստ ծախսի աղբյուրները բաժանվում են 8 դասի (տե՛ս աղ. 7).

Գասը	Անվանումը ըստ ծախսի	Ծախսը (լ/վրկ)
I	Գերհսկա	>10.000
II	Հսկա	1.000—10.000
III	Ծառ մեծ	100—1.000
IV	Մեծ	10—100
V	Միջին (նշանակալից)	1—10
VI	Փոքր	0,1—1,0
VII	Աննշան	0,01—0,1
VIII	Խիստ աննշան	<0,01

Ըստ ծախսի տատանումների (ոեծիմի) աղբյուրները բաժանվում են 5 կատեգորիաների (տե՛ս աղ. 8):

Կատեգորիան	Աղբյուրի բնութագիրը	Qmax/Qmin հարաբերությունը
I	Խիստ կայուն	1 : 1
II	Կայուն	1 : 1 — 1 : 2
III	Փոփոխական	1 : 2 — 1 : 10
IV	Խիստ փոփոխական	1 : 10 — 1 : 30
V	Բացառիկ փոփոխական	1 : 30 և փոքր

Ըստ հանքայնացման տարբերում են քաղցրահամ և հանքային աղբյուրներ:

Ըստ ջրի ջերմաստիճանի աղբյուրները բաժանվում են 7 դասի (տե՛ս աղ. 9)։

Գասը	Անվանումը ըստ ջրի T-ի	T° 8
I	Բացառիկ սառը	<0
II	Ծառ սառը	0—4
III	Սառը	4—20
IV	Գոլ	20—37
V	Տաք	37—42
VI	Ծառ տաք	42—100
VII	Բացառիկ տաք	>100

КЛАССИФИКАЦИЯ ОПОЛЗНЕЙ — ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, սողանքները բազմազան են իրենց չափերով, կառուցվածքով, առաջացման պատճառներով ու զարգացմանը նպաստող պայմաններով, գործընթացի մեխանիզմով ու ընթացքով ևն: Համապատասխանաբար Ա. դ-ները նույնպես շատ են ու բազմաբնույթ: Նրանց մի մասը մանրամասն են և հաջվի են առնվում մի քանի բնորոշ հատկանիշներ, մյուսները նվազ մանրամասն են և հիմնված են 1—2 կարևոր հատկանիշի վրա: Մեծ թվով Ա. դ-ներ արտահայտում են, մի կողմից, սողանքային

գործընթացների ու երևույթների բարդությունը, մյուս կողմից՝ սողանքների վերաբերյալ ուսմունքի ոչ բարվոք վիճակը (հետազոտական փաստերի կուտակումը և տեսական ընդհանրացումները շարունակվում են): Ներկայումս համընդհանուր ճանաչում գտած Ս. դ. գոյություն չունի: Առավել հայտնի ու գործածական են համարվում Ա. Պ. Պավլովի (1903), Կ. Ի. Բոգդանովիչի (1911), Ֆ. Պ. Սավարենսկու (1934), Ն. Վ. Ռադիոնովի (1939), Ի. Վ. Պոպովի (1951), Ն. Ն. Մալովի (1955), Գ. Ս. Ջոլտոսարյովի (1956), Գ. Լ. Ֆիսենկոյի (1965), Վ. Դ. Լոմտաձեի (1970), Ե. Պ. Եմելյանովայի (1972) և ուրիշների կողմից ստաջարկված դասակարգումները:

КЛАССИФИКАЦИЯ ПОВРЕЖДЕНИИ ЗДАНИЙ И СООРУЖЕНИИ — ԾԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎՆԱՍՎԱՏՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, երկրաշարժերի հետևանքով շենքերի ու կառույցների վնասվածքները բնութագրելիս առավել գործածական է համարվում Ա. Վ. Մեդվեդևի կողմից ըստ 12 բալանոց MSK—64 սանդղակի ստաջարկված դասակարգումը (տե՛ս աղ. 10).

Աղյուսակ 10

Ծենքերի տիպը	Ծենքերի ու կառույցների վնասվածքների աստիճանը	Վնասված շենքերի քանակը (%)
Ա. Բույթ քարից շենքեր, գյուղական շինություններ, աղյուսահումքե և հողաշեն տներ	1. Թեթև վնասվածքներ-սվաղի վրա ճաքերի առաջացում և առանձին կտորների թափում	Հատուկեցն (մոտ 5) Ծառ (մոտ 50)
Բ. Սովորական աղյուսե տներ, խոշոր պանելային և մեծաղյուսե շենքեր, տեղական տաշված քարից շաղախով շենքեր	2. Չափավոր վնասվածքներ-պատերին ճեղքերի առաջացում, սվաղի թափում, տանիքի կղմինդրասալերի թափում, ծխնելույզների ճաքում և առանձին մասերի թափում	Մեծամասնություն (մոտ 75)
Գ. Կարկասային երկաթբետոնե շենքեր, լավորակ փայտե տներ	3. Ծանր վնասվածքներ-պատերին մեծ ու խոր ճեղքերի առաջացում, ծխնելույզների անկում 4. Փլվածքներ-պատին բաց ճեղքերի ու բացվածքների առաջացում, միջնորմերի փլուզում, ներքին կապերի խախտում 5. Փլուզումներ-շենքերի լիովին փլուզում, ավերում	

КЛАССИФИКАЦИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵԿԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, ստ. ջրերը դասակարգվում են ըստ ծագման, տեղադրման պայմանների, ջրադիմամիկ հատկանիշների, ջերմատիքանի, հանքայնացման, քիմ. բաղադրության, ջրատար ապարների քարաբանական կազմի ու հասակի են: Այդ պատճառով դասակարգումները բազմաթիվ են, սակայն ստ. ջրերի բոլոր օրինաչափություններն ու առանձնահատկություններն ընդգրկող դասակարգում գոյություն չունի: Ստորև բերվում են առավել ճանաչում գտած ու գործածական մի քանի դասակարգումներ՝ ըստ տարբեր ցուցանիշների.

ա) Ստ. ջրերի դասակարգում ըստ տեղադրման պայմանների

Հեղինակը և տարեթիվը	Ստորաբաժանման կարգը			
	I	II	III	IV
1	2	3	4	5
Ս. Ն. Նիկիտին, Ն. Ֆ. Պոգրեբով, 1895	1. Գրունտային 2. Արտեզյան			
Օ. Ե. Մեյնցեր, 1923	1. Օդամագեցման զոնայի  2. Հագեցման զո- նայի  3. Պլաստիկ ապար- ների զոնայի	1. Անցման գոտու  2. Մազանթային  1. Գրունտային (ֆրեա- տիկ) 2. Արտեզյան  1. Խորքային (հրաբխա- յին) 2. Քիմիապես կապակ- ցված	1. Ծակոտիների 2. Ծեղքերի  1. Ծակոտիների 2. Ծեղքերի	
Ա. Մ. Ժիրմունսկի, Ա. Ա. Կոզիրև, 1928	1. Ազատ ստ.  2. Ծնշումնային ստ.	1. Վերին ազատ (վեր- նաջրեր) 2. Ներքին ազատ  1. Մերձարտեզյան 2. Արտեզյան	1. Ծերտային 2. Ստ. ջրհոսքեր  1. Ծերտային 2. Ստ. ջրհոսքեր	

1	2	3	4	5
Օ. Կ. Լանգե, 1931, 1950, 1957	1. Կախված <hr/> 2. Վարընթաց <hr/> 3. Վերընթաց	Հողաբուսական <hr/> Գրունտային <hr/> Միջշերտային	1. Սեզոնային 2. Կայուն (մշտական) <hr/> Երակային (ներհուման), կարստային, ծծանցման <hr/> Երակային (ներհուման), ծծանցման	
Յ. Պ. Սավարենս- կի, 1935, 1939	1. Ոչ ճնշումնային <hr/> 2. Ծնշումնային	1. Գրունտային 2. Միջշերտային ոչ ճնշումնային <hr/> Միջշերտային (արտեզ- լյան) Ծեղքային Կարստային	Հատուկ տեսակներ վերնաջրեր կիսաճնշումնային <hr/> Մերձարտեզյան Հանքային և ջերմաջրեր	
Ի. Կ. Զայցև, 1946—48	1. Ծերտային <hr/> 2. Ծեղքային	1. Ծակոտկենաշերտային 2. Ծեղքաշերտային 3. Կարստաշերտային <hr/> 1. Հողմահարման զոնայի ա) ջրհոսքեր բ) ավազաններ	1. Հողաբուսական 2. Վերնաջուր 3. Միջշերտային ա) շարժուն բ) կանգուն <hr/> 1. Ժամանակակից հող- մահարման կեղևի ջրեր ա) շերտաճեղքային բ) ծածկոցաճեղքային գ) զանգվածաճեղքային ևն 2. Թաղված հողմահար- ման զոնայի ջրեր	Հատուկ ձևերի ջրեր. 1. Վերսառցույթային 2. Միջսառցույթային 3. Ենթասառցույթային <hr/> 1. Վերսառցույթային 2. Միջսառցույթային 3. Ենթասառցույթային <hr/> Ենթասառցույթային

		2. Լոկալ-ճեղքային	1. Տեկտ. խախտումների ջրեր 2. Օերտոստրական ան-ներդաշնակություն-ների կոնտակտի ջրեր 3. Օերտոստրակային հար-թությունների ջրեր	1. Գելզերների ջրեր 2. Յելիային հրաբուխների ջրեր 3. Ֆունարոլների ջրեր
		3. Ընդքակարստային	1. Ոչ խորը կարստերի ջրեր ա) երիտասարդ փուլի բ) հասուն փուլի 2. Խորը կարստի ջրեր ա) երիտասարդ փուլի բ) հասուն փուլի	1. Ստ. կարստային լճերի ջրեր  2. Ստ.կարստային գե-տերի ջրեր
Ա. Մ. Օվչինցիկով, 1948	1. Վերնաջուր	Ջրերի ենթատիպեր ծա-կոտկեն ապարներում 1. Հողային 2. Ծահնային 3. Վերնաջրեր ջրամերժ ապարների ուսպնյակ-ների վրա 4. Թակիրների և սվա-զաթմբերի ջրեր 5. Ավազային զանգված-ների և դյունների ջրեր	Ջրերի ենթատիպեր ճեղ-քավոր ապարներում 1. Հաղմահարման կեղևի ընդքավոր ապարների ջրեր  2. Կարստավորված զանգ-վածի վերին հարկի ջրեր  3. Լավային ծածկոցների առաստաղի ջրեր	Հատուկ տիպեր 1. Հավերժական սառ-ցույթի մարզի գործու-յա շերտի ջրեր  2. Թերմալ աղբյուրների դերիվատների ջրեր  3. Ժամանակավոր գոր-ծող ֆունարոլների ջրեր

1	2	3	4	5
	<p>2. Գրունտային</p>	<p>1. Ալյուվիալ 2. Դելյուվիալ և պրոլյուվիալ 3. Ֆլյուվիոգլացիալ 4. Արմատական ապարների</p>	<p>1. Հրաբխածին ապարների առաստաղի ու հատակի ճեղքային ջրեր 2. Նստվածքային ապարների շերտաճեղքային և ճեղքաշերտային ջրեր 3. Կրաքարային զանգվածների կարատային ջրեր</p>	<p>1. Վերսառցությանին 2. Միջսառցությանին 3. Բարձր ջերմաստիճանային գազերով հարուստ ջրեր 4. Ոչ մեծ ֆումարոլների և գեյզերների ջրեր</p>
	<p>3. Արտեզյան</p>	<p>1. Արտեզյան ավազանների ջրեր (ավազային շերտերում) 2. Արտեզյան լանջերի ջրեր (նախալեռնային շրջանների բեկորային շերտախմբերում)</p>	<p>1. Արտեզյան ավազանների (ճեղքավոր զանգվածներում ու շերտերում) 2. Արտեզյան լանջերի (կրաքարային ու տուֆածին շերտախմբերում, ինտրուզիվ զանգվածներում)</p>	<p>1. Ենթասառցությանին 2. Բարձր ջերմաստիճանային, գազերով հարուստ, տեկտ. խախտումներով վերընթաց ջրեր 3. Հրային զանգվածների ներդրումով բարդացած արտեզյան համակարգի ջրեր</p>

բ) Սու. ջրերի դասակարգում ըստ հանքայնացման աստիճանի.

Հեղինակը և տարեթիվը	Ջրերի խումբը	Հանքայնացումը
Վ. Ի. Վերնադսկի, 1931—36	1. Քաղցրահամ	< 1 գր/լ
	2. Աղահամ	1—10 — » —
	3. Աղի	10—50 — » —
	4. Աղաջրեր	> 50 — » —
Ի. Կ. Ջալցև, 1961	1. Քաղցրահամ	< 1 գր/կգ
	ա) գերքաղցրահամ	< 0,1 — » —
	բ) փափուկ	0,1—0,5 — » —
	գ) կոշտ	0,5—1,0 — » —
	2. Աղահամ	1—35 — » —
	ա) թույլ աղահամ	1—3 — » —
	բ) միջին աղահամ	3—10 — » —
	գ) ուժեղ աղահամ	10—35 — » —
	3. Աղաջրեր	> 35 — » —
	ա) շատ թույլ	35—70 — » —
	բ) թույլ	70—140 — » —
	գ) խիտ	140—270 — » —
	դ) շատ խիտ	270—350 — » —
ե) գերխիտ	> 350 — » —	

զ) Սու. ջրերի դասակարգում ըստ բիմ. քաղաղության — տե՛ս Классификация вод по химическому составу:

դ) Սու. ջրերի դասակարգում ըստ ջերմաստիճանի.

Հեղինակը և տարեթիվը	Ջրերի խումբը	Ջերմությունը °C
Օ. Կ. Լանգե, 1939	1. Սառը	< 20
	2. Գոլ	20—40
	3. Տաք	40—100
	4. Հեղճերներ	> 100
Օ. Ա. Ալլոկին, 1953	1. Բացասիկ սառ	0-ից ցածր
	2. Ծառ սառ	0—4
	3. Սառ	4—20
	4. Գոլ	20—37
	5. Տաք	37—42
	6. Ծառ տաք	42—100
	7. Գերտաք	> 100

КЛАССИФИКАЦИЯ ПРИРОДНЫХ ВОД ВЕРНАДСКОГО — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՎԵՐՆԱԳՍԿՈՒ, բնական ջրերի երկրաբան. համակարգման առաջին փորձ՝ կատարված Վ. Ի. Վերնադսկու կողմից (1929—36): Այն հիմնրված է ջրի քիմ. բաղադրության, տեղադրման ֆիզիկաաշխարհ. և երկրբ. պայմանների հաշվառման վրա: Բ. ջ. դ. ք. Վ. կարևոր առանձնահատկությունն այն է, որ հաշվի է առնում ջրի կազմում մասնակցող նյութերի բաղադրության կշռային %, խումբը որոշվում է ըստ գերակշռող քիմ. տարրի: Ենթախմբերի ստորաբաժանումը հիմնվում է ջրի ֆիզ. վիճակի (գոլորշի, հեղուկ, կարծր) հաշվառման վրա: Ենթախմբերն իրենց հերթին բաժանվում են 3 դասի (բաղցրահամ, աղահամ և աղի), իսկ դասերի մեջ առանձնացվում են ենթադասեր՝ ըստ գերիշխող գազի: Վերնադսկու կողմից առաջարկված դասակարգումը սկզբունքորեն ճիշտ է, սակայն նույնությամբ տարածում չգտավ. նրա որոշ դրույթներ (հատկապես ստ. ջրերին վերաբերող) լայնորեն օգտագործվում են ջրաերկրաբանության մեջ (դասակարգում ըստ ջրի հանքայնացման, գազային կազմի, տիրապետող քիմ. բաղադրիչի ևն):

КЛАССИФИКАЦИЯ ПРИРОДНЫХ ГАЗОВ — ԲՆԱԿԱՆ ԳԱԶԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄ, բնական գազերի խմբավորում՝ ըստ նրանց բաղադրության, ծագման և գոյության պայմանների: Վ. Ի. Վերնադսկին ձևաբանության տեսակետից առանձնացնում էր. 1) ազատ գազեր (մթնոլորտ), 2) ապարների դատարկություններում պարփակված գազեր, 3) գազային շիթեր, 4) գազագոլորշիներ, 5) գազերի հեղուկ լուծույթներ (կլանված գազեր): Բացի այդ, Վերնադսկին բնական գազերը ստորաբաժանում էր՝ առ. ա) երկրի մակերևույթի գազերի, բ) բարձր ջերմության հետ կապված գազերի և, գ) երկրակեղև թափանցող գազերի:

Վ. Վ. Բելյուսովը բնական գազերի ծագումնաբանական տեսակետից առանձնացնում է կենսաքիմ., օդային, քիմ. և ռադիոակտիվ ծագման գազեր: Ա. Լ. Կոզլովը դրանց ավելացնում է նաև ռադիոքիմ. ծագման միջուկային ռեակցիաների գազեր:

Ըստ քիմ. բաղադրության և գոյության պայմանների բնական գազերը Վ. Ա. Սոկոլովի կողմից դասակարգվում են հետևյալ կերպ. 1) մթնոլորտ, 2) երկրի մակերևույթի գազեր. ա) հողաբոսական, բ) ճահճային (տորֆային), 3) աստվածքային հաստվածքի գազեր. ա) նավթային հնքվ-երի, բ) բուն գազային հնքվ-երի, գ) բարածխային հնքվ-երի, դ) աղաբեր հաստվածքների, ե) ցրված, 4) փոխակերպային (մետամորֆային) ապարների գազեր, 5) արտավիժված ապարների գազեր. ա) հրաբխային, բ) ստանձ բյուրեղային ապարների:

КЛАССИФИКАЦИЯ СКОПЛЕНИЙ ГРАВИТАЦИОННЫХ ПОДЗЕМНЫХ ВОД — ԳՐԱՎԻՏՍՏԻՈՆ ՍՏՈՐԵԿԻՐԾԱ ՋՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄ, ստ. ջրերի տիպերի խմբավորում, որի հիմքում դրվում են նրանց առաջացման (ծագումնային), տեղադրման, տարածման պայմանները, ջրադինամիկ, ֆիզքիմ. և այլ առանձնահատկությունները: Գոյություն ունեն դասակարգման բազմաթիվ համակարգեր՝ առաջարկված Ա. Ն. Նիկիտինի և Ն. Ֆ. Պոգրեբովի (1895), Ե. Ա. Մարտեյի (1921), Օ. Ե. Մեյնցերի (1923), Ա. Մ. Ժիրմուսկու և Ա. Ա. Կոզիրևի (1928), Բ. Լ. Լիշկովի (1928), Օ. Կ. Լանգերի (1931, 1950, 1957), Ֆ. Պ. Սավաբենակու (1935, 1939), Ն. Ն. Սլավյանովի (1939), Վ. Ա. Սուլինի (1946—48), Ի. Կ. Զայցևի (1946—48, 1961), Ա. Մ. Օվչինցիկովի (1948, 1954) և ուրիշների:

կողմից: Առավել մշակված է և մեծ ճանաչում է գտել Ա. Մ. Օլշիննիկովի կողմից առաջարկված դասակարգումը (տե՛ս Классификация подземных вод):

**КЛАСТОКАРСТ** — ԿԼԱՍՏՈՎԱՐՍՏ, ըստ Գ. Ա. Մաքսիմովիչի (1958), սո. ջրերի բիմ. և գլխավորապես մեխ. ներգործության գործընթաց պնայիսի բեկորային կամ փոխար նստվածքային ապարների վրա, ինչպիսիք են լրսերը, լրսաման ավազավերը, զգալի քանակությամբ տարրալուծվող միներալներ պարունակող կավերը, ինչպես նաև լուծելի ցեմենտով ավազաքարերն ու խառնաքարերը (կոնգլոմերատները):

**КЛИВАЖ** — ԿԼԻՎԱՃ, ապարների երկրորդական թերթայնություն, որն առաջանում է ճնշման ազդեցությամբ և ուղղված է շերտայնության հարթությունների նկատմամբ որոշակի անկյան տակ: Կ-ով ապարները հեշտությամբ կտրատվում ու բաժանվում են թերթերի: Կ. մեծ նշանակություն ունի ապարների ջրաերկր. և ինժեներաերկր. հատկանիշների գնահատման հարցում:

**КЛЮЧ** — ԱՂԲՅՈՒՐ, տե՛ս Родник, Источник:

**КОАГУЛЯЦИЯ** — ԿՈՍԿՈՒՅԱՑԻԱ, կոլոիդ և ավելի կոպիտ դիսպերս մասնիկների փոփոխության գործընթաց, որը տեղի է ունենում նրանց կայուն վիճակի խախտման հետևանքով: Կ-ի գործընթացում կոլոիդ մասնիկները, միմյանց միանալով (կաշեղով), խոշորանում են, կորցնում իրենց կոլոիդ հատկանիշները և նստում կամ վերածվում դոմոլոլանման ժելի: Ջուրը կախված նյութերից մաքրելու նպատակով կատարվում է արհեստական Կ.՝ ջրին ավելացնելով փոքր քանակությամբ կոագուլյանտներ:

**КОЛИ-ТЕСТ** — ԿՈԼԻ-ՏԵՍՏ, ջրի մանրէաքանական աղտոտվածության ցուցանիշ, որը որոշվում է ջրի միավոր ծավալում (միլիլիտրում) պարունակվող աղիքային ցուպիկաձև մանրէների քանակով:

**КОЛИ-ТИТР** — ԿՈԼԻ-ՏԻՏՐ, ջրի մանրէաքանական աղտոտվածության առավել գործածական ցուցանիշ, որը որոշվում է մեկ աղիքային ցուպիկաձև մանրէին բաժին ընկնող ջրի ծավալով (միլիլիտրերով):

**КОЛЛЕКТОР ТРЕЩИННЫЙ** — ՇԵՂՔԱՑԻՆ ԿՈՒՏԱԿԻՉ, ջրաերկրաբանությունում՝ ճեղքավոր ապար-կուտակիշ, որի ճեղքերը լցված են ջրով: Բուն ճեղքերի տարողությունը Ծ. կ-ի ծավալի հետ համեմատած աննշան է (%-ի տասնորդական ու հարյուրերորդական մասեր, հազվադեպ՝ 1—2%):

**КОЛЛОВИЙ (КОЛЛОВИАЛЬНЫЕ ОБРАЗОВАНИЯ)** — ԿՈԼՅՈՒՎԻ (ԿՈԼՅՈՒՎԻԱԼ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ), հողմահարման արգասիքներ, որոնք գրավիտացիոն ուժերի ազդեցության տակ շարժվում են գաոիթափ լանջերով և կուտակվում նրանց փոքր թերթայնությունների վրա և ստորոտներում: Կ. գերազանցապես ներկայացված է փոխար բեկորային կուտակումներով, որոնք հանդիսանում են փլվածքների, թափվածքների ու քարային հոսքերի աղյուղք: «Կ.» տերմինը հայրենական գրականությունում համընդհանուր ընդունելություն չի գտել, որոշ հեղինակներ նրա հետ

են միավորում նաև տղանքային ու ցեխաջրային կուտակումները, իսկ անգու-ամբ-րիկյան մասնագետները Կ-ի տակ հասկանում են նաև դեյուլին (դեյուլիալ կուտակումները):

**КОЛЛОИДЫ (КОЛЛОИДНЫЕ РАСТВОРЫ) — ԿՈԼՈԻԴՆԵՐ (ԿՈԼՈԻԴՆՈՒՄՆԵՐ)**, տարանոց դիսպերս համակարգեր, որոնք կազմված են դիսպերս միջավայրից և դիսպերս փուլից: Վերջինն իրենից ներկայացնում է  $10^{-4}$ — $10^{-6}$  մմ տրամագծով նուրբ փոշիացած մասնիկներ (միցելալներ), իսկ դիսպերս միջավայրը՝ զանգված, որում բաշխվում է դիսպերս փուլը: Կ. կարող են լինել կարծր, հեղուկ և գազանման: Կ-ի տարատեսակներ են հանդիսանում գոլերը և ժելերը (տե՛ս Յոլի, Гель):

**КОЛОДЕЦ — ՀՈՐ (ՋՐՀՈՐ)**, ուղղաձիգ լեռնային փորվածք, որի խորությունը մեծ է լայնությունից: Հ. օգտագործվում է ստ. ջուր, նալթ, աղաջուր ևն ստանալու, ինչպես նաև հողերի չորացման, մթնոլորտային տեղումների, մակերևութային և կոյուղու ջրերի հեռացման, ստ. ջրերի ռեժիմի ուսումնասիրության և այլ նպատակներով: Գոյություն ունեն Հ-երի տարբեր տեսակներ. ըստ կառուցվածքի զանազանում են սովորական (փորված լայն կտրվածքով), հարեշակյան (տե՛ս Абиссинский колодец), հորատման (խողովակային), կատարյալ (տե՛ս Совершенный колодец) և անկատար (տե՛ս Несовершенный колодец), ըստ օգտագործման բնույթի տարբերում են՝ գրունտային, արտեզյան, ցամաքորդային (տե՛ս Колодец дренажный) և դիտողական (տե՛ս Колодец смотровой): Երբեմն «Հ.» տերմինն օգտագործվում է նաև բնական կարստային հորանման ձևերի բնութագրման համար:

**КОЛОДЕЦ ДРЕНАЖНЫЙ (ПОГЛАЩАЮЩИЙ) — ՑԱՄԱՔՈՐԴԱՅԻՆ (ԿԱՆՆՈՂ) ՀՈՐ**, հոր, որը տրվում է գրունտային ջրերի մակարդակը իջեցնելու, ինչպես նաև մթնոլորտային, մակերևութային, կոյուղային ջրերը երկրի մակերևույթից հեռացնելու և ջրաթափանց, բայց անջուր կամ ջրով լրիվ չհագեցած ապարաշերտերի մեջ լցնելու նպատակով:

**КОЛОДЕЦ СМОТРОВОЙ (НАБЛЮДАТЕЛЬНЫЙ) — ԴԻՏՈՂԱԿԱՆ ՀՈՐ**, հոր, որը կանավորվում է ստ. ջրերի ռեժիմային դիտարկումների (ջրերի մակարդակի, ջերմաստիճանի տատանումների և մոնիշարկման) համար, երբ հարևան կենտրոնական հորատանցքից (ջրհորից) արտաձուլումներ են կատարվում:

**КОЛЬМАТАЖ (КОЛЬМАТАЦИЯ) — ԱՆՑՔԱՍԻՑԱՆՈՒՄ (ԿՈԼՄԱՍԱՑԻԱ)**, բնական կամ արհեստական նանոսպարնով ապարների (գրունտների) ճեղքերի ու ծակոտիների խցանումը կալիային կամ տղմային նյութերով: Ա. երևույթը օգտագործվում է որպես ջրամբարներից ու ջրանցքներից տեղի ունեցող ծծանցման կորուստների դեմ պաշարի միջոց, սակայն ջրհան կառույցների համար այն բացասական հետևանք է ունենում-նվազեցնում է կառույցների արտադրողականությունը:

**КОМПЛЕКС ГЕОЛОГО-ГЕНЕТИЧЕСКИЙ ГОРНЫХ ПОРОД — ԴՊԱՐՆԵՐԻ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ-ԾԱԳՈՒՄՆԱՑԻՆ ՀԱՄԱԼԻՐ**, ինժեներական երկրաբանության մեջ ընդունված ստորաբաժանում, որը, ըստ Ի. Վ. Գոպովի (1959), իրենից ներ-

կայացնում է միատեսակ կամ նման ֆազիայ պայմաններում առաջացած միևնույն ֆորմացիայի ապարների համալիր:

КОМПОНЕНТЫ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ПРИРОДНЫХ ВОД — ԲՆԱ-  
ԿԱՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐ, ջրում տար-  
բալուծված գազեր ու աղեր, որոնք ջրի գոլորշիացման ժամանակ ցնդում են կամ  
վերածվում կարծր նստվածքի: Նստվածքի են վերածվում անօրգ. իոններն ու օրգ.  
կոլոիդները: Անօրգ. իոնները պայմանականորեն ստորաբաժանվում են մակրո- և  
միկրոբաղադրիչների (տե՛ս Макро- и Микрокомпоненты химсостава природ-  
ных вод):

КОМПРЕССИОННАЯ КРИВАЯ — ԿՈՄՊՐԵՍԻՈՆ ԿՈՐ, արտաքին ճնշումից  
գրունտների ծակոտկենության կախումը արտահայտող գրաֆիկ, որն ունի կորի  
տեսք: Արտաքին ճնշումը հանգեցնում է ծակոտկենության նվազումով ուղեկցվող  
գրունտի սեղմմանը:

КОМПРЕССИОННЫЕ ИСПЫТАНИЯ — ԿՈՄՊՐԵՍԻՈՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ,  
տարբեր բեռնվածքներով գրունտների սեղմելիության լաբորատոր փորձարկումներ,  
որոնք հնարավորություն են տալիս որոշել գրունտի ծակոտկենության ու սեղմելիու-  
թյան կախումը նրա վրա գործադրվող բեռնվածքի մեծությունից:

КОНВЕКЦИЯ — ԿՈՆՎԵԿՑԻԱ, միջավայրի (գազ, հեղուկ) մակրոմասնիկ-  
ների տեղաշարժ, որը հանգեցնում է զանգվածի, ջերմության և այլ ֆիզ. մեծու-  
թյունների փոփոխության: Օր., ջերմային Կ. է տեղի ունենում ջրամբարներում,  
հորատանցքերում և այլ փորվածքներում, երբ ավելի ծանր սառը ջրերը իջնում են  
ներքև, իսկ ավելի թեթև տաք ջրերը բարձրանում են վերև:

КОНДЕНСАЦИЯ ВОДЯНЫХ ПАРОВ — ՋՐԱՅԻՆ ԳՈՂՈՐԾԻՆԵՐԻ ԽՏԱ-  
ՑՈՒՄ (ԿՈՆՎԵՆՍԱՑՈՒՄ), ջրային գոլորշիների անցումը հեղուկ ֆազի: Ջ. գ. խ.  
կատարվում է խոնավության ավելացման, ջերմության նվազման, ինչպես նաև գո-  
լորշիներով հագեցած օդի՝ սառը տեղերից տաք տեղեր շարժման ֆետեանքով:  
Ապարներում ջրային գոլորշիների տեղաշարժը կատարվում է գոլորշու ստանձա-  
կանության նվազման ուղղությամբ:

КОНДЕНСАЦИОННАЯ ТЕОРИЯ — ԽՏԱՅՄԱՆ (ԿՈՆՎԵՆՍԱՑՄԱՆ) ՏԵ-  
ՍՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Теория формирования подземных вод:

КОНДЕНСАЦИОННЫЕ РУДНИЧНЫЕ ВОДЫ — ԽՏԱՅՄԱՆ (ԿՈՆՎԵՆՍԱՑ-  
ՄԱՆ) ՀԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ ՋՐԵՐ, ստ. լեռնային փորվածքներում թացույթների կամ  
կաթիլների ձևով պարբերաբար առաջացող ջրեր, որոնք խտանում են փորվածք-  
ներ մուտք գործող տաք օդային հոսանքներից: Հանքագործներին դրանք հայտնի  
են որպես «օդափոխման ջրեր», որոնք գոյանում են տարվա տաք ժամանակահատ-  
վածում, երբ մթնոլորտային օդի ջերմաստիճանը շատ ավելի բարձր է ընդերքի  
ապարների գրեթե անփոփոխ ջերմաստիճանից: Աղերի հիգրոսկոպիկության շնոր-  
հիվ, աղատար հաստվածքների շահագործողական փորվածքներում գոլորշիների

խտացումն ավելի ինտենսիվ է կատարվում, իսկ առաջացող ջուրն անմիջապես վերածվում է աղաջրի: Այդ պատճառով աղահանքերում երբեմն հարկ է լինում հատուկ միջոցառումներ իրագործել Խ. հ. 2-ի վնասակար ազդեցությունը բացառելու համար:

**КОНСИСТЕНЦИЯ ГЛИНИСТЫХ ГРУНТОВ** — ԿԱՎԱՑԻՆ ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԹԱՆՁՐՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՍԻՍՏԵՆՑԻԱ), կավային գրունտների վրա մեխ. ներգործության դեպքում նրանց մասնիկների շարժունակության աստիճան, որը էապես պայմանավորում է գրունտների կրողունակությունը: Կ. գ. թ. հիմնականում կախված է գրունտի խոնավությունից, դիսպերսայնության աստիճանից և միներալային կազմից: Կավային գրունտների համար բնորոշ է թանձրության պլաստիկ ձևը, որի համար նրանք կոչվում են պլաստիկ գրունտներ:

**КОНСОЛИДАЦИЯ ГРУНТОВ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԿՈՆՍՈԼԻԴԱՑՈՒՄ (ԽՏԱՑՈՒՄՈՎ ԱՄՐԱՑՈՒՄ), որոշակի բեռնվածքի տակ գրունտի խտացում (խտացման ավարտ), որը կատարվում է գրունտի ծակոտիներից ջրի դուրս մղման և մասնիկների խտացման շնորհիվ: Կոնսոլիդացման աստիճանն ու արագությունը որոշվում են գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով: Տարբերում են Գ. կ. 3 ստադիա. 1) գործնականում ակնորոշային առաձգական ձևափոխման (խտացման), 2) սկզբնական կոնսոլիդացման, որը պայմանավորված է ծակոտինային ջրի դանդաղ արտամղմամբ և ծակոտինային ճնշման աստիճանաբար հավասարեցմամբ, 3) երկրորդական կոնսոլիդացման, որը պայմանավորված է ծակոտինային ջրի գրեթե լրիվ արտամղմամբ և ծակոտինային ճնշման լրիվ հավասարեցմամբ: Վերջին ստադիայում կատարվող Գ. կ., բացառությամբ օրգանածին գրունտների, առանձնապես մեծ է:

**КОНСТИТУЦИОННАЯ ВОДА** — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ (ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆ) ՋՈՒՐ, միներալներում քիմիապես կապակցված ջուր, որը մտնում է նրանց բյուրեղային ցանցի մեջ  $\text{OH}^-$ ,  $\text{O}^+$  և  $\text{H}_2\text{O}^+$  իոնների ձևով: Կախված միներալների առանձնահատկություններից, Կ. ջ. կարող է անջատվել  $300^\circ$ -ից մինչև  $1500^\circ$  Ց ջերմության տակ, ըստ որում գործընթացն ուղեկցվում է միներալի բյուրեղային ցանցի լրիվ քայքայումով: Օր. կարող են ծառայել  $\text{Al}_2(\text{OH})_3$ ,  $\text{Ca}(\text{OH})_2$  տիպի հիդրօքսիդները և այնպիսի միներալներ, ինչպիսիք են դիասպորը՝  $\text{Al}\cdot\text{OH}$ , տոպազը՝  $\text{Al}_2(\text{OH})_2\cdot\text{SiO}_2$  ևն:

**КОНТИНЕНТАЛЬНЫЙ КЛИМАТ** — ՑԱՄԱՔԱՑԻՆ ԿԼԻՄԱ, օվկիանոսից կամ ծովից հեռու գտնվող մարզերի կլիմա, որը բնութագրվում է ջերմաստիճանային մեծ ու կտրուկ տատանումներով (տարեկան, սեզոնային, օրեկան), մթնոլորտի չորությամբ ու պարզությամբ, մթնոլորտային տեղումների փոքր քանակով:

**КОНТРАСТНОСТЬ ВОДНОЙ МИГРАЦИИ** — ՋՐԱՑԻՆ (ՋՐԻ ՄԻՋՈՑՈՎ) ՏԵՂԱԳԱՂԹԻ ՀԱԿԱՌԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, հիպերգենեզի զոնայում քիմ. տարրի՝ ջրի միջոցով տեղագաղթի (տեղափոխման) ինտենսիվության տարբերություն՝ կախված միջավայրի ու տարրի առանձնահատկություններից (օքսիդացման և վերականգնման, հիմնային ու թթվային պայմաններ ևն): Երկաթը, մանգանը, կոբալտը,

ցիմկը, պղինձը, ուրանը, մոլիբդենը և շատ այլ մետաղներ օժտված են մեծ Ջ. տ. հի-ով և ջրատար հորիզոններում առաջացնում են կուտակումներ, իսկ երկրաքիմ. արգելքներում (տե՛ս Եохимический барьер)՝ հանքամարմիններ: Ցիրկոնիումը, հաֆնիումը, տիտանը, թորիումը և մի քանի այլ տարրեր դրսևորում են փոքր Ջ. տ. հ. և ջրատար հորիզոններում զգալի կուտակներ չեն առաջացնում:

**КОНТРАСТНОСТЬ ГИДРОХИМИЧЕСКИХ АНОМАЛИЙ** — ՋՐԱԲԻՄԻԱԿԱՆ ԽՈՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱԿԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրաքիմ. որոնողական նախանշանների տարբերության աստիճան, որը բնութագրում է համապատասխան ֆոնային արժեքներից խտորումների չափը: Ջ. խ. հ. ավելի ակնհայտ է մեծ խտորումների դեպքում:

**КОНТРОЛЬНАЯ БУРОВАЯ СКВАЖИНА** — ՍՏՈՒԳԻՉ ՀՈՐԱՍԱՆՑՔ, ժամանակավոր հորատանցք, որը փորվում է նմուշարկման կամ փորձային արտամուղումների ժամանակ ստ. ջրերի մակարդակը ճշտելու կամ այլ նպատակներով, երբ անհրաժեշտ է իմանալ ստ. ջրի մակարդակի տատանումները: Ա. հ. հանդիսանում է դիտողական հորատանցքի տարբերակ (տե՛ս Наблюдательная скважина):

**КОНТУРНАЯ ВОДА** — ԵԶՐԱԳՇԱՅԻՆ ՋՈՒՐ, տե՛ս Красые воды нефтеносных пластов:

**КОНТУРЫ ПИТАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐՎՐՅԱ ՋՐԵՐԻ ՄՆՄԱՆ ԵԶՐԱԳՇԵՐ, եզրագծեր, որոնց սահմաններում ստ. ջրերի շահագործման ժամանակ նրանց մակարդակը չի իջնում, կամ տատանվում է որոշակի օրինաչափությամբ՝ բնական ռեժիմի փոփոխության պատճառով: Այդ եզրագծերով սահմանափակված տարածքը հանդիսանում է հորատանցքի (ջրհորի) սնման մարզ կամ ազդեցության զոնա (տե՛ս Зона влияния скважины):

**КОНУС ВЫНОСА** — ԱՐՏԱՀՈՍԱՅԻՆ (ԱՐՏԱԲԵՐՄԱՆ) ԿՈՆ, կիսակոնի տեսքով նորագոյացումների կուտակման ձև, որն առաջանում է նախալեռնային գոտիներում, լեռնային գետերի կամ ժամանակավոր հոսքերի առանցքային մասում: Լեռնային գետերն ու ժամանակավոր հոսքերը դուրս գալով նախալեռնային հարթավայրեր, կորցնում են կենդանի ուժը, որի հետևանքով նրանց բերվածքները նստում են: Ա. կ-երն աճում են հատկապես վարարումների, հեղեղների ու սելավների ժամանակ: Ա. կ-ի ձևերն ու չափերը կախված են ջրհոսքի թեքության նվազման աստիճանից, բերվածքների քանակից, նրանց մեխ. ու միներալային կազմից և այլ գործոններից:

**КОНЦЕНТРАЦИЯ ВОДОРОДНЫХ ИОНОВ (рН)** — ՋՐԱՇՆԱՅԻՆ ԻՈՆՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ (рН), ջրածնային իոնների պարունակությունը լուծույթում՝ արտահայտված գր-իոններով մեկ լիտրում: Մաքուր ջուրը դիսոցվում է  $H_2O \rightleftharpoons H^+ + OH^-$  հավասարումով, բայց ջրի իոնացման աստիճանը շատ թույլ է (10 միլիոն մոլեկուլից մեկը) կամ  $20^\circ$  ջերմաստիճանում 1 լ ջրում միայն  $10^{-7}$  գր-մոլ. ջուր է գտնվում իոնացված վիճակում: Ջրածին և հիդրօքսիլ իոնների մոլ. կոնցենտրացիայի արտադրյալը ջրի տվյալ ջերմաստիճանում հաստատուն մեծություն է և կոչվում է ջրի իոնային արտադրյալ, որը  $22^\circ$ -ի դեպքում հավասար է  $10^{-7} \cdot 10^{-7} =$

—10<sup>-14</sup>: Ջրածնի իոնների կոնցենտրացիան ընդունված է արտահայտել ոչ թե բնական թվերի ձևով (տեսքով), այլ նրանց լուգարիթմներով՝ վերցրած հակառակ նշանով (նշանակելով pH սիմվոլը): Օր.,  $(H^+) = 10^{-7}$ ,  $pH = -\lg(10^{-7}) = 7$ :

КОНЦЕНТРАЦИЯ РАСТВОРА — ԼՈՒՄՈՒՅՑԹԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՑԵՆՏՐԱՏԻՅԱ), լուծույթում նյութերի քանակական պարունակություն, որը կարելի է արտահայտել հետևյալ ձևերով. 1) խտությամբ, ա) տեսակարար կշռով, բ) Բոմեի աստիճաններով, 2) լուծույթի միավոր կշռին բաժին ընկնող նյութի կշռով, 3) լուծույթի միավոր ծավալում եղած նյութի կշռով, 4) լուծույթի միավոր ծավալում եղած նյութի գր-մոլերի կամ գր-համարձեքների քանակով:

КОНЦЕНТРИРОВАНИЕ МИКРОКОМПОНЕНТОВ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ПРИРОДНЫХ ВОД — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈԲԱՂԱԳՐՈՒՄ (ԿՈՆՑԵՆՏՐԱՏԻՅԱ), բնական ջրերի քիմ. տարրալուծության ժամանակ միկրոբաղադրիչների պարունակության արհեստական բարձրացման մեթոդ, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու միկրոտարրի որոշման զգայունությունը: Կոնցենտրացումը կարող է կատարվել ընտրովի (մեկ, երբեմն երկու-երեք միկրոբաղադրիչի ստանձնացում) կամ խմբակային (մեծ թվով միկրոբաղադրիչների միաժամանակ առանձնացում): Ընտրովի կոնցենտրացման համար ավելի հաճախ կիրառվում է արտաթորման (էքստրակցիայի) եղանակը, իսկ խմբակային (տարբեր նյութերի հետ համատեղ մտուցման) կոնցենտրացման համար՝ գոլորշիացման և օրգ. միացություններով կլանման եղանակները: Խմբակային կոնցենտրացմամբ ստացված խտանյութերը սովորաբար ուսումնասիրվում են ապակյալ տարրալուծությունների միջոցով:

КОПЛАННЫЙ КОЛОДЕЦ — ՋԵՌԱՓՈՐ ՋՐՀՈՐ, ստ. ջրերի շահագործման համար ձեռքով փորված մեծ տրամաչափի ջրհոր, որի պատերը ամրակապված են գերանե պակով, կամ աղյուսի, բարի, բետոնի շարքով, կամ երկաթետոնե, մետաղա օղակներով:

КОРНЕВАЯ СОЛЬ — ԱՐՄՍՍԱԿԱՆ ԱՂ, աղալների հատակում տիղմի տակ տեղադրված հոծ զանգվածային աղաշերտ: Բաակունչակ լճում տեղացիները բարացած աղաշերտը անվանում են չուզունե շերտ: Ա. ա. կարող է ներկայացված լինել կերակրի աղով, միրաբիլիտով, սոդայով, էպսոմիտով, սատրախանիտով և այլ աղերով:

КОРНЕВЫЕ ВОДЫ — ԱՐՄՍՍԱՅԻՆ ՋՐԵՐ, օդահագեցման զոնայի վերին մասերում գտնվող ջրեր, որոնք հասանելի են բույսերի արմատներին և սնում են նրանց: Տերմինը առաջարկվել է Օ. Մեյնցերի կողմից որպես միջազգային տերմին՝ «հողային ջրեր» տերմինի փոխարեն, սակայն ճանաչում չի ստացել: Աճորոշ, ավելորդ տերմին:

КОРРОЗИОННЫЕ ВОДЫ — ԿՈՐՐՈԶԻՈՆ ՋՐԵՐ, ըստ Վ. Ի. Վերնդակու, ստ. ջրավազանների թթվածնագուրկ ջրերի ընտանիք, որի մեջ մտնում են (քիմ. տեսակետից) որոշ կարստային ջրեր: Ավելորդ տերմին, ջրաերկր. տեսակետից բավարար հիմնավորում չունի:

КОЭФФИЦИЕНТ АКТИВНОСТИ ИОНА — ԻՈՆԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, տե՛ս Теория активности:

КОЭФФИЦИЕНТ БОКОВОГО ДАВЛЕНИЯ (РАСПОРА) — ԿՈՂԱՅԻՆ ԾՆՆՆՍԱՆ (ՀՐՄԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ, գրունտի վրա ուղղաձիգ ճնշում գործադրելիս նրա այն բաղադրիչը, որը գրունտի միջոցով հաղորդվում է դեպի կողերը: Թվապես Կ. ճ. գ. հավասար է կողային ճնշման և այն առաջացնող ուղղաձիգ ճնշման հարաբերությանը: Կ. ճ. գ-ի մեծությունը կազմում է. ավազների համար՝ 0,3—0,4, ավազակալերի համար՝ 0,5—0,7, կավերի համար՝ 0,7—0,75, կիսաապստածային ապարների համար՝ 0,2—0,3, ապստածային ապարների համար՝ 0,0—0,2: Հոմանիշ՝ ուղղահայաց և հորիզոնական լարումների համամասնության գործակից:

КОЭФФИЦИЕНТ БОКОВОГО РАСШИРЕНИЯ — ԿՈՂԱՅԻՆ ԸՆԴՈՒՐՁԱԿՍԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, կողային ընդարձակման սահմանափակության պայմաններում գրունտի սեղմման դեպքում հորիզոնական և ուղղաձիգ ձևախախտումների հարաբերությունը: Կ. ք. գ-ի մեծությունը կախված է գրունտի խտությունից (ամրությունից). ինչքան գրունտը խտացված է, այնքան նրա Կ. ք. գ. մեծ է:

КОЭФФИЦИЕНТ ВЛИЯНИЯ ПРИ ОТКАЧКЕ ИЗ ВЗАИМОДЕЙСТВУЮЩИХ СКВАЖИН — ԱՐՏԱՄՂՍԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՓՈՒՍԱԶՐՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ԱԶԳԻՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ըստ Մ. Ե. Ալտովսու, փոխազդող հորատանցքի Q<sub>1</sub> ծախսի հարաբերությունը չփոխազդող հորատանցքի Q ծախսին, այսինքն՝

$$\beta = \frac{Q_1}{Q}$$
 Ազդեցության գործակցի առավելագույն արժեքը որոշվում է հետևյալ

բանաձևով՝  $\beta_{\max} = \frac{1}{n}$ , որտեղ n-ը փոխազդող հորատանցքերի թիվն է:

КОЭФФИЦИЕНТ ВНУТРЕННЕГО ТРЕНИЯ — ՆԵՐՔԻՆ ԵՓՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, գրունտի տեղաշարժման (կողաշարժման) դիմադրության ցուցանիշ, որն արտահայտվում է գրունտի մասնիկների միջև շփման ուժերի մեծությամբ: Ն. շ. գ. որոշվում է տեղաշարժման փորձի արդյունքներով, որպես ներքին շփման անկյան տանգենս (տե՛ս Угол внутреннего трения): Ավազային գրունտների համար Ն. շ. գ. տատանվում է 0,25—0,60 սահմաններում, կավային գրունտների համար՝ 0,15—0,35 սահմաններում:

КОЭФФИЦИЕНТ ВОДНОГО БАЛАНСА — ԶՐԱՅԻՆ ՀԱԾԿԵԿԾՈՒ ԳՈՐԾԱԿԻՑ, ըստ Ա. Ն. Կոստյակովի, որոշակի ժամանակահատվածում տվյալ տեղանքում թափվող մթնոլորտային տեղումների P շերտի (մմ-երով) և մակերևութային հոսքի  $\mu$  ցուցանիշի արտադրյալի հարաբերությունը գոլորշիացման E շերտին (մմ-երով), այսինքն՝  $K = \frac{\mu - P}{E}$ : Չ. հ. գ. հիմք է ծառայել նախկին ԽԱՀՄ Եվրոպական մասի տարածքում ըստ խոնավացման աստիճանի առանձնացնել. 1) հավելյալ, 2) անկալուն և, 3) անբավարար խոնավացման գոտիներ:

КОЭФФИЦИЕНТ ВОДНОЙ МИГРАЦИИ — ԶՐԱՅԻՆ ՏԵՂԱԳԱՂԹԻ (ՄԻԳՐԱՅԻԱՅԻ) ԳՈՐԾԱԿԻՑ, ըստ Բ. Բ. Պոլինովի (1948), բնական ջրի միներալային

նստվածքում որևէ տարրի քանակի և ջրատար ապարում նույն տարրի պարունակության հարաբերություն՝  $K_x = \frac{m_x \cdot 100}{a \cdot n_x}$ , որտեղ՝  $K_x - \mathcal{L}^x$  տարրի Ջ. տ. գ. է,  $m_x - \mathcal{L}^x$  տարրի պարունակությունն է ջրում (գր/լ),  $a$ -ն ջրի միներալային մնացորդն է (գր/լ),  $n_x - \mathcal{L}^x$  տարրի պարունակությունն է ապարում (%): Ջ. տ. գ-ի մեծացումը ցույց է տալիս հողմահարման զոնայից տարրի տեղատարման ինտենսիվությունը: Ջ. տ. գ. նպատակահարմար է կիրառել ազատ ջրափոխանակման զոնայի ջրերի համար:

КОЭФФИЦИЕНТ ВОДОНАСЫЩЕНИЯ — ՋՐԱՀԱԳԵՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ապարի ջրակամման մեծության հարաբերությունը նրա ջրահագեցման մեծությանը.  $K_{\mathcal{D}} = \frac{W_1}{W_2}$ , որտեղ՝  $K_{\mathcal{D}}$ -ն ջրահագեցման գործակիցն է՝ արտահայտված միավոր մասերով,  $W_1$ -ը ապարի ջրակամումն է սովորական պայմաններում,  $W_2$ -ը ապարի ջրահագեցումն է 150 մթն. ննջման տակ: Ջ. գ. օգտագործվում է ապարի ցրտադիմացկունության անուղղակի բնութագրման համար: Հոմանիշ՝ ապարի ջրով հագեցման գործակից:

КОЭФФИЦИЕНТ ВОДООБИЛЬНОСТИ РУДНИКА (ШАХТЫ) — ՀԱՆՔԱՐԱՆԻ (ՀԱՆՔԱՀՈՐԻ) ՋՐԱՌԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, օգտակար հանածոների հնքվերի շահագործման ժամանակ լեռնային փորվածքներից արտամղվող ջրի  $Q$  քանակի ( $m^3/օր$ ,  $m^3/ժամ$ ,  $լ/վրկ.$ ) հարաբերությունը նույն ժամանակամիջոցում արդյունահանվող օգտակար հանածոյի  $P$  քանակին (տն)՝  $K_{\mathcal{D}} = \frac{Q}{P}$ : Երբեմն Հ. ջ. գ. անվանում են այն ջրաքանակը, որն ստացվում է լեռնային փորվածքի միավոր մակերեսից: Հոմանիշ՝ օգտակար հանածոյի ջրառատության գործակից:

КОЭФФИЦИЕНТ ВОДООБМЕНА — ՋՐԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ստ. ջրերի տարեկան ծախսի և ստ. ավազանի ջրի ընդհանուր ռեսուրսների հարաբերությունը:

КОЭФФИЦИЕНТ ВОДООТДАЧИ ( $\mu$ ) — ՋՐԱՏՎՈՒԹՅԱՆ (ՋՐԱՆՋԱՏՄԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ ( $\mu$ ), ջրահագեցած ապարից ազատ կերպով (գրավիտացիոն ուժերով) անջատվող ջրաքանակի ( $W_g$ ) հարաբերությունը նրա լրիվ խոնավատարությանը ( $W_n$ )՝  $\mu = \frac{W_g}{W_n}$  արտահայտված միավորի մասերով կամ %-ներով: Ջրատվությունը (ջրանջատումը) կարող է արտահայտվել լրիվ խոնավատարության ( $W_n$ ) և առավելագույն մոլեկուլյար խոնավատարության ( $W_m$ ) տարբերությամբ՝  $\mu = W_n - W_m$ , կամ տեսակարար ջրատվությամբ՝ ապարի միավոր ծավալից ( $V_n$ ) ստացվող ջրի քանակով ( $W_g$ )՝  $\mu = \frac{W_g}{V_n}$ :

Տարբեր ապարներ բնութագրվում են Ջ. գ-ի հետևյալ մեծություններով.

կավեր . . . . .	0
ավազակավեր	0,011—0,035
կավավազներ	0,06 —0,08

ավազներ	0,08 — 0,35
ավազաքարեր կավային	
շաղախով	0,02 — 0,03
ճեղքավոր կրաքարեր	0,08 — 0,1:

**КОЭФФИЦИЕНТ ВОДОПРОВОДИМОСТИ** — ՋՐԱՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ջրատար հորիզոնի ծծանցման գործակցի ( $K, m/op$ ) և նրա հաստոթյան ( $M, m$ ) արտադրյալը՝  $T = k \cdot M (m^2/op)$ :

**КОЭФФИЦИЕНТ ВОДОПРоницаемости Горных ПороД**—ԱՊԱՐՆԵՐԻ ՋՐԱԹՎՓԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, տե՛ս **Коэффициент фильтрации**:

**КОЭФФИЦИЕНТ ВЯЗКОСТИ** — ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, հեղուկի (գազի) մի մասը մյուսի նկատմամբ տեղաշարժի ժամանակ հեղուկի կողմից ցուցաբերվող դիմադրության բանական բնութագիրը: Թվապես  $\mu$ . գ. հավասար է միավոր մակերեսի վրա պտտենցիալ ուժին, որն անհրաժեշտ է հեղուկի 2 զուգահեռ շերտերի միավոր տարածության վրա կատարվող տեղաշարժի դեպքում նրանց արագությունների միավոր տարբերությունը պահպանելու համար:  $\mu$ . գ., որը երբեմն անվանում են նաև դիմամիկ մածուցիկության գործակից, չափվում է պուազներով:

**КОЭФФИЦИЕНТ ГАЗОНЕФТЕОТДАЧИ ВОДОНАПОРНОЙ СИСТЕМЫ** — ՋՐԱՇՆՇՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԱԶԱՆԱԿԹԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, նավթազազատար կուտակների համակարգի արդյունաբերական (շահագործողական) պաշարների և ջրանշումնային համակարգում պարփակված այդ հանածոների ընդհանուր (սկզբնական) երկրք. պաշարների հարաբերակցությունն արտահայտող մեծություն, որը տատանվում է լայն սահմաններում (մոտավորապես 0,01—0,1)՝ կախված շերտային ջրերի հանքայնացումից, համակարգի ջերմային պայմաններից, լուծված ածխաջրածինների բաղադրակազմից, շերտային կուտակիչների տարողությունից, ածխաջրածինների առաջացման (գեներացիայի) ինտենսիվությունից ևն:

**КОЭФФИЦИЕНТ ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЙ ЗАКРЫТОСТИ СТРУКТУР** — ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՋՐԱԵՐԿՐԱՑԱՆԱԿԱՆ ՓԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ըստ Մ. Ա. Գատալսկու (1954), ստ. ջրերի հանքայնացման (մգ/լ) հարաբերությունը նմուշարկվող ջրատար հորիզոնի խորությանը (մ):  $\beta$ . շ. փ. գ. կիրառելի է միայն խորը տեղադրված և հանքայնացված կամ աղաչուր պարունակող կառուցվածքների համար: Վ. Ա. Կրոտովան (1956) առաջարկել է  $\beta$ . շ. փ. գ. որոշել բրունային գործակցով, որն իրենից ներկայացնում է ստ. ջրում պարունակվող  $B_r$ -ի քանակի (մգ/լ) և ջրատար հորիզոնի տեղադրման խորության ( $H, m$ ) հարյուրամասյա տիկ հարաբերությունը՝  $\frac{B_r \cdot 100}{H}$ : Նա ելնում է այն հաստատված փաստից, որ ըստ խորության ջրի կազմի փոխակերպմանը զուգընթաց  $B_r$ -ի կուտակումը օրինաչափորեն աճում է: Սակայն եթե կտրվածքում կան աղաբեր (գիպսաբեր) շերտախմբեր և նրանցով պայմանավորված ջրաերկրք. խտորումներ, ապա առաջարկված մեթոդը հուսալի արդյունք տալ չի կարող:

**КОЭФФИЦИЕНТ ЗАКАРСТОВАННОСТИ** — ԿԱՐՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, կարստային դատարկությունների ծավալի հարաբերությունը կարստավորված ապարների ողջ ծավալին: Որոշակի ժամանակահատվածի համար որոշված Կ. գ. բնութագրում է կարստի ակտիվությունը (տե՛ս Активность карста):

**КОЭФФИЦИЕНТ ИРРИГАЦИОННОЙ (ЩЕЛОЧНОЙ) — ՈՌՈԳՄԱՆ (ԻՌԻ-ԳԱՑԻՈՆ, ԱԼԿԱԼԱՅԻՆ) ԳՈՐԾԱԿԻՑ**, ոռոգման ջրի իոնային կազմի որակի ցուցանիշ. արտահայտվում է ջրի սյան բարձրությամբ (դյույմերով), որի գոլորշիացումից ստացվող աղերը հողի 1,2 մ հատուրյան շերտը բույսերի մեծ մասի համար դարձնում են ոչ պիտանի: Ո. գ-ի մեծությունը տատանվում է 1,2 (վատորակ ջուր) մինչև 18 (լավորակ ջուր) դյույմի սահմաններում:

**КОЭФФИЦИЕНТ КОМПРЕССИИ (УПЛОТНЕНИЯ, СЖИМАЕМОСТИ) — ԳՐՈՒՆՏԻ ՍԵՂՄԵԼԻՈՒԹՅԱՆ (ԿՈՄՊՐԵՍԻՍԻՅԻ, ԽՏԱՑՄԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ**, մեծություն, որը ցույց է տալիս գրունտի սելմելիության (խտացման) աստիճանը՝ կոդային ընդարձակման անհնարինության դեպքում: Կոմպրեսիոն փորձարկումներով որոշվող Գ. ս. գ. չափվում է  $w^2/ky$ -երով և արտահայտվում հետևյալ բանաձևով. 
$$\alpha = \frac{\Sigma_1 - \Sigma_2}{P_2 - P_1}$$
, որտեղ՝  $\Sigma_1$  1-ը գրունտի ծակոտկենության գործակիցն է  $P_1$  ճնշման դեպքում, իսկ  $\Sigma_2$ -ը նույն գործակիցն է  $P_2$  ճնշման դեպքում:

**КОЭФФИЦИЕНТ КРЕПОСТИ ПОРОДЫ** — ԱՂԱՐԻ ԱՄՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, պայմանական մեծություն ( $f$ ), որը կազմվում է ապարի հորատման կամ մշակման ժամանակ դրսևորվող մի շարք ցուցանիշների հիման վրա (սելմելիության ժամանակավոր դիմադրություն, ապարի հորատանցման կամ մշակման արտադրողականություն ևն): Երկրբ. հետախուզական աշխատանքների ժամանակ կիրառվում է պրոֆ. Ն. Ն. Պրոտոդյակոնովի կողմից ստաշարկված դասակարգումը: Ըստ Ա. Կ. գ-ի ապարները բաժանվում են 10 կատեգորիաների:

**КОЭФФИЦИЕНТ МЕТАМОРФИЗАЦИИ РАССОЛОВ** — ԱՂԱԶՐԵՐԻ ՓՈՒՍԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, նորմալ ծովային ջրի և բնական աղաջրերի բաղադրությունների տարբերության աստիճանը բնութագրող մեծություն: Աղի լճերի դասը և աղաջրերի փոխակերպման գործընթացը (մետազեներալը) բնութագրելու համար Ն. Ս. Կոռնակովը առաջարկել է օգտագործել  $MgSO_4/MgCl_2$  հարաբերությունը, որը նա կոչել է փոխակերպման գործակից ( $K_{\phi}$ ): I դասի աղաջրերի համար, որոնց բնորոշ է նատրիումի և մագնեզիումի քլորիդների և նատրիումի, մագնեզիում ու կալցիումի սուլֆատների առկայությունը,  $K_{\phi} > 0$ : II դասի աղաջրերի համար, որոնց բնորոշ է նատրիումի, մագնեզիումի ու կալցիումի քլորիդների և կալցիումի սուլֆատի առկայությունը,  $K_{\phi} = 0$ :

I դասի աղաջրերով լճերը ստավելասկա ծովային ծագման են, իսկ II դասի աղաջրերով՝ ցամաքային ծագման: I դասի աղաջրերի անցումը II դասի, սլայնքն աղաջրերի փոխակերպումը, որը դրսևորում է լուծույթում սուլֆատների նվազումով, կատարվում է ցամաքի կարբոնատային ապարների ու կատիոնային փոխանակության ռեակցիայի ներգործությամբ: Մնացուկային (ռեյիկտային) լճերի աղային կազմի խորք փոփոխությունների դեպքում լուծույթում դիտվում է  $Ca^{2+}$  կատիոնի

կուտակման մեծացում, որի պատճառով որպես Ա. փ. գ. օգտագործվում է  $\text{CaCl}_2/\text{MgCl}_2$  հարաբերությունը:

Բնական ջրերի քիմ. դասակարգման ժամանակ Վ. Ա. Սուլինը առաջարկել է օգտագործել փոխակերպման այլ ցուցանիշներ, ինչպիսիք են  $(r\text{Cl}-r\text{Na})/r\text{Mg}$  և  $r\text{Na}/r\text{Cl}$  հարաբերությունները, որոնք նույնպես բնութագրում են բնական ջրերի աղային կազմի շեղման աստիճանը նորմալ ծովային ջրից: Վերջինի համար  $(r\text{Cl}-r\text{Na})/r\text{Mg}$  հարաբերությունը կազմում է 0,58, իսկ  $r\text{Na}/r\text{Cl}$  հարաբերությունը՝ 0,87: Լուծույթի համար ինչքան մեծ է  $(r\text{Cl}-r\text{Na})/r\text{Mg}$  և փոքր է  $r\text{Na}/r\text{Cl}$  հարաբերությունները, այնքան ջուրն ալեկի ուժեղ է փոխակերպված:

КОЭФФИЦИЕНТ МИГРАЦИИ В ПРИРОДНЫХ ВОДАХ — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐՈՒՄ ՏԵՂԱԳԱՎԹԻ ԳՈՐԾԱԿԻՑ, բառ Ռուդոլֆի և ուրիշների (1962), բնական ջրում քիմ. տարրի B միջին պարունակության (մգ/լ) հարաբերությունը ջրատար ապարում նույն տարրի C քլարկային պարունակությանը՝  $A = \frac{B \cdot 10^{-4}}{C}$  :

КОЭФФИЦИЕНТ НАСЫЩЕНИЯ ПОРОДЫ ВОДОЙ — ԱՊԱՐԻ ՋՐՈՎ ՀԱԳԵՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, տե՛ս Կոэффицент водонасыщения:

КОЭФФИЦИЕНТ НЕОДНОРОДНОСТИ — ԱՆՀԱՄԱՍԵՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, տե՛ս Кривая гранулометрического состава:

КОЭФФИЦИЕНТ (ПАРАМЕТР) ПЕРЕТЕКАНИЯ — ՆԵՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (ՊԱՐԱՄԵՏՐ), ջրատար համալիրի կտրվածքում թույլ ջրաթափանց ապարների միջով մի ջրատար հորիզոնից մյուսի մեջ ջրի անցման (ներհոսման) ինտենսիվությունը բնութագրող պարամետր: Ն. գ. տարրեր պայմանների դեպքում որոշվում է տարբեր բանաձևերով:  $B = \sqrt{\frac{k \cdot m \cdot m_1}{k_1}}$  բանաձևը օգտագործվում է այն

դեպքում, երբ ներանցումը կատարվում է միայն մեկ հորիզոնից (ներքևից կամ վերևից), իսկ  $B = \sqrt{\frac{k}{\frac{k_1}{m_1} + \frac{k_2}{m_2}}}$ , երբ ներանցումը կատարվում է  $u'$  ներքևից,  $u'$

վերևից:

Բանաձևերում B-ն ներանցման գործակիցն է, k-ն և m-ը համապատասխանաբար ջրատար հորիզոնի ծծանցման գործակիցն ու հաստությունն են,  $k_1$ -ը,  $k_2$ -ը,  $m_1$ -ը և  $m_2$ -ը համապատասխանաբար ներանցվող թույլ ջրաթափանց շերտերի ծծանցման գործակիցներն ու հաստություններն են:

КОЭФФИЦИЕНТ ПЛОТНОСТИ (ОТНОСИТЕЛЬНАЯ ПЛОТНОСТЬ) ПЕСКА — ԱՎԱԶԻ ԽՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (ՀԱՐԱԲԵՐՈՎԱԿԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ), ալյաքի առավելագույն ծակոտկենության գործակցի ( $\Sigma \max$ ) և բնական ծակոտկենության գործակցի ( $\Sigma$ ) տարբերության հարաբերությունը առավելագույն ծակոտկենության գործակցի և նվազագույն ծակոտկենության գործակցի ( $\Sigma \min$ ) տարբերությանը՝

$D = \frac{\Sigma_{max} - \Sigma}{\Sigma_{max} - \Sigma_{min}}$ : Կախված Ա. ծ. գ-ի մեծությունից, տարբերում են փոխը  
 ( $D=0,0-0,33$ ), միջին խտության ( $D=0,33-0,66$ ) և խիտ ( $D=0,66-1,00$ )  
 ալվազներ:

КОЭФФИЦИЕНТ ПОДЗЕМНОГО ПИТАНИЯ — USՈՐԵՐԿՐՅԱ ՍՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, գետի սնման ստ. բաղադրիչի մեծության հարաբերությունը ողջ գետային հոսքի մեծությանը: Ստ. ջրհոսքի մեծությունը որոշվում է գետային հոսքի հիդրոգրաֆի տարանջատման միջոցով:

КОЭФФИЦИЕНТ ПОДЗЕМНОГО СТОКА — USՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԻ ԳՈՐԾԱԿԻՑ, որոշակի ժամանակահատվածում ջրհավաք ավազանում բեռնաթափվող ստ. հոսքի մեծության հարաբերությունը նույն տարածքում թափվող մթնոլորտային տեղումների քանակին: Ա. հ. գ. բնութագրում է ստ. սնման չափը (մ կամ ծավալային միավոր):

КОЭФФИЦИЕНТ ПОПЕРЕЧНОГО СЖАТИЯ — ԼԱՅՆԱԿԻ ՍԵՂՄՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, տե՛ս Коэффициент Пуассона:

КОЭФФИЦИЕНТ ПОРИСТОСТИ ПОРОД (ПРИВЕДЕННАЯ ПОРИСТОСТЬ) — ԱՊԱՐՆԵՐԻ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (ԲԵՐՎԱԾ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ), ապարի բոլոր ծակոտիների ծավալի ( $V_3$ ) հարաբերությունը ապարի կմախքի ծավալին ( $V_4$ )՝ արտահայտված միավորի մասերով.  $\Sigma = \frac{V_3}{V_4}$ :

КОЭФФИЦИЕНТ ПРИЕМИСТОСТИ — ՆԵՐԸՆԳՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ներմղվող ջրի (լուծույթի)  $Q$  ծախսի ( $m^3/օր$ ) հարաբերությունը ներմղման ժամանակ գործադրվող  $P$  ճնշմանը ( $կգ/սմ^2$ ): Հորատանցքի ներդնդունման  $J$  գործակիցը ավելի ճշգրիտ արտահայտվում է հետևյալ բանաձևով.  $J = \frac{Q}{P_1 + P_2 - P_3 - P_4}$ , որտեղ՝  $P_1$  հորատանցքի բերանի վրայի ճնշումն է,  $P_2$  հորատանքում հեղուկի սյան ճնշումն է,  $P_3$  շիման հետևանքով ճնշման կորուստն է,  $P_4$  հորատախորշի վրա եղած սկզբնական ճնշումն է:

КОЭФФИЦИЕНТ ПРОДУКТИВНОСТИ СКВАЖИНЫ — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԱՐԳՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, նավթարդյունահանման գործում կիրառվող տերմին, որը հանդիսանում է տեսակարար ծախսի նմանակը: Հ. ա. գ. որոշվում է հորատանցքի ծախսի ( $m^3/վրկ$ ,  $m^3/օր$ ) և ճնշման անկման (մթն.) հարաբերությամբ:

КОЭФФИЦИЕНТ ПРОНИЦАЕМОСТИ — ԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, գրունտի ջրահաղորդականությունը բնութագրող պարամետր, որը հանդիսանում է ծծանցման գործակցի նմանակը: Թ. գ. օգտագործվում է ստ. հոսքի ծախսը հաշվարկելիս այն դեպքում, երբ հաշվարկները կատարվում են քաղցրահամ ջրից տարբերվող հեղուկների համար: Թ. գ. ( $K_p$ ) որոշվում է հետևյալ բանաձևով:

$K_{\beta} = K \frac{\gamma}{g}$ , որտեղ  $K$  ծծանցման գործակիցն է (սմ/վրկ),  $\gamma$  հեղուկի մածուցիկության կհետիկ գործակիցն է (սմ<sup>2</sup>/վրկ),  $g$  ծանրության ուժի արագացումն է (սմ/վրկ<sup>2</sup>):

КОЭФФИЦИЕНТ ПУАССОНА — ՊՈՒՍՏՈՆԻ ԳՈՐԾԱԿԻՑ, փորձարկվող գրունտի նմուշի հարաբերական կողային ընդարձակման հարաբերությունը նմուշի հարաբերական ուղղաձիգ ձևախախտմանը, որը կատարվում է նմուշի միառանցք սեղմման դեպքում Պ. գ. ( $\mu$ ) որոշվում է հետևյալ բանաձևով  $\mu = \frac{\Sigma}{1 + \Sigma}$ , որտեղ  $\Sigma$  -ը գրունտի կողային սեղմման (ընդարձակման) գործակիցն է: Համասեռ գրունտների (նյութերի) համար միառանցք ձգումը սեղմումով փոխարինելիս կամ ձևախախտումների առանցքները փոխելիս Պ. գ. մնում է անփոփոխ: Ապարների համար Պ. գ. տատանվում է 0,1—0,4 սահմաններում: Հոմանիշ՝ լայնակի սեղմման գործակից:

КОЭФФИЦИЕНТ ПЬЕЗОПРОВОДНОСТИ — ԾՆՇՈՒՄՆԱՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ջրաբեր կամ նավթաբեր շերտում ճնշման տարածման արագությունը բնութագրող չափանիշ, որը որոշվում է հետևյալ բանաձևով.  $a = \frac{K}{\mu(m\beta_c + \beta_w)}$  որտեղ  $a$ -ն մ. գ. է (մ<sup>2</sup>/օր),  $k$ -ն թափանցելիության գործակիցն է (դարսի),  $\mu$ -ն հեղուկի դինամիկ մածուցիկությունն է (սանտիպուազ),  $m$ -ը ծակոտկենության գործակիցն է (միավորի մասեր),  $\beta_c$  -ն հեղուկի սեղմման գործակիցն է՝ 1 մթն. ճնշման դեպքում,  $\beta_w$  -ն սպարի սեղմման գործակիցն է՝ 1 մթն. ճնշման դեպքում: Ծ. գ. ծառայում է շերտային ճնշումների վերաբաշխման գործընթացի հիմնական բնութագրի:

КОЭФФИЦИЕНТ РАЗМЯГЧАЕМОСТИ — ԿԱԿՂԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, խոնավացման հետևանքով գրունտների ամրության նվազման ցուցանիշ: Այն իրենից ներկայացնում է գրունտի մինչ ջրով հագեցնալը և հագեցնալուց հետո ամրության սահմանների հարաբերությունը: Ինչքան գրունտի Կ. գ. փոքր է, այնքան նրա ամրությունը խոնավացման հետևանքով սվելի է նվազում:

КОЭФФИЦИЕНТ РАСТВОРИМОСТИ ГАЗОВ В ВОДЕ (КОЭФФИЦИЕНТ АБСОРБЦИИ) — ԶՐՈՒՄ ԳԱԶԵՐԻ ԼՈՒԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (ԿԼԱՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ), որոշակի ծավալի ջրում նույն ծավալի գազերի լուծելիությունը բնութագրող գործակից: Մթնոլորտային ճնշմանը մոտ սպայմաններում ջրում գազերի լուծելիությունը դիտարկելիս օգտվում են Բունզենի և Կունենի կլանման գործակիցներով: Բունզենի կլանման գործակիցը իրենից ներկայացնում է 0° Ց և 760 մմ սնդիկի սյան ճնշման սպայմաններին բերված գազի ծավալ (մլ), լուծված 1 մլ լուծիչում՝ փորձի ջերմաստիճանի և գազի 760 մմ սպարիսլ ճնշման սպայմաններում: Կունենի կլանման գործակիցը որոշվում է նույն սպայմաններում, միայն լուծիչը վերցվում է 1 գր-ի չափով:

КОЭФФИЦИЕНТ СДВИГА — սողաբի (ԿՈՂԱՇԱՐԺԻ) ԳՈՐԾԱԿԻՑ, գրունտի սողի (կողաշարի) դեպքում նրա դրսևորած ընդհանուր դիմադրության ցուցանիշ, որը պայմանավորված է շփման և միացման ուժերով: Ս. գ. որոշվում է գրունտի կողաշարի փորձարկումով՝ որպես կողաշարի անկյան տանգենս (տե՛ս Մոլ նյութը):

КОЭФФИЦИЕНТ СЖИМАЕМОСТИ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՍԵՂՄԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, տե՛ս Կոէֆֆիցիենտ կոմպրեսի:

КОЭФФИЦИЕНТ СЖИМАЕМОСТИ ЖИДКОСТИ — ՀԵՂՈՒԿԻ ՍԵՂՄԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, մեծություն, որը ցույց է տալիս ճնշման մեծացման դեպքում հեղուկի սկզբնական ծավալի փոքրացման չափը՝  $\beta_v = \frac{\Delta V}{V \cdot \Delta p}$ , որտեղ  $V$ -ն հեղուկի

ծավալն է՝  $P$  ճնշման դեպքում: Ստ. ջրերի սեղմելիության գործակիցը տատանվում է  $(2,7 \div 5) \cdot 10^{-5}$  սահմաններում (Վ. Ն. Օշկելաշյով, 1948): Ջրի սեղմելիությունը հիմնականում կախված է լուծված գազերի քանակից, ջերմաստիճանից և քիմ. բաղադրությունից: Հոսանիշ՝ ծավալային ստաճականության գործակից:

КОЭФФИЦИЕНТ СКОРОСТИ ФИЛЬТРАЦИИ — ԾՄԱՆՑՄԱՆ ԱՐՈՒԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, մեծություն, որն արտահայտում է ծակոտկեն ու ճեղքավոր ապարների միջով առ. ջրերի ծծանցման իրական արագությունը, երբ ճնշման գրադիենտը հավասար է մեկի:

КОЭФФИЦИЕНТ СТОКА — ՀՈՍԲԻ ԳՈՐԾԱԿԻՑ, որևէ ջրհավաք ավազանում որոշակի ժամանակահատվածում ձևավորվող մակերևութային հոսքի մեծության (մմ) հարաբերությունը նույն ժամանակահատվածում թափվող մթնոլորտային տեղումների քանակին (մմ): Հ. գ. ցույց է տալիս մթնոլորտային տեղումներից ձևավորվող մակերևութային հոսքի մեծությունը:

КОЭФФИЦИЕНТ СТРУКТУРНОЙ ПРОЧНОСТИ — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՄՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, գրունտի ամրության վրա կառուցվածքային կապերի ազդեցության ցուցանիշ: Կ. ա. գ. որոշվում է գրունտի բնական կառուցվածքի նմուշ և խախտված կառուցվածքի նմուշի քայքայման ժամանակավոր դիմադրությունների հարաբերությամբ՝ պայմանով, որ բնական և խախտված կառուցվածքի նմուշներն ունեն միատեսակ ծակոտկենություն ու խոնավություն:

КОЭФФИЦИЕНТ СТРУКТУРНОЙ СЖИМАЕМОСТИ — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԵՂՄԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, գրունտի չորացման գործընթացում նրա սեղմելիության վրա բնական կառուցվածքային կապերի ազդեցությունը բնութագրող ցուցանիշ: Գրունտի Կ. ս. գ. ( $K_{ս. ք}$ ) որոշվում է հետևյալ բանաձևով.  $K_{ս. ք} = \frac{1^s - 1^k}{1^s - 1^k_{ք}}$  որտեղ՝  $1^s_{ք}$  -ն բնական կառուցվածքի գրունտի ծակոտկենության գործակիցն է՝ կծկման սահմանում,  $1^k_{ք}$  -ն նույնն է՝ գրունտի համար:

**КОЭФФИЦИЕНТ СЦЕПЛЕНИЯ — ՀԱՐԱԿՑՄԱՆ (ՇԱՐԿԱՊՄԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ.** գրունտների տեղաշարժին (կողաշարժին) ցուցադրած դիմադրությունը բնութագրող հատկանիշ, որը պայմանավորված է գրունտի մասնիկների հարակցման ուժերով:

**КОЭФФИЦИЕНТ ТЕПЛОПРОВОДНОСТИ — ՋԵՐՄԱՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** ջերմության քանակ, որը 1 վ-ում հաղորդվում է 1 մ<sup>2</sup> ուղղահայաց կտրվածքով, երբ ջերմության հաղորդման ուղղությամբ գրադիենտը կազմում է 1 օ/սմ: Ջ. գ. նշանակվում է  $\lambda$  -ով և չափվում է կպ./սմ<sup>2</sup>. վ. օ-ով:

**КОЭФФИЦИЕНТ ТРЕЩИНОВАТОСТИ — ԾԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** ապարների ճեղքավորվածության մեծություն, որն արտահայտվում է ապարի որոշակի զանգվածի ճեղքերի գումարային ծավալի և այդ զանգվածի ծավալի հարաբերությամբ, ինչպես նաև ապարի շիֆի վրա դիտվող ճեղքերի գումարային մակերեսի և շիֆի մակերեսի հարաբերությամբ:

**КОЭФФИЦИЕНТ УРОВНЕПРОВОДНОСТИ — ՄԱԿԱՐԴԱԿԱՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** մեծություն, որը բնութագրում է գրունտային ջրերի մակարդակի տատանումների տարածման արագությունը՝ կապված հոսքի սահմանում ջրի հորիզոնի փոփոխության հետ.  $\alpha_{\text{ж.}} = \frac{K \cdot h_{\text{ж}}}{\mu}$ , որտեղ՝  $\alpha_{\text{ж.}}$  — Մ. գ. է (մ<sup>2</sup>/օր),  $h_{\text{ж}}$  — գրունտային հոսքի միջին հզորությունն է (մ),  $k$  — ծծանցման գործակիցն է (մ/օր),  $\mu$  — ջրանջատման (ջրատվության) գործակիցն է (միավոր մասեր):

**КОЭФФИЦИЕНТ УСАДКИ — ԿԾԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** լեռնային գործում սեղմող ուժերի ազդեցությամբ լցազանգվածի բարձրության փոքրացման և նրա սկզբնական բարձրության հարաբերությունը՝ արտահայտված %-ներով կամ միավորի մասերով:

**КОЭФФИЦИЕНТ УСТОЙЧИВОСТИ — ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** որևէ մեխ. համակարգի (օր., շին. կառույցի) կայունությունը պահպանող և այդ կայունությունը խաթարել ձգտող գումարային ուժերի հարաբերություն:

**КОЭФФИЦИЕНТ ФИЛЬТРАЦИИ — ԾՄԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** մեծություն, որը բնութագրում է ապարների ջրանցիկության ունակությունը. այն որոշակի ապարի համար հաստատուն է: Ըստ Իսարսի, ծ. գ. իրենից ներկայացնում է ապարի միջով ջրի ծծանցման արագություն, երբ ճնշման գրադիենտը հավասար է մեկ միավորի (այսպես,  $V = kJ$ , եթե  $J = 1$ , ապա՝  $V = k$ ): Մ. գ. արտահայտվում է մ/օր, սմ/վրկ: Հոմանիշ՝ ջրաթափանցելիության գործակից:

**КОЭФФИЦИЕНТ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ УСТОЙЧИВОСТИ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ,** գրունտի կառուցվածքային կապերի և սեղմելիության կախումը բնութագրող ցուցանիշ, որը մեծ կամ հավասար է մեկի: Գ. է. կ. գ. որոշվում է հետևյալ բանաձևով.  $K_{\text{է.գ.}} = \frac{\Sigma}{\Sigma_{\mu}}$ , որտեղ  $K_{\text{է.գ.}}$  էներգետիկ կայունության գործակիցն է,  $\Sigma$  բնական կառուցվածքով նմուշի ծակոտեղենության գործակիցն է,  $\Sigma_{\mu}$  խախտված կառուցվածքով նմուշի ծակոտեղենության գործակիցը:

### КРАЕВЫЕ (ЗАКОНТУРНЫЕ) ВОДЫ НЕФТЕНОСНЫХ ПЛАСТОВ —

ՆԱՎԹԱՏԱՐ ԾԵՐՏԵՐԻ ԵԶՐԱՅԻՆ (ԱՐՏԱԵԶՐԱԳԵՄԱՅԻՆ) ԶՐԵՐ, նավթատար շերտի խորասուզվող մասերում նավթը ներքևից եզրավորող ջրեր: Նման ջրերը կոչվում են ստորին եզրավորող ջրեր: Եթե նավթատար շերտը մերկանում է, ապա նրա վերին (գլխային) մասում կուտակվում են մթնոլորտային ծագման ջրեր, որոնք կոչվում են վերին եզրային ջրեր: Ստորին ու վերին եզրային ջրերը էապես տարբերվում են իրենց բիմ. կազմով:

КРАЕВЫЕ УСЛОВИЯ — ԵԶՐԱՅԻՆ (ՍԱՀՄԱՆԱՅԻՆ) ՊԱՅՄԱՆՆԵՐ, տե՛ս  
Граничные условия:



КРЕПОСТЬ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆ, արտաքին ուժերի ներգործությանը ապարի ցուցաբերած գումարային դիմադրությունը, որը դիտվում է մասնավորապես ապարի հորատման և մշակման ժամանակ: Ա. ա. բնութագրվում է ապարի ամրության գործակցով (տե՛ս Коэффициент крепости породы):

КРИВАЯ ГРАНУЛОМЕТРИЧЕСКОГО (МЕХАНИЧЕСКОГО) СОСТАВА — ՀԱՏԻԿԱԶԱՓԱԿԱՆ (ՄԵՆՍՆԻԿԱԿԱՆ) ԿԱԶՄԻ ԿՈՐ, ապարի հատիկաչափական (մեխ.) կազմի գրաֆիկ արտահայտություն, որն իրենից ներկայացնում է ըստ մասնիկների չափերի ապարի նմուշի ծավալի ավելացումը արտահայտող ինտեգրալ կոր: Հ. կ. կ. կազմվում է հետևյալ կերպ. օրդինատների առանցքի վրա բերվում է հատիկների գումարային %-ը (նմուշի ողջ ծավալի նկատմամբ), իսկ արսցիսների առանցքի վրա՝ մասնիկների տրամագծի չափերը կամ լոգարիթմները (տե՛ս նկ. № 8 ա, բ.): Հ. կ. կ. հնարավորություն է տալիս հեշտությանը որոշել ապարի մասնիկների արդյունավետ տրամագիծը ( $d_{10}$  կամ  $d_{արգ}$ ) և անհամասեռության գործակիցը ( $F$ ), որն իրենից ներկայացնում է ապարի հատիկաչափական կազմի անհամասեռության աստիճանը և որոշվում է օրդինատի վրա առանձնացված 60 %-ին համապատասխանող հատիկախմբի տրամագծի ( $d_{60}$ ) և արդյունավետ տրամագծի հարաբերությամբ  $F = \frac{d_{60}}{d_{10}}$ : Նման եղանակով որոշված ապարի արդյունավետ տրամագիծը և անհամասեռության գործակիցը օգտագործվում են շատ ապարների, հատկապես ալագների ծծանցման գործակիցը փորձնական բանաձևերով որոշելիս:

КРИВАЯ ДЕБИТА — ԾԱՍՍԻ ԿՈՐ, հորատանցքի (ջրհորի)  $Q$  ծախսի կախումը  $S$  իջեցումից արտահայտող գրաֆիկ: Ծ. կ. ընդհանուր տեսքով ճնշումային ջրերի համար ներկայացնում է ուղիղ գիծ, իսկ գրունտային ջրերի համար՝ պարբոլիկ կոր: Իրական պայմաններում ավելի հաճախ ծախսի և մակարդակի իջեցման կախման  $Q = F(S)$  կորն ունի՝  $S = aQ + bQ^2$  կորի տեսք, որտեղ  $a$  ու  $b$  պարամետրերը որոշվում են փորձնական տվյալներով:

КРИВАЯ ДЕПРЕССИИ — ԻԶՈՒՅԹԻ (ԴԵՊՐԵՍԻԱՅԻ) ԿՈՐ, տե՛ս Депрессионная кривая:

КРИВАЯ ЗАВИСИМОСТИ ОСАДКИ ОТ ВРЕМЕНИ — ԺԱՄԱՆԱԿԻՑ ՆՍՏՄԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՐ, գրունտի կամ կաոուցի ժամանակի ընթացքում նստման կախվածությունը կորի տեսքով արտահայտելու գրաֆիկ եղանակ:



Նկ. 8. Հատիկաչափական (մեյս.) կազմի կոր.  
 ա) ավազի հատիկաչափական կազմի սովորական  
 կոր,  $d_{10}=0,12$  մմ,  $d_{60}=0,54$  մմ,  $f=d_{60}/d_{10}=4,5$ ,  
 բ) նույն ավազի հատիկաչափական կազմի լուգա-  
 րիթմական կոր,  $d_{10}=0,12$  մմ,  $d_{60}=0,50$  մմ,  
 $f=d_{60}/d_{10}=4,2$ :

Փ. Ա. Կ. Կ. կազմվում է տարբեր բեռնվածքների տակ գրունտը (կառուցը) փոր-  
 ձարկելիս:

КРИВАЯ ЗАВИСИМОСТИ ОСАДКИ ОТ НАГРУЗКИ — ԲԵՌՆՎԱԾՔԻՑ  
 ՆՍՏՄԱՆ ԿԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՐ, տե՛ս Испытание грунтов на несущую спо-  
 собность:

КРИВАЯ КОНСОЛИДАЦИИ — ԿՈՆՍՈԼԻԴԱՑՄԱՆ (ԽՏԱՑՈՒՄՈՎ ԱՄ-  
 ՐԱՑՄԱՆ) ԿՈՐ, լարորատոր պայմաններում գրունտը կալում բեռնվածքի տակ

փորձարկելիս ժամանակի ընթացքում նրա նստման կախվածության գրաֆիկ արտահայտություն:


КРИВАЯ НАГРЕВАНИЯ — SU.ՔՍ.ՑՄԱՆ ԿՈՐ, գրունտի (նյութի) ջերմատիճանի ավելացումից նրա տաքացման վրա ծախսված ողջ ջերմության կախվածության գրաֆիկ արտահայտություն:

КРИВАЯ ОБЕСПЕЧЕННОСТИ — ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՐ, ինտեգրալ կոր, որը ցույց է տալիս շարքի ընդհանուր համակցության մեջ տվյալ մեծության ապահովվածությունը կամ նրանից բարձր ցուցանիշների հավանականությունը (% կամ միավորի մասեր): Հոմանիշ՝ գերազանցման հավանականության կոր:

КРИВАЯ ПОДПОРА ГРУНТОВЫХ ВОД — ԳՐՈՒՆՏԱՑՅԻՆ ՋՐԵՐԻ ԴԻՄՀԱՐԻ ԿՈՐ, գրունտային ջրհոսքի իջույթի (դեպրեսիայի) կոր՝ այն դեպքում, երբ ջրատար հորիզոնի հաստությունը հոսքի ուղղությամբ նվազում է հորիզոնի ջրամերժ հիմքի՝ հոսանքին հակառակ թեքության շնորհիվ, այսինքն ջրամերժ հիմքը կատարում է դիմհարի դեր: Գ. ջ. կ. ունի գոգավոր տեսք:

КРИВАЯ РАЗГРУЗКИ — ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԿՈՐ, լաբորատոր փորձարկման ժամանակ գրունտի բեռնաթափման դեպքում մնացորդային բեռնվածքից նրա նստման կախվածության գրաֆիկ արտահայտություն:

КРИВАЯ СПАДА ГРУНТОВЫХ ВОД — ԳՐՈՒՆՏԱՑՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԿՈՐ, գրունտային ջրհոսքի մակերևույթի թեքության կորի ձև, երբ ջրատար հորիզոնի հաստությունը հոսքի ուղղությամբ փոքրանում է: Դա կատարվում է այն դեպքում, եթե ջրամերժ հիմքը հոսքի նկատմամբ ունի հակառակ թեքություն կամ հորիզոնական է: Գ. ջ. ա. կ. սովորաբար ուռուցիկ տեսք ունի:



Նկ. 9. Խտացման և ուռչման կորեր:  
1—խտացման (սեղմման) կոր, 2—ուռչման կոր:

**КРИВЫЕ УПЛОТНЕНИЯ И НАБУХАНИЯ** — **ԽՏԱՑՄԱՆ** եվ **ՈՒՌՉՄԱՆ** **ԿՈՐԵՐ**, կոմպրեսիոն փորձարկումներով ստացված կորի նյութերը (նկ. 9), որոնք համապատասխանում են 1) գրունտի վրա բեռվածքի աստիճանական ավելացմանը — սեղմման (նստման) կոր, 2) գրունտի բեռնաթափմանը — ուռչման կոր: Ուռչման կորը չի համընկնում սեղմման կորին, քանի որ գրունտի խտացման ժամանակ նրա կառուցվածքը խախտվում է և առաջանում են մնացորդային ձևախախտումներ: Որոշ առաձգական գրունտների (հատկապես կավերի) մոտ Խ. և ու. կ. կարող են զգալիորեն մոտենալ, սակայն լրիվ համընկնել չեն կարող:

**КРИОГЕНЕЗ (КРИОГЕННЫЕ ПРОЦЕССЫ)** — **ՍԱՌՑԱԾՆՈՒԹՅՈՒՆ (ԿՐԻՈԳԵՆԵՆԵՆԵԶ, ՍԱՌՑԱԾԻՆ ԳՈՐԾՆԹՕՍՆԵՐ)**, ջերմաֆիզ., ֆիզմեխ. և ֆիզքիմ. գործընթացների համակցություն, որը տեղի է ունենում սառչող. սառած և հալչող ապարներում, ինչպես նաև ջրակուտակներում ու ջրոսքերում:

**КРИОГЕННАЯ СТРУКТУРА** — **ՍԱՌՑԱԾԻՆ (ԿՐԻՈԳԵՆ)** **ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**, սառած ապարների կառուցվածք, որը պայմանավորված է նրանց քաղաղքամասերի (միներալային կմախքի, սառցի բյուրեղների, հեղուկի թաղանթի, գազի ներփակումների) հարաբերական քանակով, ձևերով ու շափերով:

**КРИОГЕННАЯ (МОРОЗНАЯ) ТЕКСТУРА** — **ՍԱՌՑԱԾԻՆ (ԿՐԻՈԳԵՆ)** **ԿԱԶՄՎԱԾՔ** — (**ՏԵՔՏՍՈՒՐԱ**), սառած ապարների կազմվածք, որն առաջանում է ապարների սառած գործընթացում:

**КРИОГЕННЫЕ ЯВЛЕНИЯ** — **ՍԱՌՑԱԾԻՆ (ԿՐԻՈԳԵՆ)** **ԵՐԵՎՈՒՅԹՅԵՐ**, հատուկ ֆիզիկաերկր. երևույթներ, որոնք դիտվում են ապարների և հողաբուսական շերտի, ինչպես նաև ջրակուտակների, ջրոսքերի ու ճահիճների սառչման և հալման հետևանքով:

**КРИОСФЕРА** — **ՍԱՌՑՈՒՐՑ (ԿՐԻՈՊՍՏՅԱՆ)**, ջրադիմամիկ տեսակետից երկրակեղևի հատուկ ոլորտ կամ պատյան, որն ընդգրկում է քարապատյանի, ջրոլորտի և մթնոլորտի որոշակի մասեր: Ս-ի տարրերակիչ հատկանիշ է հանդիսանում բացասական ջերմաստիճանը:

**КРИСТАЛЛИЗАЦИОННАЯ ВОДА** — **ԲՅՈՒՐԵՎԱՑՄԱՆ ՋՈՒՐ**, միներալների բյուրեղային ցանցում առանձին մոլեկուլների կամ խմբերի ձևով գտնվող ջուր: Այն միներալներից անջատվում է մինչև 250—300° Ց ջերմության պայմաններում, ողնեկցվում է ջերմության կլանմամբ և միներալի բյուրեղային ցանցի քայքայումով կամ վերակառուցումով: Բ. ջ. պարունակող միներալներից են սոդան՝  $\text{Na}_2\text{CO}_3 \cdot 10\text{H}_2\text{O}$  (ըստ կշռի պարունակում է 63 % ջուր), միրաբիլիտը՝  $\text{Na}_2\text{SO}_4 \cdot 10\text{H}_2\text{O}$  (55,9 %), բիշոֆիտը՝  $\text{MgCl}_2 \cdot 6\text{H}_2\text{O}$  (58,2 %), գիպսը՝  $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$  (20,9 %) ևն: Ջերմակլանման էֆեկտը, որը դիտվում է ջերմային անալիզների ժամանակ տաքացման կորի վրա, հանդիսանում է ուսումնասիրվող միներալի բնույթի ճանաչման ցուցանիշ:

**КРИСТАЛЛИЗАЦИОННЫЕ СВЯЗИ** — **ԲՅՈՒՐԵՎԱՑՄԱՆ ԿԱՊԵՐ**, բյուրեղային նյութի տարրերի միջև գործող մեխ. կապեր:

**КРИСТАЛЛОГИДРАТЫ** — **ԲՅՈՒՐԵՎԱՀԻՂՐԱՏՆԵՐ**, բյուրեղային միացություններ, որոնց կազմի մեջ ջրածինն ու թթվածինը հանդես են գալիս ջրի մոլեկուլների ձևով: Բ. ստացվում են բազմաթիվ նյութերի ջրային լուծույթներից՝ բյու-

րեղացման ժամանակ: Յուրաքանչյուր բյուրեղաֆիդրատ կաշուն է որոշակի ստաճ-  
գակակնության դեպքում: Ինչքան բարձր է Բ-ի ստաջացման ջերմությունը, այնքան  
կրանց մեջ շուրջ քիչ է:

КРИТЕРИИ НЕФТЕГАЗОНОСНОСТИ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ — ՆԱԿ-  
ԹԱԳԱԶԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻԾՆԵՐ, չափանիշներ,  
որոնք բնութագրում են նավթային ջրերի և ածխաջրածինների ստաջացման,  
նավթագազաբեր ավազանների երկրք. զարգացման պատմության ընթացքում  
նավթի ու գազի կուտակների ձևավորման և գոյության պայմանները: Ն. Չ. չ.  
որոշվում են նստվածքների կուտակման և թաղման բնույթով, երկրաքիմ. իրա-  
դրությամբ, ֆիզքիմ., ջերմադինամիկ և այլ գործընթացներով, որոնք ընթացել են քա-  
րապատյանում: Ն. Չ. չ. ստորաբաժանվում են. ա) համընդհանուր (ոեգիոնալ) և  
տեղական, բ) ուղղակի և անուղղակի: Դրական Ն. Չ. չ. են հանդիսանում. 1) ավա-  
զանում համընդհանուր ջրամբժի, իսկ նրա տակ՝ դժվար ջրափոխանակման (կամ  
անջարժ) ոեժիմի լավ կուտակիչների առկայությունը, 2) ջրաերկրք. խտորումների  
(գազաջրաքիմ., ջրադինամիկ, երկրաջերմային ևն) առկայությունը, ինչպես նաև  
նավթագազային երևակումների և ցեխային հրաբուխների աղբյուրների էլքերը,  
3) քլոր-կալցիումային տիպի աղաջրերը, սուլֆատազուրկ (կամ չհագեցած) ջրա-  
կարրոնատ-նատրիումային տիպի աղի ջրերը, որոնք հարուստ են Br, J, NH<sub>4</sub>, B,  
Ba, նավթենային թթուներով, ֆենոլներով և ունեն ցածր քլոր-բրոմային գործակից,  
4) ազատ կամ լուծված ածխաջրածնային գազեր, ինչպես նաև բարձր ստաճակակնո-  
թյան ածխաջրատներ, H<sub>2</sub>S և He պարունակող այլ գազերի առկայությունը, 5) ջրերի  
մանրէազրկվածությունը կամ սուլֆատվերականզուղ և ածխաջրատներ օգտագոր-  
ծող մանրէների առկայությունը:

КРИТЕРИИ ПРОСАДОЧНОСТИ — ՆՍՍՍԱՆ ՉԱՓԱՆԻԾՆԵՐ, չափանիշներ (հա-  
տիկաչափական ու միներալային կազմ, կառուցվածք, կազմվածք ևն), որոնց միջո-  
ցով կարելի է կանխատեսել փոխք ապարների նստումը:

КРИТИЧЕСКАЯ ГЛУБИНА ДО УРОВНЯ ГРУНТОВЫХ ВОД — ԳՐՈՒԿՏԱ-  
ՅԻՆ ԶՐԵՐԻ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ, նվազագույն սահմա-  
նային խորություն, որից բարձր մակարդակի դեպքում հանքայնացված գրունտա-  
յին ջրերը մազանթային բարձրացման և գոյորշիացման հետևանքով կարող են  
դառնալ հողերի աղուտացման պատճառ:

КРИТИЧЕСКАЯ ПОРИСТОСТЬ — ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, չկապակցված ապարի ծակոտկենության սահմանային արժեք, որը տեղաշարժային  
ձևափախտումների գործընթացում չի փոփոխվում:


КРИТИЧЕСКАЯ СКОРОСТЬ — ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, սահմանա-  
նային արագություն, որի դեպքում հեղուկի լամինար շարժումը անցնում է տոր-  
բուլենտի: Կ. ա. ուղիղ համեմատական է կինեմատիկ մածուցիկության գործակցին  
ու Ռեյնոլդսի թվին և հավասարձ համեմատական է հիդրավիլիկ շտապիլոին (տե՛ս  
Гидравлический радиус):

КРИТИЧЕСКАЯ ТЕМПЕРАТУРА — ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ (ՋԵՐ-

ՄԱՍՏԻՃԱՆ), յուրաքանչյուր քիմ. նյութի համար որոշակի ջերմաստիճան, որի դեպքում տեղի է ունենում գազանման և հեղուկ ֆազերի հատկությունների լրիվ հավասարեցում: Դրանից բարձր ջերմության և ցանկացած ճնշման պայմաններում հնարավոր չի գազը վերածել հեղուկի: Քանի որ յուրաքանչյուր նյութ ունի իրեն առանձնահատուկ  $\gamma$ . շ., ապա այն հանդիսանում է առավել բնորոշ կոնստանտներից: Ջրի  $\gamma$ . շ. հավասար է  $+374,2^\circ \text{ Ց}$ :

КРИТИЧЕСКИЙ НАПОРНЫЙ ГРАДИЕНТ — ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ ԳՐԱԴԻԵՆՏ, ճնշումնային գրադիենտ, որի դեպքում ծծանցվող ջրերը ջրադիմամիկ ճնշման ազդեցության տակ դուրս են մղում (տեղահանում են) գրունտի մասնիկները և հանգեցնում են սուֆոզիայի (սո՛ս Կսփֆոզյա):

КРИТИЧЕСКОЕ ДАВЛЕНИЕ — ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԾՆՇՈՒՄ, ճնշում, որի դեպքում տեղի է ունենում նյութի հեղուկ և գազային փուլերի լրիվ հավասարակշռություն: Թվապես  $\gamma$ . ճ. հավասար է գերհագեցած գոլորշու ճնշման առավելագույն արժեքին: Յուրաքանչյուր նյութ ունի իր  $\gamma$ . ճ., որը կրիտիկական ջերմաստիճանի հետ մեկտեղ հանդիսանում է նրա բնորոշ կոնստանտներից:




Նկ. 10. Մորի շրջան  
 ա) ավազային գրունտի համար,  
 բ) կավային գրունտի համար:

**КРОВЛЯ — ԱՌԱՍՏԱՂ**, երկրաբանությունում՝ ապար, որն անմիջապես ծածկում է շերտը, երակը կամ հանքամարմինը: Ջրաերկրաբանությունում այն օգտագործվում է ջրամերժ առաստաղ (водоупорная кровля) բառակապակցությամբ, որը նշանակում է ջրատար ապարները վերևից ծածկված են ջրամերժ ապարներով:

**КРОТОВЫЙ ДРЕНАЖ — ԽՆՈՒՐՂԱՅԻՆ ՑԱՄԱԲՈՒՐՂ**, գերխոնավ հողերի ցամաքեցման (չորացման) եղանակ, որն իրագործվում է գուրթանի խոփերին անբացրած հատուկ սկավառակներով մինչև 0,6—0,8 մ խորության վրա 5—20 սմ տրամագծով հորիզոնական անցքեր բացելու միջոցով: Վերջինները նման են խլուրդի անցքերի, որի համար ցամաքուրդը կոչվում է խլուրդային:

**КРУГ МОРА — ՄՈՐԻ ԾՐՋԱՆ**, գրաֆիկ կառուցում (նկ. 10), որի միջոցով որոշվում է առածգական մարմնի (գրունտի) լարված վիճակը: Գրունտների մեխանիկայում Մ. 2. կառուցվում է գրունտների եռաուսանցք փորձարկման ժամանակ: Գրունտի վրա գործադրված նորմալ լարման մեծությունը նշվում է արացիաների առանցքի վրա, իսկ շոշափող լարման մեծությունը՝ օրդինատների առանցքի վրա, և գլխավոր լարումների տարբերությունը ( $\sigma_1 - \sigma_3$ ) ընդունելով որպես տրամագծի չափ, արացիաների առանցքի վրա կառուցվում է շրջան (կիսաշրջան): Հոմանիշ՝ լարումների շրջանաձև գրաֆիկ:

**КРУГОВОРОТ ВОДЫ (ВЛАГООБОРОТ) В ПРИРОДЕ — ԶՐԻ (ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ) ԾՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**, երկրագնդի վրա ջրի (խոնավության) անընդմեջ փակ շրջանառության գործընթաց, որը պայմանավորված է արեգակից ստացվող էներգիայով և ճանրության ուժի ազդեցությամբ: Ինչպես ցույց է



Նկ. 11. Բնության մեջ ջրերի շրջանառության սխեմա:

տրված նկ. 11-ում, ջուրը գոլորշիանում է Համաշխարհային օվկիանոսի և Ցամաքի մակերևույթից, ջրային գոլորշիները օդային հոսանքներով տեղափոխվում են, խտանում և տեղումների ձևով վերադառնում օվկիանոս (փոքր շրջանառություն), կամ թափվում Ցամաքի վրա (մեծ շրջանառություն), որտեղից նրանց մի մասը կազմում է մակերևույթային ու ստ. հոսքերը, իսկ վերջինները գետերով ու ստ. ճանապարհով վերադառնում են դեպի օվկիանոս: Բացի դրանից, տարբերում են նաև ներքին կամ ներքամաքային շրջանառություն, երբ Ցամաքից գոլորշիացող ջուրը տեղումների ձևով վերստին թափվում է Ցամաքի վրա:

КРУГОВОЙ ГРАФИК НАПРЯЖЕНИИ — ԼԱՐՈՒՄՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԶԵՎ ԳՐԱՅԻԿ, տե՛ս Կруг Мора:

КРУТИЗНА СКЛОНА (ОТКОСА) — ԼԱՆՋԻ (ԱՐՀԵՍԱՍԿԱՆ ԹԵԲՈՒԹՅԱՆ) ԶԱՌԻԹԱՓՈՒԹՅՈՒՆ, 1. Լանջի (թեքության) բարձրության հարաբերությունը նրա հիմքին, 2. Լանջի (թեքության) կազմած անկյունը հորիզոնական հարթության նկատմամբ:


КСЕРОФИТЫ — ՉՈՐԱՍԵՐՆԵՐ (ՔՍԵՐՈՖԻՏԵՐ), չորադիմացկուն բույսեր, որոնք աճում են անբավարար խոնավության պայմաններում: 2-ի մեծ մասին բնորոշ են նեղ ու փոքր տերևները, ցողունների և տերևների վրա բաց գույնի մազմզուկների ու մոմի փառի առկայությունը: 2. աերոլուսանկարների վրա արտացոլվում են բաց տոնայությունը, որն օգտագործվում է որպես ջրաերկր. ու հողագիտական ցուցիչ (ինդիկատոր):

КУПОЛ ВОДЯНОЙ — ԶՐԱՅԻՆ ԳՄԲԹ, ծովի մակերևույթին ակնթարթորեն դիտվող կամարաձև գմբեթ, որն առաջանում է ստ. հրաբխի վերևում (մինչև գագեթի, ումբեթի ու մոխրի պոթվումը): Սկզբում ընդարձակվող գագեթը բարձրացնում են ջուրը գմբեթի ձևով (կլորավուն գագաթով), ինչպես նաև հատած կոնի կամ նույնիսկ գլանի ձևով: 1928 թ. Ծտեյը դիտել է նման ջրային գմբեթ՝ 28 մ բարձրությամբ և հիմքում 100—200 մ լայնությամբ:

КУСТОВАЯ ОТКАЧКА — ՓՆԶԱՅԻՆ ԱՐՏԱՄՂՈՒՄ, ջրի արտամղումը փորձային (կենտրոնական) հորատանցքից, որի դեպքում մակարդակի դիտումները տարվում են ինչպես կենտրոնական, այնպես էլ դիտողական հորատանցքերում: Եթե արտամղումը կատարվում է 2 կամ ավելի հորատանցքերից, ապա այն կոչվում է խմբային (групповая откачка):

КЮБЕТ — ԱԿՈՍ (ԱՌՈՒ, ԽՐԱՄԱՌՈՒ), ճանապարհի պատասխին զուգահեռ ջրհեռացման ակոս: Հաճախ նույն նպատակով ակոսներ են բացվում նաև ստ. լեռնային փորվածքներում:

КЮРИ — ԿՅՈՒՐԻ, ռադիոակտիվ տարրերի (իզոտոպների) ռադիոակտիվության չափման միավոր: 1 կյուրին համապատասխանում է  $3,700 \cdot 10^{10}$  ատոմային տրոհմանը 1 վայրկյանում (1 գր ռադիումի ռադիոակտիվությանը): Հաճախ օգտա-



Նկ. 12. Քյարիզի ընդերկազմակի կտրվածքի սխեմա: 1—ջրամերժ կավեր, 2—ջրատար ավազներ:

գործում են ավելի փոքր միավորներ՝ միլիկյուրի (10<sup>-3</sup> կյուրի), միկրակյուրի (10<sup>-6</sup> կյուրի), միլիմիկրակյուրի (10<sup>-9</sup> կյուրի) ևն: Չափման այլ միավորներից են՝ էմանը (0,1 միլիմիկրակյուրի) և ներկայումս հնացած Մախեի միավորը (3,64 էման):

КЯРИЗ (КЯХРИЗ, КЯГРИЗ) — ՔՅԱՌԻԶ (ԶՐՀԱՎԱՔ ԳԵՏՆՈՒՂԻ), ստ. հորիզոնական գետնուղի՝ ուղղված գրունտային ջրերի հոսանքով դեպի վերև, որը փորվում է աղ ջրերը բռնելու և ինքնահոսով երկրի մակերևույթ դուրս բերելու նպատակով (նկ. 12): Բացի էլքի անցքից (բովանցքից), Ք. երկրի մակերևույթի հետ հաղորդակցվում է 5—50 մ հեռավորության վրա շարքով դասավորված հորերի միջոցով, որոնք փորվում են նախօրոք, ապա սրանց խորշերը միացվում են գետնուղով, ըստ որում պատրաստի հորերը ծառայում են ապարը վեր բարձրացնելու և օդափոխման նպատակին: Ք. համարվում է հնագույն ջրատեխ. կառույցներից. դեռևս հին Բաբելոնի, Մերձավոր ու Միջին Արևելքի, Անդրկովկասի ու Միջին Ասիայի նախալեռնային գոտիներում 2—3 հազարամյակ ստաջ կառուցվել են Բ-ներ, որոնք օգտագործվել են խմելու և ոռոգման ջուր ստանալու նպատակով:

## — Л —

ЛАВИНА — ՀՈՒՍԻՆ (ԶՆՀՈՍՔ), ձյան զանգվածի գրավիտացիոն շարժում, որը<sup>2</sup> հոսք է կամ հորձանուտի ձևով կատարվում է լեռների զառիթափ լանջերին և հաճախ հսկայական ավերածություններ է պատճառում:

ЛАМИНАРНОЕ ТЕЧЕНИЕ — ԼԱՄԻՆԱՐ ՇԱՐԺՈՒՄ, հեղուկի կամ գազի շարժում՝ բարակ շերտերի կամ զուգահեռ շիթերի տեսքով, որոնք իրար չեն խառնվում: Լ. շ. տեղի է ունենում մինչև որոշակի կրիտիկական արագություն (տե՛ս Критическая скорость), որը գերազանցելու դեպքում այն անցնում է տուրբուլենտ (մրկկային) շարժման (տե՛ս Турбулентное течение):

ЛЕДНИК — ՍԱՌՅԱԴԱՇՏ, մթնոլորտային կարծր տեղումներից առաջացած բյուրեղային կամ հատիկային սառցի բնական զանգված, որով պատվում են հարթավայրային ցուրտ գոտիների և լեռնային երկրամասերի ձյան զծից բարձր զգալի տարածքներ: Ա-երը գոյատևում են բազմաթիվ տարիներ, սակայն սեզոնային և տարեկան ջերմային տատանումների հետևանքով նրանք զգալի ձևափոխություններ են կրում՝ ցուրտ եղանակին ընդարձակվելով, տաք եղանակին նահանջելով: Լանջերի վրա, անգամ նրանց աննշան թեքության դեպքում, Ա-երը զգալի շարժունակություն են դրսևորում և էսպես ձևափոխում են տեղանքի ռելիեֆը:

ЛЕНИВЫЙ ТЕРМОМЕТР — ԾՈՒՅԼ ԶԵՐՄԱԶԱՓ, թույլ ջերմահաղորդիչով (մեղրամոմ, ուետին) սարքավորված ջերմաչափ, որը դանդաղորեն (ծուլորեն) է ընկալում շրջապատող միջավայրի ջերմությունը և երկար ժամանակ պահում է նույն ցուցմունքը: Ծ. շ. կիրառվում է հորատանցքերում և այլ փորվածքներում ապարների ու ստ. ջրերի ջերմությունը որոշելու համար:

ЛЕС ПЬЯНЫЙ И ДЕРЕВЬЯ САБЛЕВИДНЫЕ — ՀԱՐԲԱԾ ԱՆՏԱՌ ԵՎ ԹՐԱԶԵՎ ԾՈՒԾԻՐ, սողանքային տեղամասերում տարածված անկանոն ծառեր (անտառ), որոնց մեջ կարելի է տարբերել 2 տեսակ. 1) տարբեր ուղղություններով թեքված կամ պտուկած բնեղով ծառատեսակ (հիշեցնում է հարթած անտառ) — առաջանում է արագ շարժվող (տեղ-տեղ՝ տարբեր արագությամբ) սողանքային

մարմնի վրա, 2) թրածն (դաշտյնածն) ճկված բներով ծառատեսակ — ստաշանում է դանդաղ շարժվող սողանքային մարմնի վրա, երբ սողանքի դանդաղ շարժումը համակշռվում է բճին ուղղաձիգ դիրք տալու բույսերի ձգտումով: Հ. ա. և թ. ծ. հանդիսանում են սողանքային մարմնի ակալություն և նրա շարժման ակտիվության կարևոր ցուցանիշներ:

**ЛЕЩНАЯ ЗОНА** — ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶՈՆԱ, չափավոր կլիմայական գոտու անտառների զոնա, որը գտնվում է անտառատունգրայի և անտառատափաստանի միջև: Ա. գ. գլխավորապես տարածված է հյուսիսային կիսագնդում և հսկայական տարածքներ է զբաղեցնում Ասիայում, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Հարավային կիսագնդում այն համատարած չի, քանի որ մայր ցամաքը այստեղ Հարավային բևեռից բավական հեռու է գտնվում: Ա. գ. բնությանգրվում է տաք ամառով, ցուրտ ձմեռով, մթնոլորտային տեղումների բավարար քանակով (300—600 մմ), մոխրակերպ և ճահճային հողերով:

**ЛЕЧЕБНЫЕ ВОДЫ** — ԲՈՒԺԻՉ ԶՐԵՐ, ստ. ջրեր, որոնք բնոհանուր հանքայնացման, իոնային կազմի, գազերի, ռադիոակտիվ տարրերի պարունակության, միկրոբադադրիչների ակալության, թթվայնության ու հիմնայնության, ինչպես նաև բարձր ջերմության շնորհիվ մարդու օրգանիզմի վրա բարերար ազդեցություն են գործում: Հանախ որպես Բ. ջ-ի հումանիչ օգտագործում են «Հանքային ջրեր» տերմինը (տե՛ս Минеральные воды), սակայն երբեմն բուժիչ են լինում նաև ոչ հանքային ջրերը:

**ЛЕЧЕБНЫЕ ГРЯЗИ** — ԲՈՒԺԻՉ ՑԵՆՆԵՐ, տե՛ս Минеральные грязи:

**ЛЕД ПОДЗЕМНЫЙ** — ՍՏՈՐԵԿՐՅԱ ՍԱՌՈՒՅՅ, սառած ապարների (հողագրունտների) հաստվածքում հանդիպող սառցի բոլոր տարատեսակները: Ա. ս. ըստ ծագումնային հատկանիշների ստորաբաժանվում են կառուցվածքային, կրկնվող-երակային և թաղված տարբերակների: Բազմամյա սառածության գոտում Ա. ս. կարող է դիտվել որպես քարապատյանը կազմող մոնոմիներալ ապար կամ բազմաֆիներալ ապարի բաղադրիչ: Հումանիչ՝ ինտերստիցիալ սառույց:

**ЛЕСС** — ԼՅՈՍ, համասեռ նուրբ հատիկավոր, փոխր ու շերտացությունից զուրկ ապար, որը հիմնականում կազմված է քվարցի, երկրորդային կավային միներալների և ածխաթթվային կալցիումի մանրագույն հատիկներից (քաղաղորակազմը ներկայացվում է հետևյալ կերպ. քվարց և սիլիկատներ՝ 27—90 %, կավաճողեր՝ 4—20 %, ածխաթթվային կալցիում՝ 6 և ավելի %): Հատիկաչափական տեսակետից Լ-ի կազմը ներկայացվում է հետևյալ կերպ. կավային մասնիկներ ( $d < 0,002$  մմ)՝ 5—25 %, փոշային մասնիկներ ( $d = 0,002—0,05$ )՝ 30—65 %, ավազային մանր ու նուրբ մասնիկներ ( $d = 0,05—0,25$ )՝ 5—15 %, ավազային և ավելի խոշոր մասնիկներ ( $d > 0,25$ )՝  $< 5$  %: Տիպիկ Լ-երին բնորոշ սառնձնահատկություններից են. ա) փոշային հատիկաչափական կազմը, բ) անգեմ աչքով դիտվող ծակոտկենությունը, գ) ուղղաձիգ նուրբ մազանոթների ակալությունը (հանդիսանում են բուսամնացորդների քայքայման արդյունք), դ) գերնստեցումը (խոնավացման դեպքում նրա ծավալի ինքնակամ փոքրացումը), ե) հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով նրա անհամատեամկությունը (անիզոտրոպությունը): Լ-երը կարող են սառաջացնել սյունածն անջատումներ և մի քանի մ բարձրության ուղղաձիգ դարափեր: Գոյություն ունեն Լ-երի ծագման մի քանի տեսություններ՝ էոլային (քամու),

ալյուվիալ (գետաբերուկային), դելյուվիալ, պրոլյուվիալ (հեղեղաբերուկային) և հոդաուաջացման (չոր տափաստանային կլիմայական պայմաններում), որոնցից ոչ մեկը իսպառ չի բացատրում նրանց ստանձնահատկությունները: Բոլոր այն ապարները, որոնք ձևաբանորեն հիշեցնում են Լ-երին, սակայն չեն համապատասխանում վերոհիշյալ ստանձնահատկություններին, կոչվում են լյուսանման ապարներ (լյուսանման ալվաակալվեր ևն):

ЛЕССОВИДНАЯ ПОРОДА — ԼՅՈՍԱՆՄԱՆ ԱՊԱՐ, լյուսերի որոշ (ոչ բոլոր) ստանձնահատկություններով օժտված ապար (օր., լյուսանման ալվաակալվ):

ЛЕССОВИДНЫЙ «КАРСТ» — ԼՅՈՍԱՆՄԱՆ «ԿԱՐՍՏ», լյուսային ապարներում համեմատաբար խոշոր անցքեր ու դատարկություններ, որոնք առաջացել են մեխ., մասամբ նաև քիմ. սուֆոզիայի հետևանքով:

ЛИЗИМЕТР — ԼԻԶԻՄԵՏՐ, սարք, որի օգնությամբ չափվում են հողաբուսական ծածկի միջով ներթափանցող և գոլորշիացող ջրաքանակները: Ներկայումս «Լ.» տերմինին տրվում է ավելի լայն բովանդակություն, դրա տակ հասկանալով ցանկացած սարք (սարքեր), որի միջոցով չափվում են օդահագեցման զոնայի ջրային հաշվեկշիռի տարրերը և ուսումնասիրվում է զոնայի ջրաջերմային ռեժիմը:

ЛИКВИДАЦИЯ СКВАЖИНЫ — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԼՈՒԾԱՐՔ (ՎԵՐԱՑՈՒՄ), հորատանցքի օգտագործումից հետո կատարվող լուծարքային աշխատանքներ, որոնք հանգում են հետևյալին. 1) ամրակապման խողովակների դուրս բաշում, 2) հորատանցքի ցեմենտացում և, 3) հորատանցքի տեղում հեմանիշի (հեմանշա-նի) տեղակայում: Հ. լ. նպատակն է՝ բացառել հորատանցքում ջրերի շրջանառությունը, խնայել մետաղը, ապահովել անվտանգության և բնապահպանման մի շարք հարցեր:

ЛИМАННОЕ ОРОШЕНИЕ — ԼԻՄԱՆԱՅԻՆ ՈՌՈԳՈՒՄ, հողի գարնանային խոնավության պաշարը ավելացնելու նպատակով ձնհալքի ջրերով հողատարածքի միակգամյա ջրակալում: Ջրակալվող հողակտորներում (լիմաններում) ջուրը պահվում է մինչև 1 մ բարձրության հողապատնեշների միջոցով: Հողը 1—2 մ խորությամբ բավարար չափով խոնավացնելուց հետո ջուրը բաց է թողնվում ներքև տեղադրված հաջորդ լիմանի վրա: Նախկին ԽՍՀՄ-ում Լ. ո. գլխավորապես կիրառվում էր եվրոպական մասի հարավ-արևելյան շրջաններում՝ բանջարաբուստանային կուլտուրաների և խոտաբույսերի ոռոգման համար:

ЛИМНИГРАФ — ԼԻՄՆԻԳՐԱՖ (ԱՎՏՈՄԱՏ ՄԱԿԱՐԿԱԿԱԶԱՓ), մակերեվության ջրակուտակներում ու ջրհոսքերում, հորատանցքերում, ջրհորերում և այլ փորվածքներում ջրի մակարդակի տատանումները գրառող ինքնագիր սարք:

ЛИНЕЙНОЕ УПЛОТНЕНИЕ — ԳԾԱՅԻՆ ԽՏԱՑՈՒՄ, գրունտի խտացում, որը կատարվում է աստիճանաբար ավելացող բեռնվածքից գծային (ուղիղ) կախվածությամբ: Գրունտի Գ. խ. տեղի է ունենում մինչև բեռնվածքի որոշակի մեծությունը, որից հետո խտացման կախվածությունն արտահայտվում է կորագծով: Հիմնատակներում գրունտները սովորաբար ենթարկվում են Գ. խ.-ի, որի համար

լարրատոր պայմաններում նրանք փորձարկվում են միայն գծային կախվածության ասիմաններում:

ЛИНЕЙНЫЙ ЗАКОН ФИЛЬТРАЦИИ — ԾՄԱՆՑՄԱՆ ԳԾԱՑԻՆ ՕՐԵՆՔ, տե՛ս Закон Дарси:

ЛИНЕЙНЫЙ (ОДНОМЕРНЫЙ) ФИЛЬТРАЦИОННЫЙ ПОТОК — ԳԾԱՑԻՆ (ՄԻԱԶԱՓ) ԾՄԱՆՑՄԱՆ ՀՈՍՔ, ծակուտկեն միջավայրում հեղուկի կամ գազի շարժում, որը կատարվում է միմյանց զուգահեռ ուղիղ հետագծերով: Հոսքի լայնակի կտրվածքի բոլոր կետերում ծծանցման արագությունները ոչ միայն զուգահեռ են, այլև միմյանց հավասար:

ЛИНЗЫ ПРЭСНЫХ ПОДЗЕМНЫХ ВОД — ՔԱՂՏՐԱՀԱՍ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՈՍՊԵՅԱԿՆԵՐ, քաղցրահամ ստ. ջրերի ոսպնյակաձև տեղադրումը աղի ջրերի վրա, որոնք բարձր խտության պատճառով քաղցրահամ ջրերի հետ չեն միախառնվում, այլ յուրատեսակ ջրամբժ ճիւղ են ծառայում: Քաղցրահամ ջրերի «լողացող» ոսպնյակները սովորաբար տարածված են անապատների, ծովափնյա ցամաքաեզակների ու կղզյակների ավազուտներում:

ЛИНИИ ТОКА — ՀՈՍԱՆՔԻ ԳԾԵՐ, ջրադինամիկայում՝ ջրի մասնիկների շարժման հետագծեր, որոնք միշտ ուղղահայաց են հոսքի էկվիպոտենցիալներին, այսինքն գրունտային ջրերի դեպքում՝ հիդրոիզոգծերին, իսկ ճնշումնային ջրերի դեպքում՝ պիեզոիզոգծերին:

ЛИНИЯ ИСТОЧНИКОВ — ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳԻԾ, գծային դասավորություն ունեցող աղբյուրների շարք: Ա. գ. սովորաբար համընկնում է խոշոր տեկտ. եպիտումների կամ ապարների խոշոր շերտախմբերի կոնտակտների հետ, որոնք կարող են ձգվել տասնյակ կմ:

ЛИНИЯ СВОБОДНОЙ ВОДНОЙ ПОВЕРХНОСТИ — ԱՁԱՏ ՋՐԱՑԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԳԻԾ, ջրաերկրք. կտրվածքում չոր և ջրհագեցած գրունտի բաժանման գիծ:

ЛИПКОСТЬ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԿՊՁՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ռտար մարմիններին գրունտի կպչելու հատկություն: Այն հատուկ է խոնավ վիճակում գտնվող կավային գրունտներին, ընդ որում նրանց կաշունությունը մեծանում է մինչև խոնավության որոշակի ասիմանը: Բացի խոնավությունից, Գ. կ. կախված է նաև հատիկաչափական և միներալային կազմերից, ինչպես նաև կլանված հիմքերի պարունակությունից: Կաշունության մեծությունը չափվում է լարումով ( $կգ/սմ^2$ ), որն անհրաժեշտ է օտար մարմինը գրունտից պոկելու համար: Գ. կ. օգտագործվում է տեղանքի անցանելիությունը և ճանապարհների պատաստների համար գրունտների պիտանիությունը գնահատելու, ինչպես նաև շին. ու գյուղատնտ. մեքենաներով նրանց մշակելիությունը որոշելու համար:

ЛИТОГЕНЕЗ — ԲԱՐԱԳՈՅԱՑՈՒՄ (ԼԻԹՈԳԵՆԵԶ), բնական գործընթացների հա-

մակցություն, որի արդյունքում առաջացել են մտավածքային ապարները և որը պայմանավորում է նրանց ժամանակակից վիճակը:

**ЛИТОКЛАЗЫ** — ԼԻԹՈՎԿԼԱԶՆԵՐ, երկրակեղևի խզման խոշոր ճեղքեր (խզումներ): Լ. ստորաբաժանվում են դիակլիզների և պարակլիզների: Դիակլիզներ են կոչվում այն խզումները, որոնք ապարների տեղաշարժերով չեն ուղեկցվում, իսկ պարակլիզները, հակառակը, ուղեկցվում են ցալտուն արտահայտված տեղաշարժերով:

**ЛИТОЛОГИЯ** — ՔՆՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ (ԼԻԹՈԼՈԳԻԱ), գիտություն, որն ուսումնասիրում է մտավածքային ապարների (ներառյալ հանքաքարերի) ծագումը, կազմը, կառուցվածքն ու կազմվածքը:

**ЛОВЧИЕ КАНАВЫ** — ՈՐՄԻՉ ԱՌՎԱԿՆԵՐ, հորիզոնական ոչ խորը փորվածքներ, որոնք գերխոնավ կամ ճահճային տարածքներում փորվում են գրունտային ջրերի ելքերի տեղերում այդ ջրերը որսալու համար: Ո. ա. հանդիսանում են տարածքի չորացման սխեմայի տարրերից. նրանցով հավաքված ջրերը լցվում են չորացնող մսյր սովի մեջ:

**ЛУЧЕВОЙ ВОДОЗАБОР** — ՇԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՋՐՀԱՎԱՔ, ջրհավաք կառույց, որը բաղկացած է ջրհան հորանից և նրանից ճառագայթաձև տրված հորիզոնական բամիչներից:

**ЛЬДИСТОСТЬ МЕРЗЛЫХ ПОЧВ (ГРУНТОВ)** — ԱՆՈԱԾ ՀՈՂԵՐԻ (ԳՐՈՒՆՆԵՆԵՐԻ) ԱՍՈՑԻԱՍՈՒՌՈՒԹՅՈՒՆ, հողերում (գրունտներում) սառցի պարունակություն, որը բնութագրում է նրանց սառածության աստիճանը:

— М —

**МАГАЗИНИРОВАНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀԵՏԱՎՈՐՈՒՄ (ԿՈՒՏԱՎՈՒՄ, ԱՄՔԱՐՈՒՄ), տե՛ս Փաբրիկայնա թոճեմնա ջո:

**МАГИСТРАЛЬНАЯ КАНАВА ДРЕНАЖНАЯ** — ՑԱՄՆՔՈՒՐԳԱՅԻՆ ՄԱՅՐ (ԳԼԽԱՎՈՐ) ԱՐՈՒՒ, գերխոնավ և ճահճուտ հողերի ցածաբորոդային ցանցի գլխավոր հորիզոնական առու, որը փորվում է տեղանքի ցածրադիր մասում և իր մեջ է ընդունում մյուս բոլոր փորվածքների հավաքած ջրերը: Մաշր սովի պատերի փրկումը բացառելու նպատակով այն ամրակապվում կամ երեսապատվում է և պարբերաբար մաքրվում՝ տղմակալումն ու բուսապատումը կանխելու նպատակով:

**МАКРОКОМПОНЕНТЫ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ПОДЗЕМНЫХ ВОД** — ԲՆԱՎԱՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՔԱՂԱԴՐԻՉՆԵՐ, ջրում լուծված աճորգ. նյութերի իոններ ու մոլեկուլներ, որոնք բնական ջրերում հանդիպում են ալեի հաճախ ու համեմատաբար մեծ քանակությումներով և այդ պատճառով կոչվում են նաև գլխավոր իոններ: Ըստ Օ. Ա. Ալլոկիճի (1948), Բ. Չ. Բ. Բ. մ. կազմում են ջրային լուծույթի բաղադրության մոտ 99,99% և ներկայացված են  $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$  կատիոններով ու  $\text{Cl}^-$ ,  $\text{SO}_4^{2-}$ ,  $\text{HCO}_3^-$ ,  $\text{CO}_3^{2-}$  անիոններով: Առան-

ձին դեպքերում ստ. ջրերում, զգալի քանակությամբ հանդիպում են  $Fe^{2+}$ ,  $Al^{3+}$ ,  $HSiO_3$ , իսկ ծովաջրերում՝  $F$  և  $Sr$ :

**МАКРОПОРИСТОСТЬ** — ՄԱԿՐՈԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, անգեմ աչքով դիտվող խոշոր ծակոտիներ, որոնք կազմում են ապարի ծակոտիների ընդհանուր ծավալի 15—60 %: Մ. բնորոշ է լյուսերին ու լյուսանման ապարներին և էապես բարձրացնում է նրանց ջրաթափանցելիությունն ու սեղմելիությունը: Ապարների Մ. գնահատելու համար օգտագործվում է  $\Sigma_{\sigma}$  գործակիցը.  $\Sigma_{\sigma} = \Sigma_1 - \Sigma_2$ , որտեղ՝  $\Sigma_1$  -ը ապարի բնական ծակոտկենության գործակիցն է, իսկ  $\Sigma_2$  -ը նույն գործակիցն է՝ ապարի խոնավացումից հետո:

**МАКСИМАЛЬНАЯ ВОДОУДЕРЖИВАЮЩАЯ СПОСОБНОСТЬ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՋՐԱՊԱՀՄԱՆ ԸՆԴՈՒՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ըստ Օ. Մեյնցերի, ապարի չոր կշռի նկատմամբ ջրի առավելագույն քանակը (%-ներով), որը կարող է պահվել ապարի կողմից: Անորոշ տերմին, մոտավորապես համապատասխանում է «խոնավատարություն» հասկացությանը:

**МАКСИМАЛЬНАЯ ГИГРОСКОПИЧНОСТЬ (ГИГРОСКОПИЧЕСКАЯ ВЛАГОЕМКОСТЬ)** — ԱՊԱՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՆԵՐՇՈՒԾ ԽՈՆԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ջրային գոլորշիների առավելագույն քանակ, որն ապարը ընդունակ է կլանել մըթնոլորտից: Որոշվում է կշռային եղանակով՝ խոնավության կշռի և բացարձակ չոր ապարի կշռի հարաբերությամբ (արտահայտվում է %-ներով կամ միավորի մասերով):

**МАКСИМАЛЬНАЯ МОЛЕКУЛЯРНАЯ ВЛАГОЕМКОСТЬ ГРУНТА** — ԳՐՈՒՆՏԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ներծած և թաղանթային ջրերի առավելագույն քանակ, որը պահվում է գրունտի մասնիկներով: Որոշվում է հետևյալ հարաբերություններով. 1) բացարձակ չոր գրունտի կշռի նկատմամբ ( $W_m$ ), 2) գրունտի ողջ ծավալի նկատմամբ ( $n_m$ ), 3) գրունտի հատիկների ծավալի նկատմամբ ( $E_m$ ), 4) ծակոտիների ծավալի նկատմամբ ( $K_m$ ): Ասելի հաճախ արտահայտվում է կշռային միավորներով՝ խոնավության կշռի և բացարձակ չոր ապարի կշռի հարաբերությամբ (%-ներով կամ միավորի մասերով):

**МАКСИМАЛЬНАЯ СКОРОСТЬ ДВИЖЕНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՈՐԵԿՐԻՅԱ ՋՐԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, ստ. ջրերի շարժման արագություն, որը որոշվում է կենտրոնական հորատանցքի մեջ 19րած սիւն ջրից (օրգ. ներկանյութ, աղ, նշված ստոմ նն) հոսանքի գծով որոշակի հեռավորության վրա գտնվող դիտողական հորատանցքում հաշտնվելու պահով: Մ. ջ. շ. ա. ա. կախված է ջրատար շերտի ապարների ջրաթափանցելիությունից և համաեռությունից:

**МАКСИМАЛЬНОЕ КАПИЛЛЯРНОЕ ПОДНЯТИЕ** — ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱՆՍՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ, առավելագույն բարձրություն, որին ջուրը կարող է հասնել մազանթային ուժերի շնորհիվ (տե՛ս Высота капиллярного поднятия в горной породе):

**МАРЦИАЛЬНЫЕ ВОДЫ** — ՄԱՐՏԻԱԼ ՋՐԵՐ, կարելիացում հանդիպող սառը տո. ջրեր, որոնք պարունակում են երկաթի ծծմբաթթվային աղեր: Նման անվանումը տրվել է Պետրոս I կողմից՝ ի պատիվ պատերազմի աստված Մարտի: Մ. ջ. լաչնորեն կիրառվում են հանքաջրաբուժության բնագավառում:

**МАРШРУТНАЯ СЪЕМКА** — ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, մանրամասն քարտեզների բացակայության դեպքում արշավների կամ ուղեքնների միջոցով տեղանքի հանույթ: Աչքաչափով կատարվող Ե. հ-ի ժամանակ հետիոտն արշավների քանակը, դասավորությունը և ուղղությունը որոշվում է հանույթի մասշտաբով, նպատակով, տեղանքի ռելիեֆային և երկրբ. կառուցվածքային առանձնահատկություններով: Ուղեքնների ուղղությունները որոշվում են կողմնացույցով, իսկ հեռավորությունները չափվում են քայլերով:

**МАССА ГРУНТОВАЯ** — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋԱՆԳՎԱՄ, գրունտների մեխանիկայում՝ գրունտ, որի ծակոտիներն ու ճեղքերը լիովին լցված են ազատ ջրով: Գրունտի վերաբերյալ նման իդեալականացված պատկերացումը օգտագործվում է որոշ տեսական դրույթների դիտարկման ժամանակ:

**МАССИВ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԶԱՆԳՎԱՄ, ըստ Պ. Ն. Պապուկովի (1962), ապարների շերտախումբ, որը բնութագրվում է որոշակի ինժեներակերպերով: առանձնահատկությունների ընդհանրությամբ: Դրանցից են. շերտախմբի մակերևույթի բնույթը, երկրբ. կտրվածքի լեռնակերպը. հարկայնությունը, այդ հարկերի ներքին կառուցվածքը և ապարների ֆիզմեխ. հատկանիշները:

**МАТОЧНЫЕ РАССОЛ** — ՄԱՅՐԱԿԱՆ ԱՂԱՋՈՒՐ, հազեցած աղաջուր, որը ավելցուկ աղեր անջատելուց հետո շարունակում է մնալ հեղուկ վիճակում: Մ. ա. առանձին օջախների ձևով պարունակվում է աղային հատվածքներում և հանդիսանում է միջաղային տարատեսակ (տե՛ս Вода межсолевая):

**МАХЕ ЕДИНИЦА** — ՄԱՍԵՆԻ ՄԻԱՎՈՐ, ռադիոակտիվ նյութերի խտության (կոնցենտրացիայի) չափման հնացած միավոր: Ներկայումս Մ. մ. երբեմն օգտագործվում է հանքային ջրերի և բուժիչ ցեխերի դոզաչափման գործում: Անվանումը ստացել է ի պատիվ ավստրիացի ֆիզիկոս Հ. Մախեի: 1 Մ. մ. = 3,64 էման = 3,64 · 10<sup>-10</sup> կյուրի:

**МГНОВЕННАЯ НАГРУЗКА** — ԱԿՆԹԱՐԹԱՅԻՆ ԲԵՆՈՆՎԱՄԶ, գրունտի վրա նվազագույն ժամանակահատվածում գործադրվող բեռնվածք, որը հարվածի նմանեցնել չի կարելի:

**МГНОВЕННОЕ СОПРОТИВЛЕНИЕ МЕРЗЛЫХ ГРУНТОВ** — ՍԱՌԱՄ ԳԸՐՈՒՆՏՆԵՐԻ ԱԿՆԹԱՐԹԱՅԻՆ ԴԻՄՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, սառած գրունտների ցուցաբերած ստավեղագույն դիմադրությունը քայքայմանը, որը համապատասխանում է բեռնվածքի արագ գործադրմանը (տեսականորեն՝ ձայնի արագությամբ): Ս. գ. ա. դ. գործնականում մոտ է այդ գրունտների ժամանակավոր դիմադրությանը:

**МЕАНДР** — ԳԵՏԱԳԱՍԱՐ (ԳԵՏԱՊՏՈՒՅՏ), գետի հունի (հոսքի) գալարումներ (ոլորապտույտներ): Տարբերում են թաղված (հովտային) և թափառող (մա-

կերևութային կամ ազատ) Գ-ներ: Առաջինները գոյանում են խոր հովիտներում, երբ գետը գալարվում է արմատական ապարների ելուստների շուրջ, իսկ երկրորդները առաջանում են փոքրաթեք լայն հովիտների գետաբերովկային ճառագայթներում, երբ գետը անընդհատ փոխում է իր հունը, հատկապես վարարումների ժամանակ գծելով նորանոր ոլորապտույտներ: Անվանումը տրվել է Մեանդր գետի (Թուրքիա) անունով, որը բնորոշվում է հունի ձևի անընդհատ փոփոխությամբ:

МЕЖДУНАРОДНОЕ ГИДРОЛОГИЧЕСКОЕ ДЕСЯТИЛЕТИЕ (МГД) — ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՄՆԱՄՅԱԿ (ՄԶՏ), 1965—75 թթ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանու տակ անցկացված գիտական միջոցառում, որին մասնակցեցին բազմաթիվ երկրների (այդ թվում նախկին ԽՍՀՄ-ի) մասնագետներ՝ ջրային ռեսուրսների գնահատման, երանց ուսցիոնալ օգտագործման ու պահպանության բազմապիսի խնդիրները մոլորակի մասշտաբներով լուծելու համար:

МЕЖЕНЬ — ՍԱԿԱՎԱԶՐՈՒԹՅՈՒՆ, գետի ջրային ռեժիմի փուլ, որը բնորոշվում է գետի ջրի մակարդակի տեսական (սեզոնային) իջեցմամբ և ծախսի զգալի նվազումով: Ս. պայմանավորված է գետի սնման կտրուկ նվազեցմամբ կամ դանդաղեցմամբ, երբ գետի հոսքը գոյանում է հիմնականում ի հաշիվ սո. ջրերի: Ս. ժամանակը և տևողությունը կախված են բնակլիմայական գործոններից, որոնք որոշում են գետի ռեժիմը: Նախկին ԽՍՀՄ գետերի մեծ մասը բնորոշվում է տարեկան 2 սակավաջրությամբ՝ ամառային և ձմեռային:

МЕЗОФИТЫ — ՄԵԶՈՖԻՏԵՐ, բույսեր, որոնք աճում և զարգանում են հողերի չափավոր խոնավացման մարզերում: Մ. միջանկյալ տեղ են զբաղեցնում խոնավաանր ու չորաանր բույսերի տարածման գոտիների միջև (տե՛ս Դիքոֆիտ, Կսերոֆիտ):

МЕЛИОРАТИВНАЯ ГИДРОГЕОЛОГИЯ — ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրատերաբանության կիրառական բնագավառ, որն ուսումնասիրում է հողատարածությունների ջրատերք. պայմանները, մշակում է հողերի վիճակի բարելավման մեթոդներ և եղանակներ՝ նրանց արդյունավետ օգտագործման և կայուն բարձր բերքի ստացման նպատակով: Մ. ջ. կարևորագույն խնդիրը հանդիսանում է հողատարածությունների և գյուղատնտ. այլ օբյեկտների ոռոգման, չորացման, ջրաբքիցման, ջրամատակարարման պլանավորման և շին. նախագծումների ջրատերք. հիմնավորումը:

МЕЛИОРАЦИЯ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՑԻԱ (ԲԱՐԵՆԱՎՈՒՄ), ելնելով շինարարության և գյուղատնտեսության բազմապիսի պահանջներից, գրունտների հատկությունների ու վիճակի բարելավում՝ արհեստական ճանապարհով (ոռոգում, չորացում, աղազերծում ևն):

МЕЛИОРАЦИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ЗЕМЕЛЬ — ԳՅՈՒՂԱՏՆԵՑԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՑԻԱ (ԲԱՐԵՆԱՎՈՒՄ), կազմակերպական-տնտ., ագրոնոմիական և տեխ. միջոցառումների համակարգ՝ նպատակամղված արմատա-

այս բարելավելու այն գյուղատնտ. հողերի վիճակը, որոնք ունեն ջրային, օդային ու ջերմային անբարենպաստ ռեժիմներ, անբավարար քիմ. ու ֆիզ. հատկանիշներ, ենթակա են ջրի ու քամու վնասակար մեխ. ազդեցությանը ևն: Գ. հ. մ-ի տեսակներն են. ոռոգումը (իռիգացիան), չորացումը, քիմ. և ագրոանտոսային մեխորացումները: Գ. հ. մ. ապահովում է գյուղատնտ. կուլտուրաների կայուն բարձր բերքը, նպաստում է հողերի ռացիոնալ ու շահավետ օգտագործմանը:

МЕРЗЛОТА (МЕРЗЛЫЕ ПОЧВЫ И ГОРНЫЕ ПОРОДЫ) — ՍՍՌՑՈՒՅԹ, ՍՍՌԱՅՈՒԹՅՈՒՆ (ՍՍՌԱՅ ՀՈՂԵՐ ԵՎ ԱՊԱՐՆԵՐ), բացասական կամ գրոյական ջերմաստիճանով հողեր և ապարներ, որոնցում պարունակվող ամբողջ ջուրը (կամ նրա մեծ մասը) վերածված է սառցի: Վերջինը ցեմենտացնում է հողերի ու ապարների մասնիկները և էսպես փոխում է նրանց ֆիզմեխ. հատկությունները:

МЕРТВЫЙ СЛОЙ (ГОРИЗОНТ) — ՄԵՌԱՅ ԾԵՐՏ (ՀՈՐԻԶՈՆ), ջրատերությանը՝ օդահագեցման զոնայում գտնվող չոր ապարների շերտ, որը տեղադրված է վերևի խոնավ շերտի և ներքևի հագեցման զոնայի միջև: Ջուրը նրա միջով կարող է անցնել գոլորշու ձևով: Մ. շ. դիտվում է միայն չորային գոտիներում և հիմնականում բաղկացած է մերձմագակաև ծակոտկենությանը օժտված ապարներից:

МЕСТОРОЖДЕНИЕ МИНЕРАЛЬНЫХ ВОД — ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ստ. հանքային ջրերի բնական կուտակում (ավազան), որի եզրագծերն ու ծավալը ժամանակ-տարածության մեջ համեմատաբար հաստատուն են և կախված են ջրատար ապարների երկրք. կառուցվածքից, ստ. ջրոլորտում այլ ջրատար հորիզոնների նկատմամբ տեղադիրքից, ինչպես նաև շահագործման վիճակից:

МЕСТОРОЖДЕНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, ջրատար հորիզոնների կամ համալիրների տարածման ալյալիսի մասեր, որոնց սահմաններում բնական և արհեստական գործոնների շնորհիվ կուտակվող ստ. ջրերը որակական ու քանակական տեսակետից համեմատաբար կայուն են և տնտեսապես շահավետ ժողովրդական տնտեսության մեջ նպատակալաց օգտագործման համար: Մ. շ. հ. այն մասերը, որտեղ տարվում է ստ. ջրերի շահագործում, կոչվում են շահագործողական կաժ ջրհանման տեղամասեր: Մ. շ. հ. լինում են բնական (բնական գործոնների շնորհիվ ձևավորվող) և արհեստական (արհեստական միջոցառումների շնորհիվ ձևավորվող): Արհեստական հնքվ-եր կարող են ստեղծվել բարենպաստ երկրք.-կառուցվածքային և քարաբանական պայմաններում մակերևութային հոսքը արհեստական ճանապարհով ստ. հոսքի փոխարկման կամ ջրամբարների ծծանցման կորուստների հաշվին: Մ. շ. հ. այլ օգտակար հանածոների հնքվ-երի նման ունեն իրենց եզրագծերը (սահմանները՝ կտրվածքում և հատակագծում), պարփակում են ստ. ջրի որոշակի ծավալ, բայց նրանցից տարբերվում են ջուր-միներալի շարժունությամբ, նրա ռեսուրսների վերականգնման ու պաշարների լրացման յուրահատկությամբ:

МЕСТНЫЕ ВОДЫ (ВОДЫ МЕСТНОГО РАСПРОСТРАНЕНИЯ) — ՏԵՂԱՎԱՆ ՋՐԵՐ (ՏԵՂԱՎԱՆ ՏՍՐԱՅՄԱՆ ՋՐԵՐ), ստ. ջրեր, որոնք կապված են լոկալ

տարածման ջրատար ապարների հետ (օր., մորենային ավազակավերում պարփակված ավազների հետ): Ի հակադրություն ռեգիոնալ ջրատար հորիզոնների, Տ. Ջ. պլանում ունենում են սահմանափակ տարածում:

МЕСТНЫЕ НАПОР — ՏԵՂԱԿԱՆ ԾՆՇՈՒՄ, գրունտային ավազանում կամ գրունտային հոսքի ոչ մեծ տարածքում ստեղծվող ճնշում, որն առաջանում է գրունտային ջրերի հայելու մակարդակի բարձրությունն ունեցող ջրամերժ ապարների ոսպնյակի կամ սեպածն վերջացող շերտի և այլ դիմհարների առկայության հետևանքով:

МЕТАМОРФИЗАЦИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՓՈՆԽԱԿԵՐՊՈՒՄ, առ. ջրերի հանքայնացման և քիմ. բաղադրության փոփոխություններ, որոնք ընթանում են գերազանցապես վերականգնման պայմաններում և հանգեցնում են ջրերում քլորի, կալցիումի, ստրոնցիումի, բրոմի և այլ բաղադրատարրերի կուտակմանը: Ա. Ջ. փ. նպաստում են տարբեր քիմ. բաղադրության ջրերի միախառնման, կատիոնների փոխանակման, մանրէների գործունեության, գազանջատման և այլ գործընթացներ, որոնք կարող են հանգեցնել ջրերի քիմ. բաղադրության լրիվ փոփոխության և նոր տիպի առաջացման:

МЕТАНОВЫЕ ВОДЫ — ՄԵԹԱՆԱՑԻՆ ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնք լուծված ձևով պարունակում են մեթան գազ:

МЕТЕОРНЫЕ ВОДЫ — ԵՐԿՆԱՑԻՆ ՋՐԵՐ, մթնոլորտային տեղումներից գոյացող ջրեր:

МЕТОД АНАЛОГИИ В ГИДРОГЕОЛОГИИ — ՆՄԱՆԱԿՄԱՆ (ՀԱՄԱՆՄԱՆՈՒԹՅԱՆ) ՄԵԹՈՒԳ ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, լավ ուսումնասիրված շրջանների կամ օբյեկտների համար ստացված ջրաերկրք. օրինակաչափությունները նույնատիպ բնապայմաններ և երկրք. կառուցվածք ունեցող, բայց ջրաերկրք. տեսակետից չափազանց թույլ ուսումնասիրված կամ չուսումնասիրված շրջանների վրա տարածելու (կիրառելու) մեթոդ:

МЕТОД ГИДРОЛОГО-ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЙ ОЦЕНКИ ПОДЗЕМНОГО ПИТАНИЯ РЕК — ԳԵՏԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՄՆՄԱՆ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ-ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՒԳ, գետի դիտարկվող վերջնափակող նշագծից վերև նրա հոսքի այն մասի որոշում, որը ձևավորվում է առ. ջրերի բեռնաթափման (աղբյուրների և ցամաքուղղային ջրերի) հաշվին: Գ. ս. ս. ջ-ջ. գ. մ. հիմնվում է գետի ընդհանուր հոսքի բաղադրիչների չափագրական կորի տարաբաժանման, ինչպես նաև առ. սնման աղբյուրների ռեժիմի ջրաերկրք. տվյալների օգտագործման վրա:

МЕТОД ИНФИЛЬТРАЦИИ — ՆԵՐՄԾՄԱՆ ՄԵԹՈՒԳ, ներծծման գործակցի որոշումը բնական պայմաններում հետախուզաֆորերում կատարվող ջրի ներծծման փորձերի միջոցով: Ավելի հաճախ կիրառվում են Ա. Կ. Բոլդիրևի, Ն. Ա. Նեստերովի, ինչպես նաև Գ. Ն. Կամենսկու, Ե. Ա. Ջամարինի, Ն. Ն. Բիդեմանի և

Ն. Կ. Գիրինսկու կողմից առաջարկված մեթոդները: Հոմանիշ՝ շուրֆերում ջրիցքի մեթոդ:

МЕТОД КОНЕЧНЫХ РАЗНОСТЕЙ — ԵԶՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈՂ, ստ. ջրերի շարժման դիֆերենցիալ հավասարումների թվային լուծման մեթոդ, որը հիմնված է անսահման փոքր մեծությունները վերջավոր մեծություններով փոխարինման վրա:


МЕТОД МОДЕЛИРОВАНИЯ — ՄՈՂԵԼԱՑՄԱՆ ՄԵԹՈՂ, հատուկ փորձասարքերի վրա ծծանցման խնդիրների լուծումը՝ ծծանցման հոսքերի մոդելների պատրաստման միջոցով: Տարբերում են մոդելացման ֆիզ. և մաթ. մեթոդները: Ֆիզ. մեթոդը իրականացվում է ծծանցման վաբում (չրհորդանում, նավդանում) ստեղծված բնականին մոտ, սակայն փոքրացված մասշտաբով, ծծանցման հոսքերի միջոցով: Մաթ. մեթոդը հիմնված է ստ. ջրերի ծծանցման և էլեկտրական հոսանքի կամ հատուկ դիմադրություններով միմյանց միացված հաղորդակից անոթներով ջրի շարժման համանմանության (անալոգիայի) վրա: Վերջին մեթոդը այլ կերպ կոչվում են ЭГДА (электрогидродинамических аналогий) — մոդելացումը էլեկտրական և հիդրավիկական ինտեգրատորների վրա (տե՛ս Электрогидродинамическая аналогия):

МЕТОД НАЛИВА В ШУРФЫ — ԾՈՒՐՖԵՐՈՒՄ ԶՐԼԻՑՔԻ ՄԵԹՈՂ, օդահագեցման գոնայի ապարների ներծծման գործակցի որոշում՝ շուրֆերի մեջ ջուր լցնելու մեթոդով: Առավել հաճախ կիրառվում են Ա. Կ. Բոլդիրևի և Ն. Ա. Նեստերովի կողմից առաջարկված մեթոդները:

МЕТОД ПИКНОМЕТРА — ԾԱՎԱԼԱԶԱՓԻ (ՊԻԿՆՈՄԵՏՐԻ) ՄԵԹՈՂ, կարոնատային ապարների արդյունավետ ծակոտկենության գործակցի որոշումը՝ ապարի տաշված գլանի կողմից կլանված հեղուկի ծավալի կշռային որոշման միջոցով: Գլանի ծավալի որոշումը հեշտացնելու համար այն տաշվում է խառատային հաստոցի վրա:

МЕТОД СУПЕРПОЗИЦИИ (НАЛОЖЕНИЯ ТЕЧЕНИЙ) — ՎԵՐԱԿՐՄԱՆ ՄԵԹՈՂ, ջրադինամիկական խնդիրների լուծման մեթոդ, որը հիմնված է դիֆերենցիալ գծային հավասարումների լուծումների գումարման սկզբունքի վրա: Վ. մ. լայնորեն օգտագործվում է փոխազդող համակարգերի հաշվարկման համար, հաշվի առնելով ժամանակ-տարածության մեջ ջրատար շերտերի ու համակարգերի աանմանների և ծախսերի փոփոխությունները:

МЕТОД ТРЕУГОЛЬНИКА — ԵՌԱՆԿՅԱՆ ՄԵԹՈՂ, ջրաերկր. տեսակետից վատ ուսումնասիրված շրջանում կամ տեղամասում ստ. ջրերի շարժման ուղղության որոշման մեթոդ, որն իրականացվում է հետևյալ կերպ. տեղանքում հորատվում են միմյանցից 10—30 մ հեռավորության վրա 3 հորատանցքեր՝ տեղադրված հավասարակող եռանկյան գագաթներում (ճկ. 13): Որոշելով հորատանցքերում ստ. ջրերի մակարդակը, հատակագծի վրա միջարկումով կառուցվում են ջրաիզոնիպսերը, որոնց տարած ուղղահայացը (նիշերի նվազման ուղղությամբ) ցույց կտա ջրերի շարժման ուղղությունը:



Նկ. 13. Ստորերկրյա հոսքի ուղղության որոշումը «եռանկյան մեթոդով»:

МЕТОДЫ ГЕОБОТАНИЧЕСКИЕ ПОИСКОВ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՈՌԵՐԿՐՅԱ, ՋՐԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ ԵՐԿՐԱԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ, մեթոդներ, որոնք հնարավորություն են ընձեռում, օգտագործելով ստանձին բուսատեսակների ու նրանց ընկերակցությունների որոշ հատկանիշեր (խոնավասիրություն, աղուս կամ չորային հողերում աճելու ունակություն են), պատկերացում կազմել գրունտային ջրերի առկայության, նրանց տեղադրման խորության և հանքայնացման աստիճանի մասին: Ս. ջ. ո. ե. մ. հնարավորություն են տալիս նաև գնահատել բուսականության կողմից գոլորշիացվող ջրի քանակը, որոշել օգտակար հանածոների ցրման եզրապատկը, բազմամյա ստառած ապարների տեղադրման խորությունն ու սեզոնային հալման գոնայի հաստությունը: Ս. ջ. ո. ե. մ. ստավել արդյունավետ են տիեզերա-և օդալուսանկարների վերձանման տվյալների հետ զուգադրելիս:

МЕТОДЫ ЛАНДШАФТНЫЕ — ԼԱՆԳՇԱՖՏՍՅՅԻՆ ՄԵԹՈՂՆԵՐ, մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս տեղանքի ընդհանուր կերպարանքի բաղադրատարրերի վերլուծության հիման վրա ճանաչողական պատկերացում ստանալ տեղանքի երկրք. կառուցվածքի և ջրաերկրք. պայմանների մասին: Լ. մ. գլխավորապես հիմնված են օդալուսանկարների վերձանման ու օդաաչքաչափային դիտումների վրա, որոնք զուգորդվում են մակերևութային ու սուսմնասիրությունների հետ: Լ. մ. հաջողությամբ կիրառվում են ջրաերկրք. հանույթային աշխատանքներում, ինչպես նաև բնական պայմանների վրա ջրաշին. ու մելիորատիվ կառույցների ազդեցությունը կանխագուշակելու գործում:

МЕХАНИЗМ ОПОЛЗНЕВОГО ПРОЦЕССА — ՍՈՂԱՆՔՍՅԻՆ ԳՈՐԾՆԵԹԱՅԻ ՄԵԽՆԱՆԻԶՄ, թեքությունների վրա գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ կատարվող ապարազանգվածների սահքի բնույթը, տեսակը և եղանակը պայմանավորող մեխանիզմ: Մի դեպքում ապարազանգվածի սահքը կատարվում է բեկորի (բլոկի) կամ մի քանի բեկորների ձևով (կառուցվածքային սողանք), մեկ այլ դեպքում այն կատարվում է հոսքի ձևով, մածուցիկ հեղուկազանգվածի նման (պլաստիկ սողանք): Հանդիպում են նաև ապարազանգվածի տեղաշարժի անցողիկ եղանակներ, երբ անջատված բեկորը սահքի գործընթացում բեկորատվում-քայքայվում

է և նրա հետագա շարժումը ձեռք է բերում մածուցիկ հոսքի բնույթ (կառուցված-  
քապլաստիկ տողանք): Ա. գ. մ. հասկանալու համար պետք է ճիշտ պատկերացում  
ունենալ տողանքի կառուցվածքի, նրա զարգացման դինամիկայի և տողանքային  
գունգվածը կազմող ապարների ֆիզմեխ. հատկությունների ու վիճակի մասին:

**МЕХАНИКА ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՄԵՆՍԱՆԻԿԱ**, ինժեներական երկրա-  
բանության բաժին, որն ուսումնասիրում է գրունտների լարումները, ձևախախտում-  
ները, ամրության ու կայունության պայմանները, արտաքին, գլխավորապես մեխ.  
ազդեցությամբ նրանց վիճակի և հատկությունների փոփոխությունները:

**МЕХАНИЧЕСКАЯ ПОГЛАТИТЕЛЬНАЯ СПОСОБНОСТЬ ПОЧВ — ՀՈՂԵՐԻ  
ՄԵՆՍԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՍՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ**, հողերի ունակությունը ջրի ներ-  
թափանցման ժամանակ կախված մանր մասնիկները կլանելու (գտելու) գործուն:

**МЕХАНИЧЕСКАЯ ПРОЧНОСТЬ ТВЕРДЫХ ГОРНЫХ ПОРОД — ԿԱՐՑԻ  
ԱՊԱՐՆԵՐԻ ՄԵՆՍԱՆԻԿԱԿԱՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆ**, բեռնվածքի ազդեցությամբ քայ-  
քայվող լարումներին ապարների դիմադրելու ունակություն: Տարբերում են սեղմման,  
ձգվման, ծռման, հարվածի և կտրման մեխ. ամրություն: Ինժեներատերեր- նպատակ-  
ների համար առավել հետաքրքրություն է ներկայացնում ապարների սեղմման մեխ.  
ամրությունը, որը բնութագրվում է սեղմման ժամանակավոր դիմադրությամբ՝ սեղմման  
սահմանով (Р ս.): Այդ դիմադրությունը իրենից ներկայացնում է սահմանային  
բեռնվածք (արտահայտված կգ/սմ<sup>2</sup>-ով), որի դեպքում կարճատև փորձարկման  
ժամանակ ապարի նմուշը քայքայվում է:

**МЕХАНИЧЕСКАЯ СУФФОЗИЯ — ՄԵՆՍԱՆԻԿԱԿԱՆ ՍՈՒՖՈԶԻԱ**, շարժվող  
ստ. ջրերի կողմից փոխար ապարի մանր մասնիկների տեղատարում: Մ. ս. հանդի-  
սանում է սուֆոզիայի հիմնական ձև (տե՛ս Սուֆֆոզիա): Այն հանգեցնում է ապար-  
ների ծակոտկենության ու ջրաթափանցելիության ավելացմանը, նրա ընդհանուր  
փխրեցմանը և մեխ. ամրության նվազմանը:

**МЕХАНИЧЕСКИЙ АНАЛИЗ — ՄԵՆՍԱՆԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ**,  
տե՛ս Гранулометрический анализ:

**МЕХАНИЧЕСКИЙ СОСТАВ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ՄԵՆՍԱՆԻ-  
ԿԱԿԱՆ ԿԱԶՄ**, «Հատիկաչափական կազմ» տերմինի ավելորդ հոմանիշ (տե՛ս  
Гранулометрический состав горных пород):

**МИГРАЦИЯ (ПЕРЕДВИЖЕНИЕ) ВЛАГИ ПРИ ПРОМЕРЗАНИИ — ԽՈՒՆ-  
ՆԱՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ) ՍԱՌԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**, խոնավության  
տեղագաղթը հեղուկ և գոլորշի վիճակում՝ հողերի, գրունտների և ապարների սա-  
ռեցման գործընթացում, ինչպես նաև նրանց ստանձ վիճակում:

**МИГРАЦИЯ ГАЗОВ В ПОДЗЕМНЫХ ВОДАХ — ԳԱԶԵՐԻ ՏԵՂԱԳԱՂԹ  
(ՄԻԳՐԱՑԻԱ) ԱՏՈՐԵՐԿՐԱԶ ԶՐԵՐՈՒՄ**, տե՛ս Миграция газов в водонасыщен-  
ных породах:

МИГРАЦИЯ ГАЗОВ В ВОДОНАСЫЩЕННЫХ ПОРОДАХ (В ПОДЗЕМНЫХ ВОДАХ) — ԳԱԶԵՐԻ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ) ԶՐԱՏԱՐ ԱՊԱՐՆԵՐՈՒՄ (USՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐՈՒՄ), գազերի տեղագաղթ երկրակեղևի մի տեղամասից մյուսը ստ. ջրերի միջոցով, ինչպես նաև դիֆուզիայի ու էֆուզիայի հետևանքով: Հիմնականում այս տեղագաղթը կատարվում է հոսող ստ. ջրերի միջոցով, որոնցում գազերը գտնվում են լուծված վիճակում: Դիֆուզիայի շնորհիվ երկրակեղևի ջրատար համակարգերում կատարվում է յուրաքանչյուր գազի առանձնականության հալխասարեցում, ընդ որում դիֆուզիայի գործակիցը մեծանում է ջերմության բարձրացմանը զուգընթաց: Դիֆուզիոն հատկանիշներով առավել աչքի են ընկնում ածխաջրածնային գազերը (հատկապես մեթանը): Գազերի էֆուզիան (ծծանցումը) տեղի է ունենում միայն ապարների խոշոր ճեղքածակոտիներով այն դեպքում, երբ նրանց ճնշումը գերազանցում է ջրատատիկ ճնշումը: Գ. տ. ջ. ա. կարևոր դեր է կատարում ինչպես գազային հնքվ-երի ձևավորման ու կուտակման, այնպես էլ նրանց ցրման գործում:

МИГРАЦИЯ ГЕОХИМИЧЕСКАЯ — ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ), ըստ Ա. Ե. Ֆերսմանի, գործընթացների համակարգ, որը բերում է երկրակեղևում քիմ. տարրերի տարածական տեղագաղթին, հանգեցնելով նրանց կուտակման փոփոխությանը, մի տեղամասում նրանց կուտակմանը, մեկ այլ տեղամասում ցրմանը: Ե. տ-ի կարևոր գործոններ են հանդիսանում ֆիզքիմ. և երկրբ. պայմանների փոփոխությունները, որոնք տարբեր տարրերի վրա (կախված նրանց հատկանիշերից) տարբեր ձևով են ազդում:

МИГРАЦИЯ ХИМИЧЕСКИХ ЭЛЕМЕНТОВ В ПОДЗЕМНЫХ ВОДАХ — ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ) USՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐՈՒՄ, ստ. ջրերի միջոցով ապարներում քիմ. միացությունների ու տարրերի տեղագաղթ, լուծույթից նրանց անջատման (նստեցման) և վերանստեցման անընդհատ գործընթաց: Քիմ. տարրերի տեղագաղթի ինտենսիվությունը (կամ տեղագաղթի ունակությունը) բարձր է այն ատոմների ստո, որոնց միացությունները հեշտ լուծվող են (օր., աղածիներ, մետաղաալկալային միացություններ ևն): Տեղագաղթի ունակությունը փոխվում է՝ կախված ապարում տարրի պարունակությունից, ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունից: Հողմահարման կեղևի ջրերում (ներառյալ օքսիդացման զոնան), բացի սովորական շարժունակ տարրերից (H, O, N, Ca, Mg, K), տեղագաղթում են նաև բազմաթիվ այլ տարրեր (Na, Cl, S(SO<sub>4</sub>), C(CO<sub>2</sub>), Si(SiO<sub>2</sub>), U, Th, Br, J, Cs, Rb, Li, Jn, Se, Te, F, B, Sr ևն):

МИГРАЦИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — USՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ), ստ. ջրերի տեղագաղթը մի ջրատար ապարից (շերտախմբից) մեկ ուրիշը՝ առանց որակական փոփոխության:

МИКРОКОМПОНЕНТЫ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ПРИРОДНЫХ ВОД — ԲՆԱԿԱՆ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈԲԱՂԱԳՐԻԻՉՆԵՐ, քիմ. տարրեր, որոնք ցածր ըլարկային պարունակության և դժվար լուծվող միացություններում կապված լինելու պատճառով ստ. ջրերում հանդիպում են հազվադեպ և անճան պահանջություններով: Ըստ Ա. Պ. Վինոգրադովի, Բ. ջ. ք. ք. մ-ի միջին պա-

բունակությունը հասնում է մինչև 1 մգ/լ: Զրաերկրաքիմ. տեսակետից առավել հետաքրքրություն են ներկայացնում և համեմատաբար լավ են ուսումնասիրված J, Br, B, F, Li, Sr, ուղիղակիորեն և հանքաուսջացնող միներալների տարրերը: Հումանիշ՝ բնական ջրերի միկրոտարրեր:

МИКРОПЕНЕТРОМЕТР — ՄԻԿՐՈՊԵՆՏՐՈՄԵՏՐ, կոնաձև հասարակ սարք, որի օգնությամբ դաշտային կամ լաբորատոր պայմաններում տրվում է գրունտների խտության օբյեկտիվ գնահատականը: Փորձարկվող գրունտների խտության աստիճանի մասին դատում են գրունտի մեջ կոնի ներդրման մեծությամբ:

МИКРОЭЛЕМЕНТЫ ПРИРОДНЫХ ВОД — ԲՆԱԿԱՆ ԶՐԵՐԻ ՄԻԿՐՈՍՏԱՐԲԵՐ, տե՛ս Микροкомпоненты химического состава природных вод:

МИЛЛИБАР (мб) — ՄԻԼԻԲԱՐ (մբ), մթնոլորտային ճնշման չափման միավոր: Հանդիսանում է ուժի միավոր, որը գործադրվում է 1 սմ<sup>2</sup> մակերեսի վրա 1000 դին ուժով: 1 մբ = 0,001 բար, իսկ 1 մմ սնդիկի սյան ճնշմանը համասպատախանում է 1,333 մբ:

МИНЕРАЛИЗАЦИЯ ВОД (ПОДЗЕМНЫХ ВОД) — ԶՐԵՐԻ (ՍՏՈՐԵՐԿՐԶԱ, ԶՐԵՐԻ) ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ, ջրում տարրալուծված աեօրգ. (միներալային) նյութերի ընդհանուր կշռային պարունակություն: Այդ նյութերը կարող են պարունակվել ինչպես իոնների, այնպես էլ կոլոիդների տեսքով: Տարբերում են հանքայնացման բնույթ և մեծություն (աստիճան) հասկացությունները: Զ. Բ-ի բնույթը պայմանավորված է ջրի քիմ. տիպով (տե՛ս Классификация химического состава подземных вод): Հանքայնացման աստիճանի արտահայտման միանշանակ մեծություն գոյություն չունի. ներկայումս ընդունվում է հետևյալ մեծություններից որևէ մեկը. 1) փորձնականորեն յորշված չոր (կշռ) մնացորդը, 2) իոնների գումարը, 3) միներալային նյութերի գումարը, որն ստացվում է իոնների և կոլոիդների ( $H_2SiO_3$ ,  $Fe_2O_3$  ևն) հանրագումարից, 4) հաշվարկային չոր մնացորդը, որը նույնպես իոնների ու կոլոիդների հանրագումարն է, սակայն ջրակարբոնատ իոնի քանակը վերցվում է կիսով չափ: Զ. Բ-ի մեծությունը սովորաբար արտահայտվում է գր/լ-երով, մգ/լ-երով, աղաջրերի համար նաև գր/կգ-երով: Բացի կշռային միավորներից, Զ. Բ. երբեմն արտահայտում են տեսակարար կշռով (գր/սմ<sup>3</sup>, կգ/լ), ինչպես նաև ջրում պարունակված բոլոր իոնների (անիոնների ու կատիոնների) մգ. համ./լ-երի կամ մգ. համ./կգ-երի հանրագումարով:

МИНЕРАЛИЗАЦИЯ ОРГАНИЧЕСКИХ ВЕЩЕСТВ (БИОГЕННАЯ АККУМУЛЯЦИЯ) — ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ (ԿԵՆՍԱՍԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ), օրգ. նյութերի քայքայման գործընթացների համակցություն, որի հետևանքով քիմ. տարրերը ազատվում են քարո ու էներգիայով հարուստ օրգ. նյութերից և առաջացնում են առավել պարզ ու էներգիայով աղքատ նոր քիմ. միացություններ ( $CO_2$ ,  $H_2S$ ,  $CaCO_3$ ,  $Na_2SO_4$  ևն):

МИНЕРАЛЬНЫЕ ВОДЫ — ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ, բարձր հանքայնացման (1 գր/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչների ստորև բերվող քանակությունները (տե՛ս աղ. 11): Հ. Զ. գլխավորապես

օգտագործվում են առողջարանային բուժման համար (տե՛ս Лечебные воды) և որպես սեղանի զավագուցիչ ջրեր:

Աղյուսակ 11

Միկրոբաղադրիչներ	Քանակ, գր/լ	Ջրի անվանումը
Ազատ ածխաթթու ( $\text{CO}_2$ )	0,750	Ածխաթթվային
Ընդհանուր ծծմբաջրածին ( $\text{H}_2\text{S}$ )	0,010	Ծծմբաջրածնային
Լիթիումի իոն ( $\text{Li}^+$ )	0,001	Լիթիումային
Երկաթի իոն ( $\text{Fe}^{2+}$ )	0,010	Երկաթային
— » — ( $\text{Fe}^{3+}$ )	0,010	— » —
Ֆտորի իոն ( $\text{F}^-$ )	0,002	— » —
Բրոմի իոն ( $\text{Br}^-$ )	0,005	Բրոմային
Յոդի իոն ( $\text{J}^-$ )	0,001	Յոդային
Բորաթթու ( $\text{HBO}_2$ )	0,005	— » —
Ռադոն ( $\text{Rn}$ )	14 Մախեի միավոր (50 էման)	Ռադոնակտիվ

МИНЕРАЛЬНЫЕ ГРЯЗИ — ՀԱՆՔԱՅԻՆ ՑԵԽԵՐ, լիմանների, լազունների, լճերի, լճակների և ճահիճների միներալային ու օրգ. նստվածքներ, որոնք ֆիզքիմ. և կենսաբ. գործընթացների հետևանքով ենթարկվել են բարդ փոփոխությունների: Ըստ ծագման տարբերում են հետևյալ տարատեսակները. 1) լիմանային ու լազունային, 2) լճային ու ճահիճային, 3) ցեխային հրաբուխների ու բլուրների արտալիծքներ: Հ. ց-ի կոլոիդները բաղկացած են ալյումինիումի ու երկաթի հիդրատներից, ծծմբային երկաթից և կավային մասնիկներից, որոնք հագեցված են հանքայնացված կամ աղային ջրերով: Հաճախ Հ. ց. օժտված են բուժիչ հատկանիշներով և հաջողությամբ կիրառվում են առողջապահության բնագավառում:

МИНЕРАЛЬНЫЕ ИСТОЧНИКИ — ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, հանքային ջրերի (տե՛ս Минеральные воды) բնական էլքեր, որոնք գերազանցապես կապված են տեկտ. խախտումների զոնաների հետ: Ըստ քիմ. բաղադրության ստանձնացվում են Հ. ա-ի բազմաթիվ տիպեր. հիմնային, կրային, աղային, թթվային, երկաթային, ածխաթթվային, ծծմբային, մկոնդեղային ևն, որոնք օգտագործվում են առողջապահական նպատակների համար: Նախկին ԽՍՀՄ-ում ստավել հայտնի են Հյուսիսային Կովկասի, Անդրկովկասի, Նախակարպատների, Ղրիմի և Միջին Ասիայի Հ. ա.:

МИНЕРАЛЬНЫЕ ОЗЕРА — ՀԱՆՔԱՅԻՆ ԼՃԵՐ, լճեր, որոնց ջրի զանգվածի 35%-ից ավելին բաժին է ընկնում լուծված աղերին (կերակրի աղ, նատրիումի սուլֆատ, աղա, ծծմբաթթվային մագնիում ևն): Հ. Լ-ի խիտ աղաջրերից ստանում

են կերակրի առ, բրոմային, յոդային, կալիումական, մագնեզիումային և այլ աղեր, որոնք հանդիսանում են քիմ. արդյունաբերության հումք: Հ. Լ. հանդիպում են գըլ-խապիրապես երկրագնդի չորային գոտիներում:

МИЦЕЛЛА — ՄԻՑԵԼԱ, կոլոիդներում՝ նյութի բացասական լիցքավորումով դիսպերս մասնիկ, որի շուրջը էլեկտրական և մոլեկուլային ուժերի շնորհիվ ստեղծվում է 2 շերտ. 1) կլանման (ստորբցիոն) շերտ, որը բաղկացած է մասնիկի կողմից ուժեղ պահվող կատիոններից, 2) դիֆուզիոն շերտ, որը բաղկացած է մասնիկի կողմից թույլ պահվող կատիոններից և ջրի դիպոլներից: Մ-ի չափերը լինում են  $10^{-3} \div 10^{-7}$  մմ սահմաններում:

МНОГОЯРУСНЫЕ ОПОЛЗНИ — ԲԱԶՄԱՀԱՐԿ ՍՈՂԱՆՔՆԵՐ, երկու և ավելի հորիզոնական շերտերից կազմված լանջերին դիտվող աստիճանավոր (բազմահարկ) սողանքներ: Տարբեր շերտերը տարբեր չափով ու ձևով են մասնակցում սողանքային գործընթացներին, որի հետևանքով սողանքային մարմինները աստիճանավորվում, դառնում են «բազմահարկ»:

МОДУЛЬ ДЕФОРМАЦИИ — ՉԵՎԱԽԱԽՏՄԱՆ (ԴԵՖՈՐՄԱՅԻԱՅԻ) ՄՈԴՈՒԼ, համեմատականության գործակից՝ գրունտի վրա գործադրվող ճնշման և նրա ազդեցությամբ գրունտի կրած զծային ձևախախտման միջև: Այն հաճախ անվանում են հարաբերական Չ. մ., որը տարբերվում է բացարձակ Չ. մ-ից: Վերջինի տակ հասկացվում է գրունտի վրա գործադրվող ճնշման անսահման փոքր աճի և զծային ձևախախտման միջև գոյություն ունեցող համեմատականության գործակիցը:

МОДУЛЬ ОБЪЕМНОГО СЖАТИЯ (K) — ԾՎԱԿԱԿՅԻՆ ՍԵՂՄՄԱՆ ՄՈԴՈՒԼ (K), համեմատականության գործակից՝ գրունտի վրա գործադրվող համակողմանի սեղմման (ընդարձակման) և գրունտի հարաբերական ծավալի միջև: Նման համակողմանի սեղմման պայմաններ դիտվում են մասնավորապես ջրաստատիկ ճնշման դեպքում: K մոդուլի հակադարձ մեծությունը կոչվում է ծավալային (համակողմանի) սեղմման գործակից կամ սեղմելիություն:

МОДУЛЬ ОСАДКИ — ՆՍՏՄԱՆ ՄՈԴՈՒԼ, տվյալ բեռնվածքի տակ գրունտի 1 մ հզորության շերտի նստում՝ արտահայտված մմ-երով: Ն. մ. որոշվում է կոմպրեսիոն փորձարկումների միջոցով:

МОДУЛЬ ПОДЗЕМНОГО СТОКА — ՍՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԻ ՄՈԴՈՒԼ, ստ. ջրահավաք ավազանի միավոր մակերեսից միավոր ժամանակում ստացվող ստ. հոսքի ծախսը (ծավալը): Ս. հ. մ. արտահայտվում է Լ/վրկ կմ<sup>2</sup> կամ մ<sup>3</sup>/վրկ կմ<sup>2</sup> և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.  $M_{\text{ս. հ.}} = \frac{Q}{F}$ , որտեղ՝  $M_{\text{ս. հ.}}$  — ստ. հոսքի մոդուլն է, Q — միավոր ժամանակում ստ. հոսքի ծախսն է (Լ/վրկ, մ<sup>3</sup>/վրկ), F — ջրհավաք ավազանի մակերեսն է (կմ<sup>2</sup>):

МОДУЛЬ СДВИГА (G) — ՍՈՂՔԻ (ԿՈՂԱՇԱՐԺԻ) ՄՈԴՈՒԼ (G), համեմատականության գործակից՝ գրունտի վրա մեկուսի գործադրվող շրջափող ուղ-

դրության լարման և համապատասխան ձևախախտման միջև:  $G$  մոդուլը որոշվում է  $\tau$  շրջափող լարման մեծության և տեղաշարժի  $\varphi$  անկյան մեծության հարաբերությամբ՝  $G = \frac{\tau}{\varphi}$  և չափվում է դին/ամ<sup>2</sup>-ներով կամ ցյուտոն/մ-երով:

**МОДУЛЬ СТОКА — ՀՈՍՔԻ ՄՈԴՈՒԼ**, ջրհավաք ավազանի միավոր մակերեսին բաժին ընկնող մակերևութային հոսքի ծախսը (ծավալը) միավոր ժամանակահատվածում:  $Z$ . մ. արտահայտվում է  $1/վրկ$  կմ<sup>2</sup> կամ մ<sup>3</sup>/վրկ կմ<sup>2</sup> և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.  $M_s = \frac{Q}{F}$ , որտեղ՝  $M_s$  — հոսքի մոդուլն է,  $Q$  — մակերևութային հոսքի ծախսն է (մ<sup>3</sup>/վրկ,  $1/վրկ$ ),  $F$  — ջրհավաք ավազանի մակերեսն է (կմ<sup>2</sup>):

**МОДУЛЬ ТВЕРДОГО СТОКА — ԿՈՅՏ ՀՈՍՔԻ ՄՈԴՈՒԼ**, գետի կոշտ հոսքի տարեկան մեծությունը (տն.), որը բաժին է ընկնում ջրհավաք ավազանի միավոր մակերեսին (կմ<sup>2</sup>):

**МОДУЛЬ УПРУГОСТИ ГРУНТА (МОДУЛЬ ЮНГА—E) — ԳՐՈՒՆՏԻ ԱՌՈՋԳԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼ (ՅՈՒՆԳԻ ՄՈԴՈՒԼ—E)**, համեմատականության գործակից՝ գրունտի վրա գործադրված ուղղաձիգ լարման բեռնաթափման և գրունտի կրած հարաբերական ուղղաձիգ ձևախախտման միջև:  $E$  մոդուլը որոշվում է կոմպրեսիոն փորձարկումների միջոցով՝ կանխապես բեռնվածքի տակ գտնվող գրունտի նմուշի բեռնաթափման ճանապարհով:

**МОЛ — ՄՈԼ (ԱԼԵԲԱԽՍԱՆ ՊԱՏՆԵՇ)**, քարաբեկորներից կամ զանգվածային բետոնից կառուցված ափապաշտպան պատնեշ, որը հաստ պատի տեսքով ափից ձգվում է դեպի ծով (ուղղահայաց կամ որոշ անկյան տակ): Մ-երը կոչված են ալեբախությունից պաշտպանելու ծովափերը (մասնավորապես լողափերն ու հավահանգիստները):

**МОЛЕКУЛЯРНАЯ ВЛАГОЕМКОСТЬ — ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԽՈՐՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ**, տե՛ս Влагодность грунта:

**МОЛЕКУЛЯРНАЯ ВОДА — ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՋՈՒՐ**, ջուր, որը մոլեկուլային ձգողության շնորհիվ պահվում է ապարի մակերևութին կամ ծակոտիների պատերին: Ըստ Ա. Ֆ. Լեբեդևի, Մ. ջ. համապատասխանում է թաղանթային (թույլ կապակցված) և խոնավածուծ (ամուր կապակցված) ջրերի գումարային պարունակությանը: Որոշ մասնագետներ Մ. ջ. նույնացնում են թաղանթային ջրի հետ, համարելով դրանք հոմանիշներ:

**МОЛЕКУЛЯРНО-ПОВЕРХНОСТНЫЕ СИЛЫ — ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ-ՄԱԿԵՐԵՍՎՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐ**, մակերևութային ձգողականության ուժեր, որոնք մազական անցքերում պայմանավորում են մազանոթային ճնշումը: Մ.-մ. ու. զգալի դեր են կատարում ծակոտկեն միջավայրում հեղուկի ծծանցման գործում, հատկապես ապարի մեծ տեսակարար մակերևութի դեպքում:

**МОЛЕКУЛЯРНЫЕ СИЛЫ** — ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՈՒԺԵՐ, Գյութի մոլեկուլների միջև փոխազդեցության ուժեր, որոնք, կախված արտաքին ազդակներից (ջերմություն, ճնշում), պայմանավորում են Գյութի այս կամ այն ազդեգատային վիճակը և նրա մի շարք ֆիզ. հատկությունները (խտություն, մեխ. հատկություններ, մակերևութային ձողականություն ևն):

**МОНИТОРИНГ РЕЖИМА ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ, ՋՐԵՐԻ ՌԵԺԻՄԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ստ. ջրերի ռեժիմի դիտումներ, գնահատում և կանխագուշակում: Ներկայումս, երբ ստ. ջրերի պաշարները ավելի ու ավելի ինտենսիվորեն են շահագործվում, լեռնահանքային, շին. (հատկապես ջրաշին.) և այլ աշխատանքներով խախտվում է նրանց ռեժիմը, ապա ստ. ջրերի յուրաքանչյուր խոշոր հնքվ-ի կամ ավազանի համար մոնիտորինգի ստեղծումը դառնում է հրամայական պահանջ:

**МОНОЛИТ** — ՄԻԱԶՈՒՅԼ ԱՊԱՐԱՆՄՈՒԾ (ՄԵՆԱՔԱՐ, ՄՈՆՈԼԻԹ), որոշակի ձև ու չափեր ունեցող մնուշ, որը վերցված է առանց խախտելու ապարի բնական կառուցվածքն ու խոնավությունը:

**МОНТОРИЛЛОНИТ** — ՄՈՆՏՄՈՐԻԼՈՆԻՏ, կիսաբյուրեղային ջրային սիլիկատ, մտովածքային ապարներում լայնորեն տարածված տեղաձին միներալ: Կառուցվածքով Մ. մնան է պրոֆիլիտին, բայց առանձին թեթեթերի մեջ կլանված են ջրի մոլեկուլներ, որոնք կարող են հեշտությամբ անջատվել և նորից կլանվել, պայմանավորելով ապարի սեղմումը և ուռչումը:

**МОРОЗНОЕ ВЫЕТРИВАНИЕ** — ՍԱՌՆԱՄԱՆԻՔԱՅԻՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, ճեղքերի ու ծակոտիների մեջ սառչող ջրի ճնշման հետևանքով ապարների փլուխեցում և քայքայում: Ս. հ. հետևանքով բարձր լեռնային և քվեռային մարզերում առաջանում են «քարային ծովեր», լեռների ու ձորերի գառիթափ լանջերին՝ փլուվածքներ ու թափվածքներ, սառցադաշտերի գործունեության շրջաններում՝ կատեր, սուլիֆյուրկցիոն երևույթներ, հողատակի քարերի ցցվածքներ ևն:

**МОРОЗНЫЕ ПОЧВЫ, ГОРНЫЕ ПОРОДЫ, ГРУНТЫ** — ՑՐՏԱՀԱՐՎԱԾ ՀՈՂԵՐ, ԱՊԱՐԱՆԵՐ, ԳՐՈՒՆՏՆԵՐ, բացասական ջերմաստիճանով ջրագուրկ (սառույց չաարունակող) հողեր, ապարներ, գրունտներ:

**МОРОЗНЫЕ ПУЧИНЫ** — ՍԱՌՆԱՄԱՆԻՔԱՅԻՆ ՈՒՌՉԵՑՈՒՄՆԵՐ, մանապարհածանկի տեղական բարձրացումներ, որոնք առաջանում են ձմռանը խոնավ ապարների սառեցման, իսկ գարնանը դրանց հալվելու և փխրեցման հետևանքով:

**МОРОЗНЫЕ ТРЕЩИНЫ** — ՍԱՌՆԱՄԱՆԻՔԱՅԻՆ ԾԵՂՔԵՐ, ճեղքեր, որոնք ապարներում առաջանում են նրանցում պարունակվող ջրի սառեցման հետևանքով: Այդ դեպքում ջրի ծավալը հեղուկ վիճակի համեմատությամբ աճում է շուրջ 10 %, իսկ նրա ճնշման ուժը ապարի պատերի վրա կազմում է 890 կգ/սմ<sup>2</sup>:

**МОРОЗОСТОЙКОСТЬ** — ՑՐՏԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, սառնամանիքի քայքայիչ գործունեությանը ապարի դիմադրելու ունակություն: Ց. կախված է ապարի հա-

տիկների միջև եղած կապերի ամրությունից, բաց ծակոտկենության մեծությունից և լայն ու նեղ հաղորդակցվող ճեղքերի հարաբերակցությունից: Որքան մեծ է բաց ծակոտիների ծավալը, այնքան ապարի ցրտակայունությունը ցածր է: Ց. բնութագրվում է ցրտակայունության գործակցով, որն իրենից ներկայացնում է չստամ մոլշների և նույն ապարի 20—25 անգամ ստեցրած ու հալեցրած մոլշների ճգման ժամանակավոր դիմադրությունների հարաբերությունը: Գոյություն ունեցող պահանջների համաձայն, շինարարության համար ապարների ցրտակայունության գործակցը 0,75-ից պակաս չպետք է լինի:

МОРСКАЯ ВОДА — ԾՈՎԱՅԻՆ ՋՈՒՐ, համաշխարհային օվկիանոսի ջուր: Ծ. ջ-ում լուծված են զանազան աղեր և ոչ մեծ քանակությամբ գազեր ու օրգ. նյութեր: Օվկիանոսի բլաց մասերում ջրի հանքալուծությունը կազմում է 35 գր/կգ (% սիրմիլե): Ծ. ջ-ի բիմ. սաղադրությունը բավական կայուն է և ներկայացված ֆետկալ գլխավոր իոններով.

Կատիոններ	գր/կգ	Անիոններ	գր/կգ
Na+	— 10,722	Cl-	— 19,337
K+	— 0,382	SO <sub>4</sub> <sup>2-</sup>	— 2,705
Ca <sup>2+</sup>	— 0,417	HCO <sub>3</sub> <sup>-</sup>	— 0,091
Mg <sup>2+</sup>	— 1,297	Br	— 0,066

Ծ. ջ. սառչում է մոտ — 2° Ց ջերմության դեպքում:

МОФЕТЫ (МОФЕТТЫ) — ՄՈՖԵՏՆԵՐ, տե՛ս Углекислые fumarолы:

МОЧАЖИНА — ԹԱՑՈՒՅԹ, երկրի մակերևույթի վրա գրունտային ջրի կամ վերնաջրի ելք՝ առանց նշմարելի հոսքի: Թ-ի տեղում սովորաբար աճում է փարթամ կանաչ բուսականություն: Թ. գրունտային ջրերի կամ վերնաջրերի առկայության և ոչ խոր տեղադրման ուղղակի ցուցանիշ է:

МОШНОСТЬ ВОДОНОСНОГО ГОРИЗОНТА — ՋՐԱՏԱՐ ՀՈՐԻԶՈՆԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆ, ուղղաձիգ կտրվածքում ջրատար հորիզոնի բարձրություն (մ-երով)՝ հաշված ջրամերժ հիմքից մինչև հորիզոնի մակերևույթ: Տվյալ կտրվածքում Ջ. հ. հ. կարող է փոփոխական լինել՝ կախված ջրատար հորիզոնի մակերևույթի տատանումներից, որոնք իրենց հերթին կախված են հորիզոնի սեման պայմաններից:

МУТНОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ՊՂՏՈՐՈՒԹՅՈՒՆ, ջրում կախված մասնիկների (բերվածքների) պարունակությունը բնութագրող մեծություն: «Ջ. պ.» տերմինը բնութագրում է. 1) միավոր ծավալում կախված մասնիկների կշռային պարունակությունը (կամ խտությունը), 2) ջրում լույսի ուժի թուլացումը, որը պայմանավորված է կախված մասնիկների կողմից լույսի կլանումով և ցրումով:

МЯСИГА — ՄՅԱՍԻԳԱ, սառեցման ֆետկանքով ամրությունը կորցրած ապամածային ապար: Տեղական անվանում Սիբիրում:

НАБЛЮДАТЕЛЬНАЯ СКВАЖИНА (КОЛОДЕЦ, ШУРФ) — ԴԻՏՈՂԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ (ԶՐՀՈՐ, ՇՈՒՐՖ), հորատանցք (ջրհոր, շուրֆ), որը փորվել է ստ-ջրերի մակարդակի և ջերմության տատանումները դիտելու և ջրի նմուշներ վերց-նելու համար: Տարբերում են. 1) ժամանակավոր Դ. հ.-եր, որոնցում դիտումները տարվում են միայն նմուշարկման և փորձային արտամուղումների ընթացքում, 2) հիմ-նական Դ. հ.-եր, որոնք նախատեսվում են երկարատև (բազմամյա) դիտումների համար:

НАБУХАНИЕ — ՈՒՌՉՈՒՄ, ջրի հետ փոխազդեցության ժամանակ կավային ապարների ծավալը մեծացնելու ունակություն, որը բացատրվում է տվյալ վիճակում ապարների ջրակլանման հակումով, մասնավորապես ջրի օսմոտիկ ներծծմամբ: Իր հերթին, օսմոտիկ ճնշումը պայմանավորվում է ապարի կազմությամբ և կառուց-վածքով, փոխանակային կատիոնների և ապարի վրա ներգործող ջրի բաղադրու-թյամբ: Ու. բնութագրվում է խոնավության աստիճանով (ապարի նմուշի լրիվ ուռչ-ման ժամանակ ներծծած ջրի քանակով), ուռչած նմուշում ստեղծված ճնշմամբ (ուռչման ճնշմամբ) և ուռչման մեծությամբ (ուռած նմուշի ծավալի կամ բարձրու-թյան և նրա սկզբնական ծավալի կամ բարձրության հարաբերությամբ): Առավել մեծ Ու. դիտվում է մոնոմորֆիզմիտային կավերի մոտ:

НАВЕСКА — ԿՇՈՒՒԿ, նյութի (ապարի) նմուշի նվազագույն քանակ, որն աճ-հրածեշտ է տարբեր բնույթի տարրալուծությունների համար:

НАГНЕТАНИЕ (НАЛИВ) — ՆԵՐՄՂՈՒՄ (ՆԵՐՎԻՑՔ), ապարների ջրաթա-փանցելիության որոշման մեթոդ, որի դեպքում ուսումնասիրվող ապարների մեջ հորատանցքի կամ շուրֆի միջոցով ներմղվում կամ ազատ լցվում է ջուր, միաժա-մանակ տարվում են ներմղվող ջրի քանակի, մակարդակի (ճնշման) դիտումներ, որոնց օգնությամբ որոշվում են ապարների տեսակարար ջրակլանողականությունը և ծծանցման (ջրաթափանցելիության) գործակիցը: Ներմղումն ազատ ջրիցքից տար-բերվում է նրանով, որ բացի ջրի պլան գրավիտացիոն ուժից, պոմպի միջոցով հորատանցքում ստեղծվում է լրացուցիչ ճնշում:

НАГРУЗКА РАЗРУШАЮЩАЯ — ՔԱՅՔԱՅԻՉ (ԱՎԵՐԻՉ) ԲԵՌՆՎԱԾՔ, ճըն-շում, որը գերազանցում է գրունտի սահմանային դիմադրությունը և այն սկսվում է քայքայվել: Ք. բ. համապատասխանում է գրունտի սողքի և դրոշմի տակից ար-տաւեղմման վրա հասնելու փուլերին:

НАДМЕРЗЛОТНЫЕ ВОДЫ -- ՎԵՐՍՍՈՒՑՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ, ըստ Ն. Ի. Տոլ-տիխիևի (1941), սա. ազատ ջրեր, որոնք տեղադրված են հողագրունտներում և մայրական ապարների հողմահարման կեղևում՝ ջրամերժ հիմք ծառայող սառած ապարների վրա: Վ. ջ. ստորաբաժանվում են 3 խմբի. 1) սեզոնային սառչող ջրեր, 2) մասամբ սառչող ջրեր, 3) բազմամյա հալույթների չսառչող ջրեր: Վերջինները երբեմն օգտագործվում են ջրամատակարարման համար:

**НАДСОЛЕВЫЕ ВОДЫ** — վերսւղԱՅԻՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր (աղաջրեր), որոնք տեղադրված են աղային հաստվածքները ծածկող ապարներում: Եթե վ. ջ. գտնվում են շարժուն վիճակում, ապա աղային հաստվածքները ենթարկվում են ինտենսիվ կարստավորման և դժվարացնում են աղային հնքվ-երի շահագործման պայմանները:

**НАИМЕНЬШЕЕ ГЛАВНОЕ НАПРЯЖЕНИЕ** — ՆՎԱԶՍԳՈՒՅՆ ԳՎԽՍՎՈՐ ԱՐՈՒՄ, հարթ խնդրում՝ երկու, իսկ տարածական խնդրում՝ երեք գլխավոր նորմալ բարումներից նվազագույնը:

**НАЛЕДЬ** — ՍԱՌՑԱԲՈՒՐ, բյրածն սառցակուտակ, որն առաջանում է ցուրտ գոտիներում գետի սառցածածկի կամ երկրի մակերևույթի վրա: Ցակուտիայում գետային ջրերի սառեցումից առաջացած Ս-ները, որոնք կոչվում են նաև տարիններ, զբաղեցնում են տասնյակ և հարյուրավոր կմ<sup>2</sup> մակերես:

**НАМЫВАНИЕ** — ՈՂՈՂԱԿՈՒՏԱԿՈՒՄ, ծովային (լճային, գետային) ալիքներով և հոսանքներով տեղափոխվող մտվածքների կուտակում:

**НАПОР НАД КРОВЛЕЙ** — վերսւղԱՍՍՍՎԱՅԻՆ ԾՆԾՈՒՄ, ջրատար ապարների ջրամերձ առաստաղից հաշված այն բարձրությունը, որին ճնշումնային ջրերը հասնում են հորատանցքերում, ջրհորերում կամ ապարների ճեղքերում: Երբևեմ՝ օգտագործվում է որպես «ճնշում» տերմինի հոմանիշ, որը ճիշտ է: Հոմանիշ՝ «Ճնշումնային բարձրություն» կամ «Պիեստիկ բարձրություն» հնացած տերմինները:

**НАПОРНАЯ ВЫСОТА (ПИЭСТИЧЕСКАЯ ВЫСОТА)** — ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ ԲԱՐՋՐՈՒԹՅՈՒՆ (ՊԻԵՍՏԻԿ ԲԱՐՋՐՈՒԹՅՈՒՆ), տե՛ս Напор над кровлей: Հնացած տերմին:

**НАПОРНАЯ (ПЬЕЗОМЕТРИЧЕСКАЯ) ПОВЕРХНОСТЬ** — ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ (ՊԻԵԶՈՄԵՏՐԱԿԱՆ) ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, երևակայական մակերևույթ, մինչ որը ճնշումնային ջրերը կարող են բարձրանալ կամ իրականում բարձրանում են հորատանցքերով և այլ լեռների փորվածքներով: Զրաերկր. քարտեզների վրա Ծ. մ. պատկերվում է հիդրոիզոպիեզների (պիեզոիզոբիպսերի) միջոցով: Հոմանիշ՝ արտեզյան մակերևույթ:

**НАПОРНО-БЕЗНАПОРНЫЙ ПОТОК** — ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ-ՈՉ ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ ՀՈՍՔ, ծծանցման հոսք, որն իր շարժման ճանապարհին տեղ-տեղ ունի ազատ մակերևույթ, իսկ որոշ տեղերում ձեռք է բերում զգալի ճնշում: Ծ.-ո. ճ. հ. բնորոշ է փոփոխական հատտության միջշերտային ջրհոսքերին, որոնք տեղ-տեղ «ճնշվում են» ծածկի ջրամերձ ապարների հատակի իջեցումներով:

**НАПОРНЫЕ ВОДЫ** — ԾՆԾՈՒՄՆԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода напорная:

**НАПОРНЫЙ ГРАДИЕНТ (ГИДРАВЛИЧЕСКИЙ ГРАДИЕНТ, ПЬЕЗОМЕТРИЧЕСКИЙ УКЛОН)** — ԾՆԾՄԱՆ ԳՐԱԳԻԵՆՏ (ՀԻԴՐԱՎԼԻԿ ԳՐԱԳԻԵՆՏ, ՊԻԵԶՈՄԵՏՐԱԿԱՆ ԹԵՒՑՈՒԹՅՈՒՆ), ստ. ջրերի ճնշման անկման մեծությունը

(չափը) ծծանցման միավոր ճանապարհի վրա: Հոմանիշ՝ հոսքի գրադիենտ, ճնշման թեքություն:

НАПОРНЫЙ (АРТЕЗИАНСКИЙ) ИСТОЧНИК — ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ (ԱՐՏԵՉՅԱՆ) ԱՂԲՅՈՒՐ, ճնշումնային (արտեզյան) ջրերի բնական ելք՝ ակնհայտ վերընթաց շարժումով:

НАПОРНЫЙ ПОТОК — ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ ՀՈՍՔ, ճնշման տակ կատարվող հեղուկի շարժում:

НАПРЯЖЕНИЕ ГИДРОДИНАМИЧЕСКОЕ — ԶՐԱԳԻՆԱՄԻԿ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, լարվածություն, որն առաջանում է ջրով հագեցած ապարում արտաքին ճնշման փոփոխության կամ հոսքի ճանապարհին ապարի ջրաթափանցելիության փոփոխության հետևանքով:

НАПРЯЖЕНИЕ ДОПУСКАЕМОЕ — ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԼԱՐՈՒՄ, փորձի տըվյալներով սահմանվող նորմատիվ մեծություն, որը հավասար է տվյալ գրունտի սահմանային (քայքայիչ) լարվածության և նրա համար ընդունված ամրության պաշարի հպարերությանը: Տարբերում են ձգման, սեղմման, կտրման (խզման), ճզման և այլ թ. 1-ներ: Հոմանիշ՝ սահմանային բեռնվածք:

НАПРЯЖЕННОЕ СОСТОЯНИЕ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԼԱՐՎԱԾ ՎԻՃԱԿ, գրունտի վիճակ, որը բնութագրվում է նրա ցանկացած տարրական մակերեսի վրա նորմալ և շոշափող լարվածությունների առկայությամբ:

НАРЗАН — ՆԱՐՋԱՆ, Կովկասում ածխաթթվային ջրերի աղբյուրների տեղական անվանում: Ածխաթթվային ջրերն ունեն տարբեր տեղական անվանումներ. Բուրյաթ-Մոնղոլիայում՝ արշան (արսան), Կարպատներում՝ կլաս (կամ բուրկոտ), Վրաստանում՝ մաջարիձղալի (կամ մժագեձղալի), Հայաստանում՝ թթու ջուր ևն:

НАСЫЩЕНИЕ ПОРОДЫ ВОДОЙ — ԱՊԱՐԻ ԶՐԱՀԱԳԵՑՈՒՄ, ապարում եղած բոլոր ծակոտիների, ճեղքերի և այլ դատարկությունների լրիվ ջրահագեցում:

НАСЫЩЕННЫЙ ПАР — ՀԱԳԵՑԱԾ ԳՈԼՈՐՅԻ, գոլորշիացող հեղուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող գոլորշի: Հավասարակշռության վիճակում ժամանակի միավորի ընթացքում հեղուկից գոլորշիացող մոլեկուլների թիվը հավասար է գոլորշուց հեղուկի անցնող մոլեկուլների թվին:

НАСЫЩЕННЫЙ РАСТВОР — ՀԱԳԵՑԱԾ ԼՈՒԾՈՒՅԹ, լուծվող նյութերի (աղերի) ավելցուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող լուծույթ: Զերմության բարձրացմանը զուգընթաց Հ. 1-ում աղերի պարունակությունն ավելանում է, իսկ լուծված գազերինը՝ նվազում:

НАТЕКИ — ՄԱԿԱՀՈՍՈՒԿՆԵՐ, մակահոսուկային միներալային գոյացումներ, որոնք առաջանում են բաց մակերևույթով հոսող լուծույթների որոշ բաղադրատարրերի անջատման (նստեցման) հետևանքով: Քարանձավներում և ստ. լեռնային

փորվածքներում Մ. ներկայացված են ստալագմիտների և ստալակտիտների ձևով և առաջանում են ներթափանցող ջրերից կրաքարի նստեցման հաշվին: Հանդիպում են նաև այլ ձևի (բողբոջաձև, գալարաձև) Մ., որոնք ունենում են կենսալպին և շտալադանստագայթային (ոսպիալ) կառուցվածք: Նման Մ. բնորոշ են գորշ և կարմիր երկաթաքարերի, սպալի, մալախիտի ևնի համար: Ավելի շատ Մ. առաջանում են գեյզերների և տաք ջրերի աղբյուրների նստվածքներում, որոնց լուծույթները հազեցած են ածխաթթվային կալցիումով:

НАЧАЛЬНЫЙ ГРАДИЕНТ НАПОРА — ԾՆՇՄԱՆ ՍԿՋԲՆԱԿԱՆ ԳՐՈՒՌԻԵՆՏ, ճնշման գրադիենտի արժեք, որի գերազանցումը հանգեցնում է կավային ապարներում ջրի ծծանցմանը:

НЕДОУПЛОТНЕННОЕ СОСТОЯНИЕ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԹԵՐՈՍԻՏ ՎԻՇԱԿ, փուխր գրունտի բնական խտացվածության վիճակ, որի դեպքում գրունտի ծակոտկենությունը գերազանցում է բնական բեռնվածքի ենթարկված (խախտված) գրունտի ծակոտկենությունը:

НЕДОСТАТОК НАСЫЩЕНИЯ — ՀԱԳԵՑՄԱՆ ՊԱԿԱՍ, տե՛ս Дефицит насыщения (упругости):

НЕЙТРАЛЬНОЕ ДАВЛЕНИЕ — ՉԵԶՈՔ ԾՆՁՈՒՄ, ջրհազեցած ապարի ծակոտիկային ճնշման հավասարակշռված վիճակը ջրի արտաքին ճնշման հետ:

НЕЙТРАЛЬНОЕ НАПРЯЖЕНИЕ — ՉԵԶՈՔ ԼԱՐՈՒՄ, փուխր ջրհազեցած գրունտի վրա բեռնվածքով ստեղծվող լարման այն մասը, որն ընկալվում է ծակոտիկային ջրի կողմից գրունտի համընդհանուր ամրացման (կոնսոլիդացման) փուլում:

НЕМЕЦКИЙ ГРАДУС ЖЕСТКОСТИ — ԿՈՇՏՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՍՏԻՄԱՆ, տե՛ս Жесткость воды:

НЕНАПОРНЫЕ ВОДЫ — ՈՉ ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ (ԾՆՇՈՒՄԱԶՈՒՐԿ) ԶՐԵՐ, տե՛ս Безнапорные подземные воды:

НЕОДНОРОДНАЯ ВОДОНОСНОСТЬ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՍԵՌԻ ԶՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ապարների ջրատարության անհավասարաչափություն, որը պայմանավորված է նրանց ծակոտկենության և ջրաթափանցելիության անհամասեռությամբ:

НЕПОДВИЖНЫЕ (ЗАСТОЙНЫЕ) ПОДЗЕМНЫЕ ВОДЫ — ԱՆՇԱՐԹ (ՎԱՆԳՈՒՆ) ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ, հարաբերակաճորեն անշարժ գրավիտացիոն ջրեր, որոնք կարող են գտնվել. 1) ապարների ներփակ ծակոտիներում ու դատարկություններում, 2) համապարփակված ջրատար ապարներում (ոսպնյակներում, մոլդաներում (տաշտափուներում), սեպաձև վերջացող շերտերում, ջրամերձ տեկոխախտումներով գոտեվորված երկր. կառուցվածքներում ևն):

**НЕРАВНОМЕРНАЯ ОСАДКА** — ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ՆՍՏՈՒՄ, հիմնատակի կամ կառույցի որևէ մասի նստում, որը կառույցի տարբեր տեղամասերում միատևսակ չէ: Ի տարբերություն հավասարաչափ նստման, Ա. ն. անմիջապես հանգեցնում է մեծամասամբ խզումներով ուղեկցվող ձևախախտումների:

**НЕРАВНОМЕРНОЕ ДВИЖЕНИЕ ПОТОКА ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐՀՈՍՔԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ԾԱՐԺՈՒՄ, ստ. ջրհոսք, որի շարժման արագությունը փոփոխվում է հոսքի կենդանի կտրվածքի կամ հիդրավիկ թեքության փոփոխության հետևանքով:

**НЕСОВЕРШЕННАЯ СКВАЖИНА (КОЛОДЕЦ)** — ՈՉ ԿԱՏԱՐՅԱԼ ՀՈՐԱՏԱՆՑՔ (ԶՐՀՈՐ), հորատանցք (ջրհոր), որը ամբողջապես չի հատել ջրատար հորիզոնը կամ ջրընդունիչ մասը փոքր է ջրատար հորիզոնի հաստությունից:

**НЕСУЩАЯ СПОСОБНОСТЬ ГРУНТА** — ԳՐՈՒՆՏԻ ԿՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Расчетное сопротивление грунта:

**НЕУСТАНОВИВШЕЕСЯ ДВИЖЕНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԶԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ ԾԱՐԺՈՒՄ, ստ. ջրերի շարժում, որի դեպքում հոսքի ծախսը, ուղղությունը, հիդրավիկ թեքությունն ու արագությունը ժամանակի ընթացքում փոփոխվում են:

**НЕУСТАНОВИВШИЙСЯ УРОВЕНЬ** — ԶԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ ՄԱԿԱՐԴԱԿ, ստ. ջրերի մակարդակ, որի դիրքը ժամանակի ընթացքում փոփոխվում է:

**НЕФТЯНЫЕ ВОДЫ (ВОДЫ НЕФТЯНЫХ МЕСТОРОЖДЕНИЙ)** — ՆԱՎԹԱՅԻՆ ԶՐԵՐ (ՆԱՎԹԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԶՐԵՐ), Ապօքային հնքվ-երում տարածված ստ. ջրեր: Տարբերում են եզրային (եզրագծային), թևային (կողային), միջանկյալ և հատակային ջրեր: Ն. ջ. սովորաբար աչքի են ընկնում բարձր հանքայնացումով և քլոր-կալցիումային, քլոր-կալցիումային-մագնիումային կամ ջրա-կարբոնատ-նատրիումային քիմ. բաղադրությամբ: Հաճախ նրանք պարունակում են մեծ քանակությամբ յոդ, բրոմ, բոր, ռադիում, ստրոնցիում, բարիում և այլ տարրեր, ինչպես նաև օրգ. նյութեր, կենսածին ազոտ, ծծմբաջրածին, ածխաթթու կն:

**НИВАЛЬНЫЙ КЛИМАТ** — ՆԻՎԱԼ ԿԼԻՄԱ, ցուրտ կլիմա, որը բնութագրվում է ձյան տեսքով առատ տեղումներով: Սովորաբար ձյունը չի հասցնում տարվա տար ժամանակահատվածում հալել-գոլորշիանալ և, տարեց-տարի կուտակվելով, առաջացնում է ձյունածածկոցներ ու սառցաշերտեր: Ն. կ. բնորոշ է հյուսիսային լայնություններին և լեռնային մարզերին:

**НИВАЦИЯ** — ՆԻՎԱՅԻՆԱ, ապարների վրա ձյունածածկի քայքայիչ գործունեությունը, որը սառնամանիքային հողմահարման (ձյան հալման ու սառեցման անընդհատ հերթափոխության) արդյունք է: Ն. նպաստում է լեռնալանջերին, հատկապես ձյան գծին մոտ, խոտոչների, ակունների ու կրկեսների առաջացմանը: Հոմանիշ՝ ձյան ողողամաշում:

**НИЖНИЙ ДЕНУДАЦИОННЫЙ УРОВЕНЬ** — ԼԵՐՎԱՑՄԱՆ (ՏԵՂԱՏԱՐՄԱՆ) ՍՏՈՐԻՆ ՄԱԿԱՐԳԱԿ, լերկացման (տեղատարման) ստորին ասիման, որը, ինչպես ընդունված է հաշվել, համընկնում է ողողամաշման ընդհանուր հիմքի՝ Համաշխարհային օվկիանոսի մակարդակի հետ: Իրականում Լ. և մ. գտնվում է օվկիանոսի մակարդակից էլ ներքև, քանի որ ծովի ափամաշումը, ծովային ծանծաղուտներում գետերի ողողամաշումը, ինչպես նաև ստ. տեղատարումը նվազ չափով յրսերովում են այդ մակարդակից ցած (տե՛ս Базис эрозии):

**НИЖНИЙ ПРЕДЕЛ ПЛАСТИЧНОСТИ (ГРАНИЦА РАСКАТЫВАНИЯ ГРУНТОВ)** — ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ՍԱՀՄԱՆ (ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԳԼԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆ), տե՛ս Пластичность глинистых пород:

**НИЖНЯЯ ВОДОРАЗДЕЛЬНАЯ ТОЧКА ГРУНТОВОГО ПОТОКА**—ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՍՏՈՐԻՆ ԶՐԲԱԺԱՆԱՅԻՆ ԿԵՏ, գրունտային հոսքի իջույթային (դեպրեսիոն) կորի ծալատեղի կրիտիկական (ըստ Ե. Պրինցի) կամ կոլմիմացիոն (ըստ Վ. Ն. Շելկաչովի) կետ, որը գտնվում է հորատանցքի կամ ջրհորի իջույթային ձագարի հոսանքով ներքև ողղված թևի վրա:

**НИСХОДЯЩИЕ ИСТОЧНИКИ** — ՎԵՐԸՆԹԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնք սնվում են գրունտային կամ ոչ անշումնային ջրերով: Զրի շարժումը կատարվում է վարընթաց ուղղությամբ՝ ջրատար հորիզոնի սնման մակերևույթից դեպի ցամաքորդ հանդիսացող աղբյուրի ելքը:

**НИТРАТНЫЕ ВОДЫ** — ՆԻՏՐԱՏԱՏԻՆ ԶՐԵՐ, ջրեր, որոնց քիմ. բաղադրության մեջ անիոններից գերիշխում է  $\text{NO}_3^-$  իոնը:

**НОВОСАДКА** — ՆՈՐԱՆՍՎԱԾԲ, աղեր, որոնք լճային աղաջրից անջատվում են որոշակի սեզոնի ընթացքում: Ըստ առաջացման ժամանակի առանձնացվում են Ն-ների 3 տարբերակներ. ամառային՝ գոյանում է գոլորշիացման հետևանքով, աշնանային՝ գոյանում է աղաջրի ստեղծման հետևանքով, և ձմեռային՝ գոյանում է աղաջրի գերստեղծման հետևանքով: Կախված լճային աղաջրի կազմից և նրա վածքատառաջացման սեզոնից, Ն-ի կազմը կարող է տարբեր լինել (կերակրի աղ, գլաուբերային աղ, սոդա ևն): Լճային աղաջրի խտության նվազման կամ ջերմային փոփոխությունների դեպքում Ն. կարող է մասամբ կամ իսպառ տարրալուծվել: Սակայն լճի կալուն ռեժիմի դեպքում, տարեցտարի կուտակվելով, Ն-ի հզորությունը կարող է հասնել տասնյակ սմ-երի: Ն. հանդիսանում է որոշ աղաջրային լճերի հիմնական շահագործողական շերտը:

**НОЗДРЕВАТОСТЬ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ՉԵՂՏՈՒԹՅՈՒՆ (ՍՊՈՒՆԳԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ), նույնն է, ինչ ապարների փոքր չափերի խոռոչափորությունը (տե՛ս Кавернозность горных пород):

**НОРМА ОСУШЕНИЯ** — ՉՈՐԱՑՄԱՆ ՆՈՐՄ, չորացվող տարածքներում գրունտային ջրերի մակարդակի իջեցում այն չափով, որն անհրաժեշտ է գյուղատնտ. կոլտնտրաների նորմալ աճի, ինչպես նաև քաղաքացիական ու արդյունաբերական շինարարության անվտանգ ծավալման համար:


**НОРМАЛЬНОЕ НАПРЯЖЕНИЕ** — ՆՈՐՄԱԼ ԼԱՐՈՒՄ, առաձգական մարմնի լարում, որը գործում է հետազոտվող կտրվածքին ուղղահայաց:

**НОРМЫ ВОДОПОТРЕБЛЕНИЯ** — ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ, ջրի նվազագույն քանակ (լ/վրկ, մ<sup>3</sup>/օր, մ<sup>3</sup>/ժամ), որն անհրաժեշտ է մարդու նորմալ կենսագոյության և տնտ. գործունեության համար: Ջ. Գ. սահմանվում են հաշվի առնելով մեկ մարդու խմելու և տնտ. կարիքների (վերջինները էապես կախված են տեղանքի բնակլիմայական պայմաններից և ուրբանիզացիայի աստիճանից), արդյունաբերության միավոր արտադրանքային, ռոզման միավոր տարածքի, մեկ գլոխ անասունի համար անհրաժեշտ ջրաքանակներից:

**НОРМЫ КАЧЕСТВЕННОГО СОСТАВА ВОДЫ** — ՋՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲԱՂԱԳՐԱԿԱԶՄԻ ՆՈՐՄԵՐ, ջրի միավոր ծավալում ֆիզ. և քիմ. խտնորոգների (հանքային, օրգ. ու գազային), ինչպես նաև մանրէների թույլատրելի պարունակության ցուցանիշներ: Ջ. ո. բ.ն., որոնք սահմանվել են նախկին ԽՍՀՄ Պետստանդարտի կոդմից, ելնելով ջրօգտագործման նպատակներից (խմելու, տնտ., բուժական, տեխնոլոգիական ևն), միանգամայն տարբեր են:

**НУЛЕВАЯ ПЛОСКОСТЬ СРАВНЕНИЯ** — ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՋԵՐՈՅԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, տե՛ս *Плоскость сравнения напоров*:

**НУМЕРАЦИЯ ПРИРОДНЫХ ВОД** — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄ, լիստ քիմ. բաղադրության ջրերի համակարգման գծապատկերային եղանակ, որը կատարվում է Ն. Ի. Տոլստիխինի կողմից առաջարկված գրաֆիկ-քառակուսու օգնությամբ (տե՛ս *График-квадрат*):



**ОБВАЛЫ** — ՓԼՎԱԾՔՆԵՐ, լեռների և ձորերի մեծաթեք ու զտիթափ լանջերին առաջացող գրավիտացիոն գործընթացներ, որոնք դիտվում են խոշոր, հաճախ հսկայական չափերի արարազանգվածների հանկարծակի փլուզման ձևով: Հողմահարման հետևանքով զտիթափ լանջերի սպարները կորցնում են կոշտ կապերը և գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ, երբեմն նաև սեյսմիկ ու տեխնածին ցնցումների հրահրմամբ, պոկվում են լանջերից, գլորվում ու զարնվում են լանջն ի վար, փշրվում ու փշրում են սպարների ցցվածքները և, ի վերջո, կոտակվում են լանջերի ստորոտներին, ձորերում ու հովիտներում: Վերջին դեպքում Փ. ժամանակավորապես պատճենշում են գետային հոսքը, որպես կանոն, ավարտվելով հեղեղումներով:

**ОБВАЛОВАНИЕ** — ԹՄԲԱՊԱՏՈՒՄ, հողաթմբեր (հողապատնեշներ), որոնք կառուցվում են գետափերին և ջրամբարներին հարող տարածքները ջրակալումից պաշտպանելու նպատակով:



**ОБВОДНЕНИЕ** — ՋՐԱՐԲԱՑՈՒՄ, ջրասակավ շրջաններում գյուղատնտ. ու կամուսակ-կենցաղային նպատակների համար ջրապահովվածության բարձրացումը՝ տեղի մակերևութային հոսքն ու ստ. ջրերն օգտագործելու, ինչպես նաև ջրաստ

շրջաններից ազատ ռեսուրսներ տեղափոխելու միջոցով: Տեղական մակերևութային հոսքը, մասնավորապես գարնանապահ վարարումները ուցիոնալ օգտագործելու համար կառուցվում են ջրամբարներ ու լճակներ, արհեստականորեն ավելացվում են ստ. ջրերի պաշարները (տե՛ս Запасы подземных вод искусственные) ևն:


**ОБВОДНЕНИЕ НЕФТЯНОГО (ГАЗОВОГО) ПЛАСТА — ՆԱՎԹԱՅԻՆ (ԳԱ- ՋԱՅԻՆ) ԹԵՐՏԻ ԶՐԱԿԱԱՆՈՒՄ, 1.** Նավթային (գազային) շերտի աստիճանաբար ջրակալում՝ հարակից ջրատար շերտերից ջրի ներխուժման հետևանքով, որը տեղի է ունենում նավթի (գազի) շահագործման և քանակի (ճնշման) նվազման պատճառով: 2. Ն. 2. շ., որը տեղի է ունենում հորատանցքերով բացված վերին հորիզոնների ջրերի հաշվին, եթե նրանք հուսալի մեկուսացված (ցեմենտացված) չեն: 3. Արհեստական ջրակալում (ֆլյուդինգ), որը կատարվում է նավթային (գազային) շերտում ճնշումը պահպանելու նպատակով:

**ОБЕЗВРЕЖИВАНИЕ ВОДЫ — ԶՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՈՒՄ,** բնական ջրի որակի բարելավման միջոցառումներից մեկը, որը կիրառվում է հիվանդաբեր մանրէների վերացման համար: Զ. վ. կատարվում է քլորացման, օզոնացման, ուլտրամանուշա- կազույն ճառագայթներով ու ծանր մետաղների (պղինձ, արծաթ) աղերով ախտահանման և այլ միջոցներով:

**ОБЕЗЖЕЛЕЗИВАНИЕ ВОДЫ — ԶՐԻ ԵՐԿԱԹԱԶԵՐԾՈՒՄ,** բնական ջրերից երկաթի միացությունների հեռացում, որոնք պարունակվում են մեծ քանակությամբ (մինչև 10 մգ/լ և ավելի) լուծված և կոռիդ վիճակներով: Երկաթի պարունակու- թյունը վատացնում է ջրի ֆիզ. հատկանիշները (գույնը, համը, հոտը, վճիտություն- ճը), մետաղյա խողովակաշարերում (երկաթային մանրէների կենսագործունեությամբ պայմանավորված) առաջացնում է խցանումներ, գցում է արդյունաբերական ապ- րանքների որակը ևն: Կոմունալ-կենցաղային նպատակների համար օգտագործվող ջրում երկաթի թույլատրելի պարունակությունը կազմում է 0,3 մգ/լ, մետաքսի, բամբակեղենի, վիսկոզների արտադրությունում՝ 0,1—0,2 մգ/լ, արհեստական ման- րաթելերի, լուսանկարչական ժապավենների արտադրություններում, դեղագործու- թյունում՝ 0,03 մգ/լ: Զրից երկաժխաթթվային երկաթը հեռացվում է թանձրանոցում օդահագեցումով, որի գործընթացում առաջանում է երկաթօքսիդի հիդրատի անլու- ծելի նստվածք.



Թթու ջրերի երկաթազերծումը օդահագեցումով հնարավոր չի իրագործել: Այդ դեպ- քում (ինչպես նաև ջուրը լիովին երկաթազերծելիս) կիրառվում է կրալուցում.



Թույլ պղտորության ջրերի երկաթազերծումը կատարվում է կատիոնացումով (տե՛ս Катнирование воды), իսկ օրգ. միացությունների պարունակության դեպքում՝ մակարդումով (կոագուլյացիայով) և քլորացումով (հետագա ապաքլորացումով):

**ОБЕЗЗАРАЖИВАНИЕ ВОДЫ — ԶՐԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄ (ԱՆՏՍԱՀԱՆՈՒՄ),** խմելու և տնտ. նպատակների համար օգտագործվող ջրի մաքրումը հիվանդածին

մանրէներից: Ջրի միջոցով տարածվող հիվանդածին (քրոմաբեր) մանրէները, ի տարբերություն ոչ հիվանդածին անվնաս մանրէների (փտամանրէների), վարակազերծման ավելի հեշտ են ենթարկվում: Այդ պատճառով ձգտում են ոչ թե խիստ դժվարին լինակատար մանրէազերծմանը, այլ միայն հիվանդածին կենսունակ մանրէների ոչնչացմանը, որով ապահովվում է Ջ. վ.: Ջրի մաքրման սովորական եղանակները (տե՛ս Обезвреживание воды) միայն նվազեցնում են հիվանդածին մանրէների քանակը, սակայն խնելու համար ջուրը միանգամայն անվնաս դարձնելու նպատակով հարկավոր է այն վարակազերծման ենթարկել:

Ջ. վ. իրագործվում է ջրնուղ կայանների կողմից բոլոր այն դեպքերում, երբ ջրամատակարարման աղբյուրները սանիտարահամաճարակաբանական տեսակետից անհուսալի են: Ջ. վ. կատարվում է ջրի վրա ազդելով քլորով (քլորացում), օզոնով (օզոնացում), ուլտրամառնալիզազույն ճառագայթներով (ճառագայթա-հարություն), գերձաղնով, ծանր մետաղների (արծաթ, պղինձ ևն) աղերով և բարձր ջերմությամբ (եռացում): Գործնականում ամենուրեք լայնորեն կիրառվում է միայն քլորացումը՝ այդ եղանակի հուսալիության, էժամության, ինչպես նաև քլորացման-ապաքլորացման հեշտության շնորհիվ: Հոմանիշ՝ Ջրի վնասազերծում (տե՛ս Обезвреживание воды):

՝ ОБЗОРНАЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ КАРТА — ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ՋՐԱԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, փոքրամասշտաբ (1:1.000.000 և ավելի փոքր) քարտեզ, որի վրա արտահայտվում են ուսումնասիրվող տարածքի ջրակերպը, ընդհանուր բնութագրի համար անհրաժեշտ հիմնական առանձնահատկությունները: Ա. ջ. ք. ջրամատակարարման նախազմման համար բավարար հիմք չի կարող հանդիսանալ, սակայն հավաստի տվյալներ է պարունակում արտեզյան կամ գրունտային ջրերի առկայության, դրանց օգտագործման հնարավորությունների և այլնի մասին:

ОБЛАСТЬ БЕССТОЧНАЯ — ՀՈՍՔԱԶՈՒԻՐԿ ՄԱՐԶ, ներքամաբային հոսքի մարզ, որը գետային ցանցով կապված չի համաշխարհային օվկիանոսի հետ (օր., Կասպից ծովի և Արալյան լճի ավազանները): Հ. մ-երը բնորոշ են չորային գոնաներին, ինչպես նաև տափարակ, գոգավոր, թույլ կտրտված ռելիեֆ ունեցող տարածքներին:

ОБЛАСТЬ ВЛИЯНИЯ — ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՐԶ, 1. Լեռնային գործում՝ լեռնային փորվածքը շրջապատող ապարների մարզ, որում փորվածքի անցման հետևանքով լարումների վերաբաշխում է կատարվում: 2. Ջրակերպարանությունում՝ ջրատար հորիզոնի վրա ջրհան կառույցի ազդեցության մարզ, որի չափերը որոշվում են ազդեցության շառավիղով (տե՛ս Раднус влияния):

ОБЛАСТЬ ВЫКЛИНИВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ (ՍԵՊԱԶԵՎ ՎԵՐԶԱՑՄԱՆ) ՄԱՐԶ, ջրատար ապարների տարածման տեղամաս, որտեղ ստ. ջրերը դուրս են գալիս երկրի մակերևույթ (բեռնաթափվում են)՝ աղբյուրների, ճահնացման կամ թացույթների տեսքով: Ա. ջ. մ-երը բնութագրվում են փարթամ բուսականությամբ:

ОБЛАСТЬ ДРЕНАЖА ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՑԱՄԱՔՈՒՐԴԻ ՄԱՐԶ, տեղամաս, որտեղ ստ. ջրերը բնական կամ արհեստական ճա-

նապարհով դուրս են գալիս երկրի մակերևույթ կամ բեռնաթափվում են մակերևույթային ջրհոսքերի և ջրավազանների մեջ:

**ОБЛАСТЬ ИНФИЛЬТРАЦИИ** — ՆԵՐԾԾՄԱՆ ՄԱՐԶ, ջրատար ապարների տարածման տեղամասեր, որոնց սամմաններում տեղի է ունենում մակերևույթային ու մթնոլորտային ջրերի ներթափանցումը (ներծծումը) ապարների մեջ:

**ОБЛАСТЬ ПИТАНИЯ ВОДОНОСНОГО ПЛАСТА** — ԶՐԱՏԱՐ ԾԵՐՏԻ ԱԸՆՄԱՆ ՄԱՐԶ, 1. Երկրի մակերևույթի այն տարածքը, որի սամմաններում մթնոլորտային տեղումները և մակերևույթային ջրերը հոսում են դեպի տվյալ ջրատար շերտի կլանման մարզը: 2. Զրատար հորիզոնի այն տարածքը, որտեղ տեղի է ունենում մակերևույթային ջրերի ներթափանցումը (կլանումը): Ժամանակակից սմման մարզը միաժամանակ հանդիսանում է ամբողջ ավազանի ջրատատիկ ճնշման հաղորդման մարզ:

**ОБЛАСТЬ РАЗГРУЗКИ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԲԵՌՆԱՓՄԱՆ ՄԱՐԶ, ստ. ջրերի երկրի մակերևույթ դուրս գալու տեղամաս, որտեղ այդ երևույթը կարող է արտահայտվել աղբյուրների, ճահճացումների ու թացույթների տեսքով կամ գետերի ու լճերի մեջ առաջին հայացքից չնկատվող բեռնաթափումով: Ոչ լրիվ համարժեք հոմանիշ՝ ստ. ջրերի սեպաձև վերջացման մարզ (տե՛ս Область выклинивания подземных вод):

**ОБЛАСТЬ СКЛАДЧАТАЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ** — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶ, միմյանց հետ այս կամ այն չափով կապված ջրաերկրբազանվածների, ներլեռնային և միջլեռնային արտեզյան ավազանների համակարգ:

**ОБЛЕКАЮЩИЕ (ПЕРЕНАСЫЩЕННЫЕ) ВОДЫ** — ԾԱԾԿԱՊԱՏՈՂ (ԳԵՐԽՈՐՆԱՎԱՑՆՈՂ) ԶՐԵՐ, ջրեր, որոնք ապարի մասնիկները ծածկապատում են բոլոր կողմերից և համարյա վերացնում են նրանց կապակցվածությունը: Դրանից ապարները ավելի շարժուն են դառնում, դիտվում են հոսագրունտներին հատուկ երևույթներ:

**ОБЛЕССОВАНИЕ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԼՅՈՍԱՑՈՒՄ, բնական պայմաններում լյուսագորկ ապարների կողմից այնպիսի հատկանիշների ու հատկությունների ձեռք բերում, որոնք բնորոշ են լյուսային ապարներին:

**ОБМЕННАЯ АДСОРБЦИЯ ИОНОВ** — ԻՈՆՆԵՐԻ ՓՈՍՏԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՆՏՈՒՄ, բնահողերում, կավերում և այլ մանրահատիկ ապարներում պարունակվող որոշ քիմ. տարրերի տարրալուծվելու ընդունակությունը չեզոք աղի լուծույթի հետ շփվելիս (ստերիլ ջրերում դրանք չեն տարրալուծվում): Այդ դեպքում չեզոք աղի կատիոնների մի մասը կլանվում է ապարի կողմից և փոխարենը խիստ համամասնորեն (համարժեք քանակով) լուծույթ է վերադարձվում այլ կատիոններ (տե՛ս Обменные катионы):

**ОБМЕННЫЕ КАТИОНЫ** — ՓՈՍՏԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՏԻՈՆՆԵՐ, բնահողերում և նրբահատիկ ապարներում պարունակվող կատիոններ, որոնք ընդունակ են համար-

ժեր քանակով փոխանակվել լուծույթի կատիոնների հետ: Ըստ Կ. Կ. Հեյդրույցի, Փ. Կ. ուղղակիորեն կապված են բնահողերի և ապարների կոլոիդ մասի հետ: Տարբեր կատիոններ տարբեր ինտենսիվությամբ են կլանվում ու անջատվում կոլոիդների կողմից, որը պայմանավորված է լուծույթի և Փ. կ-ի բաղադրության հարաբերակցության ֆիզքիմ. բարդ կախվածությամբ: Այդ կախվածությունը, որի բնույթը դեռևս լիովին չի ուսումնասիրված, պայմանավորված է լուծույթի խտությամբ և նրանում Փ. կ-ի պարունակությամբ, տվյալ կատիոնի լիցքով, նրա շառավիղով, բևեռացման հատկանիշներով ևն:

ОБРАТНЫЙ УКЛОН ВОДОНОСНОГО ПЛАСТА — ՋՐԱՏԱՐ ԾԵՐՏԻ ՀԱՎԱՌԱՎ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ, ջրամերձ հիմքի հակառակ թեքությունը գրունտային հոսքի նկատմամբ, որը կարող է դիտվել լոկալ տեղամասերում:

ОБСАДКА СКВАЖИНЫ — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԱՄՐԱՎԱՊՈՒՄ, հորատանցքի պատերի ամրակապում հորատման խողովակների միջոցով: Երբեմն Հ. ա. կատարվում է զուտ ջրաերկրք. նպատակներով՝ ջրատար հորիզոնները փակելու կամ միջանցից մեկուսացնելու համար:

ОБХОДНАЯ ФИЛЬТРАЦИЯ — ԾՐՋԱՆՑԻՎ ԾՄԱՆՑՈՒՄ, ջրի ծծանցում, որը կատարվում է ջրամբարներից (վերին ջրամասից դեպի ներքին ջրամաս)՝ ջրը ջանցելով պատվարի ու կողային արմատական ապարների հարադրումները (կոնտակտները):

ОБЩАЯ ЖЕСТКОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Жесткость воды:

ОБЩИЙ БАЗИС ЭРОЗИИ — ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱՄԱՎԱՐՈՒՄ, համաշխարհային օվկիանոսի մակարդակ, որից վերև դիտվում են ողողամաշման ինտենսիվ գործընթացներ:

ОБЪЕМ ОПОЛЗНЯ — ՍՈՂԱՆՔԻ ԾՄՎԱԼ, սողանքային շարժումներով ընդգրկված ապարների զանգվածի ծավալ:

ОБЪЕМНАЯ ВЛАГОЕМКОСТЬ — ԾՄՎԱԼԱՅԻՆ ԽՈՆՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, փույթ ապարի կողմից կլանված ջրի ծավալի հարաբերությունը նրա ծավալին:

ОБЪЕМНАЯ ВЛАЖНОСТЬ ГОРНОЙ ПОРОДЫ — ԱՊԱՐՆԵՐԻ ԾՄՎԱԼԱՅԻՆ ԽՈՆՆԱՎՈՒԹՅՈՒՆ, ապարի նեղքերում, ծակոտիներում և այլ դատարկություններում եղած ջրի ծավալի հարաբերությունը ապարի ողջ ծավալին՝ արտահայտված %-ներով:

ОБЪЕМНАЯ ДЕФОРМАЦИЯ ПОРОДЫ — ԱՊԱՐԻ ԾՄՎԱԼԱՅԻՆ ՁԵՎԱՆՍԽՏՈՒՄ, ձևախախտված ապարի ծավալի հարաբերությունը նրա սկզբնական ծավալին:

ОБЪЕМНЫЙ ВЕС ВЛАЖНОГО ГРУНТА — ԽՈՆՆԱՎ ԳՐՈՒՆՏԻ ԾՄՎԱԼԱՅԻՆ ԿԾԻՐ, տվյալ ծավալով գրունտի կշռի հարաբերությունը նույն ծավալով ջրի

կշռին՝  $+4^{\circ}$  Ց ջերմային պայմաններում: Խ. գ. ծ. կ. կախված է գրունտի միներալային կազմից, ծակոտկենությունից և խոնավությունից:

ОБЪЕМНЫЙ ВЕС ТВЕРДОЙ ФАЗЫ (СКЕЛЕТА) ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԿԱՐԾՐ ՓՈՒԼԻ (ԿՄԱԽՔԻ) ԾԱՎԱԼԱՅԻՆ ԿԾԻՌ, գրունտի կարծր մասնիկների (կմախքի) կամ բացարձակ չոր գրունտի կշռի հարաբերությունը նույն ծավալով ջրի կշռին՝  $+4^{\circ}$  Ց ջերմային պայմաններում: Թվապես Գ. կ. փ. ծ. կ. հավասար է միավոր ծավալով գրունտի կշռին՝ առանց նրա բնական ծակոտիներում եղած ջրի կշռի: Որքան մեծ է Գ. կ. փ. ծ. կ., այնքան գրունտի ծակոտկենությունը փոքր է և, հետևաբար, նրա խտությունը մեծ է:

ОГОЛОВОК СКВАЖИНЫ — ՀՈՐԱՏԱՆՅՔԻ ԳԼԽԱՄԱՍ, հարմարանքներ, որոնք սարքավորվում են հորատանցքի բերանին (գլխամասին)՝ աղտոտությունների և այլ առարկաների մուտքը բացառելու և ջրհան սարքավորում տեղադրելու համար:

ОДИНОЧНАЯ ОТКАЧКА — ՄԻԱՅՆԱԿ ԱՐՏԱՄՂՈՒՄ, փորձային հորատանցքից (ջրհորից և այլ փորվածքներից) ջրի արտահղում, որի դեպքում ստ. ջրերի մակարդակի դիտումները տարվում են միայն տվյալ հորատանցքում:

ОДНООСНОЕ СЖАТИЕ — ՄԻԱՌԱՆՅՔ ՍԵՂՄՈՒՄ, գրունտի ամրության և ձևախախտման լաբորատոր փորձարկման եղանակ, որի դեպքում նմուշի վրա ներգործում են առանցքային սեղմող ուժով և միաժամանակ տանում են ձևախախտման դիտարկումներ:

ОДНОЖИДКОСТНЫЙ ПОТОК — ՄԻԱՆՆԵՂՈՒԿ (ՀԱՄԱՍԵՌ) ՀՈՍՔ, հաստատուն մածուցիկության համասեռ հեղուկի հոսք:

ОДНОМЕРНОЕ ДВИЖЕНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՄԻԱԶԱՓ ՇԱՐԺՈՒՄ, ստ. ջրերի շարժում, որի դեպքում արագության վեկտորն ունի միայն մեկ բաղադրիչ, հոսքի բոլոր բնութագրումները կախված են միայն մեկ կոորդինատից:

ОДНОЯРУСНЫЕ ОПОЛЗНИ — ՄԻԱՀԱՐԿ ՍՈՂԱՆՔՆԵՐ, սողանքներ, որոնք զարգանում են նրանց առաջացմանը նպաստող ապարների մեկ հորիզոնի առկայության պայմաններում: Այդպիսի սողանքներ սովորաբար հանդիպում են գետային հովիտներում, ծովերի, լճերի ափերին և այլուր: Մ. ս-ի սահքի մակերևույթը հատում է հովտի լանջը սողանքի գլխամասից մինչև ջրի մակարդակը:

ОДОМЕТР — ԾԻՈՄԵՏՐ, փոխար ապարների սեղմելիության որոշման համար օգտագործվող մետաղյա գլան, որը բացառում է գրունտի կողային ընդարձակումը:

ОЗЕРО ПОДЗЕМНОЕ — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԼԻՄ, ստ. ջրեր, որոնք տեղադրված են կարստային խոշոր դատարկություններում և ուղիներում: Նրանց մակերևույթը (հայելին) գերազանցապես ազատ է, որի հետևանքով նման են լճակի:

**ОКИСЛИТЕЛЬНО-ВОССТАНОВИТЕЛЬНЫЙ ПОТЕНЦИАЛ (Eh) — ՕՔՍԻ-**  
**ԴԱՑՄԱՆ-ՎԵՐԱՎԱՆՔՆՄԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ (Eh),** լուծույթներում գտնվող քիմ.  
 տարրերի կամ նրանց միացությունների ակտիվության չափ՝ դարձելի քիմ. գործըն-  
 թացներում, որոնք պայմանավորված են լուծույթներում իոնների լիցքի փոխման հետ:  
 Այդ գործընթացները կոչվում են օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ և տեղի  
 են ունենում որոշ նյութերի կողմից էլեկտրոնների անջատման, մյուսների կողմից  
 դրանց ընդունման շնորհիվ: Էլեկտրոն անջատողը վերականգնողն է, որը դրանով  
 իսկ օքսիդանում է, էլեկտրոն ընդունողը օքսիդացնողն է, որը վերականգնվում է:  
 Ստ. ջրերում առավել ակտիվ օքսիդացող է հանդիսանում լուծված թթվածինը,  
 իսկ որպես հիմնական վերականգնող՝ ծծմբաջրածինն ու մի քանի օրգ. նյութեր:  
 Օ.-վ. պ.-ի մեծություները, որը գերազանցապես չափվում է պոտենցիոմետրա-  
 կան մեթոդով (գերզգայուն պոտենցիոմետրերի միջոցով), արտահայտվում է մի-  
 լիվոլտերով (մվ): Այդ մեծությունը հիմնականում կախված է ջերմությունից, իսկ  
 փակ (մեկուսացած) համակարգերի համար՝ լուծույթը կազմող նյութերի հատկու-  
 թյուններից և նրանց օքսիդացնող-վերականգնող մասերի կոնցենտրացիաներից  
 (ջերմադինամիկ ակտիվությունից): +20° Ց ջերմության պայմաններում այդ կախ-  
 վածությունն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$Eh = E_h^0 + \frac{0,059}{n} \lg \frac{a_{\text{օքս}}}{a_{\text{վեր}}},$$

որտեղ՝  $E_h^0$  -ն համակարգի նորմալ Օ. վ. պ. է,

$n$ -ը ռեակցիայի մասնակցող էլեկտրոնների թիվն է,  $a$  -ն համակարգի օքսիդացնող  
 և վերականգնող մասերի ջերմադինամիկ ակտիվությունն է:

$Eh$ -ի արժեքը կարող է լինել դրական և բացասական: Սովորաբար բնական  
 ջրերում նրա մեծությունը տատանվում է +600 մվ (օքսիդացնող ջրեր) — 200 մվ  
 (վերականգնող ջրեր) սահմաններում: Օ. -վ. պ.-ի մեծությունը հանդիսանում է ջրում  
 լուծված ու փոփոխական վալենտականության բոլոր նյութերի փոխազդեցության  
 արդյունք և իրենից ներկայացնում է լուծույթների հատկությունների կարևոր բնու-  
 թագիր: Բնական ջրերի (այդ թվում ստ. ջրերի)  $Eh$  -ը թույլ է տալիս գնահատել  
 նրանցում լուծված փոփոխական վալենտականության առանձին նյութերի վիճակը և  
 բնական օքսիդացման ենթարկվող ապարների վրա ջրերի ազդեցիվ ներգործության  
 մասին:

**ОКНА ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ,**  
 ջրատար կառուցվածքի տարածքի ոչ մեծ տեղամասեր, որտեղ ճնշումնային ջրա-  
 տար շերտի ջրամբծ ծածկի բացակայության հետևանքով ճնշումնային ջուրը մա-  
 սամբ բեռնաթափվում է, դառնում ազատ մակերևույթ ունեցող գրունտային ջուր:  
 Ջ. պ.-ի միջոցով ճնշումնային ջրերը սնում են գրունտային ջրերին կամ հակառակը՝  
 նպած ինչպիսի փոխհարաբերության մեջ են նրանց մակարդակները:

**ОКОЛООЗЕРНЫЕ РАССОЛЫ И ВОДЫ — ՄԵՐՁԼՇՄԱՅԻՆ ԱՂԱՋՐԵՐ ՈՒ**  
**ՋՐԵՐ,** աղաջրեր ու աղահամ ջրեր, որոնք տեղադրվում են լճային գոգավորության  
 լանջերի արմատական ապարներում, լճի արմատական հիմքից վերև:

**ОКОНТУРИВАНИЕ ВОДОНОСНОГО ГОРИЗОНТА — ՋՐԱՏԱՆ ՀՈՐԻԶՈՆԻ**  
**ԵԶՐԱԳԾՈՒՄ,** ջրատար հորիզոնի տարածման բնական սահմանների որոշումն ու  
 դրանց անցկացումը ջրաներկր. քարտեզների վրա: Ջ. հ. ե. անհրաժեշտ է ստ. ջրերի

պաշարների հաշվարկման և նրանց օգտագործման հնարավորությունների պարզաբանման համար:

ОМБРОФИТЫ — ՕՄԲՐՈՖԻՏԵՐ, քույսեր, որոնց ջրասնունը գրունտային ջրերից չի կախված, այլ կատարվում է ի հաշիվ հողաբուսական շերտի խոնավության և ուղղակիորեն կախված է մթնոլորտային տեղումներից: Օ-ի խմբակցությունը, որը տարածված է անապատային գոտիներում, սերտ կապի մեջ է հողերի մեխ. կազմի և նրանց աղուտացման հետ, որի հետևանքով կարող են ծառայել որպես ցուցիչներ:

ОПАЛЕСЦИРУЮЩИЕ ВОДЫ — ՍԱՂԱՓԱՓԱՅԼ ՋՐԵՐ, տե՛ս Вода опалесцирующая:

ОПЛЫВИНА (СПЛЫВ) — ՈՂՈՂԱՍԱՀՔ (ԼՈՂԱՏԱՐՈՒՄ), փոխք ապարների փոքր հաստության շերտի (<1 մ) բշվել-տարվելը լանջով, երբ հողագրունտները գերհագեցնելով ձնհալքի, անձրևի և գրունտային ջրերով, անցնում են հոսուն վիճակի և ցեխաջրային շարժում են հիշեցնում:

ОПОЛЗЕНЬ — ՍՈՂԱՆՔ, լեռնալանջերի, գետահովիտների և արհեստական թեքությունների վրա զգալի չափերի ապարազանգվածի տեղաշարժ (սահք), որը կատարվում է (կատարվել է) գրավիտացիոն ուժերի, ինչպես նաև ջրադինամիկ ճնշման, լանջի վրա արհեստական բեռնվածքի ավելացման (կառուցապատման), սելավի կամ տեխնածին ցնցումների և այլ ուժերի ներգործությամբ: Ս-ները քայքայում են բնական ու արհեստական թեքությունները, ստեղծում են յուրահատուկ սողանքային ուղիեֆ և առաջացնում են բարդ ներքին կառուցվածքի սողանքային կուտակումներ: Ապարների զանգվածի սահքը կատարվում է մեկ կամ մի քանի սահքի մակերևույթներով, որոնք հանդիսանում են Ս-ին բնորոշ կառուցվածքային տարր: Ս-ները խիստ բազմազան են երևույթի չափերով (մասշտաբներով), ապարազանգվածի տեղաշարժի մեխանիզմով, նրա հավասարակշռության խախտման պատճառներով, գործընթացի զարգացման դինամիկայով և այլ ցուցանիշներով: Յուրաքանչյուր Ս. ձևավորում է որոշակի սողանքային տեղամաս, ընդգրկելով բնական կամ արհեստական թեքության այս կամ այն մասը և նրան հարող տարածքը: Բարձր լանջերի վրա սովորաբար Ս-ները առաջանում են տարբեր բարձրությունների վրա, ստեղծելով երկու և ավելի սողանքային հարկեր, իսկ ձգված միօրինակ գետահունների լանջերին առաջանում են մմանատիպ, երբեմն հարակցվող Ս-ների շրջաններ: Յուրաքանչյուր Ս. բնորոշվում է այս կամ այն աստիճանի կայունությամբ, որը պայմանավորվում է Ս-ի առաջացման պատճառների լիովին կամ ժամանակավոր վերացմամբ: Ինժեներական կառույցների նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ, բացի Ս-ների առաջացման կանխատեսումից և նրանց տարածման սահմանների որոշումից, անհրաժեշտ է գնահատել նրանց կայունության աստիճանը, որպեսզի անհրաժեշտության դեպքում նախագծողացվի նրանց զարգացումը, արգելվի կամ սահմանափակվի նրանց առաջընթացը (շարժումը):

ОПОЛЗЕНЬ АСЕКВЕНТНЫЙ — ԱՍԵԿՎԵՆՏ ՍՈՂԱՆՔ, սողանք, որն առաջանում է նամասեռ, շերտայնությունից զուրկ ապարներում (կավեր, ավազակավեր,

կավալագներ են): Ա. ս-ի սահքի մակերևույթն ունի ճկված գլանաձև տեսք, որը պայմանավորված է ապարների ֆիզմեխ. հատկություններով:

ОПОЛЗЕНЬ ДЕЛЯПСИВНЫЙ — ԴԵԼՅԱՊՍԻՎ ՍՈՂԱՆՔ, ըստ Ա. Պ. Պավլովի (1903), սողանք, որի ապարազանգվածի շարժումը սկսվում է լանջի ստորին մասում (ողողամաշման, ափաքերման կամ այլ պատճառով) և տարածվում է դեպի վեր, ընդգրկելով հաջորդաբար սահող նոր վերադիր զանգվածներ:

ОПОЛЗЕНЬ ДЕТРУЗИВНЫЙ — ԴԵՏՐՈՒԶԻՎ ՍՈՂԱՆՔ, ըստ Ա. Պ. Պավլովի (1903), սողանք, որի ապարազանգվածի շարժումը սկսվում է լանջի վերին մասում (հողմահարման, ամրության թուլացման, ջրով հագեցման կամ այլ պատճառով) և տարածվում է դեպի ներքև, պոկված զանգվածի ճնշման շնորհիվ շարժման մեջ ներգրավելով ներքևի նոր ապարազանգվածներ: Հոմանիշ՝ հրող սողանք:

ОПОЛЗЕНЬ ДЕЯТЕЛЬНЫЙ — ԳՈՐԾՈՂ (ԳՈՐԾՈՒՆՅՅԱ) ՍՈՂԱՆՔ, ներկա ժամանակում շարժվող սողանք:

ОПОЛЗЕНЬ ДРЕВНИЙ — ՀԻՆ ՍՈՂԱՆՔ, սողանք, որը տեղի է ունեցել երկրբ. անցյալում՝ միանգամայն այլ երկրբ. իրադրությունում:

ОПОЛЗЕНЬ ИНСЕКВЕНТНЫЙ — ԻՆՍԵԿՎԵՆՏ ՍՈՂԱՆՔ, սողանք, որն առաջանում է անհամասեռ, շերտավոր, հորիզոնական կամ լանջի թեքությամբ մոտ տեղադրման ապարներում: Ի. ս-ի սահքի մակերևույթը վերին մասում կտրուկ խրվում, ապա դեպի հիմքը աատիճանաբար կորանում է, հատելով անհամասեռ ապարաշերտերը:

ОПОЛЗЕНЬ КОНСЕКВЕНТНЫЙ — ԿՈՆՍԵԿՎԵՆՏ ՍՈՂԱՆՔ, սողանք, որն առաջանում է շերտավոր անհամասեռ, հաճախ ճեղքավոր ապարներում: Կ. ս-ի սահքի մակերևույթը հիմնականում համընկնում է երկրբ. շերտերի սահմանային հարթությունների հետ:

ОПОЛЗЕНЬ КОНСИСТЕНТНЫЙ — ԿՈՆՍԻՍՏԵՆՏ ՍՈՂԱՆՔ, սողանք, որն առաջանում է լանջը կազմող ապարների անկայուն կոնսիստենցիայի շնորհիվ, որը հիմնականում պայմանավորված է ապարների ջրահագեցման տարբեր աստիճանով:

ОПОЛЗЕНЬ-ОБВАЛ — ՍՈՂԱՆՔ-ՓԼՎԱԾՔ, սողանք, որի շարժման ժամանակ նրա մարմնի առանձին մասեր, տեղ-տեղ պոկվելով սահքի մակերևույթից, ենթարկվում են ազատ անկման:

ОПОЛЗЕНЬ ПОГРЕБЕННЫЙ — ԹԱՂՎԱԾ ՍՈՂԱՆՔ, սողանք, որը թաղված է նորագույն երկրբ. գոյացումների տակ, այսինքն ծածկված է այլ երկրաձևալանակաձև ձևերով:

ОПОЛЗЕНЬ ПОДВОДНЫЙ — ՍՍՈՐԶՐՅԱ ՍՈՂԱՆՔ, սողանք, որն առաջանում է ստորջրյա պայմաններում, ջրային ավազանի թեք լանջերին: Ս. ս-ներ առա-

վել հաճախ առաջանում են նստվածքակուտակման արագության կտրուկ տարբերության դեպքում, որը դիտվում է գերազանցապես ընդջրյա դելտայի գառիկող լանջերին:

ОПОЛЗЕНЬ СТРУКТУРНО-ПЛАСТИЧЕСКИЙ — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՊԼԱՍՏԻԿ ԿՈՂԱՆՔ, տե՛ս Механизм оползеневого процесса:

ОПОЛЗЕНЬ СТРУКТУРНЫЙ — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՈՂԱՆՔ, տե՛ս Механизм оползеневого процесса:

ОПОЛЗНЕВАЯ ТЕРРАСА — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԴՆՐԱՎԱՆԴ, սողանքային լանջի վրա առաջացած սանդղաձև դարավանդ:

ОПОЛЗНЕВОЕ ТЕЛО — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ, սողանքային գործընթացով ընդգրկված ողջ ապարազանգվածը, որը սահմանափակվում է սահքի մակերեսով: Ս. մ. բնութագրվում է հաստությամբ, ծավալով, տարածքով (փովածությամբ) և ապարազանգվածի թանձրությամբ (կոնսիստենցիայով):

ОПОЛЗНЕВЫЕ НАКОПЛЕНИЯ — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ, լանջով կամ թեքությամբ սահած ապարների կուտակումներ:

ОПОЛЗНЕВЫЕ РЕПЕРЫ — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՀԵՆԱՆԻԾԵՐ (ՌԵՊԵՐՆԵՐ), սողանքային մարմնի վրա տեղադրվող հենանիշեր (ռեպերներ), որոնց միջոցով հետևում են սողանքի շարժմանը:

ОПОЛЗНЕВЫЕ ТРЕЩИНЫ — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԾԵՂՔԵՐ, ճեղքեր, որոնք առաջանում են սողանքային գործընթացի հետևանքով: Սողանքի գլխամասում դիտվում են լանջի թեքությանը ուղղահայաց խոշոր աղեղնաձև ճեղքեր, որոնցով տեղի է ունենում սողանքի պոկումը լանջից և սողանքային կրկեսի ու սանդղավանդերի ձևավորումը: Սողանքի թևերում առաջանում են լանջի թեքությամբ ձգված կոտրատման (սողքի) ճեղքեր, որոնք ցույց են տալիս սողանքի կողային սահմանները: Նույնպիսի երկայնակի, սակայն ավելի փոքր ճեղքեր դիտվում են նաև սողանքային մարմնի վրա՝ նրա բեկորատման հետևանքով: Սողանքի վերջնամասում, որտեղ տեղի է ունենում սողանքի արգելակում, առաջանում են սողանքի շարժմանը ուղղահայաց ճեղքեր:

ОПОЛЗНЕВЫЕ УСТУПЫ — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՍԱՆԴՎԱԿԱՆԴԵՐ, սողանքի գլխամասում (կրկեսում) դիտվող աստիճանաձև սանդղավանդեր, որոնք առաջանում են զուգահեռ աղեղնաձև պոկման ճեղքերով:

ОПОЛЗНЕВЫЙ ЦИРК — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԿՐԿԵՍ, սողանքի գլխամասում պոկման ճեղքերով առաջացած կիսակլոր փոտրակ, որը ձևաչափորեն հիշեցնում է ամֆիթատրոն (կրկես): Ս. կ-ի սահմաններում առաջանում են նաև սողանքային սանդղավանդեր, որոնց հարթակները հաճախ ունենում են լանջի թեքությանը հակառակ ուղղվածություն:

ОПОЛЗНЕВЫЙ ЯЗЫК — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԼԵԶՎԱԿ, սողանքային մարմնի վերջնամաս, որը ձևաչափորեն լեզվակ է հիշեցնում:

ОПОРНАЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ НАБЛЮДАТЕЛЬНАЯ СЕТЬ — ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԶՐԱՆԻՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂԱԿԱՆ ՑԱՆՑ, ջրաերկրք. կայանների ու կետերի համակցություն, որտեղ միասնական ծրագրերով ու մեթոդներով տարվում են ստ. ջրերի ռեժիմի երկարատև (բազմամյա) սխտեմատիկ դիտումներ: Նախկին ԽՍՀՄ տարածքում Հ. ջ. դ. 9-եր կազմակերպվում էին առանձին ռեգիոններում, ելնելով նրանց ֆիզիկաաշխարհ. ու ջրաերկրք. պայմանների ընդհանրությունից և ժողովրդատնտ. զարգացման հեռանկարներից:

ОПРЕСНЕНИЕ ВОДЫ — ԶՐԻ ԱՂԱԶԵՐԾՈՒՄ, բնական ջրերում պարունակվող աղերի քանակի նվազեցում՝ խմելու, տեխ. կամ ոռոգման պահանջներին բավարարող որակի ջրեր ստանալու նպատակով: Գոյություն ունեն Զ. ա. տարբեր մեթոդներ. գոլորշիացման (հետագա խտացումով), սառեցման (հետագա հալեցումով), էլեկտրադիալիզի, քիմ. են: Դեռևս թանկ, բայց անընդհատ կատարելագործվող Զ. ա. կիրառվում է չորային կլիմայով ափամերձ երկրամասերում (աղազերծվում է ծովի ջուրը), անապատային գոտիներում (աղազերծվում են գրունտային ջրերն ու հանքային լճերը), ինչպես նաև երկարատև նավարկության նավերում: Եթե Զ. ա. լիովին է կատարվում և այն գրեթե ամբողջապես զտվում է աղերից, գազերից ու օրգ. նյութերից, ապա գործընթացը կոչվում է թորում (տե՛ս Дистилляция):

ОПРОБОВАНИЕ ВОД — ԶՐԻ ՆՄՈՒՇԱՐԿՈՒՄ, լաբորատոր ուսումնասիրությունների համար ջրի նմուշի վերցում և տեղում ջրի ջերմաստիճանի, ֆիզ. հատկանիշների և մի շարք քիմ. բաղադրիչների (ցնդող տարրեր, рН ևն) որոշում: Զ. ն. կատարվում է հանույթի ջրաբանական, ջրաերկրք. և այլ հետազոտությունների ժամանակ՝ կապված ստ. ու մակերևութային ջրերի շահագործման, ժողտնտեսության տարբեր բնագավառներում նրանց օգտագործման հետ: Նմուշարկման են ենթարկվում աղբյուրները, հորատանցքերը, ջրհորերը, գետերը, լճերը և այլ ջրակետեր, ըստ որում, ելնելով լաբորատոր տարրալուծությունների նպատակից (քիմ., ռադիոլոգիական, գազային, սպեկտրալ, մանրէաբանական ևն) վերցվում է մեկ կամ մի քանի նմուշ: Յուրաքանչյուր նմուշի համար լրացվում է մանրամասն գրապիտակ, որում նշվում է նմուշի վերցման ժամանակը, ջրակետի տեղադիրքը, վերցման խորությունն ու պայմանները, նմուշի նշանակումը, ինչպես նաև վերցման պահին օդի ու ջրի ջերմաստիճանը, վերցնողի ազգանունը և արշավախումբը:

ОПРОБОВАНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՆՄՈՒՇԱՐԿՈՒՄ, տե՛ս Опробование вод:

ОПУСКНЫЕ КОЛОДЦЫ — ԻԶԵՑՆՈՎԻ (ԻԶԵՑՎՈՂ) ՀՈՐԵՐ, քտտնյա կամ երկաթբետոնյա օղակաձև, սրված ծայրերով կառուցվածք, որը փուլար սպարներում ուղղահայաց փորվածք անցնելիս իր ծանրության և լրացուցիչ ճնշման (հարվածի) շնորհիվ միաժամանակ իջեցվում և ամրակապում է փորվածքի պատերը: Ի. հ. կիրառվում են բարդ միմբերի, ջրհան կառույցների, սյունակայանների ևնի կառուցման ժամանակ:

ОПЫТНАЯ ОТКАЧКА — ՓՈՐՁԱՅԻՆ ԱՐՏԱՍՂՈՒՄ, հորատանցքերից, ջր-հորերից և այլ փորվածքներից կատարվող արտամղումներ, որոնց միջոցով որոշվում են ջրատար ապարների ծծանցման գործակիցը, ջրի ծախսի կախումը նրա մակար-դակի իջեցումից, իջույթային ձագարի ձևավորումը ժամանակի ընթացքում, ճնշումա-հաղորդականության և ու մակարդակահաղորդականության գործակիցները և այլ ջրաներկր- պարամետրեր:

ОПЫТНОЕ НАГНЕТАНИЕ — ՓՈՐՁԱՅԻՆ ՆԵՐՍՂՈՒՄ, տե՛ս *Нагнетание (налив)*:

ОПЫТНО-ЭКСПЛУАТАЦИОННАЯ ОТКАЧКА — ՓՈՐՁԱՅԻՆ ԾԱՀԱԳՈՐ-ԾՈՂԱԿԱՆ ԱՐՏԱՍՂՈՒՄ, հորատանցքից կամ ջրհորից իրականացվող երկարատև (մի քանի ամիս) արտամղում, որը կատարվում է պահանջվող նախագծային ջրա-քանակը մշտապես ստանալու հնարավորությունը հիմնավորելու համար: Այս եղա-նակով հետախուզված ջրատար հորիզոնների պաշարները հաշվարկվում են արդյու-նաբերական կատեգորիաներով, իսկ տևական փորձի ժամանակ արտամղված ջրերը սովորաբար օգտագործվում են տարբեր բնագավառներում:

ОПЫТНЫЕ НАГРУЗКИ — ՓՈՐՁԱՅԻՆ ԲԵՌՆՎԱԾՔՆԵՐ, բեռնվածքներ, որոնք լաբորատոր կամ դաշտային փորձարկումների ժամանակ գործադրվում են հետազոտվող գրունտների կամ կառուցվածքների վրա:

ОПЫТНЫЙ НАЛИВ — ՓՈՐՁԱՅԻՆ ՆԵՐՂՑՈՒՄ (ՆԵՐՂԻՑՔ), տե՛ս *Метод налива в шурфы*:

ОРГАНОГЕННЫЕ ВОДЫ — ԿԵՆՍԱԾԻՆ ԶՐԵՐ, ըստ Վ. Ի. Վերնադսկու, ջրեր, «ստեղծված երկր- ժամանակներում միշտ այլ ու փոփոխական կյանքի երե-վույթներով... Օր., բարածխային ժամանակաշրջանի Կ. ջ. այլ են, ինչ մեր դարա-շրջանի անտառների Կ. ջ.: Կ. ջ-ի մասնավոր դեպք են հանդիսանում կուլտուրական ջրերը: Այստեղ օրգանիզմը գործում է ոչ իրեն կազմությանը, ոչ իր մետաբոլիզմով և էկոլոգիապես, այլ գործում է մարդը՝ իր տեխնիկայով»:

ОРЕОЛ — ՊՍԱԿ (ԵԶՐԱՊՍԱԿ), ըստ Ե. Ա. Ֆերմանի և Էլի դը Բոմոնի, բնական գործընթացի ազդեցության տարածման մարզ: Գործընթացը դիտվում է որպես շրջապատող միջավայրի վրա ազդեցությունը տարածող ինչ-որ կենտրոն-ակզբնադրյուր, երբ սնման կենտրոնի ազդեցությունը տարածվում է համակենտրոն օղակների, գոտիների ու պատյանների տեսքով:

ОРЕОЛЫ РАССЕЯНИЯ ГИДРОХИМИЧЕСКИЕ (ВОДНЫЕ) — ԶՐԱՔԻՄԻԱ-ԿԱՆ (ԶՐԱՅԻՆ) ՏՐՄԱՆ ՊՍԱԿՆԵՐ (ԵԶՐԱՊՍԱԿՆԵՐ), հանքատաջացնող տար-րերի (K, Na, Mg, Cu, Zn, Pb, Fe, Mo, U, Mn ևն, ինչպես նաև  $SO_4^{2-}$  և Cl- իոններ) բարձր պարունակություն ունեցող ստ. և մակերևութային ջրերի տարածման մարզեր: Զ. ց. պ. առաջանում են հանքային մարմինների, ինչպես նաև նրանց առաջնային ու երկրորդային պսակներից (եզրապսակներից) քիմ. տարրերի, միա-ցությունների լուծման և տեղափոխության (սփռման) հաշվին: Զրում լուծված տար-

քերի պարունակությունը հանքային մարմնից հեռանալիս օրինաչափորեն նվազում է: Ջ. ց. պ-ի տարածման մակերեսն անհամեմատ մեծ է հնքվ-ի (հանքամարմնի) զբաղեցրած տարածքից: Այդ հանգամանքը ջրում լուծված տարրերի պարունակության օրինաչափ փոփոխության հետ միասին հանդիսանում է օգտակար հանածոների հնքվ-երի ջրաքիմ. որոնման կարևոր չափանիշ:

ОРОЕЛИНЫЕ ВОДЫ — ՊՍԱԿԱՅԻՆ (ԵԶՐԱՊՍԱԿԱՅԻՆ) ՋՐԵՐ, ջրատալային ցրման պասկի արտաքին մաս, որի քիմ. բաղադրությունը ձևավորվում է հանքալրանային ջրերի տարահուման, ֆոնային ջրերի և հանքապարունակ ապարների հետ նրանց փոխազդեցության շնորհիվ:

ОРОСИТЕЛЬНАЯ НОРМА — ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐՄԱ, ջրաքանակ, որն անհրաժեշտ է բույսերի անցողական (վեգետացիոն) ժամանակահատվածում 1 հա ցանքատարածությունը ոռոգելու համար: Ո. և, արտահայտված մ<sup>3</sup> (հա-երով, կախված է շրջանի կլիմայական պայմաններից, հողերի ջրաֆիզ. հատկություններից, ոռոգվող կուլտուրայի տեսակից և ագրոտեխ. մշակման ձևից; Նախկին ԽՍՀՄ հարավային շրջաններում Ո. և որոշվում էր մոտավորապես հետևյալ սահմաններում (մ<sup>3</sup>/հա).

Հացահատիկային կուլտուրաների համար	— 2700—3500
Ծաբարի ճակնդեղի համար	— 3500—4000
Բամբակի համար	— 6500—7000:

ОРОШЕНИЕ (ИРРИГАЦИЯ) — ՈՌՈԳՈՒՄ (ԻՌԻԳԱՅԻՄ), գյուղատնտ. հողերի մեկտրացիայի տեսակ, որը հանգում է խոնավազուրկ կամ անբավարար խոնավացած հողերում ջրային պաշարների ստեղծմանը: Ո. շնորհիվ, անկախ մթնոլորտային տեղումներից, կարգավորվում է հողի ջրային (դրա հետ մեկտեղ օդային, սննդային ու ջերմային) ռեժիմը և ապահովվում գյուղատնտ. կուլտուրաների կալուն ու բարձր քերքի առացումը: Ելնելով տեղանքի բնակլիմայական պայմաններից և մշակվող կուլտուրաներից, դաշտերը ոռոգվում են պարբերաբար կամ տարին մեկ անգամ (տե՛ս Ляманное орошение): Գոյություն ունեն ոռոգման հետևյալ եղանակները. 1) մակերևութային (ջուրը տրվում է դաշտի ողջ տարածքով), 2) ենթահողային (ջուրը ներարկվում է հողի մեջ որոշակի խորության վրա) և, 3) անձրեվացում (ջուրը տեղում է դաշտի վրա արհեստական անձրևի ձևով): Եթե ջրման աղբյուրը գտնվում է դաշտերից բարձր, ապա ջուրը տրվում է ինքնահոսով, հսկանակ դեպքում կատարվում է մեխ. ոռոգում (ջուրը տրվում է պոմպերի և այլ մոլիջ սարքերի միջոցով):

ОСАДКИ АТМОСФЕРНЫЕ — ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ, հեղուկ կամ կարծր վիճակով ջուր (անձրև, ձյուն, կարկուտ, ցող, եղյամ ևն), որը թափվում է ամպերից կամ օդում եղած ջրային գոլորշիների խտացումից մատուց է Երկրի մակերևույթին: Մ. տ-ի քանակը չափվում է ջրի շերտի բարձրությամբ՝ մմ-երով, որը գոյանում է առանձին ժամանակահատվածներում կամ տարվա ընթացքում: Միջին հաշվով երկրագնդի վրա տարեկան տեղումների քանակը կազմում է 1000 մմ, ջորային գոտիներում այն չի գերազանցում 100—200 մմ, իսկ խոնավ գոտիներում՝

հասնում է մի քանի հազար մմ: Հոմանիշ՝ «ատուպային ջուր», հնացած ու ավելորդ տերմին:

ОСАДКА ПРИ ПРОТАИВАНИИ — ՀԱԼՉՄԱՆ ՆՍՏՈՒՄ, հողաբուսական ծածկի և ապարների ուղղաձիգ նստում, որը պայմանավորված է ստան ապարների հալչման հետևանքով նրանց ծավալի նվազումով:

ОСАДКА СООРУЖЕНИИ — ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆՍՏՈՒՄ, կառուցվածքների ուղղաձիգ տեղաշարժ (նստում), որը տեղի է ունենում հիմնասակ ծառայող ապարների խտացման, հալչման նստման և այլ փոփոխությունների հետևանքով:

ОСВОБОЖДЕННЫЕ ВОДЫ — ԱԶԱՏՎԱԾ ՋՐԵՐ, երկրակեղևի բոլոր այն ջրերը, որոնք ջերմադինամիկ գործոնների ներգործությամբ ազատվել են միներալների քիմ. ու ֆիզ. կապվածությունից: Ա. ջ-ին են պատկանում ջրազրկման, մագմաձին և այլ ջրերը:

ОСЕВШИЕ (КАПИЛЛЯРНО-ПОДВЕШАННЫЕ) ВОДЫ — ՑԱԾՐԱՆԻՍՍ (ՄԱԶԱՆՈՒՅՈՒՄՆԻՆ-ԿԱԽՎԱԾ) ՋՐԵՐ, խոշորահատիկ ապարների վրա տեղադրված նրբահատիկ ապարների ստորին մասում գտնվող կախված ջրեր, որոնք պահվում են մագնադոթային ուժերի շնորհիվ: Ց. ջ. բույսերի սնման գործում որոշակի դեր են խաղում, որը պետք է հաշվի առնել ոռոգման նորմաներ մշակելիս: Հնացած տերմին:

ОСНОВАНИЕ СООРУЖЕНИЯ — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՆԱՍԱԿ, մակերևույթ կամ գոնա, որի միջոցով կառուցվածքի բեռնվածքը հաղորդվում է ապարներին (գրունտներին):

ОСОВЫ — ԹՄՓՎԱԾՔԱՀՆՈՒՐԵՐ, լանջերի կամ թեքությունների վրա կուտակված թափվածքների հանկարծակի տեղաշարժեր, որոնք տեղի են ունենում մթնոլորտային տեղումների կամ այլ ֆիզ. գործոնների ազդեցությամբ նրանց կայունության թուլացման հետևանքով:

ОСОЛОНЦЕВАНИЕ ГРУНТОВ — ԴՐՈՒՆՏՆԵՐԻ ԱՂՈՒՏԱՑՈՒՄ, նատրիումական աղերով գրունտների մշակում, որը առանձնահատուկ պայմաններում կատարվում է փուխր գրունտների ամրությունը բարձրացնելու և նրանց ջրաթափանցելիությունը նվազեցնելու նպատակով:

ОСТАТОЧНАЯ ДЕФОРМАЦИЯ — ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՁԵՎԱՆՍԻՏՈՒՄ, կոմպրեսիոն փորձարկումների ժամանակ գրունտի սկզբնական (մինչ բեռնվածք գործադրելը) ծավալի և բեռնվածք գործադրելուց հետո ընդունած (մասամբ վերականգնված) ծավալի տարբերությունը: Մ. ձ., որը գերազանցապես բնորոշ է կավային գրունտներին, բացատրվում է սեղմման հետևանքով մասնիկների առանձին ազդեցությունների կառուցվածքի քայքայումով:

ОСТАТОЧНЫЕ РАССОЛЫ — ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՂԱՋՐԵՐ, աղային հաստվածքներում փոքր կուտակումների ձևով գտնվող աղաջրեր, որոնք առաջացել են

բարձր ճնշման կամ ջերմության ազդեցության տակ տեղի ունեցող որոշ ջրային կալիումական աղերի վերաբյուրեղացումից: Մ. ա. աչքի են ընկնում մագնիումի բլորիդի բարձր պարունակությամբ:

**ОСУШЕНИЕ ЗЕМЕЛЬ — ՀՈՂԵՐԻ ԶՈՐԱՑՈՒՄ**, ինժեներական միջոցառումների համակարգ, որն իրացվում է գլխավորապես հողերի քերքատվությունն ապահովելու, ինչպես նաև տորֆի արդյունահանման, անտառատնկման, շինարարության, ճանապարհների անցկացման և այլ աշխատանքների իրագործման պայմանները բարելավելու նպատակով: Չորացման հետևանքով ճահնացած և գերխոնավացած հողերում ստեղծվում է անհրաժեշտ ջրային և ջերմային ռեժիմ: Հ. չ. իրագործվում է տարբեր ցամաքորոպային (ուղղաձիգ, հորիզոնական և համակցված) և ջրհեռացիչ (ջրանցքներ, խողովակաշարեր) կառույցների միջոցով:

**ОСУШЕНИЕ МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ — ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆՆԱԾՈՒՆԵՐԻ ԿԱՆՔԱՐԱՆՆԵՐԻ ԶՈՐԱՑՈՒՄ**, ըստ Ս. Վ. Տրոյանսկու, համակցված տեխ. միջոցառումներ, որոնք նպատակադրված են նվազեցնելու օգտակար հանածոների հնքվ-երի ջրակայման աստիճանը և կարգավորելու լեռնային փորվածքների մեջ մուտք գործող ջրահոսքերի ռեժիմը: Օ. հ. հ. չ. հիմնական խնդիրներն են: 1) ապահովել լեռնային փորվածքներում աշխատանքների կատարման բարեկալատ և անվտանգ պայմաններ, 2) պահպանել հանքարանները վթարային բնույթի բոլոր կարգի պատահականություններից (հանկարծահաս ջրակալում, փլուզումներ, հոսազրուհուների պոռթկում ևն), 3) պաշտպանել թանկարժեք սարքավորումները փլուզումներից և ջրի ագրեսիվ ազդեցությունից, 4) ընդերքի պահպանություն և պաշար ստ. ջրերի դեմ, որոնք խանգարում են օգտակար հանածոյի նորմալ շահագործմանը:

**ОСЫПИ — ՔՍՐԱԹՄՓՎԱԾՔՆԵՐ**, լանջերի և բնական թեքությունների վրա դիտվող գրավիտացիոն երևույթներ, որոնք, ի տարբերություն փլվածքների (տե՛ս Օбвалы), բնութագրվում են գրավիտացիոն ուժերով շարժվող ապարազանգվածի մանրաբեկորությամբ: Այդ պատճառով Ք. համեմատաբար դանդաղ են շարժվում (մանրաբեկոր նյութը գլորվելու հետ մեկտեղ նաև սահում է) և նվազ ավերիչ են, քան փլվածքները, թեև իրենց մասշտաբներով ու չափերով երբեմն գերազանցում են վերջիններիս: Ք. կուտակվում են լանջերի ստորոտներին՝ ձգված արտաբերման կոների տեսքով, ընդ որում կոնի վերնամասը ներկայացվում է մանրաբեկոր նյութով (խճով), իսկ ստորին մասը՝ խոշորաբեկոր նյութով (քարաբեկորներով, որոնք թափով են գլորվում): Սուստ սնման դեպքում Ք. կարող են լանջի ստորոտում ընդարձակվելով, միանալ միմյանց և ստաշացնել բավական հզոր շլեֆեր (փեշատուտեր):

**ОТВАЛ — ԹՄՓՈՆԱԿՈՒՅՏ**, լեռնահանքային արդյունաբերությունում՝ դատարկ ապարների, ոչ կոնդիցիոն օգտակար հանածոների կամ հարստապոչների կուտակ, որը սովորաբար գետնովում է գյուղատնտեսության կամ շինարարության համար ոչ պիտանի տարածքներում (ձորակներ, քարքարոտ կամ աղուտ հողեր ևն): Թ-երի տեղի ընտրության, նրանց ձևաբանության և կալուսության հարցերը հանդիսանում են հնքվ-երի շահագործման ինժեներաերկրբ. կարևոր խնդիրներից: Կոնաձև խո-

շոր Թ-երը, որոնք լեռնահանքային խոշոր կենտրոններում (հատկապես անխալա-  
զաններում) ահուելի չափերի են հասնում, կոչվում են տերիկոներ (Терриконы):

ОТКОС ЕСТЕСТВЕННЫЙ — ԲՆԱԿԱՆ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ, բնական թեք մա-  
կերևույթ, լանջ:

ОТКРЫТАЯ ПОРИСТОСТЬ (ТРЕЩИНОВАТОСТЬ) — ԲԱՑ ԾԱԿՈՏԿԵՆՈՒ-  
ԹՅՈՒՆ (ԾԵՂՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ), ապարում միմյանց հետ հաղորդակցվող ծա-  
կոտիների (ճեղքերի) համակցություն, որի շնորհիվ ապարը ձեռք է բերում ջրա-  
տարության և ջրաթափանցելիության բարձր հատկանիշներ:

ОТЛОЖЕНИЯ ИСТОЧНИКОВ — ԱՂԱՅՈՒՐՆԵՐԻ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, քննոգեն  
նստվածքներ, որոնք առաջանում են երկրի մակերևույթ դուրս եկող ստ. ջրերի  
աղբյուրների ջրային լուծույթի գոլորշիացման հետևանքով: Ա. և-ի բնորոշ գոյացում-  
ներ են տրավերտինները, կրային ու սիլիկատային տուֆերը ևն:

ОТМУЧИВАНИЕ — ՏՂՄԱԶԱՏՈՒՄ, մանրահատիկ (դիսպերս) գրունտների  
հատիկաչափական կազմի որոշման եղանակ, որը հիմնված է ջրում կախված վի-  
ճակում (սուսպենզիայի ձևով) գտնվող տարբեր չափսերի մասնիկների տարբեր  
արագությանը նստելու սկզբունքի վրա: Տ. եղանակով որոշվում են փոշային  
( $< 0,05$  մմ) և կավային ( $< 0,005$  մմ) մասնիկների պարունակությունը: Դրա  
համար սուսպենզիան պղտորում են, ապա որոշակի ժամանակ անց (խոշոր մասնիկ-  
ները նստելուց հետո) այն դատարկում են, ջուրը գոլորշիացնում և նստվածքում  
կշռային եղանակով որոշում են համապատասխան տրամաչափի մասնիկների պարու-  
նակությունը:

ОТНОСИТЕЛЬНАЯ АЭРИРОВАННОСТЬ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՀԱՐԱԲԵ-  
ՐԱԿԱՆ ՕԳԱՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ըստ Վ. Ա. Պրիկլոնսկու, գրունտի ծակոտի-  
ներում պարփակված օդի ծավալի հարաբերությունը գրունտի ծակոտիների ծա-  
վալին:

ОТНОСИТЕЛЬНАЯ ВЛАЖНОСТЬ ВОЗДУХА — ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈ-  
ՆԱՎՈՒԹՅՈՒՆ, տվյալ պահին օդում պարունակվող ջրային գոլորշիների առաձ-  
գակամտության հարաբերությունը միևնույն ջերմաստիճանում օդի նույն տարածու-  
թյան հագեցման համար անհրաժեշտ ջրային գոլորշիների առաձգականությանը  
արտահայտված %-ներով: Խոնավ, մտապլապատ, եղանակներին 0. հ. խ. կարող  
է հասնել 100 %-ի, որի դեպքում երկրի մակերևույթն ու բուսականությունը ցոլա-  
պատվում են (տե՛ս Точка росы):

ОТНОСИТЕЛЬНАЯ ВЛАЖНОСТЬ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ  
ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, գրունտի խոնավության (ջրի ծավալի) հարաբերությունը նրա  
ծակոտիների ծավալին՝ արտահայտված %-ներով:

ОТНОСИТЕЛЬНАЯ УВЛАЖНЕННОСТЬ ТЕРРИТОРИИ — ՏԵՂԱՆՔԻ ՀԱ-  
ՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎԱՅՈՒՄ, որոշակի ժամանակահատվածում տվյալ տեղանքի

մթնոլորտային տեղումների քանակի հարաբերությունը նույն ժամանակահատվածում հեարաբեր գոլորշիացման քանակին՝ արտահայտված %-ներով:

ОТНОСИТЕЛЬНО ПОВЫШЕННЫЕ СОДЕРЖАНИЯ — ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՐԵՆ ԲԱՐՁՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ստ. ջրերի հանքայնացման բաղադրիչների քանակի գերազանցում տվյալ շրջանում նրանց ֆոնային պարունակությունից:

ОТНОСИТЕЛЬНОЕ ИСПАРЕНИЕ — ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՒՈՐԾԱՑՈՒՄ, տվյալ տեղանքի գոլորշիացման մեծության հարաբերությունը ազատ ջրահայելուց կատարվող գոլորշիացման մեծությանը կամ գոլորշիացման ունակությունը՝ արտահայտված %-ներով: Սովորաբար Հ. գ. 100 %-ից փոքր է, սակայն բացառիկ դեպքերում (որոշակի փարթամ բուսականության, աերոդինամիկ գործընթացների առկայության դեպքում) այն կարող է 100 %-ից ավել լինել:

ОТНОСИТЕЛЬНОЕ СОПРОТИВЛЕНИЕ ГОРНОЙ ПОРОДЫ — ԱՊԱՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ապարի սեղմման տեսակարար դիմադրության հարաբերությունը ապարը հագեցնող ջրի դիմադրությանը՝ ապարի ծակոտիների 100 %-անոց հագեցվածության դեպքում: Ա. հ. դ. կախված է ապարի ծակոտկենությունից, ծակոտիների չափերից ու հաղորդակցվածության աստիճանից, որի հետևանքով այդ դիմադրության մեծությամբ էրբեմն գնահատում են ապարի ծակոտկենության մեծությունը:

ОТСТОИНИК — ՊԱՐՉԱՐԱՆ (ՏՂՄԱՋՏԻԶ), ավազան, ամբար, շտեմարան կամ այլ կառուցվածք, որտեղ ջրհոսքի հանդարտեցման կամ անշարժացման շնորհիվ տեղի է ունենում ջրում կախված մեխ. ու օրգ. մասնիկների նստեցում: Քամիչով կահավորված ջրակերպք. հորատանցքում մասնիկների նստեցումը կատարվում է քամիչից ներքև խողովակով ամրակապված հատվածում, այսինքն հորատանցքի ամրակապված հատակային մասը կատարում է Պ-ի դեր:

ОХРАНА ВОДНЫХ РЕСУРСОВ — ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, օրենքի ուժ ստացած կանոններ ու միջոցառումներ, որոնց նպատակն է բացառել ջրային ռեսուրսների քանակական սպառումը, քիմ. աղտոտումը, մանրէաբանական և ռադիոակտիվ վարակումները: Զ. ո. պ. տեսակետից շահագործման ենթակա են միայն ստ. ջրերի դինամիկ պաշարները, որոնք բավարար չափով հետախուզվել և հաստատվել են նախկին ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կամ տերիտորիալ հանձնաժողովների կողմից: Ստ. ջրերը քիմ. աղտոտումից, մանրէաբանական ու ռադիոակտիվ վարակումներից զերծ պահելու համար հնքվ-երի սահմաններում, մասնավորապես աղբյուրների ու ջրհան կառույցների շրջակայքում առանձնացվում են սանիտարական պահպանության գոտիներ:

ОХРАНА НЕДР — ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, օրենքի ուժ ստացած կանոնների ու լեռնատեխ. միջոցառումների համակցություն, որն ապահովում է օգտակար հանածոների (այդ թվում ստ. ջրերի) հնքվ-երի ուսցիոնալ շահագործումը, հանքաքարի լրիվ արդյունահանումն ընդերքից և նրա անկորուստ մշակումը՝ մի-

շոցների առավել խնայողության և լեռնային գործի անվտանգության կանոնների պահպանման պայմաններում:

ОЦЕНКА КАЧЕСТВА ВОДЫ ИСТОЧНИКА ВОДОСНАБЖЕНИЯ — ՋՐԱ-ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ջրամատակարարման աղբյուրների խնելու ջրի պիտանիության գնահատումը ըստ նրա ֆիզքիմ. և մանրէաբանական հատկանիշների: Հումանիշ՝ ջրամատակարարման աղբյուրների ջրի սանիտարական գնահատում:

ОЧАГИ (ОКНА) ПИТАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՄՏՄԱՆ ՈՋԱԽՆԵՐ (ՊՍՏՈՒՀԱՆՆԵՐ), ուժեղ ջրաթափանց ապարների տեղամասեր (պատուհաններ), որտեղից տեղի է ունենում տվյալ ջրատար հորիզոնի բուն սնում մակերևութային, սփռողորտային և ստ. ջրերով: Այն տեղամասերը, որտեղ գրունտային ջրերը սնվում են արտեզյան ջրերից, կամ հավառակը, կոչվում են ջրաերկրք. պատուհաններ (տե՛ս Окна гидрогеологические):

ОЧИСТКА ВОДЫ — ՋՐԻ ՄԱԲՐՈՒՄ (ՋՏՈՒՄ), ջրի որակի բարելավում, որը կատարվում է եղևկով արտադրության (ջերմատների, տեխնոլոգիական ևն) կամ սանիտարական (ջրամատակարարման) պահանջներից: Կան Ջ. մ. տարբեր եղանակներ. նստեցման, ծծանցման, փափկացման, վնասագերծման (մանրէագերծման), աղազերծման ևն:

## — П —

ПАВОДОК — ՀԵՂԵՂՈՒՄ (ՀԵՂԵՂԱՋՈՒՐ), գետի ջրի մակարդակի և ծախսի կարուկ ու կարճատև բարձրացում, որը պայմանավորված է հորդառատ անձրևներով և, ի տարբերություն սեզոնային վարարումների (տե՛ս Половодье), կրում է անկանոն բնույթ: Երբեմն Հ. կարող է գերազանցել վարարումների մակարդակը:

ПАВОДОЧНЫЕ СТОК ВОДЫ — ՋՐԻ ՀԵՂԵՂԱՀՈՍԲ, ջրի հոսքի ծավալ, որն անցնում է գետի հեղեղման ժամանակ:

ПАЛЕОГИДРОГЕОЛОГИЯ — ՀՆԱՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրաերկրաբանության բաժին (պատմական ջրաերկրաբանություն), որն ուսումնասիրում է երկրակեղևի ջրանշումնային համակարգերի զարգացման պատմությունը, նպատակ ունենալով պարզաբանել տարբեր բաղադրության ստ. ջրերի ձևավորման օրինաչափությունները և նրանց երկրք. դերը օգտակար հանածոների հնքվ-երի առաջացման ու քայքայման գործում: Հ. սերտորեն առնչվում է քարաբանության, հնաաշխարհագրության, օգտակար հանածոների հնքվ-երի ձևավորման ուսմունքի, այլ գիտությունների հետ և հանդիսանում է ջրաերկրաբանության նոր զարգացող բաժիններից մեկը:

ПАЛЕОГИДРОГРАФИЯ — ՀՆԱՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ջրագրության բաժին, որն ուսումնասիրում է երկրք. անցյալում (հիմնականում չորրորդականի տարբեր ժամանակաշրջաններում) գոյություն ունեցած, ներկայումս թաղված գետային ցանցը,

ծամանակի ընթացքում նրա կրած փոփոխությունները, պատճառներն ու օրինաչափությունները:

ПАЛЕОГИДРОХИМИЯ — ՀՆԱԶՐԱՔԻՄԻԱ, ուսմունք, որն ուսումնասիրում է երկրի անցյալում բնական ջրերի քիմ. կազմի ձևավորման հարցերը: Քիչ գործածական տերմին:

ПАЛЮСТРАЛЬНЫЕ (БОЛОТНЫЕ) ВОДЫ — ՃԱՀՄԱՅԻՆ (ՊԱՅՈՒՍՐԱՍ) ԶՐԵՐ, ըստ Օ. Կ. Լանգեի, հավելյալ խոնավության տեղերում (տունդրայում, թսկիրներում) տարածված հողային ջրեր: Առանձնացվում են Ծ. ջ-ի 2 հիմնական տիպ՝ ջրբաժանային և հովտային: Քիչ գործածական տերմին:

ПАРАКЛАЗОВЫЕ ВОДЫ — ԽՋՈՒՄՆԱԾԵՂՔԱՅԻՆ ԶՐԵՐ, խզումնային բնության խոշոր ճեղքերի նկատմամբ կապված ստ. ջրեր: Պ. ջ. հանդիսանում են ճեղքաներակային ջրերի տեսակ: Ավելորդ տերմին:

ПАРАМЕТРЫ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ВОДОНОСНОГО ГОРИЗОНТА — ԶՐԱՍԱՐ ՀՈՐԻԶՈՆԻ ԶՐԱԵՐԿՐԱՑԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐ, ջրատար հորիզոնի էական հատկությունները բնութագրող մեծություններ, որոնք հիմք են ծառայում պաշարների հաշվարկի և նախագծային աշխատանքների կատարման համար: Զրաերկր. հիմնական պարամետրերից են ջրատար ապարների ծծանցման, ջրահաղորդականության, ճնշումահաղորդականության և մակարդակահաղորդականության գործակիցները, ինչպես նաև բերված ազդեցության շտապիլը:

ПАРАМЕТРЫ ТРЕЩИНОВАТОСТИ — ԾԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐ, ապարների ճեղքավորվածության բնութագրեր, որոնց միջոցով տրվում է ճեղքավորվածության քանակական գնահատականը: Ծ. պ-ին են դասվում ճեղքերի տարածական խտությունը, նրանց բացվածությունը և տարածության մեջ ուղղվածությունը (տարածման ու անկման ազիմուտներ, անկման անկյուն): Ներկայումս ճեղքերի տարածական խտությունը որոշվում է ճեղքավորվածության մոդուլով և ճեղքային դատարկության գործակցով: Ծեղքավորվածության մոդուլը իրենից ներկայացնում է 1 գծմ ապարազանգվածի (մերկացման վրա, փորվածքում, ելուկում) ճեղքերի քանակը: Ծեղքային դատարկության գործակիցը որոշվում է որոշակի մակերեսի վրա (ծավալի մեջ) ճեղքերի գումարային մակերեսի (ծավալի) և այդ մակերեսի (ծավալի) հարաբերությամբ:

ПАРАФИНИРОВАНИЕ ОБРАЗЦА — ՆՄՈՒՇԻ ՊԱՐԱՖԻՆԱՊԱՏՈՒՄ, ապարի նմուշի պատումը պարաֆինի շերտով (հաճախ թանգիֆի օգնությամբ), որը կատարվում է նմուշի բնական խոնավությունն ու կտուցվածքը պահպանելու նպատակով:

ПАРЛИФТ — ԳՈՒՈՐԾԱՄԲԱՐՁ, հորատանցքում ջրի մակարդակի բարձրացման կամ ինքնահոսի (ինքնաշատրվանի) երևույթ, որը կատարվում է հորատանցք մուտք գործող ջրագոլորշու խտնուրդից գոլորշու անջատման շնորհիվ: Ըստ

էութեան Գ. օդաչրամբարձի (տե՛ս ԵրլիֆՏ) տարատեսակն է: Քիչ գործածական տերմին:

**ПАРОГИДРОТЕРМЫ** — ՋՐԱԳՈՒՈՐԾԱԶԵՐՄԵՐ, աղբյուրի ձևով կամ հորատանցքերի, ջրհորերի և այլ փորվածքների միջոցով ջրի բարձրացումը՝ գոլորշու ճնշման շնորհիվ: Ջ-ի բարձրացումը կատարվում է օդաչրամբարձի սկզբունքով (տե՛ս ԵրլիֆՏ):

**ПАРЫ ВОДЫ** — ՋՐԻ ԳՈՒՈՐԾԻՆԵՐ, ջրի ազդեցատային վիճակ: Ըստ Վ. Ի. Վերնադսկու, Ջ. գ. լինում են քաղցրահամ, աղի և աղաջրային: Քաղցրահամ Ջ. գ. պարունակում են 0,1 %-ից պակաս այլ գազեր, աղի Ջ. գ.՝ 0,1—5,0%, իսկ աղաջրայինը՝  $> 5,0\%$ : Ստ. ջրերի նման, Ջ. գ. կարող են լինել շարժվող և համեմատաբար անշարժ, շերտային, ուսպնյակային, ծակտիհնային, ճեղքային, երակային, կարատային, գրունտային և ճնշումնային: Հումանիշներ՝ ջրագոլորշիներ, գազանման ջրեր:

**ПАРЦИАЛЬНОЕ ДАВЛЕНИЕ** — ՊԱՐՑԻԱԼ ԾՆԾՈՒՄ, գազախառնուրդի ճնշման մասն մասը, որը պայմանավորված է խառնուրդի տվյալ բաղադրիչով: Պ. ճ. հավասար է այն ճնշմանը, որը կգործադրեր տվյալ գազը, եթե այն գտնվեր ողջ գազախառնուրդի ծավալի չափով:

**ПАССИВНОЕ ДАВЛЕНИЕ ГРУНТА** — ԳՐՈՒՆՏԻ ՊԱՍՍԻՎ ԾՆԾՈՒՄ, ինժեներական կառուցվածքի գործադրած հորիզոնական ճնշմանը գրունտի ցուցաբերած սահմանային դիմադրություն:

**ПАСПОРТ ГОРНОЙ ВЫРАБОТКИ** — ԼԵՆԻՆԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔԻ ԱՆՋՆԱԳԻՐ (ՎԿԱՅԱԳԻՐ), ջրակերպահանությունում՝ փաստաթուղթ, որտեղ արձանագրվում են լեռնային փորվածքի (հորատանցքի, ջրհորի և այլ ջրհան կառույցի) համարը, կորդինատները, շինարարության ժամանակը, փորված ապարների կտրվածքը, ջրատար հորիզոնների տեղադիրքը, ջրհանի տիպը, կահավորումը, ջրի ծախսը, քիմ. բաղադրությունը և այլ կարևոր տվյալներ:

**ПАСПОРТ КОЛОДЦА (СКВАЖИНЫ)** — ՋՐՀՈՐԻ (ՀՈՐԱՏԱՆՑՔԻ) ԱՆՋՆԱԳԻՐ, տե՛ս Паспорт горной выработки:

**ПАСПОРТИЗАЦИЯ (ОБСЛЕДОВАНИЕ) РОДНИКОВ** — ԱՂՅՅՈՒՐՆԵՐԻ ԱՆՋՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ (ՀԵՏԱԶՈՏՈՒՄ, ՆԿԱՐԱԳՐՈՒՄ), աղբյուրները, որպես ջրակրիր. կարևորագույն օբյեկտ, որոնողական-համույթային աշխատանքների ժամանակ ուսումնասիրվում են ամենայն մանրամասնությամբ: Ա. ա. կ. ժամանակ պետք է լուսաբանվեն և փաստագրվեն աղբյուրներին վերաբերվող հետևյալ հարցերը. 1) աղբյուրի համարը և տեղական անվանումը, 2) աշխար. տեղադիրքը (կորդինատները, հեռավորությունը բնակավայրերից կամ քարտեզագրական կետերից, ճանապարհների առկայությունը), 3) տեղանքի ռելիեֆը, լեռնագրական պայմանները, լանջի դիրքորոշումը, հողաբուսական ծածկը, բուսաբանական ցուցիչների առկայությունը, 4) աղբյուրի բացարձակ և հարաբերական բարձրություն-

ները (որոշվում են մեծամասշտաբ քարտեզի օգնությամբ կամ ճնշումնաչափ-աներո-  
իդի ու հիվելիդի միջոցով), 5) աղբյուրը սնող ապարների տեղադրման պայմանները,  
հասակը, կազմը, հողմահարման և ճեղքավորության աստիճանը (երբեմն կազմվում  
է սխեմատիկ երկրք. կտրվածք), 6) ջրի էլքի բնույթը (վերընթաց, վարընթաց),  
պայմանները (շերտից, կոնտակտից, ճեղքերից, այլ դատարկություններից), էլքերի  
քանակն ու դասավորությունը, 7) աղբյուրի ծավալը (որոշվում է ծավալային եղա-  
նակով՝ տարողությունների միջոցով, կամ ջրչափ սարքերի, մասնավորապես շար-  
ժական ջրթափի միջոցով), 8) աղբյուրի ջրի ֆիզ. հատկանիշները (ջերմաստիճանը,  
գույնը, համը, հոտը, վճիտությունը, pH-ը), 9) դաշտային լարորատոր սարքեր  
ունենալու դեպքում կատարվում է դաշտային քիմ. տարրալուծություն կամ ջրի  
նմուշներ են վերցվում հետազա քիմ. տարրալուծությունների համար: Եթե աղբյու-  
րի էլքի տեղում նստվածքավորուակներ կան (փառի, մակահոտակի կամ նստվածք-  
ների ձևով), ապա նրանցից նույնպես վերցվում են նմուշներ, 10) աղբյուրի ռեժիմը  
(հարցման կամ հաճախակի չափումների միջոցով), 11) աղբյուրի ջրի օգտագոր-  
ծումը, ջրհավաք կառույցների բնույթը, նրանց վիճակը: Թվարկած բոլոր տվյալները  
համառոտ ձևով բերվում են աղբյուրների անձնագրերում, որոնք պահվում են հան-  
րապետական կամ տերիտորիալ երկրք. արխիվներում:

<sup>3</sup> ПЕЛИТОВАЯ ФРАКЦИЯ — ՊԵԼԻՏԱՑԻՆ ՀՍՏԻԿԱՆՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ),  
փուխր ապարների հատիկախումբ, որի մասնիկների չափերը չեն գերազանցում  
0,005 մմ-ից: Հումանիշ՝ կավային հատիկախումբ:

ПЕНДУЛЯРНАЯ ВОДА — ՊԵՆԴՈՒԼՅԱՐ ՋՈՒՐ, հատիկավոր ապարներում  
պարունակվող ջուր, որը հատիկների շփման կետերի շուրջը ստաշացնում է ջրային  
օղակներ: Հանդիսանում է «անկյունային ջուր», «պարփակված ջուր» տերմինների  
համեմատական հոմանիշ: Ավելորդ տերմին:

ПЕНЕТРАЦИЯ (ПРОНИКНОВЕНИЕ) — ՆԵՐԹՍՓՈՒՆՑՈՒՄ, պլաստիկ գրունտ-  
ների թանձրության (կոնսիստենցիայի) որոշման եղանակ, որն իրագործվում է  
որոշակի ճնշման տակ և որոշակի ժամանակամիջոցում գրունտի մեջ ստանդարտ  
ասեղի (կոնի) ներթափանցման (խորասուզման) չափը որոշելու միջոցով:

ПЕНЕТРОМЕТР — ԹԱՆՁՐԱՉԱՓ (ՆԵՐԹՍՓՈՒՆՑՈՒՄՉԱՉՓ, ՊԵՆԵՏՐՈՄԵ-  
ՏՂՐ), ասեղնաձև կամ կոնաձև սարք, որի օգնությամբ որոշվում է պլաստիկ գրունտ-  
ների թանձրությունը (կոնսիստենցիան):

ПЕРВИЧНЫЕ ВОДЫ — ՍԿԶԲԱՑԻՆ (ԱՌԱՋՆԱՑԻՆ) ՋՐԵՐ, ըստ Օ. Մելն-  
ցերի, երկրակեղևի պլաստիկ զոնայի յուվենիլ (մագմաձին, կուսական) ջրեր: Ավե-  
լորդ տերմին:

ПЕРВИЧНЫЕ ОРЕОЛЫ РАССЕЙЯНИЯ МЕСТОРОЖДЕНИЙ — ՀԱՆՔԱՎԱՅ-  
ՐԵՐԻ ՑՐՄԱՆ ՍԿԶԲԱՑԻՆ (ԱՌԱՋՆԱՑԻՆ) ՊՍԱԿՆԵՐ, հանքային տարրերի  
բարձր պարունակությամբ զոնա՝ արմատական ապարներում, որոնք առաջացել են  
մինչ հանքամարմինների տեղադրումը (տեղայնացումը) կամ դրա ընթացքում:

**ПЕРВИЧНЫЕ ПУСТОТЫ В ПОРОДАХ** — ԱՊԱՐՆԵՐՈՒՄ ՍԿԶԲՆԱՑԻՆ ԴԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, դատարկություններ, որոնք ապարներում գոյանում են նրանց առաջացման ժամանակ, այսինքն առաջանում են միաժամանակ:

**ПЕРЕМЕЖАЮЩИЕСЯ ИСТОЧНИКИ** — ՄԵԶԸՆԴՄԵԶ ԳՈՐԾՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնք ի հակադրություն մշտական գործող աղբյուրների, մերթ ընդ մերթ դադարում են գործել, ժամանակավորապես չորանում են: Տարբերում են սեզոնային, ժամանակավոր, դիմիկ և սիֆոնային Մ. գ. ա.:

**ПЕРЕНАСЫЩЕННЫЕ ВОДОЙ ПОРОДЫ** — ԶՐՈՎ ԳԵՐՀԱԳԵՑԱԾ ԱՊԱՐՆԵՐ, փուխր ապարներ, որոնք իրենց լրիվ խոնավատարությունից ավել քանակությամբ ջուր են պարունակում: Նման դեպքերում մանրահատիկ ապարները հոսունություն են ձեռք բերում (հոսազրուտներ, ցեխաջրալին հոսքեր):

**ПЕРЕОХЛАЖДЕННАЯ ВОДА** — ԳԵՐՍԱՌԵՑՎԱԾ ԶՈՒՐ, ջուր, որը 0° Ց ցածր ջերմաստիճանում գտնվում է հեղուկ վիճակում: Սովորաբար գետի ջուրը գերաստեցվում է մինչև մինու տասնորդական ջերմաստիճան, իսկ բարձր հանքալցանցման ջուրը (աղաջուրը)՝ մինչև —20—25° Ց:

**ПЕРЕРАБОТКА БЕРЕГОВ** — ԱՓԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, նորաստեղծ ջրամբարների (ամբարտակների, արհեստական լճակների) ափերի ձևավորում, որը էապես տարբերվում է մինչ այդ գոյություն ունեցող գետային հոսքի ափերից: Զրամբարների ափերի վերամշակման հիմնական պայմանները նույնն են, ինչ ծովափերի ձևավորման (ափաբերման) համար, սակայն ի տարբերություն ծովերի, ջրամբարներում ջրի մակարդակը տարվա ընթացքում ենթարկվում է խիստ տատանումների:

**ПЕРЕУПЛОТНЕННОЕ СОСТОЯНИЕ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԳԵՐԻՍԻՏ ՎԻՃԱԿ, ապարների գերբեռնվածությամբ պայմանավորված այնպիսի վիճակ, որի դեպքում նրանց ծակոտկենությունը էապես ցածր է արտաքին գոմարային ճնշումների և ներքին կապերի շնորհիվ ունեցած ծակոտկենությունից: Ապարների գերբեռնվածությունը վերացնելիս, նրանք դանդաղորեն ուռչում են և այս կամ այն չափով վերականգնում են իրենց ծակոտկենությունը:

**ПЕРИОД ПОЛУРАСПАДА** — ԿԻՍՍՏՐՈՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐՁԱՆ, ժամանակ, որի ընթացքում ապարում առկա ցանկացած ռադիոակտիվ տարրի ատոմի տրոհումը կատարվում է կիսով չափ: Տարբեր ռադիոակտիվ տարրերի Կ. ժ. տատանվում է մեծ սահմաններում, սակայն, ինչպես և տրոհման արագությունը, կայուն է ու բնորոշ յուրաքանչյուր տարրի համար (ռադիոմի համար այն հավասար է 1590 տարվա, իսկ ռադոնի համար ընդամենը 3, 82 օրվա են): Կ. ժ. պայմանավորված է ռադիոակտիվ միջուկների ներքին հատկություններով. և կախված չէ շրջապատի պայմաններից (ջերմություն, ճնշում, նյութի ֆիզքիմ. վիճակ են):

**ПЕРМИМЕТР** — ՊԵՐՄԻՄԵՏՐ, սարք, որի օգնությամբ բարձր ճնշման կամ նոսրացման միջոցով որոշվում է ապարների հանուկի թափանցելիությունը:

**ПЕРФОРАЦИЯ ОБСАДНЫХ КОЛОНН (ТРУБ) — ՇՐՁՊԱՀ ՍՅԱՆ** (ԽՈՂՈՎՎԱԿԱՇԱՐԵՐԻ) ԾԱԿՈՏԱՎՈՐՈՒՄ (ՊԵՐՖՈՐԱՑԻԱ), հորատանցքի ամրակապման շարապան (խողովակների) պատերին անցքերի բացում, որը կատարվում է ապարների շերտերից ստ. ջրերի, մավթի կամ գազի ներհոսք ստեղծելու կամ եղածը ավելացնելու համար: Շ. ս. ծ. իրագործվում է կրակող (գնդացրային) կամ կոմույատիվ պերֆորատորների օգնությամբ:

**ПЕСЧАНАЯ ФРАКЦИЯ — ԱՎԱԶԱՅԻՆ ՀՍՏԻԿՍԽՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ)**, փոխարապարների հատիկախումբ, որոնց մասնիկների չափերը կազմում են 0,05—2,0 մմ (տե՛ս Гранулометрияческий состав горных пород):

**ПЕТЛЯ ГИСТЕРЕЗИСА — ՀԻՍԵՐԵԶԻՍԻ ՕՂԱԿ**, օղակաձև գրաֆիկ պատկեր, որը գծագրվում է գրունտների կոմպրեսիոն փորձարկումների ժամանակ, երբ բեռնվածքից կախված գրունտների ձևախախտումները դիտարկելիս գրաֆիկի ուղղակի և հակադարձ կորերը չեն համընկնում:

**ПЕЩЕРА — ՔԱՐԱՆՁԱՎ**, հեշտ քայքայվող ապարներում (գլխավորապես կրաքարերում) բնական ճանապարհով (կարտ, սուֆոզիա, ողողամաշում ևն) առաջացած լայնածավալ դատարկություն, որը կարող է մասամբ լցված լինել ջրով և պատվել մակահուման ձևերով (ստալակտիտ, ստալագմիտ): Ք-ներ կարող են դիտվել նաև հրաբխավիժակայան (էֆուզիվ) ապատածային ապարներում, հատկապես նրանց կոնտակտային մասերում, որտեղ կուտակվում են հրաբխային գազերը: Պատմական անցյալում Ք-ները ծառայել են որպես մարդկանց ու կենդանիների բնակատեղի: Ք-ների ուսումնասիրությամբ զբաղվում է անձավագիտությունը (սպելոլոգիան):

**ПИКНОМЕТР — ՊԻԿՆՈՄԵՏՐ**, 25—100 սմ<sup>3</sup> ծավալով ապակյա աստիճանաճշված անոթ, որն օգտագործվում է գրունտների կամ լուծույթների տեսակարար կշիռը որոշելու համար:

**ПИТАНИЕ ВОДОНОСНОГО ГОРИЗОНТА — ԶՐԱՏԱՐ ՀՈՐԻԶՈՆԻ ՍՆՈՒՄ**, տարբեր ծագումնային տիպի ջրերի (մթնոլորտային, մակերևութային, անջատման, խորքային ևն) ներթափանցումն ու կուտակումը ջրատար ապարների մեջ:

**ПЛАВАЮЩИЕ ПОДЗЕМНЫЕ ВОДЫ — ԼՈՂԱՑՈՂ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ**, քաղցրահամ ստ. ջրեր, որոնք տեղադրված են ծովափնյա ավազոտներում, աղեղներում կամ կղզյակներում ներծծված ծովային աղի ջրի վրա: Ավելի փոքր տեսակարար կշիռ ունենալու պատճառով քաղցրահամ ջրերը «լողում» են աղի ջրի վրա: Հոմանիշ՝ քաղցրահամ ջրերի ոսպնյակներ (տե՛ս Линзы пресных вод):

**ПЛАСТ НЕОГРАНИЧЕННЫЙ — ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԾԵՐՏ**, մեծ մակերես գրադեցնող ջրատար շերտ, որում ջրի մեծ կառույցների ազդեցությունը չի հասնում մինչև եզրային սահմանները և շերտը կարելի է դիտել որպես անսահմանափակ:

**ПЛАСТ ПОЛУОГРАНИЧЕННЫЙ — ԿԻՍԱՍՏՀՄԱՆԱՓԱԿ ԾԵՐՏ**, ջրատար շերտ, որում ջրի մեծ կառույցները գտնվում են որևէ սահմանին մոտ և կրում են նրա

ազդեցությունը, իսկ մյուս սահմանները հեռու են և նրանց ազդեցությունը կարելի է անտեսել:

ПЛАСТ-ПОЛОСА — ՇԵՐՏ-ԳՈՏԻ, հատակագծում համեմատաբար նեղ գոտով ձգվող ջրատար շերտ, որում ջրհան կառույցների վրա երկու զուգահեռ սահմաններն ազդում են, իսկ մյուս երկու սահմանները հեռու են և նրանց ազդեցությունը կարելի է անտեսել:

ПЛАСТИЧЕСКАЯ ДЕФОРМАЦИЯ — ՊԼԱՍՏԻԿ ԶԵՎԱԽԱՍՏՈՒՄ, արտաքին ուժերի ներգործությամբ գրունտի ձևախախտում, որն ընթանում է առանց նրա ամբողջության ընդհատման (խզման), ընդ որում արտաքին ուժերի ազդեցությունը վերացնելուց հետո գրունտը պահպանում է ձեռք բերած ձևը: Գրունտների Պ. ձ. կախված է խոնավությունից, ճնշումից և ջերմաստիճանից: Առավել մեծ պլաստիկությամբ աչքի են ընկնում կավային ապարներն ու քարաղբը, ընդ որում կավերի պլաստիկությունը առաջին հերթին պայմանավորված է խոնավությամբ, իսկ քարաղիը՝ ջերմաստիճանով ու ճնշումով:

ПЛАСТИЧЕСКИЕ ОПОЛЗНИ — ՊԼԱՍՏԻԿ ՍՈՂԱՆՔՆԵՐ, կավային ապարներում դիտվող սողանքներ, որոնց ապարազանգվածը տեղաշարժվում է մածուցիկ հեղուկի ձևով և մածուցիկ հոսք է հիշեցնում:

ПЛАСТИЧНОСТЬ ГЛИНИСТЫХ ПОРОД — ԿՍՎԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ, արտաքին ուժերի ներգործությամբ կավային ապարների ձևախախտման (առանց անընդհատության խախտման) և այդ ուժերի ազդեցությունը վերացնելուց հետո նրանց սոսցած ձևի պահպանման ունակություն: Կավային ապարների պլաստիկության հատկանիշները կախված են նրանց խոնավությունից, հատիկաչափական ու միներալային կազմերից, ծակոտիմային լուծույթի խտությունից, փոխանակային կատիոնների կազմից և այլ հատկություններից: Կ. ա. պ. բնութագրվում է, այսպես կոչված, պլաստիկության սահմաններով: Ինժեներական երկրաբանությունում գործածվում են պլաստիկության վերին և ստորին սահմանները: Պլաստիկության վերին սահմանը (հոսունության սահմանը) խոնավության այն քանակն է, որի դեպքում գրունտը պլաստիկ վիճակից անցնում է հոսուն վիճակի, իսկ ստորին սահմանը (գլանման սահմանը) խոնավության այն քանակն է, որի դեպքում գրունտի պլաստիկ վիճակից անցնում է կիսակարծր վիճակի: Պլաստիկության վերին ու ստորին սահմանների տարբերությունը կոչվում է պլաստիկության թիվ: Համաձայն շիննորմաների և կանոնների (ՇՆԱԿ II—15—74), կավային ապարները ըստ պլաստիկության թվի ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

- 1) Կավավազ ..... 1—7
- 2) Ավազակավ ..... 7—17
- 3) Կավեր ..... >17:

ПЛАСТОВАЯ ВОДОНАПОРНАЯ СИСТЕМА — ՇԵՐՏԱՅԻՆ ԶՐԱԾՆՇՈՒՄ-ՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, մի քանի շերտերից բաղկացած ճնշումնային ջրերի սվազանի հիդրավիկի համակարգ (տե՛ս Водонапорная система):

**ПЛАСТОВОЕ ДАВЛЕНИЕ — ՇԵՐՏԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ**, նավթային ջրաերկրաբանությունում՝ ճնշում, որի տակ գտնվում են նավթային կուտակում եղած հեղուկն ու գազը: Սկզբնային Շ. ճ. կախված է կուտակի տեղադրման խորությունից և սփռաբար մոտ է ջրաստատիկ ճնշմանը: Նավթի շահագործման ընթացքում շերտային էներգիայի ծախսին գուցընթաց Շ. ճ. նվազում է: Շ. ճ. զորավիզ լինելու համար կատարվում է նավթակուտակի արտազրագծային ջրաներմղում կամ գազային զբլիարկի մեջ գազաներմղում:

**ПЛАСТОВЫЕ (МЕЖПЛАСТОВЫЕ) ВОДЫ — ՇԵՐՏԱՅԻՆ (ՄԻՋՇԵՐՏԱՅԻՆ) ԶՐԵՐ**, ջրատար ապարների շերտերում պարունակվող ճնշումնային կամ գրունտային ջրեր, որոնք ներքևից ու վերևից պարփակված են ջրամերժ ապարներով: Շ. ջ. կարող են առաջանալ նաև տարբեր ջրատարությամբ օժտված միևնույն շերտախմբի սահմաններում (օր., ճեղքավոր ու խարամով հարուստ բազալտներում, որոնք ներքևից ու վերևից զանգվածային են): Նավթային ջրաերկրաբանությունում՝ Շ. ջ. են կոչվում տվյալ նավթային հաստվածքում պարունակվող ջրերը:

**ПЛЕНОЧНАЯ (МАКСИМАЛЬНАЯ МОЛЕКУЛЯРНАЯ) ВЛАГОЕМКОСТЬ — ԹԱՂԱՆԹԱՅԻՆ (ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄՈՒԵԿՈՒԱՅԻՆ) ԽՈՆՍԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ**, ապարի ծակոտիներում թաղանթային (թույլ կապակցված) ջուր պահելու հատկություն: Թ. խ. մեծությունը կախված է մասնիկների գոմարային մակերևույթից և համապատասխանում է թաղանթային ջրի առավելագույն քանակությանը, որը ապարում պահվում է մոլեկուլային ձողակաևության ուժերով:

**ПЛЕНОЧНАЯ (РЫХЛОСВЯЗАННАЯ) ВОДА — ԹԱՂԱՆԹԱՅԻՆ (ԹՈՒՅՈՒՅՈՒՄԱՎԱԿՑՎԱԾ) ԶՈՒՐ**, ըստ Ա. Ֆ. Լեբեդևի, ջուր, որը բարակ թաղանթով խոնավածուծ (հիգրոսկոպիկ) ջրի վրայից պատում է ապարի մասնիկները և պահվում է մոլեկուլային ձողակաևության շնորհիվ: Թ. ջ. խոնավածուծ ջրի հետ մեկտեղ կոչվում է մոլեկուլային ջուր, ընդ որում Թ. ջ. մասնիկների հետ ավելի թույլ է կապակցված: Այնուամենայնիվ, Թ. ջ. ծանրության ուժին չի ենթարկվում, սակայն տեղաշարժվում է մի մասնիկից մյուսը՝ հաստ թաղանթից դեպի հարակից բարակ թաղանթը: Ջերմության բարձրացումը արագացնում է ջրի տեղաշարժը, իսկ աղերով հագեցվածությունը՝ դժվարացնում այն: Քանի որ Թ. ջ. լրիվ չի լցնում ապարի ծակոտիները, ապա ջրաստատիկ ճնշում չի հաղորդում:

**ПЛОСКИЙ (ДВУХМЕРНЫЙ) ПОТОК ГРУНТОВЫХ ВОД — ԴՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՀԱՐԹ (ԵՐԳՉԱՓ) ՀՈՍՔ**, տե՛ս Поток плоский (двухмерный):

**ПЛОСКОРАДИАЛЬНОЕ (ОСЕСИММЕТРИЧНОЕ) ДВИЖЕНИЕ — ՀԱՐԹ ԾՄԱՌԱԳԱՅԹԱԶԵՎ (ՌԱԴԻԱԼ, ԱՌԱՆՑՔԱՍԻՄԵՏՐԻԿ) ԾԱՐԺՈՒՄ**, ծակոտիկն ապարներում որոշակի կենտրոնից դեպի եզրեր (կամ հակառակը) հեղուկի կամ գազի շարժում: Նման շարժման դեպքում հոսքի գծերը պլանում ճառագայթաձև են, իսկ ուղղաձիգ կտրվածքում՝ միմյանց զուգահեռ: Օր., ավազանի պայմաններում ջրի (նավթի, գազի) հոսքը դեպի ջրադիամիկորեն կատարյալ հորատանցքի փողը:

**ПЛОСКОСТЬ СДВИГА — ՍՈՂՔԻ (ՏԵՂԱԾԱՐԺԻ) ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ**, հար-

թություն, որով շոշափող լարումների ազդեցությամբ մարմնի (գրունտի) մի մասը տեղաշարժվում է մյուս մասի նկատմամբ: Հոմանիշ՝ սահելի հարթություն:

ПЛОСКОСТЬ СКОЛЬЖЕНИЯ — ՍԱՀՔԻ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Плоскость сдвига:

ПЛОСКОСТЬ СРАВНЕНИЯ НАПОРОВ — ԾՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՍԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, հարթություն, որից սկսվում է ճնշումների հաշվումը: Ջրաերկրաբանությունում որպես Ծ. հ. հ. ընդունվում է կամ ջրհոսքի հորիզոնական տեղադրման ջրամերձ հիմքը, կամ ծովի մակարդակը: Վերջին դեպքում Ծ. հ. հ. կոչվում է գերլայական:

ПЛОТИННЫЕ (ПОДПОРНЫЕ, БАРЬЕРНЫЕ) ИСТОЧНИКИ — ՊԱՏՎԱՐԱՅԻՆ (ԴԻՄՀԱՐԱՅԻՆ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, տե՛ս Барьерные источники:

ПЛОТНОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, ջրի միավոր ծավալի կշիռ. 1 մ<sup>3</sup> ջուրը +4° Ց դեպքում կշռում է 1 տ: Խտությունը տեսակարար կշռից տարբերվում է նրանով, որ նա ունի կշռի չափողականություն, իսկ տեսակարար կշիռը վերացական մեծություն է: Ստ. ջրերի խտությունը տատանվում է 1,0—1,4գր/սմ<sup>3</sup> սահմաններում և կախված է նրանց հանքայնացման աստիճանից:

ПЛОТНОСТЬ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, միավոր ծավալով զանգվածը (գ/սմ<sup>3</sup>)՝ նրա ծակոտիներում պարունակվող հեղուկների և գազերի հետ միասին:

ПЛОТНОСТЬ СНЕГА — ԶՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ, ձյան ծածկույթից վերցված նմուշի քաշի հարաբերությունը նրա ծավալին (գ/սմ<sup>3</sup>):

ПЛОТНЫЙ ОСТАТОК — ԽԻՏ (ՊԻՆԴ) ՄՆԱՑՈՐԴ, նույնն է, ինչ չոր մնացորդը (տե՛ս Сухой остаток):

ПЛОЩАДЬ ДРЕНИРОВАННАЯ — ՑԱՍԱՔԵՑՎԱԾ ՄԱԿԵՐԵՍ, տարածք, որի մակերևութային և ստ. ջրերը ցամաքորդի են ենթարկվում քնական գետային ջանցի կամ արհեստական փորվածքների (առուներ, ջրհորեր, հորատանցքեր ևն) միջոցով:

ПЛОЩАДЬ ЖИВОГО СЕЧЕНИЯ ПОТОКА — ՀՈՍՔԻ ԿԵՆԴԱՆԻ ԿՏՐՎԱԾԻ ՄԱԿԵՐԵՍ, հոսքի շարժմանը ողղահայաց կտրվածքի (կենդանի կտրվածքի) մակերես:

ПЛЮВИАЛЬНАЯ ОБЛАСТЬ — ԱՆՋՐԵՎԱԾԱՍ (ՊԼՅՈՒՎԻԱ) ՄԱՐԶ, առատ մթնոլորտային տեղումներով մարզ (տարեկան 1000 մմ-ից ավելի): Ա. մ-երում խիստ արտահայտված քիմ. հողմամարումը, որն ուղեկցվում է հողմամարման նյութերի տարրալուծմամբ (օր., մերձարևադարձային երկրներում):

**ПЛЫВУН** — ՀՈՍԳՐՈՒՆՏ (ԱՊԱՐԱՆՈՂԻԿ), ջրով գերհագեցած հիմնականում մանրաբրահատիկ ավազներից կազմված (50—90%) ապարներ, որոնք որոշակի ջրադիմադիկ պայմաններում մեծ շարժունակություն են դրսևորում (շարժվում են ցելխաչրի կամ շաղակի նման): Տարբերում են իսկական և կեղծ Հ-ներ: Իսկական Հ-ները, որոնք կազմված են ջրասեր կոլոիդներ պարունակող ավազներից, անցնում են հոսուն վիճակի անցնան ճնշումնաչին գրադիենտների դեպքում և մշտակալուն շարժունակություն են դրսևորում: Կեղծ Հ-ները, որոնք կազմված են կոլոիդ մասնիկներից գուրկ ավազներից, անցնում են հոսուն վիճակի զգալի ճնշումնաչին գրադիենտների դեպքում, մեշտությամբ ջրազրկվում են և կորցնում իրենց շարժունակությունը: Հ-ներում լեռնաչին փորվածքներ անցնելիս հարկ է լինում դժվարին պայքար մղել նրանց դեմ (ստեղծում, քետոնների, հատուկ վահանակների, խորասուզվող հորերի կիրառում են):

**ПЛЫВУНЫ ИСТИННЫЕ** — ԻՍԿԱԿԱՆ ՀՈՍԱԳՐՈՒՆՏՆԵՐ (ԱՊԱՐԱՆՈՂԻԿՆԵՐ), տե՛ս **Плыун**:

**ПЛЫВУНЫ ЛОЖНЫЕ (ПСЕВДОПЛЫВУНЫ)** — Կեղծ ՀՈՍԱԳՐՈՒՆՏՆԵՐ (ԱՊԱՐԱՆՈՂԻԿՆԵՐ), տե՛ս **Плыуны**:

**ПЛЯЖ** — ԼՈՂԱՓ, փոքրաթեք ափագոտի, որը կազմված է պերլալտան հոսանքներով առաջացած փուխրբևկորային նստվածքներից (գետաբար, ճալաբար, ավազներ): Լ-երը հուսալի հանգստյան գոտի դարձնելու համար հարկ է լինում կառուցել տարբեր տեսակի ափապաշտպան կառույցներ:

**ПОБЕРЕЖЬЕ (ВЗМОРЬЕ)** — ԾՈՎԱՓ (ԾՈՎԵԶՐ), ծովի (օվկիանոսի, լճի, ջրամբարի) ափամերձ գոտի, որը բնութագրվում է ծովի ու ցամաքի փոխազդեցության, մասնավորապես ջրային ծագման ռելիեֆի ձևերով:

**ПОВЕРХНОСТНОЕ НАТЯЖЕНИЕ** — ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՑԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ), հեղուկի մակերևույթի վիճակը բնութագրող մեծություն, որը թվապես հավասար է միավոր մակերևույթի ստեղծման վրա ծախսվող աշխատանքին: Վերջինը ծախսվում է մոլեկուլը մակերևույթ դուրս գալիս մակերևույթային շերտի միջմասնիկային ձողակյան ուժերը հաղթահարելու վրա: Մ. լ. հետևվանքով հեղուկը ձգտում է նվազեցնել իր մակերևույթը և, այն դեպքերում, երբ ծանրության ուժի ազդեցությունը խիստ փոքր է (դիցուք, կաթիլի չափերի փոքրության դեպքում կամ հեղուկը նույն խտության այլ հեղուկի մեջ խորասուզելիս), ապա հեղուկն ընդունում է գնդի (տվյալ ծավալի դեպքում նվազագույն մակերևույթով մարմնի) ձև: Մ. լ. նշանակվում է  $\sigma$  տառով և սովորաբար չափվում է էրգ/սմ<sup>2</sup>-ներով:

**ПОВЕРХНОСТНОЕ ТРЕНИЕ** — ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՑԻՆ ԾՓՈՒՄ, երկու միմյանց հետ հպվող մարմինների միջև զարգացող շփում: Նման շփման օրինակներ են հանդիսանում ափաքերումը, ողողամաշումը, կառույցների հիմնաստակերից գրունտների արտամղումը ևն:

**ПОВЕРХНОСТНЫЕ ВОДЫ** — ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՑԻՆ ԶՐԵՐ, բոլոր ազդեգա-

տային վիճակներում գտնվող բնական ջրեր, որոնք մշտապես (կոտակներ) կամ ժամանակավորապես (հոսքեր) գտնվում են երկրի մակերևույթի վրա:

**ПОВЕРХНОСТНЫЙ СТОК** — ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀՈՍՔ, բնության մեջ ջրի ջրջանառության կարևոր բաղադրիչ՝ մթնոլորտային տեղումների և ստ. ջրերի էլքերի այն մասը, որը գետային ցանցով տեղափոխվում է դեպի ծովեր, օվկիանոսներ և փակ ափազաններ: Մ. հ. ընդգրկում է լանջային, գետային և վարարում-հեղեղումային (թավեգային) հոսքերը:

**ПОВЕРХНОСТЬ АРТЕЗИАНСКАЯ** — ԱՐՏԵԶՅԱՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, տե՛ս: Поверхность напорная:

**ПОВЕРХНОСТЬ ГРУНТОВЫХ ВОД СВОБОДНАЯ** — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱԶԱՏ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, տե՛ս Зеркало грунтовых вод:

**ПОВЕРХНОСТЬ ДЕПРЕССИОННАЯ** — ԻՋՈՒՅԹԱՅԻՆ (ԴԵՊՐԵՍԻՈՆ) ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, ճնշումնային կամ գրունտային ջրերի մակերևույթի ցածրացող մասը՝ դեպի նրանց բնական էլքի տեղը կամ դեպի արհեստական փորվածքները (ջրհոր, հորատանցք և այլ ջրհան կառույց), որոնցից ջրի արտամղում է կատարվում: Համասեռ ջրատար ապարներում Դ. մ. ունենում է սիմետրիկ իջույթային ձագարի ձև (տե՛ս Депресссионная воронка), իսկ անհամասեռ ապարներում նրա սիմետրիկությունը էապես խախտվում է:

**ПОВЕРХНОСТЬ ПЬЕЗОМЕТРИЧЕСКАЯ** — ԾՆՇՈՒՄՆԱԶԱՓԱԿԱՆ (ՊԻԵՉՈՄԵՏՐԻԿ) ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, տե՛ս Поверхность напорная:

**ПОВЕРХНОСТЬ РАВНЫХ НАПОРОВ** — ՀԱՎԱՍԱՐ ԾՆՇՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, ջրային հոսքի ընդլայնական կտրվածքի մակերևույթ: Հ. ճ. մ. արտահայտվում է հոսքի մակերևույթի միևնույն բարձրության կետերը միացնող գծերով, որոնք գրունտային ջրերի (ազատ մակերևույթ ունեցող ջրերի) համար կոչվում են ջրաիզոգծեր (հիդրոիզոհիպսեր), իսկ ճնշումնային ջրերի համար՝ պիեզոիզոգծեր (իզոպիեզներ): Հոմանիշ՝ էկվիպոտենցիալ մակերևույթ:

**ПОВЕРХНОСТЬ СКОЛЬЖЕНИЯ (СМЕЩЕНИЯ) ОПОЛЗНЯ** — ՍՈՂԱՆՔԻ ԱՆՔՔԻ (ՏԵՂԱԾԱՐԺԻ) ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, լանջի անշարժ ապարազանգվածից սողանքային մարմնի անջատման մակերևույթ, որով էլ տեղի է ունենում սահքի գործընթաց: Կրկնվող կամ բազմահարկ սողանքների մոտ կարող են դիտվել մեկ կամ մի քանի սահքի մակերևույթներ: Ս. ս. մ., որը հանդիսանում է սողանքի բնորոշ կառուցվածքային տարր, կախված սողանքային գործընթացի մեխանիզմից, տարբեր ձևեր է ունենում (տե՛ս Опольень):

**ПОГЛОЩАЮЩИЙ (ДРЕНАЖНЫЙ) КОЛОДЕЦ** — ԿԼԱՆՈՂ (ՑԱՄԱՔՈՒՐ-ՎԱՅԻՆ) ՀՈՐ, ոռոգահալաց լեռնային փորվածք (հորատանցք, ջրհոր ևն), որն օգտագործվում է մակերևույթային, ոռոգման, երբեմն նաև կոյուղու ջրերը կլանելու և ստ. ճանապարհով հեռացնելու համար: Վերջին ժամանակներում Կ. հ-երը հա-

շողութեան օգտագործվում են ստ. ջրերի արհեստական պաշարների ստեղծման նպատակով: Ջրի այն քանակը, որը միավոր ժամանակահատվածում կարող է կանվել Կ. հ-ի միջոցով, կոչվում է հորի կլանման ընդունակություն (չափվում է 1/վրկ, մ<sup>3</sup>/ժամ):

**ПОГЛАЩАЮЩИЙ КОМПЛЕКС** — ԿԼԱՆՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ, ըստ Կ. Կ. Հեդրոյցի, հողերի և ապարների որոշակի տեսակներ, որոնք պարունակում են կանված կատիոններ և ընդունակ են փոխանակման ռեակցիաների (լուծույթից կատիոններ կլանելու): Փոխանակման ռեակցիաները որոշիչ նշանակություն ունեն քնական ջրերի քիմ. բաղադրության ձևավորման գործում:

**ПОГЛАЩЕНИЕ ВОДЫ СКВАЖИНОЙ (КОЛОДЦЕМ)** — ՋՐԻ ԿԼԱՆՈՒՄ ՀՈՐՍԱՏԱՆՑՔՈՒՎ (ՀՈՐՈՎ), նույնն է, ինչ կլանող (ցամաքորոպից) հոր (տե՛ս Գլոցաющий дренажный колодец):

**ПОГРЕБЕННЫЕ ВОДЫ** — ԹԱՂՎԱԾ ՋՐԵՐ, երկրբ. անցյալի ջրային ավազանների (ծովերի, լճերի, լազուների) ջրեր, որոնք նստվածքազույացման գործընթացում մնացել են նստվածքների ծակոտիներում, ծածկվել են հետագա նստվածքներով և տևական ժամանակ թաղված վիճակում մնացել խոր նրկվածքների փակ շերտերում: Ըստ ծագման թ. ջ. լինում են. 1) համածին-ջրատար ապարների հետ միաժամանակ առաջացած (սինգենետիկ) և, 2) մակածին կամ հետնստվածքազույացման (էպիգենետիկ), որոնք ծովային ավազաններից ներթափանցել են ափագոտու կամ հատակի նախկինում ձևավորված ծակոտիկն ապարների մեջ:

**ПОГРЕБЕННЫЙ КАРСТ** — ԹԱՂՎԱԾ ԿԱՐՍՏ, կարստային դատարկություններ, որոնք առաջացել են երկրբ. անցյալում, իսկ հետագայում լցվել են երկրորդական նորագոյացումներով և ապա ծածկվել երիտասարդ նստվածքներով:

**ПОДВЕШЕННЫЕ ВОДЫ** — ԿԱԽՎԱԾ ՋՐԵՐ, տե՛ս Вода (влага) подвешенная:

**ПОДВОДНЫЙ (СУБАКВАЛЬНЫЙ) ИСТОЧНИК** — ՍՏՈՐՋՐՅԱ (ՍՈՒԲԱԿՎԱԿԱ) ԱՂՔՑՈՒՐ, ստ. ջրերի էլք՝ ջրավազանների կամ ջրոսբերի ընդջրյա մասերում: Ծովի հատակում բեռնաթափվող աղբյուրները կոչվում են ընդծովյա (սուբմարինային):

**ПОДЗЕМНАЯ ГИДРАВЛИКА (ГИДРОДИНАМИКА)** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀԻՂՐԱՎԼԻԿԱ (ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱ), հիդրավլիկայի բաժին, որն ուսումնասիրում է ստ. ջրերի, նավթի և գազի շարժումը ծակոտիկն ապարներում: Ջրաերկրաբանությունում ներկայումս ընդունված է «Ստ. ջրերի դինամիկա» անվանումը:

**ПОДЗЕМНАЯ НАЛЕДЬ** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՍԱՌՅԱՇԵՐՏ (ՍԱՌՅԱԿՈՒՏԱԿ), շերտաձև կամ ոսպնյակաձև առույց, որն առաջանում է գործույցա շերտում՝ ջրատար ապարների ստեղծման հետևանքով:

**ПОДЗЕМНОЕ ПИТАНИЕ РЕК** — ԳԵՏԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՄՆՈՒՄ, ստ. ջրերի բեռնաթափումը գետերի մեջ: Այն հիմնականում կատարվում է գրունտային ջրերի հաշվին. արտեզյան ջրերը նվազ չափով են մասնակցում գետերի սնմանը: Երբեմն ստ. սնումը կատարվում է աննկատ, բազմաթիվ փոքր էլքերի ձևով և հայտնաբերվում է միայն գետի ծախսը տարբեր կտրվածքներում չափելով:

**ПОДЗЕМНЫЕ ЛЬДЫ** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՍԱՌՈՒՅՅՆԵՐ, տե՛ս Ископаемый лёд:

**ПОДЗЕМНЫЕ РЕКИ (ВОДОТОКИ)** — ՍՏՈՐԵՐԿՅԱ ԳԵՏԵՐ (ՋՐՀՈՍՔԵՐ), գետանման ստ. ջրի ութեր՝ կարստային դատարկություններում, ինչպես նաև ուժեղ ճեղքավոր ապարներում:

**ПОДЗЕМНЫЙ ПОТОК** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍԱՆՔ, ջրատար շերտերում ստ. ջրերի անընդհատ տեղաշարժ:

**ПОДМЕРЗЛОТНЫЕ ВОДЫ** — ԵՆԹԱՍԱՌՅՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода подмерзлотная:

**ПОДМОРЕННЫЕ ВОДЫ** — ԵՆԹԱՍԱՌՅԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԵՆԹԱՍՈՐԵՆԱՅԻՆ) ՋՐԵՐ, տե՛ս Вода подморенная:

**ПОДОЗЕРНЫЕ ВОДЫ** — ԵՆԹԱՎՃԱՅԻՆ ՋՐԵՐ, ըստ Ա. Ի. Ջենն-Լիտովսկու (1948), ջրեր, որոնք տեղադրված են հանքային լճերի հատակային նորագոյացումներում և նրանց տակ գտնվող արմատական ապարներում: Ե. ջ-ի հանքայնացումը տատանվում է մեծ սահմաններում. հատակային նորագոյացումների ջրերը ունենում են մեծ հանքայնացում՝ լճի ջրին մոտ քիմ. կազմով, իսկ արմատական ապարների ջրերը կարող են քաղցրահամ լինել՝ լճի ջրից էապես տարբեր քիմ. կազմով:

**ПОДОШВА ОПОЛЗНЯ** — ՍՈՂԱՆՔԻ ՀԻՄՔ (ՆԵՐԲԱՆ), տե՛ս Базис оползня:

**ПОДОШВЕННАЯ ВОДА** — ՀԱՏԱԿԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода подошвенная:

**ПОДПОР ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԳԻՄՀԱՐ, ստ. ջրերի մակարդակի բարձրացում, որն ուղեկցվում է որոշակի տեղամասերում (ավելի հաճախ բեռնաթափման մասում) հոսքի մակերևույթի թեքության և հոսանքի արագության փոքրացումով: Դիմհարի երևույթ տեղի է ունենում հոսքի կենդանի կտրվածքի թողունակության փոքրացման կամ հոսքի սահմանում մակարդակի բարձրացման հետևանքով: Օր., գետի վարարումների կամ հովտում կառուցված ջրամբարի ջրի բարձր մակարդակը դիմհար է տալիս հովտի լանջերից ողողահունի նստվածքների մեջ բեռնաթափվող ստ. ջրերին:

**ПОДПОРНАЯ СТЕНКА** — ՀԵՆԱՊԱՏ, արհեստական կառույց, որը կոչված է ապահովել բնական լանջերի կամ արհեստական թեքությունների անկայուն ապարազանգվածների կայունությունը (անշարժությունը): Հ-երը դրվում են հոսալի հիմնատակերի վրա, կառուցվում են քետոնից, քարից, այլ նյութերից և հաճախ պահանգներով (անկերներով) ամրացվում են լանջի կայուն ապարներին:

ПОДПОРНЫЕ (БАРЬЕРНЫЕ) ИСТОЧНИКИ — ԴԻՄՀԱՐԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ-  
ՆԵՐ, տե՛ս Плотинные источники:

ПОДРУСЛОВЫЕ ВОДЫ — ԵՆԹԱՀՈՒՆԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода подрусовая:

ПОДСЕЧКА СКЛОНА — ԼԱՆՋԻ ՀԱՏՈՒՄ, լանջի ստորին մասի հատում  
(տակից կտրելը), որը սովորաբար հանգեցնում է լանջը կազմող ապարների կա-  
յունության խախտմանը:

ПОДСОЛЕВЫЕ ВОДЫ — ԵՆԹԱԱՂԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода подсолевая:

ПОДСЧЕТ ЗАПАСОВ ПОДЗЕМНЫХ ВОД — ԴՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱԾԱՐ-  
ՆԵՐԻ ՀԱԾՎԱՐԿ, ջրակերպ. հաշվարկ, որը կատարվում է ստ. ջրերի պաշարների  
նետախուզման հիման վրա: Ս. ջ. պ. հ. և գնահատումը կատարվում է ջրադինա-  
միկական, ջրաբանական (հիդրավիկական), հաշվեկշռային, ինչպես նաև մոդե-  
լացման (էլեկտրաջրադինամիկական մեմանակման) մեթոդներով և հաշվառման  
որոշակի կանոնակարգով: Ըստ ստ. ջրերի պաշարների կատեգորիաների (տե՛ս  
Категория запасов подземных вод), հաշվարկը թույլ է տալիս որոշել գնահատ-  
ված պաշարների այս կամ այն նպատակներով (ջրամատակարարում, ոռոգում,  
հանքաջրաբուժություն, քիմ. տարրերի արդյունահանում ևն) օգտագործման հնա-  
րավորությունները:

ПОДТОПЛЕНИЕ — ՋՐԱԾԱԾԿՈՒՄ, ափամերձ գոտիներում գրունտային ջրերի  
մակարդակի բարձրացում, որը հանգեցնում է հողերի գերխոնավացման և ճահճա-  
կալման: Ջ. առաջանում է գրունտային ջրերը գետային ջրերով դիմադրվելիս, երբ  
գետի մակարդակը բարձրանում է վարարումների կամ ջրամբարներ ստեղծելու  
նետևանքով:

ПОДУШКА ВОДЯНАЯ — ՋՐԱՅԻՆ ԲԱՐՁԻԿ, ստ. ջրի փակ կուտակում (ամ-  
բար, շտեմարան), որը տեղադրված է ստ. դատարկություններում և գտնվում է  
մեծ ճնշման տակ: Հորատանցքի միջոցով ջուրը Ջ. ր-ից հեռացնելիս, նրա վերևում,  
երկրի մակերևույթի վրա կարող է ձագարան փվվածք առաջանալ:

ПОДУШКА ГЛИНЯНАЯ (ЦЕМЕНТНАЯ) — ԿԱՎԱՅԻՆ (ՑԵՄԵՆՏԱՅԻՆ)  
ԲԱՐՁԻԿ, կավի (կամ ցեմենտի) բարակ շերտ, որը ստեղծվում է հիմքի տակ՝ հիմ-  
նատակի վրա ճնշման հնարավոր հավասարաչափ բաշխում ապահովելու համար:

ПОИСКИ И РАЗВЕДКА ПОДЗЕМНЫХ ВОД — ԴՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՈՐՈ-  
ՆՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Гидрогеологические поиски и разведка:

ПОИСКОВАЯ СТАДИЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ —  
ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՓՈՒԼ,  
ջրակերպ. ուսումնասիրությունների փուլ (ստադիա), որի ժամանակ հայտնաբերվում  
և նախնական հետազոտման են ենթարկվում ստ. ջրերով հարուստ, կենտրոնացված  
ջրամատակարարման համար հեռանկարային տեղամասեր: Որոնողական ուսումնա-

սիրությունների արդյունքում կատարվում է հետազոտվող տարածքի շրջանացում և առանձնացվում են հետախուզական աշխատանքների ծավալման հեռանկարային տեղամասերը:

**ПОИСКОВЫЕ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ПРИЗНАКИ (КРИТЕРИИ) — ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐ (ՉՈՓԱՆԻԾՆԵՐ),** ջրաերկրք. ցուցանիշներ (չափանիշներ), որոնց հիման վրա հաստատվում է ստ. ջրերի ծագումնային (գենետիկական) կապը այս կամ այն օգտակար հանածոյի հետ: Հիմնական Ո. ջ. գ. են հանդիսանում ջրային ցրման պասակները (եզրապասակները), ապինքն ջրատար հոլիզոնների (համալիրների) լոկալ տեղամասերը, որտեղ ստ. ջրերը բնութագրվում են այս կամ այն քիմ. տարրի կամ միացության (օր., աղերի, պղնձի, ցինկի, կապարի, ուրանի, ռադոնի ևն) ֆոնային պարունակությունից բարձր պարունակությամբ: Նման բարձր պարունակությունը պայմանավորված է տվյալ տարածքի երկրակառուցվածքային ու ջրաերկրք. պայմաններով և կարող է ծառայել որպես որոնողական հուսալի չափանիշ:

**ПОЯМА — ՈՂՈՂԱՀՈՒՆ (ՀՈՎՏԱՀԱՏԱԿ),** գետահովտի հատակային մաս, որը վարարումների ժամանակ ծածկվում է ջրով: Ո. ձևավորվում է գետաբերուկների նստեցման և գետահունի դեզերումների (տեղափոխությունների) հետևանքով:

**ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ — ՈՐՈՆՄԱՆ ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐ,** տե՛ս Гидрохимические поисковые критерии:

**ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ НА КАМЕННУЮ СОЛЬ — ՔՍՐԱՂԻ ՈՐՈՆՄԱՆ ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐ,** ստ. ջրերի քիմ. բաղադրատարրեր, որոնք ցույց են տալիս աղերի կուտակների առկայությունը: Քարաղի (կերակրի աղի՝ NaCl) որոնման ցուցանիշներ են հանդիսանում բյուր-նատրիումային աղաջրերը կամ բարձր հանքայնացված ջրերը, որոնց մեջ  $Na^+$  և  $Cl^-$  իոնների քանակը մոտավորապես հավասար է, իսկ  $Cl/Br$  գործակիցը բարձր է ( $Cl/Br \geq 1000$ ): Կալիումական աղերի առկայության ցուցանիշներ են հանդիսանում  $K^+$ -ի բարձր պարունակությամբ հանքայնացված ջրերը, որոնցում  $Na/K$  գործակիցը (կշռային միավորներով) փոքր է ( $Na/K < 28$ ):

**ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ НА НЕФТЬ И ГАЗ — ՆԱՎԹԻ ՈՒ ԳԱԶԻ ՈՐՈՆՄԱՆ ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐ,** ստ. ջրերի գազային և իոնային-աղային բաղադրիչներ, որոնք ցույց են տալիս նավթի կամ գազի կուտակների հնարավոր առկայությունը: Հիմնական ցուցանիշներից են. 1) ածխաշրտեխների (էթան, պրոպան, բութան և բարձր հումուրոզներ՝ լուծված կամ ազատ անջատվող մեթանի գերակշռումով) բարձր պարունակություն, 2) կենսածին ձմբաջրածնի և ազոտի բարձր պարունակություն, 3) իոնային-աղային ցուցանիշներ՝ ֆենոլներ, նավթենատներ, ջրում պարունակվող օրգ. նյութերի օքսիդացման բարձր ունակություն, 4) ամոնիումի, յոդի, բրոմի (փոքր բյուր-բրոմային գործակիցի դեպքում), ջրատուֆիլիի բարձր պարունակություն, 5) ջրերի սուլֆատներով թեր-հագեցվածություն (կամ բացակայություն), 6) ջրերի գերիշխող ջրակարբոնատ-բյուրիլային-նատրիումային և բյուր-կալցիում-նատրիումային կազմ: Հիշյալ ցուցանիշները օգտագործվում են համակցված ձևով:

**ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ НА СУЛЬФИДНЫЕ РУДЫ** — ՍՈՒԼՖԻԳԱՅԻՆ ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐ, ստ. ջրերի քիմ. բաղադրության տարրեր, որոնք ցույց են տալիս սուլֆիդային հանքակուտակների առկայությունը: Տարբերում են ջրաքիմ. ուղղակի և անուղղակի ցուցանիշներ: Ուղղակի ցուցանիշներ են հանդիսանում ջրերում գտնվող մետաղական իոնների խտությունը բարձր պարունակությունները, որոնք մասնանջում են տարբեր հանքակուտակների (Mn, Zn, Cu, Pb, As, Ni, CO, Sn, Bi, Cr, Ti, Li, Be, Zr, Mo են)՝ արդյունաբերական արժեքը: Անուղղակի ցուցանիշներ են հանդիսանում ստ. ջրերի քիմ. բաղադրության հնարավոր փոփոխությունները, որոնք պայմանավորված են հիպերգենեզի զոնայում հանքանյութի վերափոխումներով՝ ջրի բարձր հանքայնացումը սուլֆատային իոնների և ուղեկից-մետաղների բարձր պարունակությունը, ջրի թթու ռեակցիան ( $pH < 7$ ): Հնդհանուր ակնարկային աշխատանքների ժամանակ առավել մեծ նշանակություն ունեն ջրի քիմ. բաղադրության այն տարրերը ( $SO_4$ , Mo, Zn, Ni, Cl, Mn են), որոնք ջրային լուծույթում բարձր պարունակությամբ կարող են տարածվել հանքային մարմնից բավական հեռու: Մանրամասն աշխատանքների ժամանակ հատուկ նշանակություն ունեն այն տարրերը, որոնք ջրային լուծույթում պահպանվում են միայն հանքային մարմնի տարածման սահմաններում: Դրանց թվին են պատկանում ալյումինի մետաղներ, որոնց պարունակությունը հանքանյութի մեջ վերահսկվում է նրանց օքսիդների ցածր լուծունությամբ (Sb, Sn, Bi, Ge, Fe, Al) կամ կարբոնատների շատ ցածր լուծունությամբ (Co, Cd, Hg, Pb):

**ПОКАЗАТЕЛИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ СОСТОЯНИЕ ПРИРОДНЫХ ВОД** — ԲՆԱԿԱՆ ԶՐԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐ, ցուցանիշներ, որոնք որոշում են բնական ջրերի հանքայնացման առանձնահատկությունները և, իրենք իրենց հերթին, պայմանավորվում են ջրերի քիմ. բաղադրության կազմով: Այդ ցուցանիշներն են՝ ջրածնային իոնների կուտակումը ( $pH$ ) և օքսիդացման-վերականգնման պոտենցիալը (Eh):

**ПОКАЗАТЕЛЬ АГРЕГИРОВАНИЯ ПОРОДЫ ПРИ ВЫСЫХАНИИ** — ՉՈՐԱՑՄԱՆ ԳԵՊԵՐՈՒՄ ԱՊԱՐԻ ԱԳՐԵԳԱՏԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻԾ, ապարի հատիկաչափական կազմի վրա չորացման ազդեցությունը բնութագրող ցուցանիշ, որը հավասար կամ մեծ է մեկից: Այդ ցուցանիշի մեծ արժեքներով են բնութագրվում հատկապես կոլոիդներով հարուստ կավային ապարները, որոնք չորանալիս անդարձելիորեն կծկվում, վերածվում են կոշտերի: Նման կավերը, ամենայն հավանականությամբ, դիագենեզի և էպիգենեզի ժամանակ չորացման չեն ենթարկվել:

**ПОКАЗАТЕЛЬ КОЛЛОИДНОЙ АКТИВНОСТИ ГРУНТА** — ԳՐՈՒՆՏԻ ԿՈՒՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻԾ, ցուցանիշ, որը բնութագրում է գրունտի կոլոիդային ակտիվությունը ( $K_p$ ) և կախված է նրա հատիկաչափական ու միներալային բաղադրակազմերից: Գ. կ. ա. ց. որոշվում է  $K_p = \frac{M_p}{M_c}$  բանաձևով, որտեղ՝  $M_p$  — պլաստիկության թիվն է (%),  $M_c$  — կավային հատիկախմբի (ֆրակցիայի) պարունակությունն է (%): Ըստ կոլոիդային ակտիվության ցուցանիշի, կավային գրունտները բաժանվում են 3 խմբի. 1)  $K_p > 1,25$  — բարձր ակտիվության կավեր

(մոնոմորֆիոնի գերակշռությամբ), 2)  $0,75 < K_p < 1,25$  — միջին ակտիվության կավեր, 3)  $K_p < 0,75$  — ցածր ակտիվության կավեր (կառլինիտի գերակշռությամբ):

ПОКАЗАТЕЛЬ КОНСИСТЕНЦИИ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԹԱՆՁՐՈՒԹՅԱՆ (ԿՈՆՍԻՍՏԵՆՑԻԱՅԻ) ՑՈՒՑԱՆԻԾ, մեծություն (B), որը բնութագրում է կավային գրունտների բնական թանձրությունը (կոնսիստենցիան): Գ. թ. ց. իրենից ներկայացնում է գրունտի բնական խոնավության (W) և պլաստիկության ստորին սահմանի խոնավության (W<sub>p</sub>) տարբերության հարաբերությունը գրունտի պլաստիկության թվին (M<sub>p</sub>)՝  $B = \frac{W - W_p}{M_p}$ : Եթե  $W \leq 1,2 W_p$ , ապա գրունտը գտնվում է կարծր վիճակում, իսկ եթե  $W > 1,2 W_p$ , ապա՝ պլաստիկ վիճակում:

ПОКАЗАТЕЛЬ РАЗМОКАНИЯ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԿԱԿՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻԾ, ժամանակ (րոպեներով), որի ընթացքում պլաստիկ գրունտից պատրաստված և  $105^\circ$  Ց տակ վտարանում չորացրած գլանը (2,5 սմ տրամագծով և 2,5 մմ բարձրությամբ) ջրով թրջելիս լիովին կակղում-քայքայվում է:

ПОКАЗАТЕЛЬ СТЕПЕНИ СЖАТИЯ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՍԵՂՄՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՑՈՒՑԱՆԻԾ, մեծություն ( $K_{\text{ս}}$ ), որը բնութագրում է սելմման հետևանքով գրունտի ծավալի փոքրացման և նրա սկզբնական ծավալի հարաբերությունը: Գ. ս. ց. որոշվում է  $K_{\text{ս}} = \frac{\Sigma q - \Sigma p^0}{1 + \Sigma q}$  անաձևով, որտեղ՝  $\Sigma q$  — գրունտի պլաստիկության վերին սահմանին համապատասխանող ծակոտկենության գործակիցն է,  $E_{p^0}$  — նույն գործակիցն է՝ գրունտի բնական կառուցվածքի և խոնավության դեպքում:

ПОКАЗАТЕЛЬ УПЛОТНЕНИЯ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԽՏԱՅՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻԾ, մեծություն ( $K_{\text{խ}}$ ), որը բնութագրվում է գրունտի բնական ու նվազագույն ծակոտկենության գործակիցների տարբերության ( $\Sigma p^0 - \Sigma q$ ) և ստավեագույն ու նվազագույն ծակոտկենության գործակիցների տարբերության ( $\Sigma m - \Sigma q$ ) հարաբերությամբ՝  $K_{\text{խ}} = \frac{\Sigma p^0 - \Sigma q}{\Sigma m - \Sigma q}$ :

ПОКАЗАТЕЛЬ ФИЗИКО-ХИМИЧЕСКОЙ ЧУВСТВИТЕЛЬНОСТИ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՖԻԶԻԿՎԱԿԻՄԻԱԿԱՆ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻԾ, ցուցանիշ, որը բնութագրում է ջրի հանքայնացման ազդեցությունը կավային գրունտների ջրափրության (սֆիրոֆիլության) վրա: Այդ ցուցանիշը որոշակիորեն ցույց է տալիս կավային գրունտում նուրբ հատիկավաճիկների (ֆրակցիաների) միներալային բաղադրությունը և հեշտ լուծելի աղերի պարունակությունը: Առավել մեծ ջրափրություն ցուցաբերում են մոնոմորֆիոնային կազմի, կարբոնատներից զուրկ չստվակաված կավերը:

ПОЛЕВЫЕ ЛАБОРАТОРИИ — ԳԱՇՏԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, սարքավորումների, գործիքների, ամանների, քիմ. նյութերի ու ռեակտիվների հավաքածուներ, որոնք անհրաժեշտ են դաշտային պայմաններում երկրբ., ջրաերկրբ. և ինժե-

ներանկրք. տարբեր բնույթի ուսումնասիրություններ կատարելու համար: Գոյություն ունեն Դ. 1-ի բազմաթիվ տեսակներ և տարբերակներ՝ ջրաքիմ. տարրալուծությունների և գրունտների ֆիզմեխ. հատկանիշների ուսումնասիրությունների համար:

ПОЛЕЗНАЯ НАГРУЗКА — ԹԳՏԱԿԱՐ ԲԵՌՆՎԱԾՔ, պաշտպանական կանոցվածքների (հենապատ, պատվար, ջրծեծ, արգելապատ ևն) բեռնվածք, որն անհրաժեշտ է նրանց նշանակումը իրականացնելու համար:

ПОЛЕСЬЕ — ԱՆՏԱՌՈՒՏ (ԱՆՏԱՌԱՃԱՀՃՈՒՏ), ճահճակալված անտառապատ ցածրադիր հարթավայր, որտեղ անտառապատ ավազուտները հերթափոխվում են ճահճուտներով, լճերով և գետահուներով: Ա.-ների սահմաններում տարածված գրունտային ջրերին հատուկ է ջրածնային իոնի, շարժունակ երկաթի և հումուսային նյութերի բարձր պարունակությունը: Տիպական Ա.-ներ են համարվում Պրիպյատի և Մեշչերյան ցածրությունները:

ПОЛЗУЧЕСТЬ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՍՈՂՔ, բեռնվածքի ազդեցության տակ գրունտի դանդաղ ու անընդհատ ձևափախուման ունակություն: Բեռնվածքի ազդեցությունը վերացնելիս այդ ձևափախումները կարող են լինել դարձելի (ստաձգական) և ոչ դարձելի (մնացորդային կամ պլաստիկ):

ПОЛИВНАЯ НОРМА — ԶՐՄԱՆ ՆՈՐՄԱ, ջրաքանակ, որն անհրաժեշտ է մեկ ջրման համար 1 հա ցանքատարածություն ոռոգելիս: Զ. ն. արտահայտվում է մ<sup>3</sup>/հա-երով և պայմանավորված է մի շարք գործոններով (տե՛ս Օրосительная норма): Զրման և ոռոգման նորմաների պահպանումը կարևոր է ագրոտեխ., ջրի խնայողության և բնության պահպանության տեսակետներից:

ПОЛНАЯ ВЛАГОЕМКОСТЬ ПОРОДЫ — ԱՊԱՐԻ ԼՐԻՎ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, սպարում ջրի բոլոր տեսակների գումարային պարունակությունը՝ նրա դատարկությունների լրիվ հագեցվածության դեպքում: Ա. լ. խ. կարելի է արտահայտել բացարձակ չոր սպարի կշռի կամ սպարի միներալային մասնիկների (կմախքի) ծավալի հարաբերությամբ (ծակոտիների ծավալի նկատմամբ հարաբերությունը միշտ հավասար է 1-ի): Քանի որ կավային սպարների ծակոտիները գերազանցապես մազական են, այս նրանց լրիվ խոնավատարությունը մոտ է կամ հավասար մազանոթային խոնավատարությանը: Բացի այդ, կավային սպարների համար պետք է տարբերել լրիվ խոնավատարության երկու տեսակ. 1) կավերի տվյալ ծակոտկենության դեպքում և, 2) նրանց ազատ ուղչման դեպքում: Չուղչող սպարների համար «լրիվ խոնավատարություն» հասկացությունը համընկնում է «լրիվ խոնավություն» կամ «կշռային ծակոտկենություն» հասկացությունների հետ:

ПОЛОВОДЬЕ — ՎԱՐԱՐՈՒՄ, գետի ջրային ռեժիմի փուլ, որը բնութագրվում է տարվա մեջ առավելագույն ջրատարությամբ, գետի մակարդակի տեսական բարձրացմամբ, սովորաբար ուղեկցվելով հունից ջրի դուրս գալու ու ողողահունը ողողելու երևույթներով: Վ. պայմանավորվում է գետի սնման հիմնական աղբյուրով. սերձարևադարձային գոտում՝ ամառային հորդառատ անձրևներով, միջին գոտում՝ գարնանային ձնհալքով ևն: Միևնույն կլիմայական գոտու գետերին բնորոշ են տարվա

որոշակի սեզոնի վ-ները, սակայն ինտենսիվությամբ և տևողությամբ նրանք զգալիորեն կարող են տարբերվել:

ПОЛУНАПОРНЫЕ (СУБАРТЕЗИАНСКИЕ) ВОДЫ — ԿԻՍԱՄՆՇՈՒՄՆԱՅԻՆ (ՄԵՐՁԱՐՏԵՋՅԱՆ) ՋՐԵՐ, ըստ Ֆ. Պ. Սավարենսկու, ստ. ջրեր, որոնք որոշակի սահմաններում դրսևորվող կայուն ճնշում չունեն. կարճ տարածությունների վրա այն փոփոխվում է: Հումանիշ՝ տեղական ճնշումով ջրեր:

ПОЛУРАПНЫЕ ОЗЕРА — ԿԻՍԱՔՆԱԱՊԱՋՐԱՅԻՆ ԼՇԵՐ, ըստ Ա. Ի. Ջենսկիտովսկու, հանքային լճեր, որոնք տարվա ընթացքում ինտենսիվորեն գոլորշիանում են, սակայն իսպառ չեն վերանում. բնաաղաջրերի մակերևույթը պահպանվում է  $1/3-1/4$  չափով:

ПОЛУСКАЛЬНЫЕ ПОРОДЫ (ГРУНТЫ) — ԿԻՍԱՍՊԱՌԱԺԱՅԻՆ ԱՊՈՐՆԵՐ (ԳՐՈՒԻՆՏՆԵՐ), ապարներ, որոնք օժտված են ինչպես առաձգական բյուրեղային կամ ամորֆ (կոշտ) կապերով, այնպես էլ պլաստիկ կոլոիդ կապերով: Միևչև սեղմման որոշակի սահման, քանի դեռ առաձգական կապերը չեն քայքայվել, Կ. ա. ձևախախտվում են քեռնվածքին համեմատական չափով և հակառակը: Այդ սահմանից վերև ձևախախտումը կատարվում է փոխար ապարների մեծ: Կ. ա.-ին են դասվում մերգելները (կավակրաքարերը), օպոկները (ծակոտկեն սիլիցաքարերը), կավային թերթաքարերը, ադալիթները (կավաքարերը) ևն:

ПОЛЫЕ — ՊՈԼՅԵ (ԿԱՐՍՍՅԱՅԻՆ ԴԱՇՏ), պլավոնական տերմին, որով անվանվում են հալկանյան թերակղզու կարստավորված լեռնային շրջանների ընդարձակ փակ իջվածքները (գոգավորությունները): Պ. տվյալաբար ունի զատիթափ լանջեր, համեմատաբար հարթ հատակ և զբաղեցնում է տասնյակ ու հարյուրավոր կմ<sup>2</sup> տարածք: Պ-ի առաջացման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ, որոնցից առավել հիմնավոր է համարվում հետևյալը. Պ-ները առաջանում են կարստային գոգավորությունների միացումից, գտնվում են գրունտային ջրերի մակարդակին մոտ, որի պատճառով նրանց հատակային մասում առաջանում են մշտական կամ ժամանակավոր ջրհոսքեր, հանդիպում են կարստային աղբյուրներ (վոկլյուզներ): Բնանց կարծիքով, Պ-ները ներլեռնային տեկտ. ծագման իջվածքներ են, որոնք ցամաքալողի են ենթարկում կարստային դատարկությունների ջրերը:

ПОЛЯ ОРОШЕНИЯ — ՈՐՈԳՄԱՆ ԴԱՇՏԵՐ, գյուղատնտ. հողատարածքներ, որտեղ կիրառվում է պարարտացման ոռոգում արդյունաբերական ու կենցաղային (կոյուղու) հոսքաջրերով և ապահովվում է (գրունտների միջոցով ծծանցվելու ճանապարհով) այդ ջրերի կենսաբ. վնասազերծումն ու մաքրումը:

ПОЛЯ ФИЛЬТРАЦИИ — ԾԾԱՆՑՄԱՆ ԴԱՇՏԵՐ, հողատարածքներ (դաշտեր), որոնց վերին շերտերը ներկայացված են ծծանցման որոշակի հատիկանիշներով օժտված ապարներով և օգտագործվում են ծծանցման ճանապարհով արդյունաբերական ու կենցաղային հոսքաջրերը մաքրելու համար:

ПОНОРЫ — ԳԵՏՆԱՆՑՔԵՐ (ՊՈՆՈՐՆԵՐ), հեշտ լուծվող ապարների ծակո-

տիների ու ճեղքերի միացումից առաջացած անցքեր, որոնցով մակերևութային ջրերը բափանցում են դեպի կարստավորվող զանգվածի խորքը: Գ-ի ձևերն ու չափերը տարբեր են և կախված են կարստավորման ինտենսիվությունից: Մակերևութի վրա նրանք արտահայտվում են հորանջող ճեղքերի ու բաց անցքերի ձևով, որոնք ընդարձակվելով վերածվում են հորերի, կամ լցվելով երկրորդական նյութերով, փակվում են:

ПОРИСТОСТЬ — ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, ապարում եղած բոլոր ծակոտիների, ճեղքերի և դատարկությունների ընդհանուր ծավալը (n), որն արտահայտվում է ծակոտիների ծավալի ( $V_s$ ) և ապարի ընդհանուր ծավալի ( $V_m$ ) %-ային հարաբերությամբ՝

$$n = \frac{V_s}{V_m} \cdot 100\% : \text{Ապարի ծակոտկենությունը բնութագրվում է նաև}$$

ապարի ծակոտիների ծավալի ( $V_s$ ) և ապարի կմախքի ( $V_{k.}$ ) ծավալի հարաբերությամբ: Այս մեծությունը կոչվում է ծակոտկենության գործակից (կամ բերված ծակոտկենություն), որն արտահայտվում է միավորի մասերով (տե՛ս Коэффициент пористости): Ծ. մեծությունը կարող է արտահայտվել նաև ծակոտիներում եղած ջրի կշռի և չոր ապարի կշռի հարաբերությամբ: Ըստ ծագման տարբերում են.

1) սկզբնային կամ սինգենետիկ (միածամանակ առաջացած) Ծ., որն առաջացել է Խվյալ ապարի կազմավորման ժամանակ (ապար կազմող մասնիկների միջև եղած դատարկություններ, լավաների ճեղքեր ևն), 2) երկրորդային կամ մակածին Ծ., որն առաջացել է կազմավորված ապարի մեջ հետագայում տեղի ունեցող երկրագործընթացների շնորհիվ (տարրալուծում, կծկում, տեկտ. կոտրատում ևն): Ըստ չափերի առանձնացնում են ծակոտիների 3 խումբ. 1) գերմագնորային՝  $>1$  մմ (ճեղքերը՝ 0,25—0,0001), 2) մազանոթային՝  $<0,0002$  մմ (ճեղքերը՝  $<0,0001$ ): Տարբերում են նաև. ա) ընդհանուր (բացարձակ, ֆիզ.) Ծ., այսինքն ծակոտիների ընդհանուր ծավալը՝ անկախ նրանց ձևից, չափերից ու հաղորդակցվածության աստիճանից, բ) ակտիվ (արդյունավետ, դինամիկ) Ծ. (տե՛ս Активная пористость):

ПОРИСТОСТЬ ДИНАМИЧЕСКАЯ (ЭФФЕКТИВНАЯ) — ԴԻՆԱՄԻԿ (ԱՐ-ԴՅՈՒՆԱՎԵՏ) ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, «Ակտիվ ծակոտկենություն» տերմինի ավելորդ հոմանիշներ (տե՛ս Активная пористость):

ПОРИСТОСТЬ ТРЕЩИННАЯ — ԾԵՂՔԱՅԻՆ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, ճեղքերի ծավալի հարաբերությունը ապարի ընդհանուր ծավալին: Տվյալ դեպքում ճեղքերը դիտվում են որպես ծակոտկենության բաղադրամաս, իսկ ժ. ծ. բնութագրում է ճեղքերի տեսակարար ծավալը:

ПОРОВО-КАРСТОВЫЕ (КАРСТОВО-ПОРОВЫЕ) ВОДЫ — ԿԱՐՍՏԱԾԱԿՈՏԻԱՅԻՆ ԶՐԵՐ, ստ. ջրեր, որոնք կապված են ապարների խոշոր հաղորդակցվող ծակոտիների և կարստային դատարկությունների հետ:

ПОРОВО-ТРЕЩИННЫЕ (ТРЕЩИННО-ПОРОВЫЕ) ВОДЫ — ԾԵՂՔԱԾԱԿՈՏԻԱՅԻՆ ԶՐԵՐ, ստ. ջրեր, որոնք կապված են ապարների հաղորդակցվող ճեղքածակոտիների հետ:

ПОРОВОЕ ДАВЛЕНИЕ — ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, ապարի ծոկոտիներում գտնվող ջրի ճնշումը՝ նրանց պատերի վրա:

ПОРОВЫЕ ВОДЫ — ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ՋՐԵՐ, տե՛ս Вода поровая:

ПОРОДА ВОДОНОСНАЯ — ՋՐԱՍԱՐ ԱՊԱՐ, ծակոտկեն կամ ճեղքավոր ապար, որի բոլոր դատարկությունները լցված են գրավիտացիոն ջրով:

ПОРОДА СВЕРХВЛАГОЕМКАЯ — ԳԵՐԽՈՆԱՎԱՍԱՐ ԱՊԱՐ, ապար, որի խոնավատարությունը գերազանցում է 100 %-ից: Օր., տորֆերի որոշ տեսակների մոտ խոնավատարությունը հասնում է մինչև 1500 %:

ПОСТОЯННАЯ (НЕУСТРАНИМАЯ) ЖЕСТКОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ՄՇՏԱԿԱՆ (ՉՎԵՐԱՑՎՈՂ) ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Жесткость воды:

ПОСТОЯННЫЙ УРОВЕНЬ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՄԱԿԱՐԳԱԿ, ստ. ջրերի մակարդակ, որը ժամանակի ընթացքում մնում է անփոփոխ: Կալում մակարդակը սովորաբար բնորոշ է խորը տեղադրված հզոր ջրատար հորիզոններին:

ПОСТОЯННАЯ НАГРУЗКА — ԿԱՅՈՒՆ (ՄՇՏԱԿԱՆ) ԲԵՌՆՎԱԾՔ, գրունտի վրա գործադրվող բեռնվածք, որը ժամանակի ընթացքում փոփոխության չի ենթարկվում:

ПОТАМОЛОГИЯ — ՊՈՏԱՄՈՂՈԳԻԱ, ջրաբանության բաժին, որը զբաղվում է գետերի ուսումնասիրությամբ: Ներկայումս քիչ օգտագործվող տերմին: Փոխարինվում է «ուսումը գետերի մասին» կամ «գետային ջրաբանություն» տերմիններով:

ПОТЕРЯ НАПОРА — ԾՆՇՄԱՆ ԱՆԿՈՒՄ (ԿՈՐՈՒՍՏ), ստ. ճնշումնային ջրհոսքի ճնշման անկումը (կորուստը) շարժման ուղղությամբ: Ծ. ա. տեղի է ունենում ծծանցվող ապարների դիմադրության և ջրի մածուցիկության հետևանքով:

ПОТОК ЛАМИНАРНЫЙ — ԾԻԹԱՅԻՆ (ԼԱՄԻՆԱՐ) ՀՈՍՔ, հեղուկի համաչափ, դանդաղ հոսք, որի դեպքում հեղուկի շիթերը շարժվում են միմյանց զուգահեռ: Հոսանքի արագության մեծացման դեպքում հեղուկի շարժումն ընդունում է մրրկային բնույթ (տե՛ս Поток турбулентный) : Հոմանիշ՝ շիթային շարժում:

ПОТОК ЛИНЕЙНЫЙ (ОДНОМЕРНЫЙ) — ԳԾԱՅԻՆ (ՄԻԱԶԱՓ) ՀՈՍՔ, ծակոտկեն միջավայրում հեղուկի կամ գազի շարժում, որի դեպքում շիթերի հետագծերն իրենցից ներկայացնում են զուգահեռ ուղիղներ, ըստ որում հոսքի յուրաքանչյուր հարթ կտրվածքի ցանկացած կետում ծծանցման արագությունները ոչ միայն զուգահեռ, այլ նաև հավասար են:

ПОТОК ПЛОСКИЙ (ДВУХМЕРНЫЙ) — ՀԱՐԹ (ԵՐԿԶԱՓ) ՀՈՍՔ, ծա-

կոտկեն միջավայրում հեղուկի կամ գազի շարժում, որի դեպքում բոլոր մասնիկները շարժվում են որևէ անշարժ հարթությանը (դիցուք, շերտի հատակին) զուգահեռ հարթություններով, ըստ որում այդ հարթությանը ուղղահայաց ցանկացած ուղիղ վրա մասնիկների շարժման բնույթը միատեսակ է: Տարբերում են Հ. Բ. կտրվածքում և հատակագծում (պլանում):

ПОТОК ПЛОСКОСТНОЙ (ПЛАСТОВЫЙ) — СУՓԱՐԱԿԱՅԻՆ (ՇԵՐՏԱՅԻՆ) ՀՈՍՔ, լանջի մակերևույթով անձրևաջրերի համատարած հոսք, որը հանգեցնում է հողմահարման նյութերի տափարակային տեղատարման (ողողատարման): Հորդառատ անձրևների ժամանակ գոյանում է ավելի հզոր մրրկային հարթ հոսք, որը լանջով ներքև արագ հավաքվում է ուղիեֆի ողողատարման ձևերի հուններում (ձորակներ, գետահուններ, հովիտներ):

ПОТОК ПРОСТРАНСТВЕННЫЙ (ТРЕХМЕРНЫЙ) — ՏԱՐԱԾԱԿԱՆ (ԵՌԱՉԱՓ) ՀՈՍՔ, հեղուկի շարժում, որի դեպքում նրա բոլոր բնութագրերը (ճնշումը, արագությունը ևն) կախված են 3 կոորդինատներից: Այնպիսի հարթություն, որի վրա այդ բնութագրերը նույնանման լինեին, գոյություն չունի:

ПОТОК РАДИАЛЬНЫЙ — ԾԱՌԱԳԱՅԻՑՔԱԶԵՎ (ՌԱԳԻԱԼ) ՀՈՍՔ, տե՛ս Սիմետրիկալ (Плоскорадиальное (осесимметричное) движение):

ПОТОК ТУРБУЛЕНТНЫЙ — ՄՐՐԿԱՅԻՆ (ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ ՀՈՍՔ), հեղուկի (կամ գազի) մրրկային (զալարումային) հոսք, որի դեպքում անկանոն հետագծերով շարժվող մասնիկներն ու շիթերը միախառնվում ու բաժանվում են: Ծիթային հոսքի համեմատությամբ Մ. Բ. օժտված է կախված մասնիկներ տեղաշարժելու և տանելու մեծ ունակությամբ:

ПОЧВЕННЫЕ ВОДЫ — ԳԵՏՆԱՀՈՂԱՅԻՆ ԶՐԵՐ, տե՛ս Вода (влага) почвенная:

ПОЧВЕННЫЙ ГИГРОГРАФ — ԳԵՏՆԱՀՈՂԱՅԻՆ ԽՈՆԱՎԱԶԱՓ, գետնահողային օդի հարաբերական խոնավությունը որոշող սարք:

ПОЧВЕННЫЙ РАСТВОР — ԳԵՏՆԱՀՈՂԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ, գետնահողերում պարունակվող հեղուկ, որը բաղկացած է ջրից և նրանում լուծված հանքային ու օրգ. նյութերից: Գ. լ. հանդիսանում է բույսերի սնման հիմնական աղբյուր:

ПОЯС ВЫЩЕЛЧИВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՄԱՆ ԳՈՏԻ, երկրակեղևի մակերևութային մասի ապարների հաստվածքներ, որոնց մեջ կուտակվող և տեղաշարժվող ստ. ջրերը օժտված են ապարները ինտենսիվորեն քայքայելու-տարրալուծելու ունակությամբ՝ մինչև հոսքի հիմքի սահմանը:

ПОЯС ГИДРОХИМИЧЕСКИЙ — ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՏԻ, երկրակեղևի տեղամաս, որը բնութագրվում է ուղղամիգ կտրվածքում ջրաքիմ. զոնաների (տարբեր

հանքայնացման ստ. ջրերի) որոշակի հերթափոխությամբ և դրանով տարբերվում է հարևան տեղամասերից:

ПОЯС КОЛЕБАНИЯ ВОДНОГО ЗЕРКАЛА — ՋՐԱՅԻՆ ՀԱՅԵԼՈՒ ՏԱՏԱՆ-ՄԱՆ ԳՈՏԻ, ըստ Օ. Մեյնցերի, երկրակեղևի մաս, որը սահմանափակվում է որոշակի ժամանակահատվածում ստ. ջրերի հայելու (գրունտային ջրերի մակերևույթի) յարձր և ցածր դիրքերով: Ավելորդ տերմին:

ПОЯС МЕРЗЛОТНЫЙ — ՍԱՌՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՏԻ, բազմամյա սառցույթի մարգերում կիրառվող հատուկ միջոցառում, որը հնարավորություն է տալիս կանխել թեք լանջերին հարող ավտոմոբիլային ու երկաթուղային ճանապարհների և այլ ինժեներական կառույցների սառցածածկումը: Վերջինը հետևանք է այն բանի, որ աշնան սկզբից սկսած հողագրունտները սառչում են, ուռչում, ձևախախտվում և ճեղքավորվում: Այդ ճեղքերով դուրս եկող վերսառցության ջրերը (տե՛ս Надмерзлотные воды) սառելով առաջացնում են սառցածածկույթներ (սառցաբլուրներ), որոնք աստիճանաբար աճում են լանջն ի վար և սպառնում զանազան կառույցների: Գոյացող սառցածածկույթը այլ կողմ ուղղելու նպատակով փորում են խրվանդակներ, ստեղծվում են դիմհարներ ևն, որոնց և կոչում են Ս. գ.:

ПРЕДВАРИТЕЛЬНАЯ РАЗВЕДКА ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱՍՈՒԶՈՒՄ, ջրաերկր. որոնողական աշխատանքների հիման վրա առանձնացված հեռանկարային տեղամասերում ստ. ջրերի հետախուզում, որը կատարվում է նրանց պաշարների մոտավոր գնահատման և հետագա ծանրամասն հետախուզման համար առավել բարենպաստ տեղամասեր առանձնացնելու նպատակով: Ս. ջ. ն. հ. հիմնականում կատարվում է ջրամատակարարման համար:

ПРЕДЕЛ ПЛАСТИЧНОСТИ — ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ, կալվային ապարների այնպիսի խոնավություն, որի դեպքում նրանք գտնվում են պլաստիկ վիճակում: Տարբերում են պլաստիկության վերին (հոսունության) և ստորին (գլանման) սահմաններ (տե՛ս Пластичность глинистых пород):

ПРЕДЕЛ ПРОЧНОСТИ — ԱՄՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ, գրունտների միառանցք սեղմման (ձգման) փորձարկման ժամանակ գործադրվող սահմանային լարում ( $\sigma$ ), որի տակ գրունտի նմուշը քայքայվում է: Ա. ս. որոշվում է հետևյալ բանաձևով.  
$$\sigma = \frac{P}{F} - (lq/um^2),$$
 որտեղ՝ P-ն բեռնվածքի մեծությունն է (կգ), F-ը՝ գրունտի նմուշի սկզբնական լայնական կտրվածքը ( $um^2$ ): Հոսմանի՞ջ՝ սեղմման ժամանակավոր դիմադրություն, քայքայիչ լարում:

ПРЕДЕЛ ТЕКУЧЕСТИ — ՀՈՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ, տե՛ս Пластичность глинистых пород:

ПРЕДЕЛ УПРУГОСТИ — ԱՌԱԶԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ, սահմանային լարում, մինչ որը գրունտի վրա գործադրվող բեռնվածքի և նրա կրած ձևախախ-

տումների միջև պահպանվում է ուղիղ համեմատական կախում, այսինքն՝ լարում, որի դեպքում գրունտի մնացորդային ձևախախտումները սկսում են հասնել այնպիսի մեծությունների, որոնք որոշվում են տեխ. պայմաններով թույլատրվող չափերով (օր., 0,001, 0,003, 0,005, 0,03 %):

**ПРЕДЕЛ УСАДКИ** — ԿԾԿՄԱՆ ՍԱՀՄԱՆ, գրունտի կծկման առավելագույն մեծություն, որն հնարավոր է նրա չորացման ժամանակ: Եթե Կ. ս.-ից հետո չորացումը շարունակվում է, ապա ջրի գոլորշիացումը գրունտի հետագա խտացումով չի զուգորդվում, որը հանգեցնում է մազանոթներում ջրի մակարդակի իջեցմանը և գրունտի գունափոխմանը (մուգ գույներից՝ բաց գույներ): Հոմանիշ՝ չորացման սահման:

**ПРЕДЕЛЬНАЯ НАГРУЗКА** — ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԵՌՆՎԱԾՔ, տե՛ս Допускаемое напряжение:

**ПРЕДЕЛЬНО СОПРОТИВЛЕНИЕ** — ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ծանրաբեռնման տվյալ պայմաններում գրունտի առավելագույն կրողունակություն:

**ПРЕДЕЛЬНО ДЛИТЕЛЬНОЕ СОПРОТИВЛЕНИЕ** — ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՐԿԱՐՍԵՎ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, անսահման դանդաղ ծանրաբեռնման դեպքում ապարի (մասնավորապես սառած գրունտի) ցուցաբերած դիմադրությունը քայքայմանը, այսինքն՝ սահմանային լարում, մինչ որը բեռնվածքի անսահման երկարատև ներգործության տակ գործնականում ապարի քայքայում չի դիտվում:

**ПЕРЕРЫВИСТОСТЬ ЗОН МЕРЗЛЫХ ПОРОД (КРИОЛИТОЗОН)** — ՍԱՌԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ ԶՈՆԱՆԵՐԻ (ԿՐԻՈԼԻԹՈԶՈՆԱՆԵՐԻ) ԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ, ուղղաձիգ կտրվածքում սառած և չսառած ապարների շերտերի ֆերթափոխություն: Հոմանիշ՝ շերտավոր առածություն:

**ПРЕССИОМЕТР** — ՄԱՄԼԱԶԱՓ, սարք, որի օգնությամբ հորատանցքում որոշվում է ապարների ամրությունն ու ձևախախտումները: Մ-ի հիմնական մասը հանդիսանում է էլաստիկ բանվորական խուցը, որի մեջ ներդրվող զագի կամ ֆեղուկի միջոցով ճնշում է գործադրվում հորատախորշի ապարների վրա:

**ПРЕСНЫЕ ВОДЫ** — ՔԱՂՅՐԱՀԱՄ ԶՐԵՐ, բնական ջրեր, որոնց հանքայնացումը (չոր մնացորդի ձևով) չի գերազանցում 1 գր/լ:

**ПРИБОРЫ ДЛЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ** — ՍԱՐՔԵՐ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, գոյություն ունեն տարբեր նշանակության ու բնույթի սարքեր. 1) հորատանցքերում, ջրհորերում, շուրֆերում և այլ փորվածքներում ջրի մակարդակը չափելու համար օգտագործվում են մեխ., լողակային (լիմնիգրաֆ), օդանցիչ (պլտան, սուլիչ, մանոմետրեր), էլեկտրական (ձայնային, լուսային, գալվանամետրեր) ևն, 2) ջրի ծախսը որոշելու համար-ջրահաշվիչներ, ջրթափեր, օլակային դիաֆրագմաներ, 3) ջրի ջերմաստիճանը չափելու համաջերմաչափեր, որոնք լինում են տարբեր տիպի (սնդիկային, սպիր-

տային, էլեկտրական) և բնույթի (սովորական, ծուլ, առավելագույն, նվազագույն), 4) ջրի ու գազի նմուշներ վերցնելու համար — փորձանյութառու սարքեր, 5) գազի ծախսը որոշելու համար — անենմոմետրեր, օդաննչիչ խողովակներ, տափօղակային չափիչներ: Գիտատեխ. հեղափոխության դարաշրջանում անընդհատ ստեղծվում են նորանոր ինքնագրառող սարքեր՝ գուգորդված էլեկտրոնային հաշվիչներով:

ПРИБРЕЖЬЕ (ВЗМОРЬЕ) — ԾՈՎԵԶՐ (ԾՈՎԱՓ), ջրով ծածկված ափալան-ջի գոտի:

ПРИВЕДЕННАЯ АЭРИРОВАННОСТЬ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԲԵՐՎԱԾ ՕՂԱ-ՀԱԳԵՑՈՒՄ, գրունտի ծակոտիներում գտնվող օդի ծավալի հարաբերությունը գրունտի կմախքի ծավալին:

ПРИВЕДЕННАЯ ВЫСОТА ДАВЛЕНИЯ — ԾՆԾՄԱՆ ԲԵՐՎԱԾ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, հիդրավիկայում, ըստ Ն. Ն. Պավլովսկու, հեղուկի բարձրությունը պիեզոմետրում, որը վերևից փակ է և ունի տորիչելյան դատարկություն (այսինքն՝ ճնշումնաչափ փողակում):

ПРИВЕДЕННАЯ ОБЪЕМНАЯ ВЛАЖНОСТЬ ПОРОДЫ (ГРУНТА) — ԱՊԱՐԻ (ԳՐՈՒՆՏԻ) ԲԵՐՎԱԾ ԾԱՎԱԼԱՅԻՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, ապարի (գրունտի) ծակոտիներում պարունակվող ջրի ծավալի հարաբերությունը ապարի (գրունտի) կմախքի ծավալին:

ПРИВЕДЕННАЯ ПОРИСТОСТЬ (СКВАЖНОСТЬ) — ԲԵՐՎԱԾ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, ապարի (գրունտի) ծակոտիների ծավալի հարաբերությունը ապարի (գրունտի) կմախքի ծավալին: «Ապարի ծակոտկենության գործակից» տերմինի ավելորդ հոմանիշ:

ПРИВЕДЕННЫЕ ПЛАСТОВЫЕ ДАВЛЕНИЯ — ԲԵՐՎԱԾ ԾԵՐՏԱՅԻՆ ԺՆՆՇՈՒՆԵՐ, հորատանցքերում չափված շերտային ճնշումներ, որոնք բերված (վերահաշվարկված) են որոշակի հորիզոնական հարթության (ծովի մակերևույթի) նկատմամբ: Նման վերահաշվարկը օգնում է ազատվել տեղանքի ռելիեֆի անհարթությունների և թեք տեղադրման ճնշումնային շերտի խտոր ցուցումներից:

ПРИВЕДЕННЫЙ РАДИУС ВЛИЯНИЯ — ԲԵՐՎԱԾ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԾԱՌՎԻՍ, ըստ Ե. Ե. Կերկիսի, հորատանցքի (ջրհորի և այլ ջրհան փորվածքի) շուրջ երևակայական շրջանագծի շառավիղ, որով սահմանափակվում է հորատանցքի ազդեցությունը ջրատար հորիզոնի վրա՝ տվյալ ծախսի դեպքում: Անհամասեռ ջրատար ապարներում հորատանցքից տարբեր ուղղություններով ազդեցության շառավիղը տարբեր է լինում, իսկ բերված շառավիղը միջինացնում է դրանց արժեքները և հնչուսցնում ջրաերկր. հաշվարկները:

ПРИНЦИП НЕИЗМЕНЯЕМОСТИ ЛИНИЙ ТОКА — ՀՈՍԱՆՔԻ ԳԾԵՐԻ ԱՆՓՈՓՈՒՑՈՒԹՅԱՆ ՍՎՋԲՈՒՆՔ, սկզբունք, որի վրա հիմնված է երկհեղուկ ծծանցման մոտավոր հաշվարկը: Այդ դեպքում ընդունվում է այն պայմանը, որ երկու հե-

դուկների ծծանցման դեպքում հոսանքի գծերը որոշ մարզերում համընկնում են մեկ հեղուկի ծծանցման հոսանքի գծերի հետ (երբ սահմանային պայմանները անփոփոխ են):

ПРИРОДНЫЕ ВОДЫ — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐ, երկիր մոլորակի բոլոր ջրերը:

ПРОБА — ՆՄՈՒԾ, տարրալուծությունների և փորձարկումների համար նախատեսված նյութ, որը սահմանված կանոններով վերցվում է հետազոտվող օբյեկտից: Ջրատերկր. և ինժեներատերկր. ուսումնասիրությունների ժամանակ հարկ է լինում վերցնել սո. ու մակերևութային ջրերի, ապարների, գրունտների, հողերի ու գազերի բազմաթիվ նմուշներ:

ПРОБНАЯ НАГРУЗКА — ՓՈՐՁՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՔ, բեռնվածք, որը գործադրվում է ապարի վրա՝ նրա ամրությունն ու ձևախախտումը որոշելու համար:

ПРОБНАЯ ОТКАЧКА — ՆՄՈՒԾԱՑԻՆ ԱՐՏԱՄՂՈՒՄ, հորատանցքից, ջրհորից կամ այլ փորվածքից ջրի կարճատև արտամղում՝ ջրի ծախսի ու որակի որոշման և ջրատար հորիզոնի նախնական գնահատման նպատակով:

ПРОБООТБОРНИК — ՆՄՈՒԾԱՀԱՆԻՉ, սարք, որով լեռնային փորվածքներից վերցվում է ապարի, ջրի կամ գազի նմուշ:

ПРОВАЛ КАРСТОВЫЙ — ԿԱՐՏԱՑԻՆ ՓՈՒՋՈՒՄ, կարստային դատարկությունների առաստաղի փլուզում, որը երկրի մակերևույթի վրա արտահայտվում է հորի, ձագարի կամ փոսորակի ձևով:

ПРОВАЛЬНЫЕ ВОРОНКИ — ՓՈՒՋՄԱՆ ՋԱԳԱՐՆԵՐ, երկրի մակերևույթի վրա արտահայտված տարբեր չափերի ձագարածև իջվածքներ, որոնք առաջանում են ինչպես կարստային դատարկությունների, այնպես էլ սո. լեռնային փորվածքների առաստաղի փլուզումից:

ПРОВИНЦИЯ МИНЕРАЛЬНЫХ ВОД — ՀԱՆՔԱՑԻՆ ՋՐԵՐԻ ՄԱՐԶ (ՆԱՀԱՆԳ), ջրատերկր. միավոր, որի սահմաններում տարածված են քիմ. և գազային բաղադրությամբ նման հանքային ջրերի որոշակի զուգորդումներ: Ըստ Ա. Մ. Օվչինիկովի (1963), նախկին ԽՍՀՄ տարածքում առանձնացվել են հանքային ջրերի հետևյալ մարզերը (նահանգները). 1) ժամանակակից հրաբխային մարզերի ածխաթթվային, ծծմբաջրածնա-ածխաթթվային և ազոտա-ածխաթթվային թերմալ ջրերի, 2) երիտասարդ հրաբխային գործունեության մարզերի ածխաթթվային ջրերի, 3) նորագույն տեկտ. շարժումների մարզերի ազոտային հիմնային ջերմաջրերի, 4) պլատֆորմային մարզերի արտեզյան ավազանների, եզրային ճկվածքների և ծալքավոր մարզերի ազոտային, ազոտամերսանային և մերսանային ջրերի, 5) թթու բաղադրության բյուրեղային ապարների հողմահարման կեղևի թթվածնաազոտային և ազոտատադոնային թույլ հանքայնացված ջրերի:

ПРОЗРАЧНОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ՎԾԻՏՈՒԹՅՈՒՆ (ԹԱՓԱՆՑԵԼԻՌԻԹՅՈՒՆ),

իր միջով լույսի ճառագայթներ բաց թողնելու ջրի ունակություն, որը կախված է նրանում լուծված հանքային բաղադրիչների, մեխ. խառնուրդների, օրգ. նյութերի ու կողիդների պարունակությունից, ինչպես նաև ջրի շերտի հաստությունից: Ջրում ուժեղ կլանվում են կարմիր և դեղին ճառագայթները, իսկ մանուշակագույնները թափանցում են ավելի խորը: Ըստ վճիտության աստիճանի զանազանում են վճիտ, թույլ պղտոր, պղտոր և շատ պղտոր ջրեր: Ի տարբերություն մակերևութային ջրերի, ստ. ջրերն առավելապես վճիտ են: Քանակապես Ջ. վ. որոշվում է հատուկ սարքերի միջոցով:

**ПРОИЗВОДИТЕЛЬНОСТЬ (РАСХОД) ЕСТЕСТВЕННОГО ПОДЗЕМНОГО ПОТОКА — ԲՆԱԿԱՆ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԼՈՍՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԾԱՆՍ),** ջրի ծավալ (ծախս), որը բնական պայմաններում անցնում է ստ. հոսքի լիվ կտրվածքով՝ ժամանակի միավորի ընթացքում:

**ПРОИЗВОДИТЕЛЬНОСТЬ (РАСХОД) СКВАЖИНЫ, КОЛОДЦА — ԼՈՐԱՍԱՆՑՔԻ ՋՐՉՈՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԾԱՆՍ),** նույնն է, ինչ ջրհորի, հորատանցքի ծախսը (տե՛ս Дебит колодца):

**ПРОМЕЖУТОК (УЧАСТОК) ВЫСАЧИВАНИЯ — ԹԱՑՈՒՅԹԻ ՄԻՋԱԿԱՅՔ (ՏԵՂԱՄԱՍ),** գետախովի լանջերի, պատվարի ստորին ջրամասի (բլեֆի), լեռնային փորվածքների պատերի տեղամաս, որտեղ դիտվում է թացությունների տեսքով ստ. ջրերի բեռնաթափում:

**ПРОМЕЖУТОЧНОЕ ГЛАВНОЕ НАПРЯЖЕНИЕ — ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳԼԽԱՎՈՐ ԱՐՈՒՄ,** ամենափոքր գլխավոր լարում, որն առաջանում է գրունտների եռստանգք սեղմման փորձարկումների ժամանակ, Յ փոխուղահասպաց ուղղություններից երրորդի վրա: Հոմանիշ՝ երրորդ գլխավոր լարում:

**ПРОМЕРЗАЮЩИЕ ВОДЫ — ՍԱՌՉՈՂ ՋՐԵՐ,** ըստ Ն. Ի. Տոլստիխինի, գործունյա շերտի վերաառցության ջրեր, որոնք ենթարկվում են ամենանյա սսնեցման և հալման:

**ПРОМЫВКА (ПРОКАЧКА) СКВАЖИНЫ — ԼՈՐԱՍԱՆՑՔԻ ԼՎԱՑՈՒՄ,** հորատանցքի կարճատև լվացում, որը կատարվում է արտամղման միջոցով նրա փողը հորատման լուծույթից և նստվածքներից մաքրելու նպատակով: Եթե հորատանցքը հատել է թույլ ջրատար ապարների կամ հորատման լուծույթը խցանել է հորատանցքի պատերը և ջրի արտամղումը ապարդյուն է, ապա հորատանցքի մաքրումը (լվացումը) իրագործվում է մակերևութից ներմղվող ջրով:

**ПРОМЫШЛЕННЫЕ (ПРОМЫСЛОВЫЕ) ПОДЗЕМНЫЕ ВОДЫ — ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ,** լուծված վիճակում այնպիսի քանակությամբ օգտակար բաղադրատարրեր ու նրանց միացություններ պարունակող ստ. ջրեր, որոնք կարող են հանդիսանալ արդյունաբերական հումք՝ նրանց կորզման (ստացման) համար: Այսինքն՝ ստ. ջրերը տվյալ դեպքում հանդես են գալիս որպես ելակետ (նեղուկ հանքաքար): Ա. ս. ջ-ում առավել շատ տարածված են յուղը, բրոմը,

կերակրի աղը, ինչպես նաև բորի, լիթիումի, ուրբիդիումի, գերմանիումի, ուրանի, ռադիումի և այլ միացություններ:

**ПРОМЫШЛЕННЫЕ СТОЧНЫЕ ВОДЫ (СТОКИ)** — ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀՈՍՔԱԶՐԵՐ (ՀՈՍՔԵՐ), արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկությունների թափոններով աղտոտված ջրեր (հոսքաջրեր):

**ПРОНИЦАЕМОСТЬ АБСОЛЮТНАЯ (ФИЗИЧЕСКАЯ)** — ԲԱՑԱՐՁԱԿ (ՖԻԶԻԿԱԿԱՆ) ԹԱՓԱՆՑՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ապարների թափանցելիությունը համասեռ իներտ հեղուկի կամ գազի համար՝ ծակոտկեն միջավայրի հետ նրանց ֆիզքիմ. նկատելի փոխազդեցության բացակայության պայմաններում:

**ПРОНИЦАЕМОСТЬ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԹԱՓԱՆՑՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ապարների հեղուկներ և գազեր իրենց միջով բաց թողնելու ունակություն: Այն կախված է ապարների արդյունավետ ծակոտկենությունից, հեղուկների ու գազերի ճնշումից և հեղուկների մածուցիկությունից: Ըստ թափանցելիության աստիճանի տարբերում են թափանցելի, կիսաթափանց և անթափանց ապարներ: Այն հանդիսանում է ջրատար և նավթագազատար շերտերի արդյունավետության կարևոր ցուցանիշ: Թափանցելիության գործակիցը հավասար է ծծանցման գործակցի և հեղուկի մածուցիկության գործակցի արտադրյալին:

**ПРОНИЦАЕМОСТЬ ТРЕЩИННАЯ** — ԾԵՂՔԱՅԻՆ ԹԱՓԱՆՑՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ապարների ճեղքավորվածությանը պայմանավորված թափանցելիություն, Մ. թ. որոշվում է ճեղքերում գազալուծույթների (ֆլյուիդների) շարժման օրենքներով, ճեղքերի բացվածքով և նրանց համակարգերի երկրաչափությամբ: Սովորաբար ապարները Մ. թ. տեսակետից անհամատեսակ (անիզոտրոպ) են, իսկ թափանցելիության մեծությունը նավթի ու գազի կոլեկտորների համար մեծ չէ (տասնյակ, հազվադեպ հարյուրավոր միլիդարսի):

**ПРОНИЦАЕМОСТЬ ТРЕЩИНЫ** — ԾԵՂՔԻ ԹԱՓԱՆՑՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, մեծություն, որը չափվում է կայուն ճնշման տակ ժամանակի միավորում ճեղքի լայնակի միավոր կտրվածքով անցած որոշակի մածուցիկության հեղուկի քանակով: Մ. թ. էապես տարբերվում է ճեղքային թափանցելիությունից (տե՛ս Проницаемость трещинная):

**ПРОНИЦАЕМОСТЬ ЭФФЕКТИВНАЯ** — ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ (ԷՖԵԿՏԻՎ) ԹԱՓԱՆՑՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ապարի թափանցելիությունը որևէ հեղուկի կամ գազի համար, երբ ապարում միաժամանակ առկա են այլ գազաֆեղուկներ (գազ-ջուր, ջուր-նավթ, գազ-նավթ-ջուր): Ամեն դեպքում տվյալ հեղուկի կամ գազի համար Ա. թ. կախված է ապարի ծակոտիների այդ հեղուկով կամ գազով հագեցվածության աստիճանից:

**ПРОСАДКА ПРИ ПРОТАИВАНИИ** — ՆՍՏՈՒՄ ՀԱԼՁԵԼԻՍ, ապարների (հողազրույթների) նստում, որը տեղի է ունենում նրանց հալչման հետևանքով:

**ПРОСАДКИ** — ՆՍՏՈՒՄՆԵՐ, անփոփոխ ճնշման պայմաններում լյուերի և լյու-

սանման սպարների թրշման հետևանքով երկրի մակերևույթի վրա դիտվող ափսեա-  
ձև իջվածքներ:

ПРОСАДОЧНОСТЬ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՆՍՏՄԱՆ (ՆՍՏԵԼՈՒ) ՈՒՆԱ-  
ԿՈՒԹՅՈՒՆ, խոնավացման հետևանքով գրունտների ծավալի փոքրացում (նստում): Այն բնորոշ է լյուերին և լյուսանման ավազակավերին, որոնք հանդիսանում են մակրոծակոտկեն սպարներ: Գ. Գ. ու. բնութագրվում է տարբեր ցուցանիշներով, առաջին հերթին՝ հարաբերական նստման (տե՛ս Просадочность грунтов относительная) մեծությամբ (i, %): Վերջինը որոշակի ճնշման պայմաններում որոշվում է հետևյալ բանաձևով.

$$i, \% = \frac{h_1 - h_2}{h_0} = I_2 - I_1, \text{ որտեղ՝}$$

$h_0$  — գրունտի նմուշի սկզբնական բարձրությունն է՝ բնական ամրության և խոնավության պայմաններում,  
 $h_1$  — նույն նմուշի բարձրությունն է՝ բնական խոնավության պայմաններում և  $P$  ճնշման տակ,  
 $h_2$  — նույն նմուշի բարձրությունն է՝ ջրահագեցած պայմաններում և  $P$  ճնշման տակ,  
 $I_1$  — ճնշման տակ գտնվող նմուշի հարաբերական ձևախախտումն է՝ մինչ ջրհագեցումը ( $I_1 = \frac{\Delta h_1}{h_0}$ , որտեղ՝  $\Delta h_1$  — նմուշի բարձրության փոփոխությունն է՝ մինչ ջրհագեցումը),  
 $I_2$  —  $P$  ճնշման տակ գտնվող նմուշի հարաբերական ձևախախտումն է՝ ջրհագեցումից հետո ( $I_2 = \frac{\Delta h_2}{h_0}$ , որտեղ՝  $\Delta h_2$  — նմուշի բարձրության փոփոխությունն է՝ ջրհագեցումից հետո):

ПРОСАДОЧНОСТЬ ГРУНТОВ АБСОЛЮТНАЯ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԲԱՑԱՐ-  
ՉԱԿ ՆՍՏՈՒՄ, նստման մեծություն (չափ), որը հաշվված է ուսումնասիրվող շերտի ողջ հաստության համար:

ПРОСАДОЧНОСТЬ ГРУНТОВ ОТНОСИТЕЛЬНАЯ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՀԱ-  
ՎԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՏՈՒՄ, նստման մեծություն, որը հաշվված է ուսումնասիրվող շերտի միավոր հաստության համար: Գ. Գ. Գ. հանդիսանում է գրունտների նստման բնու-  
թյազման հիմնական ցուցանիշ (տե՛ս Просадочность грунтов):

ПРОСАЧИВАНИЕ ВОДЫ — ՋՐԻ ՆԵՐՄԾՈՒՄ, ուսերեն օգտագործվում է որպես «Инфильтрация» տերմինի հոմանիշ (տե՛ս Инфильтрация):

ПРОТИВООПОЛЗНЕВЫЕ МЕРОПРИЯТИЯ — ՀԱԿԱՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՒ-  
ՑԱՌՈՒՄՆԵՐ, միջոցառումներ, որոնք նպատակամղված են օգտակար տարածքները սողանքներով քայքայումից պահպանելու, բնական ու արհեստական թեքությունների վրա սպարների կայունությունը բարձրացնելու, սկիզբ առած սողանքային գործընթացները վնասազերծելու և շարժումը դադարեցնելու բարդ գործին: Ներկա-  
յում սողանքների դեմ սարվող պաշարի պրակտիկայում կիրառվում են հետևյալ

միջոցառումները. 1) մակերևութային հոսքի կարգավորում, 2) ջրակալած ապարների ցամաքեցում, 3) ապարազանգվածների վերաբաշխում, 4) ողողամաշման կամ ափաքերման արգելափակում, 5) ապարազանգվածների ամրացում՝ հենապատերի ու անկերային (խարսխող) կառույցների միջոցով, 6) ապարների հատկությունների արհեստական բարելավում, 7) անտառապատման շխատանքներ, 8) նախականիւման միջոցառումներ: Թվարկած Հ. մ. ստանձին կամ համակցված կիրառվում են սողանքի առաջացման պատճառները պարզաբանելուց, ինչպես նաև տեղանքի երկրբ., երկրաձևաբանական և ջրաերկրբ. պայմանները ուսումնասիրելուց հետո:

ПРОТИВОЭРОЗИОННЫЕ МЕРОПРИЯТИЯ — ՀԱՎԱՈՂՈՂԱՍՄԱՇՄԱՆ (ՀԱՎԱԷՐՈԶԻՈՆ) ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, միջոցառումներ, որոնք նպատակամղված են օգտակար տարածքները ողողամաշումից և տեղատարումից պահպանելու գործին: Արդյունավետ Հ. մ-ներից են. 1) գետափերի ամրացումը (գաբիոններով, քարային թափոններով, բետոնյա սալերով, հողապատնեշներով և այլ կառույցներով), 2) մակերևութային հոսքի կարգավորումը (պատվարներով, ամբարտակներով, ծծանցող հողապատնեշներով, լեռնային ջրհեռ առուներով ու նավղաններով և այլ կառույցների համակարգով), 3) անտառամելիորատիվ աշխատանքները (գարգացող ձորակների լցումն ու տափանումը, անտառատնկումը, բազմամյա բույսերի ցանումը ևն), 4) հողօգտագործման և ագրոտեխ. կանոնների խստիվ պահպանությունը ևն: Փորձը ցույց է տալիս, որ Հ. մ-ները ստավել օգտավետ են համակցված կիրառման դեպքում:

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԳԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ, բնական բարդ ու բազմաբնույթ գործընթաց, որը որոշում է տվյալ տեղում ստ. ջրերի քիմ. բաղադրության կազմավորումը: Ս. ջ. ք. բ. ձ. գ. հանդիսանում է երկրակեղևում քիմ. տարրերի ընդհանուր տեղաշարժի էտապ, որը հաջորդաբար ընդգրկում է հետևյալ փուլերը. 1) քիմ. տարրերի վերաբաշխման և նրանց միացությունների ձևերի փոփոխման փուլ, որը ներառում է հանքայնացման աղբյուրների ձևավորման և հետագա գոյատևման, ինչպես նաև լուծվող միացությունների (միներալների) և ապարների խոնառալային համակարգի վերաբաշխման ժամանակները, 2) հանքայնացման աղբյուրներից ջրի մեջ բազմազան քիմ. բաղադրիչների անցման փուլ, 3) ստ. ջրերում քիմ. տարրերի տեղազատի փուլ, 4) ստ. ջրերից հանքային բաղադրիչների անջատման (նստեցման) փուլ:

ПРОЦЕССЫ РЕОЛОГИЧЕСКИЕ — ՌԵՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ, գրունտների (պինդ մարմինների) ռելոլոգիական այնպիսի հատկությունների դրսևորում, ինչպիսիք են սողքը, լարումների ռելաքսացիան (նվազումը) և տևական ամրությունը: Հոսունությամբ պայմանավորված Ռ. գ. հատուկ են կավերին, ալագակավերին, սառած գրունտներին, սառցին և այլ բնական ու արհեստական նյութերին:

ПРОЦЕССЫ СКЛОНОВЫЕ — ԼԱՆՁԱՑԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ, գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ թեքությունների վրա կատարվող բոլոր այն գործընթացները

(հողմահարում, տեղատարում, փլվածք, թափվածք, սողանք ևն), որոնք հանգեցնում են լանջի ձևավորմանը:

**ПРОЧНО СВЯЗАННАЯ (ГИГРОСКОПИЧЕСКАЯ) ВОДА** — ԱՄՈՒՐ ԿԱՊԿՑՎԱԾ (ԽՈՆԱՎԱՍՏՈՒԾ, ՀԻԳՐՈՍԿՈՊԻԿ) ՋՈՒՐ, ֆիզիկապես կապակցված ջրի տեսակ, որն իրենից ներկայացնում է ապարի մասնիկների մակերևույթը պատող ոչ համատարած բարակ ջրաթաղանթ: Այն կլանում է չոր ապարը հեղուկ ջրից կամ օդի գոլորշիներից, չափազանց ամուր պահվում է մասնիկների կողմից մոլեկուլային ու էլեկտրաստատիկ ձգողական ուժերով (մինչև  $10^9$  պասկալ) և կարող է տեղաշարժվել միայն բարձր ջերմաստիճանում ( $100-120^{\circ}$  Ց)՝ գոլորշիացման միջոցով: Խոնավածուծ ջուրը մինչև  $-78^{\circ}$  Ց չի սառչում, տեսակարար կշիռը մեծ է 1-ից. ամուր կապակցվածության հետևանքով այն անհասանելի է բույսերի արմատների համար:

**ПРОЧНОСТЬ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆ, արտաքին լարումներին ապարների ցուցաբերած դիմադրության ունակություն: Տարբերում են ապարների սեղմման, ձգման, ծուման, ջարդոտման, հարվածի տակ քայքայման և այլ ամրություններ: Առավել կարևոր հատկանիշ է համարվում է ապարի սեղմման ժամանակավոր դիմադրությունը (տե՛ս Временное сопротивление породы на сжатие):

**ПРЯМОЙ УКЛОН ВОДОНОСНОГО ПЛАСТА** — ՋՐԱՏԱՐ ԾԵՐՏԻ ՈՒՂՂԱԿԻ ԹԵԲՈՒԹՅՈՒՆ, թեքություն, որի դեպքում ջրամերժ հիմքի անկման ուղղությունը համընկնում է ստ. ջրերի շարժման ուղղության հետ:

**ПСЕВДОКАРСТ (ЛОЖНЫЙ КАРСТ)** — ԿԵՂՄ ԿԱՐՍՏ, խորդուբորդ ռելիեֆ, որը արտաքենապես հիշեցնում է կարստային ռելիեֆ, սակայն իրականում հանդիսանում է երկրք. այլ գործընթացների արդյունք (լուսային գրունտների խոնավացմամբ կամ սառած ապարների հալչմամբ պաշմանավորված նստումներ ևն):

**ПСИХОМЕТР** — ԽՈՆԱՎԱՍՏԱՓ (ՓՍԻԽՐՈՄԵՏՐ), օդի ջերմությունն ու խոնավությունը չափող գործիք:

**ПУАЗ** — ՊՈՒԱԶ, հեղուկի դիմամրիկ մածուցիկության գործակցի չափման միավոր՝  $1$  պուազ  $= 1$  ցլուտոն  $\times$  վրկ  $\times$  սմ $^{-2}$ :  $0,01$  պուազը հավասար է սանտիպուազի: Անվանումը տրվել է ի պատիվ ֆրանսիացի ֆիզիկոս Ժ. Պուազեյի:

**ПУЛЬПА** — ԱՊԱՐԱԽՅՈՒՍ (ՊՈՒՂՊԱ), մանրահատիկ սորում գրունտի (մանյացրած ապարի) և ջրի թանձր խառնուրդ (խլուս):

**ПУЛЬСИРУЮЩИЕ ИСТОЧНИКИ** — ԲԱԲԱԽՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնց ծախսը կամ մակարդակը, ինչպես նաև ջերմությունն ու անջատվող գազերի քանակը ռիթմիկ փոփոխվում են:

**ПУЧЕНИЕ** — ՈՒՌՉՈՒՄ, խոնավ ապարների (հողաբուսական ծածկի) մակերև-

վույթի տեղական ձևախախտում, որն արտահայտվում է ուռչեցումների (թմբիկների) ձևով և հանդիսանում է ապարների սառեցման արդյունք:

ПУЧИНЫ — ՈՒՌԻՉԵՑՈՒՄՆԵՐ, տե՛ս Морозные пучины:

ПЬЕЗОИЗОБАТЫ — ՊԻԵԶՈՒԶՈՒԲԱԹԵՐ, քարտեզի կամ հատակագծի վրա գծեր, որոնք միացնում են երկրի մակերևույթից հավասար խորությունների վրա գտնվող ճնշումնային ջրերի ճնշման մակերևույթի կետերը:

ПЬЕЗОИЗОГИПСЫ — ՀԱՄԱԾՆՇՈՒՄԱԳԾԵՐ (ՊԻԵԶՈՒԶՈՒԳԾԵՐ), տե՛ս Гидроизопьезы:

ПЬЕЗОМЕТР — ԾՆՇՈՒՄՆԱԶԱՓ, խողովակ, որը ներքևի ծայրով միացված է հեղուկով լցված անոթին: Ջրաերկրաբանությունում ճնշումնաչափ է հանդիսանում ջրատար հորիզոնին հասած հորատանցքը կամ այլ փորվածքը, որում դիտվող ջրի մակարդակով դատում են գրունտային ջրերի հայելու կամ ճնշումնային ջրերի ճնշման մակերևույթի մասին:

ПЬЕЗОМЕТРИЧЕСКАЯ ВЫСОТА — ԾՆՇՈՒՄՆԱԶԱՓԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Пьезометрический (напорный) уровень подземных вод:

ПЬЕЗОМЕТРИЧЕСКАЯ СКВАЖИНА — ԾՆՇՈՒՄՆԱԶԱՓԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ, հատուկ դիտողական հորատանցք, որը նախատեսված է նավթակուտակի (կամ ջրատար հորիզոնի) որևէ տեղամասում շերտային ճնշման փոփոխությունները (կամ ջրի մակարդակի տատանումները) մշտապես դիտելու համար:

ПЬЕЗОМЕТРИЧЕСКИЙ УКЛОН — ՊԻԵԶՈՄԵՏՐԻԿ (ԾՆՇՈՒՄՆԱԶԱՓԱԿԱՆ) ԹԵԲՈՒԹՅՈՒՆ, ճնշումնային ջրիուքի ուղղությամբ երկու կետերի ճնշումների տարբերության հարաբերությունը նրանց միջև եղած հեռավորությանը:

ПЬЕЗОМЕТРИЧЕСКИЙ (НАПОРНЫЙ) УРОВЕНЬ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԻԵԶՈՄԵՏՐԻԿ (ԾՆՇՈՒՄՆԱՅԻՆ) ՄԱԿԱՐԿԱԿ, ստ. ճնշումնային ջրերը հորատանցքերով հատելիս նրանցում դիտվող հաստատված մակարդակ: Ս. ջ. պ. մ. արտահայտվում է բացարձակ միջերով կամ ճնշումնային շերտի ստաստադից ունեցած բարձրությամբ (մ-երով կամ մթն.-երով):

ПЬЕЗОПРОВОДНОСТЬ — ԾՆՇՈՒՄՆԱՀԱՂՈՐԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրով, նավթով կամ գազով հագեցած միջավայրի ճնշում հաղորդելու ունակություն: Ծնշման հաղորդման արագությունը բնութագրվում է ճնշումահաղորդականության գործակցով: Չսեղմվող միջավայրում (ապստամային ապարներում և չսեղմվող հեղուկի դեպքում) ճնշման վերաբաշխումը կատարվում է ակնթարթորեն:

ПЫЛЕВАТАЯ ФРАКЦИЯ — ՓՈՇԱՅԻՆ ՀԱՏԻԿԱԽՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ), փուխր ապարների հատիկավումբ, որոնց չափերը տատանվում են 0,005—0,05 մմ սահմաններում:

**ПЫЛЕВИДНЫЙ ГРУНТ** — ՓՈՇԵՆՄԱՆ ԳՐՈՒՆՏ, փուխր սպար, որը հիմնականում կազմված է փոշային հատիկախմբից (ֆրակցիայից): Հնացած տերմին:

— P —

**РАВНОВЕСИЕ ГИДРОСТАТИЧЕСКОЕ** — ՋՐԱՍՍԱՏԻԿ ՀԱՎԱՍՍԱՐԱԿԹՈՒԹՅՈՒՆ, հավասարակշռություն, որը հեղուկում հաստատվում է լրացուցիչ արտաքին ուժերի բացակայության դեպքում: Լրացուցիչ ուժերից են՝ մագնեթային (կապիլյար) ուժերը, որոնք ազդում են հեղուկի ազատ մակերևույթի վրա, և հեղուկի մեջ ընկղմված մարմնին հակազդող ուժը:

**РАВНОВЕСИЕ ХИМИЧЕСКОЕ** — ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՎԱՍՍԱՐԱԿԹՈՒԹՅՈՒՆ, քիմ. հակադարձ ռեակցիայում դիտվող դինամիկ հավասարակշռություն: Օր.,  $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3$ : Ք. հ. բնութագրվում է նրանով, որ անփոփոխ ճնշման ու ջերմային պայմաններում մասնակից նյութերի կուտակումը (կոնցենտրացիան) մնում է հաստատուն, քանի որ ուղիղ և հակադարձ ռեակցիաներն ընթանում են նույն արագությամբ:

**РАВНОМЕРНОЕ ДВИЖЕНИЕ ЖИДКОСТИ** — ՀԵՂՈՒԿԻ ՀԱՎԱՍՍԱՐԱԶԱՓ ԾԱՐԹՈՒՄ, ըստ Ն. Ն. Պավլովսկու, հեղուկի շարժում, որի դեպքում արագության մեծությունը հոսքի ցանկացած կենդանի կտրվածքում հավասար է:

**РАДИОАКТИВНОСТЬ ПРИРОДНЫХ ВОД** — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՌԱԴԻՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, բնական ջրերի հատկություն, որը պայմանավորված է նրանցում արարունակվող ռադիոակտիվ տարրերի (ուրան, ռադիում, ռադոն) խտությամբ և ինքնակամ տրոհման ակտիվությամբ: Բ. ջ. ո. տատանվում է մեծ սահմաններում. ամենասակավ ակտիվություն դրսևորում են օվկիանոսների, ծովերի, գետերի ու լճերի ջրերը, ամենամեծ ակտիվություն՝ ուրանային հնքվ-երի ստ. ջրերը:

**РАДИОАКТИВНЫЕ ВОДЫ** — ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնք բնութագրվում են ռադիոակտիվ տարրերի (ուրան, ռադիում, ռադոն) բարձր պարունակությամբ: Ռ. ջ. բաժանվում են հետևյալ 5 խմբերի.

- 1) ռադոնային ( $Rn > 50$  էման,  $Ra < 1.10^{-11}$  գ/լ,  $U < 3.10^{-5}$  գ/լ),
- 2) ռադիումային ( $Rn < 50$  էման,  $Ra > 1.10^{-11}$  գ/լ,  $U < 3.10^{-5}$  գ/լ),
- 3) ուրանային ( $Rn < 50$  էման,  $Ra < 1.10^{-11}$  գ/լ,  $U > 3.10^{-5}$  գ/լ),
- 4) ուրան-ռադիումային ( $Rn < 50$  էման,  $Ra \geq 1.10^{-11}$  գ/լ,  $U > 3.10^{-5}$  գ/լ),
- 5) ռադոն-ռադիումային ( $Rn > 50$  էման,  $Ra > 1.10^{-11}$  գ/լ,  $U > 3.10^{-5}$  գ/լ):

**РАДИОГИДРОГЕОЛОГИЯ** — ՌԱԴԻՈՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրաերկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է բնական ռադիոակտիվ ջրերը, նրանց ձևավորման ու տարածման պայմանները, պարզաբանում է նրանց դերը որպես ռադիոակտիվ տարրերի հնքվ-երի որոնման չափանիշ:

**РАДИУС ВЛИЯНИЯ СКВАЖИНЫ, КОЛОДЦА** — ՀՈՐՄԱՍԱՆՑՔԻ, ՋՐՀՈՐԻ ԱՋԻԵՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՎԻՂ, այն հեռավորությունը, մինչև ուր տարածվում է հո-

բառանցքից, ջրհորից կամ այլ փորվածքից ջրի արտամղման (կամ ներմղման) ազդեցությունը:

**РАДИУС ГИДРАВЛИЧЕСКИЙ** — ՀԻԴՐԱՎԻԿ ԾԱՌԱՎԻՐ, մակերևութային հոսքի կենդանի կտրվածքի մակերեսի և թրջված պարագծի հարաբերությունը, որը ցույց է տալիս թրջված պարագծի երկարության միավորին բաժին ընկնող կենդանի կտրվածքի մակերեսը:

**РАДИУС ПИТАНИЯ КОЛОДЦА ПРИВЕДЕННЫЙ** — ԶՐՀՈՐԻ ՍՆՄԱՆ ԲԵՐՎԱԾ ԾԱՌԱՎԻՐ, անհամասեռ ապարներով ներկայացված հորիզոնից շուր արտամղելիս հորի շուրջ ստեղծվող համակենտրոն ափսնտրիկ շրջանաձև եզրագիծ ունեցող սնման մարզի (իջեցման ձագարի) բերված (միջինացված) շտաավիղ, որի դեպքում ապահովվում է փաստացի արտամղվող ջրաքանակը:

**РАДИУС ПОЛЕЗНОГО ДЕЙСТВИЯ ПРИ ОТКАЧКЕ** — ԱՐՏԱՄՂԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԹԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՎԻՐ, հետավորություն՝ հորատանցքի կամ այլ ջրհան փորվածքի կենտրոնից մինչև իջույթային կորի այն կետը, որտեղ ջրի մակարդակի իջեցումը համապատասխանում է պահանջվող մեծությանը: **Օգտակար գործողության շտաավիղի մեծությունն** օգտագործվում է ջրհան կառույցների կամ չորացման ցանցի ուսցիոնալ և արդյունավետ տեղաբաշխման նախագծային հաշվարկներում:

**РАДОΝОВЫЕ ВОДЫ** — ՌԱԴՈՆԱՅԻՆ ԶՐԵՐ, տե՛ս Բառնոակտիվնե Երուր:

**РАЗБУХАНИЕ ГЛИН** — ԿԱՎԵՐԻ ՈՒՌՁՈՒՄ, խոնավացման հետևանքով կավային ապարների ծավալի մեծացում (ուռչում):

**РАЗЖИЖЕНИЕ ПЛЫВУНОВ** — ՀՈՍԱԳՐՈՒՆՏՆԵՐԻ (ԱՊԱՐԱՆՈՂԻԿՆԵՐԻ) ԶՐԻԿԱՑՈՒՄ, ցնցման կամ թափահարման հետևանքով հոսազրուցների տիքստորոպ հատկությունների դրսևորում (ջրիկացում), որի արդյունքում նրանք դառնում են ալեղի մածուցիկ և հոսուն: Ցնցումը վերացնելուց հետո հոսազրուցները վերադառնում են նախկին վիճակին և շարժունակությունը կորցնում են:

**РАЗВЕДКА ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ** — ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ, երկրբ. հետախուզության տեսակ, որը կատարվում է որևէ տարածքի (շրջանի, ռեգիոնի) ինժեներաերկրբ. պայմանների ուսումնասիրության նպատակով:

**РАЗГРУЗКА ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ԲԵՐՆԱԹԱՓՈՒՄ, ապարի (գրունտի) վրա գործադրված բեռնվածքի վերացում:

**РАЗМОКАЕМОСТЬ ГРУНТОВ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԿԱԿՂԵԼԻՈՒԹՅՈՒՆ, խոնավացման հետևանքով գրունտների կապակցվածության վերացում, որի հետևանքով արդյունքում նրանք վերածվում են փոխար կամ հոսուն զանգվածի: Գ. կ. հատուկ է կավային ապարներին և կավված է նրանց կազմից, դիսպերսայնության

աստիճանից, մասնիկների կապերի բնույթից, սկզբնական խոնավությունից, ինչպես նաև ջրի քիմ. բաղադրությունից: Կակղելիության մեծությունը օգտագործվում է ջրամբարների ափերի վերամշակման, թեքությունների և հողային կառույցների կառուցման գնահատման ժամանակ: Կակղելիության ցուցանիշներ են ծառայում. 1) ժամանակը, որի ընթացքում ջրի մեջ տեղադրված գրունտի նմուշը կակղում և քայքայվում է, 2) քայքայման բնույթը (վերածվելը կոշտերի, փոշու ևն):

**РАЗМЫВ** — ՈՂՈՂԱՍԱՐՈՒՄ, ջրհոսքով հունի կամ ափեզրի ապարների ողողում և տեղատարում:

**РАЗМЯГЧАЕМОСТЬ ГРУНТОВ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՓԱՓԿԵՑՈՒՄ, խոնավացման հետևանքով կարծր ապարների (գրունտների) ամրության թուլացում: Գ. փ. **բնութագրվում է փափկեցման գործակցով** ( $\eta$ ), որն իրենից ներկայացնում է գրունտի մինչ ջրով հագեցումը սեղմման ժամանակավոր դիմադրության ( $K'd$ ) և ջրով հագեցումից հետո ժամանակավոր դիմադրության ( $K''d$ ) հարաբերությունը՝  $\eta = \frac{K'd}{K''d}$ : Գ. փ. կախված է նրանց միներալային կազմից, ամրությունից և ծակտակեցությունից:

**РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ** — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ԿՈՂԱՊԱՏԿԵՐ), ուսումնասիրվող շրջանի ջրաերկր. իրադրության գրաֆիկ պատկերումը ուղղաձիգ կտրվածքի վրա: Նրա վրա արտահայտվում են ջրատար ու ջրամերժ շերտերի տեղադիրքն ու դասավորությունը, ջրատար հորիզոնների ճնշումն ու հոսքի ուղղությունը, ստ. ջրերի հանքայնացումը, քիմ. կազմը և այլ ջրաերկր. տվյալներ: Զ. կ. հանդիսանում է ջրաերկր. քարտեզի լրացումը և սովորաբար կազմվում է նրա հետ համատեղ՝ միացյալ մեթոդիկալով:

**РАЗРУШАЮЩАЯ НАГРУЗКА** — ՔԱՅՔԱՅՈՂ ԲԵՌՆՎԱԾՔ, գրունտի սեղմման սահմանային դիմադրությունը գերազանցող բեռնվածք (ճնշում): Ք. բ. համապատասխանում է դրոշմի տակից գրունտի սողքի կամ արտամղման փուլի թևակոխմանը:

**РАЗРУШАЮЩЕЕ НАПРЯЖЕНИЕ** — ՔԱՅՔԱՅԻՉ ԱՐՈՒՄ, գրունտի միատանց սեղմման (ձգման) փորձարկման ժամանակ գործադրվող սահմանային լարում, որի տակ գրունտի նմուշը քայքայվում է: Հոմանիշ՝ ամրության սահման, սեղմման ժամանակավոր դիմադրություն:

**РАЗУБОЖИВАНИЕ** — ԱՂՔԱՍԱՑՈՒՄ, օգտակար հանածոների (հանքանյութի, հանքային բուժիչ և արդյունաբերական ջրերի ևն) արդյունահանման ժամանակ օգտակար բաղադրատարրերի բանակի նվազում (սկզբնական պարունակության համեմատությամբ)՝ հանքանյութից զուրկ ապարների կամ քաղցրահամ ջրերի խառնվելու հետևանքով: Ա. տեղի է ունենում նաև հանքանյութերի օգտակար բաղադրատարրերի ստ. ջրերում լուծվելու և տեղատարվելու հետևանքով:

**РАЗУПЛОТНЕНИЕ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ՓԻՐԵՑՈՒՄ, բեռնվածքի վերաց-

ման, հողմահարման կամ այլ գործոնների շնորհիվ ապարի ծակոտկենդանի և խռչողության մեծացում: Փխրեցումը առավել բնորոշ է կավային ապարներին:

РАЗУПРОЧНЕНИЕ ПОРОДЫ — ԱՊԱՐԻ ԹՈՒՎԱՑՈՒՄ (ԽԱՐԽԼՈՒՄ) հողմահարման, խոնավացման, փոփոխական բեռնվածքի գործադրման կամ այլ գործոնների շնորհիվ ապարի ներքին կապերի թուլացում (բայթայում):

РАЙОН ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ — ԻՆՃԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ, ինժեներաերկրբ. մարզի խոշոր բաղադրամաս, որը բնութագրվում է ապարների համալիրի և ինժեներաերկրբ. պայմանների ընդհանրությամբ:

РАЙОН КАРСТОВЫЙ — ԿԱՐՍՏԱՅԻՆ ՇՐՋԱՆ, որոշակի տիպի կարստի (փակ կամ բաց, հաղոգեմային, կարբոնատային, ըստ հասակի կամ տեղադրման խորության ևն) տարածման շրջան:

РАПА — ԲՆԱԱՂԱԶՈՒՐ, աղային լճերի կամ արհեստական սալազանների բարձր հանքայնացումով բնական աղաջրեր: Եթե Բ. մոտենում է հազեցման սահմանին, ապա նրանից նստում են տարբեր աղեր՝ այնպիսի բաղադրությամբ ու հերթնակարգով, որոնք պայմանավորված են լուծույթի ֆիզքիմ. հավասարակշռությամբ: Տարբերում են. 1) մակերևութային Բ-եր, որոնք ծածկում են աղալճերի հատակային աղաշերտերը և անմիջականորեն կրում են արեգակնային ջերմության ազդեցությունը: Նման Բ-երը ենթարկվում են սեզոնային ու բազմամյա զգալի փոփոխությունների՝ կախված լճի սնման և ջերմային ռեժիմից, 2) միջբլուրեղային կամ հատակային Բ-եր, որոնք հազեցնում են հատակին գոյացած աղաշերտերը (միջբլուրեղային դատարկությունները):

РАСПРЕДЕЛЕННАЯ НАГРУЗКА — ԲԱՇԵՎԱԾ ԲԵՌՆՎԱԾՔ, բեռնվածք, որը, ի տարբերություն կենտրոնացված բեռնվածքի, բաշխված է ապարի ողջ մակերեսի կամ նրա զգալի մասի վրա:

РАССЕИВАНИЕ ПОРОВОГО ДАВЛЕНИЯ — ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ԾՆՇՄԱՆ ՑՐՈՒՄ, ապարի ծծանցման կոնսոլիդացման (ջրաբամվելու հետևանքով ամրացման) գործընթացում հավելորդային ծակոտիմային ճնշման աստիճանաբար նվազում:

РАССОЛОНЕНИЕ — ԱՂԱԶԵՐԾՈՒՄ (ԱՂԱՆՈՍՐԱՑՈՒՄ), բարձր հանքայնացման քլորիդային և սուլֆատային ստ. ջրերի նստացումը (ջրիկացումը) ջրակարբոնատ-կալցիումային քաղցրահամ ջրերով: Ա. տևական գործընթացի արդյունքում, փոխանակային ռեակցիաների հետևանքով առաջանում են ջրակարբոնատ-նատրիումային կամ մագնիումի մեծ պարունակությամբ ջրեր:

РАССОЛЫ — ԱՂԱԶՐԵՐ, ջրեր, որոնցում լուծված աղերի պարունակությունը գերազանցում է 35 գ/լ (ըստ Վ. Ի. Վերնադսկու՝ 50 գ/լ):

РАСТВОР ПОРОВЫЙ — ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ, բարձր ճնշման տակ ապարի ձգման (մամլման) միջոցով անջատվող ջուր: Հոմանիշ՝ ճգման ջուր (տե՛ս Вода отжатая):

**РАСТЕНИЯ ВОДНЫЕ** — ՋՐԱԲՈՒՅՍԵՐ, ջրային կյանք վարող բոլոր կարգի բույսեր՝ ջրիմուսներ, որոշ մամուսկերպեր, ստերագգիներ և ծածկատերմավորներ: Զ-ի որոշ տեսակներ ամրանում են հատակին և մասամբ կամ լիովին ընկղմված են ջրում, մյուսները լողում են ջրի մակերևույթին կամ գտնվում են կախված վիճակում:

**РАСТЯГИВАЮЩЕЕ НАПРЯЖЕНИЕ** — ՋԳՈՂ ԼԱՐՈՒՄ, գրունտի (մարմնի) մասերը միմյանցից տրամագծորեն հակառակ ուղղությամբ հեռացնել ձգտող լարում:

**РАСХОД (УРОВЕНЬ ВОДЫ БЫТОВОЙ)** — ՋՐԻ ԿԵՆՑԱՂԱՎՅԷՆ ԾԱԽՍ (ՄԱԿԱՐՂԱԿ), ջրի քանակ, որը նախատեսվում է բնակելի և պետական շենքերի, ինչպես նաև կոմունալ սպասարկման հիմնարկ-ձեռնարկների խմելու և տնտ. ջրամատակարարման համար:

**РАСХОД ЕСТЕСТВЕННОГО ПОДЗЕМНОГО ПОТОКА** — ԲՆԱԿԱՆ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԻ ԾԱԽՍ, տե՛ս Производительность (расход) естественного подземного потока:

**РАСЧЕТНОЕ СОПРОТИВЛЕНИЕ ГРУНТА** — ԳՐՈՒՆՏԻ ՀԱԾՎԱՐԿԱՑԻՆ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գրունտի ամրության նորմատիվային ցուցանիշներ, որոնք օգտագործվում են շենքերի ու արդյունաբերական կառույցների բնական հիմնատակերի նախագծման ժամանակ: Համաձայն գործող նորմերի, հիմնատակերի նախագծման ժամանակ հիմքի ներքանի միջոցով հիմնատակի վրա գործադրվող միջին ճնշումը պետք է պակաս կամ հավասար լինի Գ. հ. դ., որը կախված է գրունտի միներալային ու հատիկաչափական կազմերից, նրա բնական վիճակից և մեխ. հատկություններից: Հոմանիշ՝ գրունտի կրողունակություն:

**РЕАКЦИЯ ХИМИЧЕСКАЯ** — ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱ, քիմ. միացությունների քաղադրության, կառուցվածքի ու հատկությունների փոփոխությունների գործընթաց: Ք. ռ-ի ժամանակ լուրաքանչյուր տվյալ քիմ. տարրի ատոմների քանակը մնում է անփոփոխ:

**РЕГЕНЕРАЦИЯ ГРЯЗИ** — ՑԵՆՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (ՌԵԳԵՆԵՐԱՑԻԱ), բուժման նպատակով հանքային ցեխի օգտագործումից հետո նրա սկզբնական հատկությունների վերականգնում: Երբեմն Ց. վ. տակ հասկացվում է նաև հորատման լուծույթի հատկությունների վերականգնումը՝ այն հորատման խարամից մաքրելու միջոցով:

**РЕГИОН ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ** — ԻՆՃԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ (ՌԵԳԻՈՆ), ինժեներատերկր. շրջանացման առավել խոշոր ստորաբաժանում, որը փոքրամասշտաբ ակնարկային քարտեզների վրա առանձնացվում է այնպիսի հատկանիշների ընդհանրությամբ, ինչպիսիք են՝ երկր. ու ջրատերկր. ընդհանուր պայմանները, երկրաձևաբանական իրադրությունը և երկր. գործընթացները:

**РЕГИОНАЛЬНАЯ ГИДРОГЕОЛОГИЯ** — ՌԵԳԻՈՆԱԿԱՆ ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրատերկրաբանության բաժին, որը զբաղվում է որոշակի երկրամասերի

(մարզերի) ստ. ջրերի առաջացման, տեղադրման, տարածման օրինաչափությունների, երկրակեղևի երկրք. կառուցվածքի և զարգացման պատմության հետ նրանց կապի ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով պարզաբանել ժողովրդական տղեկտեսության մեջ ստ. ջրերի օգտագործման հնարավորություններն ու հետաձևարները: Ռ. ջ. քննարկում և մշակում է տարբեր ֆիզիկաաշխարհ. պայմաններ և երկրք. կառուցվածք ունեցող տարածքների ռեգիոնալ տվյալների ընդհանրացման, ջրաերկրք. քարտեզահանման և շրջանացման սկզբունքները:

РЕГИОНАЛЬНАЯ ИНЖЕНЕРНАЯ ГЕОЛОГИЯ — ՌԵԳԻՈՆԱԿԱԿՆՆԵՆԵՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԿԵԼՎԱԿԱՆ ԻՆՋԵՆԵՐՆԱԿԱՆ ԳԵՕԼՈԳԻԱ, ինժեներական երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է առանձին տարածաշրջանների (ռեգիոնների) ու խոշոր շրջանների ինժեներաերկրք. պայմանները և մշակում է նրանց հետազոտման մեթոդները:

РЕГИОНАЛЬНОЕ ГРУНТОВЕДЕНИЕ — ՌԵԳԻՈՆԱԿԱԿՆՆԵՐԱԿԱՆ ԳՐՈՒՆԴՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գրունտագիտության բաժին, որն ուսումնասիրում և գնահատում է առանձին երկրների ու խոշոր տարածաշրջանների (ռեգիոնների) ապարների շերտագրական համալիրների ու ծագումնաբանական տիպերի ինժեներաերկրք. հատկությունները:

РЕГИОНАЛЬНЫЙ МЕТАМОРФИЗМ — ՌԵԳԻՈՆԱԿԱԿՆՆԵՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ, ջրաերկրաբանությունում՝ երկրք. տարբեր ժամանակահատվածներում ստ. ջրերի ձևավորման գործընթացում նրանց քիմ. բաղադրության և ֆիզ. հատկությունների էական փոփոխություններ, որոնք տեղի են ունենում ստ. ջրերի ու ապարների փոխազդեցությանը պայմանավորված ֆիզքիմ. գործընթացների հետևանքով:

РЕГУЛИРОВАНИЕ СТОКА — ՀՈՍՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ջրամբարների միջոցով ժամանակի ընթացքում մակերևութային հոսքի արհեստական վերաբաշխում, որը կատարվում է էլեկտր. ջրօգտագործման պահանջներից: Ըստ կարգավորման ցիկլի տևողության, տարբերում են նրա հետևյալ տեսակները. բազմամյա, սեզոնային (տարեկան), շաբաթական (կամ տասնօրյա) և օրեկան:

РЕГУЛИРУЕМАЯ ВЛАЖНОСТЬ — ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, ապարների (գրունտների, հողերի) արհեստականորեն փոփոխվող կամ կայուն պահվող խոնավություն:

РЕДКИЕ ЭЛЕМЕНТЫ — ՀԱԶՎԱԳՅՈՒՑ ՏԱՐՐԵՐ, քիմ. տարրերի մեծ խմբի պայմանական անվանում, որի մեջ մտնում են Li, Rb, Cs, Be, Ra, Ga, Jn, Tl, Ge, V, Nb, Ta, Se, Te, Po, Mo, W, Re, Sc, J, Ti, Zr, Hf, La և լանտանոիդները (14 տարր), Ac, Th, Pa, U և իներտ (ազնիվ) գազերը՝ He, Ne, Ar, Kr, Xe, Rn: Հ. տ. հասկացությունը բոլորովին չի նշանակում, որ նրանք երկրակեղևում (ստ. ջրերում) քիչ են տարածված: Օր., այս խմբի տարրերից Ti, Zr, V ավելի մեծ տարածում ունեն քան Հ. տ-ի խմբին չդասվող Rb, Sn, Hg ևն: Հ. տ-ից մի քանիսը կազմում են սեփական միներալներ, որոնց մեջ «հազվագյուտ տարրի» պարունակությունը կարող է հասնել տասնյակ %-ների: Սակայն Հ. տ-ի մեծ մասը քիչ է տարածված և սեփական միներալներ չի կազմում: Նման տարրերը կոչվում են հազվագյուտ ցրված տարրեր:

**РЕЖИМ ГИДРОЛОГИЧЕСКИЙ** — ՋՐԱԲԱՆԱԿԱՆ ՌԵԺԻՄ, ժամանակ-տա-  
քանության մեջ ջրային օբյեկտի (լճի, գետի, ճահճի ևն) փոփոխությունների  
օրինաչափությունները, որոնք պայմանավորված են ավազանի ֆիզիկաաշխարհը. (սառ-  
ջին հերթին կլիմայական) պայմաններով, ինչպես նաև հիդրոտեխն. միջոցառումներով:  
Հ. ո. արտահայտվում է ռեժիմի հետևյալ բաղադրատարրերի՝ բազմամյա, սեզոնա-  
յին և օրեկան տատանումներով. 1) ջրի մակարդակի, 2) ջրի ծախսի, 3) ջրի ջերմ-  
աստիճանի, 4) սառցային երևույթների, 5) լուծված նյութերի խտության ու բաղա-  
դրության, 6) հոսքով տարվող նյութերի քանակի ու բաղադրակազմի, 7) գետաբուսու-  
տեղափոխության ևն: Կախված հիդրոտեխն. կառույցների բացակայությունից կամ  
սակայությունից, տարբերում են բնական (կենցաղային) և կարգավորված ռեժիմներ:

**РЕЖИМ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՌԵԺԻՄ, ըստ Մ. Ե.  
Ալտովսկու, ստ. ջրերի որակական ու քանակական ցուցանիշների ձևավորման առան-  
ձին փուլերի գնապատմական գործընթաց, որն ընթանում է փոխադարձ ազդող և  
փոխազդվող գործոնների համատեղ ներգործության շնորհիվ: Ստ. ջրերի մակարդակն  
ու մշտումը, ծախսը, բիմ. բաղադրակազմը, հանքայնացումը, ջերմաստիճանը և այլ  
որակական ու քանակական ցուցանիշները կրում են ժամանակավոր (կարճատև),  
սեզոնային, բազմամյա և դարավոր փոփոխություններ: Ս. ջ. ո. պայմանավորող  
հիմնական գործոններն են. կլիմայական, երկրաձևաբանական, երկրբ. ու կենսա-  
պայմանները և մարդու տևո. գործունեությունը, որի ազդեցությունը գնալով մե-  
ծանում է:

**РЕЖУЩЕЕ КОЛЬЦО** — ԿՏՐՈՂ ՅՐԱԿ, 15—40 մմ բարձրության և 50—100 մմ  
տրամագծով սուր երիզով մետաղյա գլան, որն օգտագործվում է կապակցված  
գրունտների բնական խոնավության ու կառուցվածքի նմուշ վերցնելու համար:

**РЕЗЕРВ ВОДЫ ЩЕЛОЧНОЙ** — ՋՐԻ ԱԿՎԱԼԱՅԻՆ ՌԵԶԵՐՎ, բնական (օվ-  
կիանոսային ևն) ջրերում թույլ թթուների անիոնների գումարի (մգ. համ./լ) գե-  
րազանցումը ուժեղ թթուների անիոնների գումարից ( $\text{HCO}_3^- + \text{CO}_3^{2-} > \text{Cl}^- + \text{SO}_4^{2-}$ ):

**РЕЗИСТИВИМЕТР** — ՌԵԶԻՍԻՎԻՄԵՏՐ, կարճ զոնդով էլեկտրական սարք,  
որի օգնությամբ չափում են հորատանցքի փողը լցնող հեղուկի տեսակարար էլեկ-  
տրական դիմադրությունը: Հորատման լուծույթի տեսակարար էլեկտրական դիմա-  
դրության տվյալների հիման վրա մեկնաբանվում են հորատանցքի կարտոսաժի ար-  
դյունքները և որոշվում հորատանցքի մեջ հեղուկի մուտք գործելու միջակայքերը ևն:

**РЕЙНОЛЬДСА ЧИСЛО (Re)** — ՌԵՅՆՈՒՐԿԻ ԹԻՎ (Re), չափողականու-  
թյուն չունեցող մեծություն, որն ուղիղ համեմատական է հիդրավիլի շտապիղիին  
(R) ու հոսքի միջին արագությանը (V ժ.) և հակադարձ համեմատական է հեղուկի  
մածուցիկությանը ( $\nu$ ). 
$$\text{Re} = \frac{R \cdot V \cdot \rho}{\nu}$$
: Հիդրավիլիկայում Ռ. թ. ունի կարևոր նշանա-  
կություն որպես նմանության և լամինար շարժումից տուրբուլենտ շարժման անցման  
չափանիշ: Համեմատաբար հարթ ջրանցքների բաց ջրհոսքերի համար Ռ. թ. տա-  
սանվում է 300—1200 սահմաններում:

**РЕЛАКСАЦИЯ** — ՌԵԼԱՔՍՏԻԱ (ՆՎԱԶՈՒՄ), ֆիզ. կամ ֆիզքիմ. միջավայրում տարբեր երևույթների ստատիկ հավասարակշռության հաստատման գործընթաց: Գրունտագիտությունում՝ գրունտների անփոփոխ ձևախախտման դեպքում նրանց վրա գործող լարումների նվազում:

**РЕЛЬЕФ ТЕХНОГЕННЫЙ (АНТРОПОГЕННЫЙ)** — ՏԵԽՆԱԾԻՆ (ԱՆՏՐՈՊՈԳԵՆ) ՌԵԼԻԵՖ, ռելիեֆ, որը ստեղծվում է ժամանակակից տեխնիկայով զինված մարդու տև. գործունեությամբ: Տարբերում են մարդու ուղղակի և անուղղակի գործունեությամբ պայմանավորված Տ. ու-ներ: Ուղղակի գործունեությամբ ստեղծվում են. 1) տեղախանման ռելիեֆային ձևեր (բաց հանքեր, հանքահորեր, ջրանցքներ, առուներ, դարավանդներ, փոսորակներ ևն) և, 2) կուտակման ռելիեֆային ձևեր (հողապատեցներ, պատվարներ, ջրամբարներ, տերիկոներ, կուլտուրական շերտեր, թափոններ ևն): Ըստ էության մարդու կատարած բոլոր կառուցապատումները (քաղաքներ, գյուղեր, անասարհներ ևն) կարելի է դիտարկել որպես Տ. ո.: Անուղղակի (հրահրող) գործունեությամբ ստեղծվող ռելիեֆային ձևերից կարելի է նշել, օր., գնդդաշուն. տարածքների մշակման հետևանքով հողերի ողողամաշումը, ստ. ջրերի, նավթի ու գազի ինտենսիվ շահագործմամբ պայմանավորված ռելիեֆի նստեցումները, ստ. փորվածքների առաստաղի նստեցումները, ափապաշտպան կառույցներով հրահրված ափային գործընթացների փոփոխությունները ևն: Գիտատեխ. հեղափոխության դարաշրջանում մարդու տև. գործունեությունը հանգեցնում է ռելիեֆի ափռելի ձևափոխությունների (անդնդախոր բաց հանքեր, տերիկոների սարեր, ծովեր հիշեցնող ջրամբարներ ևն): Սովորաբար մարդու հրահրած գործընթացները ռելիեֆի վրա թողնում են բացասական ազդեցություն, սակայն, առանձին դեպքերում, այդ գործընթացները նպատակամղվում են ցանկալի ուղղությամբ (օր., ափապաշտպան կառույցները հանգեցնում են ափաքերման դադարեցմանն ու բերվածքների կուտակմանը):

**РЕКУЛЬТИВАЦИЯ ЗЕМЕЛЬ** — ՀՈՂԵՐԻ ՎԵՐԱՄՕՄԱԿԵԼԻԱՑԻՄ, մարդու շին., լեռնահանքային և այլ գործունեության հետևանքով շարքից դուրս եկած հողատեսքերի վերականգնում, նրանց բարեբերության վերստեղծում: Ներկայումս բաց հանքեր կամ ջրամբարներ նախագծելիս անպայման նախատեսվում է հողաբուսական շերտը տեղափոխել՝ մեկ այլ անբերրի հողատեսքերում օգտագործելու նպատակով, կամ հուսալիորեն կուտակել՝ հետագայում նույն հողերը (դիցուք, հանքերի շահագործումը դադարեցնելուց հետո) վերականգնելու նպատակով:

**РЕОЛОГИЧЕСКИЕ МОДЕЛИ** — ՌԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈԳԵԼՆԵՐ, մեխ. սխեմաներ, որոնց միջոցով մոդելացվում են պլաստիկ նյութերի (գրունտների) ներքին կապերը և մնացորդային ձևախախտումների հետ կապված գործընթացները:

**РЕОЛОГИЧЕСКИЕ СВОЙСТВА ГРУНТОВ**—ԳՐՈՒԻՆՏԵՆԵՐԻ ՌԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գրունտների սողքի, լարումների ռելաքսացիայի (նվազման) և տևական ամրության հատկություններ: Ռելոգիական հատկությունները բնորոշ են կավերին, ավազակավերին, սառած ապարներին, սառցին և այլ բնական ու արհեստական նյութերին:

**РЕОЛОГИЯ** — ՌԵՈԼՈԳԻԱ, մեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է հաստարած միջավայրերի (հեղուկ, գազանման և սինդ մարմինների) հոսունության ու ձևախախտման հատկությունները, իսկ գրունտագիտությունում՝ այդ թվում գրունտների սողքի, լարումների ռելաքսացիայի (նվազման) և տևական ամրության խընդիրները:

**РЕПЕРЫ ВОДОМЕРНОГО ПОСТА** — ՋՐԱՉԱՓԱԿԱՆ ԿԵՏԻ ՀԵՆԱՆԻԾԵՐ, ջրաչափական կետում կամ նրան կից տեղամասում հուսալիորեն ամրացված մետաղյա հեռանիշեր, որոնց բարձրությունը ջրաչափական գրաֆիկի 0 կետի նկատմամբ կանխապես հայտնի է:

**РЕПРЕЗЕНТАТИВНЫЕ ЭЛЕМЕНТЫ РЕЖИМА** — ՌԵԺԻՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ, որոշակի պայմաններում ռեժիմի բնորոշ տարրերի ներկայացուցչական օրինաչափ փոխկապակցվածություն: Օր., որոշակի պայմաններում գետի ծախսի տատանումները անդրադառնում են գրունտային ջրերի մակարդակի տատանումների վրա, այսինքն վերջինները ներկայացուցչական են:

**РЕСУРСЫ ВОДНЫЕ** — ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, մակերևութային ու ստ. ջրերի վերականգնվող պաշարներ, որոնք կարող են օգտագործվել ժողտնտեսության տարբեր նպատակների համար:

**РЕСУРСЫ ПОДЗЕМНЫХ ВОД ЕСТЕСТВЕННЫЕ** — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, բնական (շխախտված) պայմաններում ջրատար հորիզոնի սնման մեծությունը (չափը): Ս. ջ. բ. ո. հավասար են տվյալ հորիզոնի ջրային հաշվեկշռի մուտքի բոլոր տարրերի գումարին (մթնոլորտային տեղումների ներծծում, գետերից, լճերից ծծանցվող ջրի մուտք, այլ հորիզոններից ու հարևան ավազաններից ջրի մուտք են): Ս. ջ. բ. ո. արտացոլվում են ստ. ջրերի հոսքի ծախսով, կամ ջրային հաշվեկշռի մուտքի և ելքի բաղադրիչների տարբերությամբ: Ջրհան կառույցներով կարող է ներգրավվել (վերցվել) բնական ռեսուրսների միայն այն մասը, որը բեռնաթափվում է բնական պայմաններում սպազա իջեցման (դեպրեսիայի) զոնայում, ըստ որում Ս. ջ. բ. ո. պակասում են ջրհաններով վերցվող ջրի չափով: Ստ. ջրերի հոսքի մեծությունը կախված է ջրատար հորիզոնի ռեժիմից և փոխվում է ըստ սեզոնների՝ ստ. ջրերի՝ սնման ինտենսիվության փոփոխության պատճառով: Որոշ հետազոտողներ բնական ռեսուրսների տակ հասկանում են ստ. ջրերի դինամիկ և ստատիկ պաշարները, որը միշտ չէ:

**РЕЧНАЯ СЕТЬ** — ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑ, որն է տարածքի աանմաններում գտնվող բոլոր գետերի համակցություն:

**РЕЧНОЙ СТОК** — ԳԵՏԱՅԻՆ ՀՈՍԲ, 1. Բնության մեջ ջրի շրջանառության գործընթացում գետահուններով տեղի ունեցող ջրի շարժում: 2. Ջրաբանակ, որը որոշակի ժամանակահատվածում անցնում է տվյալ գետահունով:

**РИСБЕРМА** — ՌԻՍԵՐՄԱ, ախապաշտպան կառույցի քաղաղրամաս, որը մասնավորապես աղբախման պատերի կայունությունը մեծացնելու համար աստի-

ճանալանդի ձևով կառուցվում է նրանց առաջամասում: Ռ-ները պատրաստվում են քարաշաղախից, քարե թափվածքից, բետոնյա սալերից ևն:

РИТМИЧЕСКИЕ ИСТОЧНИКИ — ՌԻԹՄԻԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, նույնն է, ինչ պարբերական աղբյուրները, կամ հեղեղները (տե՛ս Источник):

РОДНИК — ԱՂԲՅՈՒՐ (ԱԿՈՒՆՔ), տե՛ս Источник:

РОЗА-ДИАГРАММА — ՎԱՐԴ-ԴԻԱԳՐԱՄ, ապարների շերտայնության կամ ճեղքավորության անկման ազիմուտի զանգվածային չափումների արդյունքների արտահայտման գրաֆիկ եղանակ: Այն կատարվում է հետևյալ կերպ. շրջանագիծը բաժանվում է 10°, 15° կամ 30° անկյան քայլով սեկտորների, որոնց բաժանարարների վրա որոշակի մասշտաբով անցկացվում է տվյալ ինտերվալի չափումների քանակը, այնուհետև բաժանարարների վրա ստացված կետերը բեկյալ գծով միացվում են և ստացվում է վարդ հիշեցնող պատկեր: Վ. դ-ի տեսքով կարելի է դատել ապարների շերտայնության կամ ճեղքավորության տեղադրման ձևի մասին, որոշել նրանց տարածման ազիմուտի գերիշխող ուղղությունը ևն:

РУДНИЧНЫЕ (ШАХТНЫЕ) ВОДЫ — ՀԱՆՔԱՐԱՆԱՑԻՆ (ՀԱՆՔԱՀՈՐԱՑԻՆ) ՋՐԵՐ, տե՛ս Вода рудничная:

РУДНЫЕ ВОДЫ — ՀԱՆՔԱՋՐԵՐ, տե՛ս Вода рудная:

РЫХЛОСВЯЗАННАЯ ВОДА — ԹՈՒՅԼ ԿԱՊԱԿՑՎԱԾ ՋՈՒՐ, տե՛ս Вода рыхлосвязанная:

РЯЖ — ՌՅԱԺ, գաբիոնի տարատեսակ (տե՛ս Габион), որն իրենից ներկայացնում է գերանից պատրաստված խոշոր արկղ՝ լցված քարաբեկորներով: Ռ. օգտագործվում է պլեքսիման ուժը թուլացնելու համար և տեղադրվում է ափապաշտպան կառույցների առաջնամասում:

## — С —

САБАНИНА МЕТОД — ՍԱԲԱՆԻՆԻ ՄԵԹՈՂ, կավավազային գրունտների հատիկաչափական տարրալուծության մեթոդ՝ հիմնված այն դրույթի վրա, որ ջրում մեխ. խառնուրդի վիճակում գտնվող տարբեր չափերի մասնիկները ունեն ազատ անկման տարբեր արագություններ, հետևապես անջատվում են (նստում են փորձանոթի հատակին) տարբեր ժամանակամիջոցներում: Այս սկզբունքի հիման վրա գրունտային սուսպենզիան կրկնակի պղտորելով և նրանից՝ համապատասխան հաշվարկումներով սահմանված ժամանակ անց դատարկելով կախված վիճակում գտնվող խիստ որոշակի բարձրության հեղուկի սյունը, առանձնացվում են սկզբում կավային և փոշային, ապա մանր ավազային մասնիկները: Գործողությունը կրկնվում է մինչև  $<0,01$  մմ,  $0,01$ — $0,05$  մմ,  $0,05$ — $0,25$  մմ մեծության հատիկաչափական խմբերի (ֆրակցիաների) լրիվ տարազատումը:

САЛЬЗА — ՍԱԼԶ, «Ցեխային հրաբուխ» տերմինի ավելորդ հոմանիշ (տե՛ս Գրязевой вулкан):

САМОСАДКА — ԱՂԱՆՍՏԵՑՈՒՄ, բնական հանքային լճերում և լազուններում ընթացող աղանատեցման գործընթաց:

САМОИЗЛИВАЮЩАЯСЯ СКВАЖИНА — ԻՆՔՆԱԶՐԹՍՓ ՀՈՐՍԱՆՑՔ, հորատանցք, որից ճնշումնային ջրերը երկրի մակերևույթ են դուրս գալիս ինքնահոսով՝ հանդարտորեն թափվելով ամրակապման խողովակի բերանից:

САНИТАРНАЯ ОХРАННАЯ ЗОНА ВОДОЗАБОРОВ — ԶՐՀԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ (ԶՈՆԱ), տե՛ս Зона санитарной охраны водозаборников:

САПРОПЕЛЬ — ՆԵՒՍՏԻՂՄ, օրգ. տիղմ, որն առաջանում է ցամաքի ջրակուտակների (լճերի, ջրամբարների) հատակին և հիմնականում կազմված է օրգ. նյութերից ու ջրային օրգանիզմների մնացորդներից: Ն. օգտագործվում է որպես պարարտանյութ:

СБРОСОВЫЕ ИСТОЧНИКИ — ՎԱՐՆԵՏՔԱՅԻՆ ԱՂՑՈՒՐՆԵՐ, առ. ջրերի ելքեր, որոնք կապված են խզվածքային ճեղքերի հետ: Ըստ էության, Վ. ա. հանդիսանում են պատվարային (դիմհարային) աղբյուրների տարատեսակ (տե՛ս Плотинные источники):

СВАБИРОВАНИЕ (ПОРШНЕВАНИЕ) СКВАЖИНЫ — ՀՈՐՍԱՆՑՔԻ ՄԻՈՑՑԱՀԱՐՈՒՄ, փականով և ռետինե խտացուցիչ տափօղակով կահավորված մխոցի (ավարի) միջոցով հորատանցքի ջուր ընդունիչ միջակայքը (ջրատար հորիզոնի պատերը) կավազրկելու և ջրի մուտքը դեպի հորատանցք ուժեղացնելու եղանակ: Մխոցը ճոպանով և ծանրոցով իջեցվում է հորատանցքի փողի մեջ (ջրատար հորիզոնից խոր), ապա վերընթաց-վարընթաց շարժումով հորատանցքի մեջ ստեղծվում է նոսրացում (ներծծում, ներքաշում), իսկ փականի միջոցով մխոցի մեջ լցվող հեղուկը խողովակներով բարձրանում է երկրի մակերևույթ:

СВАЙНЫЕ ФУНДАМЕНТЫ — ՑՅԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ, հիմքեր, որոնք տեղադրվում են ցցերով ամրացված անհավասարաչափ սեղմվող գրունտների վրա (տորֆեր, ճահճուտներ, հոսազրուտներ, սառչող-հալչող ապարներ ևն): Երկաթբետոնից ու բետոնից պատրաստված ցցերը խորատուգվում են թույլ գրունտների մեջ՝ մինչև կայուն շերտերին (արմատական ապարների) հասնելը:

СВЯЗАННЫЕ ВОДЫ — ԿԱՊՎԱԾ ԶՐԵՐ, տե՛ս Вода связанная:

СВЯЗНОСТЬ ГРУНТОВ (ГОРНЫХ ПОРОД) — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ (ԱՊԱՐՆԵՐԻ) ԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, չոր կամ խոնավ վիճակում գրունտների (ապարների) կոմպակտություն (խտակցվածություն) դրսևորելու և ձևը պահպանելու ունակություն, որը պայմանավորված է նրանց մասնիկների կամ ագրեգատների միջև

գոյություն ունեցող կապերով: Տարբերում են առաձգական, բյուրեղային, մոլեկուլային և պլաստիկ ջրակոլոիդային կապեր: Ըստ կապերի բնույթի պայմանականորեն առանձնացվում են. 1) կոշտ (բյուրեղային) կապերով գրունտներ-ապստոսմային և կիսաապստոսմային ապարներ, որոնք արտաքին բեռնվածքի տակ իրենց պահում են որպես կարծր առաձգական մարմիններ, 2) բարդ կապերով (առավելապես կոլոիդային բնույթի) գրունտներ-կավային և այլ ապարներ, որոնք որոշակի պայմաններում իրենց դրսևորում են որպես և՛ կարծր, և՛ պլաստիկ ու հոսում մարմիններ, 3) միջամանիկային կապերից զուրկ գրունտներ-ավազներ, փոխար քեկորային ապարներ:

СДВИЖЕНИЕ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԾԱՐԺՈՒՄ (ՀՐՈՒՄ-ՄՈՏԵՑՈՒՄ), լեռնային փորվածքների և մշակված դատարկությունների շուրջը լորը կատարվող տեղաշարժով ուղեկցվող ձևախախտումներ, որոնք հաճախ հասնում են մինչև երկրի մակերևույթ:

СЕГРЕГАЦИЯ — ՄԵԳՐԵԳԱՑԻԱ, ջրաերկրաբանությունում՝ խոնավ և ջրահագեցած ապարների ստաշեխա նրանց ծակոտիներում սառույցի մաքուր բյուրեղների առաջացում: Ս-ի արդյունքում դեպի սառցի աճող բյուրեղներն է ձգվում նույնիսկ կոլոիդներում պարունակվող ջուրը: Գոյացող սառույցի ասեղնաձև բյուրեղները փշրում են ապարը՝ վերածելով այն մանր քեկորների ու թերթերի: Ս. հանդիսանում է սառնամանիքային հողմահարման կարևոր գործոն:

СЕДИМЕНТАЦИЯ — ՆՍՎԱԾՔԱԿՈՒՏԱԿՈՒՄ (ՄԵԴԻՄԵՆՏԱՑԻԱ), բնական պայմաններում ծանրության ուժի ազդեցությամբ, ինչպես նաև քիմ. և օրգ. գործընթացների շնորհիվ հեղուկ կամ գազային միջավայրից կախված կամ տարրալուծված մասնիկների նստեցում: Նստվածքակուտակման արագությունը կախված է հիմնականում միջավայրի խտությունից, կախված մասնիկների չափերից և նրանց շարժունակությունից:

СЕЗОННОПРОМЕРЗАЮЩИЙ СЛОЙ — ՄԵՋՈՆԱՑԻՆ ՍԱՌՁՈՂ ԾԵՐՏ, հողի (գրունտի, ապարի) շերտ, որը տարվա ցուրտ ժամանակահատվածում սառչում է: Ս. ս. շ-ի հաստությունը կախված է հողի շերտության կորուստի չափից, որը տարբեր կլիմայական գոտիներում տարբեր է:

СЕЗОННЫЕ ИСТОЧНИКИ — ՄԵՋՈՆԱՑԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, աղբյուրներ, որոնք գործում են միայն տարվա խոնավ սեզոններին (կամ որոշ ուշացումով):

СЕЛЬ (СИЛЬ) — ՄԵԼԱՎ, կարճատև ավերիչ ջրհոսք, որը հագեցած է ցեխաքարային նյութով: Ս-ները առաջանում են բուսագուրկ, փոխար քեկորային ապարներով պատված լեռնալանջերին՝ հորդատատ անձրևների կամ արագ ձնհալքի հետևանքով: Նրանք անցնում են մեծ արագությամբ՝ մեկ կամ մի քանի հորձանուտների ձևով, որոնք իրենց ճանապարհին սրբում-տանում են ամեն ինչ (անգամ խոշոր բնակավայրեր): Ըստ տարվող նյութի գերիշխման, տարբերում են ցեխային, ցեխաքարային և ջրաքարային Ս-ներ, ընդ որում քարաքեկորների տրամագիծը երբեմն գերազանցում է 2—3 մ-ից: Հակասեղավային միջոցառումները հանգում են

հիմնականում անտառամեղրատիվ աշխատանքներին և հոսքի կարգավորմանը (ջրամբարների, կուտակիչ ու սելավատար կառույցների շինարարություն): Նախկին ԽՍՀՄ տարածքում Ա-ների ինտենսիվ զարգացման մարզեր էին համարվում Միջին Ասիան և Անդրկովկասը: Հոմանիշ՝ ցելսային կամ ցելսաքարային հոսք:

**СЕРНИСТЫЕ ФУМАРОЛЫ (СОЛЬФАТАРЫ) — ԾԾՄԲԱՅԻՆ ՖՈՒՄԱՐՈՒՆԵՐ՝** (ՍՈՒՖԱՍԱՐՆԵՐ), 100—300° Ց ջերմության ֆումարոլներ, որոնք անջատում են ծծմբաջրածին, ծծմբային ու ածխաթթու գազեր, ջրային գոլորշի ևն: Ծ. ֆ. լայնորեն տարածված են հրաբխային մարզերում և երբեմն օգտագործվում են ծծմբի առաջնան համար:

**СЕРОВОДОРОДНЫЕ ВОДЫ — ԾԾՄԲԱԶՐՈՒԾՆԱՅԻՆ ԶՐԵՐ, տե՛ս** Сульфидные воды:

**СЕТКА ДВИЖЕНИЯ — ԾԱՐԺՄԱՆ ՑԱՆՑ**, հոսանքի գծերի և նրանց ուղղահայաց հավասար ճնշումների գծերի (էկվիպոտենցիալների) համակցություն: Ծ. ց. կազմվում է հիդրոմեխ. հաշվարկների ժամանակ:

**СЕТЬ НАБЛЮДАТЕЛЬНЫХ СКВАЖИН (КОЛОДЦЕВ, ШУРФОВ) — ԴԻՏՈՂԱԿԱՆ ՀՈՐԱՍԱՆՑՔԵՐԻ (ԶՐՀՈՐԵՐԻ, ԾՈՒՐՖԵՐԻ) ՑԱՆՑ**, ուսումնասիրվող տեղանքում որոշակի կարգով տեղադրված փորվածքների (հորատանցքեր, ջրհորեր, շուրֆեր ևն) համակցություն, որի միջոցով դիտվում են ստ. ջրերի մակարդակի տատանումները կամ նրանց ռեժիմի այլ փոփոխությունները (ծավախ, քիմ. բաղադրության ևն)՝ կախված կլիմայական, երկրբ. (սելյանտեկտ.) և այլ գործոններից կամ ստ. ջրերի շահագործումից, փորձային արտամուկներից ևն: Նախկին ԽՍՀՄ-ում Դ. հ. ց-եր կազմակերպվում էին գիտագործնական կարևոր նշանակություն ունեցող շրջաններում ու տեղամասերում, իսկ ստ. ջրերի ռեժիմային դիտումները տարվում էին պետական և գերատեսչական ջրաերկրբ. կայանների կողմից:

**СЖИМАЕМОСТЬ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՍԵՂՄԵԼԻՈՒԹՅՈՒՆ**, արտաքին լարումների (բեռնվածքի) ազդեցության տակ գրունտի ծավալը փոքրացնելու (նստման) ունակություն: Գրունտի սեղմելիության մեծությունն ու արագությունը կախված են նրա միներալային կազմից, կառուցվածքից, ծակոտկենությունից, խոնավության աստիճանից, ինչպես նաև հաղորդվող բեռնվածքի քնույթից ու մեծությունից: Գ. ս., որն ուսումնասիրվում է կոմպրեսիոն փորձարկումների միջոցով, պայմանավորում է գրունտների հաշվարկային դիմադրությունը կամ կրողունակությունը (տե՛ս Расчетное сопротивление):

**СИЛА НАБУХАНИЯ — ՈՒՌՉՄԱՆ ՈՒՓ**, ջրով հագեցնալիս կավային ապարներում առաջացող ճնշում, որը հանգեցնում է ուռչման (տե՛ս Набухание):

**СИЛИКАТИЗАЦИЯ ГОРНЫХ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐ ԿԱՅՑՔԱՐԱՑՈՒՄ**, փուլըր ապարների ամրացման քիմ. եղանակ, որի դեպքում նրանց մեջ ներարկվում են տարբեր քիմ. ռեագենտներ (օր., նատրիումի կալցիքարային կամ կալցիումի

ըրրիդային լուծույթ): Քիմ. ռեակցիաները հանգեցնում են ապարի մասնիկների կապակցմանը և այն վերածում են ամբողջական զանգվածային գրունտի, որի ամբողջումը էապես բարձրանում է, իսկ ջրաթափանցելիությունը՝ նվազում:

**СИНГЕНЕТИЧЕСКИЕ ВОДЫ** — ՀԱՄԱԾԻՆ (ՍԻՆԳԵՆԵՏԻԿ) ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք առաջանում են նստվածքակուտակման հետ մեկտեղ, սեդիմենտացիայի ճանապարհով պարփակվում են նստվածքային ապարներում: Ավելորդ տերմին:

**СИНТЕТИЧЕСКИЕ ВОДЫ** — ՍԻՆԹԵՏԻԿ (ՍԻՆԹԵԶՎԱԾ) ՋՐԵՐ, ջրեր, որոնք առաջանում են ջրածնի ու թթվածնի քիմ. սինթեզման ճանապարհով: Ըստ Վ. Ի. Վերնադսկու, ջրի սինթեզման գործընթացներ դիտվում են բոլոր երկրապատյաններում՝ երկրակեղևում, երկրի մակերևույթի վրա և մթնոլորտում:

**СИПАЙ** — ՍԻՊԱՅ, ափապաշտպան պարզ կառույց, որն օգտագործվում է ստավելապես գետային բերվածքների նստեցման համար: Ս. իրենից ներկայացնում է գերանից պատրաստված ցանցապատ եռոտանի՝ լցված քարաքեկորներով: Հնացած, գործածությունից դուրս եկած ափապաշտպան կառույց:

**СИСТЕМА ВОДОНАПОРНАЯ ПРИРОДНАЯ** — ԲՆԱԿԱՆ ՋՐԱՃՆՇՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ըստ Ա. Մ. Օվչիննիկովի (1961) և Ա. Ա. Կարցևի (1963), ճրմաշումային ջրատար շերտերի և ջրով հագեցած նեղքավոր զոնաների համալիրներ, որոնք ունեն ստ. ջրերի տեղադրման, ճնշման ստեղծման, շարժման ու բեռնաթափման ընդհանուր պայմաններ:

**СИТА МЕХАНИЧЕСКОГО АНАЛИЗА** — ՄԵՆՍԱՆԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒԹՅԱՆ (ԱՆԱԼԻԶԻ) ՄԱՂԵՐ, որոշակի տրամագծի անցքերով մաղեր, որոնք փոխարինում են հատիկաչափական) տարրալուծության ժամանակ օգտագործվում են որոշակի հատիկախմբերի (ֆրակցիաների) անջատման համար: Նախկին ԽՍՀՄ-ում գործածական էին 0,1, 0,25, 0,5, 1,0, 2,0, 3,0, 5,0, 7,0 և 10,0 մմ ստանդարտ անցքաչափերի մաղերը:

**СИТОВОЙ АНАЛИЗ** — ՄԱՂԱՅԻՆ ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԱՆԱԼԻԶ), տե՛ս Գранулометрический (механический) анализ:

**СИФОННЫЕ ИСТОЧНИКИ** — ԾԾՄՓՈՂԱԿԱՅԻՆ (ՍԻՖՈՆԱՅԻՆ) ԱՂԲՇՈՒՐՆԵՐ, մեջընդմեջ գործող աղբյուրներ, որոնք բնորոշ են կարստային մարզերին: Ուղղաձիգ կտրվածքում ծնկաձև տեսքի մղանցքով (կանալով) երկրի մակերեւույթի հետ հաղորդակցվող կարստային խոռոչից ջուրը սկսում է հոսել այն ժամանակ, երբ այն լրիվ լցվում է ջրով: Համեմատաբար կարճ ժամանակում խոռոչը դատարկվելուց հետո աղբյուրը չորանում է և վերեսին սկսում է գործել խոռոչն ու մղանցքը ջրով լրիվ լցվելուց հետո:

**СКАЛЬНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** — ԱՂԱՌԱԺԱՅԻՆ ԱՂԱՐՆԵՐ, բյուրեղային կառուցվածքային կապերով ապարների խումբ, որի մեջ մտնում են հրաբխային ու փոխակերպային ապարները, նստվածքային ցեմենտացված ապարները

(կրաքարեր, դոլոմիտներ, կարբոնատային կամ սիլիցիումային շաղախով ավազաքարեր ևն), ինչպես նաև ամորֆ առաձգական կապերով որոշ ապարներ (օպալային շաղախով ավազաքարեր, կալծքարային տուֆեր ևն): Ա. ա. օժտված են մեծ ամրությամբ և գործնականում սելմման չեն ենթարկվում, սակայն հեշտ լուծելի միներալային բաղադրությամբ կամ շաղախով որոշ ապարներ (կրաքարեր, կարբոնատային ցեմենտով ավազաքարեր ևն) ջրով հազեմալիս՝ հեշտությամբ քայքայվում են (օժտված են կակղելիությամբ): Ա. ա-ի խումբը, բացառությամբ կակղելիությամբ օժտված տեսակների, ինժեներաներկրք. տեսակետից համարվում են միանգամայն հուսալի գրունտներ:

СКВАЖИНА НАГНЕТАТЕЛЬНАЯ (ИНЖЕКЦИОННАЯ) — ՆԵՐՄՂՄԱՆ (ԻՆՇԵԿՑԻՈՆ) ՀՈՐԱՍԱՆՑՔ, հորատանցք, որի միջոցով ջուր (գազ) է ներմղվում կամ նախթնդանային եզրային զոնաների (գազային գլխարկների) մեջ՝ շերտային ճնշումն ապահովելու համար, կամ նախթնդանային որոշակի համակարգերի մեջ՝ նավթի երկրորդական արդյունահանման համար: Այս նպատակների համար հնարավորության դեպքում օգտագործվում են նախկին հետախուզական շահագործողական հորատանցքերը:

СКВАЖНОСТЬ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, ապարում առաջնային և երկրորդական ծագման բոլոր տեսակի դատարկությունների (ծակոտիների, ճեղքերի, կարստային խոռոչների ևն) հանրագումարը: Ա. ծ-ի մեծությունը (տե՛ս Սորիտոստ) արտահայտվում է բոլոր դատարկությունների ծավալի ու ապարի ողջ ծավալի հարաբերությամբ, որը երբեմն կոչում են նաև Ա. ծ. գործակից, իսկ բոլոր դատարկությունների ծավալի և ապարի կմախքի ծավալի հարաբերությունը կոչվում է բերված ծակոտկենություն:

СКЕЛЕТ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԿՄԱՆՔ, գրունտը կազմող կարծր միներալային մասնիկներ:

СКЛАДКИ (СКЛАДЧАТЫЕ ДЕФОРМАЦИИ) — ԾԱԼՔԵՐ (ԾԱԼՔԱՅԻՆ ԶԵԿԱՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ), երկրակեղևի շերտերի առանց անընդհատության խախտման ծալքեր, որոնք առաջանում են տեկտ. (լեռնակազմական) գործընթացների հետևանքով: Ծ. լինում են ամենատարբեր ձևերի. դրական (ձկնաձև ղեպի վերև՝ անտիկլինալներ), բացասական (ձկնաձև ղեպի ներքև՝ սինկլինալներ), ուղիղ, թեք, պատկած, շրջված ևն: Փոքր չափերի ծալքեր առաջանում են սողանքային գործընթացների և մարդու տեխնածին գործունեության հետևանքով:

СКОЛЬЗЯЩИЕ ОПОЛЗНИ — ՍԼԱՑՈՂ ՍՈՂԱՆՔՆԵՐ, պլաստիկ կամ ցեխային հոսք հիշեցնող սողանքներ, որոնք շարժման բնույթով և մեխանիզմով ընդգրկում են դեյապսիվ և կոնսեկվենտ սողանքները (տե՛ս Օպոլзень):

СКОРОСТИ КРИТИЧЕСКИЕ — ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մակերևութային ջրերի շարժման բարախող (պուլսացիոն) բաղկացուցիչները, որոնց դեպքում ապարի մասնիկները կորցնում են կայունությունը, սխուռ են շարժվել կամ դադարում են շարժվել ու նստում են հատակին: Կ. ա. հանդիսանում են հատիկ-

ների վրա մրրկային (տուրբուլենտ) շիթերի ուժային ազդեցության ջրաբանական բնութագիրը: Չանագանում են մասնիկները շարժող ( $V_{շ}$ ) և պոկող ( $V_{պ}$ ) Կ. ա., որոնց միջև գոյություն ունի հետևյալ թվային հարաբերությունը  $V_{պ} = 1,4 V_{շ}$ : Էրիի օրենքի համաձայն,  $V_{պ}$  Կ. ա. ուղիղ համեմատական է մասնիկի տրամագծի  $1/2$  աստիճանին: Փորձնական տվյալներով,  $0,1$  մմ տրամագծով մասնիկը հատակից պոկելու համար անհրաժեշտ է  $V_{պ} = 22$  սմ/վ, իսկ  $1,5$  մմ տրամագծով մասնիկին՝  $30$  սմ/վ:

**СКОРОСТЬ (КРУПНОСТЬ) ГИДРАВЛИЧЕСКАЯ** — ՀԻԴՐԱՎԼԻԿ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ (ՄԵԾՈՒԹՅՈՒՆ), անշարժ հեղուկ միջավայրում մասնիկների հալտարաչափ անկման (նստեցման) արագություն (սմ/վրկ-երով), որը պայմանավորված է շրջաճախման դիմադրությամբ: Տարբեր տրամագծի գնդաձև մասնիկների նստեցման արագության տեսությունը մշակվել է Ստոքսի կողմից: Նստեցման արագությունը կախված է մասնիկների չափերից ու ձևերից, տեսակարար կշռից, մակերևույթի թնութից, ինչպես նաև միջավայրի (ջրի, լուծույթի) մածուցիկությունից, ըստ որում միջավայրի ջերմաստիճանի բարձրացման և մածուցիկության նվազման դեպքում Հ. ա. մեծանում է: Միևնույն չափերի դեպքում կլորավուն մասնիկները գրեթե  $2$  անգամ ավելի արագ են նստում, քան թերթալոր մասնիկները: Հ. ա. նստվածքաձուլուցման գործընթացի կարևոր բնագիր է, քանի որ մասնիկների նստեցման համապատասխան արագության և ջրերի շարժման արագության միջև գոյություն ունի ուղղակի կապ: Հիդրավլիկ արագության և ջրային միջավայրի շարժման արագության փոխհարաբերությունից է կախված հատիկաչափական խմբերի տեղաշարժը, նրանց տեղաբաշխումն ու նստեցման (ակոմուլյացիայի) հերթակարգը: Պղտոր միջավայրում մասնիկները հակում ունեն տեսակավորվելու ըստ Հ. ա., որը բնության մեջ պայմանավորում է նստվածքների հատիկաչափական և միներալոգիական բաղադրությունը:

**СКОРОСТЬ ДВИЖЕНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД ДЕЙСТВИТЕЛЬНАЯ** — ՍՏՈՐԵԿՐՎՅԱ ՋՐԵՐԻ ԾԱՐԺՄԱՆ ԻՐԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, ստ. ջրերի շարժման արագությունը՝ սպարների ճեղքերում ու ծակոտիներում: Ս. ջ. շ. ի. ա. որոշվում է ստ. հոսքի ծախսի ( $Q$ ) և ծծանցման իրական կտրվածքի (կտրվածքում ծակոտիների զբաղեցրած) մակերեսի ( $F_{սփ}$ ) հարաբերությամբ  $U = \frac{Q}{F_{սփ}}$ : Ս. ջ. շ. ի. ա. միշտ մեծ է ծծանցման արագությունից: Այն ավելի ճշգրիտ որոշվում է դաշտային փորձային աշխատանքների միջոցով:

**СКОРОСТЬ ПОЛЗУЧЕСТИ** — ՍՈՂԱՆՔԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, ստանց նյութի (գրունտի) ներքին կապերի քայքայման ջրապլաստիկ ձևախախտումների (այսինքն՝ տղքի ձևախախտումների) ընթացքի արագություն:

**СКОРОСТЬ ТЕЧЕНИЯ** — ՀՈՍՔԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, նյութի (գրունտի) հոսունությամբ պայմանավորված ձևախախտումների արագություն:

**СКОРОСТЬ ФИЛЬТРАЦИИ** — ԾՄԱՆՑՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, միավոր ծամանակահատվածում ծծանցվող ստ. ջրերի  $Q$  ծախսի հարաբերությունը ջրատար ջերտի  $F$  միավոր մակերեսին՝  $V_{սփ} = \frac{Q}{F}$ :

**ՄԻՍՏՆԱՆԱԿԱՆ ՍԼԱԲՈՍՎՅԱԶԱՆՆԱԿԱՆ ԲՈՎԱԾ** — ՓՈՒՆՅՈՒՆ ԿԱՊԱՎՅՎԱԾ ԶՐԵՐ, տե՛ս ԲոՎԱԾ ԲՈՎԱԾՆԱԿԱՆ ՍԼԱԲՈՍՎՅԱԶԱՆՆԱԿԱՆ ԲՈՎԱԾ

**ՏՄԵՐԱԿԱՆ ՍՏԱՆԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԵՐՏ**, երկրակեղևի վերին շերտ, որը կազմող հողերն ու ապարները տարվա ընթացքում կրում են արեգակնային ջերմության ազդեցությունը և ունեն փոփոխական ջերմաստիճան: Տ. ջ. ո. շ. տարածվում է մինչև տալիական կայուն ջերմային զոնան (տե՛ս Զոնա փոփոխական ջերմության) և կախված տեղանքի կլիմայական, երկր. ու ջրաերկր. պայմաններից, ունենում է մինչև 20—30 մ հաստություն: Ըստ Օ. Կ. Լանգեի, երկրակեղևի «հեղիջերմային զոնա»:

**ՏՄԵՐԱԿԱՆ ԲՈՎԱԾՆԱԿԱՆ ԶՐԵՐ**, ստ. ջրեր, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր տիպի ջրերի խառնուրդ: Օր., ջերմաջրերը և հանքային բուժիչ ջրերը մեծամասամբ խառնածին են: Խ. ջ. լայնորեն տարածված են լեռնային մարզերում՝ ակտիվ ջրափոխանակման զոնայում:

**ՏՄԵՐԱԿԱՆ ՔԵՅԻՄ** — ԽՍՈՆՎԱԾ ՌԵԾԻՄ, նախային ջրաերկրաբանությունում՝ նավթաբեր շերտախմբի շահագործման ռեժիմ, որի դեպքում նավթի շարժումը դեպի շահագործողական հորատանցք շերտախմբի տարբեր մասերում կատարվում է տարբեր ուժերի ազդեցությամբ: Օր., եզրային ճնշումնային ջրերի և գազային գլխարկի առկայության պայմաններում շերտախմբի եզրային մասերում նավթի շարժումը պայմանավորվում է ջրի ճնշման ազդեցությամբ, իսկ շերտախմբի միջնամասերում՝ գազի ճնշման ազդեցությամբ:

**ՏՄԵՐԱԿԱՆ ՐԱԴԻՈԱԿՏԻՎՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՅՈՎԵՍԻՅԱԿԱՆ ԽՍՈՆՎԱԾ ՌԵՅԻՄ**, որպես կանյութ և տրոհման արգասիք հանդիսացող ռադիոակտիվ տարրերի միջև ստեղծված համամասնության խախտում, որը կատարվում է տրոհման գործընթացում սպիտակի դրսևորած տարբեր տեղաշարժման ունակությունների շնորհիվ: Օր., ապարներում դիտվող  $Ra: U = 0,34 \cdot 10^{-6}$  հարաբերությունը կարող է խախտվել հետևյալ պատճառներով. 1) որոշ միներալներից ջրերով ու լուծույթներով լվացվում-տարվում են ռադիումը, մեզոթորիումը, թորիումը և ակտինիումը, 2) միներալներից հեռանում են (դեպի օդ ու ջուր) ռադիոակտիվ գազանման էմանացիաները (ռադոնը, թորոնը, ակտինոնը): Այդ դեպքերում ռադիումի առկայությամբ հաշվարկված ուրանի պարունակությունը պակաս կլինի քիմ. մեթոդներով որոշված ուրանի պարունակությունից: Առանձին դեպքերում ապարներում դիտվում է հավելցուկային ռադիումի պարունակություն, որը ստացվում է ի հաշիվ դրսից նրա ներմուծման և ապարի կողմից կլանման:

**ՏՄԵՐԱԿԱՆ ՈՒՍՏԱՆԱԿԱՆ ՍԼԱԲՈՍՎՅԱԶԱՆՆԱԿԱՆ ԲՈՎԱԾ** — ՓՈՒՆՅՈՒՆ ԿԱՊԱՎՅՎԱԾ ԶՐԵՐ, տե՛ս ՈՒՍՏԱՆԱԿԱՆ ՍԼԱԲՈՍՎՅԱԶԱՆՆԱԿԱՆ ԲՈՎԱԾ

**ՏՄԵՐԱԿԱՆ ՔԵՅԻՄ** — ԽՍՈՆՎԱԾ ՔԵՅԻՄ, ջրհոսքի պատերի թրջման պարագիծ՝ հոսանքի գծերին ուղղահայաց ուղղությամբ:

СМЫВ ПЛОСКОСТНОЙ — ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ (ՀԱՐԹԱԿԱՅԻՆ) ՏԵՂԱՏԱՐՈՒՄ (ԼԵՐԿԱՅՈՒՄ), անձրևի և ձնհալքի ջրերի լվացման-տեղատարման գործունեություն, որը ջրածանալից մասերում և փոքրաթեք լանջերի վրա կատարվում է գրեթե հավասարաչափ՝ բարակ շերտային հոսքի ձևով տարածվելով նրանց ողջ մակերեսով:

СНЕГОВАЯ ГРАНИЦА (ЛИНИЯ) — ՉՅԱՆ ՍՍՀՄԱՆ (ԳԻՄ), բարձրության սահման, որից վերև ջերմության պակասի պատճառով ամռանը ձյունը լրիվ չի հալչում նույնիսկ արեգակից չպաշտպանված տեղանքում: Կախված տեղանքի կլիմայական պայմաններից, առաջին հերթին օդի ջերմատիճանից և մթնոլորտային տեղումների քանակից, Չ. ս-ի բարձրությունը տատանվում է լայն սահմաններում, քննաչափն երկրներում այն իջնում է ծովի մակարդակին, իսկ հասարակածային գոտում (Աֆրիկա, Լատինական Ամերիկա)՝ բարձրանում մինչև 6400 մ:

СОВЕРШЕННАЯ СКВАЖИНА (КОЛОДЕЦ) — ԿՍՏԱՐՅԱԼ ՀՈՐԱՏԱՆՑՔ (ՋՐՀՈՐ), հորատանցք (ջրհոր կամ այլ փորվածք), որը կտրել է ջրատար ապարների շերտը, հասել ջրամերժ հիմքին և կանախորված է այնպես, որ ապահովում է ջրի ներհոսքը ողջ ջրատար հորիզոնից:

СОЛЕВЫЕ КОЭФФИЦИЕНТЫ ПРИ КОНЦЕНТРАЦИИ МОРСКОЙ ВОДЫ — ԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ՝ ԾՈՎԻ ՋՐԻ ԽՏԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ծովի ջրի տարրեր խտացման դեպքում աղերի նստեցման ցուցանիշներ (ըստ Մ. Գ. Վալյաշկոյի, 1955):

Նստեցման սկիզբը	$\frac{Mg}{Cl} \cdot 10^2$	$\frac{Cl}{Br}$	$\frac{Cl}{\Sigma \text{աղեր}} \cdot 10^2$	$\frac{Na}{Cl}$	$\frac{K}{Cl} \cdot 10^2$
Ծովի ջուր	6,71	300	65,15	0,55	18,7
NaCl (Բռմելի 25—26°)	7,16	32,6	50,6	—	18,8
KCl (Բռմելի 35°)	34,53	57,0	53,6	—	34,45
Խտանակազմ աղեր	37,66	41,5	66,4	—	4,52

СОЛЕВЫЕ ПОТОКИ РАССЕЙНИЯ МЕСТОРОЖДЕНИЯ — ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԶՐՄԱՆ ԱՂԱՅԻՆ ՀՈՍՔԵՐ, ցրման հոսքեր, որոնք առաջանում են ջրային լուծույթների միջոցով հանքամարմինների քայքայման արգասիքների տեղազաղթի ժամանակ:

СОЛЕМЕР — ԱՂԱՉԱՓ, ջրում լուծված աղերի խտությունը (ջրի հանքայնացումը) որոշող սարք, որը հիմնված է լուծույթի խտությամբ (աղերի բաղադրությամբ) պայմանավորված էլեկտրամադրողականության չափման վրա:

СОЛЕННОСТЬ ВОД — ՋՐԵՐԻ ԱՂԻՈՒԹՅՈՒՆ, բնական ջրերի աղիություն, որը պայմանավորված է նրանց մեջ լուծված հիմքերի (Na, K, Ca, Mg ևն) և

ումեղ թթվային մնացորդների ( $\text{SO}_4$ ,  $\text{Cl}$  ևն) առկայությամբ: Տարբերում են ջրերի առաջին, երկրորդ և երրորդ աղիություն (տե՛ս Градусы Боме):

**СОЛЕННОСТЬ МОРСКОЙ ВОДЫ** — ԾՈՎԱՅԻՆ ՋՐԻ ԱՂԻՈՒԹՅՈՒՆ, կարծր միներալային նյութերի ընդհանուր քանակությունը (գ) 1 կգ ծովային ջրում (պալմանով, որ բոլոր հալոգենները փոխարինված են  $\text{Cl}$ -ի համարժեք քանակով, ածխաթթվային աղերը վերածված են օքսիդների, իսկ օրգ. նյութերը այրված են): Ծ. ջ. ա. չափման միավոր է հանդիսանում պրոմիլեն ( $\text{‰}$ ), որը համապատասխանում է 1 կգ ջրում 1 գ հանքային նյութերի պարունակությանը: Ծովային ջրի հիմնական իոնային կազմը հետևյալն է ( $\text{‰}$ -ներով).  $\text{Cl}$ —18,979,  $\text{SO}_4^{2-}$ —2,6486,  $\text{HCO}_3^-$ —0,1397,  $\text{Br}^-$ —0,0646,  $\text{F}^-$ —0,0013,  $\text{H}_2\text{BO}_2$ —0,0260,  $\text{Na}^+$ —10,5561,  $\text{Mg}^{2+}$ —1,2720,  $\text{Ca}^{2+}$ —0,4001,  $\text{K}^+$ —0,3800,  $\text{Sr}^{2+}$ —0,0133:

**СОЛИФЛИОКЦИЯ (ПОЧВОТЕЧЕНИЕ)** — ՍՈԼԻՖԼՅՈՒԿՑԻԱ, փոքրաթեք լանջերի վրա հալչող գերխոնավ բուսաճողերի կամ գրունտների փոքր շերտի համեմատաբար դանդաղ տեղաշարժ, որը կատարվում է գրավիտացիոն ուժերին գունարվող սառցածին (կրիոգեն) երևույթների (այդ շերտի հերթափոխվող հալչման սառչման, կծկման-ուռչման ևնի) շնորհիվ: Ի տարբերություն սողանքային գրավիտացիոն գործընթացների, Ս-ի դեպքում սահող բուսաճողերի կամ գրունտների համար հիմք են ծառայում չհալչած, սառցով կապակցված գրունտները: Հոմանիշ՝ բուսաճողերի հոսք:

**СОЛОДИ** — ՄՈՆՍՐԱՀՈՂԵՐ (ՍՈԼՈՂԵՆԵՐ), հողեր, որոնք առաջացել են աղտոտներից՝ նրանց խոնավության որոշ ավելացման, հումուսի լուծելիության բարձրացման և ալյումոսիլիկատների քայքայման հետևանքով: Այդ ամենի արդյունքում առաջանում են մոխրակերպ հողեր:

**СОЛОНЦЫ** — ԱՂՈՒՏՆԵՐ (ԱՂՈՒՏԱՀՈՂԵՐ), տափաստանների ուլիեֆի ցածրադիր մասերում տարածված հողեր, որոնք պարունակում են կլանված նատրիում: Ա-ի վերին շերտերը որոշակի կառուցվածք չունեն (փոշեկերպ են), խոնավ վիճակում կաշուն են ու թույլ ջրաթափանց, իսկ չոր վիճակում քարանում և բեկբաստվում են: Սկսած 5—6 սմ խորությունից նրանցում պարունակվում են նատրիում և հեշտ լուծելի աղեր, որոնք մեծ դեր են խաղում գրունտային ջրերի բիմ. բաղադրության ձևավորման գործում:

**СОЛОНЧАК** — ԱՂՈՒՏ, 1. Երկրաձևաքանությունում-հարթ, սովորաբար բուսագուրկ, աղերով հարուստ (1 % և ավելի) կավային հողերով պատված տարածքներ, որոնք բնորոշ են կիսաանապատային ու տափաստանային մարզերին (Մերձկասպյան իջվածք, Միջին Ասիա, Հյուսիսային Ղրիմ): Առավել շատ դիտվում են հարթավայրային իջվածքներում, տափաստանային սուֆոզիոն ծագման ափսեանև ցածրություններում և աչքի են ընկնում մակերևույթի կավերի կծկման (չորացման) բազմանկյուն ճեղքավորվածությամբ:

2. Հողեր, որոնք հարուստ են հեշտ լուծվող աղերով (նատրիումի, կալցիումի, մագնեզիումի քլորիդներ, միրաբիլիտ ին): Տարածված են տափաստանային և անապատատափաստանային գոտիներում:

СОЛЬФАТАРЫ — ՍՈՆՏԱՍԱՐՆԵՐ, տե՛ս Сернистые фумаролы:

СОЛЯНЫЕ ОКНА — ԱՂԱՅԻՆ ԳԱՏՈՒՀԱՆՆԵՐ, աղային հատվածքում երկրորդական ծագման աղազերծված ապարներից քաղկացած գլանաձև մարմիններ, որոնք հասնում են ենթաաղային շերտախմբերին: Ա. պ-ի առաջացումը պայմանավորված է ենթաաղային ճնշումնային քաղցրահամ (թույլ հանքայնացման) ջրերի վերընթաց շարժումով, որի դեպքում աղատար ապարները լվացվում-տարվում են:

СОРУЖЕНИЯ ВОДОЗАБОРНЫЕ — ԶՐՀԱՎԱՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ինժեներական կառույցներ, որոնց միջոցով հավաքվում, կենտրոնացվում և վերցվում է ջուրը՝ ջրամատակարարման, ոռոգման և այլ նպատակներով: Ստ. ջրերի Զ. կ. լինում են հորիզոնական (գետնուղի, քյարիզ), ուղղահայաց (ջրհոր, հորատանցք ևն), ինչպես նաև միացակ և փնջային (խմբային):

СОПРОТИВЛЕНИЕ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ցանկացած արտաքին ճնշմանը գրունտի ցուցաբերած դիմադրություն:

СОБЦИЯ — ՍՈՐՔՅԻԱ (ՍՈՐՔՈՒՄ, ԿԼԱՆՈՒՄ), շրջապատող միջավայրից գոլորշիների, գազերի և լուծված նյութերի կլանումը կարծր մարմինների և հեղուկների կողմից: Տարբերում են Ս-ի հետևյալ տարատեսակները. 1) ադսորբցիա, 2) աբսորբցիա և 3) քեմոսորբցիա:

СОСКАЛЬЗЫВАНИЕ (ОСКОЛЬЗЫ) — ՍՈՂԱՆՔԱՍԱՅԹԱՔՈՒՄ, լանջի առանձին տեղամասերում խոշոր չափերի ապարազանգվածի՝ որպես ամբողջական մարմնի, սայթաքում հիշեցնող արագ տեղաշարժ, որը կատարվում է նախկինում գոյություն ունեցող սահքի հարթությամբ (շերտայնության հարթությամբ կամ ճեղքով): Նման բնույթի տեղաշարժ առավել ցայտուն դիտվում է շերտավոր ապարներում, որոնց անկումը համընկնում է լանջի թեքության հետ, այսինքն՝ տեղի է ունենում արագընթաց կոնսեկվենտ սողանք:

СОСРЕДОТОЧЕННАЯ НАГРУЗКА — ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ԲԵՌՆՎԱԾՔ, բեռնվածք, որը գործում է գրունտի (մարմնի) շատ փոքր մակերևույթի՝ անսահման փոքր կետի վրա:

СОСТАВ ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ — ՀԱՏԻԿԱԶԱՓԱԿԱՆ ԿԱԶՄ, տե՛ս Гранулометрический (механический) состав горных пород:

СОФФИОНЫ — ՍՈՖԻՈՆՆԵՐ (ՍՈՒՎՈՑՈՎ ԱՂՔՏՈՒՐՆԵՐ), բորաթթվի և գազերի ( $\text{CO}_2$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{NH}_3$ ) մեծ պարունակությամբ խտացված գոլորշիների շիթեր, որոնք սուլոցով (թշոցով) ժայթքում են հրաբխային ճեղքերից: Ա. միջանկյալ տեղ են գրավում հեղձերների և սոֆատարների միջև: Բորաթթվի մեծ պարունակությունն ու գոլորշու բարձր ջերմաստիճանը (մինչև  $250\text{--}300^\circ\text{C}$ ) թույլ են տալիս Ա. օգտագործել բորաթթվի արդյունահանման և էլեկտրաէներգիայի ստացման համար: Առավել հաշտնի են Խտալիայի Տոսկանա մարզի, ինչպես նաև Իվանդիայի, Նոր Զելանդիայի, Կալիֆորնիայի, Կամչատկայի Ա. (անվանումը իտալերեն է):

**СПЛЫВ** — ՅԵՆԱՀՈՒՔ, լանջերի վրա ցելի շարժում հիշեցնող մակերևութային աղանք, որը դիտվում է գերազանցապես մթնոլորտային ջրերով հագեցած փոքր հզորության ավազակավային դելյուվիալ նստվածքների մոտ:

**СПОНТАННЫЙ ГАЗ** — ԻՆՔՆԱԿԱՄ (ԱՆԿԱԾԿԱՆԿ) ԳԱԶ, ազատ վիճակում գտնվող և ջրից պղպշակների ձևով անջատվող գազ, որով ջուրը լրիվ հագեցած է տվյալ ջերմաստիճանի և ճնշման պայմաններում: Ջերմաստիճանի բարձրացման կամ ճնշման անկման դեպքում ջրում լուծված գազի մի մասը անցնում է ինքնակամ վիճակի: Առավել պարզորոշ գազի անկաշխանդ վիճակի անցումը կարելի է դիտել հանքային ջրի (շամպայն գինու) շիշը բացելիս կամ տաքացնելիս:

**СРЕЗНОЙ ПРИБОР** — ԿՏՐՈՂ ՍԱՐԻ, գրունտների կտրման դիմադրության ուսումնասիրման լաբորատոր փորձասարք:

**СТАБИЛИЗАЦИЯ ГРУНТА** — ԳՐՈՒՆՏԻ ԿՍՅՈՒՆԱՅՈՒՄ, արհեստական եղանակով գրունտի ամրության մեծացում: Հնացած տերմին:

**СТАБИЛОМЕТР** — ՍՍԱԲԻՂՈՄԵՏՐ (ԿՍՅՈՒՆԱՋԱՓԻՉ), չափիչ հարմարանքներով փորձասարք, որի օգնությամբ ուսումնասիրվում են եռատանցք լարված վիճակում գտնվող գրունտների ֆիզմեխ. հատկությունները: Հոմանիշ՝ եռատանցք սեղմման փորձասարք:

**СТАДИЙНОСТЬ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ** — ՋՐԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՍԱԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ջրաերկրբ. ուսումնասիրությունների որոշակի հաջորդականությամբ ու կանոնակարգով կատարում: Սովորաբար ջրաերկրբ. ուսումնասիրությունները կատարվում են հետևյալ փուլերով (ստադիաներով). ռեգիոնալ հանույթային բարոնեզագրական (1:500000) — 1:50000 մասշտաբի) աշխատանքների, որոնողական, նախնական հետախուզության, մանրակրկիտ հետախուզության և շահագործողական հետախուզության (տե՛ս Поясковая стадия подземных вод. Поиски и разведка. Детальная разведка подземных вод):

**СТАНЦИЯ** — ԿԱՅԱՆ, որոշակի ուսումնասիրությունների համար հատուկ կառավարված տեղամասեր, որտեղ մանրամասն գործիքային դիտումներ են տարվում բնական կամ արհեստական այս կամ այն գործընթացի ու երևույթի վրա: Հստ ճշանակման և նպատակի Կ-ները լինում են օդերևութաբանական, ջրաչափական, ջրաերկրբ., կարստային, աղանքային ևն: Երբեմն դրանք կարող են համատեղվել (օր., ջրաերկրբ.-ը օդերևութաբանականի կամ ջրաչափականի հետ ևն):

**СТАТИЧЕСКАЯ НАГРУЗКА** — ՍՍԱՏԻԿ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ծանրաբեռնվածություն, որի մեծությունն ու ուղղությունը ժամանակի ընթացքում անփոփոխ են կամ այնքան դանդաղ են փոփոխվում, որ արագացման մեծությունը կարելի է անտեսել:

**СТАТИЧЕСКИЕ ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՍՐԵՐԿՐՈՅԱ ԶՐԵՐԻ ՍՍԱՏԻԿ ՊԱՇԱՐՆԵՐ, տե՛ս Запасы подземных вод статические:

СТАТИЧЕСКИЙ УРОВЕНЬ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՄԱՍՏԻԿ ՄԱԿԱՐԴԱԿ, ստ. ջրերի բնական, արտանդում-ներմղումներով չխախտված մակարդակ:

СТАТИЧЕСКОЕ ЗОНДИРОВАНИЕ — ՍՍՏԻԿ ԶՈՆԴԱՎՈՐՈՒՄ, հորատանցքի անցման ժամանակ հորատախորշում ապարների առանձակակալության ուսումնասիրություն, որը կատարվում է ճնշման տակ կոնաձև սարքի ներդրմանը ապարի ցույց տված դիմադրության որոշման միջոցով:

СТАЦИОНАР ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՍՍՏԻՑԻՆԱՐ, բնորոշ ջրաերկրք. պայմաններով տեղամաս, որտեղ ջրաերկրք. ներկայացուցչական կետերի մշտական ցանցը կահավորված է անհրաժեշտ չափիչ սարքերով և տեխ. միջոցներով: Զ. ս-ում կատարվող մանրակրկիտ ուսումնասիրություններն ու փորձարարական աշխատանքների միջոցով կատարելագործվում են ջրաերկրք. ուսումնասիրությունների մեթոդները: Զ. ս. հաճախ օգտագործվում է նաև ուսումնական նպատակների համար:

СТВОР ГИДРОМЕТРИЧЕСКИЙ — ԶՐԱԶԱՓԱԿԱՆ ՆՇԱԳԻՄ, գետի (ջրանցքի) հոսանքի ուղղահայաց կտրվածք, որտեղ չափվում է ջրի ծավալը և հոսանքով տեղափոխվող կախված նյութերի քանակը: Զ. ն. ընտրելիս հաշվի են առնում գետի հոսանքի, ափերի և հատակի ռելիեֆի բնույթը:

СТЕПЕНЬ АКТИВНОСТИ КАРСТА — ԿԱՐՍՏԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ, կարստի ակտիվության ցուցանիշ (տե՛ս Активность карста), որն իրենից ներկայացնում է մեկ հազարամյակի ընթացքում առաջացող կարստային դատարկությունների ծավալի և ողջ կարստավորվող զանգվածի ծավալի հարաբերությունը (արտահայտված %-ներով): Ն. Վ. Ռոդիոնովի հաշվարկների համաձայն, Կ. ա. ա. Գրինի համար կազմում է 0,08 %, Սոչիի շրջանի համար՝ 1,0 %, Միջին Ասիայի չորային շրջանների համար՝ 0,001 % են:

СТЕПЕНЬ КОНСОЛИДАЦИИ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԿՈՆՍՈԼԻԴԱՅՄԱՆ ԱՍՏԻՃԱՆ, որոշակի բեռնվածքի տակ ինչ-որ T ժամանակահատվածում գրունտի նշումի  $\Delta h_T$  նստման հարաբերությունը աչդ նմուշի լրիվ կոնսոլիդացումից հետո  $\Delta h_K$  նստմանը՝ 
$$\Theta = \frac{\Delta h_T}{\Delta h_K} \cdot 100 \%:$$

СТОК ПОДЗЕМНЫЙ — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔ, ապարներում ջրի տեղաշարժ, որը ճնշումնազուրկ հորիզոններում կատարվում է հիդրավիկ թեքության (գրադիենտի), իսկ ճնշումնային հորիզոններում՝ հիդրավիկ ճնշման շերտիով: Ս. հ. բնության ընդհանուր ջրաշրջանառության ստ. բաղկացուցիչն է և քանակապես բնութագրվում է նույն մեծություններով, ինչ մակերևութային հոսքը՝ ծախսով, մոդուլով, ծավալով են:

СТОК РАСТВОРЕННЫХ ВЕЩЕСТВ (ХИМИЧЕСКИЙ СТОК) — ԼՈՒՇՎԱՍ ՆՅՈՒԹԵՐԻ ՀՈՍՔ (ՔԻՄԻԱԿԱՆ ՀՈՍՔ), տվյալ տարածքից տարվա ընթացքում գետային հոսքով տարվող լուծված ածրգ. և օրգ. նյութերի քանակը:

**СТОКСА ЗАКОН** — ՄՏՈՒՄԻ ՕՐԵՆՔ, անգլիացի գիտնական Ջ. Ստոքսի կողմից 1851 թ. հայտնաբերված օրենք, որի համաձայն մածուցիկ հեղուկում դանդաղորեն շարժվող կարծր գնդիկը հանդիպում է  $F$  ուժի դիմադրության՝  $F = 6\pi r\mu v$  որտեղ՝  $r$ -ը գնդիկի շառավիղն է,  $\mu$ -ն հեղուկի մածուցիկության գործակիցն է,  $v$ -ն գնդիկի շարժման արագությունն է: Ս. օ-ի վրա է հիմնված չկապակցված գրունտների հատիկաչափական տարրալուծության (անալիզի) պղտորման մեթոդը:

**СТОЧНЫЕ ВОДЫ** — ՀՈՍՔԱՅԻՆ ՋՐԵՐ (ՀՈՍՔԱՋՐԵՐ), մարդու կենցաղային ու արտադրական գործունեության հետևանքով աղտոտված ջրեր, որոնք եկթակա են հեռացման: Տարբերում են. 1) կոմունալ-կենցաղային (խոհանոցների, բաղնիքների, զուգարանների, լվացքատների ևն), 2) արդյունաբերական-արտադրական (ֆաբրիկա-գործարանների, ավտոհավաքակայանների, պանդանոցների, նավթուղա-հեռուների ևն) Հ. ջ. և, 3) անձրևների ու ձնհալքի հորձանուտ ջրեր: Կախված աղտոտվածության աստիճանից և ներկայացվող սանիտարական պահանջներից, Հ. ջ. թափվում են մակերևութային հոսքի մեջ՝ ստանց մաքրման կամ մաքրումից (մեխ., քիմ., կենս.) հետո:

**СТРАТИФИКАЦИЯ** — ԾԵՐՏԱԳԱՍՈՒՄ (ԾԵՐՏԱԳԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ), երկր. գոյացումների առանձին մասերի դիրքը՝ տեղանքի ուղղամիզ կտրվածքում: Ծ. կարող է որոշվել երկր. գոյացումների հասակային, ձևաբանական, քարաբանական, պետրոգրաֆիական, ջրաերկր. և այլ առանձնահատկությունների հիման վրա:

**СТРЕЛЯНИЕ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ՊՈՎԱՆԵՏՈՒՄ, փորվածքի անցման ժամանակ ապարազանգվածում առաջացած գերլարվածության հետևանքով բացված մակերևութից ապարների առանձին բեկորների պոկման ու նետման գործընթաց, որը նման է կրակոցի:

**СТРУЕНАПРАВЛЯЮЩИЕ СООРУЖЕНИЯ** — ԾԻԹԱՌՈՂՎԻԶ (ՀՈՍՔԱՌՈՂՎԻԶ) ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ջրի շարժման ուղղությունը փոխող կառույցներ (հողաթմբեր, լետոնապատեր, շեղագերաններ, սիպայներ ևն), որոնք ունեն ափապաշտպան (գետափերի) և ջրահեռացման նշանակություն:

**СТРУКТУРА БАССЕЙНА ПОДЗЕМНЫХ ВОД** — ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՎԱՋԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ, ստ. ջրերի տվազանի կառուցվածքային տարրերի (ջրատար ու ջրաներծ հորիզոնների, շերտերի, համակարգերի) և նրա առանձին մասերի (անձան, շարժման ու բեռնաթափման մարզերի) ներքին կապերը, ինչպես նաև տվյալ տվազանի և հարակից տվազանների արտաքին կապերը:

**СТРУКТУРА ГОРНОЙ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ, ապարի (գրունտի) կառուցվածք, որը որոշվում է հետևյալ հատկանիշներով. 1) ապար կազմող մասնիկների չափերով, ձևով, երբեմն նաև մասնիկների կամ նրանց ագրեգատների մակերևութի բնույթով, 2) մասնիկների դասավորությամբ և չափային հարաբերակցությամբ, 3) մասնիկների միջև ներքին կապերի առկայությամբ և բնույթով (կառուցվածքային կապերով):

**СТРУКТУРНОЕ БУРЕНИЕ** — ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, հորատում

(սովորաբար խորը), որը կատարվում է հանույթային և երկրաֆիզ. աշխատանքներով կանխապես որոշված շերտադրական կտրվածքի, տեկտ. կառուցվածքի, ապարների ջրատարության և այլ երկր. ու ջրաերկր. տարրերի ստուգման ու ճշտման համար:

СТРУКТУРНЫЙ ЯРУС (ЭТАЖ) — ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԿ, տարրեր կազմի ու հասակի ապարների համախիթ, որը բնութագրվում է հաջորդաբար տեղի ունեցած ծալքավորման ու խզումնային տեկտոնիկայի որոշակի համակցությամբ և ստանձնանում է ստորին Կ. հ-ից կառուցվածքային աններդաշնակությամբ: Ստորին Կ. հ-երը աչքի են ընկնում սվեյի բարդ խզումնային տեկտոնակալով (քանի որ նրանք ենթարկվել են նաև նոր հարկերի տեկտ. կազմավորման ազդեցությանը) և արտացոլում են տեղանքի տեկտ. զարգացման հիմնական էտապները: Կ. հ-ի որոշումը ունի կարևոր նշանակություն ջրաերկր. և հատկապես հնաջրաերկր. պայմանների պարզաբանման համար:

СТУПЕНЬ ГЕОТЕРМИЧЕСКАЯ — ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ, տե՛ս Գеотермическая ступень:

СУБАКВАЛЬНЫЙ (ПОДВОДНЫЙ) ИСТОЧНИК — ՍՏՈՐԶՐՅԱ (ՍՈՒԲԱԿՎԱԿԱԼ) ԱՂԲՅՈՒՐ, տե՛ս Подводный источник:

СУБАРТЕЗИАНСКИЕ ВОДЫ — ՄԵՐՁԱՐՏԵԶՅԱՆ (ՍՈՒԲԱՐՏԵԶՅԱՆ) ԶՐԵՐ, ըստ Ֆ. Գ. Սալարեհակո, ստ. ջրեր, որոնք համապարած և կալուն ճնշումով օժտված չեն. ինչպես պլանում, այնպես էլ ժամանակի ընթացքում այն զգալի փոփոխություններ է կրում: Առանձին տեղերում, մասնավորապես ճնշումնային շերտի անտիկլինալային ծալքերում, որտեղ երբեմն վերևի ջրամերձ շերտը բացակայում է, Մ. ջ. ձեռք են բերում գրունտային բնույթ:

СУБАРЕАЛЬНЫЙ ИСТОЧНИК — ՄԵՐՁՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ, աղբյուր, որը շատրվանում է երկրի մակերևույթի վրա: Ավելորդ տերմին:

СУБКАПИЛЛЯРЫ (СУБКАПИЛЛЯРНЫЕ ПОРЫ) — ՄԵՐՁՄԱԶԱՆՈՒԹՆԵՐ (ՄԵՐՁՄԱԶԱԿԱՆ ԾԱԿՈՏԻՆԵՐ), ծակոտիներ, որոնց տրամագիծը փոքր է 0,0002 մմ-ից (0,2 մկ-ից), և ճեղքեր, որոնց լայնությունը փոքր է 0,0001 մմ-ից (0,1 մկ-ից): Զուրը Մ-ում կարող է տեղաշարժվել միայն մեծ ջրաստատիկ ճնշման տակ, երբ այն գերազանցում է ճեղքերի ու ծակոտիների պատերի մոլեկուլային ձողակալան ուժերին:

СУБЛИМАЦИЯ — ՍՈՒԲԼԻՄԱՅԻՆԱ, կարծր նյութի անցումը գազային վիճակի՝ առանց հեղուկ վիճակի անցման: Ս. ուղեկցվում է ջերմության կլանմամբ, որը կոչվում է Ս-ի ջերմություն: Օդերևութաբանները Ս-ի տակ հասկանում են նաև հակառակ գործընթացը՝ օդում ջրային գոլորշու անցումը կարծր նյութի (ձյան, կարկուտի), շրջանցելով հեղուկ վիճակի փուլը:

СУБМАРИННЫЙ ИСТОЧНИК — ՍՏՈՐԶՐՅԱ (ԵՆԹԱԾՈՎԱՅԻՆ) ԱՂԲՅՈՒՐ, ծովի հատակում գտնվող աղբյուր: Տե՛ս Подводный (субаквальный) источник:

СУЛЬФАТНЫЕ ВОДЫ — ՍՈՒՖԱՏԱՅԻՆ ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնց քիմ. բաղադրակազմում անիոններից գերիշխում է սուլֆատ-իոնը ( $\text{SO}_4^{2-}$ ):

СУЛЬФИДНЫЕ (СЕРОВОДОРОДНЫЕ) ВОДЫ — ՍՈՒՖԻԴԱՅԻՆ (ԾԾՆԱԿԱՋՐԱԾՆԱՅԻՆ) ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնք պարունակում են զգալի քանակությամբ ազատ ծծմբաջրածին ( $\text{H}_2\text{S}$ ), ջրասուլֆիդ-իոն ( $\text{HS}^-$ ) և սուլֆիդ-իոն ( $\text{S}^{2-}$ ): Այս կամ այն բաղադրամասի քանակությունը որոշվում է սուլֆիդային հավասարակշռությամբ և կախված է ջրի pH-ից: Այսպես օր., եթե  $\text{pH}=7$ , ապա ծծմբաջրածնի 60 % գտնվում է ազատ վիճակում, իսկ 40 %  $\text{HS}^-$  իոնի ձևով,  $\text{pH}=8$  դեպքում ծծմբաջրածնի 85—90 % գտնվում է  $\text{HS}^-$  իոնի ձևով, իսկ նկատելի քանակությամբ  $\text{S}^{2-}$  իոնը կպարունակվի  $\text{pH}\geq 10$  դեպքում: Ըստ  $\text{H}_2\text{S}$ -ի կուտակման (քանակի) տարբերում են. 1) բարձր կուտակման (150—300 մգ/լ), 2) միջին կուտակման (50—150 մգ/լ) և, 3) թույլ կուտակման (10—50 մգ/լ): Ս. ջ. Քիմ. բաղադրության տեսակետից Ս. ջ. լինում են քլորիդային, քլորիդ-սուլֆիդային և սուլֆիդային, իսկ կատիոններից հաճախ գերիշխում է  $\text{Na}^+$ -ը: Մեծ համքավ են վայելում ծծմբաջրածնով հարուստ Մացեստայի, Աերգեկյան, Ուրալի և այլ հանքային աղբյուրները:

СУММАРНОЕ (ВАЛОВОЕ) ИСПАРЕНИЕ — ԳՈՒՄԱՐԱՅԻՆ (ՀԱՄԱԽԱՌՆ) ԳՈՒՈՐԾԻԱՑՈՒՄ, հողաբուսական շերտի միջոցով կատարվող ողջ գոլորշիացումը, որը ներառում է բույսերի միջոցով (տրանսպիրացիա) և հողից կատարվող գոլորշիացումը:

СУСПЕНЗИЯ — ՍՈՒՍՊԵՆԶԻԱ (ԿԱՆՈՒՅԹ), ջրում ապարի նուրբ մասնիկների մեխ. կախույթ: Եթե կախույթի մասնիկների չափերը չեն գերազանցում  $10^{-3}$  մմ-ից, ապա այն կոչվում է սուսպենզիա, իսկ գերազանցելու դեպքում կոչվում է կախույթ (տե՛ս Взвесь): Ս-ի տիպիկ օր. են բնական ջրերում կավային կախույթները, որոնք խիստ կայուն են և ծայրահեղ դանդաղ են նստեցման ենթարկվում:

СУФФОЗИОННЫЕ ОПОЛЗНИ — ՍՈՒՖՈԶԻՈՆ ՍՈՂԱՆՔՆԵՐ, աղանքներ, որոնք առաջանում են լանջի վրա աղբյուրների ձևով դուրս եկող ստ. ջրերով կատարվող սուֆոզիոն գործընթացների հետևանքով: Այդ գործընթացները փխրեցնում են, օր., ավազային գրունտները և վերջինները վերադիր ապարների ճնշման տակ սկսում են տեղաշարժվել:


СУФФОЗИЯ — ՍՈՒՖՈԶԻԱ, ապարների հեշտ լուծելի աղերի քիմ. տարրալուծման ու նուրբ մասնիկների մեխ. լվացման (տարավլացման) և տեղատարման գործընթացների համակցություն, որի արդյունքում նրանք կորցնում են իրենց ամրությունը և վերադիր ապարների ճնշման տակ ենթարկվում են նստման: Ս. երկրի մակերևույթի վրա արտահայտվում է տարբեր չափերի փակ իջվածքների (փոստրակներ, ափսեներ, ձագարներ) ձևով: Ըստ Ն. Մ. Բոչկովի (1936), տարբերում են Ս-ի հետևյալ տեսակները. 1) քիմ.-հեշտ լուծելի աղերի տարրալուծում, 2) կոֆոդային-գրունտի մասնիկների լվացում և կոագուլացված կավային մասնիկների ու միկրոագրեգատների քայքայում, 3) մեխ.-գրունտի նուրբ մասնիկների լվացում

(ողողամաշում) և տեղատարում: Վերջին 2—3 տասնամյակներում «Ս.» տերմինի տակ հիմնականում հասկացվում է մեխ. լվացումն ու տեղատարումը: Ս. առավել բնորոշ է լյուսերին և լյուսանման ապարների: Ս-ի մակերևութային ձևերը շատ լավ են արտահայտվում աերոլուսանկարների վրա, որը հեշտացնում է նրանց ուսումնասիրությունը:

СУХАЯ МЕРЗЛОТА — ՉՈՐ ՍԱՌԱԾՈՒԹՅՈՒՆ, ապարներ կամ տեղամասեր որոնք բազմամյա կամ սեզոնային սառածության գոտում ջրագուրկ են:

СУХИЕ (ВЫСОКОТЕМПЕРАТУРНЫЕ) ФУМАРОЛЫ — ՉՈՐ (ԲԱՐՁՐՋԵՐՄ-ԱՍԻՏԱՆԱՅԻՆ) ՖՈՒՄԱՐՈՒՆԵՐ, 650—1000° Ց ջերմության ֆումարոլներ, որոնք ջրային գոլորշիներից գրեթե զուրկ են, գերազանցապես բաղկացած են HCl-ից, ինչպես նաև SO<sub>2</sub> և CO<sub>2</sub> գազերից: 2. ֆ-ից անջատվում են հիմնականում NaCl և KCl, ինչպես նաև պղնձի, կապարի ու երկաթի ըլորիդներ և սուլֆատներ: 2. ֆ. կապված են հրաբխի կողային կոների հետ և հանդես են գալիս սպիտակ ծխի բուլաների տեսքով:

СУХОЙ ОСТАТОК — ՉՈՐ ՄՆԱՅՈՐՊ, ջրում լուծված հանքային նյութերի չոր (կարծր) մնացորդ, որն առաջանում է բնական ջրի գոլորշիացումից: Տարբերում են փորձով որոշված և հաշվարկված չոր մնացորդներ: Փորձով որոշված 2. մ. ջրում լուծված հանքային նյութերի քանակական պարունակության պարզ հանրագումարը չի, քանի որ ջրի գոլորշիացման ժամանակ ջրակարրոնատ իոնների շուրջ կեսը վեր է ածվում ածխաթթվի և ցնդում հետևյալ ռեակցիայով՝



Այնուհետև իոններից գոյացող որոշ աղերի մեջ մնում է բյուրեղային ջուր, բացի դրանից չոր մնացորդում լինում են նաև օրգ. նյութեր ևն: Հաշվարկային եղանակով 2. մ. հաշվելիս բաղադրատարրերի գումարին ավելացվում է ջրակարրոնատ-իոնի պարունակության միացն կեսը, քանի որ մնացած մասը ջուրը գոլորշիացնելիս կորչում է:

СЦЕПЛЕНИЕ — ԾԱՂԿԱՊՈՒՄ, ապարի մասնիկների փոխադարձ ձգողականություն, որն առաջանում է կառուցվածքային կապերի (մոլեկուլային, բյուրեղային, ցեմենտացման ևն) շնորհիվ: Ծ. հանգեցնում է կապակցված գրունտների առաջացմանը:

## — T —

ТАКЫР — ԹԱԿԻՐ, բարձրագույն բուսականությունից զուրկ կավային ցածրադիր հարթավայրեր, որոնք բնորոշ են չորային (անապատային, կիսաանապատային, տափաստանային) գոտիներին: Գարնանը Թ-ները զգալիորեն խոնավանում են, երբեմն ծածկվում են ջրի շերտով՝ առաջացնելով ծանծաղ քաղցրահամ լճեր: Ամռան սկզբին Թ-ները չորանում են, կավերը կոշտանում են՝ մակերևութային առաջացնելով կծկման բազմամկյուն առանձնություններ (սալիկներ): Թ-ները, որոնց չափերը տատանվում են մի քանի տասնչակ մ<sup>2</sup>-ից մինչև մի քանի տասնչակ կմ<sup>2</sup>, հիմնականում գտնվում են գետաբերուկային հին հարթավայրերում կամ լեռնալանջերի ստորոտում, որ

ժամանակավոր հոսքերով բերվում-նստեցվում են նույր կավային և փոշային մաս-  
նիկները: Թ-ների հետագա ձևավորումը կատարվում է ցածրագույն բույսերի (կա-  
պրտականաչ ջրիմուռների) ազդեցության տակ, որոնք խոնավ ժամանակահատվա-  
ծում զգալիորեն կենդանանում են և վերջնականապես կազմավորում Թ-ների վերին  
շերտը:

ТАКЫРНЫЕ ВОДЫ — ԹԱԻՌՐԱՅԻՆ ՋՐԵՐ, ըստ Օ. Կ. Լանգեի, թափրնե-  
րի հողային ծածկի ջրեր:

ТАЛИК — ՀԱՆՈՒՅԹ, բազմապես սառցույթի գոտում այնպիսի տեղամասեր,  
որտեղ ապարների տարեկան միջին ջերմաստիճանը դրական է և նրանց մեջ եղած  
ջուրը գտնվում է հեղուկ-կաթիլային վիճակում: Տեղանքի ուղղամիզ կտրվածքում  
Հ. կարող է լինել միջանցիկ՝ սառցույթային զանգվածի ողջ հզորությամբ, կամ սահ-  
մանափակ՝ ընդգրկելով սառած զոնայի միայն մի մասը (վերևից, կողերից կամ  
ներքևից): Հանդիպում են նաև հալույթային խողովակապատկեր զանգվածներ՝  
կապված տաք ջրերի ելքերի տեղամասերի հետ, ինչպես նաև անջուր, չոր Հ-ներ:

ТАЛЫБЕГ — ԹԱՎԵԳ, հովտի հատակի ցածրադիր միջերի (գետահունների,  
հոսքազուրկ գոգահովիտների, ձորակների ևն) միացման գիծ, որն իրենից ներկա-  
յացնում է ջրբաժանային գծի հակոտնյան:

ТАМПОНАЖ СКВАЖИНЫ — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՏԱՄՊՈՆՈՒՄ (ՏԵՄԵՆՏԱ-  
ՅՈՒՄ), հորատանցքով հատած (բացված) ջրատար կամ նախթագազատար շեր-  
տերի և հորիզոնների մեկուսացում՝ ցեմենտի կամ այլ ջրանթափանց կապակցող  
կույտերի միջոցով: Խողովակապուկներով ամրակապած շահագործողական հորատ-  
անցքերում ցեմենտացվում է արտախողովակային զլանման դատարկությունը: Բացի  
ցեմենտից, այս նպատակների համար օգտագործվում են նաև արագ պնդացող  
հեղուկ նկազանգվածներ (պլաստմասսաներ) և այլ կույտեր: Առանց ամրակապման  
հորատման դեպքում ցեմենտացվում է հորատանցքի ամբողջ փողը: Նման դեպ-  
քերում ցեմենտի դեր կարող է կատարել կավը (կավային հոծ լուծույթը): Հոմանիշ՝  
հորատանցքի ցեմենտացում (տե՛ս Цементация скважины):

ТАРТАНИЕ — ՀԵՂՈՒԿԱՔԱՇՈՒՄ, վերահան դույլով հորատանցքից հեղուկի  
դուրս բերման եղանակ: Ջրաերկրաբանությունում Հ. կատարվում է հորատանցքում  
ստ. ջրերի ներհոսքը մոտավորապես որոշելու համար:

ТЕКСТУРА ГОРНОЙ ПОРОДЫ — ԱՊԱՐԻ ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՏՈՒՐԱ),  
ապարի կառուցվածքի արտաքին հատկանիշներ, որոնք պայմանավորված են  
ապարի բաղադրատարրերի հարաբերական տեղաբաշխմամբ, տեղադրմամբ և կողմ-  
նորշմամբ: Մագմածին ապարների կազմվածքը կախված է բյուրեղացման ստանձ-  
նահատկություններից, տարածության մեջ հրահեղուկ զանգվածի տեղաբաշխման,  
նրա ստեղծման պայմաններից, անջատման ձևերից ևն: Մագմածին ապարներին  
բնորոշ են բյուրեղային, զանգվածային, սյունաձև և այլ կազմվածքները, նստված-  
քային ապարներին՝ հիմնականում շերտային կազմվածքը, իսկ փոխակերպային  
ապարներին՝ թերթավոր կազմվածքը:

ТЕКУЧЕСТЬ ГРУНТОВ (ГЛИН) — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ (ԿԱՎԵՐԻ) ՀՈՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ, հորիզոնական մակերևույթի վրա ջրով հագեցած գրունտների (կավերի) հոսելու հատկություն: Գ. հ. բնութագրվում է պլաստիկության վերին (հոսունության) սահմանով (տե՛ս Пластичность глинистых пород):

ТЕМПЕРАТУРНОЕ РАВНОВЕСИЕ СКВАЖИН — ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, հորատանցքում ապարների ջերմաստիճանային ռեժիմի վերականգնում, որը խախտվում է հորատման գործընթացի կամ ջրակերկր. փորձային աշխատանքների հետևանքով: Հ. ջ. հ., որը երկրաջերմային չափումների մեթոդիկայի կարևոր նախապայմանն է, հաստատվում է հորատանցքերում բոլոր կարգի աշխատանքները 1—2 շաբաթով դադարեցնելուց և հերմետիկ վիճակում պահելուց հետո:

ТЕНЗОМЕТР — ԼԱՐՎԱԾԱԶԱՓ (ՏԵՆՉՈՄԵՏՐ), գրունտի (մարմնի) լարումների որոշման փորձասարք:

ТЕНЗОР ОТНОСИТЕЛЬНЫХ ДЕФОРМАЦИИ — ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՎԱԽԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԼԱՐՎԱԾԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ (ՏԵՆՉՈՐ), գրունտի (մարմնի) ձևախախտումների բաղադրիչների գրանցման սիմվոլիկ ձև (դիագրամ), որը որոշում է նրա հարաբերական ընդհանուր ձևախախտումը:

ТЕОРИЯ АКТИВНОСТИ — ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տեսություն, որը հիմնված է հետևյալ դրույթների վրա. ա) նուրագված (ջրիկացված) լուծույթներում ուժեղ էլեկտրոլիտները ամբողջապես իոնիզացված են, բ) ուժեղ էլեկտրոլիտների լուծույթների նվազ համարժեք էլեկտրահաղորդականությունը՝ անսահման նուրագված լուծույթների համարժեք էլեկտրահաղորդականության համեմատությամբ, և նրանց վարքի այլ առանձնահատկությունները բացատրվում են իոնների միջև էլեկտրաստատիկ փոխազդեցությամբ, գ) ինչքան լուծույթում բարձր է իոնների կուտակումը, այնքան մեծ է այդ իոններով ստեղծված էլեկտրական դաշտերի ազդեցությունը և փոքր է իոնների շարժունակությունը:

Իոնի այն արդյունավետ կուտակումը, որը էլեկտրական դաշտերի բացակայության դեպքում համազոր է նրա տվյալ կուտակմանը, կոչվում է իոնի ակտիվություն ( $\alpha$ ), իսկ անսահման նուրագված լուծույթում իոնի իդեալական վարքագծից նրա խտորման աստիճանը կոչվում է իոնի ակտիվության գործակից ( $f$ ): Տարբեր կոնստանտների հաշվման ժամանակ, երբ պահանջվում է հաշվի առնել իոնների կուտակումը, վերջինը վերցվում է իոնի մոլյար կուտակման և նրա ակտիվության գործակցի արտադրյալի տեսքով: Ցանկացած իոնի  $f$ -ի մեծությունը կախված է ինչպես տվյալ իոնի արժեքականությունից, այնպես էլ լուծույթում գտնվող մյուս իոնների արժեքականությունից ու կուտակումներից: Ինչքան բարձր է իոնի արժեքականությունը, այնքան մեծ է այլ իոնների հետ նրա էլեկտրաստատիկ փոխազդեցությունը, այսինքն ինչպես տվյալ իոնի, այնպես էլ նրա վրա ազդող լուծույթում գտնվող մյուս իոնների ակտիվությունները բարձր են:

Լուծույթում գտնվող բոլոր իոնների գումարային ազդեցության արդյունավետությունը որևէ իոնի ակտիվության վրա կարող է բնութագրվել լուծույթի իոնային

ուծով ( $\mu$ ): Վերջինի հաշվման համար ջրի տարրալուծության ժամանակ օգտվում են հետևյալ բանաձևից.

$$\mu = \frac{\Sigma r_1 + 2\Sigma r_2 + 3\Sigma r_3}{2} \cdot 10^{-3}, \text{ որտեղ } \Sigma r_1, \Sigma r_2 \text{ և } \Sigma r_3 \text{ 1 l ջրում միարժեք, երկ-}$$

արժեք և եռարժեք իոնների մգ-համարժեքների գումարներն են:

Լուծույթի  $\mu$  իոնային ուժի և իոնի  $f$  ակտիվության գործակցի միջև գոյություն ունի որոշակի կախվածություն: Բնական ջրերում առավել շատ տարածված իոնների համար կախվածությունն արտահայտվում է հետևյալ թվերով (տե՛ս աղյուսակ 12):

Աղյուսակ 12

Իոններ	f ակտիվության գործակցի արժեքները $\mu$ իոնային ուժի դեպքում		
	0,001	0,01	0,1
Na <sup>+</sup> , HCO <sub>3</sub> <sup>-</sup>	0,964	0,902	0,775
K <sup>+</sup> , Cl <sup>-</sup> , Br <sup>-</sup> , J <sup>-</sup> , NO <sub>3</sub> <sup>-</sup> , NO <sub>2</sub> <sup>-</sup>	0,964	0,899	0,755
Ca <sup>2+</sup> , Fe <sup>2+</sup> , Mn <sup>2+</sup>	0,870	0,675	0,405
Mg <sup>2+</sup>	0,872	0,69	0,45
SO <sub>4</sub> <sup>2-</sup>	0,867	0,660	0,355
CO <sub>3</sub> <sup>2-</sup>	0,868	0,665	0,370
Fe <sup>3+</sup> , Al <sup>3+</sup>	0,738	0,445	0,180

Բնական ջրերի հանքայնացումը (արտահայտված հաշվարկային չոր մնացորդի տեսքով), որը համապատասխանում է  $\mu$  իոնային ուժի 0,001 ÷ 0,1 ինտերվալին, մոտավորապես կազմում է 40—60 մգ/լ-ից ( $\mu = 0,001$  արժեքի դեպքում) մինչև 4000—5000 մգ/լ ( $\mu = 0,1$  արժեքի դեպքում):

ТЕОРИЯ ФОРМИРОВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД ИНФИЛЬТРАЦИОННАЯ — USՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԾԾՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ստ. ջրերի ձևավորումը բացատրում է ապարների ճեղքերի ու ծակոտիների միջոցով մակերևութային ջրերի ու մթնոլորտային տեղումների ներծծմամբ: Ներկայումս հաստատված է, որ ստ. ջրերը հիմնականում առաջանում են ներծծման ճանապարհով:

ТЕОРИЯ ФОРМИРОВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД КОНДЕНСАЦИОННАЯ — USՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՏԱՑՄԱՆ (ԿՈՆԴԵՆՍԱՑՄԱՆ) ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ստ. ջրերի ձևավորումը բացատրում է ապարների ճեղքերի ու ծակոտիների միջոցով մթնոլորտային խոնավության (ջրային գոլորշիների) ներթափանցման ու խոսքման (կոնդենսացման) ճանապարհով:

ТЕОРИЯ ФОРМИРОВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД СЕДИМЕНТАЦИОННАЯ — USՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱՏՎԱԾԲԱԿՈՒՏԱԿՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ստ. ջրերի ձևավորումը բացատրում է նստվածքակուտակման գործընթացում տիղմի հետ ջրի պարփակման և հետագայում (դիագենեզի ու կառագենեզի ստադիաներում) նրա կրած վերափոխության ճանապարհով:

ТЕОРИЯ ФОРМИРОВАНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД ЮВЕНИЛЬНАЯ (МАГМАТОГЕННАЯ) — ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿՈՒՍԱԿԱՆ (ՅՈՒՎԵՆԻԼ, ՄԱԳՄԱԾԻՆ) ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ստ. ջրերի ձևավորումը բացատրում է մագմայից անջատված ջրածնի ու թթվածնի միացման կամ ջրային գոլորշիների խտացման ճանապարհով:

ТЕПЛОВОЙ БАЛАНС В ГЕОФИЗИКЕ — ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՂ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅՈՒՄ, ջերմության մուտքն ու ելքը երկիր-մթնոլորտ համակարգում: Տարբերում են երկրի մակերևույթի և մթնոլորտի ջերմային հաշվեկշիռներ: Առաջինը բաղկացած է արեգակնային ճառագայթման տեսքով ջերմության մուտքից և գոլորշիացման, ճառագայթման ու ջերմատվության (երկրի մակերևույթից դեպի մթնոլորտ) գումարային ելքից: Մթնոլորտի ջերմային հաշվեկշիռը բաղկացած է երկրի մակերևույթից անդրադարձող երկարալիք ճառագայթման, կլանման, ջրային գոլորշիների խտացման ու երկրի մակերևույթից դեպի մթնոլորտ ջերմատվության գումարային մուտքից և դեպի երկրի մակերևույթ ու համաշխարհային տարածք ուղղված ճառագայթումների գումարային ելքից:

ТЕПЛОЕМКОСТЬ — ՋԵՐՄՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ՋԵՐՄԱՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ), ջերմության սպ. քանակությունը, որն անհրաժեշտ է հաղորդել մարմնին՝ նրա ջերմությունը  $1^{\circ}$ -ով բարձրացնելու համար: Մարմնի միավոր ծավալին (կամ կշռին) հաղորդվող ջերմության քանակությունը կոչվում է տեսակարար ջերմունակություն:

ТЕПЛООБМЕН В АТМОСФЕРЕ — ՋԵՐՄԱՓՈՒՍԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԹՆՈՒՂՈՐՏՈՒՄ, մթնոլորտում ուղղաձիգ և հորիզոնական ուղղություններով ջերմության տեղաշարժ, որը տեղի է ունենում կոնվեկցիայի, մրկալից և փոսանքների և օդի հորիզոնական շարժման (ադվեկցիայի) հետևանքով:

ТЕПЛОПРОВОДНОСТЬ — ՋԵՐՄԱՀԱՂՈՐՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մարմնում ջերմության տարածման գործընթաց, որը կատարվում է նրա տաք մասերից դեպի սառը մասերը, ի վերջո հաճախելով նրանց ջերմաստիճանների հավասարեցմանը: Ջ. կատարվում է ջերմային հոսքի միջոցով, որը տեղի է ունենում առանց նյութի շարժման, շնորհիվ միկրոմասնիկների փոխազդեցության: Տեղափոխվող ջերմային էներգիայի քանակը, որը դիտվում է որպես ջերմային հոսքի խտություն, ուղիղ համեմատական է ջերմաստիճանային գրադիենտին (Ֆուրյեի օրենք): Այդ համեմատականության գործակիցը կոչվում է նաև Ջ. գործակից:

ТЕРМАЛЬНЫЕ ВОДЫ — ՋԵՐՄԱՋՐԵՐ (ԹԵՐՄԱԼ ՋՐԵՐ), տաք ստ. ջրեր, որոնց ջերմաստիճանը ելքի տեղում  $+20^{\circ}\text{C}$ -ից բարձր է, կամ այլ սահմանումով, բարձր է տվյալ տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանից: Բացարձակ Ջ. ունեն  $37^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմություն: Ըստ Օ. Կ. Լանգեի,  $20\text{--}30^{\circ}\text{C}$  ջերմության ջրերը կոչվում են մերձջերմային (մերձթերմալ),  $36\text{--}42^{\circ}\text{C}$  ջերմության ջրերը՝ ջերմային (կամ հոմոթերմալ), իսկ  $42^{\circ}\text{C}$ -ից բարձր ջրերը՝ բարձրջերմային (հիպերթերմալ):

ТЕРМОКАРСТ (ТЕРМИЧЕСКИЙ КАРСТ) — ՋԵՐՄԱԿԱՐՍՏ (ԹԵՐՄՈՂԱՐՍՏ), հողաբուսական ծածկի և ապարների անհավասարաչափ նստեցման կամ փլուզ-

ման երևույթ՝ կապված նրանցում պարփակված ստույցի հալման հետ: Ի տարբերություն սովորական կարտի, որը կատարվում է հեշտ լուծելի ապարներում (քարաղ, գիպս, կրաքար են) քիմ. տարրալուծման, երբեմն նաև մեխ. սուֆոզիայի շնորհիվ, Ջ. ջերմային կտրուկ տատանումների (բացասական ջերմաստիճանից դրականի անցման) արդյունք է: Սովորաբար Ջ. կատարվում է օդի տարեկան միջին ջերմաստիճանի բարձրացման կամ գրունտի ջերմաստիճանային տատանումների ամպլիտուդայի մեծացման հետևանքով, որոնք հագեցնում են գրունտի հալման խորության մեծացմանը: Որոշ դեպքերում Ջ. անորոպոզեն գործունեության (անտատաֆատման, վարուցանքի, շին. աշխատանքների և այլնի) հետևանք է: Այն կարող է ունենալ ամենատարբեր ձևեր ու չափեր. հանդիպում են մի քանի մ-ից մինչև մի քանի կմ շտապիղով ձագարներ ու զոգավորություններ, որոնք ունենում են մ-ի մասերից մինչև մի քանի տասնչակ մ խորություն՝ մեծամասամբ լցված հալոցքային ջրով: Ջ. գերազանցապես տարածված է բազմամյա սառցույթի գոտիներում, որի համար այն երբեմն անվանում են սառցույթային կամ բևեռային կարտ:

**ТЕРМОМЕТР ВОДНЫЙ** — ՋՐԻ ՋԵՐՄԱՋԱՓ, ջրերի ջերմաստիճանը չափելու համար սովորաբար օգտագործվում է ծուլ ջերմաչափ, որը ջերմաստիճանային տատանումներին դանդաղ արձագանքող հատուկ սնդիկային ջերմաչափ է: Այն ներդրվում է ջերմափներտ նյութից (ճկազանգված, հատուկ մետաղ) պատրաստված պատյանի մեջ, որի հիմնամասում հարմարեցվում է նույն նյութից պատրաստված բաժակ: Վերջինը ջերմաչափը մեխ. հարվածներից պաշտպանելուց բացի, լցվելով փորձարկվող ջրով, կապում է պահում ջերմաչափի ցուցումը՝ մինչև հորատանցքից (ջրհորից) դուրս հանելը: Խորը հորատանցքերում ջրի ջերմաստիճանը չափելու համար օգտագործվում է մետաղյա պարկուճի մեջ տեղադրված առավելագույն ջերմաչափ, որը ֆիքսում է ջրի ամենաբարձր ջերմաստիճանը: Սովորաբար պարկուճի մեջ տեղադրվում է 2 ջերմաչափ, որոնք մինչև հորատանցք իջեցվելը սառեցվում են չափվող խորությունում սպասվող ջերմաստիճանից 8—10° ցածր: Վերջին տարիներին գործարկվել են ավտոմատ գրառող հատուկ էլեկտրական ջերմաչափեր, որոնք թույլ են տալիս հորատանցքի ողջ երկարությամբ չափել ջրի ջերմաստիճանային փոքր տատանումները: Ջերմաչափական աշխատանքները հորատանցքում կատարվող այլ ուսումնասիրությունների հետ համատեղ հաճախ հնարավորություն են տալիս զգալի ճշտությամբ որոշել ջրատար հորիզոնների, կլանող ու ջրամերժ ապարների ջրաներկք. շերտադրությունը:

**ТЕРМОМЕТР ГЛУБИННЫЙ** — ԽՈՐՔԱՅԻՆ ՋԵՐՄԱՋԱՓ, ջերմաչափ, որի օգնությամբ մինչև որոշակի խորությունները (3,0—3,5 մ) չափվում է հողի ջերմաստիճանը: Մինչև 20 սմ խորությունները չափելիս օգտագործվում է ալմայիսի Խ. Ջ., որի սանդղակը հողից դուրս է մնում, իսկ ավելի մեծ խորությունների համար օգտագործվում է կաղապարված Խ. Ջ., որը իջեցվում-բարձրացվում է ջերմամեկուսիչ խողովակներով ամրակապված հորատանցքի մեջ:

**ТЕРМОМЕТР ЭЛЕКТРИЧЕСКОГО СОПРОТИВЛЕНИЯ** — ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԳԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՋԵՐՄԱՋԱՓ, ջերմաչափ, որը գործում է մետաղների ջերմության բարձրացմանը զուգընթաց էլեկտրական դիմադրության բարձրացման սկզբունքի հիման վրա: Է. դ. ջ-երը, որոնց ճշտությունը ներկայումս հասցվել է  $\pm 0,001^\circ \text{C}$ ,

հաշտողությամբ օգտագործվում են երկրաչեղմային ուսումնասիրությունների և ընդհանրապես հորատանցքերում ջերմաստիճանային չափումների համար: Է. դ. ջ. հորատանցք է իջեցվում հատուկ կարելի օգնությամբ, որը նավթի կամ աղաջրերի քայքայիչ գործունեությանը չի ենթարկվում:

ТЕРМЫ — ՋԵՐՄԵՐ (ԹԵՐՄԵՐ), ստ. ջրեր և աղբյուրներ, որոնք ունեն համեմատաբար բարձր ջերմաստիճան (տե՛ս ստ. ջրերի դասակարգում ըստ ջերմաստիճանի): Տարբերում են հարաբերական Ջ., որոնց ջրի ջերմաստիճանը բարձր է տվյալ շրջանի օդի տարեկան միջին ջերմաստիճանից (նրանց ջերմաստիճանը կարող է լինել 20°-ից ցածր) և բացարձակ Ջ., որոնց ջրի ջերմաստիճանը գերազանցում է երկրագնդի օդի տարեկան միջին առավելագույն ջերմաստիճանից (34° Ց): Համաքաղաքությունում Ջ. են համարվում 20° Ց բարձր ջերմություն ունեցող ջրերը: Ջ. տաքանում են ընդերքի ջերմությամբ, որն ըստ խորության բարձրանում է երկրաթերմիկ աստիճանով (կամ գրադիենտով): Երիտասարդ հրաբխականության շրջաններում, որտեղ երկրաթերմիկ աստիճանը չի գերազանցում 5—10 մ-ից, արդեն ոչ մեծ խորությունների վրա հանդիպում են գերտաք ջրեր, որոնք երկրի մակերևույթ են դուրս գալիս ջրային գոլորշու կամ եռացող աղբյուրների՝ հեյզերների տեսքով:

ТЕРРАСА ТРАВЕРТИНОВАЯ — ՏՐԱՎԵՐՏԻՆԱՅԻՆ ԳԱՐԱՎԱՆԴ, հանքային աղբյուրների էլքի շրջակայքում տրավերտինի (կածբարա-կրաքարային տուֆի) նստվածքների մակահոսուկային (հոսանստվածքային) հարթեցված մակերևույթ: Տրավերտինի նստվածքներում դարավանդների առաջացումը պայմանավորված է հանքային ջրի ատվակի խորացմամբ: Նախկին խՍՀՄ-ում Տ. դ-ներ հայտնի են Պյատիգորսկի, Բորժոմի շրջաններում, Կամչատկայում, Միջին Ասիայում, Հսկաստանում և այլուր: Միկրոդարավանդների ձևով Տ. դ-ներ հանդիպում են նաև գործող հեյզերների տեղամասերում (Նոր Զելանդիա, Իվանդիա, ԱՄՆ ևն):

ТЕТРОПОДЫ — ՏԵՏՐՈՊՈՂԻՆԵՐ, պիսպաշտպան կառույցի տարր, որը բետոնից կամ երկաթբետոնից պատրաստվում է իշոտնուկի տեսքով («չորքոտանի հրեշ»): Գաբիոնի, դյաժի և այլ տարրերի նման, Տ. տեղադրվում են պլեբայման պատերի ստաջնամասում և կոչված են թուլացնել ալիքի հարվածային ուժը:

ТЕХНИЧЕСКИЕ ВОДЫ — ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՋՐԵՐ, ջրեր, որոնք որակապես պիտանի են ամենաբազմազան արդյունաբերական արտադրության և կաթսայատների սնման համար: Կախված արտադրության տեսակից (մետաղագործություն, շինարարություն, սնունդ, դեղագործություն ևն), ինչպես նաև օգտագործման նպատակներից (քիմ. գործընթացներ, լվացում, հովացում, ջեռուցում ևն), Տ. ջ-ի որակը կարող է էապես տարբեր լինել:

ТЕХНОГЕНЕЗ — ՏԵԽՆԱԾՆՈՒԹՅՈՒՆ, երկրաձևաբանական, երկրաքիմ. և հանքաբանական գործընթացների համակցություն, որը պայմանավորված է մարդու ինժեներական գործունեությամբ: Ժամանակակից տեխնիկայով զինված մարդու ինժեներական գործունեությունը առաջին հերթին հանգեցնում է ռելիեֆի էական ձևափոխումների (տե՛ս Рельеф техногенный): Տ-ի գործընթացները մեծ դեր են կատարում նաև երկրաքիմիայում, խախտելով երկրաքիմ. գործընթացների բնական ընթացքը: Տ. նշանակությունը հատկապես մեծացավ այն ժամանակներից, երբ

մարդն սկսեց կառավարել ատոմի տրոմման գործընթացները: Լեռնահանքային արդյունաբերության անող տեմպերը, մարդու շին. և հատկապես ջրաշին. գործունեությունը արդեն հանգեցնում են երկրակեղևում լարումների վերաբաշխմանը, որի արդյունքում ծնվում են նույնիսկ արհեստական երկրաշարժեր (տե՛ս Землетрясение техногенное):

ТЕХНОСФЕРА — ՏԵԽՆՈԼՈԳՅԱ, երկրակեղևի զոնա, որի սահմաններում ծավալվում է մարդու ինժեներական գործունեությունը: 80-ական թվականների լեռնահանքային արդյունաբերության պրակտիկայում բաց հանքերի խորությունը հասել է 1,5 կմ-ի, ստ. փորվածքների խորությունը՝ 4,5 կմ-ի, իսկ աշխարհում ամենախոր հորատանցքը (Չուլա թերակղզի) գերազանցում է 12,3 կմ խորությունը:

ТЕЧЕНИЕ ПОЧВЫ — ԲՈՒՍԱՀՈՂԵՐԻ ՀՈՍՔ, տե՛ս Солифлюкция (почво-течение):

ТИКСОТРОПНЫЕ ЯВЛЕНИЯ (ТИКСОТРОПИЯ) — ՏԻՔՍՈՏՐՈՊԻԱ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ (ՏԻՔՍՈՏՐՈՊՈՒԹՅՈՒՆ), մեխ. ներգործության դեպքում (ցնցում, խտնում) նորը դիսպերս գրունտների (հուսազրուտների, ժելեների ևն) ջրիկանալու կամ գոլերի ու կախությունների (սուսպենզիաների) վերածվելու հատկություն: Տիքոտրոպություն ծնող պատճառները վերացնելիս գոլերը կամ կախությունները վերստին մակարդվում, վերածվում են դոնողաճման զանգվածի (ժելի), այսինքն Ս. Ե. դարձելի են և կարող են դրսևորվել բազմաթիվ անգամ: Բացի մեխ. ներգործությունից, Ս. Ե. կարելի է առաջացնել նաև էլեկտրական հոսանքի, գերձայնային ալիքների և այլ միջոցներով, որը օգտագործվում է քիմ. արդյունաբերությունում տեխ. քութների ու տանձի արտադրության ժամանակ, ինչպես նաև որոշակի պայմաններում հորատման լուծույթ պատրաստելու գործում:

ТИПЫ БОЛОТ — ԾԱՀԻԾՆԵՐԻ ՏԻՊԵՐ, ճահիճների ամենատեղական հատկանիշների համակարգը արտացոլող խոշոր դասակարգման միավոր, որի համաձայն տարբերում են 3 հիմնական տիպեր. 1) ցածրադիր (էվտրոֆիկ) ճահիճներ, որոնց սնմանը մթնոլորտային տեղումների հետ մեկտեղ մասնակցում են նաև մակերևութային և գրունտային ջրերը: Այստեղ աճում է էվտրոֆիկ (հանքային սնման պայմանների նկատմամբ պահանջկոտ) բուսականություն, 2) բարձրադիր (օլիգոտրոֆիկ) ճահիճներ, որոնց սնումը գերազանցապես կատարվում է ի հաշիվ մթնոլորտային տեղումների, իսկ մակերևույթը հաճախ ուռուցիկ տեսք ունի: Այստեղ աճում է օլիգոտրոֆիկ (հանքային սնման պայմանների նկատմամբ ոչ պահանջկոտ) բուսականություն, 3) անցումնային (լիգոտրոֆիկ) ճահիճներ, որոնք նախորդ երկու տիպերի միջև միջանկյալ տեղ են գրավում և բնութագրվում են լիգոտրոֆիկ բուսականությամբ:

Ըստ ճահիճների տեղադիրքի տարբերում են ողողահունային (պոլմային), նովտային, լանջային, ջրբաժանային և մերձդարավանդային ճահիճներ: Ըստ բուսականության աճի տարբերում են անտառտուպատ, խոտածածկ և մամուլատ ճահիճներ:

ТОЛКАЮЩИЙ ОПОЛЗЕНЬ — ՀՐՈՂ ՍՈՂԱՆՔ, տե՛ս Оползень детрузивный:

ТОРПЕДИРОВАНИЕ СКВАЖИН — ՀՈՐՄՍԱՆՑՔԵՐԻՆ ՏՈՐՊԵԴԱՀԱՐՈՒՄ, պայթեցման միջոցով հորատանցքում հեղուկի կամ գազի ներհոսքի ավելացման եղանակ: Զանգվածային ապարների տարածման հատվածում հորատանցքի մեջ իջեցված հատուկ արկի (տորպեդի) պայթեցումից ապարներում ճեղքեր են առաջանում, որոնցից հեղուկը (նավթը, ջուրը) կամ գազը հեշտությամբ ներհոսում է հորատանցքի մեջ:

ТОРФЯНЫЕ ВОДЫ — ՏՈՐՖԱՅԻՆ ՋՐԵՐ, տորֆային ճահիճների ջրեր, որոնք սովորաբար մոզ-դարչնագույն են և հարուստ են հումինային թթուներով: Տ. ջ-ից ձևավորվող հոսքերը «սև գետակներ» են հիշեցնում:

ТОЧКА РОСЫ — ՅՈՂԻ ԿԵՏ, օդի խոնավության կարևոր բնութագիր, որը համապատասխանում է ավելիսի ջերմաստիճանի, մինչ որը սառչելիս նրանում պարունակվող գոլորշիները հասնում են հագեցման սահմանին և խտանալով՝ վերածվում են ցողի կաթիլների:

ТРАВЕРС — ՄԻՋԱԹՈՒՄԲ, ծովափնյա կամ գետափնյա ավապաշտպան պատ-  
նեշները լայնակիորեն միացնող հողաթուրք:

ТРАНСПИРАЦИЯ — ՏՐԱՆՍՊԻՐԱՅԻԱ, ջրի գոլորշիացումը բուսականության կողմից: Տ-ի շնորհիվ բույսերում առաջանում է ջրային հոսանք՝ արմատներից դեպի տերևները, որոնք հանդիսանում են բույսերի հիմնական գոլորշիացնող օրգանը: Տ. բույսերը պաշտպանում է գերտաքացումից և ջրային հոսքի հետ սնում է հանքային միացություններով: Տարբեր բույսերի համար Տ-ի մեծությունը տարբեր է: Օր., 1 հա ցորենի ցանքատարածությունից վեգետացիոն պերիոդում Տ. է կատարվում մոտ 2 մլն կգ ջուր, իսկ 1 հա կաղամբի ցանքատարածությունից՝ 8 մլն կգ ջուր:

ТРАНШЕЯ — ԱՌՎԱՓՈՍ (ԽՐԱՄՈՒՂԻ), լեռնային բաց փորվածք, որն ունի լայնական սեղանաձև կտրվածք և նրա համեմատությամբ բազմապատիկ մեծ երկարություն: Ջրաերկր. նպատակներով փորված Ա-երը ծառայում են հանքաղաչտերի, հողատեսքերի, շինհրապարակների և այլ օբյեկտների ջրազրկման, գրունտային ջրերի մակարդակի իջեցման, ջրհեռացման և այլնի համար:

ТРЕЩИННЫЕ ВОДЫ — ԾԵՂՔԱՅԻՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք տեղադրված են սպառսածային ապարների ճեղքերի մեջ: Կախված ճեղքերի մեծությունից և հաղորդակցվածության աստիճանից, նրանցում ջրի շարժումը կարող է ունենալ ինչպես շիթային (լամինար), այնպես էլ մրրկային (տուրբուլենտ) բնույթ:

ТРЕЩИННО-КАРСТОВЫЕ ВОДЫ — ԾԵՂՔԱԿԱՐՍՏԱՅԻՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք կապված են ապարների ճեղքերի և կարստային դատարկությունների հետ: Ծ. ջ., որոնց հատուկ է մրրկային (տուրբուլենտ) շարժումը, լայնորեն տարածված են ծալքավոր մարգերի տեղախախտված կրաքարային հատվածքներում:

ТРЕЩИННО-ПОРОВЫЕ ВОДЫ — ԾԵՂՔԱՄԱԿՈՏԱՅԻՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր,

որոնք կապված են ապարների միմյանց հետ հաղորդակցվող ճեղքերի ու ծակտիների հետ: Ծ. Զ-ին հիմնականում հատուկ է շիթային (լամինար) շարժումը:

ТРЕЩИНОВАТОСТЬ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ԾԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ապարներում տարբեր ծագման ու չափերի, սովորաբար միմյանց հետ հաղորդակցվող ճեղքերի համակցություն: Ըստ ծագման տարբերում են լիթոգենետիկական, տեկտ., հողմնահարման, գրավիտացիոն, չորացման (կծկման), սառնամանիքային (սառեցման-հալման) և այլ ճեղքեր: Քանակապես ճեղքավորվածությունը որոշվում է ապարի բնակտորի ողջ ճեղքերի ծավալի և նրա ընդհանուր ծավալի հարաբերությամբ: Հաճախ որպես Ա. ճ. կարևոր չափանիշ ընդունվում է ճեղքերի լայնությունը, ըստ որի ստանձնացվում են. 1) նորք — < 1 մմ, 2) մանր — 1—5 մմ, 3) միջին — 5—20 մմ, 4) խոշոր — 20—100 մմ և, 5) շատ խոշոր ճեղքեր — > 100 մմ:

ТРЕЩИНЫ БОКОВОГО (БОРТОВОГО) ОТПОРА — ԿՈՂԱՅԻՆ ԱՐՏԱՍԵՂՄԱՆ ԾԵՂՔԵՐ, խորը գետահովիտների բարձրադիր ափերին գտնվող ճեղքեր, որոնք առաջանում են ջրաստատիկ ճնշման կտրուկ անկման հետևանքով: Կ. ա. ճ. ձգվում են ափերին զուգահեռ, ըստ բնույթի բաց (հորանցող) են և սկիզբ են դնում ափերի փլուզմանն ու ողողամաշմանը:

ТРЕЩИНЫ СКАЛЫВАНИЯ — ԿՈՏՐՄԱՆ ԾԵՂՔԵՐ, ապառաժային ու կիսաապառաժային ապարների սեղմման ժամանակ ճնշման ուղղությամբ որոշ անկյան տակ առաջացող ճեղքեր:

ТРЕЩИНЫ УСАДКИ (УСЫХАНИЯ, ВЫСЫХАНИЯ) — ԿՇԿՄԱՆ (ՁՈՐԱՑՄԱՆ) ԾԵՂՔԵՐ, կավային ապարների չորացման ու կծկման հետևանքով առաջացող ճեղքեր, որոնք ապարների մակերևույթը բաժանում են բազմանիստ (ստավելապես 5—6 նիստով) հատվածների և դեպի խորքը առաջացնում են պլունձն անջատումներ: Կ. ճ-ի լայնությունը սովորաբար հասնում է 15—20 սմ-ի, իսկ խորությունը՝ մինչև 40—50 սմ-ի, սակայն անապատային թափիրների հզոր կավային շերտերում նրանց լայնությունը կարող է հասնել 30—40 սմ-ի, իսկ խորությունը՝ 1—2 մ-ի: Հոնանիշ՝ պոլիգոնալ ճեղքեր:

ТУНДРОВЫЕ ВОДЫ — ՏՈՒՆԳՐԱՅԻՆ ՋՐԵՐ, ըստ Վ. Ս. Իլյինի, տունդրայի և հյուսիսային գոտու գրունտային ջրեր, որոնք տեղադրված են երկրի մակերևույթին մոտ, բազմամյա սառցույթի գործունյա շերտի մեջ: Տ. Զ-ին բնորոշ են աննշան հանքայնացումն ու օրգ. նյութերի բարձր պարունակությունը:

ТУРБУЛЕТНОЕ ТЕЧЕНИЕ — ՄՐԲՎԱՅԻՆ (ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ) ՀՈՍԱՆՔ, հեղուկի (կամ գազի) հոսանք, որի դեպքում հեղուկի մասնիկները կատարում են անկանոն քառասյին շարժում՝ ամենաբարդ հետագծերով: Մ. հ., որը հաստատվում է (Իելնոլդսի թվով (տե՛ս Բейнольдса число), շիթային (լամինար) հոսանքից տարբերվում է ինտենսիվ մրրկայնությամբ, գալարումներով, ջերմափոխանակությամբ, շփման գործակցի բարձր արժեքներով ևն:

ТЮБИНГ — ՏՅՈՒԲԻՆԳ, երկու և ավելի շրջանային ու շտավղային կոշտության կողերով, միացնող հեղույաների և ետամրակապային տարածության տամպոնացման


համար անհրաժեշտ անցքերով գլանաձև սեգմենտ: Տ-ճեղք պատրաստվում են մետաղից կամ երկաթբետոնից և ծառայում են կապիտալ ստ. փորվածքների (հանքափողերի, թունելների, մետրոների) ամրակապման համար:

ТЯЖЕЛАЯ ВОДА — ԾԱՆՐ ՋՈՒՐ, ջրի իզոտոպային տարատեսակ, որի մոլեկուլում ջրածնի ատոմները փոխարինված են ծանր իզոտոպներով: Առավել հազված է  $D_2O$  ( $D$  դեյտերում և  $O^{16}$ ), որի խտությունը  $+20^\circ C$  հավասար է  $1,1056$  գ/սմ<sup>3</sup>, առավելագույն խտությունը դիտվում է  $+11,6^\circ C$ , եռման ջերմաստիճանը  $+101,42^\circ C$ , հալման ջերմաստիճանը՝  $+3,823^\circ C$ : Բնական ջրերում  $H_2O : D_2O$  հարաբերությունը կազմում է մոտ  $6800 : 1$ : Ծ. ջ. ճնշող ազդեցություն է ունենում օրգանիզմների վրա, իսկ մեծ դրզաներով՝ մահ է առաջացնում: Ծ. ջ. օգտագործվում է ատոմային ռեակտորներում որպես նեյտրոնների դանդաղեցուցիչ և ջերմակիր:


— У —

УГЛЕКИСЛОТА АГРЕССИВНАЯ — ԱԳՐԵՍԻՎ ԱՇՄԱԹՔՈՒ, ածխաթթու, որն ընդունակ է լուծույթի վերածելու կալցիումի կարբոնատը հետևյալ հավասարումով՝  $CaCO_3 + H_2O + CO_2 \rightleftharpoons Ca^{2+} + 2HCO_3^-$ : Ռեակցիան դարձելի է, մինչև վերջ չի շրջանում, այսինքն՝ լուծույթում եղած ածխաթթվի մի մասը ռեակցիայից հետո մնում է ազատ վիճակում, կարգավորում է լուծույթում պինդ  $CaCO_3$  ու  $HCO_3^-$  իոնների շարժուն հավասարակշռությունը և կոչվում է հավասարակշռիչ ածխաթթու: Եթե ջրում ազատ ածխաթթվի պարունակությունը ավել է հավասարակշռության համար անհրաժեշտ քանակից, ապա այդպիսի ջուրը ընդունակ է լուծելու կրաքարի նորանոր քանակություններ՝ մինչև վերստին հավասարակշռված վիճակ ստեղծվելը: Ազատ ածխաթթվի հավելյալ մասը, որը ծախսվում է  $CaCO_3$ -ի լուծման համար, կոչվում Ա. ա.: Ա. ա-ի պարունակությունը որոշվում է ինչպես փորձնականորեն հատուկ եղանակով վերցված ջրի նմուշներում, այնպես էլ հաշվարկային եղանակով և հատուկ գրաֆիկների օգնությամբ: Ա. ա-ի մեծությամբ գնահատվում է ջրի ագրեսիվությունը բետոնի (ցեմենտի) և կարբոնատային ապարների նկատմամբ:

УГЛЕКИСЛОТНОЕ И СЕРНОКИСЛОТНОЕ ВЫВЕТРИВАНИЕ — ԱՇՄԱԹՔՎԱՅԻՆ ԵՎ ԾՄՄԲԱԹՔՎԱՅԻՆ ՀՈՂՄՆԱՀԱՐՈՒՄ, քիմ. հողմահարման գործընթաց, որի արդյունքում առաջանում են ջրում լուծելի միացություններ: Ածխաթթվային հողմահարումը տեղի է ունենում ածխաթթվի ու ջրի ազդեցության տակ հետևյալ սխեմայով.



Ծծմբաթթվային հողմահարումը տեղի է ունենում ծծմբաթթվի և ջրի մասնակցությամբ, դիցուք, հետևյալ սխեմայով.



Ատ. ջրերում ածխաթթվային հողմահարումը կարող է տեղի ունենալ անկախ


նրանց տեղադրման խորությունից, քանի որ բոլոր ջրերում այս կամ այն քանակությամբ ածխաթթու պարունակվում է: Ծծմբաթթվային հողմանհարման խորությունը որոշվում է թթվածնի և ծծմբաթթվային հողմանհարման արգասիքների թափանցման խորությունից: Բարենպաստ պայմաններում (բաց, լվացված կառուցվածքներում) այն կարող է հասնել 1000 մ-ի:

**УГЛЕКИСЛЫЕ ВОДЫ** — ԱՇՆԱԹԹՎԱՅԻՆ ՋՐԵՐ, բնական ջրեր, որոնք պարունակում են 250 մգ/լ-ից ավել քանակությամբ ազատ ածխաթթու գազ ( $\text{CO}_2$ ): Ստ. ջրերում  $\text{CO}_2$  առավել շատ տարածված գազերից է: Օր., Հայաստանի հանքային ջրերում այն հանդիսանում է գլխավոր բաղադրիչ: Հանքավանի, Ջերմուկի, Արզնու և այլ հանրահայտ հանքային ջրերում  $\text{CO}_2$ -ի պարունակությունը հասնում է 2—3 գ/լ:

**УГЛЕКИСЛЫЕ ФУМАРОЛЫ (МОФЕТТЫ)** — ԱՇՆԱԹԹՎԱՅԻՆ ՖՈՒՄԱՐՈՆԵՐ (ՄՈՖԵՏՆԵՐ), ցածր ջերմության (մինչև  $+100^\circ \text{C}$ ) ֆումարոլներ, որոնք արտաբերում են գլխավորապես ածխաթթու գազ ( $\text{CO}_2$ ) և ջրային գոլորշիներ:

**УГЛОВЫЕ (СТЫКОВЫЕ) ВОДЫ (ВОДЫ УГЛОВ ПОР, ПО ЦУНКЕРУ; ПЕНДУЛЯРНЫЕ ВОДЫ, ПО ФЕРНСМОНСУ)** — ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ (ԾԱՅՐԱԿՑՎԱԾԲԱՅԻՆ) ՋՐԵՐ (ԸՍՏ ՑՈՒՆԿԵՐԻ ԾԱԿՈՏԻՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՋՐԵՐ, ԸՍՏ ՖԵՐՆՍՄՈՆՍԻ ՊԵՆՎՈՒԼՅԱՐ ՋՐԵՐ), ապարի մասնիկների կցատեղերում օղակաձև ջրեր, որոնք տեղ են գտնում ծակոտիների անկյուններում և ունենում են մազանոթների մեցիսկ հիշեցնող ջրային մակերևույթ: Ա. ջ. ֆունկիլյար ջրերից (տե՛ս *Фунжулярные воды*) տարբերվում են նրանով, որ ջրային օղակներն անջատ են:

**УГОЛ ВНУТРЕННЕГО ТРЕНИЯ** — ՆԵՐՔԻՆ ՇՓՄԱՆ ԱՆԿՅՈՒՆ, գրունտի սողքի (կողաշարժի) փորձարկման դիագրամի ուղղաձիգ հատվածի անկյունը մորմալ լարման առանցքի նկատմամբ (նկ. 14):



Նկ. 14. Ուղղաձիգ բեռնվածքից ( $\tau$ ) կողաշարժող լարման ( $\sigma$ ) կախման գրաֆիկ:

Ն. Չ. ա. դառնում է կայուն, երբ կողաշարժի լարումը՝  $\sigma \geq 1$  կգ/սմ<sup>2</sup>: Ն. Չ. ա. հանդիսանում է գրունտի կողաշարժման ժամանակ նրանում առաջացող ներքին շփման ուժերի ցուցանիշ:

УГОЛ ЕСТЕСТВЕННОГО ОТКОСА — ԲՆԱԿԱՆ ԹԵԲՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ, փոխը ապարներից կազմված լանջի կամ թափվածքի թեքության անկյուն, որի դեպքում նրանք հավասարակշռված վիճակում են, սողանքի կամ փլուզման չեն ենթարկվում: Բ. թ. ա. կախված է ապարների մեխ. ու միներալային կազմից և վիճակից (չոր, խոնավ, կոնսոլիդացված են), իսկ կավային գրունտների համար՝ նաև թեքության բարձրությունից:

УДЕЛЬНАЯ ВЛАЖНОСТЬ ВОЗДУХА — Օդի ՏԵՍԱԿԱՐԱՐ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, օդի որոշակի ծավալում պարունակվող ջրային գոլորշիների կշռի (գ-երով) հարաբերությունը տվյալ ծավալի օդի կշռին (կգ-երով):

УДЕЛЬНАЯ ВОДООТДАЧА — ՏԵՍԱԿԱՐԱՐ ԶՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ապարից (ջրատար շերտից) ազատ ձևով անջատվող գրավիտացիոն ջրի ծավալի հարաբերությունը տվյալ ապարի (շերտի) ծավալին:

УДЕЛЬНАЯ ПОВЕРХНОСТЬ ЧАСТИЦ — ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ, մասնիկների գումարային մակերևույթը ապարի միավոր ծավալում:

УДЕЛЬНАЯ ПОРИСТОСТЬ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, նույնն է, ինչ ապարների ծակոտկենության գործակիցը (տե՛ս Коэффициент пористости пород):

УДЕЛЬНАЯ ТЕПЛОЕМКОСТЬ — ՏԵՍԱԿԱՐԱՐ ԶԵՐՄՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ջերմության այն քանակությունը, որն անհրաժեշտ է հաղորդել մարմնի միավոր զանգվածին (1 գ)՝ նրա ջերմությունը 1°-ով բարձրացնելու համար:

УДЕЛЬНОЕ ПОГЛАЩЕНИЕ ВОДЫ СКВАЖИНОЙ — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԶՐԱՎԱՆՈՒՄ, հորատանցք ներմղվող ջրի ծախսը (լ/րկ, լ/րոպե), որը կլանվում է հորատված ապարների 1 մ կտրվածքի կողմից՝ ջրի 1 մ ճնշման դեպքում:

УДЕЛЬНОЕ ЭЛЕКТРИЧЕСКОЕ СОПРОТИВЛЕНИЕ ПОРОД — ԱՊԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1 մ<sup>2</sup> կտրվածքով 1 գծմ ապարի ցույց տված դիմադրությունը էլեկտրական հոսանքին՝ արտահայտված օհմ. մ-երով: Ա. տ. է. դ. հակադարձ մեծությունը բնութագրում է ապարների էլեկտրահաղորդականությունը: Բոլոր ապարները այս կամ այն չափով համակված են իոնային հաղորդականությամբ, որը գլխավորապես պայմանավորված է ապարների ծակոտիների ջրերի հանքայնացման աստիճանով ու բնույթով, իսկ մետաղային հանքայնացումով ապարները (հատկապես սուլֆիդներ) օժտված են նաև էլեկտրոնային հաղորդականությամբ: Ա. տ. է. դ. տատանվում է մեծ սահմաններում, ընդ որում սովորաբար նստվածքային Ա. տ. է. դ. ավելի ցածր է, քան հրաբխային ու փոխակերպա-

յին ապարների: Սուլֆիդային հանքաքարի, ինչպես նաև գրաֆիտի ու անտրա-  
ցիտի տեսակարար էլեկտրական դիմադրությունը խիստ փոքր է (օհմ. մ-ի տաս-  
նորդական մասեր): Ստ. ջրերի տեսակարար էլեկտրական դիմադրությունը սովորա-  
բար տատանվում է 0,02—1,0 օհմ. մ սահմաններում, ընդ որում, ինչքան ջրերի  
հանքայնացումը մեծ է ու ջերմատիճանը ցածր, այնքան նրանց էլեկտրական  
դիմադրությունը փոքր է:

УДЕЛЬНЫЙ ВЕС ( $\gamma$ ) — ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՒՒ ( $\gamma$ ), բացարձակ չոր ապարի  
G կշռի հարաբերությունը նրա կմախքի V ծավալին՝  $\gamma = \frac{G}{V} - \text{գր/սմ}^3$ : Միներալների  
Տ. կ. ընդհանրապես տատանվում է մեծ սահմաններում (0,9—23,0 գ/սմ<sup>3</sup>), ա-  
կայն ապար կազմող գլխավոր միներալներինը կազմում է 2,0—3,4 գ/սմ<sup>3</sup>: Բնական  
ջրի Տ. կ. որոշվում է սովյալ ջրի կշռի և նույն ծավալի թորած ջրի կշռի հարաբե-  
րությամբ՝ միևնույն ջերմատիճանում ( $\frac{dt^\circ}{t^\circ}$ ), կամ +4° Ց դեպքում ( $\frac{dt^\circ}{4^\circ}$ ): Բնական  
ջրի Տ. կ. մեծանում է նրա հանքայնացման բարձրացմանը զուգընթաց և որոշ աղա-  
ջրերի համար կարող է հասնել 1,2—1,3 գ/սմ<sup>3</sup>-ի:

УДЕЛЬНЫЙ ДЕБИТ СКВАЖИНЫ (q) — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԾԱԽՍ, (q),  
(q), հորատանցքի ջրի (նավթի) Q ծախսի հարաբերությունը հորատանց-  
քում ջրի (նավթի) մակարդակի S իջեցմանը.  $q = \frac{Q}{S} - \text{լ/վրկ/մ}$ : Հ. տ. ծ. ցույց է  
տալիս, թե հորատանցքում ջրի մակարդակը 1 մ իջեցման դեպքում ինչ քանակու-  
թյան ջուր է ստացվում (լ/վրկ):

УДЕЛЬНЫЙ ОБЪЕМ — ՏԵՍԱԿԱՐԱՐ ԾԱՎԱԼ, նյութի միավոր զանգվածի  
գրադեցրած ծավալը, որն իրենից ներկայացնում է խտության հակադարձ մեծու-  
թյունը: Տ. ծ-ի չափման միավորն է սմ<sup>3</sup>/գ, տեխնիկայում հաճախ արտահայտվում է  
նաև մ<sup>3</sup>/կգ կամ մ<sup>3</sup>/տ:

УДЕЛЬНЫЙ РАСХОД ПОДЗЕМНОГО ПОТОКА — ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԻ  
ՏԵՍԱԿԱՐԱՐ ԾԱԽՍ, ստ. ջրերի հոսքի ծախս, որը բաժին է ընկնում նրա միավոր  
լայնությանը՝  $q = \frac{Q}{B}$ , որտեղ՝ q — Ս. հ. տ. ծ. է, Q — հոսքի ծախսն է, B — հոս-  
քի լայնությունն է:

УКЛОН ПОВЕРХНОСТИ ПОТОКА ГРУНТОВЫХ ВОД — ԳՐՈՒՆՏԱՅԻՆ  
ՋՐՀՈՍՔԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՑԹԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ, գրունտային ջրհոսքի ուղղությամբ  
2 կետերում ջրի ազատ մակերևույթի նիշերի տարբերության հարաբերությունը այդ  
2 կետերի միջև եղած հեռավորությանը՝  $J = \frac{h_1 - h_2}{l}$ , որտեղ՝ J — սիդրավիկ թեքու-  
թյունն է կամ անկման գրադիենտը,  $h_1, h_2$  — ջրի մակերևույթի նիշերը՝ 2 կետերում,  
l — այդ կետերի միջև եղած հեռավորությունն է:

УПЛОТНЕНИЕ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԽՏԱՑՈՒՄ, գրունտների խտու-  
թյան մեծացում, որը տեղի է ունենում ի հաշիվ նրանց ծակոտկենության նվազման:

Խտացման հետևանքով մեծանում են գրունտի ծավալային կշիռը և տեղման դի-  
նադրությունը (բարձրանում է կրողունակությունը), նվազում են ծծանցման ու ջրա-  
կլանման հատկությունները ևն: Գ. խ. կատարվում է հարթում-տոփանումով, գլոր-  
րում-գլանակումով, թրթռահարումով, հիդրավլիկ եղանակով ևն:

УПЛОТНЕННОСТЬ ГЛИНИСТЫХ ОТЛОЖЕНИЙ — ԿԱՎԱՅԻՆ ՆՍԱՎԱԾՔ-  
ՆԵՐԻ ԽՏԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, արտաքին բեռնվածքի փոփոխության դեպքում կա-  
վային նստվածքների ծակոտկենության նվազում, որի հետևանքով մեծանում է նրանց  
խտությունն ու ամրությունը, բարձրանում է կրողունակությունը: Բնական պայման-  
ներում կտվային ապարների խտացվածությունը պայմանավորվում է վերադիր  
ապարների գրավիտացիոն ճնշումով: Կ. և խ. բնութագրելու համար Վ. Ա. Պրիկ-  
լոնսկին առաջարկել է հետևյալ բանաձևը.  $K_d = \frac{E_e - E}{E_e - E_p}$ , որտեղ  $K_d$ -ն խտացվա-

ծության ցուցանիշն է,  $E$  -ն բնական կառուցվածքի գրունտի ծակոտկենության գոր-  
ծակիցն է,  $E_e$  -ը նույնն է՝ գրունտի պլաստիկ վիճակից հոսուն վիճակի անցման  
դեպքում,  $E_p$  -ն նույնն է՝ գրունտի պլաստիկ վիճակից կիսակարծր վիճակի անցման  
դեպքում: Կավային գրունտների համար  $E$ -ի տարբեր արժեքների դեպքում  $K_d$ -ի  
արժեքները բերված են 13-րդ աղյուսակում:

Աղյուսակ 13

Բերված ծակոտկենու- թյան արժեքներ	Խտացվածության ցուցանիշի արժեքներ	Կավային գրունտի վիճակ
$E > E_e$	$K_d < 0$	2խտացված (փուխը)
$E = E_e$	$K_d = 0$	Խտացվածության սկզբնավորում
$E_p < E < E_e$	$0 < K_d < 1$	Պլաստիկ
$E = E_p$	$K_d = 1$	Անցում կիսակարծրի
$E < E_p$	$K_d > 1$	Գերխիտ կիսակարծր

УПЛОТНЯЕМОСТЬ ПЕСКОВ — ԱՎԱԶՆԵՐԻ ԽՏԱՑՄԱՆ ՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ, թափահարման կամ ցնցման հետևանքով ավազի հատիկների տեղադիրքի փոփոխ-  
ման ունակություն, որը հանգեցնում է նրա ծակոտկենության նվազմանը և խտաց-  
վածության մեծացմանը: Ա. խ. ու. բնութագրելու համար օգտվում են հետևյալ ար-  
տահայտությունից.  $F = \frac{E_{max} - E_{min}}{E_{min}}$  կամ, եթե բերված ծակոտկենությունը փոխա-

րիկվում է ծակոտկենությամբ՝  $F = \frac{\Pi_{max} - \Pi_{min}}{\Pi_{min}(1 - \Pi_{max})}$ , որտեղ՝  $E_{max}$ ,  $E_{min}$  — ավա-  
զի ծակոտկենության գործակիցն է՝ առավել փուխը և առավել խիտ վիճակներում,  
 $\Pi_{max}$ ,  $\Pi_{min}$  — ավազի ծակոտկենությունն է նույն վիճակներում:

УПРУГАЯ ДЕФОРМАЦИЯ — ԱՌԱԶԳԱԿԱՆ ԶԵՎԱԽՆԱՍՏՈՒՄ, գրունտի

(մարմնի) ձևախախտում, որը վերանում է այն ծնող լարումների ազդեցությունը դադարեցնելիս:

УПРУГИЕ ЗАПАСЫ — ԱՌԱԶԳԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, ջրի ծավալ, որը լրացուցիչ ստացվում է ճնշումնային հորիզոնից, երբ շահագործման գործընթացում շերտում նվազում է ճնշումը և դրսևորվում են շերտի ապարների ու ջրի ստաձգական հատկանիշները (ապարի ծակոտիների սեղմում, ջրի ծավալային ընդարձակում): Ա. պ. կազմում են բնական պաշարների մի մասը և նշանակալից են բարձր ճնշման տակ գտնվող շերտերի դեպքում:

УПРУГИЕ СВОЙСТВА ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԱՌԱԶԳԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գրունտների հատկություններ, որոնք բնութագրվում են երկայնակի ու լայնակի սեղմման մոդուլներով և ստաձգական ալիքների տարածման արագությամբ:

УПРУГИЙ РЕЖИМ — ԱՌԱԶԳԱԿԱՆ ՌԵՇԻՄ, ըստ Վ. Ն. Շելկաշյովի, շերտի ռեժիմ, որի դեպքում շերտի շահագործման գործընթացում նրա վարքի վրա էական ազդում են շերտի և այն հագեցնող ջրի (նավթի) ստաձգական հատկությունները:

УПРУГОЕ СЖАТИЕ — ԱՌԱԶԳԱԿԱՆ ՍԵՂՄՈՒՄ, գրունտի ստաձգական ձևախախտում, որն առաջանում է ուսումնասիրվող հարթության նկատմամբ գործադրվող նորմալ ուժերով և վերանում է այդ ուժերի ազդեցությունը դադարեցնելիս:

УПРУГОЕМКОСТЬ ВОДОНОСНОГО ПЛАСТА (КОЭФФИЦИЕНТ УПРУГОЕМКОСТИ) — ԶՐԱՏԱՐ ԾԵՐՏԻ ԱՌԱԶԳԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՌԱԶԳԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ), մեծություն, որը բնութագրվում է շերտի և այն հագեցնող ջրի (նավթի) ստաձգական հատկությունները, արտահայտում է շերտի ստաձգական պաշարների փոփոխությունները՝ կախված ճնշումից: Առաձգական տարողության գործակիցը ( $\beta_x$ ) որոշվում է հետևյալ բանաձևով.  $\beta_x = \alpha \cdot \beta_1 + \beta_2$ , որտեղ  $\alpha$ -ը ջրասար շերտի ծակոտակներությունն է,  $\beta_1$  — հեղուկի ծավալային ստաձգականության գործակիցն է,  $\beta_2$  — շերտի ծավալային ստաձգականության գործակիցն է: Թվապես  $\beta_x$ -ի մեծությունը հավասար է շերտի միավոր ծավալում հեղուկի ստաձգական պաշարի փոփոխությանը՝ շերտային ճնշման 1 մթն. փոփոխության դեպքում:

УРАВНЕНИЕ БАЛАНСА ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵՐԿՐԹԱ ԶՐԵՐԻ ՀԱՇՎԵԿՑՈՒԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, ստ. ջրերի մուտքի ու ելքի բաղադրատարրերի կապի հավասարում (տե՛ս Балансовое уравнение):

УРЕЗ ВОДЫ — ԶՐԱԳԻԾ, գետի կամ լճի (ջրամբարի) տվյալ պահին ջրային մակերևույթի հատման գիծը ցամաքի (ափի) մակերևույթի հետ:

УРОВЕНЬ НАПОРНЫЙ — ԾՆՃՈՒՄՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ, հորատանցքում կամ ջրհորում ճնշումնային ջրերի կայունացած մակարդակ: Չափվում է պլավմանականորեն ընդունած հարթության (երկրի մակերևույթ, ծովի մակերևույթ, ճնշումնային շերտի առատուղ կամ հատակ) համեմատությամբ: Եթե Շ. մ. բարձր է երկրի

մակերևույթից, այսինքն հորատանցքը շատրվանում է, ապա ճնշման մակարդակը կոչվում է դրական, իսկ եթե այն ցածր է երկրի մակերևույթից, կոչվում է բացասական: Հոմանիշ՝ ճնշման (սիեզոմետրիկ) մակարդակ:

УРОВЕНЬ НЕУСТАНОВИВШИЙСЯ — ՉԿՍՅՈՒՆԱՑԱԾ ՄԱԿԱՐԳԱԿ, փոփոխական մակարդակ, որը դիտվում է շատրվանող ստ. ջրերի հորիզոնների բացման, ճնշումնային և գրունտային ջրերի հորիզոնների փորձարկման ու շահագործման սկզբնական էտապում և դրանք դադարեցնելուց հետո: Ստ. ջրերի մակարդակի կայունացման տևողությունը կախված է փորձարկվող հորիզոնի ջրատրկք. առանձնահատկություններից:

УРОВЕНЬ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՄԱԿԱՐԳԱԿ, ստ. ջրերի ազատ կամ ճնշումնային մակերևույթի տեղադիրքը տվյալ կետում՝ կամալոր հարթության (երկրի մակերևույթ, ծովի մակերևույթ ևն) նկատմամբ: Ս. ջ. մ. կարող է լինել կայունացած և չկայունացած, հաստատուն և փոփոխական:

УРОВЕНЬ ПЬЕЗОМЕТРИЧЕСКИЙ — ԾՆՇՈՒՄՆԱԶՄՓԱԿԱՆ ՄԱԿԱՐԳԱԿ, (ճնշումնային մակարդակ) տրմինի հոմանիշ (տե՛ս Уровень напорный):

УРОВЕНЬ СТАТИЧЕСКИЙ ПОДЗЕМНОЙ ВОДЫ — ՍՏՈՐԵԿՐՅԱ ՋՐԻ ԿԱՅՈՒՆ (ՍՍՏԻԿ) ՄԱԿԱՐԳԱԿ, ստ. ջրի բնական մակարդակ, որը չի խախտված ջրատրկք. փորձային աշխատանքներով (արտանդում, ներմդում, ջրիցք): Հոմանիշ՝ ջրատատիկ մակարդակ:

УРОВНЕМЕР — ՄԱԿԱՐԳԱԿԱԶՄՓ, սարք (գործիք), որով հորատանցքերում կամ այլ լեռնային փորվածքներում չափվում է ստ. ջրերի մակարդակի տեղադրման խորությունը: Օգտագործվում են բազմատեսակ Մ-եր, այդ թվում էլեկտրական Մ-եր՝ կամավորված ավտոմատ գրանցող սարքերով, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպել մանրազնին մշտական (ստացիոնար) դիտումներ:

УСАДКА — ԿԾԿՈՒՄ, չորացման հետևանքով դիսպերս ապարների ծավալի փոքրացում, որն ուղեկցվում է նրանց ամբողջականության խախտումով և ճեղքերի առաջացումով: Կավային ապարների ծավալի փոքրացումը տեղի է ունենում մինչև նրանց խոնավության որոշակի մեծությունը, որը կոչվում է կծկման սահման: Կծկման մեծ ունակություն են դրսևորում առավել սլյաստիկ և ուռչման մեծ հակում ունեցող կավային ապարները:

УСАДКА ПРИ ПРОМЕРЗАНИИ — ԿԾԿՈՒՄ ՍԱՌՉԵԼԻՍ, կծկում, որը տեղի է ունենում ջրազուրկ ապարների սստեցման հետևանքով:

УСТАНОВИВШЕЕСЯ ДВИЖЕНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД — ՍՏՈՐԵԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑԱԾ (ՀԱՍՍԱՏՈՒՆ) ՇԱՐԺՈՒՄ, ստ. ջրերի պնային շարժում, որի բոլոր պարամետրերը (ծախար, արագությունը, ուղղությունը, ընդլայնական կտրվածքն ու ճնշումնային գրադիենտը) ժամանակի ընթացքում մնում են հաստատուն:

**УСТРАНИМАЯ ЖЕСТКОСТЬ ВОДЫ** — ՋՐԻ ՎԵՐԱՑՎՈՂ ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ,  
տե՛ս Жесткость воды:

**УСТОЙЧИВОСТЬ ОТКОСОВ И СКЛОНОВ** — ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԱՆ-  
ՋԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ժամանակի ընթացքում թեքությունների ու լանջերի  
իրենց կողապատկերը անխախտ պահելու ունակություն, որը կախված է ապար-  
ների կազմից, կառուցվածքից, խոնավությունից, լանջի թեքությունից և այլ գոր-  
ծոններից:

**УСТОЙЧИВОСТЬ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, 1. Ապարների  
քայքայման դիմադրությունը՝ ջրային հոսքերով տեղափոխման, ողողամաշման կամ  
ափաքերման (ավերախման) դեպքում: 2. Հորատանցքերում և լեռնային փորվածք-  
ներում ապարների փլուզմանը դիմադրելու հատկություն: Այն կախված է ապարների  
ֆիզմեխ. հատկություններից, կառուցվածքից ու կազմվածքից, կոտրատվածության աս-  
տիճանից, փորվածքի չամրակապված մասի չափերից ևն: 3. Հակացուրություն, որը  
հակադրվում է ապարների երկրք. հատկանիշների փոփոխականությանը:

**УСТЬЕ СКВАЖИНЫ** — ՀՈՐԱՍԱՆՑՔԻ ԲԵՐԱՆ, երկրի մակերևույթին կամ  
ստ. փորվածքի պատերին հորատանցքի հարած սկզբնամասը:

— Ф —

**ФАБРИКАЦИЯ (МАГАЗИНИРОВАНИЕ) ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՈՐԵՐ-  
ԿՐՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀԵՍԱՍՎՈՐՈՒՄ (ՖԱՐԻԿԱՑԻԱ), տե՛խ. միջոցառումների հա-  
մակարգ, որը կոչված է մթնոլորտային տեղումները և մակերևութային հոսքը կու-  
տակելու և դրանք ուղղելու ջրատար հորիզոններ՝ ստ. ջրերի ռեսուրսները ավե-  
լացնելու (պահեստավորելու) նպատակով: Միջոցառումները լինում են վերերկրյա  
(ձյունապահում, հողաբուսական ծածկի փխրեցում, վար, ակոսավորում, պատնեշ-  
ների ու պատվարների կառուցում) և ստ. (կլանող հորատանցքերի, շտրֆերի և  
լեռնային այլ փորվածքների անցում): Ժամանակակից հոմանիշ՝ ստ. ջրերի ռեսուրս-  
ների արհեստական ավելացում (պահեստավորում):

**ФАКТОРЫ ОПОЛЗАНИЯ** — ՍՈՂԱՆՔԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ, բնա-  
կան պայմաններ (գործոններ), որոնք հանգեցնում են սողանքի սուսչաքմանը:  
Հնացած տերմին:

**ФАЦИИ ГИДРОХИМИЧЕСКИЕ** — ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՖԱՑԻԱՆԵՐ, ըստ  
Ա. Գ. Մաքսիմովիչի (1955), վերերկրյա և ստ. ջրաբերի տեղամասեր, որոնք բնու-  
թյապարկում են ջրաքիմ. պայմանների, հատկությունների և ջրում լուծված գերիշխող  
կոլոիդների (իոնների, կոլոիդների) միատեսակությամբ: Զ. ֆ. անվանարկվում են ջրի  
քիմ. բաղադրության մեջ գերիշխող 3—4 իոնով, նրանց քանակի նվազման կար-  
գով: Օր., քլորիդային-սուլֆատային, մատրիում-մագնեզիումային ջրեր, քլորիդային,  
կալցիում-մագնեզիումային ջրեր ևն:

**ФИЗИКО-ГЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ** — ՖԻԶԻԿԱԿԱՆԲՐԱՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԳՈՐԾՆԵԹՄԱՆՆԵՐ, գործընթացներ, որոնք կատարվում են ֆիզիկատերկրք. գործոն-

ների ազդեցությամբ և հանգեցնում են երկրի մակերևույթի ռելիեֆի, երկրակեղևի կառուցվածքի և նյութական կազմի հետևողական ու օրինաչափ փոփոխությունների: Ֆ. գ-ին են դասվում. 1) մակերևութային ջրերի գործունեությունը (ողողամաշում, ափաքերում, ձորակային ցանցի ու սելավների առաջացում են), 2) մակերևութային ու ստ. ջրերի համատեղ գործունեությունը (անհնացում, նստման երկվայթներ, կարստ են), 3) ստ. ջրերի գործունեությունը (հոսագրունտների առաջացում, սուֆոզիա), 4) գրավիտացիոն ուժերի գործողությունը (սողանք, փլվածք, թափվածք), 5) հողմահարման գործունեությունը (ողողամաշում, քամահարում, տեղատարում), 6) ապարների հալչման-սառչման գործունեությունը (ջերմակարստ, սառնամանիքային ուռչում, սառցաբլուրների առաջացում են), 7) ապարների ներքին ուժերի գործողությունը (կծկում, ուռչում, փխրեցում), 8) երկրի ներքին ուժերի գործողությունը (սելավիկ երևույթներ):

**ФИЗИКО-ТЕХНИЧЕСКИЕ СВОЙСТВА ГРУНТОВ** — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գրունտների ջրային հատկություններ, որոնք գլխավորապես հանգում են նրանց խոնավատարությանը, ջրաթափանցելիությանը, մազանոթային երևույթներին և լուծելիությանը:

**ФИЗИЧЕСКИЕ СВОЙСТВА ПРИРОДНЫХ ВОД** — ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, բնական ջրերի որակը բնութագրող հատկություններ, որոնք որոշվում են օրգանոլեպտիկ եղանակով (մարդու զգայական օրգաններով) կամ պարզ սարքերի միջոցով: Բ. ջ. ֆ. հ. են համարվում ջերմաստիճանը, գույնը, համը, հոտը, վճիտությունը, խտությունը, սեղմելիությունը, մածուցիկությունը, էլեկտրահաղորդականությունը և ռադիոակտիվությունը:

**ФИЗИЧЕСКОЕ ВЫВЕТРИВАНИЕ** — ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, ապարի մասնատումը տարբեր չափի քեկորների՝ առանց նրա քիմ. բաղադրության փոփոխության: Ֆ. հ. կատարվում է. ա) ջերմաստիճանի տատանման հետևանքով, որի շեղաբլում ապարակազմող միներալների ծախսային տարբեր փոփոխությունները հանգեցնում են ճեղքերի առաջացմանը, բ) ապարի ճեղքերում և ծակոտիներում ջրի սստեցման-հալչման հետևանքով, գ) ապարի մեջ բույսերի արմատների ներդրման ու տարածման հետևանքով: Ըստ ապարի մասնատման բնույթի, տարբերում են միներալային (երբ ապարը մասնատվում է այն կազմող տարբեր միներալների) և քեկորային (երբ ապարը մասնատվում է մեխ. քեկորների՝ առանց կառուցվածքային առանձնահատկությունների խախտման) հողմահարումներ:

**ФИЗИЧЕСКОЕ ИСПАРЕНИЕ** — ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՈՒՈՐԾԻԱՅՈՒՄ, բաց ջրային տարածքից կամ գրունտային ջրերի հալելուց կատարվող գոլորշիացում, որը տեղի է ունենում գուտ ի հաշիվ ֆիզ. գործընթացների՝ առանց բույսերի ֆիզիոլոգիական մասնակցության (տրանսպիրացիայի): Տերմինն օգտագործվում է, երբ ընդհանուր գոլորշիացումից պետք է առանձնացվի տրանսպիրացիան:

**ФИКТИВНАЯ СКОРОСТЬ ДВИЖЕНИЯ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՎԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԸՍՐԺՄԱՆ ԿԵՂԾ (ԹՎԱՅՈՂ) ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, նույնն է, ինչ ծծանցման արագությունը (տե՛ս Скорость фильтрация): Սակայն իրականում ստ.

չրերը ապարների ոլոր-մոլոր ճեղքածակոտիներով շարժվելիս, ունեն շատ ավելի մեծ արագություն, որը կոչվում է շարժման (ծծանցման) իրական արագություն:

**ФИЛЬТР ЗАБИВНОЙ (ШТЕКФИЛЬТР) —** ՅՅՈՎԻ ՔԱՄԻՉ (ԾՏԵԿՅԻՏՐ), փրածայր ու ծակոտած կարճ խողովակ, որը խփելով մտցվում է ստ. լեռնային փորվածքների պատերի ու ստատտաղի ապարների մեջ՝ իրանց մեջ եղած ջուրը ցամաքեցնելու նպատակով:

**ФИЛЬТР ОБРАТНЫЙ —** ՀԵՏԱԳԱՐՉ ՔԱՄԻՉ, շշտկապված տարաբեկոր նյութերով (ավազ, մանրախիճ, կուպիճ, խճաքար, գլաքար) սարքավորվող քամիչներ, որոնք ապահովում են ջրի ազատ հոսքը դեպի ցամաքորդային, ջրհավաք և ջրհան կառույց և բեկորանյութերի չափերի ճիշտ ընտրության դեպքում (կողամաններից դեպի կառույց հատիկների ատիճանական խոշորացում) արգելակում են կողագրունտների մանր մասնիկների (փոշի, կավ) տեղատարումը (մեխ. սուֆոզիան) և ապահովում կառույցի տևական անխափան աշխատանքը: Հ. ք-ները սարքավորվում են պատվարների ստորին հատվածակողերում, ցամաքորդներում, ջրհան կառույցների շուրջ ևն:

**ФИЛЬТРАЦИОННЫЕ ВОДЫ —** ԾԾԱՆՑՄԱՆ ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք թափանցում են ապարների մեջ մանր ծակոտիներով ծծանցվելու միջոցով: Եթե ապարներում գոյություն ունեն լայն ճեղքերի խիտ ցանց կամ կարստային դատարկություններ, ապա ստ. ջրերը գրեթե առանց դիմադրության խուժում են նրանց միջով և կոչվում են հոսման (խուժման, ֆլյուրացիոն) ջրեր:

**ФИЛЬТРАЦИОННЫЕ ДЕФОРМАЦИИ —** ԾԾԱՆՑՄԱՆ ՁԵՎԱԽՍԱԽՏՈՒՄՆԵՐ (ՁԵՎԱՎՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ), ստ. ջրերի ծծանցման ժամանակ ապարների մանր մասնիկների լվացման-տեղատարման (սուֆոզիայի) հետևանքով նրանցում խոշոր դատարկությունների առաջացում և հետագա նստեցում (վերադիր ապարների ճնշման տակ կամ կառուցապատման շերտիկով), որոնք երկրի մակերևույթին առաջացնում են տարբեր ձևերի ու չափերի ձևափոխություններ (փոսորակներ, ձագարներ, ճեղքեր ևն):

**ФИЛЬТРАЦИОННЫЕ ПОТЕРИ ИЗ ВОДОХРАНИЛИЩ —** ՋՐԱՄԱՐՆԵՐԻՑ ԾԾԱՆՑՄԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, ըստ Ն. Ն. Բինդեմանի, գետի ստ. սնման մեծության տարբերությունը՝ մինչև ջրամբար կառուցելը և կառուցումից հետո: Գետափովիտներում ջրամբարներ կառուցելիս, ի դեմս պատվարի դիմհարի, հովտի հատակի ու լանջերի, ստեղծվում են ծծանցման նոր մակերեսներ, որոնցով տեղի են ունենում ջրի կորուստներ: Կախված պատվարի որակից և գետափովիտը կազմող մայրական ապարների ծծանցման հատկություններից, Ջ. կ. ծ. կ. կարող են հասնել մեծ չափերի:

**ФИЛЬТРАЦИОННЫЙ ЭФФЕКТ —** ԾԾԱՆՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ըստ Գ. Ա. Կորժինսկու, թույլ ջրաթափանց ապարների միջով լուծույթի ծծանցման ժամանակ լուծված նյութերի շարժման դանդաղումը և նստեցումը (գտումը): Ծ. ա. հետ կարող է կապված լինել լուծված բաղադրիչների դիֆերենցված նստեցումը՝

դիպպերս ապարների միջով լուծույթի ծծանցման հետևանքով, կամ երակների գալ-  
բանդներում (քաց ճեղքերում) միներալների առաջացումը՝ կողային ապարների մեջ  
լուծույթի ներծծման հետևանքով ևն: Ծ. ա. կարևոր նշանակություն ունի նաև փո-  
խակերպային ապարների և որոշ մետաղային հնքվ-երի առաջացման բացատրության  
հարցում:

**ФИЛЬТРАЦИЯ** — ԾՄԱՆՑՈՒՄ, ծանրության ուժի կամ ջրաստատիկ ճնշման  
ազդեցությամբ հեղուկի շարժումը ապարների ճեղքերում և ծակոտիներում: Մազա-  
կան ճեղքերի և ծակոտիների միջով հեղուկի ծծանցումը խիստ դժվարանում է շփման  
մակերեսի մեծության, պատերի անհարթության, հեղուկի մածուցիկության և միջ-  
մասնիկային դատարկություններում թաղանթային ու մազանոթային ջրերի առկա-  
րության հետևանքով: Այդ պատճառով դիպպերս ապարներում (կավերում) հեղուկի  
շարժում գրեթե չի կատարվում: Ավելի խոշոր (ոչ մազական) անցքերով ստ. ջրերի  
Ծ. ուսումնասիրությունը ունի կարևոր գործնական նշանակություն: Ծ. քանակական  
բնութագրումը հնարավորություն է տալիս լուծելու կիրառական ջրաերկրաբանու-  
թյան բազմաթիվ կարևոր խնդիրները: Ծ. արագությունը միշտ փոքր է հեղուկի  
շարժման իրական արագությունից: Ծ. կատարվում է գծային կամ ոչ գծային օրեն-  
քով, ընդ որում գծային օրենքը խախտվում է հեղուկի բարձր (կրիտիկական) արա-  
ցությունների դեպքում: Ծ. գծային օրենքը, որը բնորոշ է ապարների մեծամասնու-  
թյանը, սահմանված է Ռարսիի կողմից (տե՛ս Закон Дарси):

**ФИЛЬТРОВЫЕ СЕТКИ** — ՔԱՄԻՉ ՑԱՆՑԵՐ, մետաղալարից գործված կամ  
մետաղաթիթեղից դրոշմված ցանցեր, որոնք օգտագործվում են հորատանցքերի  
(ջրհորերի) քամիչ սարքերը ցանցապատելու համար: Վերջինները արտամղումների  
ժամանակ արգելում են ապարների մանր մասնիկների ներմուտքը դեպի հորատ-  
անցք: Ք. ց. պատրաստվում են անագապատ պղնձից, արույրից, ֆոսֆորիտացված  
բրոնզից, չծանգոտվող պողպատից և այլ նյութերից: Մետաղի խնայողության նկա-  
տառումներով, վերջին տարիներին Ք. ց. պատրաստվում են նկազանգվածներից,  
ապակեթելերից ևն:

**ФИЛЬТРЫ СКВАЖИН** — ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՔԱՄԻՉՆԵՐ, խողովակներից  
պատրաստված հատուկ սարքեր, որոնք կոչված են ջրատար հորիզոնի հատվա-  
ծում հորատանցքի պատերը անբակասելու (փլուզումից պաշտպանելու), ստ.  
ջրերի ներհոսքը դեպի հորատանցք ապահովելու և միաժամանակ ապարների մանր  
մասնիկների ներհոսքը կանցնելու համար: Հ. ք. բաղկացած են 3 մասից. վերին՝  
վերքամիչային խողովակ, բանվորական մաս՝ բուն քամիչ և ստորին՝ նստվածքա-  
կուտակիչ (տղմագտիչ) մաս: Հ. ք. գերազանցապես պատրաստվում են արհես-  
տական ծակոտիներով կամ ճեղքերով խողովակներից, որոնք երբեմն կահավոր-  
վում են հետադարձ քամիչով կամ պատվում են մետաղալարի գալարներով (քամիչի  
թողունակությունը և մասնիկների կանցումը կարգավորելու նպատակով): Տար-  
բերում են Հ. ք-ի հետևյալ տեսակները՝ ծակձկուն, ճեղքավոր, կարկասածողային,  
ցանցավոր, համակցված և մանրախճապի: Քամիչի տեսակն ընտրում են ջրատար  
ապարների հատիկաչափական բաղադրության համեմատ. ավելի հաճախ օգտագործ-  
վում է համակցված Հ. ք.:

**ФЛЮОРЕСЦЕНЦИЯ** — ՖԼՈՒՈՐԵՍԵՆՑԻՆ, օրգ. ներկանյութ, որը բնութագրվում է հիմնային լուծույթներում դեղնականաչ գունավորումով: Ջրաերկրաբանությունում Ֆ. օգտագործվում է ստ. ջրերի շարժման ուղղությունն ու արագությունը որոշելիս՝ որպես ցուցիչ (ինդիկատոր):

**ФЛЮОРЕСЦЕНЦИЯ** — ՖԼՈՒՈՐԵՍԵՆՑԻՅԱ, կարճատև լյումինեսցենց (լուսածորում), որը, ի տարբերություն ֆոսֆորեսցենցի, հարուցիչը վերացնելուց մետո ակրնթաթթորեն (10<sup>-8</sup>—10<sup>-9</sup> վրկ-ում) մարում է: Որպես կանոն, Ֆ. ծագում է մոլեկուլների կամ ատոմների անկաշկանդ (սպոնտան) քվանտային անցումների (գրգռված էլեկտրոնային վիճակից՝ նորմալ վիճակի) դեպքում:

**ФЛЮАЦИОННЫЕ ПОДЗЕМНЫЕ ВОДЫ** — ՀՈՍՄԱՆ (ԽՈՒԺՄԱՆ) ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ, ստ. ջրեր, որոնք գրեթե անարգել ներխուժում են լայն ճեղքերի ու կարստային դատարկությունների խիտ ցանցով պատված ապարների մեջ: Ի տարբերություն ծծանցման ջրերի, Հ. ս. ջ-ի շարժման արագությունը բազմապատիկ մեծ է և հաճախ մակերևութային հոսք է հիշեցնում:

**ФЛЮИДЫ** — ՖԼՅՈՒԻԴՆԵՐ, 1. Մագմայի հեղուկ կամ գազակերպ դյուրաշարժ բաղադրիչներ կամ երկրակեղևի մեծ խորություններում շրջանառող գազերով հարուստ լուծույթներ: Նավթային երկրաբանությունում երբեմն Ֆ-ի տակ հասկացվում է ջուր-նավթ-գազ խառնուրդը: 2. Ենթադրական հեղուկ, որով մինչև XVIII դարը բացատրվում էր ջերմության, մագնիսականության և էլեկտրականության երևույթները: 3. Ոգեհմանության (սպիրիտիզմի) ներկայացուցիչների պատկերացմամբ, մարդու կողմից ճառագայթվող ինչ-որ «հոգեկան հոսանք», որի միջոցով իբր կարելի է «զգալ» նաև բներեքի գաղտնիքները, մասնավորապես, ստ. ջրերի սովորությունը:

**ФЛЮТБЕТ** — ՖԼՅՈՒՏԲԵՏ, պատվարի որոշ կառուցվածքային տարրերի (պոնոր, ագույց, ջրծեծ, ոխաբերմա ևն) հասկացություն, որը կոչված է երկարացնել պատվարի տակով ծծանցվող ջրի ուղին և բարձրացնել կառույցի կայունությունը:

**ФОНОВЫЕ ВОДЫ** — ՖՈՆՍԱՅԻՆ ՋՐԵՐ, հանքաղաշտերում (հնքվ-երի շերտ-ջապատում) ռեզիդուալ տարածման ջրեր, որոնց քիմ. բաղադրությունում հանքամարմինների, ինչպես նաև հնքվ-երի առաջնային ու երկրորդային ցրման ազդեցությունը չի նկատվում:

**ФОНОВЫЕ ЗНАЧЕНИЯ (ВЕЛИЧИНЫ)** — ՖՈՆՍԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ (ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ), ջրերում քիմ. բաղադրատարրերի, pH-ի և Eh-ի այնպիսի պարունակություններ, որոնք հատուկ են ֆոնային ջրերին:

**ФОНТАНИРУЮЩАЯ (САМОИЗЛИВАЮЩАЯСЯ) СКВАЖИНА** — ԾԱՏՂՐՎԱՆՈՂ (ԻՆՔՆԱՅԱՅՏ) ՀՈՐԱՏԱՆՑՔ, հորատանցք, որից շատրվանելով (ինքնացալսումով) երկրի մակերևույթ է դուրս գալիս ճնշումնալից հորիզոն ջուրը (նավթը կամ գազը): Երբեմն շատրվանի բարձրությունը հասնում է տասնյակ մ-երի, իսկ եթե արտալիժող հեղուկի ջերմաստիճանը բարձր է 100°-ից (գոլորշիով հագեցած գերտաք ջրեր) կամ այն հագեցած է բարձր ճնշման գազերով (նավթի

ու գազի միախառնորդ), ապա շատրվանի բարձրությունը կարող է հասնել հարյուրավոր մ-երի: Գերտաք ջրերին բնորոշ են մերթընդմեք (բաբախումով) գործող շատրվանները (տե՛ս Գեյզեր):

ФОРМА ВЫРАЖЕНИЯ ХИМИЧЕСКОГО СОСТАВА ВОДЫ — ԶՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎ, բնական ջրի քիմ. բաղադրությունը սովորաբար արտահայտվում է 3 ձևով. 1) 1 լ ջրում լուծված բաղադրատարրերի կշռային պարունակությամբ (մգ/լ, գ/լ), 2) նույն ծավալի ջրում բաղադրատարրերի համարժեք պարունակությամբ (մգ. համ., գ. համ.) և, 3) համարժեք տոկոսային պարունակությամբ (մգ. համ. %): Բարձր հանքալուծման բնական ջրերում (ծովի ջուր, սո. աղաջրեր) հաճախ բաղադրատարրի պարունակությունը որոշվում է 1 կգ ջրում (գ/կգ): Որպեսզի մգ/լ վերածվի մգ. համ.-ի, որևէ իոնի մգ/լ քանակը բաժանվում է նրա համ. կշռի վրա: Զրի տարրալուծության արդյունքների արտահայտումը մգ. համ. %-ներով կատարվում է ջրում պարունակված իոնների համամասնությունը ճիշտ պատկերացնելու և այլ հանքալուծման ջրերի հետ համադրելու համար: Մգ. համ. %-ները հաշվարկելու համար ջրում գտնվող անիոնների մգ. համ.-ները առանձին, կատիոնները առանձին ընդունվում են 100 % և հաշվարկում են տվյալ անիոնի կամ կատիոնի %-ային պարունակությունը: Երբեմն անիոնների և կատիոնների մգ. համ.-ների գումարը ընդունվում է 50-ական %: Զրի քիմ. բաղադրությունն արտահայտվում է նաև աղերի, օքսիդ-անհիդրիտների, ստոմների և ընդհանուր հիմնալուծության (ալկալայնության) ձևերով, որոնք այժմ գործածական չեն:

ФОРМА КОНСИСТЕНЦИИ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ԿՈՆՍԻՍՏԵՆՑԻԱՅԻ (ՀԱՄԱԿԱԶՄՎԱԾՔԻ) ՁԵՎ (ՎԻՃԱԿ), ըստ Վ. Ա. Պրիկլոնսկու, կապային գրունտների մասնիկների շարժունակության ատոհման, որը որոշվում է նրանց միջև կոլոիդային ու ջրային կապերի սուկայությամբ և բնույթով: Գ. կ. ձ. պայմանավորվում է արտաքին ուժերի գործողությամբ և որոշում է գրունտի հոսունությունը:


ФОРМАЦИЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ — ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՅԻՆ, քարաբանական և ծագումնային տեսակետից միատեսակ (միևնույն կամ տարբեր հասակի) ապարների համալիր, որը բնութագրվում է սո. ջրերի կուտակման, շարժման, տեղաբաշխման և քիմ. բաղադրության կազմավորման (ձևավորման) որոշակի պայմաններով:

ФОРМАЦИЯ ГИДРОХИМИЧЕСКАЯ — ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՖՈՐՄԱՅԻՆ, ըստ Գ. Ա. Մաբախովիչի (1955), ջրաքիմ. ֆացիաներ, որոնք միավորված են ջրում լուծված գերիշխող բաղադրիչի նույնության սկզբունքով: Օր., բլորիդային ջրերի, սուլֆատային ջրերի և այլ Ձ. ֆ-ներ:

ФОРМИРОВАНИЕ ЗОН МЕРЗЛЫХ ПОРОД (КРИОЛИТОЗОН) — ՍԱՌԱՅ ԱՊԱՐՆԵՐԻ ԶՈՆԱՆԵՐԻ (ԿՐԻՈԼԻԹՈԶՈՆԱՆԵՐԻ) ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, սառած ապարների շերտավաճի ծագում, ջերմաստիճանի նվազում, հզորության ու տարածության ավելացում և ընդհատության նվազում:

ФОРМИРОВАНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД — USՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՋԵՎԱՎՈՐՈՒՄ, բնական գործընթացներ, որոնց համատեղ ներգործությամբ երկրակեղևում կուտակվում և կազմավորվում են տարատեսակ ստ. ջրեր՝ իրենց բնորոշ որակական, քանակական ցուցանիշներով (քիմ. և գազային բաղադրություն, ջերմաստիճան, շարժման արագություն ևն): Այս գործընթացները տեսական են և կապված են նստվածքառաջացման ու երկրբ. կառուցվածքների զարգացման պատմության հետ:

ФОРМУЛА КУРЛОВА — ԿՈՒՈՂՈՎԻ ԲԱՆԱՋԵՎ, բնական ջրերի քիմ. բաղադրության պատկերավոր արտահայտման եղանակ, որն առաջարկել է Մ. Գ. Կուրովը: Կ. ք. իրենից ներկայացնում է կեղծ կոտորակ, որի համարիչում մգ. համ. %-ներով ցույց են տրվում ածխածնի, իսկ հայտարարում՝ կատիոնները՝ ձախիցաջ քանակի նվազման կարգով: Բանաձևի մեջ չեն նշվում այն իոնները, որոնց պարունակությունը 10 մգ. համ. %-ից պակաս է (աճիոնների ու կատիոնների 100-ական հաշվարկային համ. %-ների դեպքում): Կոտորակից ձախ ցույց է տրվում նախ հանքայնացումը (M) գ/լ-երով, ապա այն միկրոբաղադրիչներն ու գազերը (մգ/լ), որոնք ջրին տալիս են որոշակի հատկություններ: Կոտորակից աջ ցույց են տրվում ջրի ռեակցիան (pH), աղբյուրի կամ հորատանցքի ջրի ջերմաստիճանն ու ձախար (մ<sup>3</sup>/օր-երով): Օր.,



Ջրի կազմի անվանումը տրվում է ըստ ստանձնահատուկ միկրոբաղադրիչների ու գազերի, ապա նվազման կարգով, ըստ այն աճիոնների ու կատիոնների, որոնց պարունակությունը մեծ է 25 մգ. համ. %-ից: Բերված օրինակում ջուրը բնութագրվում է որպես երկաթային, ածխաթթվային, ջրակարբոնատ-քլորիդային-նատրիումային հանքային ջուր:

ФОРМУЛА СТОКСА — USՈՔՍԻ ԲԱՆԱՋԵՎ, հեղուկում մասնիկի նստեցման

$$\text{արագության բանաձև՝ } V = K \frac{gr^2(\rho_1 - \rho)}{\mu}, \text{ որտեղ՝}$$

V-ն նստեցման արագությունն է, g-ն՝ ծանրության ուժի արագացումը, r-ը՝ մասնիկի շառավիղը,  $\rho_1$ -ը՝ մասնիկի նյութի խտությունը,  $\rho$ -ն՝ հեղուկի խտությունը,  $\mu$ -ն՝ հեղուկի մածուցիկության գործակիցը, K-ն՝ գործակից, որի մեծությունը կախված է մասնիկի ձևից և մոտավորապես հավասար է. գնդիկի համար՝ 0,222, սկավառակի համար 0,143 և թեփուկի համար՝ 0,040:

ФОРМЫ РЕЛЬЕФА ОПОЛЗНЕВЫЕ — ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՌԵԼԻԵՖԻ ՋԵՎԵՐ, սողանքների հետևանքով առաջացող ռելիեֆի ձևեր, որոնցից են. սողանքային կրկնաները, դարավանդները, աստիճանները, թմբերն ու փուները, ալիքաձև բարձրացումները, հորանջող ճեղքերը, լեզվակները ևն:

ФРАКЦИЯ ГРУНТА — ԳՐՈՒՆՏԻ ՀԱՏԻԿԱՆՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ), փուլար ապարների հատիկախումբ, որի չափերը տատանվում են որոշակի սահմաններում (տե՛ս Гранулометрический состав горных пород):

**ФРЕАТИЧЕСКИЕ ВОДЫ** — Ֆրեատիկ ջրեր, ըստ Ա. Դոբրելի (1887), ջրհո-  
րային ջրեր: Օ. Մելնցերը առաջարկել է «Ֆ. ջ.» տերմինն օգտագործել որպես  
գրունտային ջրերի միջազգային անվանում: Առավել ընդունելություն է գտել Օ. Կ.  
Լանգեի առաջարկը, ըստ որի Ֆ. ջ-ի տակ հասկացվում են այն բոլոր ստ. ջրերը,  
որոնք կարելի է շահագործել ջրհորերի միջոցով՝ անկախ նրանից, թե դրանք գրուն-  
տային կամ միջերտային, ճնշումնային են, կամ ոչ ճնշումնային:

**ФРЕАТОФИТЫ** — ԽՈՆԱՎԱՍԵՐ ԲՈՒՅՍԵՐ (Ֆրեատսֆիտեր), ըստ Օ. Մելն-  
ցերի, գրունտային ջրերի հաշվին ջրասնունն իրականացնող բույսերի էկոլոգիական  
խումբ: Խ. Բ. Իրենց հաճախ լավ զարգացած արմատների համակարգով հասնում  
են գրունտային ջրերի մակարդակին և, դրանով իսկ, ջրատերկր. որոնողական աշ-  
խատանքների ժամանակ, հատկապես անապատային գոտիներում ծառայում են որ-  
պես գրունտային ջրերի առկայության և նրանց տեղադրման խորության հուսալի  
ցուցիչ: Նախկին ԽՍՀՄ անապատային ու կիսաանապատային գոտիների համար  
Խ. Բ-ի էկոլոգիական խմբից հայտնի են շուրջ 50 բույսեր: Խ. Բ-ի զարգացման դիմաց  
մթնոլորտային տեղումների սեզոնայնության հետ կապ չունի, որի շնորհիվ նրանք  
տեղաբնիկ միջոտ աչքի են ընկնում իրենց մուգ կամ վառ կանաչ գույնով և առանձ-  
նահատուկ ձևով են արտահայտվում օդալուսանկարների վրա: Խ. Բ-ին բնորոշ է  
գոլորշիացնելու (տրանսպիրացիայի) մեծ ունակությունը, որի պատճառով նրանք  
էական ազդում են գրունտային ջրերի ռեժիմի և աղայնացման բարձրացման վրա:

**ФРОНТ ВПИТЫВАНИЯ** — Ներժմման ճակատ, գրունտի մեջ մակերևույթից  
ջրի ներծծման փաստացի սահման:

**ФРОНТ СМАЧИВАНИЯ** — Թրջման ճակատ, գրունտում սկզբնական խո-  
նավության (թրջման) առաջընթացի սահման: Առաջընթացը տեղի է ունենում  
վերևից ներքև շարժվող ջրի հրման (դուրս սեղմելու) գործողության շնորհիվ:

**ФУМАРОЛЫ** — Ֆոմարոլներ, շիթերի կամ բուլաների տեսքով հրաբխային  
տաք գազերի և ջրային գոլորշիների էլքեր՝ կապված հրաբխի մակերևույթի կամ  
դեռևս չստանալ լավային հոսքերի և ծածկոցների ճեղքերի ու անցքերի հետ: Ըստ  
տեղադրիքի և սնման օջախի, տարբերում են առաջնային (մշտական) և երկրոր-  
դային (ժամանակավոր) Ֆ.: Առաջնային Ֆ. կապված են գործող հրաբուխների հետ  
և գտնվում են խառնարանի հատակին, պատերին, ինչպես նաև հրաբխի արտաքին  
լանջերին: Երկրորդային Ֆ. դիտվում են չստանալ լավային հոսքերի, ծածկոցների  
ու կոտակների վրա: Մինչև 700° Ց ջերմության ջրային գոլորշիներին միախառնված  
Ֆ-ից դուրս են գալիս տարբեր գազեր, որոնցից առավել շատ հանդիպում են H<sub>2</sub>S,  
SO<sub>2</sub>, CO<sub>2</sub>, CO, H, O<sub>2</sub>, N<sub>2</sub>, Ar, Cl և F: Ծմբային և ծծմբաջրածնային գազերով  
հարուստ Ֆ. կոչվում են սուլֆատարներ (տե՛ս Сольфатары), իսկ ածխաթթվային  
գազերով հարուստ Ֆ.՝ մոֆետներ (տե՛ս Мофеты): Հրաբխային ջրաններում Ֆ-ի  
միջոցով երկրի մակերևույթ արտաբերվող գոլորշիների ու գազերի, դրանց հետ մեկ-  
տեղ անշատվող ջերմության ու տարբեր աղերի քանակությունը հասնում է անհեղի  
չափերի:

ФУНИКУЛЯРНАЯ ВОДА — ՖՈՒՆԿՆՈՒԼՅԱՐ ՋՈՒՐ, ըստ Ֆերսմոնսի, մազանթալին ջուր, որը մակերևութային լարվածության ուժերի շնորհիվ պահվում է ապարի առանձին հատիկների շփման տեղերում և առաջացնում է այսպես կոչված «թելանման» ջուր: Հակադրվում է պենդուլյար ջրին, որի առանձին օղակները շփման կետերի շուրջ մեկուսացված են, իրարից առանձնացված են օդով: Ա. Ֆ. Լեբելը ժխտում է բնության մեջ Ֆ. ջրերի գոյությունը: Ավելորդ տերմին:

— X —

ХАКИ — ԽԱԿԻ, կավային ապարների մակերևույթի փոստրակներում կուտակվող աղի ջրեր կամ ցեխաջրեր, որոնք առաջանում են ձնհալքի և հորդառատ անձրևների հետևանքով: Տարածված են Մերձկասպյան իջվածքում և Միջին Ասիայում (տեղական անվանում):

ХАУЗ (БАССЕЙН) — ՀԱՈՒՋ (ԱՎԱԶԱՆ), Միջին Ասիայում՝ արհեստական ջրակուտակ (ավազան), որտեղ որոշակի քանակությամբ ջուր է ամբարվում՝ ջրագծի կամ ջրանցքի խափանման դեպքում օգտագործելու համար: Հատուկների քանակն ու տարողությունը որոշվում են ելեկտրվ բնակատեղի (դաշտայանքի, անասնապահական ֆերմայի) ջրօգտագործման չափերից և ջրամատակարարման խափանման հավանականությունից ու տևողությունից:

ХВОСТЫ БОГАТИТЕЛЬНЫХ ФАБРИК — ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻ ՀԱՆՔԱՄՆԱՅՈՐԳՆԵՐ (ՀԱՆՔԱՊՈՉԵՐ), լեռնահանքային արդյունաբերության թափոններ, որոնք գերազանցապես բաղկացած են պարսպ ապարներից: Հարկ է նշել, որ «Հ. ֆ. հ.» հասկացությունը հարաբերական է. երեկվա Հ. ֆ. հ. այսօր կամ վաղը կարող են դառնալ կարևոր օգտակար հանածոներ (ապատիտային հնքվ-երի մեֆելիձը, պղինձ-կոլչերանային հնքվ-երի ծծումբը, արդյունաբերական ջրերից ստացվող որոշ բաղադրատարրեր են): Այդ կապակցությամբ Հ. ֆ. հ-ի նյութական կազմի հետազոտումը հետանկարային պոռոմով հանդիսանում է հետախուզական աշխատանքների կարևոր խնդիրներից:

ХВОСТОХРАНИЛИЩЕ — ՀԱՆՔԱՄՆԱՅՈՐԳՆԵՐԻ (ՀԱՆՔԱՊՈՉԵՐԻ) ՊԱՀԵՍԱՐԱՆ, հանքամնացորդների կուտակման և պահպանման համար հնքվ-ի շրջանի նպատակով տեղամասեր (առավելապես ուլիեֆի բացասական ձևեր՝ փոստրակներ, ձորակներ, հովիտներ), որոնք հաճախ պատնեշվում են տարբեր կառույցներով (պատվարով, հենապատով, հողաթմբով են): Բնապահպանման տեսակետից խիստ կարևոր այդ աշխատանքների ջրաերկր. և ինժեներաերկր. հիմնավորումը տրվում է հնքվ-ի հետախուզության փուլում:

ХЕМОСОРБЦИЯ — ԲԵՄՈՍՈՐԲՈՒՄ (ԲԵՄՈՎՍԱՆՈՒՄ), մի նյութի կլանումը մեկ այլ նյութի կողմից, որը տեղի է ունենում դարձելի քիմ. ռեակցիայի շնորհիվ: Բ. կլանման տեսակներից է (տե՛ս Сорбция), որի դեպքում ֆիզ. պայմանները փոփոխվելիս, մասնավորապես ջերմաստիճանը բարձրացնելիս, կլանված նյութը վերստին անջատվում է:

ХИМИЧЕСКАЯ КЛАССИФИКАЦИЯ ПРИРОДНЫХ ВОД — ԲՆԱԿԱՆ ՋՐԵ-  
ՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, տե՛ս Классификация вод по химическому  
составу:

ХИМИЧЕСКИ СВЯЗАННАЯ ВОДА — ԲԻՄԻԱՊԵՍ ԿԱՊԱԿՑՎԱԾ ՋՈՒՐ, ջուր,  
որը պարունակվում է միներալների քիմ. բաղադրակազմում (բյուրեղային ցանցում):  
Տարբերում են Ք. կ. ջ-ի հետևյալ տեսակները. 1) կառուցվածքային (կոնստիտու-  
ցիոն) — միներալների բյուրեղային ցանցում ներկայացվում է ամուր կապակցված  
 $\text{OH}^-$ ,  $\text{H}^+$  ու  $\text{H}_3\text{O}^+$  իոնների ձևով և միներալներից որոշակի քանակներով թռչքա-  
ձև անջատվում է բարձր ջերմաստիճաններում ( $300\text{--}1300^\circ \text{C}$ ) կամ միներալների  
բյուրեղային ցանցի լրիվ քայքայման դեպքում: Տիպիկ օր. կարող են ծառայել  
 $\text{Al}_2(\text{OH})_3$ ,  $\text{Ca}(\text{OH})_2$  հիդրօքսիդները, դիսպորը ( $\text{AlO}\cdot\text{OH}$ ), տոպազը ( $\text{Al}_2(\text{OH})_2\cdot$   
 $\text{SiO}_2$ ) ևն, 2) բյուրեղային (կրիստալիզացիոն) — մտնում է միներալների բյուրե-  
ղային ցանցի մեջ նվազ կապակցված առանձին մոլեկուլների կամ դրանց խմբի  
ձևով և միներալներից թռչքաձև անջատվում է ավելի ցածր ջերմաստիճաններում  
( $250\text{--}300^\circ \text{C}$ ): Առավել շատ բյուրեղային ջուր պարունակող միներալներից կարելի  
է նշել սողան՝  $\text{Na}_2\text{CO}_3\cdot 10\text{H}_2\text{O}$  (ջուրը կազմում է կշռի 63%), միրաբիլիտը՝  
 $\text{Na}_2\text{SO}_4\cdot 10\text{H}_2\text{O}$  (55,9%), բիշոֆիտը՝  $\text{MgCl}_2\cdot 6\text{H}_2\text{O}$  (53,2%), գիպսը՝  $\text{CaSO}_4\cdot 2\text{H}_2\text{O}$   
(20,9%) ևն, 3) ցեոլիտային (հիդրատային) — միներալների հետ չափազանց թույլ  
է կապակցված և նրանցից անընդմեջ անջատվում է առավել ցածր ջերմաստիճան-  
ներում ( $80\text{--}120^\circ \text{C}$ ): Ցեոլիտային ջրի քանակի փոփոխությունը միներալի բյուրե-  
ղային ցանցի կառուցվածքի վրա չի ազդում: Բնորոշ միներալ է հանդիսանում օպալը՝  
 $\text{SiO}_2\cdot n\text{H}_2\text{O}$ :

ХИМИЧЕСКИЕ (ХЕМОГЕННЫЕ) ОСАДКИ — ԲԻՄԻԱԿԱՆ (ԲԻՄԻԱԾԻՆ) ՆՍՋՎԱԾՔՆԵՐ, նստվածքներ, որոնք առաջանում են լուծույթներից՝ միջավայրի  
ջերմային փոփոխությունների պատճառով տեղի ունեցող քիմ. և կենսաքիմ. ռեակ-  
ցիաների շնորհիվ: Ք. ն-ին են պատկանում Na-ի և K-ի բրոմիդներ (հալիտ, կա-  
նալիտ, սիլվին ևն), որոշ կրաքարեր ու կալծքարային ապարներ, յուրմիտներ ևն:  
Ք. ն-ի առաջացման առավել ինտենսիվ գործընթացներ դիտվում են փակ ու կի-  
սափակ ավազաններում (հանքային լճերում, ծովալճակներում), որտեղ լուծույթ-  
ները հասնում են մեծ խտության:

ХИМИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОДЫ — ՉՐԻ ԲԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, բնական ջրում լուծված քիմ. տարրերի ու միացությունների որոշում: Ջ. բ. տ. բազ-  
մաթիվ տեսակներից ջրաերկր. աշխատանքների ժամանակ առանձնացվում է ջրի  
ընդհանուր քիմ. բաղադրության բնդհանուր բնութագիրը. ֆիզ. հատկանիշները,  
pH-ը, առավել տարածված գազերի ( $\text{CO}_2$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{O}_2$ ) քանակական պարունակու-  
թյունը, մակրոբաղադրիչների քանակը (տե՛ս Макрокомпоненты химсостава  
природных вод) և լուծված օրգ. նյութերի ընդհանուր պարունակության մտապիր  
բնութագիրը:

Պայմանականորեն առանձնացվում են ջրի ընդհանուր քիմ. տարրալուծության  
3 տիպեր. լրիվ, կրճատ և դաշտային: Առաջին 2 տիպերը կատարվում են, որպես  
կանոն, ստացիոնար լաբորատորիաներում՝ առավել ճշգրիտ ու կատարյալ մեթոդ-



չացնում է 5—10 սմ երկարության և 5—6 սմ տրամագծով փողակ (կամ ներքևի մասում բաժակաձև փորվածքով մետաղյա գլան), որի վերևում սարքված կեղևիկին (կամ օղակին) ազուցվում է մետրաչափերով նշված ճուրայն կամ պարան: Զրի մակարդակին հասնելիս Պ. հանում է բնորոշ խոլ ձայն (պլտոց):

**ХЛОРБРОМНЫЙ КОЭФИЦИЕНТ** — ՔԼՈՐԲՐՈՄԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ստ. ջրերում պարունակվող բրոմի և բրոմի կշռային քանակների (մգ/լ) հարաբերությունն արտահայտող գործակից (Cl/Br): Առաջարկված է Ա. Պ. Վինոգրադովի (1944) կողմից՝ որպես ստ. ջրերի ծագումնաբանական ցուցանիշ: Ք. գ. բնութագրում է ալվազանի ջրաերկրք. մեկուսացվածության աստիճանը, ջրադինամիկ իրադրությունը և ստ. ջրերի քիմ. բաղադրության ձևավորման պայմանները: Ծովային ջրի համար Ք. գ. հավասար է 292: Լավ մեկուսացած կառուցվածքներում, որտեղ տիրապետում են դժվար կամ չափազանց դժվար ջրափոխանակման պայմանները, բարձր հանքայնացման ջրերում տեղի է ունենում Br-ի կուտակում, որի հետևանքով Cl/Br հարաբերությունը ցածր է, քան ծովային ջրում: Բաց, լվացված ջրաերկրք. կառուցվածքներում (կամ եթե կտրվածքում առկա են աղատար նտովածքներ) Cl/Br հարաբերությունը բարձր է, քան ծովային ջրում (երբեմն տասնապատիկ անգամ): Ք. գ-ի ցածր արժեքները դիտվում են որպես երկրք. կտրվածքի հնարավոր նախագազաբերության որոնողական ցուցանիշ:

**ХЛОРИДНЫЕ ВОДЫ** — ՔԼՈՐԻԴԱՅԻՆ ԶՐԵՐ, բնական ջրեր, որոնց քիմ. բաղադրատարրերից (անիոններից) գերիշխում է բրոմ-իոնը:

**ХЛОРНЫЙ КОЭФИЦИЕНТ** — ՔԼՈՐԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑ, բնական ջրերում պարունակվող աղերի գումարային քանակի հարաբերությունը բրոմի քանակին:

**ХОЗЯЙСТВЕННО-ПИТЬЕВЫЕ ВОДЫ** — ԽՄԵԼԱԶՐԵՐ (ԽՄԵԼՈՒ ԵՎ ՏԸՆՏԵՍԱԿԱՆ ԶՐԵՐ), բնական ջրեր, որոնք օգտագործվում են խմելու և տնտ. կարիքների ջրամատակարարման համար:

## — II —

**ЦВЕТ ВОДЫ** — ԶՐԻ ԳՈՒՅՆ, ջրի ֆիզ. հատկանիշ, որը կախված է նրա քիմ. բաղադրությունից և խտնորոգների առկայությունից: Ատ. ջրերը մեծամասամբ անգույն են: Կոշտ ջրերն ունեն երկնագույն երանգ, երկաթի թերօքսիդային աղերն ու ձմբաջրածինը ջրին տալիս են կամաչավուն-կապույտ գունավորում, օրգ. հումինային միացությունները՝ դեղնավուն, միներալային կախված մասնիկները՝ սոխավուն գունավորում են: Զ. գ. որոշվում է հետևյալ կերպ. 30—40 սմ բարձրության սպակյա գլանի մեջ փորձարկվող ջուրը դիտում են վերևից և համեմատում նույնատիպ գլանում լցված թորած (ստերիլ) ջրի հետ: Որոշ գունավորումներ քանակապես որոշվում են աստիճաններով՝ լուսնուկի-կոբալտային սանդղակի օգնությամբ:

**ЦЕМЕНТАЦИЯ ГОРНЫХ ПОРОД** — ԱՊԱՐՆԵՐԻ ՑԵՄԵՆՏԱՑՈՒՄ, ճեղքավոր ու ծակոտկեն սպարների միաձուլության ու ամրության բարձրացման և ջրաթափանցելիության նվազեցման եղանակ, որն իրականացվում է հորատանցքերի համակարգի միջով նրանց մեջ ցեմենտի լուծույթ (շաղախ) ներարկելու միջոցով:

ЦЕМЕНТАЦИЯ СКВАЖИНЫ (ЦЕМЕНТАЖ, ТАМПОНАЖ) — ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՑԵՄԵՆՏԱՅՈՒՄ (ՏԱՄՊՈՆԱՅՈՒՄ), տե՛ս Тампонаж скважины:

ЦЕНТРАЛЬНАЯ СКВАЖИНА — ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ, փորձային հորատանցք, որից կատարվում են ջրի արտամղումներ, իսկ նրա շուրջ դասավորված հորատանցքերում տարվում են ջրի մակարդակի իջեցման դիտարկումներ: Հորատանցքերի նման համակցությունը կոչվում է փորձային փունջ, որում դիտողական հորատանցքերը դասավորվում են ստ. ջրերի հոսանքի և նրան խաչաձև ուղղություններով ու կոչվում են ճառագայթներ: Վերջինների քանակը լինում է 1—4, յուրաքանչյուր ճառագայթում դիտողական հորատանցքերի թիվը տատանվում է 1—3 (երբեմն ավելի) սահմաններում: Կախված փորձային տեղամասի ջրատար ապարների համասեռությունից: Եթե սուպրները համեմատաբար միատեսակ են՝ բավարարվում են մեկ կամ երկու ճառագայթով, որոնք դասավորվում են՝ մեկը հոսանքով, իսկ մյուսը խաչաձև ուղղությամբ: Ի տարբերություն դիտողական հորատանցքերի, Կ. հ. փորվում է ավելի մեծ տրամագծով, կահավորվում է քամիչով, պոմպով (կամ օդամղիչով), արտամղվող ջրի քանակի չափման տարողությամբ կամ ջրթափով, ջրհեռացման միջոցներով (խողովակաշար, ջրորդան) ևն: Հոմանիշ՝ փորձային հորատանցք:

ЦЕОЛИТНАЯ (ГИДРАТНАЯ) ВОДА — ՑԵՈԼԻԻՏԱՅԻՆ (ՀԻԴՐԱՏԱՅԻՆ) ԶՈՒՐ, իմիսպես կապակցված ջրի տեսակ (տե՛ս Химически связанная вода):

ЦИРК ОБРУШЕНИЯ — ՓԼՈՒԶՄԱՆ ԿՐԿԵՍ, փլվածքների հետևանքով զանիկող լանջերին առաջացած կրկեսի (կիսակրկեսի) տեսքով իջվածք:

ЦИРК ОПЛЫВАНИЯ — ՑԵՆՍԱՀՈՍՔԵՐԻ ԿՐԿԵՍ, ցեխահոսքերի հետևանքով լանջերին առաջացած կրկեսի (կիսակրկեսի) տեսքով փոքր իջվածք:

ЦИРКУЛЯЦИЯ ВЕРТИКАЛЬНАЯ — ՈՒՂԱԶՈՒԳ ԸՐԶԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ջրային զանգվածների ուղղաձիգ շարժումը համաշխարհային օվկիանոսում: Ըրջանառության առանձին զոնաներում շարժումը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով, օր., օվկիանոսային ջրերի խտության փոփոխությամբ, մակարդակի տատանումներով, հորիզոնական հոսանքների մերձեցմամբ (զուգամիտությամբ) ու հեռացմամբ (տարամիտությամբ) ևն:

ЦИРКУЛЯЦИЯ ПОПЕРЕЧНАЯ — ԼԱՅՆԱԿԻ ԸՐԶԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, պտտական շարժում, որը կատարվում է հեղուկի կամ գազի հոսքի լայնակի կտրվածքում: Լ. շ. գոմարվելով հոսքի հիմնական երկայնակի շարժմանը, նրան հաղորդում է պտտական բնույթ: Լ. շ. առաջանում է հոսքի ոլորաններում (ծովածքներում), ինչպես նաև Կորիոլիսի ուժի (տե՛ս Закон Бэра-Бабинне) ազդեցությամբ: Հոսանքների լայնակի բաղադրիչը շեղում է բերվածքների լայնակի կոտակման ձևերին իրենց նորմալ դիրքից, ինչպես նաև հանդիսանում է հոսանքի նկատմամբ երկայնակի ձևերի առաջացման պատճառ:

ЧАСТИЧНО СВЯЗАННЫЕ (МОЛЕКУЛЯРНЫЕ) ВОДЫ — ԹՈՒՅԼ ԿԱՊԱԿՑՎԱԾ (ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ) ՋՐԵՐ, տե՛ս Вода рыхлосвязанная:

ЧАША ОЗЕРА (ВОДОХРАНИЛИЩА) — ԼՃԻ (ՋՐԱՄԲԱՐԻ) ԹԱՍ, գոգավորության (հովտի) մաս, որը լցված է ջրով:

ЧЕТОЧНАЯ ВОДА — ՄԱՋՄՁՈՒԿԱՅԻՆ ՋՈՒՐ, ըստ Կոստովիչի, ջուր, որը գտնվում է ապարի մերթընդմերթ նեղացող ու լայնացող մազանոթներում (մազմրզուկներում) կամ պարփակված է կավային թերթիկների ծալքերում: Երբեմն Մ. ջ-երի բարձրացումը կարող է գերազանցել սովորական մազանոթային ջրերի բարձրացումը:

ЧИСЛО ПЛАСТИЧНОСТИ ГРУНТОВ — ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ԹԻՎ, կավային գրունտների պլաստիկություն վերին (հոսունության) և ստորին (զլանման) սահմանների տարբերություն (տե՛ս Пластичность глинистых пород):

— III —

ШАХТА — ՀԱՆՔԱՓՈՂ, ՀԱՆՔԱՐԱՆ, ՀԱՆՔԱՀՈՐ, 1. Հանքափող-ուղղանկյուն կամ կորավուն մեծ կտրվածքով ուղղանիգ լեռնային փորվածք, որը ծառայում է հանքափորների, հանքաքարերի, շինանյութերի ու սարքավորումների տեղափոխման, ինչպես նաև օդափոխման և ջրհեռացման համար: Որպես կանոն, Հ-ի ստորին մասում կառուցվում է զուսփօր (տե՛ս Зумпф): 2. Հանքարան-լեռնահանքային ձեռնարկության արտադրական միավոր, որի միջոցով իրականացվում է օգտակար հանածոյի արդյունահանումը: 3. Հանքահոր-հանքարանի ստ. փորվածքների համախումբ:

ШАХТНЫЕ (РУДНИЧНЫЕ) ВОДЫ — ՀԱՆՔԱՀՈՐԱՅԻՆ (ՀԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ) ՋՐԵՐ, տե՛ս Вода рудничная:

ШЛЕЙФ КОЛЛЮВИАЛЬНЫЙ — ԿՈՆՅՈՒՎԻԱԼ ՇԼԵՅՖ (ՏԱՓԱՆ, ՓԵՇԱՏՈՒՏ), լանջի ներքնամասում առաջացած կոլյուվիալ նստվածքներ, որոնք լանջն ի վեր կոնաձև վերջանում են, իսկ ստորոտում համատարած են:

ШОР (СОР) — ՇՈՒ (ԱՂՈՒՏ), Միջին Ասիայում աղուտների տեղական անվանում:

ШНЕКОВОЕ БУРЕНИЕ — ԳԱՅԼԻԿՈՆԱԶՈՂԱՅԻՆ ՊԱՐՈՒՅՐԱԶՈՂԱՅԻՆ) ՀՈՐԱՏՈՒՄ, կարճ հորատանցքերի հորատում պտտակային հորատահաստոցի միջոցով, որի մոտ սովորական հորատածողերը փոխարինված են գալլիկոնաձև (պարույրափակավար) գալարածողով: Վերջինը հորատման գործընթացում փորված ալպարը բարձրացնում է մակերևույթ՝ կատարելով փոխարկիչի դեր: Գ. հ. լայնորեն կիրառվում է ինժեներներկրը. հետազոտությունների ժամանակ, երբ ուսումնասիրվող գրունտները ներկայացված են ավազակավային և չկապակցված մանրա-

բեկոր գրունտներով, ինչպես նաև ջրակերպ: Բետազոտությունների ժամանակ, երբ գրունտային ջրերը տեղադրված են փոքր խորությունների վրա:

ШПРУДЕЛЬ — ՖՊՐՈՒԳԵԼ, գազաճնշումնային (գազագոլորչային) ջրով վերլնթաց աղբյուր, որը գործում է գազի (գազագոլորչու) ճնշման կամ ստ. ջրերում գազի լուծման շնորհիվ:

ШПУНТОВОЕ ОГРАЖДЕНИЕ — ԱԳՈՒՑԱՅԻՆ ՓԱԿՈՑ (ԱԳՈՒՑԱԾԱՐ), մետաղյա կամ փայտյա ագույցներից պատրաստված փակոց, որը արգելափակում է հիմնատակ ծառայող հոսագրունտների (ապարալողիկների) տեղաշարժը: Առանձին դեպքերում ագուցաշարեր պատրաստվում են նաև պլեքսիման պատերի առաջնամասում՝ պատերի կայունությունը մեծացնելու և ալիքի հարվածային ուժը թուլացնելու նպատակով:

ШУРФ (ДУДКА) — ՇՈՒՐՖ (ՀՈՐ, ԳՈՒԳԱ), ուղղաձիգ կամ թեք ստ. լեռնային փորվածք, որն ունի ուղղանկյուն կամ կլորավուն ոչ մեծ (1—3 մ<sup>2</sup>) հատույթ և ոչ մեծ (սովորաբար 1—5 մ) խորություն: Շ. ամփիջական էլք ունի դեպի երկրի մակերևույթ և ծառայում է օգտակար հանածոների հնքվ-երի հետախուզման, գրունտները ուսումնասիրելու, ստ. ջրերը նմուշարկելու և այլ նպատակների համար:

### — III —

ЩЕЛОЧНОСТЬ ВОДЫ — ՋՐԻ ԱԼԿԱԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ, հատկանիշ, որը պայմանավորված է ջրում թույլ թթուների, գլխավորապես ածխաթթվի անիոնների առկայությամբ: Ենթարկվելով հիդրոլիզի, այդ անիոնները առաջացնում են հիդրօքսիլ իոններ, ինչպես օր.,  $\text{CO}_3^{2-} + \text{H}_2\text{O} \rightarrow \text{HCO}_3^- + \text{OH}^-$ ,  $\text{HCO}_3^- + \text{H}_2\text{O} \rightarrow \text{H}_2\text{CO}_3 + \text{OH}^-$ :

«Ջրի ալկալայնություն» տերմինը կիրառվում է հիմնականում բնական ջրերի սանիտարահիգիենիկ ուսումնասիրությունների ժամանակ: Ջրակերպ. ծառայությունում այն գրեթե չի գործածվում:

ЩЕЛОЧНЫЕ ФУМАРОЛЫ — ՀԻՄՆԱՅԻՆ (ԱԼԿԱԼԻԱԿԱՆ) ՖՈՒՄԱՐՈՆՆԵՐ, առաջնային ֆումարոլների (տե՛ս Գումարոլ) տեսակ, որն ունի 300—400° Ց ջերմություն և ջրային գոլորչիների հետ արտաբերում է ամիակային աղերի գազ, անուշադրի, ամոնիումի սուլֆատների և ֆտորիդների սուբլիմատներ (կոշտ նյութից ստացվող գոլորչիներ):

### — Զ —

ЭВТРОФНОЕ БОЛОТО — ՑԱՇՐԱԳԻՐ (ԷՎՏՐՕՖԻԿ) ԾԱՀԻՄ, ցածրադիր անհիմ, որի սահմաններում աճած բուսականությունը գերազանցապես ստանում է միներալային (հանքային) սնում, այսինքն բույսերի արմատները խրվում են արմատական ապարների մեջ:

ЭКВИВАЛЕНТ ВЛАЖНОСТИ ПОЧВ — ՀՈՂԵՐԻ ԽՈՐԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՔԹԵՔ, ըստ Օ. Մեյնցերի, հողի (սպարի) նմուշը ցենտրիֆուգով անցկացնելուց հետո

նրա մեջ մնացած խոնավության կշռի և այդ մտուշի կշռի հարաբերությունը՝ արտահայտված %-ներով: Հ. խ. հ-ի համեմատական հումանիշ է համարվում «բաղանթային խոնավություն» հնացած տերմինը:

**ЭКВИВАЛЕНТНЫЙ ДИАМЕТР ЧАСТИЦ ПОРОДЫ** — ԱՊԱՐԻՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ ՏՐԱՄԱԳԻԾ, ուսումնասիրվող գրունտի անկանոն չափերի ու ձևերի մասնիկներին փոխարինող գնդաձև մասնիկների տրամագիծ, որոնք պատրաստված են միևնույն տեսակարար կշռի նյութից և ջրում նստում են գրունտի մասնիկների նստման արագությամբ:

**ЭКВИВАЛЕНТНЫЙ (ПРИВЕДЕННЫЙ) КОЭФФИЦИЕНТ ФИЛЬТРАЦИИ** — ՀԱՄԱՐԺԵՔԱՅԻՆ (ԲԵՐՎԱԾ) ԾԾԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ըստ Պ. Յա. Պոլոբարինովա-Կոչինսկի, ստ. ջրերի շերտայնությամբ շարժման դեպքում ջրատար շերտալամբի ծծանցման միջին գործակից: Հ. ծ. գ. ( $K_s$ ) հաշվվում է հետևյալ բանաձևով. 
$$K_s = \frac{k_1 m_1 + k_2 m_2 + \dots + k_n m_n}{m_1 + m_2 + \dots + m_n}$$
, որտեղ  $k_1 \div n$  ջրատար շերտերի ծծանցման գործակիցն է,  $m_1 \div n$ ՝ շերտերի հաստությունը:

**ЭКВИПОТЕНЦИАЛЬНАЯ ПОВЕРХНОСТЬ** — ԷԿՎԻՊՈՏԵՆՑԻԱԼ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, հատասար ճնշումների մակերևույթ, որն արտահայտվում է Էկվիպոտենցիալների՝ հոսքին ուղղահայաց գծերի միջոցով: Վերջինների պրոյեկցիան հորիզոնական հարթության վրա կոչվում է ջրալիզոնիպետր (գրունտային ջրերի համար) կամ ջրալիզոնիզներ (ճնշումային ջրերի համար):

**ЭКОЛОГИЯ** — ԷԿՈԼՈԳԻԱ, գիտություն բուսական ու կենդանական օրգանիզմների, նրանց համայնքների միջև և շրջապատող միջավայրի հետ հարաբերությունների մասին: XX դարում, բնության վրա մարդու ազդեցության ավելացմանը զուգընթաց, Է. հատուկ նշանակություն է ստացել որպես բնության ուսցիոնալ օգտագործման և պահպանության գիտական հիմք: Վերջին 2 տասնամյակում ձևավորվում է մարդու Է. կամ տցիալական Է., որն ուսումնասիրում է հատարակության և շրջապատող միջավայրի փոխհարաբերության օրինաչափությունները, ինչպես նաև բնության պահպանության գործնական պրոբլեմները, ընդգրկում է փիլիսոփայական, տնտ., աշխարհ., երկր. և այլ ասպեկտներ (օր., քաղաքի Է., տեխնաժին Է. ևն):

**ЭКСПЛУАТАЦИОННЫЕ ЗАПАСЫ ПОДЗЕМНЫХ ВОД** — ՍՏՈՐԵՐՎՐՅԱ ՋՐԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾՈՂԱԿԱՆ ՊԱԾԱՐՆԵՐ, ստ. ջրերի այն քանակը, որը կարող է ստացվել տեխնիկատնտ. տեսակետից շահավետ ջրհան կառույցներով՝ առանց վատացնելու շահագործողական ռեժիմն ու ջրերի որակը ջրհան կառույցների անորոշված ժամկետի ընթացքում:

**ЭКСПРЕСС-МЕТОД** — ԷՔՍՊՐԵՍ-ՄԵԹՈՒՐ, ուսումնասիրությունների արագացված մեթոդ, որն իրականացվում է կատարելագործված սարքերով ու միջոցներով և շատ կարճ ժամանակամիջոցում (մի քանի ժամում կամ 1 հերթափոխում) գործնական արդյունքներ է տալիս:

**ЭЛЕКТРОГИДРОДИНАМИЧЕСКАЯ АНАЛОГИЯ (ЭГДА)** — էլեկտրադինամիկական անալոգիա (հօգհ), նմանակում (համանմանություն), որը գոյություն ունի ստ. ջրերի կայունացած շարժման և էլեկտրական հոսանքի շարժման միջև, շարժումներ, որոնք բնութագրվում են նույնանման դիֆերենցիալ հավասարումներով: Այդ 2 շարժումների միջև պարզագույն ընդհանրությունը հետևյալն է. բառ Դարսիի օրենքի, գրունտային ջրերի շարժման  $V$  արագությունը ուղիղ համեմատական է  $K$  ձմանցման գործակցին և  $J$  հիդրավիկ թեքությանը՝  $V = KJ$ : Ըստ Օմի օրենքի, էլեկտրական հոսանքի  $J$  մեծությունը ուղիղ համեմատական է էլեկտրահաղորդականության  $\rho$  գործակցին և լարման  $U$  մեծությանը՝  $J = \rho U$ : Բերված նմանակումն օգտագործվել է դեռևս 1918 թ. Ն. Ն. Պավլովսկու կողմից՝ գրունտային ջրի սարքերի մի շարք խնդիրներ լուծելու համար: Ներկայումս բազմաթիվ նորագույն էլեկտրական սարքերի միջոցով մեծ հաջողությամբ մոդելացվում են ձմանցման բազմաթիվ երկչափ խնդիրներ և է.Ջ.Կ. միջոցով լուծվում ջրաերկր. տարրեր հարցեր (ջրի սարք դեպի ջրի հոսանք կառուցվում, ստ. ջրերի դիմադր, պատվարը շրջանցող ձմանցումը, ցամաքորդի հաշվարկը ևն):

**ЭЛЕКТРОДРЕНАЖ (ЭЛЕКТРООСМОТРИЧЕСКОЕ ВОДОПОНИЖЕНИЕ)** — էլեկտրաօսմոտրիկ (էլեկտրաօրենսաժ, էլեկտրաօսմոտրիկ ջրիջեցում), թույլ ջրթափանց ապարներում գրունտային ջրերի մակարդակի արհեստական իջեցում, որը կատարվում է հորատանցքերի համակարգից արտամղումները զուգորդելով էլեկտրաօսմոտրի երևույթի հետ:

**ЭЛЕКТРООСМОС** — էլեկտրաօսմոս, 1. Հեղուկի շարժումը դիաֆրագմայի (կիսաթափանց միջնորմի) միջով՝ այդ հեղուկով հաստատուն էլեկտրական հոսանք թողնելու դեպքում: 2. Ստ. ջրի շարժումը գրունտում՝ հաստատուն հոսանքի ազդեցությամբ, որը հանգեցնում է դրական էլեկտրոդի շուրջը գրունտի շրջանցմանը և բացասական էլեկտրոդի շուրջը ջրի կուտակմանը: Է-ի երևույթը ընկած է էլեկտրացամաքորդի հիմքում (տե՛ս Ջեկտրոդրենաժ), որը կիրառվում է թույլ ջրատվության բնութագրվող գրունտներում ստ. փորվածքներ, բաց հանքեր, շին. փորակներ և այլ փորվածքներ անցնելիս:

**ЭЛЕКТРОПРОВОДНОСТЬ ВОДЫ** — ջրի էլեկտրազուգորդականություն, բնական ջրի էլեկտրական հոսանք անցկացնելու ունակություն, որը պայմանավորված է հիմնականում ջրի հանքալուծումով, ինչպես նաև նրա թիմ. բաղադրությամբ և ջերմաստիճանով: էլեկտրահաղորդականության մեծությամբ կարելի է մոտավորապես դասել ջրի հանքալուծման աստիճանի մասին, քանի որ թորած ջուրը էլեկտրահաղորդ չի:

**ЭЛЕКТРОФОРЕЗ (КАТАФОРЕЗ)** — էլեկտրաֆորեզ (վասաֆորեզ), հեղուկ կամ գազային միջավայրում կախված դիսպերս մասնիկների շարժում, որը կատարվում է էլեկտրական դաշտի ազդեցությամբ: Է. դիտվում է գրունտների էլեկտրացամաքորդի ժամանակ, որի դեպքում կախված մասնիկները շարժվում են դեպի իրենց հակառակ լիցք ունեցող էլեկտրոդները:

ЭЛЕКТРОХИМИЧЕСКИЙ СПОСОБ ЗАКРЕПЛЕНИЯ ГРУНТОВ—ԳՐՈՒՆՏ-ՆԵՐՈՒ ԱՄՐԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, քիմ. և էլեկտրական մշակման միջոցով գրունտների ամրության բարձրացման եղանակ:

ЭЛИПС НАПРЯЖЕНИИ — ԱՐՈՒՄՆԵՐՈՒ ԷԼԻՊՍ, գրաֆիկ, որը հարթ խնդրի լուծման դեպքում արտահայտում է տվյալ կետում գրունտի (նյութի) լարված վիճակը:

ЭМАН — ԷՄԱՆ, բնական ջրերի ռադիոակտիվության (ռադիումի էմանացիաների) չափման միավոր, որը հավասար է  $1,10^{-10}$  կյուրի/լ կամ 0,275 Մախեի միավորի:

ЭМПИРИЧЕСКИЕ ФОРМУЛЫ ДЛЯ ОПРЕДЕЛЕНИЯ КОЭФФИЦИЕНТА ФИЛЬТРАЦИИ (Кф) — ԾԾԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿՑԻ (K<sub>φ</sub>) ՈՐՈՇՄԱՆ ՓՈՐՁԱՅԻՆ ԲԱՆԱԶՎԵՐ, ավազային գրունտների ծծանցման գործակցի որոշման բանաձևեր, որոնց հիմքում դրված է ապարների հատիկաչափական բաղադրության մասնիկների արդյունավետ կամ գործող տրամաչափի մեծությունը: Վերջինը որոշվում է լաբորատոր ուսումնասիրությունների տվյալների հիման վրա կառուցվող գրունտների հատիկաչափական բաղադրության կորի օգնությամբ (տե՛ս Кривая granulометрического состава): Ծ. գ. ո. փ. բ. կրում են մոտավոր բնույթ, քանի որ ծծանցման գործակցի մեծությունը պայմանավորված է նաև մասնիկների ձևով, դասավորությամբ և այլ գործոններով: Փորձային բանաձևերով K<sub>φ</sub>-ի որոշումը կիրառվում է ջրաերկրբ. նախնական ուսումնասիրությունների ժամանակ:

ЭНЕРГИЯ ВОЛНЫ — ԱԼԻՔՏ ԷՆԵՐԳԻԱ, ալիքի ողջ ծավալին վերագրվող մեխ. (կինետիկ և պոտենցիալ) էներգիա, որն առաջանում է ջրի (հեղուկի) տատանողական շարժումից:

ЭНЕРГИЯ ПОГЛАЩЕНИЯ — ՎԱՆՄԱՆ ԷՆԵՐԳԻԱ, ըստ Վ. Կ. Հեդրոյցի, էներգիա, որով կատիոնային փոխանակման գործընթացում տարբեր կատիոններ կլանվում և պահվում են ապարի կողմից: Եթե ապարը մշակվի մի շարք կատիոնների համարժեք քանակներ պարունակող լուծույթով, ապա նրանք կկլանվեն էսպես տարբեր քանակներով: Տարբեր կատիոնների Կ. Է. կախված է նրանց արժեքականությունից (վալենտականություն) և ատոմական կշռից, բարձր վալենտականություն և մեծ ատոմական կշիռ ունեցող կատիոններն օժտված են կլանման մեծ էներգիայով:

ЭНТРОПИЯ — ԷՆՏՐՈՊԻԱ, մեծություն, որը մոլեկուլյար-կինետիկ տեսակետից բնութագրում է մարմնի կամ համակարգի ջերմային վիճակը: Ֆիզիկայում է. դիտվում է որպես համակարգի տվյալ վիճակում գտնվելու հավանականության չափ. ինչքան մեծ է է., այնքան մեծ է համակարգի գոյության հավանականությունը: Օր., անդրում գազի հավասարաչափ տեղաբաշխման հավանականությունը ավելի մեծ է, քան նրա խտացումը անդրի մի մասում: Համապատասխանաբար նշված վիճակներից առաջինում գազի է. ավելի մեծ է, քան երկրորդում: Փայ համակարգերում տեղի ունեցող բոլոր գործընթացներում է. կամ աճում է (անդարձելի գործընթացներ) կամ մնում հաստատուն (դարձելի գործընթացներ): Է-ի հասկացությունը լայնորեն կիրառվում է ջրաերկրաբանիայում և գրունտագիտությունում:

**ЭПИОРА НАПРЯЖЕНИЯ** — ԼԱՐՈՒՄՆԵՐԻ ԷՊՅՈՒՐ, գրունտի (նյութի) լարումների որևէ հարթությանը գրաֆիկ արտահայտություն:

**ЭРЛИФТ** — ՕԳԱՄԱՐՁ (ԷՐԼԻՖՏ), սեղմված օդով գործող հարմարանք, որի օգնությամբ հորատանցքից ջուրը կամ նավթը արտանդվում է երկրի մակերևույթ: Սարքն իրենից ներկայացնում է խողովակ, որի ծայրը որոշակի չափով ընկղմվում է հորատանցքի հեղուկի սյան մեջ: Երբ նրա միջով սեղմված օդ է մղվում, հորատանցքում առաջանում է օդաֆեղուկ խտնորոդ, որը զգալիորեն թեթև լինելով հեղուկից, կտրուկ բարձրացնում է նրա մակարդակը: Արդյունքում հորատանցքից կատարվում է հեղուկի արտանդում՝ ինքնահոսի կամ շատրվանի ձևով, որը կարելի է կարգավորել տրվող օդի քանակով, խողովակի ընկղման չափով ևն: Ջրաերկրբ. հետախուզական աշխատանքների ժամանակ փորձային արտանդումների իրականացումը Օ-ի օգնությամբ տեխնիկապես հեշտ և տնտեսապես ձեռնառու եղանակ է: Ո-ի տարատեսակ է գազամբարձը (գազլիֆտը), երբ սպարների ճեղքերով ջրատար (նավթատար) հորիզոններ են մուտք գործում բնական գազերը: Հայտնի է, որ հանքային սղբյուրները հիմնականում գործում են գազամբարձի շնորհիվ:

**ЭТАЖ ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ** — ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ, ըստ Ի. Կ. Ջալցևի և Ն. Ն. Տոլստիխինի (1960), ջրաերկրբ. կտրվածքի մաս, որը համապատասխանում է կառուցվածքային հարկին: Մի շարք այլ հեղինակների կարծիքով Ջ. հ. համարժեք է «ջրատար սերիա» հասկացությանը (տե՛ս Серия водоносная):

**ЭФФЕКТ ФИЛЬТРАЦИОННЫЙ** — ԾԾԱՆՑՄԱՆ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, տե՛ս Фильтрационный эффект:

**ЭФФЕКТИВНАЯ ПОРИСТОСТЬ** — ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, «Ակտիվ ծակոտկենություն» տերմինի ավելորդ հումանիշ (տե՛ս Пористость):

**ЭФФЕКТИВНАЯ ПРОНИЦАЕМОСТЬ** — ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ԹԱՓԱՆՑՆԻԻՈՒԹՅՈՒՆ, ծակոտկեն միջավայրի թափանցելիությունը որևէ հեղուկի կամ գազի համար՝ միաժամանակ ապարում դրանց խտնորոդի (գազ-նավթ, նավթ-ջուր, գազ-նավթ-ջուր) սովորական դեպքում: Ապարի Ա. թ. որևէ հեղուկի կամ գազի համար կախված է ապարի ծակոտիների այդ հեղուկով կամ գազով հագեցվածության աստիճանից:

**ЭФФЕКТИВНЫЙ ДИАМЕТР ЧАСТИЦ** — ՀԱՏԻԿՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ՏՐԱՄԱԳԻԾ, տե՛ս Действующий диаметр частиц:

— Ю —

**ЮВЕНИЛЬНЫЕ ВОДЫ** — ԿՈՒՍԱԿԱՆ (ՅՈՒՎԵՆԻԼ) ՋՐԵՐ, ըստ Է. Ջյուսի, ստ. ջրեր, որոնք առաջանում են մեծ խորություններում ջրային գոլորշիներից և, հավանական է,  $H^+$  և  $O^{2-}$  դիսոցված առումներից: Կ. ջ. սկիզբ են առնում կամ մագմային օջախների գազագոլորշային անջատումներից, կամ խորքային սպարների քիմիապես կապակցված (կառուցվածքային, բյուրեղային և ցեոլիտային) ջրերից:

4. ջ. մարտը ձևով երկրի մակերևույթ չեն հասնում, նրանք հասցնում են միախառնըվել ծծանցման և այլ ծագման ջրերի հետ: Հումանիշ՝ առաջնային ջրեր, մագմածին ջրեր:

— Я —

ЯРУСНЫЙ ВОДОЗАБОР — ՀԱՐԿԵՐՈՒՎ ՋՐՀԱՆՆԵՐ (ՋՐՀԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ), ջրհան կառույցներ, որոնք բաղկացած են հարկերով դասավորված շահագործողական ոչ կատարյալ հորատանցքերից կամ հորատանցքերի խմբերից: Միևնույն խորության յուրաքանչյուր հորատանցք (խումբ), ջուրը արտանդում է հզոր ջրատար շերտի տարբեր խորությունից (հարկից) կամ ջրատար շերտավաճի տարբեր շերտերից և կահավորված է քամիչով միայն տվյալ ինտերվալում: Երբեմն խորը ողողամաշման խրվածքներում հզոր ջրատար հորիզոնները ունենում են տարբեր միջերի վրա տեղադրված գծային աղբյուրներ, որոնց ջրերը հավաքելու համար կապտածային կառույցները (առուներ, գետնուղիներ ևն) մուկնպես տեղադրվում են հարկերով:

ЯДРО ПЛОТИНЫ — ՊՍՎԱՍՐԻ ՄԻՋՈՒԿ, հողային պատվարների առանցքային մասում ջրաթափանց կամ նվազ ջրաթափանց գրունտներից (կավ, ավազակավ) պատրաստված միջուկ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաձյան Հ. Հ., Երկրաբանահետախուզական հորատման տեխնոլոգիական և տեխնիկական տերմինների բացատրական բառարան: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1976, 64 էջ:
2. Աղաձյան Հ. Հ., Գանջոմյան Ռ. Ա., Երկրաբանական-հետախուզական հորատման աշխատանքներ և անվտանգության տեխնիկա: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983, 224 էջ, նկարով:
3. Ավետիսյան Վ. Ա., Գավթյան Դ. Ե., Կենսաբեր ստորերկրյա ջրերը: Երևան, «Հայաստան», 1987, 141 էջ, նկարով:
4. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան: Երևան, «Լույս», 1973, 979 էջ:
5. Ժամանակակից հալոց լեզվի բացատրական բառարան (4 հատորով): Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969—80:
6. Խաչատրյան Գ. Ա., Կենսատեխնիկական տերմինների ռուս-հայերեն բացատրական բառարան: Երևան, «Հայաստան», 1985, 294 էջ:
7. Հայկական սովետական հանրագիտարան (12 հատորով): Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1974—87:
8. Ղարիբյան Ա. Ա., Ռուս-հայերեն բառարան: Երևան, «Հայաստան», 1982, 1433 էջ:
9. Մեսչյան Ս. Ռ., Գետնահողերի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Երևան, «Հայաստան», 1985, 359 էջ, նկարով:
10. Մեսչյան Ս. Ռ., Բնահողերի մեխանիկայի լաբորատոր աշխատանքներ: Երևան, «Լույս», 1971, 352 էջ, նկարով:
11. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1957:
12. Սարգսյան Հ. Հ., Երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարան: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984, 205 էջ:
13. Վարդապետյան Բ. Ս., Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզություն: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, 278 էջ, նկարով:
14. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու: Կազմող և խմբագիր Հ. Խ. Բարսեղյան: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984, 283 էջ:
15. Алексин О. А. Основы гидрохимии. М., Гидрометеонздат, 1970, 444 с. с ил.
16. Всеволожский В. А., Зекцер И. С., Фиделли И. Ф. Вопросы терминологии в области исследований подземного стока и естественных ресурсов подземных вод. Водные ресурсы, 1984, № 5, с. 151—156.
17. Гавич И. К. О некоторых понятиях и определениях в гидрогеологии. Водные ресурсы, 1984, № 5, с. 147—151.

18. Геологические тела (терминологический справочник). Под ред. Ю. А. Косыгина и др. М., Недра, 1986, 334 с.
19. Геологический словарь. Т. I и II. Изд. 2-е. М., Недра, 1973, 942 с.
20. Дзэнс-Литовский А. И., Толстихин Н. И., Подземные воды соляных месторождений. Тр. лаборатории им. Скочинского. Л., Недра, 1948, с. 8—17.
21. Емельянова Е. П., Основные закономерности оползневых процессов. М., Недра, 1972, 310 с. с ил.
22. Инструкция по применению классификации эксплуатационных запасов подземных вод к месторождениям пресных вод. М., ГКЗ СССР, 1978, 144 с.
23. Кац Д. М., Гидрогеология. М., Колос, 1969, 320 с. с ил.
24. Климентов П. П., Методика гидрогеологических исследований. М., Госгеолтехиздат, 1961, 390 с. с ил.
25. Климентов П. П., Богданов Г. Я., Общая гидрогеология. М., Недра, 1977, 357 с. с ил.
26. Колбасов О. С., Водное законодательство в СССР. М., «Юридическая литература», 1972, 216 с.
27. Коноплянцев А. А., Ковалевский В. С., Семенов С. М., Об основных понятиях в учении о режиме подземных вод. Водные ресурсы, 1984, № 5, с. 160—168.
28. Ланге О. К., Гидрогеология. М., «Высшая школа», 1969, 365 с. с ил.
29. Ланге О. К., Плотников Н. И., Научное содержание современной гидрогеологии. М., изд-во МГУ, 1980, 95 с. с ил.
30. Ломтадзе В. Д., Инженерная геология. Инженерная петрология. Л., Недра, 1970, 528 с. с ил.
31. Ломтадзе В. Д., Инженерная геология. Инженерная геодинамика. Л., Недра, 1977, 479 с. с ил.
32. Ломтадзе В. Д., Специальная инженерная геология. Л., Недра, 1978, 496 с. с ил.
33. Львович М. И., Мировые водные ресурсы и их будущее. М., «Мысль», 1974, 448 с. с ил.
34. Маккавеев А. А., Словарь по гидрогеологии и инженерной геологии. Изд. 2-е. М., Недра, 1973, 216 с. с ил.
35. Маслов Н. Н., Основы механики грунтов и инженерной геологии. М., «Высшая школа», 1968, 629 с. с ил.
36. Методическое пособие по инженерно-геологическому изучению горных пород. Т. I и II. Под ред. Е. М. Сергеева. М., 1984, 861 с. с ил.
37. Мировой водный баланс и водные ресурсы Земли. Л., Гидрометеиздат, 1974, 638 с. с ил.
38. Общее мерзлотоведение. Под ред. П. И. Мельникова и Н. И. Толстихина. Новосибирск, Наука, 1974, 231 с. с ил.
39. Овчинников А. М., Общая гидрогеология. Изд. 2-е. М., Госгеолтехиздат, 1955, 384 с. с ил.
40. Овчинников А. М., Минеральные воды. Изд. 2-е. М., Госгеолтехиздат, 1963, 376 с. с ил.
41. Овчинников А. М., Гидрогеохимия. М., Недра, 1970, 200 с. с ил.

42. **Одум Е.**, Основы экологии. М., Мир, 1975, 740 с. с ил.
43. Охрана природы. Справочник Митрюшкин К. П. и др. Изд. 2-е М., Агропромиздат, 1987, 269 с.
44. **Панюков П. Н.** Инженерная геология. М., Госгортехиздат, 1962, 343 с. с ил.
45. **Плотников Н. И.**, К вопросу о терминологии в отечественной гидрогеологии. Водные ресурсы, 1984, № 5, с. 168—172.
46. Политический словарь. М., изд-во «Советская энциклопедия», 1977, 985 с.
47. **Попов И. В.**, Инженерная геология. М., Изд-во МГУ, 1959, 510 с. с ил.
48. **Саваренский Ф. П.**, Гидрогеология. Изд. 2-е М., ГОНТИ, 1935, 336 с. с ил.
49. **Саваренский Ф. П.**, Инженерная геология. Изд. 2-е М., ГОНТИ, 1939, 488 с. с ил.
50. **Семихатов А. Н.**, Гидрогеология. М., Сельхозгиз, 1954, 328 с. с ил.
51. **Сергеев Е. М.**, Инженерная геология. М., Изд-во МГУ, 1978, 384 с. с ил.
52. **Сергеев Е. М., Голодковская Г. А.** и др. Грунтоведение. М., Изд-во МГУ, 1983, 389 с. с ил.
53. Советский энциклопедический словарь. Изд. 2-е М., Изд-во «Советская энциклопедия», 1983, 1600 с. с ил.
54. **Соколов Д. С.**, Основные условия развития карста. М., Госгеолтехиздат, 1962, 321 с. с ил.
55. **Сомервилл С. Г., Пауль М. А.**, Словарь по геотехнике. Пер. с англ. Л., Недра, 1986, 240 с. с ил.
56. Справочник гидрогеолога. Под общ. ред. М. Е. Альтовского. М., Госгеолтехиздат, 1962, 616 с. с ил.
57. Справочник по бурению скважин на воду. М., Недра, 1979, 484 с. с ил.
58. Справочник по инженерной геологии. Под редакцией В. Чуринова и др. Изд. 3-е М., Недра, 1981, 325 с. с ил.
59. Справочник по осущению горных пород. Под ред. И. К. Станченко. М., Недра, 1984, 575 с. с ил.
60. Справочное руководство гидрогеолога. Т. I и II. Изд. 3-е. Л., Недра, 1979, 952 с. с ил.
61. **Толстой М. П.**, О некоторых фундаментальных понятиях-терминах в гидрогеологии. Водные ресурсы, 1986, № 4, с. 23—31.
62. **Фролов Н. М.**, Гидрогеотермия. Изд. 2-е М., Недра, 1976, 280 с. с ил.
63. **Фролов Н. М.**, Основы гидрогеологической стратификации. Изд. АН СССР. Сер. геол., 1981, № 11, с. 9—20.
64. **Фролов Н. М., Язвин Л. С.**, Основные термины и определения в области изучения ресурсов и запасов подземных вод. Водные ресурсы, 1984, № 5, с. 142—147.
65. **Цытович Н. А.**, Механика грунтов. М., Стройиздат, 1963, 636 с. с ил.
66. **Чаповский Е. Г.**, Лабораторные работы по грунтоведению и механике грунтов. М., Недра, 1975, 304 с. с ил.
67. **Чебогарев А. И.**, Гидрологический словарь. Изд. 3-е. Л., Гидрометеоиздат, 1978, 308 с. с ил.
68. **Шестаков В. М.**, Вопросы терминологии в гидрогеодинамике. Водные ресурсы, 1984, № 5, с. 156—160.

## ՀԱՅԵՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՑՄՆԿ

— Ա —

- Արլլացիա 7  
 Ազրեզատներ հողային 8  
 Ազրեսիվ ամխաթթու 8, 296  
 Ազուցային փակոց (ազուցաշար) 317  
 Ազատ մակերևույթով (հազկով) ջուր 45  
 — » — ջրային մակերևույթի գիծ 159  
 — » — ջրափոխանակման զոնա 129  
 — » — ջրափոխանակություն 51  
 — » — ջուր 44  
 Ազատված ջուր (ջրեր) 40, 225  
 Ազդեցության մարզ 214  
 Ազոնայական ջուր (ջրեր) 9, 34  
 Ազնիվ գազեր 21  
 Ազոտային ջրեր 9  
 Աերոզոլեր 16  
 Ալեքսանդրյան պատեր 57  
 Ալեհատ (ալեհերձ) 24, 57  
 Ալիքի էներգիա 320  
 Անխաթթվային ջրեր 297  
 — » — և ծծմբաթթվային հողմանա-  
 րում 296  
 — » — ֆունարոլներ (մոֆետներ) 297  
 Անխացում (կարբոնացում) 146  
 Անանցյալ (դերիվատային) աղբյուր 106  
 Ակնարկային ջրաերկրաբանական բար-  
 տեզ 214  
 Ակնթարթային բեռնվածք 192  
 Ակոս 185  
 Ակտիվ ծակոտկենություն 9  
 — » — ջրափոխանակման զոնա 124  
 Ակտիվության տեսություն 288  
 Ակրատոթերմեր 9  
 Ակրատոպեգեր 9  
 Աղագոյացում (աղառաջացում) 66  
 Աղազերծում (աղանորսացում) 264  
 Աղախոնավատեր բույսեր 66  
 Աղածին սալարներ (հալոհյներ) 66  
 Աղախում ջուր 45  
 Աղային գործակիցներ 278  
 — » — չորայնություն 122  
 — » — պատուհաններ 280  
 Աղանատեցում 271  
 Աղաշափ 278  
 Աղաշրեր 264  
 Աղաշրերի փոխակերպման գործա-  
 կից 172  
 Աղասեր բույսեր 66  
 Աղափառ (աղային չորույթ) 62, 92  
 Աղբյուր (ակունք) 142, 163, 270  
 Աղբյուրի զվիկի (գրիֆոն) 90  
 — » — ջրատատության գործակից 90  
 Աղբյուրների անճնագրերի կազմում 231  
 — » — գիծ 189  
 — » — դասակարգում 153  
 — » — մտվածքներ 227  
 Աղերի դիֆուզիոն տեղաշարժ 110  
 Աղի ջուր 45  
 Աղուտ 279  
 Աղուտներ (աղուտահողեր) 122, 279  
 Աղբատացում 263  
 Ամրության սահման 251  
 Ամուր կապակցված (հիգրոսկոպիկ)  
 ջուր 259  
 — » — կապված ջուր 43  
 Ամֆոտերություն 11  
 Ամաէրոք (օղագուրկ) գործընթաց 12  
 Ամբավարար խոնավացման զոնա 127  
 Անկայուն խոնավացման զոնա 128  
 Անկյունային (ծալրակցվածքային)  
 ջրեր 297

Անհամաստեղության գործակից 173  
Անհամաստեղակ (անիզոտրոպ) ա-  
պար 12

- Անհավասարաչափ նստում 210
- Անձրևաչառ (սլյուվիալ) մարզ 237
- Անճճշում (ճնշումագրով) ջուր 20, 34
- Անճարծ (կանգուն) ջրերի զոնա 126
- » — » — տորերկրյա ջրեր 209
- Անասնմանափակ շերտ 234
- Անտատային զոնա 187
- Անտատուտ (անտատաճահնուտ) 246
- Անցումային (միջանկյալ) գոտու  
ջրեր 55
- Անցքափցանում (կոմաստացիա) 164
- Աշխարհագրական (լանդշաֆտային)  
զոնաներ 132
- Աշքաչափական դիտումներ 29
- Ապակլանում 107
- Ապահովվածության կոր 180
- Ապատածային ապարներ 274
- Ապարախյուս 259
- Ապարի ակտիվ ճնշում 9
- » — ամրության գործակից 172
- » — առավելագույն ներծոծ խոնա-  
վություն 191
- » — բեռնաթափում 262
- » — բնական խոնավություն 113
- » — թուլացում (խարկվում) 264
- » — ժամանակավոր դիմադրություն  
59
- » — լրիվ խոնավատարություն 243
- » — (գրունտի) խոնավություն 32
- » — ծավալային ձևախախտում 216
- » — կազմվածք (տեքստուրա) 287
- » — կառուցվածք 283
- » — հարաբերական դիմադրություն  
228
- » — ձևախախտում քայքայման դեպ-  
քում 108
- » — մասնիկների համարժեք տրա-  
մագիծ 318
- » — ներքին կապեր 32
- » — ջրահագեցում 208
- » — ջրատարություն 51
- » — ուղշում 60
- » — փխրեցում 263

- Ապարների (գրունտների) ամրացում  
119
- » — ամրություն 178, 259
- » — անհամաստե ջրատարություն  
209
- » — ապահուստման զոնա 129
- » — առավելագույն ջրապահման ըն-  
դունակություն 191
- » — գազաթափանցելիություն 65
- » — գերխիտ վիճակ 233
- » — գրավիտացիոն խտացում (ամ-  
րացում) 92
- » — երկրաբանական-ճազումնաբա-  
նական համակարգ 164
- » — զանգված 192
- » — թափանցելիություն 256
- » — թուլացման զոնա 128
- » — ինժեներատեղրաբանական դա-  
սակարգում 135
- » — — » — խումբ 135
- » — — » — հատկություններ 136
- » — — » — տեսակ 137
- » — — » — ուսումնասիրություն-  
ներ 136
- » — իոնաաղային համալիր 140
- » — լրտացում 215
- » — խողջավորություն 143
- » — խտություն 237
- » — ծավոտկենության գործակից  
(բերված ծավոտկենություն) 174
- » — ծավոտկենություն 275
- » — ծավալային խոնավություն 216
- » — կաշունություն 303
- » — հատիկային կազմ 94, 104, 124
- » — հատիկաչափական (մեխ.) կազմ  
94
- » — ձևախախտման ունակություն  
108
- » — ձևախախտում 107, 108
- » — ճեղքավորվածություն 295
- » — մեխ. կազմ 193
- » — շեշտություն 211
- » — սրկանետում 283
- » — ջրային հատկություններ 48
- » — (գրունտների) ստուցում 119
- » — սեզոնային ստուցման զոնա 129

— » — սիլիկատացում 273  
 — » — տարրալուծում 63  
 — » — տեղաշարժում 272  
 — » — տեսակարար ծակոտկենություն 298  
 — » — — — էլեկտրական դիմադրություն 298  
 — » — ցեմենտացում 314  
 Ապարներում սկզբնային դատարկություններ 233  
 Առաձգական ձևախախտում 300  
 — » — պաշարներ 301  
 — » — ռեժիմ 301  
 — » — սեղմում 307  
 Առաձգականություն սահման 251  
 Առատառղ 184  
 Առավելագույն մագնիսային բարձրացում 191  
 — » — մոլեկուլային խոնավատարություն 31  
 Առողջարանների լեռնաանիտարական արհեստանոցներ 91  
 Առվափոս (խրամուղի) 294  
 Ասեկվենտ սողանք 219  
 Ասեղնաքամիչ 132  
 Ատուղային ջուր 39  
 Ավազային հատիկախումբ (ֆրակցիա) 234  
 Ավազան 19  
 Ավազի խտության գործակից (հարաբերական խտություն) 173  
 Ավազների խտացման ունակություն 300  
 Ավանդելտա 8  
 Արդյունաբերական հոսքաջրեր 256  
 — » — հոսքաջրերի թաղում 123  
 — » — ջուր 43  
 — » — ջրերի քարտեզ 149  
 — » — ստորերկրյա ջրեր 255  
 Արդյունավետ թափանցելիություն 256, 321  
 — » — ծակոտկենություն 321  
 Արմատային ջրեր 168  
 Արմատական աղ 168  
 Արտախողովակային ճնշում 102  
 Արտահոսային (արտաբերման) կոն 167  
 Արտամղման ժամանակ փոխազդող

հորերի ազդեցության գործակից 169  
 — » — ժամանակակից օգտակար գործողության շտապիղ 262  
 Արտատեղման թումբ 26  
 Արտատեղմում 61  
 Արտեզյան ավազան 14, 19  
 — » — լանջ 14  
 — » — մակերևույթ 239  
 — » — ջրատար հորիզոն 14  
 — » — ջրերի քիմ. բաղադրության գոնակականություն 130  
 — » — ջրհոր 14  
 — » — ջուր 14, 34  
 Ափաբերում 7  
 Ափերի վերամշակում 233  
 Ափսեսան փոտրակներ 21

— Բ —

Բարախյուն (ինտերմիտենցիա) 138  
 Բազմամարկ սղանքներ 202  
 Բազմամյա սառած ապարների զոնա 127  
 — » — սառցույթ 28  
 Բալաստային (վերնալիցքի) տաշտակ 18  
 Բաշխված բեռնվածք 264  
 Բաց ծակոտկենություն 227  
 Բացարձակ երկրաժամանակագրություն 75  
 — » — (ֆիզ.) թափանցելիություն 8, 256  
 Բեռնաթափման կոր 180  
 Բեռնվածքից նստման կախվածության կոր 179  
 Բեր-Բարինի օրենք 117  
 Բերված ազդեցության շտապիղ 253  
 — » — ծակոտկենություն 253  
 — » — շերտային ճնշումներ 253  
 Բիտումատար ապարներ 21  
 Բիտումացում 21  
 Բլթթացող (թշշացող, շտաշող) աղբյուրներ 259  
 Բյուրեղահիդրատներ 181  
 Բյուրեղային ջուր 39  
 Բյուրեղացման կապեր 181  
 — » — ջուր 181

Բնասղաշոր 264  
 Բնական գազեր 65, 114  
 — » — գազերի դասակարգում 162  
 — » — զոնայականություն 118  
 — » — թեքության անկյուն 298  
 — » — թեքություն 227  
 — » — ծծանցում 113  
 — » — հորաններ (հանքափողեր) 114  
 — » — ջրանցումնային համակարգ 274  
 — » — ջրաքիմիական դաշտ 114  
 — » — ջրեր 254  
 — » — ջրերի դասակարգում ըստ վեր-  
 նադակու 162  
 — » — — » — համարակազում 212  
 — » — — » — միկրոտարրեր 200  
 — » — » — » — ադիոակտիվություն 261  
 — » — — » — վիճակը բնութագրող  
 ցուցանիշներ 244  
 — » — — » — բիմ. բաղադրության  
 բաղկացուցիչներ 165  
 — » — — » — — » — մակրո-  
 բաղադրիչներ 191  
 — » — — » — — » — միկրո-  
 բաղադրիչներ 199  
 — » — — » — — » — միկրո-  
 բաղադրիչների կուտակում 168  
 — » — — » — — » — դասակարգում 312  
 — » — — » — — » — ֆիզ. հատկու-  
 թյուններ 304  
 — » — ջրերում տեղագաղթի գործա-  
 կից 173  
 — » — ստորերկրյա հոսքի ծախս (ար-  
 տադրողականություն) 255, 265  
 Բոմեի աստիճաններ 23, 93  
 Բորաթթվային ջուր 35  
 Բորային (բորակիր) ջրեր 23, 35  
 Բորաջուր 35  
 Բրածո (քարացած) ջուր 38  
 Բրոմային ջուր 35  
 Բրոմաջուր 35  
 Բուզում 23  
 Բուծիչ ջրեր 187  
 — » — ցեխեր 187  
 Բուլլալ 23  
 Բուլլոնյախներ 23  
 Բուլլների ցուցիչ դեր 134

Բուսազուրկ զոնա 90  
 Բուսահողերի հոսք 293  
 Բուրկուտ 25

— Գ —

Գաբիոն 63  
 Գազադիմամիկա 64  
 Գազազրկում (գազանջատում) 105  
 Գազանջումնային ջրեր 65  
 — » — ռեժիմ 65  
 Գազամբարձ (գազլիֆտ) 64  
 Գազային աղբյուր (էլք) 64  
 — » — գլխարկ 64  
 — » — գործոն 64  
 — » — կոնտակտ 64  
 — » — հանույթ 64  
 — » — ճնշում 64  
 — » — շատրվան 65  
 Գազաջրային կոնտակտ 64  
 Գազերի բրիզանտային գործունեու-  
 թյուն 23  
 — » — տեղագաղթ ստորերկրյա ջրե-  
 րում 198, 199  
 Գազի էլք 62  
 — » — ճնշում 102  
 Գայլիկոնաձողային (պարույրաձողային)  
 հորատում 316  
 Գաջ 64  
 Գելզեր (ցայտաշերտուկ) 64  
 Գելզերային գոլորշիներ 64  
 Գետաբերուկային (ալյուվիալ) ջուր 34  
 Գետագալար (գետապտույտ) 192  
 Գետային ավազան 20  
 — » — հոսք 269  
 — » — ցանց 269  
 — » — ցանցի խտություն 101  
 Գետերի ստորերկրյա սնման գնահատ-  
 ման մեթոդ 195  
 Գետերի ջրագիր (հիդրոգրաֆ) 83  
 Գետնահողային լուծույթ 250  
 — » — խոնավաշափ 250  
 Գետնանցքեր (պոնորներ) 247  
 Գերխոնավատար սուլար 249  
 Գերսառը ջուր 41  
 Գերսստեցված ջուր 233

Գերտաք ջուր 41  
 Գլխույն 89  
 Գծային խոսացում 188  
 — » — (միաշափ) ծծանցման հոսք 189  
 — » — — — հոսք 249  
 Գյուղատնտեսական հողերի մեկտրա-  
 ցիա 193  
 Գոլորշամբարձ 230  
 Գոլորշիացման ունակություն 141  
 Գոլորշիացում 141  
 Գործող ջրաստատիկ ճնշում 105  
 — » — (գործունյա) սողանք 220  
 Գործունյա շերտ 108  
 Գրամ-համարժեք 94  
 Գրամ-մոլեկուլ (գրամ-մոլ) 93  
 Գրամուլա 94  
 Գրափոսացիոն երևույթներ 93  
 — » — ուժին 93  
 — » — շարժումներ (տեղաշարժեր) 92  
 — » <sup>2</sup> ստորերկրյա ջրերի կուտակում-  
 ների դասակարգում 162  
 — » — — » — ջուր 37  
 Գրաֆիկ-եռանկյունի 96  
 — » — քառակուսի 96  
 Գրունտ 98  
 Գրունտագիտություն 99  
 Գրունտահան 100  
 Գրունտային աղաջրեր 99  
 — » — ավազան 99  
 — » — զանգված 98, 192  
 — » — հոսքի ստորին ջրածանային  
 կետ 211  
 — » — ջրերի ազատ մակերևույթ 123  
 — » — — » — անկման կոր 180  
 — » — — » — ակտիվ պաշարներ 120  
 — » — — » — ավազան 19  
 — » — — » — դիմադրի կոր 180  
 — » — — » — զոնայականություն 130  
 — » — — » — հալելի 123  
 — » — — » — հարթ (երկրաչափ)  
 հոսք 236  
 — » — — » — մակարդակի կրիտիկա-  
 կան խորություն 182  
 — » — — » — քիմ. բաղադրության զո-  
 նայականություն 131  
 — » — ջրհոսք 99

— » — ջրհոսքի մակերևույթի թեքու-  
 թյուն 299  
 — » — ջրհոր 99  
 — » — ջուր (ջրեր) 37, 99  
 — » — (գետնահողային) բարունգ 148  
 Գրունտի առաձգականության մոդուլ  
 203  
 — » — առավելագույն մոլեկուլային խո-  
 նավատարություն 191  
 — » — բերված օդահագեցվածություն  
 253  
 — » — դիմադրություն 230  
 — » — եռասանցք սեղմման փորձար-  
 կում 142  
 — » — էներգետիկ կայունություն 177  
 — » — թանձրություն (կոնսիստենցիա-  
 յի) ցուցանիշ 245  
 — » — թերխիտ վիճակ 209  
 — » — լարված վիճակ 203  
 — » — խոսացման փորձարկում 142  
 — » — խոսացվածության ցուցանիշ 245  
 — » — կակոլիտիության ցուցանիշ 245  
 — » — կայունացում 231  
 — » — կարծր փուլի (կմախքի) ծա-  
 վալային կշիռ 217  
 — » — կմախք 275  
 — » — կշռային ծակոտկենության 23  
 — » — կողիդային ակտիվության ցու-  
 ցանիշ 244  
 — » — կոնսոլիդացման աստիճան 232  
 — » — կոնսիստենցիայի (համակազ-  
 մըվածքի) վիճակ 303  
 — » — կողողունակություն 210  
 — » — հաշվարկային դիմադրություն  
 265  
 — » — հատիկախումբ (ֆրակցիա) 309  
 — » — հարաբերական խոնավություն  
 227  
 — » — — » — օդահագեցվածություն  
 227  
 — » — ձգման փորձարկում 142  
 — » — ճնշում 102  
 — » — պասիվ ճնշում 231  
 — » — սեղմելիության (կոմպրեսիոն)  
 գործակից 172, 176

- » — սեղմման աստիճանի ցուցանիշ 245
- » — սողք 246
- » — տեղաշարժի (սողքի) փորձարկում 141
- » — տևական ամրություն 111
- » — ուռչման փորձարկում 141
- » — փորձարկում մողեյի վրա 141
- » — ֆիզքիմ. զգայունության ցուցանիշ 245
- Գրունտների աղյուսացում 225
- » — առաձգական հատկություններ 301
- » — բացարձակ նստում 257
- » — ինժեներական մեխորացիա 119
- » — խտացում 299
- » — կակղելիություն 262
- » — կապակցվածություն 271
- » — կոնսոլիդացում (խտացումով ամրացում) 166
- » — կաշունություն 189
- » — կրողունակության փորձարկում 141
- » — հատիկաչափական դասակարգում 153
- » — — » — կազմի աչքաչափական տարրալուծություն 29
- » — հաբաբերական նստում 257
- » — (կավերի) հոսունություն 238
- » — մեխանիկա 198
- » — մեխորացիա 193
- » — նստելու ունակություն 257
- » — պլաստիկության թիվ 316
- » — ուղղոգիական հատկություններ 268
- » — սեղմելիություն 273
- » — փափկեցում 263
- » — ֆիզիկատեխնիկական հատկություններ 304
- Գունարային (համախառն) գոլորշիացում 285

— Դ —

- Գաշտային լարորատորիաներ 245
- Դառնամասն աղբյուրներ 92

- Դարսիի օրենքը 103, 118
- Դելիներ 106
- Դեյլապիվ սողանք 220
- Դելտա 106
- Դետրուզիվ սողանք 220
- Դերիվացիոն ջրանցք 106
- Դժվար շրջանառության զոնա 127
- » — ջրափոխանակման զոնա 127
- » — ջրափոխանակություն 51
- Դինմարային աղբյուրներ 19, 242
- Դինամիկ դիմադրություն 110
- » — ծակոտկենություն 248
- Դիստրիբյուցիոն (կարստային) դատարկություններ 110
- Դիսպերս միջավայր 110
- Դիտողական հոր 164
- » — հորատանցք 206
- » — հորատանցքերի ցանց 273
- » — ջրհոր 277
- Դիֆերենցիալ ճնշում 110
- Դիֆուզաթաղանթային տեղազաղթ (միգրացիա) 111
- Դիֆուզային պատյանների ջուր 37
- Դիֆուզիա 111
- Դիֆուզիոն-աղտորրցիոն ակտիվություն 10
- Դոլոմիտացում 112

— Ե —

- Եզրագծային ջուր 167
- Եզրային (սահմանային) պայմաններ 178
- » — տարբերությունների մեթոդ 196
- Ենթատաղային ջուր (ջրեր) 42, 242
- Ենթալճային ջրեր 241
- Ենթաբոլային ջուր 42
- Ենթահունային ջուր (ջրեր) 42, 242
- Ենթաստացաբերուկային ջուր (ջրեր) 42, 241
- Ենթաստացութային ջուր (ջրեր) 42, 241
- Եռանկյան մեթոդ 196
- Երակային աղբյուրներ 116
- » — ջուր (ջրեր) 37, 116
- Երթուղային հանույթ 192

- Երկաթային մանրէներ 114  
 — » — ջուր (ջրեր) 37, 114  
 Երկհեղուկային հոսք 104  
 Երկնային ջրեր 195  
 Երկչափ հոսք 104  
 Երկտակ (երկանդամ) շերտ 104  
 Երկրաբանական գործընթացներ 70  
 — » — — » — ջրաներկրաբանական  
 հանույթ 71  
 Երկրադինամիկ զոնա 69  
 Երկրափոթերմիկ մակերևույթ 69  
 — » — քարտեզ 69  
 Երկրակեղևի կալում տարեկան ջեր-  
 մության զոնա 129  
 Երկրահամափորագիծ (երկրափոքրատ)  
 69  
 Երկրահամաշերմագիծ (երկրափոթերմ)  
 69  
 Երկրաշերմային աստիճան 284  
 Երկրաստացաբանական ֆորմացիա 69  
 Երկրաստացաբանություն 70  
 Երկրատեխնիկա 73  
 Երկրատեխնոլոգիա 74  
 Երկրաքիմիական արգելք 75  
 — » — տեղագաղթ 199  
 Երկրորդական դատարկություններ 60  
 — » — միներալներ 60  
 — » — ֆունարոլներ 60

— Ձ —

- Ձանգվածաճեղքային ջուր 39  
 Ձուլեր (կոլոիդ լուծույթներ) 124  
 Ձոնա (երկրաշերտ, գոտի) 124  
 Ձոնալսական ջուր 38  
 Ձոնդավորում 131  
 Ձումփֆ (հորանատակի ջրափոս) 132

— Է —

- Էլեկտրական դիմադրության ջերմա-  
 չափ 291  
 Էլեկտրաջրադինամիկական նմանակում  
 (ԷՋՌՆ) 11, 319  
 Էլեկտրացամաքորդ 319

- Էլեկտրասումա 319  
 Էլեկտրաֆորեզ 319  
 Էկոլոգիա 318  
 Էկվիպոտենցիալ մակերևույթ 318  
 Էման 320  
 Էնտրոպիա 320  
 Էքսպրես-մեթոդ 318

— Ը —

- Ըմպասարան (քյուվետ) 25  
 Ընդերքային (լեռնային) հարված 92  
 Ընդերքի պահպանություն 228  
 Ընտրովի լեկացում 132

— Թ —

- Թալվեզ 287  
 Թակիր 286  
 Թակիրային ջրեր 287  
 Թաղանթային (մոլեկուլային) խոնավա-  
 տարություն 31, 236  
 — » — (թույլ կապված) ջուր 41, 236  
 Թաղված կարստ 240  
 — » — ջուր (ջրեր) 41, 240  
 Թանձրաչափ (պենետրոմետր) 232  
 Թացույթ 205  
 Թացույթի միջակայք 255  
 Թափարգելային ճնշում 102  
 Թափոնակույտ 226  
 Թափվածքափոսքեր 225  
 Թափվածքներ 61  
 Թերությունների և լանջերի կալումու-  
 թյուն 303  
 Թթվածնային ջրեր 152  
 Թթու ջրեր 152  
 — » — ֆունարոլներ 152  
 Թմբապատում 212  
 Թորում (զտում, աղազերծում) 110  
 Թրթոսխտացում 29  
 Թրջման ճակատ 310  
 Թրջված պարագիծ 277  
 Թույլատրելի բեռնվածք 112  
 — » — լարում 112, 208  
 — » — խորություն մինչև գրունտային  
 ջրեր 112

Թույլ կապված (մոլեկուլային) ջուր  
44, 316

— Ժ —

Ժամականաւոր (սեզոնային) աղբյուր-  
ներ 60

— » — գերխոնավ հողեր 60

— » — (վերացվող) կոշտություն 59

Ժամանակից նստման կախվածության  
կոր 178

Ժել (դոնդողանման լուծույթ) 67

— Ի —

Իզոթաթեր 132

Իզոթաթեր 132

Իզոթերմեր 133

Իզոթերմիկ աղբյուր 143

— » — ջերմափոխանակության հորի-  
զոն 91

Իզոնիսպեր (իզոգծեր) 132

Իզոկլիպներ 132

Իզոմետրեր 133

Իզոտախեր 133

Իմբիբիցիոն ջրեր 133

Իմբրսիոն ուսումնասիրություններ 133

Ինդիկացիոն երկրաբուսաբանություն  
68

Ինժեներական երկրաբանություն 134

— » — երկրադինամիկա 134

Ինժեներաերկրաբանական ենթաշրջան  
137

— » — երևույթներ 137

— » — համալիր 137

— » — հանույթ 136

— » — ֆետախուզություն 262

— » — մարզ 136

— » — շրջան 137, 264

— » — շրջանացում 138

— » — տեղագնում 136

— » — տեղամասեր 137

— » — բարունգ 135

Ինտեկվենտ սողանք 220

Ինտեգրալ գրաֆիկ 138

Ինտերստիցիալ ջրեր 138

— » — սառույց 138

Ինքնակամ (անկաշկանդ) գազ 281

Ինքնաջրթափ հորատանցք 271

Իոնի ակտիվություն 10

— » — ակտիվության գործակից 169

Իոնիտներ 140

Իոններ 140

Իոնների փոխանակային կլանում 215

Իօնցնովի հորեր 222

Իջույթ (դեպրեսիա) 106

Իջույթի (դեպրեսիայի) կոր 106, 178

— » — — » — ձագար 58, 106

Իջույթային (դեպրեսիոն) մակերևույթ  
239

Իսկական հոսադրուներ (սպարա-  
լոլիկներ) 238

— Լ —

Լիմինար շարժում 186

Լայնակի շրջանառություն 315

— » — սեղմման գործակից 174

Լանդշաֆտային մեթոդներ 197

Լանջային գործընթացներ 258

Լանջի գաոիթափություն 185

— » — հատում 242

Լարվածաչափ (տեմգոմետր) 288

Լարումների շրջանաձև գրաֆիկ 185

— » — էլիպս 320

— » — էպյուր 321

Լեռնային հսկողություն 91

— » — ճնշում 91

— » — փլվածք 91

— » — փորվածքի անձնագիր 231

Լեռնապահպանության գոտի 91

Լեռկացման առոիին մակարդակ 211

Լիզիմետր 188

Լիթոկլավներ 190

Լիմանային ոռոգում 188

Լիմնիգրաֆ 188

Լճի (ջրամբարի) թաս 316

Լյուս 187

Լյուսանման սպար 188

— » — կարստ 188

Լոկալ (տեղական տարածման) ջուր 39

Լոկացող ջուր (ստորերկրյա ջրեր)

41, 234

Լողափ 238  
Լրիվ խոնավատարություն 31  
Լուծված Ելութերի հոսք 282  
Լուծույթի իոնային ուժ 139  
— » — խտություն 168

— Խ —

Խակի 311  
Խտոնածին ջրեր 277  
— » — ռեժիմ 277  
Խզումնաճեղքային ջրեր 230  
Խիտ (սլինդ) մնացորդ 237  
Խլարդային ցամաքուրդ 184  
Խմբային աղբյուր (աղբյուրախումբ)  
100  
Խմելաջրեր (խմելու և տնտ. ջրեր) 314  
Խոնավ գրունտի ծավալային կշիռ 216  
— » — (հումիդ) կլիմա 101  
— » — — » — մարզ 101  
Խոնավածուծ ջուր 36  
Խոնավածուծային խոնավատարություն  
31  
Խոնավածծություն (հիգրոսկոպիկու-  
թյուն) 76  
Խոնավաչափ (փսիխոմետր) 31, 259  
Խոնավառեր բույսեր (ֆրեատաֆիտեր)  
76, 310  
— » — կենդանիներ 76  
Խոնավատարություն 30  
— » — բացարձակ 7, 30  
Խոնավության շրջանառություն 31  
— » — սրակաս 107  
— » — տեղագաղթ ստեղծման դեպ-  
քում 198  
Խոնավություն բացարձակ 7  
Խոր ճեղք (ճեղքվածք) 117  
Խորշ (հորատախորշ) 116  
Խորքային ծախսաչափ 90  
— » — ճնշումաչափիչ (մանոմետր) 90  
— » — ողողամաշում 89  
— » — շերմաչափ 291  
— » — ջրագոլորշիներ 90  
— » — ջրեր 90  
Խտաչափ 13  
Խտաչափական մեթոդ 13

Խտացման (կոնդենսացման) հանքա-  
բանային ջրեր 165  
— » — — » — ջուր 39  
— » — — » — տեսություն 165  
— » — և ուռչման կորեր 181  
Խրոփի ճնշաչափիչ 116

— Ծ —

Ծագումնաբանական գրունտագիտու-  
թյուն 68, 99  
Ծալքեր (ծալքային ձևախախտումներ)  
275  
Ծախսաչափ 105  
Ծախսի կոր 178  
Ծածկապատող (գերխոնավացնող) ջուր  
215  
Ծածկոցաճեղքային ջուր 43  
Ծակոտինաճեղքաշերտային ջուր 43  
Ծակոտինային լուծույթ 264  
— » — ճնշման ցրում 264  
— » — ճնշում 249  
— » — ջրի ճնշում 102  
— » — ջուր 43, 249  
Զակոտինաշերտային ջուր 43  
Ծակոտիների անկյունների ջրեր 55  
Ծակոտկենություն 248  
Ծանր ջուր 46, 296  
Ծավալային խոնավություն 216  
— » — սեղմման մոդուլ 202  
Ծավալաչափի (սիկնոմետրի) մե-  
թոդ 196  
Ծմանցման անփոփոխություն 11  
— » — արագության գործակից 176  
— » — արագություն 276  
— » — արդյունավետություն 305, 321  
— » — զծային օրեկը 119, 189  
— » — գործակից 177  
— » — գործակիցի որոշման փորձային  
բանաձևեր 320  
— » — դաշտեր 247  
— » — իրական արագություն 142  
— » — ձևախախտումներ 305  
— » — ջուր (ջրեր) 46, 305  
Ծովափ (ծովնօր) 233, 253  
Ծուլ շերմաչափ 186

- Կաթիլաճեղուկային ազատ ջուր 144  
Կաթիլք (կաթոց) 144  
Կախված խոնավություն (ջուր) 30  
— » — ճահիճներ 30  
— » — նյութեր 29  
— » — ջուր 30, 35, 41, 240  
Կախույթ 29  
Կակղելիության գործակից 175  
Կալան 281  
Կալուն (Մշտական) բեռնվածք 249  
Կալունության գործակից 177  
Կապված ջուր 44, 171  
Կատեր 146  
Կատուցվածքային ամրության գործակից 176  
— » — հարկ 284  
— » — հորատում 283  
— » — (կոնստիտուցիոն) ջուր 166  
— » — սելմելիության գործակից 176  
— » — սողանք 221  
Կատուցվածքապլաստիկ սողանք 221  
Կատուցվածքների հիմնատակ 225  
— » — նստում 225  
— » — ջրաերկրաբանական փակվածության գործակից 171  
Կարգավորված ջրհոսք 266  
Կատազենեզի զոնա 127  
Կատարյալ հորատանցք (ջրհոր) 278  
Կատիոնային փոխանակում 151  
Կատիոններ 151  
Կարգավորվող խոնավություն 266  
Կարծեցյալ կալուն ռեժիմ 151  
Կարծր ապարների մեխ. ամրություն 198  
Կարտած 146  
Կարստ 146  
Կարստի ակտիվության աստիճան 282  
Կարստային աղբյուրներ 147  
— » — գոգավորություններ 59, 147  
— » — դատարկություններ 148  
— » — լերկացում (տեղատարում) 147  
— » — հոր 148  
— » — ձագար 58, 147  
» — ձևեր 148  
— » — շրջան 264  
— » — ջուր (ջրեր) 39, 147  
— » — փլուզում 254  
Կարստաձակոտիմային ջրեր 248  
Կարստաշերտային ջուր 39  
Կարստավորման գործակից 172  
Կարստավորված ապարներ 117  
Կարստի ակտիվություն 10  
— » — հիմք (բազիս) 16  
Կաղային ապարների սլաստիկություն 235  
— » — (ցեմենտային) բարձիկ 242  
— » — կախույթ (սուսպենզիա) 89  
— » — կարստ 89  
— » — միներալներ 89  
— » — նստվածքների խոտցվածություն 300  
— » — ֆրակցիա (հատիկախումբ) 89  
Կալերի ուղում 262  
Կեղծ կարստ 259  
— » — հոսագրունտներ 238  
Կենդանի նյութ 115  
Կենսատերկրացեճող 21  
Կենսատերկրաքիմիա 20  
Կենսածին ջրեր 223  
Կենսոլորտ 21  
Կենտրոնական հորատանցք 315  
Կիսաապտոսածային ապարներ 247  
Կենսաբնասաղաչրային լճեր 247  
Կիսանշումնային (մերձարտեզյան), ջրեր 247  
Կիսասահմանափակ շերտ 234  
Կիսատրոհման ժամանակաշրջան 233  
Կլանող համակարգ 240  
— » — հոր 239  
Կլանման էներգիա 320  
— » — ձագար 58  
— » — ջուր միներալներում 8  
Կլանված (սպորթցիոն) ջուր 34, 41  
Կլանում (աքտրոքցիա, սպորթցիա) 8  
Կլատուկարստ 163  
Կլիված 163  
Կծկման գործակից 177  
— » — (չորացման) ճեղքեր 295  
— » — սահման 252  
Կծկում 302  
— » — սառչելիս 302

Կյուրի 185  
 Կշռային խոնավություն 31  
 Կշռուկ 206  
 Կոագուլյացիա 163  
 Կոլի-տեստ 163  
 Կոլի-տիտր 163  
 Կոլյուվի 163  
 Կոլյուվիալ շլեյֆ (փեշատուտ) 316  
 Կոլոիդ փուլ 110  
 Կոլոիդներ 164  
 Կողային արտատեղման ճեղքեր 295  
 — » — ընդարձակման գործակից 169  
 — » — ճնշման (հրման) գործակից 169  
 — » — ճնշում 22, 101  
 — » — շփում 22  
 — » — (մերձադային) ջրեր 22, 34  
 Կոմպրեսիոն կոր 165  
 — » — փորձարկումներ 165  
 Կոնսեկվենտ աղանք 220  
 Կոնսիստենտ — » — 220  
 Կոնսոլիդացման կոր 179  
 Կոնվեկցիա 165  
 Կոշտ կապեր ապարներում 115  
 — » — հոսքի մոդուլ 203  
 Կոշտության գերմանական աստիճան 209  
 Կոտոզիոն ջրեր 168  
 Կտորման ճեղքեր 295  
 Կտրող օղակ 267  
 — » — սարք 281  
 Կրիտիկական արագություն 182  
 — » — ծակոտկենություն 182  
 — » — ճնշում 183  
 — » — ճնշումնային գրադիենտ 183  
 — » — ջերմություն (ջերմաստիճան) 182  
 Կուլյովի բանաձև 309  
 Կուսական (լուվեմիլ) ջրեր 321  
 Կուտակման քլարկ 152

— Հ —

Հաբիտուս 64  
 Հագեցած գոլորշի 208  
 — » — լուծույթ 208

Հագեցման զոնա 127  
 — » — պակաս 107, 209  
 Հագվագյուտ տարրեր 266  
 Հալչման ճառում 225  
 Հալույթ 287  
 Հակաողողամաշման միջոցառումներ 258  
 Հակասողանքային միջոցառումներ 257  
 Համածին (սինգենետիկ) ջրեր 45, 274  
 Համակենտրոնացված բեռնվածք 280  
 Համանճշումագծեր (պիեզոիզոգծեր) 260  
 Համատեսակ (իզոտրոպ) ապարներ 133  
 Համարժեքային ծծանցման գործակից 318  
 Համեմատության գերոյակյան հարթություն 212  
 Հանքահորային ջուր 47  
 Հանքամնացորդների (պոչերի) պահեստարան 311  
 Հանքային աղբյուրներ 201  
 — » — լճեր 201  
 — » — ջրեր 43, 200  
 — » — ջրերի հանքավայր 194  
 — » — — » — մարզ (նահանգ) 254  
 — » — — » — քարտեզ 149  
 — » — — » — ցեկներ 100, 201  
 Հանքավայրերի ցրման սղային հոսքեր 232, 278  
 — » — — » — սկզբնային պսակներ  
 Հանքաջուր (ջրեր) 44, 270  
 Հանքարանային մթնոլորտ 15  
 — » — ջուր (ջրեր) 44, 270, 316  
 Հանքարանի ջրատատության գործակից 170  
 Հանուկ (կեռն) 151  
 Հանքափող, հանքարան, հանքահոր 316  
 Հաշվելիշուային հավասարում 17  
 — » — մեթոդ 17  
 — » — տեղամաս (հրապարակ) 18  
 Հավասար ճնշումների մակերևույթ 239  
 Հավելյալ խոնավացման զոնա 126  
 Հատակային աղաջրեր 112  
 — » — ջուր (ջրեր) 42, 241  
 Հատակամերձ ջուր 43  
 Հատիկաչափական կազմ 280

—>— կազմի դիպագրամ 108  
 —>— —>— կոր 178  
 —>— (մեխ.) տարրալուծություն 11, 94  
 Հատիկների արդյունավետ տրամագիծ 321  
 Հարաբերական բարձր պարունակություններ 228  
 —>— գոլորշիացում 228  
 —>— ձևախախտումների լարվածաչափ 288  
 Հարակցման (շաղկապման) գործակից 177  
 Հարբած անտառ, թրամն ծառեր 183  
 Հարթ (երկչափ) հոսք 249  
 —>— ճառագայթաձև շարժում 236  
 Հարկերով ջրհաններ 322  
 Հարտացման ֆաբրիկաների պոչեր 311  
 Հատգ (ավազան) 311  
 Հափեր 66  
 Հեղեղում (նեղեղաշրթ) 229  
 Հեղուկ-կաթիլային ջուր 38  
 Հեղուկաբաշում 287  
 Հեղուկի անհավասարաչափ շարժում 103  
 —>— դինամիկ մածոցիկություն 63, 109  
 —>— լամինար շարժում 103  
 —>— կիսանջրումնային շարժում 104  
 —>— հավասարաչափ շարժում 104  
 —>— ճնշումնային շարժում 103  
 —>— մազանոթային շարժում 103  
 —>— սրբկային շարժում 30  
 —>— շիթային շարժում 104  
 —>— ոչ կայունացած շարժում 103  
 —>— սեղնելիության գործակից 176  
 Հենակետային դիտողական ցանց 222  
 Հենապատ 241  
 Հեռիքի օրենք 118  
 Հետադարձ ջուր 35  
 —>— քամիչ 305  
 Հետերոշերմային (հետերոթերմալ) ջուր 36  
 Հիդրավիկ արագություն (մեծություն) 276  
 —>— գրադիենտ 76, 90

—>— ինտեգրատոր 76  
 —>— հավելումներ (խստնորդներ) 11:  
 —>— ճնշում 76  
 —>— շառավիղ 77, 262  
 Հիդրավիկա 76  
 Հիմնային (ավալիական) ֆունարուներ 317  
 Հիմնատակի ակտիվ զոնա 9  
 Հին սողանք (սողանքներ) 111, 220  
 Հիստերեզիսի-օղակ 234  
 Հնաջրագրություն 229  
 Հնաջրաներկարաբանական քարտեզ 149  
 Հնաջրաներկարամություն 229  
 Հնաջրաքիմիա 230  
 Հնարավոր բերվածք 29  
 Հողային խոնավաչափեր 31  
 —>— ջուր (խոնավություն) 30, 43  
 —>— տաշտակ 123  
 Հողապատուելչ 103  
 Հողերի աղտոացում 122  
 —>— խոնավության համարժեք 317  
 —>— կլանման ունակություն 198  
 —>— չորացում 226  
 —>— վերամշակելիացում  
 Հողմահարման զոնա 125  
 Հողմահարում 61  
 Հոմոթերմալ ջուր 36  
 Հոսագրունտ 238  
 Հոսագրունտների ջրիկացում 262  
 Հոսանքի գծեր 189  
 —>— գծերի անփոփոխության սկզբունք 253  
 Հոսանկության ձևախախտում 108  
 Հոսունության սահման 251  
 Հոսքագործկ ավազան 20  
 —>— (պարփակ) գոգավորություն 59  
 —>— մարզ 214  
 Հոսքային ջրեր (հոսքաջրեր) 283  
 Հոսքի արագություն 276  
 —>— գործակից 176  
 —>— գրադիենտ 93  
 —>— կարգավորում 266  
 —>— կտրվածքի մակերես 237  
 —>— կենդանի ուժ 115

— » — միավոր (տեսակարար) ծախս 113

— » — մոդուլ 203

Հոր (ջրհոր) 164

Հորատախորշային ճնշում 102

Հորատանցք 25

Հորատանցքային ջրհոր 25

Հորատանցքերի կավապատում 89

— » — ջերմատիճանային հավասարակշռություն 288

— » — տորպեդահարում 294

— » — փոխազդեցություն 28, 138

Հորատանցքի ազդեցության շառավիղ 261

— » — » — զոնա 125

— » — անրակապում 216

— » — արդյունավետության գործակից 174

— » — բերան 303

— » — գլխամաս 217

— » — լվացում 255

— » — լուծարք 188

— » — մխոցահարում 271

— » — ջրհորի ծախս 255

— » — » — տեսակարար ծախս 105, 299

— » — տեսակարար ջրակլանում 298

— » — տամպոնում (ցեմենտացում) 287

— » — քամիչներ 306

Հրաբխային գագեթ 61

— » — ջուր (ջրեր) 36, 61

— » — (ֆունարոլային) ցնդանյութեր 55, 61

Հրածին ջուր 41

Հրող սողանք 293

Հումինային նյութեր 101

Հումուս բնական ջրերում 101

Հունից գուրկ ձորակներ (դեպեր) 20

Հուջիր 100

Հուսին (ձնհոսք) 186

— 9 —

Զգող լարում 265

Ջեռափոր ջրհոր 168

Ջլան խտություն 237

— » — սահման (գիծ) 278

Ջևախախտման մոդուլ 202

— Ը —

Ճահիճ 22

Ճահիճների տիպեր 293

Ճահնալյին բուսականություն 22

— » — գազ 22

— » — (պալլուստրալ) ջրեր 230

Ճահնացած հողեր 116

Ճահնացում 116

Ճահնուտ (ճախնուտ) 132

Ճառագայթային հոսք 250

— » — ջրհավաք 190

Ճեղքաերակային ջուր 46

Ճեղքածակտիճային ջուր 248, 294

Ճեղքակարստային ջուր (ջրեր) 46, 294

Ճեղքային թափանցելիություն 256

— » — ծակոտկենություն 248

— » — կուտակիչ 163

— » — ջուր (ջրեր) 46, 294

Ճեղքավորվածության գործակից 177

— » — պարամետրեր 230

Ճեղքերի լցում (սպիացում) 117

— » — խտություն 101

— » — հասակակարգ (գեներացիա) 68

— » — թափանցելիություն 256

Ճցմված ջուր 123

— » — օդ 55, 123

Ճնշման բարձրություն 62

— » — բերված բարձրություն 253

— » — իջույթ 106

— » — սկզբնական գրադիենտ 207, 209

Ճնշումնահաղորդականության գործակից 175

Ճնշումնահաղորդականություն 260

Ճնշումը հորատանցքի բերանի մոտ 162

Ճնշումնային (արտեզյան) աղբյուր 268

— » — բարձրություն 62, 207

— » — հոսք 208

— » — մակարդակ 301

— » — մակերևույթ 13, 207

— » — ոչ ճնշումնային հոսք 207

— » — (վերընթաց) ջուր 40  
 Ընշումնաչափ 260  
 Ընշումնաչափական բանաձև 18  
 — » — բարձրություն 260  
 — » — գրադիենտ 18  
 — » — թեքություն 260  
 — » — հորատանցք 260  
 — » — մակարդակ 302  
 — » — մակերևույթ 239  
 Ընշումների համեմատական հարթու-  
 թյուն 237

— Մ —

Մազական ջրեր 58  
 Մազականություն (մազական ծակոտ-  
 կենություն) 58  
 Մազանոթային բարձրացման զոնա 127  
 — » — — — — զոնայի ջրեր 54  
 — » — — — — մակարդակ 62  
 — » — բարձրացում 145  
 — » — երիզ 143  
 — » — խոնավատարություն 31, 144  
 — » — խոնավություն (ջուր) 30  
 — » — խտացում 144  
 — » — կախված խոնավություն 145  
 — » — — — — ջուր 145  
 — » — ճնշում 144  
 — » — ջրեր 39, 145  
 Մազանոթաչափիչ 144  
 Մազանոթներ (մազական ծակոտիներ)  
 144, 145  
 Մազնուկային ջուր 316  
 Մախնեի սիավոր 192  
 Մածուցիկաչափ 30  
 Մածուցիկության գործակից 171  
 » — կինեմատիկ գործակից 151  
 Մածուցիկություն (ներքին շփում) 63  
 Մականոսուկներ 208  
 Մակարդակահաղորդականության գոր-  
 ծակից 177  
 Մակերեսային տեղատարում (լեքկա-  
 ցում) 278  
 Մակերևույթային լարվածություն 238  
 — » — հոսք 239  
 — » — շփում 238

— » — ջրեր 238  
 Մակրոծակոտկենություն 191  
 Մաղալին տարրալուծություն (անալիզ)  
 274  
 Մամլաչափ 252  
 Մալրական աղաջուր 192  
 Մանրէային խտորում 12  
 Մասնիկների գործող (արդյունավետ)  
 տրամագիծ 105  
 — » — տեսակարար մակերևույթ 298  
 Մտրդու ինժեներական գործունեություն  
 134  
 Մարցիալ ջրեր 192  
 Մեզոֆիտեր 193  
 Մեթանային ջրեր 195  
 Մեխորատիվ ջրատերկրաբանություն 193  
 Մեխանիկական տարրալուծություն (ա-  
 նալիզ) 198, 274  
 — » — սուֆոզիա 198  
 Մեջքնույն զործող աղբյուրներ 233  
 Մեռած շերտ (հորիզոն) 194  
 Մետաղային հանքավալքերի ցրման  
 ջրային պսակներ 48, 88  
 Մերձաղային ջուր 40  
 Մերձարտեզյան ջուր (ջրեր) 45, 286  
 Մերձսիհնա հողաթումբ 20  
 Մերձնային աղաջուր ու ջրեր 218  
 Մերձմազանոթներ (մերձմազական ծա-  
 կոտիներ) 286  
 Մերձմակերևույթային աղբյուր 286  
 Մթնոլորտային ճնշում 101  
 — » — տեղումներ 15, 224  
 Միաձուլ ապարանուշ (մոնոլիթ) 204  
 Միացնակ արտանդում 217  
 Միատանցք սեղմում 217  
 Միահարկ աղանքներ 217  
 Միահեղուկ (համասեռ) հոսք 217  
 Միլիբար 200  
 Միկրոպենետրոմետր 200  
 Միջազգային ջրաբանական տասնամ-  
 լակ 193  
 Միջաղային ջուր 39  
 Միջանկյալ գլխավոր լարում 255  
 — » — ջուր 43  
 Միջշերտային ջուր 39

Միջառուցարկության (միջմորհնային) ջուր 39  
Միջառուցութային ջուր 39  
Միցելա 39, 202  
Մկնդեղային ջուր 40  
Մկնդեղաջուր 40  
Մյասնաբազ 205  
Մնացորդային աղաջրեր 225  
— » — ձևախախտում 225  
Մնացուկային ջուր 44  
Մողեղացման սեթոդ 196  
Մոլ (ալերալաման պատմեշ) 203  
Մոլեկուլային-մակերևութային ուժեր 203  
— » — ջուր 40, 203  
— » — ուժեր 204  
Մոխրահողեր 279  
Մոնոմորֆիզմ 204  
Մորի շրջան 184  
Մոֆետներ 205  
Մրբկային (տուրբուլենո) հոսանք 250, 295

— Յ —

Յողային ջուր 38  
Յողաջուր 38

— Ն —

Նավթաբեր շերտի հիդրատիկ ուժիմ 77  
Նավթագազաբերության ջրաերկրաբանական չափանիշներ 182  
Նավթային (գազային) շերտի ջրակալում 117, 213  
— » — ջուր (ջրեր) 40, 54, 210  
Նավթատար շերտերի եզրային ջրեր 178  
Նավթի ու գազի որոնման ցուցանիշներ 243  
Նարգան 208  
Նեխատիղմ 271  
Ներառային ջրեր 32, 35  
Ներանցման գործակից 173  
Ներեզրագծային ջրակալում 117  
Ներգոնալական ջրեր 38, 139

Ներընդունման գործակից 174  
Ներթափանցման ինտեսիվություն 138  
Ներթափանցում 232  
Ներծծման անկատ 310  
— » — մարզ 126, 215  
— » — մեթոդ 195  
— » — ջուր (ջրեր) 38, 139  
— » — տեսություն 139  
Ներծծում (ինֆիլտրացիա) 60, 139  
Ներհոսման ջուր (ջրեր) 38, 139  
Ներկանյութեր 28  
Ներմղման (ինժեկցիոն) հորատանցք 275  
Ներմղում (ներլիցք) 206  
Ներքին շփման անկյուն 297  
— » — » — գործակից 169  
— » — (ներկատուցվածքային) ջրեր 32  
Նիվալ կլիմա 210  
Նիվացիա 210  
Նիտրատային ջրեր 211  
Նմանակման մեթոդ ջրաերկրաբանությունում 195  
Նմուշ 254  
Նմուշահանիչ սարք 254  
Նմուշային արտանդում 254  
Նմուշի պարաֆինալատում 230  
Նորանառվածք 211  
Նորմալ լարում 212  
Նոսրացուցիչ-քամիչներ 26  
Նստման մոդուլ 202  
— » — չափանիշներ 182  
Նստում հալչելիս 225, 256  
Նստումներ 256  
Նստվածքակուտակման ջուր (ջրեր) 44, 55  
Նստվածքային դիֆերենցում 110  
Նվազագույն գլխավոր լարում 207

— Շ —

Շաղկապում 286  
Շատ տար (հիպերթերմալ) ջրեր 88  
Շատրվանող (ինքնացալտ) հորատանցք 307  
Շարժման ցանց 273  
Շարժում (դինամիկ) մակարդակ 109

- Ճեզիի օրենք 119
- Ճենքերի վնասվածքների դասակարգում 156
- Ճերտադատում (շերտադասավորություն) 283
- Ճերտանդրային ջուր 41
- Ճերտային ճնշում 235
- » — ջուր 41, 55
- Ճերտ-գոտի 235
- Ճերտի հիդրավիլի խզում 77
- » — տղմակալում 117
- Ճիթսպին (լամինար) հոսք 249
- Ճիթստողիչ (հոսքատողիչ) կառուցներ 283
- Ճոշափող լարում 149
- Շոռ (աղուտ) 316
- Շպրոտել 317
- Շրջանցիկ ծծանցում 216
- Շրջապատող միջավայրի կարբոնատոններություն 146
- Շրջապան խողովակաշարի ծակոտավորում 234
- Շուրֆ (հոր, դողկա) 317
- Շուրֆերում ջրիցքի մեթոդ 196

— Ո —

- Ողողակոտակում 207
- Ողողահուն (հովտահատակ) 242
- Ողողամաշման ընդհանուր հիմնամակարդակ 216
- Ողողասահք (լողատարում) 219
- Ողողատարում 263
- Ողողախոտորակ
- Ոչ կատարյալ հորատանցք (ջրհոր) 210
- Ոչ ճնշումնային ջուր 209
- Ոռոգման գործակից 172
- » — դաշտեր 247
- » — նորմա 224
- Ոռոգում (իռիգացիա) 140, 224
- Որոհողական ջրաերկրաբանական ցուցանիշներ 243
- » — ջրաքիմիական ցուցանիշներ 83, 243
- Որսիչ սուվակներ 190

- Չափազանց դժվար ջրափոխանակության զոնա 125
- » — » — ջրափոխանակություն 51
- Չեզոք լարում 209
- » — ճնշում 209
- Չկալումացած մակարդակ 210, 302
- Չոր մնացորդ 286
- » — սառածություն 286
- » — (բարձրերևաստիճանային) ֆոնտարոլներ 286
- Չորային (արիդ) մարզ 13
- Չորսերներ (բարոֆիտեր) 185
- Չորացման դեպքում ագրեգատացման ցուցանիշ 244
- » — ձագար 58
- » — նորմ 211
- Չսառչող ջուր 40

— Պ —

- Պալլուտորսզ (ճահճային) ջուր 41
- Պատվարային (դիմնարային) աղբյուրներ 237
- Պատվարի միջուկ 322
- Պարզարան (տղմագտիչ) 228
- Պարցիալ ճնշում 231
- Պարփակված ջրեր 122
- Պելլիտային հատիկախումբ 232
- Պենդուլյար ջուր 232
- Պետական ջրաերկրաբանական քարտեզ 92
- Պերմիանոր 233
- Պիեզոգոբրաթեր 260
- Պիկնոմետր 234
- Պլաստիկ ձևախախտում 235
- » — տղանքներ 235
- Պլաստիկության զոնա 128
- » — սահման 251
- » — ստորին սահման 211
- » — վերին սահման 27
- Պլտան 313
- Պոլլե (կարստային դաշտ) 247
- Պոտամոլոգիա 249
- Պսակ (եզրասլակ) 223

Պատկաչին ջրեր 130, 224  
— » — ջրերի զոնայականություն 130  
Պուազ 259  
Պուասոնի գործակից 175

— Ջ —

Ջերմ (թերմալ) ջուր 45  
Ջերմաէներգետիկ ջուր 45  
Ջերմակարստ 290  
Ջերմակարստային իջվածք 59  
Ջերմահաղորդականության գործակից 177  
Ջերմահաղորդականություն 290  
Ջերմային հաշվեկշիռը երկրաֆիզիկա-  
լում 290  
Ջերմաջրեր (թերմալ ջրեր) 290  
Ջերմաջրերի քարտեզ 149  
Ջերմափոխանակության երկրաջերմա-  
լին մակարդակ 73  
Ջերմափոխանակությունը մթնոլոր-  
տում 290  
Ջերմեր (թերմեր) 292  
Ջերմության տարեկան տատանումների  
զոնա 126  
Ջերմունակություն (ջերմատարողու-  
թյուն) 290  
Ջրաբանական ավազան 19  
— » — ռեժիմ 267  
— » — տարի 85  
Ջրաբանություն 86  
Ջրաբարխաններ 78  
Ջրաբույսեր 265  
Ջրագազային կոնտակտ 48  
— » — հանույթ 47  
Ջրագոլորշաջերմեր 231  
Ջրագրական ցանց 83  
Ջրադինամիկ ակտիվություն 9  
— » — զոնա 125  
— » — լարվածություն 208  
— » — խտորում 12  
— » — ճնշում 84  
— » — մեթոդ 84  
Ջրադինամիկա 83  
Ջրաերկրաբանական ավազան 19  
— » — զանգված 81

— » — ծալքավոր մարզ 215  
— » — կողակատեր (պրոֆիլ) 81, 263  
— » — կտրվածք 81, 263  
— » — համալիր 81  
— » — հանույթ 79  
— » — հարկ 82, 321  
— » — հետազոտություններ 80  
— » — հորատում 24  
— » — մարզ 79  
— » — մոդելացում 82  
— » — նահանգ 79  
— » — շրջան 81  
— » — շրջանացում 82  
— » — որոնումներ և հետախուզու-  
թյուններ 80  
— » — պայմաններ 80  
— » — պատահաններ 218  
— » — ստացիոնար 282  
— » — ցիկլ 81  
— » — ուսումնասիրություններ 80  
— » — ուսումնասիրությունների որո-  
նողական փուլ 242  
— » — — » — ստադիականություն 281  
— » — փաստագրում 68  
— » — քարտեզ 77  
— » — ֆորմացիա 80, 308  
Ջրաերկրաբանություն 83  
Ջրաերկրադինամիկա 78  
Ջրաերկրադինամիկական զոնապա-  
կանություն 130  
Ջրաերկրաքիմիա 83  
Ջրագոլեր 84  
Ջրագրկում (ջրանշատում) 105  
Ջրաթափանցելիության գործակից 171  
Ջրաթափանցելիություն 52  
Ջրածլ (ջրադեղողանույթ) 78  
Ջրաիզոբարներ 84  
Ջրաիզոգծեր 84  
Ջրաիզոպիեզներ (պիեզոիզոգծեր) 84  
Ջրաիզոպլետներ 84  
Ջրաիզոջերմեր (ջրաիզոթերմեր) 84  
Ջրաինդիկացիա 85  
Ջրաիջեցում 52  
Ջրալակոլիտներ 85  
Ջրածածկում 242

- Զրածնային իոնների խտություն 167  
 Զրածնություն (հիդրոգենեզ) 77  
 Զրակալում 122  
 Զրակալումություն 53  
 Զրակարբոնատ-նատրիումային ջուր 36  
 Զրակարբոնատային ջուր (ջրեր) 36, 85  
 Զրակետ 52  
 Զրակլանում 51  
 Զրակցում (հիդրատացում) 77  
 Զրահագեցման գործակից 110  
 Զրահագեցում 49  
 Զրամադրողականության գործակից 171  
 — » — քարտեզ 148  
 Զրահազվեկշռային ռոսպային հարթակներ 47  
 Զրադրյուրների սան. պահպանության զոնա 129  
 Զրամշումնային համակարգ 49, 235  
 — » — համակարգի գազանավթատվության գործակից 171  
 — » — ռեժիմ 49  
 Զրամանրեային հանույթ 47  
 Զրամաս (բլեֆ) 25  
 Զրամատակարարման աղբյուրների ջրի որակի գնահատում 229  
 Զրամբար 54  
 Զրամբարներից ծծանցման կրուստներ 305  
 Զրամեխանիկա 86  
 Զրամերժ առատաղ 54  
 — » — հատակ (հիմք) 54  
 — » — շերտ 54  
 Զրամողուլ 86  
 Զրային ամփոփագիր 48  
 — » — բարձիկ 55, 242  
 — » — բուլսեր 55  
 — » — բուսականություն 47  
 — » — գմբեթ 185  
 — » — գոլորշիների խտացում 165  
 — » — երակներ 55  
 — » — հայելի 123  
 — » — հայելու տատանման գոտի 251  
 — » — հաշվեկշիռ 17, 48  
 — » — հաշվեկշռի գործակից 169  
 — » — միգրանտներ 48  
 — » — ռեժիմ 49
- » — ռեսուրսներ 48, 269  
 — » — ռեսուրսների պահպանություն 228  
 — » — տեղագաղթի գործակից 169  
 — » — — — — հակադրականություն 166  
 — » — տնտեսություն 48  
 — » — ցրման պակներ 48  
 — » — օրենսդրություն 48  
 Զրանավթային կոնտակտ 50  
 Զրանթափանցելիություն (ջրամերժություն) 49  
 Զրաշրջանատության ինտենսիվություն 138  
 Զրատողման զոնա 129  
 Զրաչափ 49  
 Զրաչափական կետ 49  
 — » — կետի հենանիշեր 269  
 — » — նշագիծ 282  
 Զրաչափություն 85  
 Զրապահովվածություն 51  
 Զրապաշտպանական գոտի (զոնա) 125  
 Զրաշերմային (հիդրոթերմալ) լուծույթներ 87  
 — » — — — — գործընթաց 87  
 Զրաշերմեր 88, 87  
 Զրասալներ (հիդրոսալներ) 86  
 Զրատուֆատարներ (հիդրոտուֆատարներ) 86  
 Զրաստասիկ հավասարակշռություն 86  
 — » — ճնշում 87  
 — » — մակարդակ 86  
 Զրատար ապար 249  
 — » — համալիր 50  
 — » — հորիզոն 50  
 — » — հորիզոնի եզրագծում 218  
 — » — — — — հաստություն 205  
 — » — — — — ջրաերկրաբանական պարամետրեր 230  
 — » — սնում 234  
 — » — շերտ 51  
 — » — շերտախումբ 50  
 — » — շերտի առաձգական տարողություն 301  
 — » — — — — հակառակ թեքություն 216

- » — — » — սմման մարզ 215
- » — սերիա 50
- Ջրատարածք (ակվատորիա) 9
- Ջրատարրալուծում (հիդրոլիզ) 85
- Ջրատնտեսական հաշվարկներ 54
- Ջրատվության (ջրանշատման) գործա-  
կից 170
- Ջրատվություն (ջրանջատում) 51
- Ջրաբքիացում 212
- Ջրացուցիչներ (ջրահնդիկատորներ) 85
- Ջրացուցչային քարտեզ 148
- Ջրափոխակերպում 76
- Ջրափոխանակության գործակից 170
- Ջրաքիմիա 88
- Ջրաքիմիական գոտի 250
- » — զոնա 126
- » — խտորումների հակադրականու-  
թյուն 13, 167
- <sup>2</sup> » — կողպատկեր (պրոֆիլ) 88
- » — մեթոդ 88
- » — որոնողական չափանիշներ 88
- » — տարրալուծություն 11
- » — ցրման պատկեր 223
- » — քարտեզ 88
- » — ֆացիա (ֆացիաներ) 88, 303,  
308
- Ջրբաժան 52
- » — տարածություն 52
- Ջրերի աղիություն 278
- » — ապանիտրատացում (նիտրա-  
տագրկում) 106
- » — արտախողովակային շրջանա-  
ռություն 123
- » — դասակարգում ըստ քիմ. բա-  
ղադրության 152
- » — երկրաքիմիական տիպեր 75
- » — հանքայնացում 200
- » — սուլֆատագրկում (սպասուլֆա-  
տացում) 107
- Ջրթափ 53
- Ջրի ազդեհիվ ազդեցություն 8
- » — ակվալային ռեզերվ 267
- » — ակվալանություն 317
- » — աղազերծում 222
- » — գազամագեցվածություն 65

- » — գազային տարրալուծություն 11
- » — գոլորշիներ 281
- » — գույն 313
- » — երկաթազերծում 213
- » — էլեկտրահաղորդականություն  
319
- » — ընդհանուր կոշտություն 216
- » — թթվայնություն 152
- » — խտություն 12
- » — խտություն 237
- » — ծագումնային տիպ 68
- » — կատիոնացում 151
- » — կարբոնատային կոշտություն  
146
- » — կենսաբանական մաքրում 21
- » — — » — տարրալուծություն 20
- » — կենցաղային ծախս 265
- » — կլանում հորատանցքով 240
- » — կոշտություն 12, 93
- » — համ 30
- » — հեղելահոսք 229
- » — (հեղուկի) մածուցիկություն 63
- » — մանրէաբանական տարրալուծու-  
թյուն 17
- » — մաքրում (գտում) 229
- » — մշտական (շվերացող) կոշտու-  
թյուն 249
- » — ներծծում 59, 256
- » — նմուշարկում 222
- » — (խոնավության) շրջանառու-  
թյուն 184
- » — որակական բաղադրակազմի  
նորմեր 212
- » — (խոնավության) պաշար 120
- » — պղտորություն 205
- » — ջերմաչափ 291
- » — վարակազերծում (ախտահա-  
նում) 213
- » — վերացվող կոշտություն 303
- » — վեհտություն 254
- » — վնասազերծում 213
- » — քիմ. բաղադրության արտա-  
հայտման ձև 308

— » — — » — տարրալուծություն 11,  
312  
— » — քրոնագրկում (սպաքլորացում)  
108  
— » — օդանավացում 16  
Զրհան կառույցների սան. պահպանու-  
թյան գոտի 271  
Զրհավար ավազան 19, 53  
— » — գետնուղի (սրահ) 53  
— » — ձագար 53, 58  
— » — կառույցներ 53, 145, 280  
— » — տարածք 53  
Զրհավարների սան. պահպանության  
զոնա 128  
Զրհուք 53, 122  
Զրհոր հարեշական 7  
Զրհորի (հորատանցքի) անձնագիր 231  
— » — գալթման զոնա 123  
— » — (հորատանցքի) ծախս 105  
— » — սնման քերված շտապիղ 262  
Զրման նորմա 246  
Զրդորտ (ջրաստության) 87  
Զրով գերհագեցված սպարներ 233  
Զրում գազերի լուծելիության գործա-  
կից 175  
— » — լուծված գազեր 66  
— » — լուծվող միացություններ 52  
Զրօգասագործման նորմեր 212  
Զուր 32  
Զուրը միներալների մեջ 55

— Ռ —

Ռադիոակտիվ հավասարակշռության  
խախտում 277  
— » — ջրեր 261  
Ռադիոջրատերկրաբանություն 261  
Ռադոնային ջրեր 262  
Ռատլի օրենք 118  
Ռեզոնանս գրունտագիտություն 99, 266  
— » — ինժեներական երկրաբանու-  
թյուն 266  
— » — ջրատերկրաբանություն 265  
— » — փոխակերպում 266  
Ռեզիստիվիմետր 267  
Ռեժիմի ներկայացուցչական տարրեր  
269

Ռելաբացիա 268  
Ռելյուդիս թիվ 267  
Ռեոլոգիա 269  
Ռեոլոգիական մոդելներ 268  
— » — գործընթացներ 258  
Ռիթմիկ աղբյուրներ 270  
Ռիսերմա 269  
Ռյամ 270

— Ս —

Սաբանիսի մեթոդ 270  
Սալզ 271  
Սակավաջրություն 193  
Սահմանային բեռնվածք 252  
— » — դիմադրություն 252  
— » — երկարատև դիմադրություն 252.  
Սահմանատիակ ճնշումնային ջրասար-  
հորիզոն 50  
Սահրի հալելի 124  
— » — հարթություն 236  
Սանդղվանդ 20  
Սառած սպարների զոնաների ընդհա-  
տություն 252  
— » — — » — — — — — ձևադրում 308  
— » — գրունտների ակնթարթային դի-  
մադրություն 192  
— » — հողերի սառցաստարություն 190.  
Սառեցման զոնա 129  
— » — խորություն 89  
Սառը (հիպոթերմիկ) աղբյուր 143  
— » — ջուր 47, 255  
Սառնամանիքային հողմահարում 204  
— » — ճեղքեր 204  
— » — ուռչեցումներ 204  
Սառցաբլուր 207  
Սառցադաշտ 186  
Սառցադաշտագիտություն 90  
Սառցադաշտային հերկում (լեկա-  
ցում) 61  
Սառցադաշտի շարժում 103  
Սառցածին (կրիոգեն) երևույթներ 181  
— » — կազմվածք 181  
— » — կառուցվածք 181  
Սառցածնություն 181  
Սառցուրտ (կրիոպատյան) 181

- Սառցույթ (սառածություն) 9, 194  
Սառցութային գոտի 251  
Սառցույթի նախանջ 105  
Սարքեր շրտերկրաբանական հետազո-  
տությունների համար 252  
Սեզոնացիա 272  
Սեզոնային աղբյուրներ 272  
— » — սառչող շերտ 272  
Սելավ 272  
Սելավային գործընթացների դինամի-  
կա 109  
Սինթեզված ջուր 45  
Սինթետիկ ջրեր 274  
Սիլայ 274  
Սլլացող սողանքներ 275  
Սկզբնային (սառչնային) ջրեր 232  
Սոլիֆյուկցիա 279  
Սոլիֆյուկցիոն թուփ 26  
Մոլֆատարներ 280  
Սողանք 219  
Սողանք-փլվածք 220  
Սողանքային բեկորներ 23  
— » — դարավանդ 221  
— » — լեզվակ 222  
— » — կրկես 221  
— » — կուտակումներ 221  
— » — հեռանիշեր 221  
— » — ճեղքեր 221  
— » — մարմին 221  
— » — գործընթացի ակտիվություն 10  
— » — — — մեխանիզմ 197  
— » — ռելիեֆի ձևեր 309  
— » — տանդրավանդեր 221  
Սողանքասայթաբույս 280  
Սողանքի սառչացման գործոններ 303  
— » — ծավալ 216  
— » — հիմք (բազիս) 17, 241  
— » — սահրի մակերևույթ 239  
Սողանքների դասակարգում 155  
Սողքի արագություն 276  
— » — գործակից 176  
— » — հարթություն 236  
— » — ճնշում 102  
— » — մոդուլ 202  
Սորահոսման շարժումներ 104  
Սորբցիա (կլանում) 280  
Սոֆիոններ (սուլֆոցով աղբյուրներ) 280  
ԽՍՀՄ ջրատնտեսական ամփոփագիր  
54  
Ստաբիլումետր 281  
Ստատիկ զոնդավորում 282  
— » — ծանրաբեռնվածություն 281  
Ստորերկրյա գետեր 241  
— » — լիճ 217  
— » — կարստային անցքեր (ուղի-  
ներ) 144  
— » — հիդրավլիկա 240  
— » — հոսանք 240  
— » — հոսք 282  
— » — հոսքի գործակից 174  
— » — — — կենդանի կտրվածք 116  
— » — — — մոդուլ 202  
— » — — — տեսակարար ծախս 299  
— » — ջրադինամիկա 83, 240  
Ստորերկրյա ջրերի ամփոփագիր 143  
— » — — — ավազան 20  
— » — — — ավազանի կառուցվածք  
283  
— » — — — կայուն (ստատիկ) պա-  
շարներ 269  
— » — — — արհեստական պաշար-  
ներ 121  
— » — — — արտաբաշխվելուային  
պաշարներ 121  
— » — — — բևեռային մասն մարզ  
214, 215  
— » — — — բնական ստատիկ պա-  
շարներ 114  
— » — — — — — ռեսուրսներ 114,  
269  
— » — — — — — դասակարգում 156  
— » — — — — — դարավոր պաշարներ  
120  
— » — — — — — դիմաբ 241  
— » — — — — — դիմաբի զոնա 129  
— » — — — — — դինամիկ պաշարներ  
109  
— » — — — — — դինամիկա 109  
— » — — — — — երկչափ շարժում 104  
— » — — — — — երկրաբանական պա-  
շարներ 120  
— » — — — — — երկրաքիմիա 75

- » — — — ընդհանուր պաշարներ 121
- » — — — իշույթ 106
- » — — — ծագում 67
- » — — — ծագումնալից դասակարգում 68
- » — — — տիպիգրաֆիկ 95
- » — — — կալուն մակարդակ 249, 302
- » — — — — — (ստատիկ) պաշարներ 121
- » — — — կալունացած շարժում 302
- » — — — կանոնավորվող պաշարներ 121
- » — — — հանքայնացման գրադիենտ 93
- » — — — հանքավայրեր 194
- » — — — հաշվեկշիռ 17
- » — — — հաշվեկշռային պաշարներ 120
- » — — — հաշվեկշռի հավասարում 301
- » — — — ձևավորման խտացման տեսություն 289
- » — — — — — ծագումնալից ցիկլեր 68
- » — — — — — կուսական տեսություն 289
- » — — — — — ներծծման տեսություն 289
- » — — — — — նստվածքակուտակման տեսություն 289
- » — — — — — ձևավորում 309
- » — — — — — մակարդակ 302
- » — — — — — մանրամասն հետախուզություն 107
- » — — — — — միաչափ շարժում 217
- » — — — — — միգրացիա (տեղաշարժ) 199
- » — — — — — նախնական հետախուզում 251
- » — — — — — ներգրավվող պաշարներ 121
- » — — — — — նմուշարկում 222
- » — — — — — շահագործողական պաշարներ 122, 318
- » — — — — — շարժման առավելագույն արագություն 191
- » — — — — — — — իրական արագություն 276
- » — — — — — — — կեղծ արագություն 304
- » — — — — — — — որոնման երկրաբուսաբանական մեթոդ 197
- » — — — — — — — որոնում և հետախուզություն 242
- » — — — — — — — չկալունացած շարժում 210
- » — — — — — — — պահեստավորում 190, 303
- » — — — — — — — պաշարներ 120
- » — — — — — — — պաշարների կատեգորիաներ 149
- » — — — — — — — — — հաշվարկ 242
- » — — — — — — — պիեզոմետրիկ մակարդակ 260
- » — — — — — — — ջրբաժան 52
- » — — — — — — — ջրհաններ (ջրհան կառույցներ) 49
- » — — — — — — — ջրհավարում 145
- » — — — — — — — ռեժիմ 267
- » — — — — — — — ռեժիմի մոնիտորինգ 204
- » — — — — — — — սնման եզրագծեր 167
- » — — — — — — — օջախներ (պատումաններ) 229
- » — — — — — — — ստատիկ մակարդակ 282
- » — — — — — — — — — պաշարներ 281
- » — — — — — — — վերականգնվող պաշարներ 56, 120
- » — — — — — — — տարրալուծման գոտի 250
- » — — — — — — — — — ցամաքորդի մարզ 214
- » — — — — — — — ուղղաձիգ զոնայականություն 26
- » — — — — — — — փոխակերպում 195
- » — — — — — — — քիմ. բաղադրության ձևավորման գործընթաց 258
- » — — — — — — — — — տիպ 313
- » — — — — — — — — — և գազերի հասակ 56

- » — » — օրգանական նյութ 28
- » — ջրի կաշուն մակարդակ 302
- » — » — ջրհավաքի սահմաններ 94
- » — ջրհոսքի անհատասարաչափ շարժում 210
- » — ջրոլորտ 87
- » — ջուր 41
- » — սառցաշերտ (սառցակուտակ) 240
- » — սառույց 187, 241
- » — սնման գործակից 174
- Ստորջրյա (սուբակվալ) աղբյուր 240, 284
- » — սողանք 220
- Ստուգիչ հորատանցք 167
- Սուբլիմացիա 284
- Սուզարկղ (քետոն) 151
- Ֆուֆատային ջուր (ջրեր) 45, 285
- Սուլֆիդային հանքավտակների ջրաքիմ. ցուցանիշներ 244
- » — (ծծմբաջրածնային) ջրեր 45, 285
- Սուսպենզիա (կախույթ) 285
- Սուֆոգիա 285
- Սուֆոգիոն ձագար 58
- » — սողանքներ 285

— Վ —

- Վադի 25
- Վադոզ ջրեր 26, 35
- Վաստեր 26
- Վարարում 246
- Վարդ-դիագրամ 270
- Վարընթաց աղբյուրներ 211
- Վարնետրային աղբյուրներ 271
- Վերադրման մեթոդ 196
- Վերադային ջրեր 40, 207
- Վերատաստային ճնշում 207
- Վերականգնված (վերածնված) ջրեր 55
- Վերընթաց աղբյուր 59, 211
- » — ջուր (ջրեր) 36, 59
- Վերին եզրագծային ջրեր 26
- Վերնածնության (հիպերգենեզի) զոնա 126

- Վերնաջուր 27
- Վերսառցույթային ջրեր 40, 206
- Վոլկլուզներ 57

— Տ —

- Տարածական (եռաչափ) հոսք 250
- Տարածքի ինժեներակրթարանական պայմաններ 136
- Տարբեր ջերմաստիճանի ջրեր 55
- Տարեկան ջերմային տատանումների ջրեր 277
- Տարրալուծման զոնա 125
- » — զոնայի ջուր 38
- » — ջրեր 54
- » — ունակություն 62
- Տաք (հիպերթերմիկ) աղբյուր 143
- » — ջուր 37
- Տարացման կոր 180
- Տեխնածին երկրաշարժ 123
- » — ռելիեֆ 268
- Տեխնածնություն 292
- Տեխնիկական ջուր (ջրեր) 46, 292
- Տեխնոլորտ 293
- Տեղական ճնշում 195
- » — ջրեր 194
- Տեղաշարժի (տողքի) գործակից 176
- » — ձևախախտում 108
- Տեղանքի հարաբերական խոնավացում 227
- Տեղումների ինտենսիվություն 138
- Տեսակարար ակտիվություն 11
- » — ծավալ 299
- » — կշիռ 299
- » — ջերմունակություն 298
- » — ջրատվություն 51, 298
- Տեսրակապողներ 292
- Տիեզերական նկարների վերծանում 108
- Տիքսոտրոպ երևույթներ 293
- Տղմազատում 227
- Տղմային սղագան 133
- » — (հատակային) աղ 133
- » — լուծույթներ 133
- » — ջրեր 133
- Տղմաջուր 38
- Տյուրիկ 295

Տորֆային ջուր 46  
Տրանսպիրացիա 294  
Տրանսպիրացիայի ինտենսիվության  
քարտեզ 149  
Տրավերտինային դարավանդ 292  
Տունդրային ջուր (ջրեր) 46, 295  
Տևական արտամղում 111

— Ց —

Յածրադիր (Էվտրոֆիկ) ճահին 317  
Յածրանիստ (մագնոթային-կախված)  
ջրեր 225  
Յամաքային կլիմա 166  
Յամաքեցված մակերես 237  
— » — տարածք 113  
Յամաքեցում (ցամաքորդ) 112, 113  
Յամաքորդային ջրեր 37, 113  
— » — (կլանող) հոր 164  
— » — մայր (գլխավոր) սառու 190  
— » — ջրհոր 113  
Յամաքորդներ 113  
Յայտադրյուր (գրիֆոն) 98  
Յելասնանքային լիճ 100  
Յելասնոսքերի կրկես 281  
Յելային բլուրների ջրեր 54  
— » — հոսք (սելավ) 100  
— » — հրաբուխ (սալզ) 100  
Յելի վերականգնում 265  
Յեմենտացման զոնա 129  
— » — լուծույթի ներարկում 139  
Յողի կես 294  
Յրտակալունություն 204  
Յրտահարված հողեր, գրուններ 204  
Յցային հիմքեր 271  
Յցի փորձարկում բեռնվածքով 142  
Յցովի քամիչ (շտեկֆիլտր) 305  
Յուցիչ (ինդիկատոր) 133

— Ու —

Ուղղաձիգ շրջանառություն 315  
Ուղչեցումներ 260  
Ուղչման թմբեր 23  
— » — ճնշում 102

— » — ուժ 273  
Ուղչման 62, 206, 259

— Փ —

Փակ (մեկուսացած) ծակտեղեկություն  
119  
Փակված ջուր 37  
Փաստային նյութի քարտեզ 149  
Փլվածքներ 212  
Փլուզման զոնա 128  
— » — կրկես 315  
— » — ձագարներ 254  
Փլուզում 116  
Փնջային արտամղում 185  
Փոխանակային կատիոններ 215  
Փորձային արտամղում 223  
— » — բեռնվածքներ 223  
— » — ներլցում (ներլիցք) 223  
— » — ներմղում 223  
Փորձաշահագործողական արտամղում  
223  
Փոշային հատիկախումբ 260  
Փոշանման գրունտ 261  
Փորձնական բեռնվածք 254

— Ք —

Քաղցրահամ ջուր (ջրեր) 43, 252  
— » — ստորերկրյա ջրերի ոսպնյակ-  
ներ 189  
Քամիչ ցանցեր 306  
Քամված ջուր 41  
Քայքայիչ բեռնվածք 206, 263  
— » — լարում 263  
Քարաբանություն (լիթոլոգիա) 190  
Քարազուլացում (լիթոգենեզ) 189  
Քարաթափվածքներ 226  
Քարաղի որոնման ջրաքիմ. ցուցանիշ-  
ներ 243  
Քարալը 98  
Քարանձավ 234  
Քեմոտորքում (քեմոկլանում) 311  
Քիմիական հավասարակշռություն 261  
— » — հողմահարում 313  
— » — (քիմիածին) նստվածքներ 312

- » - ռեակցիա 265
- » - տարրերի տեղագտությունը 29
- Քիմիապես կապակցված ջուր 312
- Քլարկ 152
- Քլոր-բրոմային գործակից 314
- Քլոր-կալցիումային տիպի ջուր 47
- Քլորային գործակից 313
- Քլորիդային ջրեր (ջուր) 46, 313
- Քլարիզ 186
- Քրոնուլթեր 62

— 0 —

- Օգտակար բեռնվածք 246
- » - հանածոների հանքավայրերի չորացում 226
- Օղաբույսեր (աերոֆիտեր) 16
- Օղալուսանկարների վերծանում 108
- Օդահագեցման զոնա 124
- Օդամբարձ (երլիֆտ) 321
- Օդաչափական աստիճան 16
- Օդաչորացած գրունտ 55
- Օդի խոնավություն 32
- » - հարաբերական խոնավություն 227
- » - տեսակարար խոնավություն 298
- Օդոմետր 217
- Օմբրոֆիտեր 219

- Օպալաերանգ ջուր 40
- Օսմոտիկ ջուր 40
- Օվկիանոսային ջուր 45
- Օրգանական նյութերի հանքայնացում 200
- Օքսիդացման զոնա 128
- » - վերականգնման պոտենցիալ 218

— Յ —

- Յերեկի դիագրամ 109
- Յիզիկատերկրաբանական գործընթացներ 303
- Յիզիկական գոլորշիացում 304
- » - հողմահարում 304
- Յիզիկապես կապված ջուր 46
- Յլուոդներ 307
- Յլուտրետ 307
- Յլուտրեսցին 307
- Յլուտրեսցենց 307
- Յոնային արժեքներ 307
- » - ջրեր 307
- Յրեստիկ ջուր (ջրեր) 46, 310
- Յումարուներ 310
- Յունիկուլյար ջուր 311

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակների կողմից	5
Ա —	7
Բ —	16
Վ —	25
Դ —	63
Ը —	101
Թ —	113
Ձ —	114
Յ —	116
Կ —	132
Լ —	143
Մ —	186
Ն —	190
Շ —	206
Չ —	212
Պ —	230
Ք —	261
Ս —	270
Տ —	286
Վ —	296
Փ —	303
Ք —	311
Շ —	314
Չ —	316
Պ —	316
Ք —	317
Ս —	317
Տ —	321
Վ —	322
Պատահական գրականություն	323
Հայերեն ներմուծների ցանկ	326

Ինտերնետում հասանելի է ընդհանուր ցանկը՝ <http://www.library.am>

Վ. Ա. Ավետիսյան, Պ. Ս. Բոշնաչյան, Գ. Ե. Դավթյան  
ԶՐԱՆԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱՆԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ  
ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հրատ. խմբագիր՝ Վ. Զ. Ստեփանյան  
Տեխ. խմբագիր՝ Ա. Պ. Շահինյան  
Սրբագրիչ՝ Գ. Է. Դերձակյան

ИБ № 1684

Հանձնված է շարվածքի՝ 11.10.1991 թ.: Ստորագրված է տպագրության՝ 15.03.1995 թ.:  
Չափը՝ 60×84<sup>1/16</sup>: Թուղթ՝ № 1: Տառատեսակ՝ «Նորր»: Բարձր տպագրություն:  
Պայմ. 20,5 մամ., տպագր. 22,0 մամուլ: Հրատ.-հաշվարկ. 25,4 մամուլ: Պատվեր՝ 947:  
Տպարանակ՝ 400: Գինը՝ արայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,  
375019, Երևան, Մարշալ Բաղդասյան, պող. 24 գ.:

ՀՀ կառավարությանն առընթեր հրատարակչական գործի № 3 տպարան,  
Երևան, Մելիք-Աղանյան, 1:

Издательство «Гитутюн» НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.  
Типография № 3 Управления издательских дел правительства РА,  
Ереван, ул. Мелик-Адамяна, 1.